Դարերի Աստվածային Ծրագիրը

Հատոր I

3126, 11 ԱՆԻ, ԳՅՈՒՄՐԻ
study.b24@gmail.com

Գրությունների

Ուսումնասիրություն

«Արդարների ճանապարհը ծագող լույսի պէս է. Որ գնալով լուսավորվում է, մինչև որ կատարյալ օր է դառնում»

Հատոր I

Դարերի Աստվածային Ծրագիրը

Թագավորների Թագավորին և Տերերի Տիրոջը

ԻՐ ՆՎԻՐՎԱԾ ՍՈՒՐԲԵՐԻՆ ԵՎ «ԲՈԼՈՐ ՆՐԱՆՑ՝ ՈՐ ԱՄԵՆ ՏԵՂ ՏԻՐՈՋ ԱՆՈՒՆԸ ԿԿԱՆՉԵՆ «ՀԱՎԱՏՔԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ» ՈՒ ՀԱՌԱՉՈՂ ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆԸ՝ ՈՐՈՆՔ ԱՍՏԾՈ ՈՐԴԻՆԵՐԻ ՀԱՅՏՆՈՒԹՅԱՆԸ ԿՍՊԱՍԵՆ

«Եվ ամենին լուսավորեմ, թէ ի՞նչ է այն խորհրդի տնտեսությունը, որ հավիտյաններից հետէ ծածկված էր Աստուծոյ մօտ՝ որ ամեն բան ստեղծեց: Որ մեր վրայ աւելցուց իմաստութեամբ ու գիտութեամբ, Մեզի հայտնելով իր կամքին խորհուրդը՝ իր հաճությանը պէս: Ժամանակների լրության տնտեսութեան համար, որ ամեն բան բովանդակուի Քրիստոսումը, ինչ որ երկնքումն է՝ եվ ինչ որ երկրումը, նրանում» (Եփես. 3:4, 5, 9; 1:8-10):

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 5

ԳԼՈՒԽ 1 Աշխարհի Մեղքի Գիշերը Կավարտվի ուրախ Առավոտով 11

ԳԼՈՒԽ 2 Բարձրագույն Բանական Արարչի Գոյությունը Ապացուցված է 36

ԳԼՈՒԽ 3 Աստվածաշունչը Որպես Աստվածային Հայտնություն Դիտարկված Տրամաբանության Լույսի Ներքո 46

ԳԼՈՒԽ 4 Աստվածային Ծրագրի զարգացման Մեջ ուշագրավ Դարաշրջաններն ու ժամանակաշրջանները 83

ԳԼՈՒԽ 5 ԾԱԾԿՎԱԾ ԽՈՐՀՈՒՐԴԸ «Այն Խորհուրդը Որ Ծածկված Էր Անցած Դարերից և Սերունդներից, Հիմա իր Սրբերին Հայտնվեցավ» Կող. 1:26 97

ԳԼՈՒԽ 6 Մեր Տիրոջ Վերադարձը – Դրա Նպատակը, Բոլոր Բաների Վերահաստատությունը. Գործք առ. 3:21 112

ԳԼՈՒԽ 7 Չարի Թույլատրումը և Դրա Առնչությունը Աստծո Ծրագրի Հետ 148

ԳԼՈՒԽ 8 Դատաստանի Օրը 174

ԳԼՈՒԽ 9 Փրկանք ԵՎ Վերահաստատություն 189

ԳԼՈՒԽ 10 Հոգեղեն և Մարմնեղեն Բնությունները Անջատ են և Տարբեր 204

ԳԼՈՒԽ 11 Երեք Ճանապարհներ – Լայն Ճանապարհ, Նեղ Ճանապարհ, Պողոտա 246

ԳԼՈՒԽ 12 Դարերի Ծրագիրը Ներկայացնող Քարտեզի Բացատրությունը 265

ԳԼՈՒԽ 13 Այս Աշխարհի Թագավորությունները 299

ԳԼՈՒԽ 14 Աստծո Թագավորությունը 337
ԳԼՈՒԽ 15 Եհովայի օրը..... 382
ԳԼՈՒԽ 16 Եզրափակիչ Մտքեր..... 418

ՆԱԽԱԲԱՆ

Հեղինակն ու հրատարակիչները ցանկանում են հրապարակայնորեն արտահայտել իրենց երախտագիտությունը Աստծուն, Ով թույլ է տվել նրանց մասնակցել այս հատորի տարածմանը և այն արդյունքների՝ լույսին, ուրախությանը, խաղաղությանը և Աստծո հետ մտերմությանը, որոնք այն բերել է բազմաթիվ սոված, ծարավ և շփոթված հոգիներին: Այս գրքի առաջին հրատարակությունը ներկայիս տեսքով լույս է տեսել 1886 թվականին: Այդ օրվանից ի վեր մեկ հրատարակությունը արագ հաջորդել է մեկը մյուսին՝ քսան տարբեր լեզուներով, և մինչև օրս գրքի մոտավորապես հինգ միլիոն օրինակ է հասել մարդկանց ձեռքերին ամբողջ աշխարհում:

Մենք չենք կարող հուսալ, որ այս բոլոր գրքերը կարդացվել են, սակայն մեզ անընդհատ հասնող նամակները համոզում են, որ դրանք նշանակալի ազդեցություն են ունենում մարդկանց մտքերի և սրտերի վրա ամենուր: Հազարավոր մարդիկ, այդ թվում նրանք, ովքեր նախկինում ամբողջությամբ մերժել էին Աստվածաշունչը որպես Աստծո հայտնություն մարդկությանը, գրում են, թե ինչպես են ազդվել այն բանից, ինչ կարդացել են: Մյուսները գրում են, որ եղել են աթեիստներ կամ գրեթե այդպիսին, քանի որ երբեք չեն ճանաչել իսկական Աստծուն և Նրա իսկական «Դարերի ծրագիրը», և, հետևաբար, չեն կարողացել ընդունել, գնահատել և գովաբանել ավանդական հավատալիքներից ծանոթ կերպարներին:

Այս հատորի առաջին հրատարակությունից ավելի քան հինգ տարի առաջ մենք, նույն նյութը տպագրել ենք լրիվ այլ վերնագրով և այլ ձևաչափով: Գրքի վերնագիրն էր «Սնունդ մտածող քրիստոնյաների համար»: Նրա ոճը տարբերվում էր նրանով, որ նախ քննադատում և հերքում էր սխալ պատկերացումները, և միայն դրանից հետո դրանց տեղում կառուցում էր ճշմարտության կառուցվածքը: Ժամանակի ընթացքում մենք հասկացանք, որ սա լավագույն մոտեցումը չէր, քանի որ որոշ մարդիկ, տեսնելով իրենց սխալ պատկերացումների քանդվելը, անհանգստանում էին և չէին ցանկանում շարունակել ընթերցել՝ քանդված սխալ պատկերացումների փոխարեն ճշմարտության կառուցվածքի գեղեցկությունը ավելի մոտիկից դիտելու համար:

Այս հատորը գրելիս մեզ առաջնորդեց լրիվ այլ սկզբունք: Այն ներկայացնում է Ճշմարտությունը, ցուցադրում դրա ողջ ուժն ու գեղեցկությունը, և միայն հետո առաջարկում է դեն նետել կեղծ գաղափարները՝ ոչ միայն որպես ավելորդ, այլև որպես լիովին անօգուտ և նույնիսկ վնասակար: Այսպիսով, «Դարերի աստվածային ծրագրի» ընթերցողը յուրաքանչյուր քայլով ամրապնդում է իր հավատքը, ավելի է մոտենում Տիրոջը և համոզվում ընտրված ճանապարհի ճշտության մեջ: Իրականությունը տեսնելուց հետո նա սկսում է հասկանալ ստի անհեթեթությունը, ապարդյունությունը և նույնիսկ ավերիչ բնույթը, որից ուրախությամբ ազատվում է:

Մեծ հակառակորդը, իհարկե, չի սիրում այն ամենը, ինչ բացում է Աստծո ժողովրդի աչքերը, մեծացնում նրանց երկյուղը Աստվածաշնչի հանդեպ և կոտրում նրանց հույսը մարդկային հավատալիքների հանդեպ: Ինչպես

սպասվում էր, մեծ հակառակորդը մեծ դիմադրություն է ցուցաբերում այս գրքին: Շատ քչերն են գիտակցում Սատանայի ուժն ու խորամանկությունը, շատ քչերն են հասկանում Առաքյալի խոսքերի իմաստը այս Խավարի իշխանի վերաբերյալ, ով վերածվում է լույսի հրեշտակի՝ ճշմարտության դեմ պայքարելու և նրա ազդեցությունը ոչնչացնելու համար: Շատ քչերն են գիտակցում, որ մեր խորամանկ հակառակորդը ձգտում է օգտագործել Աստծո ժողովրդի լավագույն, ամենաակտիվ և ամենաազդեցիկ ներկայացուցիչներին՝ խոչընդոտելու լույսի շողքը և հեռու պահելու մարդկանցից Դարերի Աստվածային Ծրագիրը:

Շատ քչերն են գիտակցում, որ երբ սկսվեց հավատո հանգանակների կազմումը՝ մ.թ. 325 թվականին, գրեթե 1260 տարի Աստվածաշնչի ուսումնասիրություն չի եղել: Քչերն են գիտակցում, որ այդ ընթացքում հավատո հանգանակները խրվել են միլիոնավոր մարդկանց մտքերում՝ նրանց կապելով սարսափելի սխալների և կուրացնելով Իմաստության, Արդարադատության, Սիրո, Զորության Աստվածային բնույթի նկատմամբ: Շատ քչերն են գիտակցում, որ բարենորոգման շարժումից ի վեր՝ երբ Աստվածաշունչը սկսեց նորից հասանելի դառնալ ժողովրդին, բարի մտադրություններով, սակայն մոլորության ենթարկված բարենորոգիչները անցյալի սխալներով կուրացած չկարողացան հաղթահարել անցյալի խաբեությունը և, իրենց հերթին, ծառայել են մարդկանց խավարի մեջ պահելուն: Շատ քչերն են գիտակցում, որ իսկական Աստվածաշնչային ուսումնասիրությունը, ինչպիսին կիրառվում էր վաղ Եկեղեցում առաքյալների օրերում, միայն այժմ է վերադարձել Աստվածաշնչի ուսումնասիրողներին:

Այս հատորի նախորդ հրատարակություններում օգտագործվել է «Հազարամյայի արշալույս» վերնագիրը, սակայն պարզվեց, որ որոշ մարդիկ շփոթվել են և կարծել են, թե այս գիրքը վեպ է: Որպեսզի ոչ ոք չխաբվի և պատահաբար չգնի գիրքը, մենք հետագայում որդեգրեցինք շարքի ներկայիս վերնագիրը՝ «Գրությունների ուսումնասիրություն», որը չի կարող սխալ ընկալվել:

Մեզ մոտ շատ հարցումներ են ստացվել, թե ինչու այս գրքերը գրախանութներում չեն վաճառվում: Մեր պատասխանը հետևյալն է՝ չնայած հրատարակիչները մեծ հաճույքով կվաճառեին դրանք, կան կրոնական ծայրահեղականներ, որոնք դեմ են դրանց վաճառքին և սպառնում են բոյկոտներով: Սկզբում սա մեզ համար մեծ դժբաղտություն էր թվում՝ կարծես թշնամուն թույլատրված լիներ խոչընդոտել Ճշմարտության տարածմանը: Այնուամենայնիվ, Աստված ողորմածաբար առաջնորդեց այս ամենը, և այսօր, հավանաբար, ոչ մի այլ գիրք չունի այս հատորի նման մեծ ու կայուն տպաքանակ: Նրանք, ովքեր նախապաշարմամբ մերժեցին այն կարդալ և նույնիսկ պայքարեցին դրա դեմ, դա արեցին կեղծիքի ու սխալ պատկերացումների հետևանքով:

Այս գրքերից շատերը այրվել են այն մարդկանց կողմից, ովքեր երբեք չեն կարդացել դրանք, բայց ազդվել են սխալ պատկերացումներից: Նույնն էր մութ դարերում Հիսուսի հետևորդների դեպքում, որոնք մարտիրոսվեցին: Եվ ինքը՝ Հիսուսը, տառապեց նրանց ձեռքով, ովքեր ոչ նրան էին հասկանում, ոչ էլ նրա ուսմունքը, ինչպես Սուրբ Պետրոսը հստակ հայտարարում է՝ «Եվ այժմ, եղբայրնե՛ր, գիտեմ, որ ինչպես դուք, այնպես էլ ձեր իշխանավորները

անգիտությամբ արեցին» (Գործք 3:17), «եթե ճանաչած լինեին, փառքի Տիրոջը խաչը չէին հանի» (Ա Կոր. 2:8):

Եթե այս գրքի թշնամիները դառը, անարդար և ստախօս էին, ապա դրա ընկերները, ընդհակառակը, ջերմ ու եռանդուն էին: Միլիոնավոր օրինակներ, որոնք գտնվում են մարդկանց ձեռքում, գրեթե բոլորը տարածվել են գրքի ընկերների միջոցով, ովքեր, ճշմարտության սիրուց մղված, իրենց ժամանակն ու էներգիան նվիրաբերել են դրա լայն տարածմանը: Մինչ մենք գրում ենք այս տողերը, մեզ հայտնի է, որ մոտ վեց հարյուր քրիստոնյա՝ տարբեր սոցիալական շերտերից, «թողել են բոլոր» երկրային գործերը, կոչումներն ու նպատակները՝ որպեսզի փառաբանեն Տիրոջը և օրհնեն Նրա սոված սրբերին՝ այս փոքրիկ հատորը նրանց ձեռքերին հանձնելով: Նրանց թվում են բժիշկներ, ուսուցիչներ, բուժքույրեր, վարսահարդարներ, մեխանիկներ՝ ամենատարբեր շերտերի մարդիկ, որոնք, Աստծո հանդեպ սիրուց սրտով հուզված, ձգտում են այդ օրհնությունը փոխանցել նաև այլ սրտերի ու մտքերին:

Գրքերը վաճառվում են ցածր գնով, ուստի դրանց տարածողները, ովքեր դրանք առաջարկում են հանրությանը, այս կերպ իրենց ծախսերը հազիվ թե կարողանան ծածկել: Սակայն նրանք ուրախանում են առավել ևս, եթե երբեմն անհարմարություն են կրում և արժանի են համարվում որոշ նեղություններ և զրկանքներ կրելու Տիրոջ, Ճշմարտության և Եղբայրների համար: Բարի գործը առաջ է ընթանում, և Քրիստոսում կյանքի Խոսքը փոխանցվում է ձեռքից ձեռք: Ներկայումս այս հատորի տպաքանակը հսկայական է: Թող դրա օրհնությունը ապագայում լինի նույնքան մեծ, որքան եղել

է անցյալում: Հեղինակն ու հրատարակիչները դժվար թե կարողանային ավելի շատ բան ցանկանալ:

Լավագույն մաղթանքներով բոլոր ընթերցողներին

Ձեր ծառան Տիրոջում

Չարլզ Թ. Ռասել

Բրուքլին, Նյու Յորք

1916 թ. հոկտեմբերի 1

ԳԼՈՒԽ 1

Աշխարհի Մեղքի Գիշերը Կավարտվի ուրախ Առավոտով

Լացի Գիշեր և ուրախության Առավոտ – Ճշմարտության Որոնման Երկու Ձևեր – Ձև, Որը Կիրառվում Է Այստեղ – Տվյալ Աշխատության Նպատակը - Սուրբ Գիրքը Ակնածությամբ ուսումնասիրելու և Ենթադրություններ անելու վտանգավոր Սովորության Միջև Եղած Տարբերությունը – Մարգարեության Նպատակը – Աշխարհի Ներկայիս Կրոնական Վիճակի Երկու Տեսանկյուններ – Եգիպտական Խավար – Խոստման Ծիածանը – Արդարի Ճանապարհը Առաջադիմական է – Մեծ Հավատուրացության Պատճառը – Բարենորոգում - Նույն պատճառը նորից կանգնած է իրական առաջընթացի ճանապարհին – Գիտելիքի կատարելությունն անցյալի գործ չէ, այլ ապագայի:

Ուսումնասիրությունների այս սերիայի ՎԵՐՆԱԳԻՐԸ՝ «Դարերի աստվածային ծրագիրը», մատնանշում է Աստվածային ծրագրի առաջադիմությունը, որը կանխատեսված է ու կարգավորված մեր Աստծո կողմից: Մենք հավատում ենք, որ Աստվածային հայտնության ուսմունքների գեղեցկությունը և ներդաշնակությունը տեսանելի է հենց այս, այլ ոչ թե որևէ այլ տեսանկյունից:

Այն ժամանակաշրջանը երբ թույլ տրվեց մեղքը, մարդկության համար դարձավ մութ գիշեր, որը երբեք չի մոռացվի. բայց փառավոր օրը արդարության և

Աստվածային ողորմության, որը պիտի ներդրվի Մեսիայի միջոցով, Ով ինչպես Արդարության Արեգակ կծագի և պայծառորեն, ամբողջությամբ կլուսավորի ամենը՝ պարգևելով ապաքինում և օրհնություն, լիառատությամբ կփոխհատուցի լացի, հոգոցների, ցավի, հիվանդությունների ու մահի սարսափելի գիշերը, որում այդքան երկար գտնվում էր հառաչող մարդկությունը. «Իրիկունը լաց է գալիս, իսկ առավօտը ցնծություն» (Սաղմոսներ 30:5):

Ամբողջ մարդկությունը ցավերի մեջ լինելով կարծես բնազդաբար սպասում է ու կփափագի այն օրվան՝ որը կոչվում է ՈՍԿԵԴԱՐ. Սակայն մարդիկ դեռ կուրօրէն կը խարխափին քանի որ տեղյակ չեն մեծ Եհովայի բարեգործ նպատակներին. իսկ այս դարի մասին իրենց ունեցած ամենաբարձր գաղափարները խիստ թերի են նախասահմանված ՈՍԿԵԴԱՐԻ համետատությամբ: Մեծ Արարիչը պատրաստում է «խնջույք պարարտ բաներով» (Ես. 25:6) որը կզարմացնի իր ստեղծագործությանը, որովհետև այն կգերազանցի իրենց սպասումները ու ակնկալիքները: Իսկ իր հետաքրքրասեր ստեղծագործությանը ովքեր ապշած են Աստվածային սիրո երկարության, լայնության, բարձրության ու խորության վրա կասի. «Որովհետև իմ խորհուրդները ձեր խորհուրդները չեն, եվ ձեր ճանապարհները իմ ճանապարհները չեն, ասում է Տերը. Այլ ինչպես որ բարձր է երկինքը երկրից, նույնպես էլ բարձր են իմ ճանապարհները ձեր ճանապարհներից եվ իմ խորհուրդները ձեր խորհուրդներից» (Եսայիա 55:8,9):

Այս աշխատությունում մենք կփորցենք, ամկողմնակալ ընթերցողին ներկայացնել Աստծո ծրագիրը, ցույց տալով անցյալի, ներկայի և ապագայի հետ

իր ունեցած կապը: Սակայն հեղինակը չի ընդունում թե սա իրեն պատկանող արտակարգ իմաստության կամ կարողության շնորհիվ է: Սա Հազարամյա Օրվա Արդարության Արեգակի լույսն է որը երևան կհանե այս ամենը իբրև «ներկա ճշմարտություն» որին կարող են ծանոթանալ անկեղծները – մաքրասիրտները:

Սկեպտիցիզմի լայն տարածում գտնելու հետևանքով հիմքը կրոնի և ճշմարտության հաճախ կասկածի տակ է դրվում նույնիսկ անկեղծ մարդկանց կողմից: Մենք փորձել ենք, ցույց տալ այդ հիմքը – Աստծո խոսքը՝ որի վրա պետք է կառուցվի ամեն հավատք, փորձելով վստահություն ներշնչելու նույնիսկ անհավատներին: Մենք ջանք ենք թափել դա անել այնպես, որ դա համաձայն լինի առողջ տրամաբանության հետ և ընդունելի լինի որպես հիմք: Դարձյալ այդ հիմքի վրա մենք ձգտել ենք ցույց տալ Աստվածաշնչյան ուսմունքները այնպես, որ մարդկային դատողությունը կարողանա քննել այն ըստ արդարության ամենախիստ պահանջների համաձայն:

Հավատում ենք, որ Սուրբ Գիրքը կանոնավոր ու ներդաշնակ ծրագիր կհայտնե, որը երբ հասկանալի դառնա՝ պետք է որ ընդունվի ամեն բարեխիղճ անձի կողմից: Ուրեմն այս աշխատությունը կհրատարակվի Աստծո խոսքը ուսումնասիրողներին օգնելու նպատակով, ներկայացնելով մի շարք մտքեր, որոնք համաձայն են թե իրար հետ և թե Աստվածաշնչի հետ: Բոլոր նրանք ովքեր Սուրբ գիրքը ընդունում են իբրև Աստծո ծրագրի հայտնություն անկասկած կհամաձայնվին՝ որ եթե այն ներշնչված է Աստծո կողմից, ուրեմն նրա ուսմունքները որպես ամբողջություն պետք է ի հայտ բերեն ներդաշնակ ծրագիր, որը համապատասխան կլինի Հեղինակի էությանը: Որպես ճշմարտությունը փնտրողներ, մեր

նպատակը պետք է լինի տեղեկանալ Աստվածահայտ ծրագրին. մի բան՝ որ կարող ենք ակնկալել որպես Աստծո որդիներ, և ըստ խոստման մենք ունենք հիմք հուսալու որ ճշմարտության ոգին կառաջնորդէ մեզ ամեն ճշմարտության մեջ (Հովհաննես 16:13):

Մեզ, որպես ուսումնասիրողների, հասանելի են երկու մեթոդներ: Մեկը՝ որոնել բոլոր տեսակետների շրջանում, որոնք առաջարկում են եկեղեցու տարբեր աղանդները և յուրաքանչյուրից վերցնել այն տարրը, որը մենք կարող ենք համարել ճշմարտություն: Բայց դա անվերջ աշխատանք է: Խնդիրը, որի հետ մենք անպայմանորեն կբախվենք, ղեկավարվելով այս մեթոդով, կայանում է նրանում, որ եթե մեր դատողությունն աղճատված է կամ մենք ունենք որոշակի նախապաշարմունք (իսկ ո՞վ չունի), ապա դա կխանգարի մեզ կատարել ճիշտ ընտրություն և այդ ժամանակ մենք կարող ենք ընտրել սուտը, իսկ ճշմարիտը կարող ենք մերժել: Բացի դրանից, ընդունելով այդ մեթոդը, մենք շատ բան կկորցնեինք, քանի որ Ճշմարտությունը առաջ է շարժվում և ավելի ու ավելի լուսավորվում է մինչև լիակատար օր նրանց համար, ովքեր որոնում են այն և քայլում են նրա լույսի ներքո: Տարբեր աղանդների ուսմունքները անփոփոխ են ու անշարժ, ինչպես շատ դարեր առաջ: Նրանցից յուրաքանչյուրը իր մեջ պետք է ամփոփոփի ստի մեծ մաս, որովհետև նրանցից յուրաքանչյուրն որոշակի կարևոր հարցերում հակասում է մյուսներին: Այս մեթոդը կարող է շփոթության և խառնաշփոթի լաբիրինթոսի մեջ գցի: Երկրորդ մեթոդը մեր ուղեղի՝ ցանկացած նախապաշարմունքից ազատման և այն գիտակցման մեջ է կայանում, որ որ ոք չի կարող իմանալ Աստծո ծրագրերի մասին ավելի, քան Ինքն է հայտնել Իր Խոսքում, և որ այն տրված է հեզ ու խոնարհ սիրտ ունեցող մարդկանց համար: Եթե մենք այդպիսին

լինենք և անկեղծորեն ու ջերմեռանդ որոնենք միայն նրա առաջնորդությունը ու խրատները, ապա մեծ Հեղինակը մեզ կբերի նրանց հասկացմանը (սահմանված ժամանակին)՝ օգտագործելով տարբեր աստվածային նշանակված միջոցներ (տես Եփ. 4:11-16):

Այս աշխատությունը հատուկ սահմանված է որպես օգնություն այդպիսի ուսումնասիրողների համար: Դուք կտեսնեք, որ այն հիմնվում է բացառապես Սուրբ գրքի վրա՝ ներգրավելով աշխարհիկ պատմություն միայն աստվածաշնչային պնդումների կատարման հաստատման համար: Ժամանակակից աստվածաբանների վկայություններն այստեղ ոչ մի կշիռ չունեն: Մենք նաև բաց ենք թողնում այսպես կոչված «առաջին հայրերի» պնդումները: Նրանցից շատերը վկայել են՝ համաձայն այստեղ ներկայացված մտքերի, բայց մենք համարում ենք, որ ներկա ժամանակների ու բոլոր ժամանակների ընդհանուր սխալը այն է, որ մարդիկ հավատում են որոշակի ուսմունքների միայն նրա համար, որ դրանց հավատացել են այլոք, ում նրանք վստահում են: Հասկանալի է, որ դա ստի արգասաբեր հող է, քանի որ շատ լավ մարդիկ հավատացել են ստին և սովորել են սուտը կատարելապես մաքուր խղճով (Գործք 26:9): Ճշմարտություն որոնողները պետք է դատարկեն իրենց անոթները ավանդույթների պղտոր ջրից և լցնեն նրանք Ճշմարտության աղբյուրից՝ Աստծո Խոսքից: Եվ պետք չէ ոչ մի կրոնական ուսմունքի նշանակություն տալ, եթե այն Ճշմարտության որոնողին չի տանում դեպի այդ աղբյուրը:

Անգամ ամբողջ Աստվածաշնչի ու նրա ուսմունքների ընդհանուր ու սահուն տեսության համար այս գիրքը շատ փոքր է: Բայց գիտակցելով ներկա ժամանակների

շտապողականությունը, մենք ջանացել ենք այնքան սեղմ լինել, որքան դա կարող է թույլ տալ մեր թեմայի կարևորությունը:

Ցանկալի կլիներ հետաքրքրված ուսումնասիրողի ուշադրությունը հրավիրել այն բանի վրա, որ այս աշխատանքի մակերեսային դիտումը չի արդարացնի այստեղ ներկայացված ծրագրի ու Սուրբ գրքի ապացույցների ուժն ու ներդաշնակությունը հասկանալու հույսերը: Մենք ձգտել ենք սկզբից մինչև վերջ ներկայացնել Ճշմարտության տարբեր հատվածներ ոչ միայն հասկանալի լեզվով, այլ նաև այն կարգով, որը թույլ կտար ընթերցողների բոլոր խմբերին հնարավորինս պարզ դարձնել թեման ու ընդհանուր ծրագիրը: Եթե ցանկացած գիտություն իրեն հասկանալու համար պահանջում է բազմակողմանի ու կարգավորված ուսումնասիրություն, ապա առավել ևս դա է պահանջում Աստվածային հայտնության գիտությունը: Տվյալ աշխատությունում այն անհրաժեշտ է կրկնակի անգամ, քանի որ այն ոչ միայն Աստծո կողմից հայտնած ճշմարտությունների մասին աշխատություն է, այն նաև, ամբողջովին տարբեր տեսանկյունից է ուսումնասիրում այս թեման, քան որևէ այլ աշխատությունում: Մենք արդարանալու առիթ չունենք, որ քննարկում ենք շատ թեմաներ, որոնք սովորաբար անտեսվում են քրիստոնյաների կողմից, որոնք են. մեր Տիրոջ գալուստը, Հին ու Նոր Կտակարանների մարգարեությունները և սիմվոլիզմը: Պետք չէ ոչ ներկայացնել, ոչ էլ ընդունել ոչ մի աստվածաբանական համակարգ, որը թույլ է տալիս Սուրբ Գրքի ուսմունքի կարևորագույն գծերի բացթողում և թերուշադրություն: Սակայն մենք հույս ունենք, որ ընթերցողը կտեսնի տարբերությունը (մի կողմից) կատարված պատմական փաստերի լույսի ներքո

մարգարեությունների և այլ տողերի լուրջ, բանական ու հարգալից ուսումնասիրության, որպեսզի եզրահանգումների գա, որոնց հետ կարող է համաձայնվել լուսավորյալ բանական միտքը, իսկ (մյուս կողմից) ընդհանուր ենթադրության տարածված պրակտիկայի միջև, որը կարող է հավանություն տալ չմտածված տեսություններին ու անպարզորոշ ենթադրություններին: Այս վտանգավոր սովորությանը ենթարկվողները, որպես կանոն, իրենք են մարգարեներ դառնում նրա փոխարեն, որպեսզի մարգարեությունների ուսումնասիրողներ լինեն:

Չկա ավելի ազնիվ գործ (ավելի վեհացնող), քան բացված Աստվածային մտադրությունների հարգալից ուսումնասիրությունը. «ինչի մեջ ցանկանում են ներթափանցել Հրեշտակները» (1 Պետ. 1:12): Աստծո իմաստնությունը մեզ ապահովել է ապագայի մասին մարգարեություններով, ինչպես նաև ներկայի ու անցյալի վերաբերյալ հաստատումներով: Այդ փաստը ինքնին Եհովայի կողմից հանդիմանություն է որոշ Նրա անխոհեմ զավակների հասցեին, ովքեր, արդարացնելով իրենց Նրա Խոսքի չիմացությունը և անփութությունը ուսումնասիրության մեջ, ասում են. «Բավարար է Մատթեոսի հինգերորդ գլուխը, որպեսզի ցանկացածին փրկես»: Մենք նաև չպետք է ընդունենք, որ մարգարեությունները մեզ տրվել են միայն նրա համար, որպեսզի բավարարեն հետաքրքրասիրությունը ապագայի վերաբերյալ: Նրանց նպատակը նվիրված Աստծո զավակին իր Հոր ծրագրերի հետ ծանոթացումն է՝ դրանով իսկ առաջացնելով հետաքրքրասիրություն և հակվածություն այդ ծրագրերի նկատմամբ և նրան տալ հնարավորություն դիտել ինչպես ներկան, այնպես էլ ապագան Աստծո տեսանկյունից: Երբ այսպես հետաքրքրված է Տիրոջ գործով, նա կարող է ծառայել ոչ

միայն որպես ծառա, այլև որպես որդի ու ժառանգ՝ ոգով և հասկացողությամբ: Իսկ այն, որ այն հայտնում է, թե ինչ է լինելու, հակազդում է այն ազդեցությանը, ինչ կա այժմ: Ուշադիր ուսումնասիրության ազդեցությունը չի կարող լինել այլ, քան հավատի ամրապնդումը և սրբության խրախուսումը:

Աստծո ծրագրի մասին անտեղյակ լինելով՝ աշխարհը մեղքից և դրա հետևանքներից վերականգնելու համար, ինչպես նաև կեղծ գաղափարի ազդեցության ներքո առ այն, որ անվանական եկեղեցին իր ներկա վիճակում այդ ծրագրի միակ կատարողն է, աշխարհի վիճակը Ավետարանի քարոզչության համարյա թե տասնինը դարերից հետո այնպիսին է, որ առաջացնում է լուրջ կասկածներ յուրաքանչյուր մտածող, բայց խաբված ուղեղում: Իսկ այդպիսի կասկածները դժվար է վերացնել այլ բանով, քան Ճշմարտությունն է: Փաստացիորեն ցանկացած ուշադիր դիտորդի համար պետք է պարզորոշ լինի երկուսից մեկը. կամ եկեղեցին շատ սխալվելով, ենթադրելով, որ իր առաջադրանքը ներկա դարում և իր ներկա վիճակում աշխարհին դարձի բերելն է կամ Աստծո ծրագիրը մեծ անհաջողություն է կրել: Այս երկընտրանքի ո՞ր կողմը մենք ընտրենք: Շատերը ընդունել են ու անկասկած դեռ կընդունեն վերջինը՝ բաց կամ գաղտնի կերպով լցնելով անհավատության շարքերը: Դրա համար էլ այս հատորի առաջադրանքներից մեկը բոլորին օգնելն է, ովքեր իրապես մոլորության մեջ են:

Տասնվեցերորդ էջին մենք ներկայացնում ենք գծապատկեր, որը հրապարակվել է «Լոնդոնյան միսիոներական կազմակերպության» կողմից (London Missionary Society), իսկ ավելի ուշ Միացյալ Նահանգներում «Կանացի պրեսբիտերական

միսիոներական խորհրդի» կողմից (Women’s Presbyterian Board of Missions): Այն կոչվում է «Արրտասահմանյան միսիաների կողմից համր դիմում»: Այդ գծապատկերը պատմում է տխուր պատմություն մթության և անտեղյակության մասին այն միակ անվան, որ տրված է երկնքի տակ կամ մարդկանց մեջ, որով մենք պետք է փրկվենք:

«The Watchman»-ը՝ «Քրիստոնեական պատանեկան միության» (Young Men’s Christian Association), Չիկագո, մարմինը, հրապարակել է նույն գծապատկերը՝ այն մեկնաբանելով հետևյալ կերպ:

«Որոշներն ունեն աշխարհի հոգևոր վիճակի մասին անպարզորոշ ու անորոշ պատկերացում: Մենք լսում ենք արթնացման փառահեղ աշխատանքի մասին այստեղ ու արտասահմանում, տարբեր ուղղություններով նոր միսիոներական ջանքերի մասին, այն մասին, թե ինչպես մի երկիրը մյուսի հետևից բաց են դառնում Ավետարանի համար, ինչպես նաև մեծ դրամական գումարների մասին, որոնք նվիրված են նրա տարածմանը: Եվ մեզ թվում է, որ երկրի ազգերի ավետարանացման համար կատարվում են համապատասխան ջանքեր: Այսօր (գրված է 1886թ.) աշխարհի բնակչությունը կազմում է 1.424.000.000 մարդ: Ուսումնասիրելով գծապատկերը՝ մենք կտեսնենք, որ բնակչության կեսից ավելին՝ շուրջ երկու երրորդը, կազմում են հեթանոսները բառի ամբողջական իմաստով, մնացածը առավելապես Մուհամեդի հետևորդներն են կամ այն ուրացող մեծ եկեղեցիների անդամներ, ում կրոնը ոչ ավելին է, քան քրիստոնեացված կռապաշտությունը: Այս վերջինների մասին դժվար է ասել, որ նրանք հետևում են Քրիստոսի Ավետարանին կամ սովորեցնում են այն: Եվ անգամ 116 միլիոն անվանական բողոքականների մասին

խոսելիս մենք պետք է հիշենք, որ նրանց մեծագույն մասը Գերմանիայում է, Անգլիայում և այդ երկիրը ընկել է անհավատության մեջ, մթության մեջ, հնարավոր է ավելի շատ, քան հեթանոսությունը: Նրանցից շատերը կուրացել են սնահավատություններով կամ կլանված են ծայրաստիճան անգիտությամբ: Հետևաբար այն ժամանակ, երբ 8 միլիոն հրեաներ նախկինի պես մերժում են Հիսուսին Նազարեթից, իսկ 300 միլիոնից ավելի մարդիկ, ովքեր կրում են Նրա Անունը, նահանջել է Նրա հավատից, 170 միլիոն խոնարհվում է Մուհամեդին, իսկ մնացած մարդկության մեծամասնությունը առ այսօր ճանաչում է անշունչ առարկաների, իրենց նախնիների, մահացած հերոսների կամ հենց սատանայի պաշտամունքը: Հետևաբար բոլորն էլ այս կամ այն կերպ երկրպագում են ու ծառայում ստեղծվածին Արարչի փոխարեն, Ով բոլորի հավերժ օրհնյալ Ատվածն է: Բավարա՞ր չէ այս ամենը, որպեսզի վշտացնի մտածող քրիստոնյաների սրտերը»:

Իրապես սա տխուր պատմություն է: Եվ չնայած գծապատկերի նրբերանգները ցույց են տալիս հեթանոսների, մահմեդականների ու հրյաների միջև տարբերությունը, նրանք բոլորն էլ նման են իրար՝ վկայելով Քրսիտոսի մասին բացարձակ չիմացությունը: Ոմանք կարող են համարել, որ աշխարհում քրիստոնյաների հարաբերակցության այստեղ ներկայացված տեսակետը շատ մռայլ է և հնարավոր է, որ չափազանցված է, բայց մենք այլ կերպ են մտածում: Այն ցույց է տալիս անվանական քրիստոնեությունը հնարավորության սահմաններում ավելի վառ գույներով: Օրինակ,

Գծապատկեր

Ցույց տվող Մարդկության Իրական և Հարաբերական քանակը,
Դասակարգված համաձայն Կրոնի



116.000.000 թիվը, որը ցույց է տալիս բոքոքականների քանակը, շատ է գերազանցում նրանց իրական թիվը: Մենք կարծում ենք, որ ընդամենը 16 միլիոնն է քիչ թե շատ արտացոլում եկեղեցու մեծահասակ անդամների թիվը: Ինչ վերաբերում է «փոքր հոտի» գնահատականին, «ովքեր նվիրված են Հիսուս Քրիստոսին», ովքեր գործում են «ոչ թե մարմնով, այլ Ոգով», ապա վախենում ենք, որ անգամ 1.000.000 թիվը կարող էր շատ չափազանցված լինել: Պետք է հիշել, որ եկեղեցու անդամների մեծագույն մասն, որը միշտ ներառվում է ընդհանուր ցուցակի մեջ, փոքր երեխաներն ու մանկիկներն են: Հատկապես դա վերաբերում է եվրոպական երկրներին: Նրանցից շատերում երեխաները եկեղեցու անդամներ են ամենավաղ հասակից:

Բայց որքան էլ մռայլ թվա այս պատկերը, այն չի կարող փոխանցել ողջ մթությունը, որում գնտվում է անկյալ մարդկությունը: Վերոհիշյալ գծապատկերը ցույց է տալիս լոկ ներկա սերունդը: Երբ հաշվի ենք առնում այն փաստը, որ անցած վեց հազար տարիների ընթացքում դարեր ի վեր երկրում ապրել են մարդկանց մեծ բազմություններ, որոնց մեծամասնությունը ծածկված էին նուն անհավատությամբ ու մեղքով, ապա որքան մռայլ է տեսարանը: Համընդհանուր տեսանկյունից այն իրապես սարսափելի պատկեր է:

Ներկայիս շատ դավանաբանություններ հաստատում են, որ միլիարդավոր այս մարդիկ, ովքեր չգիտեն երկնքի ներքո Միակ Անվան մասին, ում միջոցով մենք պետք է փրկվենք, գտնվում են հավերժ տանջանքների ճանապարհին: Նրանք սովորեցնում են, որ բոլոր 116.000.000 բողոքականները, բացառությամբ շատ քիչ սրբերի, նույն ճակատագիրն է սպասում: Զարմանալի չէ,

որ այսպիսի սարսափելի բաների հավատացողները Եհովայի ծրագրերի ու մտադրությունների առնչությամբ շատ ջանասեր են միսիոներական աշխատանքի կատարման մեջ: Զարմացնում է լոկ այն, որ նրանք դրանից չեն ընկնում հուսահատության մեջ: Եթե մենք հավատայինք այսպիսի եզրակացությունների ու գնահատեինք դրանք, մեր կյանքը ամեն ուրախությունից կզրկվեր, և բնության բոլոր վառ բնապատկերները կծածկվեին մթությամբ:

Ապացույցի համար, որ մենք ճիշտ ենք մեկնաբանում այսպես կոչված «Ուղղափառության» տեսությունը հեթանոսների ճակատագրի մասին, կցիտենք վերոհիշյալ «Արտասահմանյան միսիաների անունից համր դիմումի» բրոշյուրից մի մեջբերում, որտեղ և հրապարակվել է գծապատկերը: Ահա նրա եզրափակիչ նախադասությունը. «Քարոզեք Ավետարան արտասահմանում ժողովուրդների մեծաթիվ զանգվածների՝ միլիարդավոր հոգիների, ովքեր մահանում են անհուսալի կերպով առանց Քրիստոսի օրական 100.000- ով»:

Եվ չնայած այդ հեռանկարը մարդկային հավատալիքների տեսանկյունից բավականաչափ մռայլ է, Սուրբ Գիրքը ներկայացնում է առավել վառ պատկեր: Եվ նրա բացատրությունը այս աշխատության նպատակն է: Ստանալով Խոսքի գիտելիքը՝ մենք այլևս չենք կարող հավատալ, որ Աստծո՝ փրկության մեծ ծրագիրը մատնվել է կամ կմատնվի այդպիսի անհաջողություն: Որքան մեծ թեթևացում պետք է զգա անհանգիստ Աստծո զավակը տեսնելով, որ Եսայիա մարգարեն կանխատեսել է իրերի հենց այսպիսի դրությունը և այն շտկելու միջոցները: Նա ասում է. «Մթությունը կծածկի երկիրը, իսկ խավարը՝

ժողովուրդներին, իսկ քեզ վրա կփայլի Տերը, և Նրա փառքը կհայտնվի քեզ վրա: Եվ կգան ժողովուրդներ (հեթանոսներ) դեպի քո լույսը» (Ես. 60:2,3): Այդ մարգարեության մեջ խիտ մթությունը լուսավորում է խոստման ծիածանը. «Եվ կգան ժողովուրդները (երկրի բոլոր ժողովուրդները) դեպի քո լույսը»:

Ոչ միայն աշխարհի շարունակական տառապանքն ու խավարը, ինչպես նաև ճշմարտության դանդաղ առաջընթացը Եկեղեցու համար առեղծված են եղել, այլև ինքը՝ աշխարհը, գիտակցել և զգացել է իր վիճակը: Ի ապացույց այս ամենի ուշադրություն դարձրեք հետևյալ տողերի բովանդակությանը, որոնք վերցված են մի ֆիլադելֆիական ամսագրից: Աստվածային ճշմարտության ճառագայթները անմիջապես Աստծո Խոսքից բանաստեղծի գիտակցության մեջ դեռևս չեն ցրել կասկածներն ու տխրությունը՝ ուժեղացած տարբեր դպրոցների հակասական դավանաբանություններով:

…

Հենց այսպիսի օրհնությունն է այժմ գալիս աշխարհի վրա աստվածային նպատակների բացահայտման ու Նրա Խոսքի հայտնության շնորհիվ: Մենք հույս ունենք, որ այս հատորը այդպիսի օրհնության ու հայտնության մաս է:

Ցանկացած մարդկային ենթադրություններ մերժող ու իր ժամանակը Գրքի ուսումնասիրությանը նվիրած (ոչ առանց բանական մտքի, որի օգտագործումը Աստված խրախուսում է (Ես. 1:18)) կտեսնեն խոստման օրհնյալ ծիածանը, որը արդեն երևում է երկնքում: Սխալ է կարծել, թե հավատքից և դրա արդյունքում արդարացումից զուրկ մարդիկ կարող են պարզորոշ ընկալել ճշմարտությունը. դա նրանց համար չէ: Սաղմոսերգուն ասում է. «Լույսը

[ճշմարտությունը] շողում է արդարին» (Սաղմոս. 97:11): Աստծո զավակների համար պատրաստված է ճրագ, որի լույսը ցրում է մթության մեծ մասը նրանց ճանապարհին: «Քո խոսքը ճրագ է իմ ոտքերի համար և լույս՝ իմ ճանապարհի համար» (Սաղմոս.119:105): Բայց արդարների ճանապարհը ծագող լույսի պես է. այն գնալով լուսավորվում է, մինչև որ կատարյալ օր է դառնում (Առակ. 4:18): Իրականում չկա ոչ մի արդար մարդ՝ «արդար չկա, անգամ մեկը չկա» (Հռոմ. 3:10): Դասակարգը, որին ուղղված են վերոհիշյալ խոսքերը, «հավատով արդարացվածներն են»: Միայն այս դասի արտոնությունն է քայլել այն ուղիով, որը ավելի ու ավելի է լուսավորվում, որպեսզի տեսնեն ոչ միայն Աստծո ծրագրի ներկայիս բացահայտումները, այլև գալիք բաները: Չնայած ճիշտ է, որ առանձին վերցված հավատացյալներից յուրաքանչյուրի ճանապարհը բավականին լուսավոր է, այնուամենայնիվ վերոհիշյալ հաստատման հատուկ կիրառությունը վերաբերում է արդարներին (արդարացվածներին) որպես դասի: Անցյալի ու ներկայի նահապետները, մարգարեները, առաքյալները և սրբերը քայլել են դրա օրեցօր պայծառացող լույսի մեջ: Այդ լույսը հետագայում էլ մշտապես կաճի ներկա ժամանակներից դուրս՝ «մինչև ամբողջական օր»: Սա մեկ չընդհատվող ուղի է և մեկ անընդհատ աճող լույս: Այդ լույսը՝ Աստվածային Վկայություն է, որը լույս է տալիս այն ժամանակ, երբ գալիս է նրա ժամանակը:

Դրա համար էլ «Ցնծացե՛ք Տիրոջով, ո՛վ արդարներ»՝ սպասելով այս խոստման կատարմանը: Մարդկանց մեծամասնության մոտ այնքան քիչ է հավատը, որ նրանք ավելի մեծ լույսի հույս չունեն: Իրենց անհավատության ու

անտարբերության պատճառով նրանք մնում են խավարում, չնայած կարող էին քայլել աճող լույսի մեջ:

Աստծո Հոգին, որը տրվել է Եկեղեցուն, ճշմարտության մեջ առաջնորդելու համար, վերցնելու է գրված բաներից և ցույց է տալու մեզ: Բայց գրվածից դուրս մեզ ոչինչ պետք չէ, որովհետև Սուրբ Գրքերը կարող են իմաստուն դարձնել փրկության համար՝ այն հավատքի միջոցով, որ կա Քրիստոս Յիսուսում (Բ Տիմ. 3:15):

Չնայած մինչև այժմ «խավարը ծածկում է երկիրը և մառախուղը՝ ժողովուրդներին», ամեն դեպքում աշխարհը միշտ չէ, որ կմնա այս վիճակում: Մեզ ասված է, որ «առավոտ է եկել» (Ես. 21:12): Ինչպես այժմ Աստված արեգակը ծագեցնում է թե՛ արդարների, թե՛ անիրավների վրա, այնպես էլ Արդարության Արեգակը հազարամյա օրվա ընթացքում կշողա ամբողջ աշխարհի օգտի համար և «կբացահայտի խավարի թաքնված բաները» (Ա Կորնթ.4:5): Այն կցրի չարի վնասակար գոլորշացումները և կբերի կյանք, առողջություն, խաղաղություն և ուրախություն:

Նայելով անցյալին՝ տեսնում ենք, որ այն ժամանակ լույսը թույլ էր շողում: Անցած դարերի խոստումները անպարզորոշ ու անորոշ էին: Աբրահամին և մյուսներին տրված խոստումները, Օրենքում և մարմնավոր Իսրայելի արարողություններում պատկերավոր ցուցադրված՝ նրանք լոկ ստվերներ էին ու տալիս էին անարտահայտիչ պատկերացում Աստծո հիանալի ու բարեգութ ծրագրերի մասին: Հիսուսի օրերի գալու հետ մեկտեղ լույսը մեծացավ: Մինչև այդ բարձրագույն սպասումը այն հույսն էր, որ Աստված կուղարկի Ազատարարին, Ով կփրկի Իսրայելը իր թշնամիներից և կբարձրացնի նրան աշխարհի առաջատար ազգի կարգավիճակին, որի ուժի և

ազդեցության դիրքով Աստված կօգտագործի նրան որպես իր գործիք՝ օրհնելու աշխարհի բոլոր ընտանիքները: Պայմաններն ու պահանջները, որոնք առաջարկվել են այս ժողովրդին՝ որպես Աստծո Թագավորության ժառանգի, այնքան էին տարբերվում նրա հույսերից, իսկ խոստացված մեծության, որպես ընտրյալ դաս, հասնելու հեռանկարը այնքան ոչ ճշմարիտ էր թվում (արտաքին մարդկային տեսանկյունից), որ բոլորը, բացի քչերից, կուրացան այդ ուղերձի նկատմամբ: Նրանց կուրությունը և տհաճությունը նրա նկատմամբ աճեցին ավելի շատ, երբ Աստծո ծրագրի իրականացման գործընթացում եկավ համապատասխան ժամը այս ուղերձի ընդլայնման համար և երկնքի ներքո ցանկացած արարածի խոստացված Արքայությունում մասնակից լինելուն հրավիրվելու համար, ովքեր, շնորհիվ հավատի զարգացման, պետք է համարվեին որպես Աբրահամի զավակ ու նրան տրված խոստման ժառանգ:

Երբ Պենտեկոստէի օրվանից հետո Ավետարանը, որը սովորեցնում էր Հիսուսը, դարձավ հասկանալի, Եկեղեցին տեսավ, որ աշխարհի համար օրհնությունները պետք է կրեն շարունակակն բնույթ և որ այդ մտադրությունների կատարման համար Արքայությունը պետք է հոգևոր լինի ու կազմված լինի իսկական իսրայելացիներից, «փոքր հոտից», որն ընտրված է հրյաներից ու հեթանոսներից և բարձրացված դեպի հոգևոր բնություն ու ուժ: Դրա համար էլ ընթերցում ենք, որ Հիսուսը «կյանքն ու անմահությունը լուսավորեց Ավետարանի միջոցով» (Բ Տիմ.1:10): Հիսուսի ժամանակներից, ինչպես և Նա կանխատեսել է, լույսը սկսեց ավելի վառ լուսավորել. «Դեռ շատ բան ունեմ ձեզ ասելու, բայց հիմա չեք կարող տանել: Սակայն երբ նա՝

ճշմարտության Հոգին, գա, ձեզ կառաջնորդի դեպի ամբողջ ճշմարտությունը» (Հովհ. 16:12,13):

Բայց այն բանից հետո, երբ առաքյալները ննջեցին, եկավ ժամանակը, երբ մեծամասնությունը Եկեղեցում սկսեց անտեսել այդ ճրագը ու առաջնորդության համար դիմել մարդկային ուսուցիչներին: Այդ ուսուցիչները, լցվելով հպարտությամբ ու մեծամտությամբ և իրենց համար տիտղոսներ ու պաշտոններ ստանձնելով, սկսեցին տիրել Աստծո ժառանգությանը: Այսպես աստիճանաբար հայտնվեց հատուկ դասը, որը կոչվում է «հոգևորականություն», որն իրեն համարում է (և այլոց կողմից համարվում է) համապատասխան միջնորդ կամ ուղեցուցորդ հավատի ու առօրյա կյանքի գործերում, բայց Աստծո Խոսքից դուրս: Այսպես ժամանակի ընթացքում սխալվող մարդկանց ուսմունքների նկատմամբ չափազանց մեծ հարգանքի ու անսխալական Աստծո Խոսքի անտեսման արդյունքում զարգացավ պապության մեծ համակարգը:

Ճշմարտության այս անտեսումը բերեց իրապես լուրջ ու բացասական հետևանքների: Բոլորին հայտնի է, որ ոչ միայն Եկեղեցին, այլ նաև ամբողջ քաղաքակիրթ աշխարհը համարյա թե ամբողջությամբ ստրկացվել են այդ համակարգի կողմից ու ուղղորդվել են նրան, որ կուրորեն հարգեն մարդկային ավանդույթներն ու հավատալիքները: Այս ստրկությունից ազատվելու ու ազատությանն ու Աստվածաշնչին վերադառնալու համար, կատարվել է համարձակ ու օրհնյալ քայլ, որը հայտնի է որպես Բարենորոգում (Ռեֆորմացիա): Աստված բարձրացրեց Իր Խոսքի քաջարի պաշտպաններին, որոնցից էին Լյութերը, Ցվինգլին, Մելանխտոնը, Ուիկլիֆը, Նոքսը և այլոք: Նրանք

ուշադրություն հրավիրեցին այն փաստին, որ Պապությունը մի կողմ է դրել Աստվածաշունչը և այն փոխարինել է եկեղեցական հրամաններով ու դոգմաներով, և մատնանշեցին նրա մի քանի սխալ ուսմունքներ ու ծիսակարգեր, ցույց տալով, որ դրանք կառուցվել են մարդկային ավանդույթների վրա, որոնք հակադիր են ճշմարտությանը ու հակասում են Աստծո Խոսքին: Այդ բարեռորոգիչները, ինչպես նաև նրանց կողմնակիցները կոչվեցին բողոքականներ, քանի որ նրանք բողոքում էին պապության դեմ, հաստատելով, որ միայն Աստծո խոսքն է հավատի ու պրակտիկայի միակ ուղեցույցը: Բարեփոխման օրերում բազմաթիվ հավատարիմ հոգիներ քայլեցին լույսի մեջ այնքանով, որքանով այն շողում էր այն ժամանակ: Սակայն նրանց օրերից ի վեր բողոքականները քիչ առաջընթաց են ունեցել, որովհետև, լույսի մեջ քայլելու փոխարեն, նրանք մնացել են իրենց սիրելի առաջնորդների շուրջը, ցանկանալով տեսնել միայն այնքան, որքան նրանք էին տեսնում, և ոչ ավելին: Ունենալով ճշմարտության հատիկ, նրանք սահմաններ դրեցին ճշմարտության ճանապարհին իրենց առաջընթացին՝ ժառանգելով մեծ քանակությամբ սխալներ, որոնք վերցրել էին «մայր»-եկեղեցուց: Քրիստոնյաների մեծ մասը զգում է որոշակի սնահավատ հարգանք բազմաթիվ տարիներ առաջ ձևավորված ուսմունքների նկատմամբ, ենթադրելով, որ ոչ ոք Աստծո Ծրագրի մասին չի կարող ավելի շատ իմանալ, քան գիտեին բարեռորոգիչները: Այդ սխալը շատ թանկ նստեց, քանի որ ճշմարտության փոքրաթիվ կարևոր հիմունքներից բացի, որոնք այն ժամանակ հաջողվեց գտնել, կան ճշմարտության հատուկ առանձնահատկություններ, որոնք անընդհատ ի հայտ են գալիս, և որոնցից քրիստոնյաները զրկվել են իրենց

հավատի դավանանքի ցանկապատների պատճառով: Օրինակ Նոյի օրերին ճիշտն այն էր (այն բոլորից հավատ պահանջող, ով ցանկանում էր այն ժամանակ քայլել լույսի ներքո), որ ջրհեղեղ է սպասվում, այն դեպքում, երբ ոչ Ադամը, ոչ էլ այլոք դրա մասին ոչինչ չգիտեին: Եթե մենք այսօր քարոզեինք ջրհեղեղի գալուստ, դա ճշմարտության քարոզ չէր լինի: Կան այլ դարակազմիկ ճշմարտություններ, որոնք անընդհատ արդիական են դառնում: Եվ եթե մենք գործենք ճրագի լույսի ներքո, ապա կիմանանք նրանց մասին: Հետևաբար, եթե մենք ունենք միայն այն լույսը, որը հայտնի էր մի քանի հարյուր տարի առաջ և ոչ ավելի, ապա մենք որոշակիորեն գտնվում ենք խավարի մեջ:

Աստծո խոսքը սննդի մեծ պահեստ է քաղցած ճամփորդների համար, ովքեր ճամփորդում են լույսի ճանապարհով: Երեխաների համար այնտեղ կաթ կա, իսկ ավելի հասունների համար՝ կոշտ կերակուր (Ա Պետ. 2:2, Եբր. 5:14): Բացի դրանից այս պահեստը լցված է կերակրով, որը համապատասխանում է տարբեր պահերի և հանգամանքների: Հիսուսն ասաց, որ հավատարիմ տնտեսը պետք է սնունդը տա հավատի տանը ժամանակին՝ դուրս բերի իր գանձարանից «նորը և հինը» (Ղուկ. 12:42, Մատթ. 13:52): Բայց դա անհնար է դուրս բերել որևէ աղանդավորական դավանաբանությունից, այսինքն գանձարանից: Մենք կարող էինք դուրս բերել որևէ հին ու լավ բան յուրաքանչյուրից, բայց ոչ մի նոր բան: Տարբեր աղանդներում գտնվող ճշմարտությունը այնքան է ծածկված ու խառնված սխալների հետ, որ նրա ներքին գեղեցկությունը և իրական արժեքն աննկատ են մնում: Այս տարբեր դավանաբանությունները մշտապես բախվում են ու կոնֆլիկտի մեջ մտնում իրար հետ: Բայց քանի որ նրանցից յուրաքանչյուրը հայտարարում է, որ իր

հիմքը Աստվածաշունչն է, ապա մտքերի խառնաշփոթի ու պարզորոշ հակասության համար մեղքը դնում են Աստծո Խոսքի վրա: Սա հանգեցրեց հայտնի ասացվածքի ստեղծմանը՝. «Աստվածաշունչը հին ջութակ է, որի վրա կարելի է նվագել ցանկացած մեղեդի»:

Որքան պարզորոշ է այստեղ ցուցադրված մեր ժամանակների անհավատությունը: Դրա պատճառը մի կողմից Աստծո բնավորության ու Խոսքի՝ մարդկային ավանդույթներով սխալ պատկերացումն է, իսկ մյուս կողմից ինտելեկտի աճը, որն այլևս չի ցանկանում խոնարհվել մարդկային տեսակետների կույր ու սնոտիապաշտ խոնարհման առջև, այլ պահանջում է պատճառաբանություն մեր մեջ եղած հույսի համար: Խոսքի ճշմարիտ ուսումնասիրողը պետք է միշտ կարողանա հիմնավորել իր մեջ եղած հույսը: Միայն Աստծո խոսքը մարդուն կարող է իմաստուն դարձնել և այն օգտակար է ուսուցանելու, խրատելու և այլնի համար «որպեսզի Աստծու մարդը լինի կատարյալ, պատրաստ ամեն բարի գործի» (Ա Պետ. 3:15, Բ Տիմ. 3:15-17): Միայն այդ եզակի շտեմարանն է տեղավորում նորի ու հնի չվերջացող պաշարները՝ հավատի տան համար ժամանակահարմար սնունդը: Հասկանալի է, որ ցանկացածը, ով վստահում է Սուրբ Գրքի խոսքերին, որ «Արդարների ճանապարհը ծագող լույսի պէս է. որ գնալով լուսավորվում է, մինչև որ կատարյալ օր է դառնում» չի կարող ընդունել, որ այդ լիակատար, կատարյալ օրը եկել է Լյութերի ժամանակ: Իսկ եթե այդպես է, ապա մենք ճիշտ ենք վարվում, եթե հոգում ենք մեր ճրագի համար, «որ լույս է տալիս մութ տեղը, մինչև որ ցերեկը լուսանա» (Բ Պետ. 1:19):

Բավարար չէ, որ այժմ գտնվենք լույսի ճանապարհին: Մենք պետք է «քայլենք լույսի ներքո»՝ շարունակելով առաջընթացը, այլապես լույսը, որը կանգ չի առնում, կանցնի և մեզ կթողնի խավարում: Շատերի խնդիրը կայանում է նրանում, որ նրանք նստած են, այլ ոչ թե գնում են լույսի ճանապարհով: Վերցրեք բառարան և նայեք «նստել» ու «կանգնել» բառերով տողերը, իսկ ապա համեմատեք նրանք այն տողերի հետ, ուր հանդիպում են «քայլել» ու «վազել» բառերը, և դուք կտեսնեք մեծ տարբերություն: Մարդիկ «նստած են խավարի մեջ» նաև «ծաղրողների հետ», ինչպես նաև «կանգած են մեղավորների ճանապարհին», բայց «քայլում են լույսի ներքո» և «վազում են պարգևի հետևից» (Ես. 42:7, Սաղմոս 1:1, Եբր. 12:1):

Գիտելիքի կատարելությունը պատկանում է ոչ թե անցյալին, այլ հույս ունենք, որ մոտ ապագային: Եվ քանի դեռ մենք չենք գիտակցում այդ փաստը, մենք պատրաստ չենք լինի գնահատել և սպասել մեր Հոր ծրագրի նոր բացահայտումներին: Այո, մենք մշտապես վերադառնում ենք մարգարեների ու առաքյալների խոսքերին, որպեսզի ամեն ինչ իմանանք ներկայի ու ապագայի մասին, բայց ոչ թե նրա համար, որ նրանք մեզնից ավելի են մշտապես հասկացել Աստծո ծրագրերն ու մտադրությունները, այլ որովհետև Աստված օգտագործել է նրանց՝ որպես Իր խոսափողներ, որպեսզի մեզ և Քրիստոնեական Դարի ամբողջ Եկեղեցուն ավետի ճշմարտությունը Իր ծրագրերի մասին, երբ կգա դրա ժամանակը: Այս փաստն ամբողջովին ապացուցված է առաքյալների կողմից: Պողոսը մեզ ասում է, որ Աստված քրիստոնեական Եկեղեցուն ծանոթացրել է Իր կամքի խորհրդի (գաղտնիքի) հետ, որը նա նախատեսել էր և որը երբեք նախկինում չէր բացահայտել, չնայած գրել էր

անհասկանալի արտահայտություններով, որոնք չէին կարող հասկացվել մինչև համապատասխան ժամանակը, որպեսզի մեր հասկացողության աչքերը բացվեն «բարձր կոչումը» գնահատելու համար, որը նախատեսված է բացառապես Քրիստոնեական Դարի հավատացյալների համար (Եփես. 1:9, 10, 17, 18, 3:4-6): Սա ակնհայտ կերպով ապացուցում է, որ ոչ մարգարեները, ոչ էլ հրեշտակները չէին հասկանում իրենց կողմից արտահայտած մարգարեությունների նշանակությունները: Պետրոսն մեզ ասում է, որ երբ իրենք անհանգիստ փնտրում էին, որպեսզի հասկանային մարգարեությունների իմաստը, Աստված նրանց ասաց, որ մարգարեություններում թաքնված ճշմարտությունները ոչ թե իրենց համար էին, այլ քրիստոնեական դարում մեզ համար: Եվ առաքյալն Եկեղեցուն հորդորում է հուսալ ավելի մեծ շնորհի (ողորմածության, օրհնության) այդ ուղղությամբ՝ Աստծո ծրագրերի ավելի մեծ ճանաչմանը (Ա Պետ. 1:10-13):

Չնայած Հիսուսը խոստացավ, որ Եկեղեցին կուղղորդվի ամբողջ ճշմարտության մեջ, պարզ է, որ այդ բացահայտումը պետք է աստիճանական լինի: Չնայած առաքելական ժամանակների Եկեղեցին շատ սխալներից ազատ էր, որոնք առաջացել են պապության ընթացքում ու նրա ազդեցության տակ, ամեն դեպքում մենք չենք կարող մտածել, որ վաղ Եկեղեցին տեսել է Աստծո ծրագիրը այնպես խորն ու հստակ, որքան դա այսօր է հնարավոր: Հասկանալի է նաև, որ ոչ բոլոր առաքյալներն են ունեցել Աստծո ծրագրի տեսունակության միևնույն մակարդակը, չնայած նրանց բոլոր ուղերձները գրված էին Աստծո առաջնորդությամբ ու ներշնչանքով, ինչպես և մարգարեների խոսքերը: Որպես իմացության մեջ տարբերության օրինակ հիշենք Պետրոսի և այլ

առաքյալների (բացառությամբ Պողոսի) ժամանակավոր տատանվող ընթացքը, երբ Ավետարանը սկսեց քարոզվել հեթանոսներին (Գործ. 10:28, 11:1-3, Գաղ.2:11-14): Պետրոսի անվճռականությունը Պողոսի վստահության ուղիղ հակադրությունն էր, ով ներշնչվել էր մարգարեների խոսքերով, Աստծո անցյալ գործերով և անմիջապես նրան տրված հայտնություններով:

Անկասկած Պողոսն ուներ ավելի առատ հայտնություններ, քան ցանկացած այլ առաքյալ: Այդ հայտնությունների մասին նրան թույլատրված չէր ասել ոչ միայն Եկեղեցուն, այլ անգամ ամբողջությամբ ու հստակ կերպով այլ առաքյալներին (Բ Կորնթ. 12:4, Գաղ. 2:2): Բայց մենք կարող ենք տեսնել այդ հայտնությունների ու տեսիլքների անսովոր արժեքը, որոնք տրվել էին Պողոսին, ամբողջ Եկեղեցու համար: Չնայած նրան չի թույլատրվել խոսել այն մասին, ինչն ինքը տեսել էր, կամ հայտնել իրեն հայտնի Աստծո գաղտնիքների մանրամասները, որոնք կապված էին «գալիք դարերի» հետ, ամեն դեպքում այն, ինչ նա տեսել էր, նրա խոսքերին տվեց մեծ ուժ, նրբերանգ ու խորը իմաստ: Իսկ այդ խոսքերն հետագա փաստերի, կատարված մարգարեությունների լույսի ներքո ու Հոգու առաջնորդությամբ մենք կարող ենք ավելի շատ գնահատել, քան վաղ Եկեղեցին:

Վերոնշյալ խոսքերն հաստատելու համար, դիմենք Աստվածաշնչի վերջին գրքին՝ Հայտնությանը, որը գրվել է մոտ մ. թ. 96թ.: Այդ գրքի ներածական խոսքերը մեզ հաղորդում են, որ այն հատուկ հայտնություն է այն բանի, ինչը մինչև այդ անհասկանալի էր: Սա մեզ համոզիչ կերպով ապացուցում է, որ առնվազն մինչև այդ ժամանակը Աստծո ծրագիրը ամբողջությամբ չէր հայտնվել: Եվ այդ գիրքը մինչև հիմա երբեք չի եղել այն,

ինչ ենթադրում է նրա անունը՝ բացահայտում, ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ: Ինչ վերաբերում է վաղ եկեղեցուն, հավանաբար ոչ ոք գրքի որևէ մասը չէր հասկանում: Անգամ Հովհաննեսը, ով ունեցել էր այդ տեսիլքները, երևի թե չէր հասկանում տեսածի նշանակությունը: Նա մարգարե էր ու առաքյալ և չնայած որպես առաքյալ նա հասկանում ու սովորեցնում էր այն, ինչն այն ժամանակ «ժամանակահարմար սնունդ» էր, որպես մարգարե նա խոսում էր այնպիսի բաների մասին, որոնք ապագայում հավատքի ընտանիքի համար «սնունդ» կհանդիսանային:

Քրիստոնեական դարում որոշ սրբեր, ուսումնասիրելով այդ խորհրդանշանական գիրքը, փորձեցին հասկանալ Եկեղեցու ապագան: Եվ անկասկած բոլորն, ովքեր ընթերցել էին այն ու հասկացել նրա ուսուցումների գոնե մի մասը, ստացել էին խոստացված օրհնությունը (Հայտ.1:3): Գիրքը նրանց համար շարունակաբար բացվում էր, իսկ բարենորոգման ժամանակ այն Լյութերին շատ օգնեց հասկանալ, որ պապությունը, որի բարեխիղճ ծառան էր ինքը, Առաքյալի հիշատակած «Հակաքրիստոսն» է, որի պատմությունը, ինչպես հիմա տեսնում ենք, այդ մարգարեության մեծ մասն է կազմում:

Ահա այսպես աստիճանաբար Աստված հայտնում է Իր Ճշմարտությունը և ցույց է տալիս Իր շնորհքի անսահման հարստությունը: Հետևաբար լույսն այսօր շատ ավելի մեծ է, քան Եկեղեցու պատմության ցանկացած նախկին շրջանում:

«Եվ դեռ նոր գեղեցկություններ կտեսնենք,

Եվ հարաճուն լույս»

ԳԼՈՒԽ 2

Բարձրագույն Բանական Արարչի Գոյությունը Ապացուցված է

Աստվածաշնչի Հետ Կապ Չունեցող Ապացույց, Որը Դիտարկվում է Ողջախոհության Լույսի Ներքո – Չհամոզող Տեսություն – Կշռադատող Տեսություն – Աստծո Բնույթի Դրսևորումը – Տրամաբանական Եզրահանգումներ:

ԱՆԳԱՄ թերահավատի տեսանկյունից հայտնիի լույսի ներքո անհայտի մեջ չափավոր և անկեղծ ներթափանցումը անաչառ ու բանական ուսումնասիրողին կուղղորդի դեպի ճշմարտություն: Բայց անկասկած առանց Աստծո ծրագրերի ու մտադրությունների ուղղակի հայտնության մարդիկ կարող էին միայն մոտենալ ճշմարտությանը և գալ անորոշ եզրահանգումների: Բայց եկեք մեկ րոպե թողնենք Աստվածաշունչը և իրերը դիտարկենք բացառապես բանականության տեսանկունից:

Եթե ինչ-որ մեկը, աստղադիտակով կամ ուղղակի աչքերով նայելով երկինք, տեսնում է ստեղծվածի ամբողջ մեծությունը՝ նրա համաչափությունը, գեղեցկությունը, կարգուկանոնը, ներդաշնակությունը և բազմազանությունը, և զուգահեռաբար կասկածում է, որ այս ամենի Արարիչն իրենից իր իմաստնությամբ և ուժով շատ ավելի բարձր է, եթե ինչ-որ մեկը գեթ մեկ ակնթարթ կարող է համարել, որ այդպիսի կարգը պատահական է առաջացել, առանց Արարչի մասնակցության, ապա նա

կորցրել է մտածելու կարողությունը կամ այնքան է անտեսել այն, որ Աստվածաշունչը արդարացիորեն նրան անվանում է «անմիտ» (նրանց, ովքեր չունեն առողջ բանականություն կամ անտեսում են այն). «Անմիտն ասաց իր սրտում. «Աստված չկա»: Ամեն դեպքում Աստվածաշնչի այդ մասը ճշմարիտ է, որի հետ պետք է համաձայնվի յուրաքանչյուր բանական ուղեղ, որովհետև ինքնին հասկանալի է, որ չկա հետևանք առանց կշռելի պատճառի: Յուրաքանչյուր բույս, յուրաքանչյուր ծաղիկ տալիս է դրա վերաբերյալ լիակատար վկայություն: Նրանցից յուրաքանչյուրի բարդ կառուցվածքը, ձևի ու նյութակազմվածքի նրբաճաշակ գեղեցկությունն խոսում է վերմարդկային իմաստնության և վարպետության մասին: Որքան կարճատես է անմտությունը, որը պարծենում է մարդկային կարողությամբ և հնարամտությամբ՝ հասարակ դեպքին վերագրելով կարգ, համաձայնեցվածություն և ներդաշնակություն բնության մեջ, որը ճանաչում է բնության օրենքները, բայց բացառում է նրա իմաստուն Օրենսդրի գոյությունը:

Որոշները, ովքեր ժխտում են իմաստուն Արարչի գոյությունը, հաստատում են, որ միակ աստվածը բնությունն է և որ նրանից են ձևավորվել կենդանիների ու բույսերի բոլոր ձևերը առանց բանականության մասնակցության էվյուցիայի գործընթացում այսպես կոչված «ամենաուժեղի ապրելու օրենքի» ազդեցությամբ:

Այս տեսությանը պակասում են ապացույցները, որովհետև մեր շուրջ մենք տեսնում ենք մշտական ձևեր ունեցող ստեղծագործությունների բազմազանություն, որոնք չեն զարգանում դեպի ավելի բարձր մակարդակ: Եվ չնայած այս տեսությունը պաշտպանողները կատարել են

ոչ մեկանգամյա փորձեր, նրանց ոչ մի անգամ չի հաջողվել խառնել տարբեր տեսակներ և դուրս բերել նոր մշտական տարատեսակ: Հայտնի չէ ոչ մի դեպք, երբ երբ տեղի ունենար մեկ տեսակի փոփոխություն մյուսի[1]: Չնայած կան ձկներ, որոնք մի քանի ակնթարթ կարող են օգտվել իրենց լողակներից որպես թևեր ու թռչել ջրից, ինչպես նաև գորտեր, որոնք կարող են երգել, սակայն ոչ ոք երբեք չի լսել, որ նրանք թռչուններ դառնան: Եվ չնայած կան որոշ կենդանիներ, որոնք ինչ-որ կերպ մարդ են հիշեցնում, չկա որևէ ապացույց, որ մարդը այդպիսի էակներից է առաջացել: Ընդհակառակը հետազոտություններն ապացուցում են, որ չնայած միևնույն տեսակի սահմաններում կարող են առաջանալ տարբեր տարատեսակներ, ամեն դեպքում հնարավոր չէ խառնել տարբեր տեսակներ կամ մեկից ձևավորել մյուսը: Նույն պատճառով հնարավոր չէ ավանակին ու ձիուն համարել ցեղակիցներ, չնայած որ նրանք նման են իրար: Բոլորին հայտնի է, որ նրանց ընդհանուր սերունդը անկատար է և բազմանալ չի կարող:

Իհարկե, եթե բանականությունից զուրկ բնությունը էվոլյուցիայի արարիչն կամ շարժիչն է եղել, այն կշարունակեր այդ գործընթացը: Այդ դեպքում գոյություն չէին ունենա մշտական տեսակներ, քանի որ առանց բանականության ոչ մի բան չէր կարող հասնել հարատևության վիճակի: Էվոլյուցիան նախկինի պես իրականություն կլիներ, և մենք մեր շուրջ կտեսնեինք, թե ինչպես են ձկները դառնում թռչուններ, իսկ կապիկները՝ մարդիկ: Հետևաբար մենք գալիս ենք այն

[1] Մեր որոշ ընթերցողների ցանկանում ենք բացատրել, որ այնպիսի փոփոխություններ, ինչպիսիք են թրթուրի վերածվելը թիթեռի, բնության փոփոխություն չէ. թրթուրը լոկ թրթուր է, որը դուրս է եկել թիթեռի ձվից:

եզրակացության, որ այդ տեսությունը հակասում է մարդկային և Աստվածաշնչի բանականությանը, քանի որ հաստատում է, որ բանական էակները ստեղծվել են բանականությունից զուրկ ուժի կողմից:

Մենք կարող ենք կարճ պատմել էվոլյուցիայի միջոցով արարման մի տեսության մասին (որը հաշվի չի առնում մարդուն), որի վերաբերյալ մենք լուրջ առարկություններ չունենք: Այդ տեսությունը թույլ է տալիս, որ տարբեր ներկայումս առկա տեսակները մշտական են և անփոփոխ, եթե մենք խոսում ենք բնության կամ ցեղի մասին: Եվ չնայած ներկա ձևերը կարող են զարգանալ դեպի ավելի բարձր մակարդակ և անգամ դեպի կատարելություն, ամեն դեպքում այդ ձևերը, այդ տեսակները միշտ էլ կմնան նույնակերպ: Այս տեսությունը համարում է, որ կայացած այս տեսակներից ոչ մեկը սկզբում այդպիսին չի ստեղծվել, այլ հեռու անցյալում զարգացել է հողից մեկ ձևից դեպի մյուսը էվոլյուցիայի մշտական գործընթացում:

Այդ գործընթացները, ենթարկվելով Աստծո կողմից սահմանված օրենքներին, որտեղ կարևոր դեր էին խաղում կերակրի ու կլիմայի փոփոխությունները, կարող էին շարունակվել մինչև մշտական տեսակների առաջացում, որոնց մենք այսօր տեսնում ենք: Հետագա փոփոխություններն անհնար են, քանի որ Արարչի վերջնական նպատակը այս ուղղությամբ պարզորոշորեն իրականացվել է: Չնայած բույսերի ու կենդանիների տարբեր ընտանիքներից յուրաքանչյուրը կարող է բարելավվել կամ դեգրադացվել, նրանցից և ոչ մեկը չի կարող դառնալ մեկ այլ տեսակ կամ ընտանիք կամ դուրս գալ նրանից: Եվ չնայած նրանցից յուրաքանչյուրը կարող է կատարելության հասնել սեփական ձևավորված

բնության շրջանակներում, ամեն դեպքում Արարչի՝ բնության վերաբերալ ծրագիրը իրագործվել է, և այս ուղղությամբ հետագա փոփոխությունները անհնար են:

Առկա է մի կարծիք, որ առաջին բույսերն ու կենդանիները, որոնցից առաջացել են ներկա մշտական տարատեսակները, վերացել են նախքան մարդու ստեղծումը: Այս տեսության օգտին են խոսում գետնի խորքում գտնված կմաղքները, ինչպես նաև արդեն գոյություն չունեցող կենդանիների ու բույսերի քարացուկները: Այս տեսակետը չի անտեսում և չի բացառում աստվածաշնչյան ուսմունքն այն մասին, որ մարդն Արարչի ուղղակի և կատարյալ արարածն է եղել, ով ստեղծվել է իր Արարչի մտավոր և բարոյական կերպարով, այլ ոչ թե զարգացել է էվոլյուցիայի արդյունքում, որը հնարավոր է տեղի է ունեցել այլ արարածների պարագայում: Այս տեսակետը ոչ մի կերպ չի բացառում, այլ ընդհակառակը հաստատում է աստվածաշնչյան կարծիքը, որ բնությունը ներկայիս իր տեսքով սովորեցնում է, որ այն կարգավորել է Բանական Էությունը և որ Նա այդ ամենի առաջնային պատճառն է: Թող մարդկային ուղեղը հնարավորության սահմաններում ուսումնասիրի արդեն հայտնի փաստերը հակառակ դեպի բանական ու կշռելի պատճառներ՝ յուրաքանչյուր դեպքում պատշաճն ընծայելով բնության օրենքներին: Բայց բնության այս բարդ մեխանիզմի ետևում կանգնած է մեծ Հեղինակի՝ բանական ու ամենազոր Աստծո ձեռքը:

Հետևաբար մենք վստահ հայտարարում ենք, որ Բանական Արարչի գոյությունը պարզորոշ ճշմարտություն է, որի ապացույցը մենք տեսնում ենք ինչպես մեր շուրջ, այնպես էլ մեր մեջ: Մենք՝ Նրա ձեռքերի գործն ենք, և մարդկային ուղեղի ու մարմնի

յուրաքանչյուր որակ խոսում է զարմանալի վարպետության մասին, որը հասանելի չէ մեզ համար: Նա այն ամենի Դիզայներն ու Արարիչն է, ինչը մենք անվանում ենք բնություն: Մենք հաստատում ենք, որ Նա կարգավորել ու սահմանել է բնության օրենքները, որոնց գործունեության գեղեցկությամբ ու ներդաշնակությամբ մենք կարող ենք հիանալ ու զմայլվել: Մենք բնազդաբար պատշաճն ենք մատուցում և խոնարհվում ենք Նրա առաջ, Ում իմաստնությունն պլանավորել է Տիեզերքը, իսկ ուժը պահում ու ղեկավարում է այն, Ում իմաստնությունն ու ուժը այդքան անչափ գերազանցում են մեր սեփականը:

Այդպիսի զորեղ Աստծո գոյության գիտակցումը կարող է վախ առաջացնել Նրա ամենազոր ուժի հանդեպ, եթե Նրանում չտեսնենք ողոմածություն և բարություն, որոնց նա տիրապետում է նույնքան, որքան ուժին: Այս փաստը մեզ համար ամբողջությամբ հաստատվում է նույն ապացույցով, որը հաստատում է Նրա էությունն, ուժն ու իմաստնությունը: Մենք հարկադրված ենք ընդունել ոչ միայն այն, որ Աստված կա և որ Նրա ուժն ու իմաստնությունը գերազանցում են մեր սեփականը, բայց ուղեղը ստիպում են մեզ ընդունել նաև այն, որ ստեղծված իրերի մեծագույն մասը չի կարող գերազանցել իր Ստեղծողին: Հետևաբար մենք ստիպված ենք եզրակացնել, որ մարդկային բարության ու արդարության ամենամեծ դրսևորումը զիջում է իր հնարավորություններով Արարչի բարության ու արդարության հնարավորություններին, ինչպես զիջում են մարդկային իմաստնությունն և ուժը: Այդպես մենք ստանում ենք մեծ Արարչի բնույթի ու որակների մասին պատկերացում: Նա իմաստուն է, արդար, հզոր և սիրով լեցուն, իսկ Նրա արժանիքների հնարավորությունները անհրաժեշտության դեպքում անհամեմատ լայն են, քան

Նրա ամենազորեղ էակի հնարավորությունները: Գալով մեր Արարչի էության և բնույթի մասին այդպիսի տրամաբանական եզրահանգման՝ եկեք փորձենք հասկանալ, թե ինչ մենք կարող ենք սպասել այդպիսի Էությունից: Կարելի է եզրակացնել, որ այսպիսի որակներին տիրապետումը տրամաբանորեն ապացուցում է նրանց կիրառությունը: Աստծո ուժը պարտավոր է կիրառվել և կիրառվում է Նրա սեփական բնության հետ ներդաշնակության մեջ՝ իմաստնությամբ, արդարացիորեն և ողորմածությամբ: Ինչ միջոցներ էլ որ այս նպատակի համար կիրառվեն, ինչպիսին էլ որ լինի Աստծո ուժի գործունեությունը, վերջնարդյունքը պետք է համապատասխանի Նրա էությանը և բնույթին, և յուրաքանչյուր քայլ պետք է հավանության արժանանա Նրա անսահման իմաստնությամբ:

Ի՞նչը կարող է լինել ավելի խելամիտ, քան այնպիսի ուժի կիրառությունը, որը մենք տեսնում ենք մեր շուրջ անթիվ աշխարհների ստեղծման և հենց երկրի հիասքանչ տարազանության մեջ: Ի՞նչը կարող է լինել մարդու ստեղծումից ավելի բանական, ով օժտված է խելքով, բանականությամբ, ով կարող է գնահատել իր Արարչի գործերը և խորհել Նրա վարպետության՝ իմաստնության, արդարության, ուժի ու սիրո մասին: Այս ամենը բանական է ու ամբողջությամբ համապատասխանում է մեզ արդեն հայտնի փաստերին:

Իսկ հիմա վերջին միտքը: Տրամաբանակա՞ն չէ մտածել, որ այսքան բանական ու բարի Էությունը, Որը ստեղծել է Իրեն ու Իր ծրագիրը հասկանալու կարող էակ, կղեկավարվի սիրով ու արդարամտությամբ, որպեսզի բավարարի այդ էակի բնության պահանջմունքները՝ նրան տալով որոշակի Հայտնություն: Տրամաբակա՞ն չէ

մտածել, որ Աստված մարդուն կտրամադրի իր գոյության նպատակի ու նրա վերաբերյալ ապագայի Իր ծրագրերի մասին անհրաժեշտ տեղեկատվություն: Իսկ հիմա հարցը այլ կերպ տանք. արդյո՞ք խելամիտ է ենթադրել, որ Արարիչն, ստեղծելով այնպիսի մի էակ, ինպիսին մարդն է, և օժտելով նրան մտածելու կարողությամբ, դիտելով ապագան, նրան չէր տրամադրի Իր ծրագրերի հայտնությունը, որպեսզի բավարարի այդ ձգտումները: Այսպիսի մոտեցումը զուրկ կլիներ իմաստնությունից, քանի որ կհակասեր բնույթին, որը մենք արդարացիորեն վերագրում ենք Աստծուն, ինչպես նաև կհակասեր արդարությամբ ու սիրով հայտնի Էակի բնորոշ վարքին:

Եթե ենթադրենք, որ մարդուն ստեղծելիս Աստվածային Իմաստնությունը աննպատակահարմար է համարել նրան տալ Արարչի ծրագրերում իր ճակատագրի և մասնակցության մասին գիտելիք, ապա անվիճելիորեն Աստվածային Արդարությունը և Աստվածային Սերը կպնդեին այս էակի հնարավորությունների սահմանափակում այն աստիճանի, որ նրան չտանջեին ու չվրդովեին մշտական կասկածները, վախերն ու անգիտությունը և որպես հետևանք այսպիսի սահմանափակումների դեպքում գործեր Ատվածային Ուժը: Բայց արդեն փաստ է, որ մարդն օժտված է Աստվածային ծրագրի հայտնության գնահատման կարողությամբ (իր Արարչի ենթադրելի բնույթի հետ միասնության մեջ), ինչը բավարար առիթ է հուսալ, որ Աստված կտա այդպիսի հայտնություն իր ժամանակին և իր միջոցով՝ հաստատված Նրա Իմաստնությամբ: Հետևաբար եթե մենք անգամ չիմանայինք Աստվածաշնչի մասին, ապա հաշվի առնելով այս դատողությունները, ուղեղը մեզ կստիպեր հույս դնել այնպիսի հայտնության վրա, ինչպիսին իրեն համարում է Աստվածաշունչը և

որոնել այն: Ավելին ուշադրություն դարձնելով ստեղծման կարգի ու ներդաշնակության վրա և այն բանի վրա, թե ինչպես են վեհասքանչ շքերթի մեջ մոլորակներն ու համակարգերն պահում ժամանակն ու վայրերն, մենք չենք կարող չգալ այն եզրակացության, որ այնպիսի աննշան անհամապատասխանությունները, ինչպիսիք են երկրաշարժերը, փոթորիկները և այլն, այս աշխարհում տարբեր տարրերի դեռևս անկատար փոխգործակցության նշաններ են: Խնդրանքներն ապացույցի մասին, որ վերջնականապես երկրի վրա ամեն ինչ կդառնա այնքան կատարյալ ու ներդաշնակ, ինչպես երկնքում (որոշակի բացատրությամբ, թե ինչու դեռևս այդպես չէ), մտածող մարդկանց համար բանական է: Իսկ Արարչի համար, Ում իմաստնությունն, ուժն ու ողորմածությունը պարզորոշ են, բանական է պատասխանել այս խնդրանքներին: Հետևաբար մենք պետք է հույս ունենանք, որ հայտնությունը, որը մենք որոնում ենք, իր մեջ միաժամանակ կամփոփի այդպիսի հաստատում ու այդպիսի բացատրություն:

Հաստատելով մեր ցեղի վերաբերյալ Աստծո կամքի ու ծրագրի հայտնության սպասումների հիմնավորվածությունը՝ հաջորդ գլխում մենք կուսումնասիրենք Աստվածաշնչի ընդհանուր բնույթը, որն իրեն հենց այդպիսի հայտնություն էլ համարում է: Եթե այն ներկայացնում է Աստծո բնույթը ամենայն համաձայնությամբ այն բանի հետ, ինչի մասին (ինչպես մենք մի փոքր առաջ դիտարկեցինք) մեզ ասում է բանականությունը, ապա մենք պետք է համաձայնվենք, որ այդպիսով Աստվածաշունչը ապացուցում է, որ այն Աստծո անհրաժեշտ ու արդարացիորեն սպասելի հայտնությունն է: Այդ ժամանակ մենք պետք է ընդունենք նրա վկայությունն որպես այդպիսին: Եթե այն Աստծուց է,

ապա նրա ուսմունքները, ամբողջությամբ հասկանալի դառնալով, կհամապատասխանեն Նրա բնույթին, որը, ինչպես մեզ համոզում է բանականությունը, կատարյալ է իմաստնության, արդարության, սիրո և ուժի մեջ:

ԳԼՈՒԽ 3

Աստվածաշունչը Որպես Աստվածային Հայտնություն Դիտարկված Տրամաբանության Լույսի Ներքո

Աստվածաշնչի Հաստատումները և Նրա Արժանահավատության Ակնհայտ Ապացույցները - Նրա Հնությունը ու Պահպանումը - Նրա Բարոյական Ազդեցությունը - Գրողների Դրդապատճառները - Սուրբ Գրքերի Ընդհանուր Բնութագիրը - Մովսեսի Գրքերը - Մովսեսի Օրենքը - Մովսեսի Կողմից Հաստատված Կառավարության Առանձնահատկությունները - Դա Իշխող Հոգևորականության Համակարգ չէր – Հրահանգներ Քաղաքացիական Կառավարիչներին - Հարուստների և Աղքատների Հավասար Դիրքը Օրենքի Առջև - Երաշխիքներ Մարդկանց Իրավունքների Խախտման դեմ - Քահանաները Արտոնյալ Դաս Չէին. Ինչպե՞ս էին Նրանք Ապրում - Օտարների, Այրիների, Որբերի և Ծառաների Պաշտպանությունը Ճնշումներից - Աստվածաշնչի Մարգարեները - Կա՞ Արդյոք Ընդհանուր Կապ Օրենքի, Մարգարեների և Նոր Կտակարանը Գրողների Միջև - Հրաշքներ, Որոնք Չեն Հակասում Բանականությանը – Խելամիտ Եզրակացություններ:

Աստվածաշունչը քաղաքակրթության և ազատության ջահն է: Նրա դրական ազդեցությունը հասարակության մեջ ճանաչվել է մեծագույն պետական գործիչների կողմից, չնայած նրանք մեծ մասամբ այն դիտել են հակասական հավատալիքների տարբեր ակնոցներով, որոնք, չնայած պաշտպանում են Աստվածաշունչը,

այնուամենայնիվ խիստ աղավաղում են նրա ուսմունքները: Այս մեծ հին գիրքը ակամայից, բայց ցավալիորեն աղավաղվում է իր իսկ ընկերների կողմից, որոնցից շատերը իրենց կյանքը կտային նրա համար: Այնուամենայնիվ, նրանք ավելի մեծ ավերիչ վնաս են հասցնում, քան նրա թշնամիները՝ պնդելով, որ Աստվածաշունչը հիմնավորում է իրենց ճշմարտության մասին երկար ժամանակ պահպանված կեղծ ընկալումը, որը ժառանգվել է իրենց հայրերի ավանդույթի միջոցով: Երանի թե այդպիսի մարդիկ արթնանային, վերանայեին իրենց պատգամը և շփոթեցնեին իրենց թշնամիներին՝ զինաթափելով նրանց զենքերը:

Քանի որ բնության լույսը թույլ է տալիս մեզ հույս ունենալ Աստծուց ավելի ամբողջական հայտնության, քան բնության կողմից տրվածը, բանական, խորհրդածող միտքը պատրաստ կլինի քննարկել ցանկացած պնդում, որն իրեն անվանում է աստվածային հայտնություն և պարունակում է իր ճշմարտացիության ողջամիտ արտաքին ապացույցներ: Աստվածաշունչն իրեն անվանում է աստվածային հայտնություն և մեզ տրամադրում է իր պնդումների ճշմարտացիության բավարար արտաքին ապացույցներ: Ավելին, այն մեզ արդարացված հույս է տալիս, որ ավելի մանրամասն ուսումնասիրությունը կբացահայտի ավելի ամբողջական և ավելի համոզիչ ապացույցներ, որ այն իսկապես Աստծո Խոսքն է:

Աստվածաշունչը գոյություն ունեցող ամենահին գիրքն է, այն դիմացել է երեսուն դարերի փոթորիկներին: Մարդիկ ամեն կերպ փորձել են ջնջել այն երկրի երեսից՝ թաքցնելով, այրելով, մահապատժի սպառնալիքով նրանց, ովքեր այն իրենց մոտ են պահել, և ամենադաժան ու

անխնա հալածանքների են ենթարկել նրանց, ովքեր հավատացել են դրան, այնուամենայնիվ, այս գիրքը շարունակում է ապրել: Այսօր, երբ նրա բազմաթիվ թշնամիներ քնած են մահվան քնով, և հարյուրավոր հատորներ, գրված նրա վարկաբեկման և ազդեցության տապալման համար, վաղուց մոռացված են, Աստվածաշունչը գտել է իր ճանապարհը աշխարհի բոլոր ազգերի ու լեզուների մեջ, և նրա ավելի քան երկու հարյուր տարբեր թարգմանություններ են կատարվել: Այն փաստը, որ այս գիրքը գոյատևել է այդքան դարերի ընթացքում՝ չնայած նման աննախադեպ ջանքերին այն արգելելու և ոչնչացնելու համար, առնվազն ուժեղ հանգամանքային ապացույց է այն բանի, որ այն մեծ Էակը, որին այն իր Հեղինակ է համարում, եղել է նաև նրա պահապանը:

Ճշմարտ է նաև, որ Աստվածաշնչի բարոյական ազդեցությունը միշտ դրական է: Նրա էջերի ուշադիր ուսումնասիրողները անխուսափելիորեն բարձրանում են դեպի ավելի մաքուր կյանք: Կրոնի և տարբեր գիտությունների վերաբերյալ այլ գրվածքներ ևս որոշ չափով բարիք են գործել, ազնվացրել և օրհնել են մարդկությանը, սակայն բոլոր մյուս գրքերը միասին չեն կարողացել հառաչող ստեղծագործությանը բերել այն ուրախությունը, խաղաղությունն ու օրհնությունը, որը Աստվածաշունչը բերել է և՛ հարուստներին, և՛ աղքատներին, և՛ գիտակներին, և՛ անուսներին: Աստվածաշունչը ոչ միայն ընթերցելու գիրք է, այլև ուշադիր ու խոր մտածությամբ ուսումնասիրելու գիրք է, որովհետև Աստծո մտքերը բարձր են մեր մտքերից, և Նրա ճանապարհները՝ մեր ճանապարհներից: Եվ եթե ուզում ենք ըմբռնել անսահման Աստծո ծրագիրն ու մտքերը, պետք է մեր բոլոր ուժերը նվիրենք այդ կարևոր գործին:

Ճշմարտության ամենահարուստ գանձերը միշտ չէ, որ մակերեսին են գտնվում:

Սկզբից մինչև վերջ այս գիրքը անընդհատ հղում է կատարում և մատնանշում է մեկ ակնառու անձնավորության՝ Հիսուս Նազովրեցուն, ով, ըստ գրքի, Աստծո Որդին էր: Սկզբից մինչև վերջ այն ընդգծում է Նրա անունը, ծառայությունը և գործը: Այն, որ Հիսուս Նազովրեցի անունով մի մարդ իրականում ապրել է և հայտնի է եղել Աստվածաշնչի հեղինակների կողմից նշված ժամանակահատվածում, պատմական փաստ է, որը լիովին և համապարփակ կերպով հաստատվել է նաև Աստվածաշնչից անկախ: Այն, որ այս Հիսուսը խաչվել է, ևս մեկ պատմական փաստ է, որը հաստատվել է նաև Նոր Կտակարանի հեղինակների ներկայացրած ապացույցներից դուրս գտնվող փաստերով: Այս գրողները (բացառությամբ Պողոսի և Ղուկասի) անձամբ ծանոթ էին Հիսուս Նազովրեցուն, Նրա աշակերտներն էին և ներկայացնում էին Նրա ուսմունքները իրենց գրվածքներում:

Գրքի գոյությունն ինքնին ցույց է տալիս որոշակի դրդապատճառներ, որոնք առաջնորդել են դրա հեղինակին: Հետևաբար, մենք հարցնում ենք. ի՞նչ դրդապատճառներ կարող էին ոգեշնչել այս մարդկանց պաշտպանել այս անձի գործը: Հիսուսը դատապարտվել է մահվան և խաչվել հրեաների կողմից որպես հանցագործ: Նա մահվան դատապարտվեց և խաչվեց որպես չարագործ հրեաների կողմից, որոնցից ամենահավատարիմները համաձայնեցին և պահանջեցին նրա մահը՝ համարելով նրան կյանքի անարժան: Եվ նրա գործը պաշտպանելիս ու նրա ուսմունքը քարոզելիս՝ այս մարդիկ հանդուրժեցին արհամարհանքը, զրկանքներն ու

դաժան հալածանքները, վտանգեցին իրենց կյանքը, իսկ որոշ դեպքերում նույնիսկ մահացան մարտիրոսական մահով: Եթե ընդունենք, որ կենդանության ժամանակ Հիսուսը բացառիկ անձնավորություն էր՝ թե՛ իր կյանքով, թե՛ ուսմունքով, ի՞նչ դրդապատճառ կարող էր լինել որևէ մեկի համար պաշտպանելու նրա գործը նրա մահից հետո, հատկապես, երբ նա մահացավ այդքան ամոթալի ձևով: Եվ եթե ենթադրենք, որ այս հեղինակները հորինել են իրենց պատմությունները, և որ Հիսուսը նրանց երևակայական հերոսն էր, ինչքան անհեթեթ կլիներ ենթադրել, որ խելամիտ մարդիկ, պնդելուց հետո, որ նա Աստծո Որդին է, որ նա ծնվել է գերբնական կերպով, ունեցել է գերբնական ուժեր, որոնցով բուժել է բորոտներին, տեսողություն է վերականգնել կույրերին, լսողություն է պարգևել խուլերին, և նույնիսկ մեռելներին հարություն տվեց, ապա որքան անհեթեթ է ենթադրել, որ նրանք այդպիսի կերպարի պատմությունը կավարտեին՝ հայտարարելով, որ նրա մի փոքր թվով թշնամիներ նրան որպես հանցագործ մահապատժի ենթարկեցին, մինչդեռ նրա բոլոր ընկերներն ու աշակերտները, այդ թվում՝ հենց հեղինակները, լքեցին նրան և փախան վճռորոշ պահին:

Այն փաստը, որ աշխարհիկ պատմությունը որոշ կետերում համաձայն չէ այս հեղինակների հետ, չպետք է կասկածի տակ դնի նրանց պատմությունների իսկությունը: Եթե ոմանք այդպես են եզրակացնում, նրանք պետք է նշեն և ապացուցեն, որ այս հեղինակները կեղծ հայտարարություններ անելու որևէ շարժառիթ են ունեցել: Ի՞նչը կարող էր նրանց դրդել անել դա: Կարո՞ղ էին նրանք իրատեսորեն հույս ունենալ այս կերպ հարստություն, հռչակ, իշխանություն և այլ երկրային օրհնություններ ձեռք բերել: Հիսուսի ընկերների աղքատությունը և նրանց հերոսի

անժողովրդականությունը Հրեաստանի ազդեցիկ կրոնավորների շրջանում հակասում են այս գաղափարին. մինչդեռ այն փաստը, որ նա մահացել է որպես չարագործ, խաղաղությունը խախտող և որ նրան անարգեցին, չի առաջարկում որևէ հույս նախանձելի համբավի կամ երկրային շահի համար նրանց, ովքեր կփորձեին վերականգնել նրա ուսմունքը: Ընդհակառակը, եթե Հիսուսին քարոզողների նպատակը դա լիներ, մի՞թե նրանք շուտով չէին հրաժարվի դրանից, երբ պարզեցին, որ դա բերում է անարգանք, հալածանք, բանտարկություն, ծեծ և նույնիսկ մահ: Ուստի բանականությունն ասում է, որ մարդիկ, ովքեր զոհաբերել են իրենց տները, համբավը, կյանքը և պատիվը, ովքեր չեն ապրել ներկա հաճույքի համար, ովքեր որպես նպատակ են ընտրել աջակցել իրենց մերձավորներին և ներշնչել բարձրագույն բարոյական սկզբունքները, ոչ միայն ունեցել են որոշակի շարժառիթներ, այլև այդ շարժառիթները պետք է լինեին մաքուր, իսկ նրանց նպատակները՝ անսովոր բարձր: Բանականությունը նաև ասում է, որ նման մարդկանց վկայությունը, որը հիմնված է միայն մաքուր և բարի շարժառիթների վրա, արժանի է տասնապատիկ ավելի մեծ կշռի և ուշադրության, քան սովորական գրողները: Այս մարդիկ ֆանատիկներ չէին. նրանք առողջ և բանական մտքի մարդիկ էին, որոնք ցանկացած հանգամանքներում կարող էին հիմնավորել իրենց հավատն ու հույսը՝ միշտ հավատարիմ մնալով իրենց սթափ համոզմունքներին:

Այստեղ նշվածը վերաբերում է նաև Հին Կտակարանի տարբեր հեղինակներին: Նրանք, հիմնականում, Տիրոջ հանդեպ իրենց հավատարմությամբ աչքի ընկնող մարդիկ էին, և աստվածաշնչյան պատմությունը նրանց թույլ կողմերն ու սխալները նույնքան անաչառությամբ է

արձանագրում և հանդիմանում, որքան գովաբանում է նրանց առաքինություններն ու հավատարմությունը: Սա անշուշտ զարմացնում է նրանց, ովքեր ենթադրում են, որ Աստվածաշունչը կեղծ պատմություն է, որի նպատակն է մարդկանց մեջ սերմանել վախ և հարգանք կրոնական համակարգերի հանդեպ: Աստվածաշնչի պարզությունը վկայում է դրա ճշմարտության մասին: Խաբեբաները, եթե ցանկանային մարդուն ներկայացնել որպես մեծ, և հատկապես եթե նպատակ ունենային նրա որոշ գրություններ Աստծուց ոգեշնչված ներկայացնել, անշուշտ կնկարագրեին նրա բնավորությունը անթերի ու ազնիվ: Այն փաստը, որ Աստվածաշնչում նման մոտեցում չի կիրառվել, տրամաբանական ապացույց է, որ այն չի ստեղծվել խաբեության նպատակով:

Ուստի, հիմք ունենալով հուսալու Աստծո կամքի և ծրագրի հայտնությանը և համոզվելով, որ Աստվածաշունչը, որն իրեն համարում է այդպիսի հայտնություն, գրվել է մարդկանց կողմից, որոնց շարժառիթները մենք որևէ պատճառ չունենք կասկածի տակ դնելու, այլ, ընդհակառակը, ունենք դրանք հաստատելու հիմքեր, Եկեք ուսումնասիրենք ոգեշնչված համարվող Սուրբ գրությունների բնույթը, որպեսզի տեսնենք, թե արդյոք նրանց ուսմունքները համապատասխանում են այն բնավորությանը, որը մենք ողջամտորեն վերագրում ենք Աստծուն, և արդյոք դրանք ունեն իրենց ճշմարտացիության ներքին վկայություն:

Նոր Կտակարանի առաջին հինգ գրքերը և Հին Կտակարանի մի քանի գրքեր պատմություններ կամ հիշատակագրություններ են այն փաստերի մասին, որոնք հայտնի էին հեղինակներին և որոնց իսկությունը երաշխավորված է նրանց բնավորությամբ: Բոլորի համար

ակնհայտ է, որ նրանց լավ ծանոթ հարցերի վերաբերյալ պարզ ճշմարտություն հայտնելու համար հատուկ հայտնություն անհրաժեշտ չէր: Այնուամենայնիվ, քանի որ Աստված ցանկանում էր մարդկանց հայտնություն տալ, այն փաստը, որ անցողիկ իրադարձությունների այս պատմությունները առնչվում են այդ հայտնությանը, բավարար հիմք է տրամաբանական եզրակացություն անելու համար, որ Աստված հսկողություն կիրականացնի և այնպես կկազմակերպի, որ իր ընտրած ազնիվ հեղինակը, ով նշանակված էր այդ աշխատանքի համար, առնչվի անհրաժեշտ փաստերի հետ: Աստվածաշնչի այս պատմական հատվածների հավաստիությունը գրեթե ամբողջությամբ հիմնված է հեղինակների բնավորության և շարժառիթների վրա:

Երբ մենք ասում ենք, որ Աստվածաշնչի գրքերը, ինչպիսիք են Թագավորաց գրքերը, Տարեգրություն, Դատավորաց գիրքը և այլն, պարզապես հուսալի և մանրակրկիտ գրանցված պատմություններ են իրենց ժամանակի նշանավոր իրադարձությունների և անձանց մասին, սա ոչ մի կերպ չի նվազեցնում այդ գրքերի ճշմարտացիությունը: Հիշում ենք, որ հրեական Գրություններում առկա են պատմություններ, օրենքներ և մարգարեություններ: Այս պատմությունները, ինչպես նաև ծագումնաբանությունը և այլ մանրամասները, շատ ճշգրիտ էին՝ հաշվի առնելով այն հույսը, որ խոստացված Մեսիան կգա Աբրահամի մի առանձնահատուկ սերնդից: Սա է պատճառը որոշ պատմական փաստերի նկարագրության, որոնք քսաներորդ դարի տեսանկյունից կարող են թվալ անպարկեշտ: Օրինակ, մովաբացիների և ամոնացիների ազգերի ծագման, ինչպես նաև նրանց Աբրահամի և իսրայելացիների հետ ունեցած կապի հստակ գրանցումը, հավանաբար, պատմաբանի մտքում

անհրաժեշտություն էր նրանց ծագումնաբանության ամբողջական պատմություն կազմելու համար (Ծննդոց 19:36-38):

Կան նաև Յուդայի զավակների շատ մանրամասն հաշվառումներ, որոնցից սերում է արքա Դավիթը, և որոնց միջոցով Հիսուսի մայր Մարիամի ու նրա ամուսին Հովսեփի ծագումը կարելի է հետևել մինչև Աբրահամ (Ղուկաս 3:23, 31, 33, 34 Մատթեոս 1:2-16): Անշուշտ, ծագումնաբանության մանրակրկիտ հաստատման անհրաժեշտությունը առավել կարևոր էր, քանի որ հենց այս ցեղից (Ծննդոց 49:10) պետք է գար Իսրայելի թագավորը և խոստացված Մեսիան: Ուստի ներկայացվում են մանրամասներ, որոնք այլ դեպքերում չեն տրվում (Ծննդոց 38):

Աստվածաշնչում գրանցված այլ պատմական փաստերի համար կարող են լինել նման կամ տարբեր պատճառներ, որոնց օգտակարությունը հետագայում կտեսնենք. եթե դա պատմություն չլիներ, այլ միայն բարոյագիտական տրակտատ, դրանք առանց վնասի կարելի կլիներ բաց թողնել, սակայն ոչ ոք չի կարող հիմնավոր կերպով պնդել, որ Աստվածաշունչը որևէ տեղ հավանություն է տալիս անմաքրությանը: Բացի այդ, օգտակար է հիշել, որ նույն փաստերը ցանկացած լեզվում կարող են արտահայտվել ավելի կամ պակաս նրբանկատորեն, և թեև Աստվածաշնչի թարգմանիչները, ինչպես հարկ է, չափազանց բարեխիղճ էին, որպեսզի որևէ գրառում բաց թողնեն, նրանք ապրում էին այնպիսի ժամանակներում, երբ նրբացված արտահայտությունների ընտրության հանդեպ այնքան խիստ չէին, որքան մեր օրերում, և նույնը կարելի է ենթադրել Աստվածաշնչի վաղ շրջանի ժամանակների և արտահայտվելու

սովորությունների մասին: Անշուշտ, ամենախիստ պահանջկոտն անգամ այս առումով Նոր Կտակարանում որևէ արտահայտության մեջ առարկություն չի գտնի:

Մովսեսի գրքերը և դրանցում հրապարակված օրենքները

Աստվածաշնչի առաջին հինգ գրքերը հայտնի են որպես Մովսեսի հնգամատյան, թեև դրանցում ոչ մի տեղ չի նշվում, որ դրանք գրել է նա: Այն, որ դրանք գրվել են Մովսեսի կողմից կամ նրա հսկողության ներքո, տրամաբանական եզրակացություն է. նրա մահվան և թաղման մասին պատմությունը պատշաճ կերպով ավելացվել է նրա քարտուղարի կողմից: Այս գրքերի Մովսեսի կողմից գրված լինելու դրական հայտարարության բացակայությունը հակափաստարկ չէ. եթե դրանք գրված լինեին խաբեության նպատակով, հեղինակը անշուշտ կհայտարարեր, որ դրանք գրված են Իսրայելի մեծ առաջնորդի և պետական գործչի կողմից, որպեսզի ամրապնդեր իր խաբեությունը (Երկրորդ օրենք 31:9-27.): Մեկ բանում մենք վստահ ենք. Մովսեսը հրեա ազգին հանել է Եգիպտոսից: Նա միավորեց նրանց որպես ազգ՝ այս գրքերում շարադրված օրենքների համաձայն, և հրեա ազգը, ընդհանուր համաձայնությամբ, ավելի քան երեք հազար տարի պնդել է, որ այս գրքերը Մովսեսից ստացված նվեր են, և դրանք այնքան սրբազան է համարել, որ ոչ մի տառ կամ նշան չի կարելի փոխել՝ այդպիսով ապահովելով տեքստի մաքրությունը:

Մովսեսի այս գրություններն պարունակում են միայն հուսալի (մինչև մեր օրերը պահպանված) տվյալներ այն դարաշրջանի պատմության մասին, որը դրանք ընդգրկում են: Չինական պատմությունը, ըստ իրեն, սկսվում է ստեղծման պահից՝ պատմելով, թե ինչպես

Աստված նավակով դուրս եկավ ջրի վրա և, վերցնելով ձեռքով մի կտոր հող, գցեց այն ջուրը: Այդ հողակտորը, ըստ նրանց, դարձավ այս աշխարհը և այլն: Սակայն ամբողջ պատմությունը այնքան զուրկ է բանականությունից, որ անգամ ամենափոքր բանականությամբ օժտված երեխան չի կարող դրանով խաբվել: Հակառակ դեպքում, Ծննդոց գրքում ներկայացված պատմությունը սկսվում է այն բանական ենթադրությունից, որ Աստված՝ Ստեղծիչը, մի բանական Առաջին Պատճառը, արդեն գոյություն ուներ: Այն չի անդրադառնում Աստծո սկզբին, այլ Նրա գործին, դրա սկզբին և դրա համակարգված, կարգավորված ընթացքին՝ «Սկզբում Աստված ստեղծեց երկինքն ու երկիրը»: Այնուհետև, առանց մանրամասների կամ բացատրության անցնելով երկրի ծագմանը, շարունակվում է վեց օրերի [դարաշրջանների] պատմությունը՝ այն մարդու համար պատրաստելու մասին: Այդ պատմությունը մեծապես հաստատվում է գիտության կողմից վերջին չորս հազար տարիների ընթացքում կուտակված լույսով. հետևաբար, շատ ավելի տրամաբանական է ընդունել պնդումը, որ դրա հեղինակը՝ Մովսեսը, աստվածային ոգեշնչմամբ է գրել, քան ենթադրել, որ մեկ մարդու ինտելեկտը գերազանցել է մարդկության մնացած մասի համատեղ բանականությունն ու ուսումնասիրությունները վերջին երեք հազար տարիների ընթացքում, օգտվելով ժամանակակից գործիքներից և միլիոնավոր դրամներից:

Այժմ եկեք նայենք այս գրություններում ձևակերպված օրենքների համակարգին: Դրանք անշուշտ ոչ մի նման օրինակ չեն ունեցել ոչ այն ժամանակ, ոչ էլ հետագայում՝ մինչև քսաներորդ դարը: Նույնիսկ այս դարաշրջանի օրենքները հիմնված են Մովսեսի օրենքում սահմանված

սկզբունքների վրա և հիմնականում ստեղծվել են նրանց կողմից, ովքեր ճանաչել են Մովսեսի օրենքի աստվածային ծագումը:

Տասնաբանությունը ամբողջ օրենքի հակիրճ ամփոփումն է: Տասնաբանական պատվիրանները սահմանում են պաշտամունքի և բարոյականության այնպիսի կանոնակարգ, որը իր յուրահատկությամբ զարմացնում է յուրաքանչյուր ուսումնասիրողի: Եթե դրանք նախկինում հայտնի չլինեին, այլ միայն հիմա գտնվեին Հունաստանի, Հռոմի կամ Բաբելոնի ավերակներում ու նշանավոր վայրերում (երկրներ, որոնք ծաղկել ու ընկել են այս Օրենքների տրվելուց շատ ավելի ուշ), դրանք կհամարվեին արտասովոր, եթե ոչ գերբնական: Բայց դրանց և դրանց պահանջների մանրամասն ծանոթությունը որոշ չափով առաջ է բերել անտարբերություն, այնպես որ դրանց իսկական մեծությունը ակնհայտ է միայն քչերի համար: Ճիշտ է, այդ պատվիրանները Քրիստոսի մասին չեն ուսուցանում, սակայն դրանք տրվել են ոչ թե քրիստոնյաներին, այլ հրեաներին, ոչ թե փրկանքի նկատմամբ հավատք ուսուցանելու համար, այլ մարդկանց համոզելու իրենց մեղավոր վիճակի և փրկանքի անհրաժեշտության մասին: Այս պատվիրանների էությունը արտասովոր կերպով արտահայտվել է քրիստոնեության նշանավոր հիմնադիրի խոսքերում՝ «Սիրիր քո Տեր Աստծուն քո ամբողջ սրտով, ամբողջ հոգով, ամբողջ մտքով ու ամբողջ զորությամբ» և «Սիրիր քո ընկերոջը քո անձի պես» (Մարկոս 12:30, 31):

Մովսեսի կողմից հաստատված կառավարման ձևը տարբերվում էր բոլոր մյուս ձևերից՝ թե՛ անցյալի, թե՛ ներկայի, նրանով, որ այն համարվում էր Ստեղծչի կառավարություն, որի առջև մարդիկ հաշվետու էին.

նրանց օրենքներն ու ինստիտուտները՝ թե՛ քաղաքացիական, թե՛ կրոնական, հաստատում էին, որ գալիս են Աստծուց, և, ինչպես շուտով կտեսնենք, դրանք լիովին համահունչ էին այն բանի հետ, ինչ բանականությունը մեզ սովորեցնում է Աստծո բնավորության մասին: Ճամբարի կենտրոնում գտնվող խորանը իր «Սրբությունների Սրբությունում» ուներ Եհովայի՝ իրենց Թագավորի ներկայության դրսևորումը, որտեղից նրանք գերբնական միջոցներով ստանում էին հրահանգներ իրենց գործերի պատշաճ կառավարման համար որպես ազգ: Հաստատվեց քահանայական կարգ, որը ամբողջությամբ պատասխանատու էր խորանի համար, և միայն նրանց միջոցով էր թույլատրվում մուտք և հաղորդակցություն Եհովայի հետ: Այս համատեքստում ոմանց առաջին միտքը, հավանաբար, կլիներ. «Ահա, այստեղ է նրանց կազմակերպման նպատակը. նրանց մոտ, ինչպես և այլ ազգերում, քահանաներն էին կառավարում ժողովրդին, որոնք օգտվում էին մարդկանց վստահությունից և սերմանում վախ իրենց փառքի և շահի համար»: Բայց սպասիր, բարեկամ. եկեք չշտապենք որևէ բան ենթադրել: Երբ այս հարցը փաստերով ստուգելու համար կա այդքան լավ հնարավորություն, անտրամաբանական է առանց դրանց եզրակացություններ անել: Անառարկելի ապացույցները հակասում են նման ենթադրություններին: Քահանաների իրավունքներն ու արտոնությունները սահմանափակ էին. նրանց ոչ մի քաղաքացիական իշխանություն չէր տրված, և նրանք ամբողջովին զուրկ էին իրենց պաշտոնը ժողովրդի իրավունքների կամ խղճի վրա ճնշում գործադրելու համար օգտագործելու հնարավորությունից. և այս կարգը սահմանվել է Մովսեսի կողմից, որը քահանայական տոհմի անդամ էր:

Հանգամանքների ուժով ամբողջ առաջնորդությունը կենտրոնացավ նրա ձեռքում՝ որպես Աստծո ներկայացուցիչ Իսրայելին Եգիպտոսի ստրկությունից ազատագրելու գործում, ինչը խոնարհ Մովսեսին դարձրեց իշխանությամբ ու լիազորություններով օժտված ինքնակալ: Իրականում, սակայն, իր հեզ բնավորության շնորհիվ նա իր ժողովրդի անխոնջ ծառան էր, և նրա կյանքը անընդհատ սպառվում էր իր պաշտոնի ծանր հոգսերից: Այդ պահին ստեղծվեց քաղաքացիական կառավարություն, որը գործնականում ժողովրդավարություն էր: Թող մեզ սխալ չհասկանան. Իսրայելի կառավարությունը, անհավատների տեսանկյունից, ժողովրդավարական էր, բայց իր սեփական պնդումների լույսի ներքո այն աստվածապետություն էր, այսինքն ՝ աստվածային իշխանություն, քանի որ Մովսեսի միջոցով Աստծո կողմից տրված օրենքները թույլ չէին տալիս որևէ փոփոխություն. դրանց ոչինչ չէր կարելի ավելացնել կամ պակասեցնել: Այսպիսով մենք տեսնում ենք, որ Իսրայելի կառավարության ձևը տարբերվում էր մինչև և հետո գոյություն ունեցած բոլոր քաղաքացիական կառավարություններից. Եհովան ասեց Մովսեսին. «Իսրայելի ծերերի միջից ինձ համար հավաքի՛ր յոթանասուն հոգի, որոնց դու ճանաչում ես որպես ժողովրդի ծերերի և գլխավորների: Նրանց վերցրու բե՛ր ժողովի վրան, և նրանք այնտեղ թող կանգնեն քեզ հետ: Ես կիջնեմ այնտեղ, կխոսեմ քեզ հետ և քեզ վրա եղած հոգուց կառնեմ ու կդնեմ նրանց վրա, որպեսզի նրանք քեզ հետ միասին կրեն ժողովրդի բեռը, և դու միայնակ չկրես դա» (Թվեր 11:16,17 Տես նաև 24-ից 30-րդ խոսքերը՝ որպես ճշմարիտ և անխարդախ պետական իմաստության և հեզության օրինակ): Մովսեսը, պատմելով այս մասին,

ասում է. «Եվ ես ձեզանից վերցրի ձեր ցեղերի գլխավորներին՝ իմաստուն և շրջահայաց մարդկանց, և նրանց ձեզ վրա, ըստ ձեր ցեղերի, կարգեցի իշխաններ՝ հազարապետներ, հարյուրապետներ, հիսնապետներ, տասնապետներ և զորականներ» (Բ Օրենք. 1:15, Ելք 18:13-26):

Այսպիսով պարզ է, որ այս նշանավոր օրենսդիրը, հեռու իր իշխանությունը հավերժացնելու կամ մեծացնելու նպատակից՝ ժողովրդի կառավարությունը իր անմիջական ազգականների, քահանայական ցեղի, ձեռքը հանձնելու: Նրանց կրոնական իշխանությամբ ժողովրդի իրավունքներն ու ազատությունները սահմանափակելու փոխարեն, ընդհակառակը, ժողովրդին ներկայացրեց կառավարման այնպիսի ձև, որը հաշվարկված էր ազատության ոգին խթանելու համար: Մյուս ազգերի ու կառավարիչների պատմություններում նման օրինակ չկա: Յուրաքանչյուր դեպքում իշխողը ձգտել է սեփական փառասիրության և իշխանության ընդլայնման: Նույնիսկ այն դեպքերում, երբ նրանք օգնել են հանրապետություններ հիմնել, հետագա իրադարձությունները ցույց են տվել, որ նրանք դա արել են քաղաքական հաշվարկներով՝ ժողովրդի մոտ համակրանք ձեռք բերելու և սեփական իշխանությունը հավերժացնելու համար: Մովսեսի պայմաններում ցանկացած ամբիցիոզ մարդ, ղեկավարվելով քաղաքական նկրտումներով և փորձելով ժողովրդի նկատմամբ խաբեությունը հավերժացնել, կաշխատեր իշխանության ավելի մեծ կենտրոնացման համար իր և իր ընտանիքի ձեռքում, հատկապես որովհետև դա հեշտ գործ կթվար՝ հաշվի առնելով, որ կրոնական իշխանությունը արդեն այդ ցեղի ձեռքում էր և որ այս ազգը պնդում էր, թե իրեն պետք է կառավարի Աստված՝

Սրբարանից: Չի կարելի ենթադրել, որ մի մարդ, ով ընդունակ է կազմելու նման օրենքներ և կառավարելու նման ժողովրդին, լիներ այնքան դանդաղամիտ, որ չտեսներ իր գործողությունների ուղղվածությունը: Ժողովրդի կառավարումը այնքան ամբողջությամբ հանձնվեց նրանց սեփական ձեռքերին, որ, չնայած պայմանավորված էր, որ այն ծանր գործերը, որոնք այդ դատավորները չէին կարող լուծել, պետք է բերվեին Մովսեսի մոտ, այնուամենայնիվ, նրանք ինքներն էին որոշելու, թե որ գործերն են ներկայացվում Մովսեսի առջև. «Այն դատը, որ ձեզ համար դժվար կլինի վճռել, ի՛նձ ներկայացրեք, և ես կլսեմ այն» (2 Օրենք 1:17):

Այսպիսով, Իսրայելը հանրապետություն էր, որի պաշտոնյաները գործում էին աստվածային հանձնարարագրով: Իսկ նրանց շփոթության համար, ովքեր անտեղյակաբար պնդում են, որ Աստվածաշունչը օրինականացնում է ժողովրդի նկատմամբ հաստատված կայսրապետական իշխանությունը՝ «ժողովրդի կողմից և ժողովրդի համար կառավարման» փոխարեն, նշենք, որ այս հանրապետական քաղաքացիական կառավարման ձևը շարունակվեց ավելի քան չորս հարյուր տարի: Հետագայում, «ծերերի» խնդրանքով և առանց Տիրոջ հավանության այն փոխարինվեց թագավորությամբ: Աստված ասաց Սամուելին, ով այդ ժամանակ գործում էր որպես ոչ պաշտոնական նախագահ, «Լսիր ժողովրդի ձայնը ամենում, ինչ նրանք քեզ ասում են, որովհետև նրանք ոչ թե քեզ մերժեցին, այլ ինձ մերժեցին, որ ես չթագավորեմ նրանց վրա»: Աստծո հորդորով Սամուելը բացատրեց ժողովրդին, թե ինչպես իրենց իրավունքներն ու ազատությունները անտեսվելու են և ինչպես նրանք այդ փոփոխության արդյունքում ծառաներ կդառնան, սակայն նրանք տարված էին այդ հանրաճանաչ

գաղափարով, որը տարածված էր նրանց շուրջը գտնվող այլ ազգերի մոտ (Ա Սամուել 8:6-22): Մտածելիս նրանց թագավոր ունենալու ցանկության այս պատմության մասին, ով չի տպավորվում այն մտքից, որ Մովսեսը կարող էր առանց դժվարության ամուր հաստատվել մեծ կայսրության գլխին:

Չնայած Իսրայելը ընդհանուր առմամբ մեկ ժողովուրդ էր, Յակոբի մահից հետո դեռևս գոյություն ուներ մշտական բաժանում ցեղերի միջև: Յուրաքանչյուր ընտանիք կամ ցեղ համատեղ համաձայնությամբ ընտրում կամ ճանաչում էր որոշ անդամների որպես իր ներկայացուցիչներ կամ գլխավորներ: Այս սովորույթը շարունակվեց անգամ նրանց երկար ստրկության տարիներին Եգիպտոսում: Նրանց կոչում էին գլխավորներ կամ ծերեր, և հենց նրանց Մովսեսը հանձնեց քաղաքացիական կառավարման պատիվն ու իշխանությունը: Մինչդեռ, եթե նա ցանկանար իշխանությունը կենտրոնացնել ինքն իր վրա և իր սեփական ընտանիքում, ապա նրանք կլինեին վերջին մարդիկ, որոնց կհանձներ իշխանություն և պաշտոն:

Աստծուց քաղաքացիական իշխանություն ստանձնածներին տրված հրահանգները պարզության և մաքրության օրինակ են: Մովսեսը հայտարարում է ժողովրդին՝ այս դատավորների ներկայությամբ. «Այն ժամանակ ես պատվիրեցի ձեր դատավորներին՝ ասելով. «Լսե՛ք ձեր եղբայրների միջև եղած դատերը և արդարությա՛մբ դատեք ամեն մարդու դատը թե՛ իր եղբոր և թե՛ օտարականի հետ: Դատաստան անելիս աչառություն չանեք, փոքրին լսե՛ք մեծի նման, ոչ մի մարդուց բնավ մի՛ վախեցեք, որովհետև դատաստանը Աստծունն է: Այն դատը, որ ձեզ համար դժվար կլինի վճռել,

ի՛նձ ներկայացրեք, և ես կլսեմ այն» (2 օրենք 1:16,17): Մովսեսի մահից հետո նման դժվար գործերը ուղղակիորեն բերվում էին Տիրոջ մոտ՝ քահանայապետի միջոցով, իսկ պատասխանը՝ «Այո» կամ «Ոչ», տրվում էր Ուրիմի և Թումմիմի միջոցով:

Այս փաստերի լույսի ներքո ի՞նչ ասենք այն տեսության մասին, ըստ որի այս գրքերը գրվել են նենգ քահանաների կողմից՝ ժողովրդի վրա ազդելու և իշխանություն ձեռք բերելու նպատակով: Արդյոք կարո՞ղ էին նման մտադրություններ ունեցող մարդիկ հորինել մի պատմություն, որը քանդում էր նրանց առաջ եղած նպատակները՝ համոզիչ կերպով ապացուցելով, որ Իսրայելի մեծ առաջնորդը, որը պատկանում էր նրանց ցեղին, Աստծո հրամանով հեռացրել է քահանաներին քաղաքացիական իշխանությունից և հանձնել այդ իշխանությունը ժողովրդին: Կարելի՞ է նման եզրակացությունը համարել տրամաբանական:

Նույնպես արժե նշել, որ քսաներորդ դարի ամենաառաջադեմ քաղաքակրթության օրենքները նույնիսկ ավելի մեծ հոգատարությամբ չեն երաշխավորում քաղաքացիական օրենքի առջև հարուստների և աղքատների նույն մակարդակի պատասխանատվությունը: Մովսեսի օրենքները ամբողջովին ոչ մի տարբերություն չէին դնում: Իսկ ինչ վերաբերում է ժողովրդի պաշտպանությանը այն վտանգներից, որոնք առաջանում են, երբ ոմանք դառնում են չափազանց աղքատ, իսկ մյուսները՝ չափազանց հարուստ ու հզոր, երբևէ չի ընդունվել որևէ պետական օրենք, որը այս կետը նույնքան ուշադիր պաշտպաներ: Մովսեսի օրենքը նախատեսում էր վերականգնում յուրաքանչյուր հիսուներորդ տարում՝ նրանց Հոբելյան

տարում: Այս օրենքը, կանխելով սեփականության ամբողջական օտարումը, միևնույն ժամանակ խոչընդոտում էր դրա կուտակումը մի քանիսի ձեռքում (Ղևտ. 25:9,13-23,27-30): Իրականում նրանց սովորեցնում էին դիտել միմյանց որպես եղբայրներ և գործել համապատասխանաբար՝ օգնել միմյանց առանց հատուցման և միմյանցից վաշխ չվերցնել (Տես Ելք 22:25, Ղևտական 25:36,37, Թվեր 26:52-56):

Բոլոր օրենքները հրապարակային էին, ինչը թույլ չէր տալիս նենգ մարդկանց հաջողությամբ խախտել ժողովրդի իրավունքները: Օրենքները ներկայացված էին այնպես, որ ցանկացած ոք կարող էր դրանք պատճենել և որպեսզի ամենաաղքատն ու ամենաանուսումնավորը անտեղյակ չմնային, քահանաների պարտականություն էր դրանց ընթերցումը ժողովրդի առջև յոթնամյա տոներին (2 Օրենք. 31:10-13): Արդյո՞ք տրամաբանական է ենթադրել, որ նման օրենքներն ու կարգավորումները մշակվել են չար մարդկանց կամ նրանց կողմից, ովքեր ծրագրում էին ժողովրդին զրկել իր ազատություններից և երջանկությունից: Նման ենթադրությունը անհիմն կլիներ:

Երբ խոսքը վերաբերում է օտարների և նույնիսկ թշնամիների իրավունքներին ու շահերին, Մովսեսի օրենքը իր ժամանակից երեսուն երկու դար առաջ էր՝ եթե անգամ այսօրվա ամենաքաղաքակիրթ երկրների օրենքները կարող են նրան համեմատվել հավասար բարության և արդարության առումով: Մենք կարդում ենք.

«Օրենքը նույնը պետք է լինի ինչպես օտարականի, այնպես էլ տեղացու համար. որովհետև ես եմ Եհովան՝ ձեր Աստվածը» (Ելք 12:49, Ղևտական 24:22):

«Եթե մի օտարական ձեր երկրում, ձեզ մոտ պանդխտանալու լինի, չնեղեք նրան: Ձեզ մոտ պանդխտության եկած օտարականը ձեր երկրի տեղաբնակի պես թող լինի ձեզ համար: Նրան սիրի՛ր քո անձի պես, որովհետև դուք էլ օտարական էիք Եգիպտոսի երկրում» (Ղևտական 19:33,34):

Եթե հանդիպես քո թշնամու մոլորված եզանը կամ էշին, անպատճառ դրան ետ կդարձնես տիրոջը: Եթե տեսնես քեզ ատողի էշն իր բեռան տակ ընկած, նրան մի՛ թող, տիրոջ հետ նրան անպատճառ ազատի՛ր (Ելք 23:4,5):

Նույնիսկ անխոս կենդանիները մոռացության չէին մատնվել: Այս կենդանիների և մարդկանց նկատմամբ դաժանությունը խստիվ արգելվում էր: Հացահատիկ կալսելիս արգելված էր եզի դունչը կապել, քանի որ աշխատողը արժանի է իր վարձատրությանը: Նմանապես, եզն ու էշը չէին կարող միասին վարել՝ իրենց անհավասար ուժի և անհավասար արագության պատճառով՝ դա կլիներ դաժանություն: Նրանց համար նույնպես նախատեսված էր հանգիստ (2 Օրենք 25:4, 22:10, Ելք 23:12):

Ոմանք կարող են պնդել, որ քահանայությունը եսասիրական հաստատություն էր, քանի որ Ղևի ցեղը սնվում էր մյուս ցեղերի եղբայրների բերքի տարեկան տասանորդի հաշվին: Այսպես ներկայացնելիս՝ այս փաստը կողմնակալ մեկնաբանություն է, որը բնորոշ է կասկածամիտներին: Միգուցե նրանք անգիտակցաբար սխալ ներկայացնում են Աստծո այս համակարգի կազմակերպման մեջ ներգրավվածության ամենաուշագրավ ապացույցներից մեկը և չեն ընդունում, որ այս համակարգը եսասեր ու խորամանկ քահանաների գործը չէր:

Իրականում այն հիմնված էր ամենախիստ արդարության վրա: Երբ Իսրայելը տիրացավ Քանան երկրի հողին, Ղևտացիները անշուշտ ունեին հողի բաժնեմաս ստանալու նույնքան իրավունք, որքան մյուս ցեղերը, սակայն Աստծո հստակ հրամանով նրանք ոչինչ չստացան դրանից, բացի որոշ քաղաքներից կամ գյուղերից, որոնք սփռված էին տարբեր ցեղերի մեջ և որոնք նրանք պետք է ծառայեին կրոնական գործերում: Այս արգելքը տրվում է ինը անգամ՝ հողի բաժանումից առաջ: Հողի փոխարեն նրանց անշուշտ պետք է տրվեր ինչ-որ համարժեք, և տասանորդը այդ պատճառով հանդիսանում էր այս ողջամիտ և արդար միջոցը: Եվ դա ամենը չէ. տասանորդը, թեև, ինչպես տեսանք, արդար պարտավորություն էր, այն չէր պարտադրվում որպես հարկ, այլ պետք է վճարվեր որպես կամավոր նվիրատվություն: Եվ ոչ մի սպառնալիք նրանց չէր պարտադրում կատարել այդ նվիրատվությունները. ամեն ինչ կախված էր նրանց խղճից: Այս հարցի շուրջ ժողովրդին ուղղված միակ հորդորը այսպիսին էր՝

«Զգո՛ւյշ եղիր, որ ղևտացուն չանտեսես քո երկրի վրա քո կյանքի բոլոր օրերին» (2 Օրենք 12:19): «Աչքաթող չանես քո քաղաքում գտնվող ղևտացուն, որովհետև նա քեզ հետ բաժին ու ժառանգություն չունի» (Թվեր 14:27):

Արդյո՞ք խելամիտ է ենթադրել, որ նման կարգադրություն սահմանել են եսասեր ու փառասեր քահանաները, որոնք զրկել են իրենք իրենց ժառանգությունից և կախված են դարձրել իրենց եղբայրների աջակցությունից: Արդյո՞ք բանականությունը մեզ հակառակը չի սովորեցնում:

Սա համապատասխանում է այն փաստին (որը միայն կարելի է բացատրել այն հիմքով, որ Աստված է այս

օրենքների հեղինակը), որ քահանաներին պատվելու համար որևէ հատուկ միջոցառումներ չեն եղել: Հակառակը, կեղծավորները ոչինչ չէին ցանկանա ավելի շատ, քան իրենց համար պատիվ ու հարգանք ապահովել, ինչպես նաև խիստ պատիժներ ու անեծքներ նրանց համար, ովքեր իրենց հանդեպ վատ կվերաբերվեին: Սակայն այստեղ նման բան չկա: Բռնության և վիրավորանքների դեմ պաշտպանվելու համար որևէ հատուկ պատիվ, հարգանք կամ անձեռնմխելիություն չի նախատեսվել: Միակ պաշտպանությունը Օրենքն էր, ընդհանուր բոլորի համար, որը դասակարգային տարբերություններ չէր անում և անձանց նկատմամբ խտրականություն չէր կիրառում: Այս ամենը առավել տպավորիչ է, երբ իմանում ենք, որ ծառաների, օտարների և տարեցների նկատմամբ վերաբերմունքը կարգավորվում էր հատուկ օրենսդրությամբ: Օրինակ՝ «Օտարականին մի՛ չարչարիր և մի՛ նեղիր նրան… Ոչ մի որբևայրու կամ որբի բնավ մի՛ չարչարեք… Եթե նրան չարչարես, և նա ինձ բողոքի, անպատճառ կլսեմ նրա աղաղակը. իմ բարկությունը կբորբոքվի, և ձեզ սրով կսպանեմ. ձեր կանայք որբևայրի, իսկ ձեր զավակները որբ կդառնան» (Ելք 22:21-24, 23:9, Ղևտ. 19:33,34): «Աղքատ և կարիքավոր վարձկանին չզրկես, լինի քո եղբայրներից մեկը կամ քո երկրում, քո քաղաքում գտնվող օտարականներից: Նույն օրը՝ արեգակը դեռ մայր չմտած, կհատուցես նրա վարձը, որովհետև նա աղքատ է և սրտանց սպասում է դրան: Չլինի որ քեզ համար Եհովային բողոքէ, և դու մեղքի տեր դառնաս» (Ղևտ. 19:13, 2 Օրենք 24:14,15, Ելք. 21:26,27) «Ալեհեր մարդու առաջ վե՛ր կաց, ծերին պատվի՛ր և վախեցի՛ր քո Աստծուց. ես եմ Եհովան» (Ղևտ.19:32. Տես նաև Ղևտ.19:14) Այս ամենում ոչ մի

առանձնահատուկ բան չկա քահանաների, ղևտացիների կամ նրանց տասանորդների համար:

Օրենքի սանիտարական կարգավորումները, որոնք այնքան անհրաժեշտ էին աղքատ ու երկար ժամանակ ճնշված ժողովրդի համար, ինչպես նաև մաքուր և անմաքուր կենդանիների վերաբերյալ կանոնակարգերն ու սահմանափակումները, որոնց օգտագործումը թույլատրվում կամ արգելվում էր, զարմանալի են: Եթե տեղը բավական լիներ, հետաքրքիր կլիներ դրանք դիտարկել նաև այլ մանրամասների համատեքստում, քանի որ դրանք ցույց են տալիս, որ օրենքը ոչ միայն համընթաց էր այս առումով վերջին բժշկական նվաճումներին, այլև, հնարավոր է, նույնիսկ առաջ էր դրանցից: Մովսեսի օրենքը բնույթով նաև խորհրդանշական էր, սակայն դա թողնենք ապագա քննարկմանը: Նույնիսկ մակերեսային հայացքը տպավորիչ ապացույցներ է տալիս, որ այս օրենքը (որը կազմում է ամբողջ կրոնական համակարգի ողնաշարը՝ լրացված Աստվածաշնչի մնացած մասերով) իսկապես իմաստնության և արդարության բացառիկ դրսևորում է, հատկապես հաշվի առնելով դրա տարիքը:

Ըստ առողջ բանականության, բոլորը պետք է ընդունեն, որ օրենքում չկա որևէ բան, որը այն բնորոշի որպես չար և նենգ մարդկանց ստեղծած: Հակառակը, այն ամբողջությամբ համապատասխանում է այն բնույթին, որը բնությունը կոչում է Աստծո բնույթ: Այն վկայում է Նրա իմաստության, արդարության և սիրո մասին: Ավելին, աստվածապաշտ ու ազնիվ օրենսդիր Մովսեսը հերքում, է որ օրենքները իր սեփականն են, և վերագրում է դրանք Աստծուն (Ելք 24:12, 2 Օրենք 9:9-11, Ելք 26:30, Ղևտական 1:1). Հաշվի առնելով նրա ամբողջական բնավորությունը

և մարդկանց տված նրա հրահանգները՝ սուտ վկայություն չտալ, խուսափել կեղծավորությունից և ստից, արդյո՞ք տրամաբանական է ենթադրել, որ նման մարդը կեղծ վկայություն տված լինի և իր սեփական տեսակետներն ու օրենքները ներկայացնի որպես Աստծո օրենքներ: Պետք է նաև հիշել, որ մենք ուսումնասիրում ենք Աստվածաշնչի ներկայիս օրինակները, և, հետևաբար, այն ազնվությունը, որով այն այդքան առանձնանում է, հավասարապես վերաբերում է նաև Մովսեսի իրավահաջորդներին: Չնայած այս հաջորդների մեջ էլ կային վատ մարդիկ, որոնք իրենց, այլ ոչ թե ժողովրդի շահն էին փնտրում, նրանք ակնհայտորեն չեն փոփոխել Սուրբ Գրքերը, որոնք մինչև օրս մնում են անաղարտ:

Աստվածաշնչի մարգարեները

Այժմ մի հայացք նետենք Աստվածաշնչի մարգարեների ընդհանուր բնավորությանը և նրանց վկայություններին: Շատ ուշագրավ է այն փաստը, որ մարգարեները, մի քանի բացառություններով, քահանայական դասից չէին, և որ իրենց օրերում նրանց մարգարեությունները ընդհանուր առմամբ հակասում էին անկում ապրող և կոնֆորմիստական քահանայությանը, ինչպես նաև կուռքապաշտական հակումներ ունեցող ժողովրդին: Աստծուց ժողովրդին ուղղված նրանց ուղերձների բովանդակությունը մարդկանց համար հիմնականում մեղքի նկատմամբ հանդիմանությունն էր, որին կից հնչում էին գալիք պատժերի նախազգուշացումներ, և որոնց մեջ երբեմն ներառված էին ապագա օրհնությունների խոստումներ՝ երբ նրանք մաքրվեն մեղքերից և վերադառնան Տիրոջ շնորհին: Նրանց փորձառությունները մեծ մասամբ ոչ մի նախանձելի բան չէին պարունակում. նրանց

արհամարհում էին, շատերը բանտարկվեցին և բռնի մահով մահացան (տես Գ Թագավորաց 18:4, 10, 17, 18, 19:10, Երեմիա 38:6, Եբրայեցիներ 11:32-38): Երբեմն նրանց մահից հետո տարիներ էին անցնում, մինչև նրանց իսկական բնավորությունը որպես Աստծո մարգարեներ ճանաչվեր: Սակայն այստեղ խոսքը վերաբերում է այն մարգարե-գրողներին, որոնց խոսքերը համարվում են ուղղակիորեն ներշնչված Եհովայից: Այս համատեքստում լավ է հիշել, որ Իսրայելին օրենքը տալու ժամանակ չկար քահանայական միջամտություն. այն Աստված տվեց ժողովրդին Մովսեսի ձեռքով (Ելք 19:17-25, 2 Օրենք 5:1-5): Եվ, բացի այդ, յուրաքանչյուր մարդու պարտականությունն էր, ով տեսնում էր օրենքի խախտում, հանդիմանել մեղավորին. (Ղևտ. 19:17) Հետևաբար, բոլորը իրավունք ունեին ուսուցանելու և հանդիմանելու: Սակայն, քանի որ մեծամասնությունը, ինչպես մեր օրերում, տարված էր իր առօրյա հոգսերով և դառնում էր սառն ու անտարբեր կրոնի նկատմամբ, քչերն էին կատարում այս պահանջը՝ մեղքը հանդիմանելու և առաքինությունը խրախուսելու համար: Հին և Նոր Կտակարաններում նման քարոզիչները կոչվում են «մարգարեներ»: «Մարգարե» բառը, ինչպես այն սովորաբար օգտագործվում է, նշանակում է հանրային մեկնաբան: Կռապաշտության հանրային ուսուցիչներն էլ այդպես էին կոչվում. օրինակ՝ «Բահաղի մարգարեներ» և այլն (Տես Ա Կորնթ. 14:1-6, Բ Պետրոս 2:1, Մատթեոս 7:15, 14:5, Նեեմիա 6:7, Ա Թագավորաց 18:40, Տիտոս 1:12):

Մարգարեությունը, որպես սովորական ուսուցման ձև, հետագայում որոշակի խավի շրջանում տարածվեց և վերածվեց փարիսականության՝ Աստծո պատվիրանների փոխարեն ուսուցանելով ծերերի ավանդույթները, այդպիսով հակադրվելով ճշմարտությանը և դառնալով

կեղծ մարգարեներ կամ կեղծ ուսուցիչներ (Մատթեոս 15:2-9):

Այս մեծ դասից, որոնք կոչվում էին մարգարեներ, Եհովան տարբեր ժամանակներում ընտրել է որոշ մարդկանց, որոնց հատուկ հանձնարարել է փոխանցել ուղերձներ՝ երբեմն այն ժամանակների իրադարձություններին առնչվող, երբեմն էլ ապագա իրադարձություններին: Մենք այժմ ուշադրություն կդարձնենք այս դասի գրություններին, որոնք խոսել և գրել են այնպես, ինչպես նրանց ոգեշնչել է Սուրբ Հոգին: Նրանց տեղին է անվանել

Աստծո կողմից նշանակված մարգարեներ

Երբ հիշում ենք, որ այս մարգարեները հիմնականում աշխարհիկ մարդիկ էին, որոնք ոչ մի աջակցություն չէին ստանում քահանայական ցեղի տասանորդներից, և երբ դրան գումարվում է այն փաստը, որ նրանք հաճախ ոչ միայն հանդիմանում էին թագավորներին ու դատավորներին, այլև քահանաներին (չնայած նրանք հանդիմանում էին ոչ թե պաշտոնը, այլ այն մարդկանց անձնական մեղքերը, որոնք զբաղեցնում էին այդ պաշտոնը), Պարզ է դառնում, որ մենք ողջամիտ հիմք չունենք պնդելու, թե այս մարգարեները որևէ քահանայական կամ այլ դաշինքի անդամներ են եղել՝ Աստծո անունով կեղծիք հորինելու նպատակով: Փաստերի լույսի ներքո բանականությունը հերքում է նման կասկածը:

Արդ, եթե մենք չգտնենք որևէ պատճառ Աստվածաշնչի տարբեր հեղինակների դրդապատճառները կասկածի տակ դնելու համար, այլ գտնում ենք, որ դրա տարբեր մասերը լցված են

արդարության և ճշմարտության ոգով, ապա եկեք հաջորդաբար քննենք՝ արդյոք գոյություն ունի որևէ կապ կամ միության հանգույց Մովսեսի, մյուս մարգարեների և Նոր Կտակարանի հեղինակների գրությունների միջև: Եթե մենք գտնենք մի ընդհանուր մտքի գիծ, որը հյուսված է ամբողջությամբ Օրենքների, Մարգարեների և Նոր Կտակարանի գրություններում, որոնք ընդգրկում են հազար հինգ հարյուր տարվա ժամանակահատված, սա, հեղինակների բնավորության հետ միասին, լավ պատճառ կլինի ընդունելու նրանց պնդումը՝ այն մասին, որ նրանք աստվածային ոգեշնչմամբ են գրել, հատկապես եթե նրանց բոլորի ընդհանուր թեման մեծ ու ազնիվ է և համընկնում է այն բանի հետ, ինչ սրբացված առողջ միտքը սովորեցնում է Աստծո բնավորության և հատկությունների մասին:

Եվ մենք իսկապես համոզված ենք այս հարցում. մեկ ծրագիր, մեկ ոգի, մեկ նպատակ և մեկ մտադրություն թափանցում են ամբողջ գիրքը. դրա առաջին էջերը պատմում են մարդու ստեղծման և անկման մասին, վերջին էջերը՝ մարդու վերադարձի մասին այս անկումից, իսկ դրանց միջև գտնվող բոլոր էջերը ցույց են տալիս Աստծո ծրագրի հաջորդական քայլերը, որոնք ուղղված են այս նպատակին հասնելուն. Աստվածաշնչի առաջին երեք և վերջին երեք գլուխների միջև ներդաշնակությունն ու, միևնույն ժամանակ, հակադրությունը ուղղակի զարմանալի է: Առաջինները նկարագրում են սկզբնական ստեղծումը, երկրորդները՝ ստեղծման վերականգնումը, վերածնունդը, ինչպես նաև մեղքի և դրա համար դրված անեծքի վերացումը: Առաջինները ցույց են տալիս, թե ինչպես Սատանան և չարը մտան աշխարհ՝ խաբելու և ոչնչացնելու համար, իսկ երկրորդները ցույց են տալիս նրա գործի ոչնչացումը, ավերվածի վերականգնումը, չարի

արմատախիլ անումը և Սատանայի ոչնչացումը: Առաջինները ցույց են տալիս Ադամի կորցրած տիրապետությունը, իսկ երկրորդները՝ դրա վերադարձը և Քրիստոսի կողմից հավիտենապես հաստատումը, ինչպես նաև Աստծո կամքի կատարումը երկրի վրա, ինչպես որ այն կատարվում է երկնքում: Առաջինները մեղքը ներկայացնում են որպես անկման, ամոթի և մահվան արմատային պատճառ, իսկ երկրորդները՝ արդարության պարգևը՝ փառք, պատիվ և կյանք:

Չնայած գրված է բազմաթիվ գրիչներով, տարբեր ժամանակներում և տարբեր հանգամանքներում, Աստվածաշունչը ոչ միայն բարոյական կանոնների, իմաստուն առակների և մխիթարական խոսքերի ժողովածու է: Այն ավելի է. դա տրամաբանական, փիլիսոփայական և ներդաշնակ ներկայացումն է աշխարհում ներկայիս չարի պատճառների, դրա միակ բուժման և վերջնական արդյունքների, ինչպես դրանք տեսնում է աստվածային իմաստությունը, որը տեսել է ծրագրի ավարտը դեռևս սկզբից, նշելով նաև Աստծո ժողովրդի ճանապարհը և նրանց աջակցելով ու ամրապնդելով չափազանց մեծ ու թանկագին խոստումներով, որոնք պետք է իրականանան ժամանակին:

Ծննդոց գրքի ուսուցումը, որ մարդը փորձվել է սկզբնական կատարելության վիճակում մեկ ներկայացուցչի մեջ, որ նա ձախողվել է, և որ ներկայիս անկատարությունը, հիվանդությունն ու մահը դրա արդյունքներն են, բայց որ Աստված չի լքել նրան և, ի վերջո, կվերականգնի նրան կնոջից ծնված փրկչի միջոցով (Ծնն. 3:15) անընդմեջ հաստատվում և լրացվում է ամբողջ Աստվածաշնչում: Փրկչի մահվան

անհրաժեշտությունը որպես մեղքերի զոհաբերություն և նրա արդարությունը որպես մեր մեղքերի ծածկոց ցույց է տրվում Ադամի ու Եվայի կաշվե հագուստով, Աբելի զոհերի ընդունմամբ, Իսահակի զոհաբերությամբ, զանազան զոհերի մահով, որոնց միջոցով հայրապետները մուտք էին գործում Աստծո մոտ, ինչպես նաև օրենքի ներքո հաստատված և հրեական ամբողջ դարաշրջանում շարունակվող զոհերով: Չնայած մարգարեները միայն մասամբ կարող էին հասկանալ իրենց որոշ հայտարարությունների նշանակությունը (Ա Պետրոս 1:12), նրանք մեղքերը մարդու վրա դնելու մասին էին խոսում, ոչ թե անխոս կենդանու, և իրենց մարգարեական տեսիլքում նրանք տեսան Նրան, ով փրկելու և ազատելու էր մարդկությունը, որին «գառի պես մորթի տարան... «սպանության», որպեսզի «մեր խաղաղության պատիժը նրա վրա լինի» և որ «նրա վերքերով մենք բժշկվեցինք»: Նրանք ասացին, որ «Նա արհամարհված և մարդկանց կողմից մերժված էր, տառապանքների մարդ էր և ծանոթ վշտին», և «Տերը դրեց նրա վրա մեր բոլորի անօրինությունը» (Ես. 53:3-7).Նրանք հայտնեցին, թե որտեղ կծնվի այս փրկիչը (Միք. 5:2), և երբ կմահանա, վստահեցնելով մեզ, որ դա «ոչ թե իր համար» կլինի: (Դան. 9:26) Նրանք նշում են նրա վերաբերյալ տարբեր մանրամասներ՝ որ նա կլինի «արդար» և «խաբեությունից» զերծ, «բռնությունից», կամ մահվան որևէ արդարացի պատճառից (Ես. 53:8,9,11), որ նա կդավաճանվի երեսուն արծաթի դիմաց (Զք. 11:12), որ նա իր մահվան ժամանակ հանցավորների շարքին կդասվի (Ես. 53:12), որ նրա ոչ մի ոսկոր չի կոտրվի (Սաղմոս 34:20, Հովհ. 19:36), և որ, թեև նա կմահանա և կթաղվի, նրա մարմինը ապականություն չի տեսնի, և նա գերեզմանում չի մնա (Սաղմոս 16:10, Գործք 2:31):

Նոր Կտակարանի հեղինակները կենդանի, համոզիչ, սակայն պարզ ձևով նկարագրում են, թե ինչպես այս բոլոր մարգարեությունները կատարվեցին Նազարեթցի Հիսուսի կյանքում: Նրանց տրամաբանական հիմնավորումները ցույց են տալիս, որ մինչ աշխարհի մեղքերը վերացվեին, անհրաժեշտ էր փրկանքի գին, որը Նա վճարեց և որը կանխատեսված էր Օրենքում և Մարգարեներում (Եսայիա 1:18): Նրանք ամբողջ ծրագիրը շատ տրամաբանական և համոզիչ ձևով են ներկայացնում՝ ոչ թե իրենց ունկնդիրների նախապաշարմունքներին կամ կողմնակալություններին դիմելով, այլ միայն նրանց լուսավորված մտքերին, ներկայացնելով տվյալ թեմայով առկա ամենակարճ և ամենահամոզիչ բացատրություններից մի քանիսը (տես Հռոմ. 5:17-19 և այնուհետև մինչև 12-րդ գլուխ):

Մովսեսը Օրենքում մատնանշեց ոչ միայն զոհաբերություն, այլև մեղքերի ջնջում և ժողովրդի օրհնություն այս մեծ փրկչի առաջնորդության ներքո, որի զորությունն ու իշխանությունը, ինչպես նա հայտարարում է, շատ ավելի մեծ կլինի, քան իր սեփականը, թեև «նման» կլինի դրան (2 Օրենք 18:15,19): Խոստացված փրկիչը օրհնելու է ոչ միայն Իսրայելին, այլ Իսրայելի միջոցով «երկրի բոլոր ընտանիքներին»: (Ծնունդոց 12:3, 18:18, 22:18, 26:4) Եվ չնայած հրեական ժողովրդի հակառակ նախապաշարմունքներին, մարգարեները շարունակում են նույն ոգով, հայտարարելով, որ Մեսիան նաև «լույս կլինի ազգերի համար» (Եսայա 49:6, Ղուկաս 2:32), որ ազգերը երկրի ծայրերից քեզ մոտ պիտի գան (Երեմիա 16:19), որ նրա անունը «պիտի մեծ լինի ազգերի մեջ» (Մաղաքիա 1:11), և որ «Տիրոջ փառքը պիտի հայտնվի, և ամեն մարմին միասին պիտի տեսնեն այն» (Եսայիա 40:5) Տես նաև Ես. 42:1-7:

Նոր Կտակարանի հեղինակները պնդում են, որ աստվածային օծումը թույլ է տվել նրանց ճանաչել Քրիստոսի զոհաբերության վերաբերյալ մարգարեությունների կատարումը: Չնայած, ինչպես հրեաները, նրանք նախապաշարմունք ունեին հավատալու, որ բոլոր օրհնությունները պատկանում են միայն իրենց ժողովրդին (Գործք 11:1-18), նրանք, այնուամենայնիվ, հասկանում էին, որ եթե իրենց ժողովուրդը օրհնություններ ստանա, ապա երկրի բոլոր ցեղերը օրհնված կլինեն նրանց հետ և նրանց միջոցով: Նրանք նաև տեսան, որ թե՛ Իսրայելի, թե՛ աշխարհի օրհնությունից առաջ պետք է ընտրվի «փոքր հոտ» թե՛ հրեաներից, թե՛ հեթանոսներից, որոնք փորձության մեջ գտնվելով կհամարվեն արժանի դառնալ Մեծ Փրկչի փառքի և պատվի ժառանգակիցներ և նրա հետ կկիսեն Իսրայելին և բոլոր ազգերին օրհնելու պատիվը (Հռոմ. 8:17):

Այս հեղինակները մատնանշում են այս տեսակետի ներդաշնակությունը Օրենքում և Մարգարեներում գրվածի հետ, և նրանց ներկայացրած ծրագրի մեծությունն ու լայնությունը գերազանցում է ամենաբարձր պատկերացումը այն մասին, թե ինչ է այն ձգտում լինել՝ «Մեծ ուրախության ավետիս, որը լինելու է բոլոր մարդկանց համար»:

Մովսեսի գրքերում հուշված այն միտքը, որ Մեսիան կլինի ոչ միայն Իսրայելի, այլև ողջ աշխարհի տիրակալը, հանդիսանում է բոլոր մարգարեների թեման: Առաքյալների ուսմունքում ևս Թագավորության գաղափարը շատ կարևոր տեղ էր զբաղեցնում: Հիսուս մեզ սովորեցրեց աղոթել. «Գա Քո արքայությունը», և խոստացավ դրա մեջ մասնակցություն նրանց, ովքեր նախ

տառապել են ճշմարտության համար և այդպիսով ապացուցեն իրենց արժանի լինելը:

Այս գալիք փառավոր թագավորության հույսը բոլոր հավատացյալներին տվեց քաջություն տանելու հալածանքը և կրելու վիրավորանք, զրկանքներ և կորուստներ, անգամ մինչև մահ: Ուստի, Նոր Կտակարանի ավարտին հասնող մեծ այլաբանական մարգարեությունում հստակ ցույց է տրվում, որ «Զոհված Գառն արժանի է», և «հաղթողները», որոնց Նա Իր Թագավորությունում կդարձնի թագավորներ և քահանաներ, արժանի են, ինչպես նաև ցույց է տրվում այն դժվարություններն ու խոչընդոտները, որոնք նրանք պետք է հաղթահարեն, որպեսզի արժանի դառնան մասնակցելու այս Թագավորությանը: Այնուհետև ցուցադրվում են խորհրդանշական պատկերներ այն օրհնությունների մասին, որոնք կտրվեն աշխարհին հազարամյա թագավորության ժամանակ, երբ Սատանան կապված կլինի, Ադամի մահը և ողջ տխրությունը կոչնչանան, և երբ երկրի բոլոր ազգերը կքայլեն երկնային Թագավորության՝ Նոր Երուսաղեմի լույսով:

Սկզբից մինչև վերջ Աստվածաշունչը առաջ է քաշում մի ուսմունք, որը ոչ մի այլ տեղ չի հանդիպում և հակադրվում է բոլոր հեթանոսական կրոնների տեսություններին: Այն վերաբերում է այն փաստին, որ մահացածների ապագա կյանքը կգա մահացածների հարության միջոցով: Բոլոր ոգեշնչված հեղինակները արտահայտել են իրենց վստահությունը Փրկչի հանդեպ, և նրանցից մեկը ասել է, որ «առավոտյան», երբ Աստված նրանց դուրս կհանի գերեզմանից և նրանք դուրս կգան, մեղավորները այլևս չեն տիրի երկրի վրա, որովհետև «առավոտյան արդարները կտիրեն նրանց վրա»

(Սաղմոսներ 49:14): Մարգարեները խոսում են մեռելների հարության մասին, իսկ Նոր Կտակարանի հեղինակները իրենց բոլոր հույսերը ապագա կյանքի և օրհնության համար դնում են դրա վրա: Պողոսն ասում է դրա մասին. «Եթե մեռելների հարություն չկա, ապա Քրիստոսն էլ հարություն չի առել, Եվ եթե Քրիստոսը հարություն չի առել, ուրեմն մեր քարոզչությունն ունայն է, ունայն է և ձեր հավատը... Ուրեմն նրանք էլ, ովքեր Քրիստոսով ննջեցին, կորան ... Բայց հիմա Քրիստոսը հարություն է առել մեռելներից՝ ննջեցյալների առաջին պտուղը... Ինչպես Ադամով բոլորը մեռնում են, այնպես էլ Քրիստոսով բոլորը կկենդանանան...» (Ա Կորնթ. 15:13-22):

Ինչպես ժամացույցը, որի բազմաթիվ անվակները կարող են առաջին հայացքից թվալ ավելորդ, սակայն որի ամենադանդաղ անվակներն անփոխարինելի են, այնպես էլ Աստվածաշունչը, որը բաղկացած է բազմաթիվ մասերից և կազմվել է բազմաթիվ հեղինակների կողմից, մեկ ամբողջական և ներդաշնակ ամբողջություն է: Միայն մի մասը անգամ ավելորդ չէ, և թեև որոշ մասեր ավելի ակտիվ և առաջնային տեղ են զբաղեցնում, քան մյուսները, բոլորն էլ օգտակար և անհրաժեշտ են: Ներկայիս կոչված «առաջադեմ մտածողների» և «մեծ աստվածաբանների» շրջանում տարածվում է թեթև վերաբերվել կամ անտեսել, եթե չեն հերքում, Հին Կտակարանի բազմաթիվ «հրաշքները», դրանք անվանելով «ծեր կանանց հեքիաթներ»: Դրանցից են Հովնանի և մեծ ձկան, Նոյի և տապանի, Եվայի և օձի, Հեսուի հրամանով արեգակի կանգ առնելու և Բաղաամի խոսող էշի պատմությունները: Թվում է, թե այս իմաստուն մարդիկ անտեսում են այն փաստը, որ Աստվածաշունչը իր տարբեր մասերում այնքան սերտորեն է հյուսված և միավորված, որ դրանցից այս հրաշքները հանելը կամ

դրանց վարկաբեկելը նշանակում է ոչնչացնել կամ վարկաբեկել ամբողջը: Քանզի եթե սկզբնական պատմությունները կեղծ են, ապա նրանք, ովքեր դրանք կրկնել են, եղել են կամ կեղծարարներ, կամ խաբվածներ, և երկու դեպքում էլ մեզ համար անհնար կլիներ ընդունել նրանց վկայությունը որպես Աստծուց ներշնչված: Աստվածաշնչից նշված հրաշքները հանելը անվավեր կդարձներ դրա գլխավոր հեղինակների վկայությունը, էլ չեմ ասում մեր Տեր Հիսուսի վկայության մասին: Մարդու անկման պատմությունը վկայվում է Պողոսի կողմից (Հռոմեացիներ 5:17), ինչպես նաև Եվայի խաբվելը օձի կողմից (2 Կորնթացիներ 11:3, 1 Տիմոթեոս 2:14). Տես նաև մեր Տիրոջ հղումը վերջինիս մասին Հայտն. 12:9 և 20:2-ում: Ամորհացիների պարտության ժամանակ արեգակի կանգնելը, որպես Տիրոջ զորության ապացույց, ակնհայտորեն տիպիկ էր ապագայում՝ «Տիրոջ օրը» ցուցադրվելիք զորության, այն ձեռքով, որին Հեսուն տիպավորում էր: Սրան վկայում են երեք մարգարեներ (Ես. 28:21, Ամբակում. 2:1-3,13,14 և 3:2-11, Զաք. 14:1,6,7): Խոսող էշի պատմությունը հաստատվում է Հուդայի (11-րդ խոսք) և Պետրոսի (Բ Պետ. 2:16) կողմից: Եվ մեծ ուսուցիչը՝ Հիսուսը, հաստատում է Հովնանի և մեծ ձկան, ինչպես նաև Նոյի և ջրհեղեղի պատմությունները (Մատթ. 12:40, 24:38,39, Ղուկ. 17:26. Տես նաև Ա Պետ. 3:20.): Իրականում սրանք ոչ ավելի մեծ հրաշքներ են, քան այն հրաշքները, որոնք կատարել են Հիսուսը և առաքյալները, օրինակ՝ ջուրը գինու վերածելը, հիվանդությունների բուժումը և այլն, և որպես հրաշք՝ մեռելների հարությունն ամենազարմանալին է:

Այս հրաշքները, որոնք մեր փորձառության մեջ հազվադեպ են, ամեն օր մեր շուրջը գտնում են զուգահեռներ, որոնք, լինելով ավելի սովորական, անցնում

են աննկատ մեր կողմից: Կենդանի օրգանիզմների՝ թե՛ կենդանական, թե՛ բուսական, վերարտադրությունը մեր ըմբռնման և ուժի սահմաններից դուրս է, ուստի և հրաշք է: Մենք կարող ենք տեսնել կյանքի սկզբունքի դրսևորումը, սակայն ոչ հասկանալ, ոչ էլ վերարտադրել այն: Մենք կողք կողքի ենք ցանում երկու սերմ, պայմանները՝ օդը, ջուրը և հողը, նույնն են, դրանք աճում են, մենք չենք կարող ասել՝ ինչպես, և ոչ էլ ամենախելացի փիլիսոփան կարող է բացատրել այս հրաշքը: Այս սերմերը զարգացնում են հակադիր բնույթի օրգանիզմներ, մեկը սողում է, մյուսը կանգուն է, ձևը, ծաղիկը, գույնը, ամեն ինչ տարբեր է, թեև պայմանները նույնն էին: Այսպիսի հրաշքները մեզ համար սովորական են դառնում, և մենք դադարում ենք դրանք հիշել որպես այդպիսիք, երբ լքում ենք մանկության զարմանքը, սակայն դրանք ցուցադրում են մի ուժ, որը մեր ուժից և մեր սահմանափակ բանականությունից նույնքան վեր է, որքան Սուրբ Գրքում հատուկ նպատակներով արձանագրված մի քանի հրաշքները, որոնք ծառայում են որպես ամենազորության և Մեծ Ստեղծչի ամեն մի խոչընդոտ հաղթահարելու և իր կամքը լիովին իրականացնելու կարողություն, այդ թվում՝ մեռելներից մեր խոստացված հարության, չարի ոչնչացման և վերջնական հավիտենական արդարության թագավորության համար:

Այստեղ մենք ավարտում ենք մեր փաստարկը: Յուրաքանչյուր քայլ մանրակրկիտ քննարկվել է: Մենք պարզեցինք, որ գոյություն ունի Աստված՝ գերագույն, բանական Ստեղծիչ, որում իմաստությունը, արդարությունը, սերը և զորությունը գոյություն ունեն կատարյալ ներդաշնակությամբ: Մենք համարեցինք տրամաբանական՝ ակնկալել, որ Նա կբացահայտի Իր ծրագրերը այն արարածներին, որոնք կարող են դրանք

գնահատել և որոնց համար դրանք հետաքրքիր են: Մենք տեսանք, որ Աստվածաշունչը, որը պնդում է, թե հանդիսանում է այդպիսի հայտնություն, արժանի է ուսումնասիրության: Մենք քննության ենք առել դրա հեղինակներին և նրանց հնարավոր նպատակները՝ ելնելով նրանց ուսուցչությունից, մենք զարմացած ենք մնացել, և մեր բանականությունը մեզ ասել է, որ նման իմաստությունը, համակցված նման մաքուր շարժառիթների հետ, չէր կարող լինել խորամանկ մարդկանց խարդախ հնարք՝ սեփական շահերի համար: Հասկացողությունը պնդել է, որ շատ ավելի հավանական է, որ նման արդար և բարեհաճ զգացմունքներն ու օրենքները Աստծո, ոչ թե մարդկանց գործն են, և պնդել է, որ դրանք չեն կարող լինել խաբեբա քահանաների գործը: Մենք տեսանք Հիսուսի, նրա փրկանքի զոհաբերության, և բոլորի հարության ու օրհնության համահունչ վկայությունները՝ որպես արդյունք նրա գալիք փառավոր արքայության մեջ, և մեր բանականությունը մեզ ասել է, որ այդպիսի մեծ ու համապարփակ ծրագիրը, որը գերազանցում է մեր բոլոր հույսերը, սակայն հիմնված է տրամաբանական եզրակացությունների վրա, պետք է լինի այն Աստծո ծրագիրը, որին մենք փնտրում ենք: Դա չէր կարող լինել ուղակի մարդկային հորինվածք, որովհետև նույնիսկ դրա հայտնաբերումից հետո այն այնքան մեծ է, որ մարդկանց դժվար է հավատալ դրան:

Երբ Կոլումբոսը հայտնաբերեց Օրինոկո գետը, ինչ-որ մեկը ասաց, որ նա կղզի է գտել: Նա պատասխանեց. «Այդպիսի գետ կղզուց չի հոսում: Այդ հզոր հեղեղը պետք է որ ցամաքեցնի մայրցամաքի ջրերը»: Այսպիսով, Աստվածաշնչի վկայության խորությունը, ուժը, իմաստությունը և ընդգրկումը համոզում են մեզ, որ ոչ թե մարդն է, այլ Հզոր Աստվածն է դրա ծրագրերի և

հայտնությունների հեղինակը: Մենք միայն կարճ հայացք գցեցինք Սուրբ Գրքերի մակերեսային պնդումներին՝ դրանց աստվածային ծագման մասին, և պարզեցինք, որ դրանք հիմնավոր են: Հաջորդ գլուխներում մենք կբացահայտենք Աստծո ծրագրի տարբեր մասերը և, ինչպես հուսով ենք, յուրաքանչյուր անկողմնակալ մտքի համար կներկայացնենք բավարար ապացույցներ, որ Աստվածաշունչը աստվածային ոգեշնչմամբ տրված հայտնություն է, և որ նրա ծրագրի երկարությունն ու լայնությունը, բարձրությունն ու խորքը փառավոր կերպով արտացոլում են աստվածային բնավորությունը, որը մինչ այժմ միայն մթագնորեն էր ընկալվում, սակայն այժմ ավելի հստակ երևում է մոտեցող Հազարամյա Օրվա լույսի ներքո:

ԳԼՈՒԽ 4

Աստվածային Ծրագրի զարգացման Մեջ ուշագրավ Դարաշրջաններն ու Ժամանակաշրջանները

Աստծու Ծրագիրը՝ Հստակ և Համակարգված - Համաշխարհային Պատմության Երեք Մեծ Դարաշրջանները - Դրանց Առանձնահատկությունները - «Երկիրը Հավիտյան Կմնա» - Գալիք Աշխարհը՝ Նոր Երկինքը և Նոր Երկիրը - Այս մեծ Դարաշրջանների Ենթաբաժինները - Այսպիսով Բացահայտվում են Աստծո Ծրագրի Կարևոր Առանձնահատկությունները – Ընդունված Կարգը Բացահայտում է Ներդաշնակությունը - Ճշմարտության Խոսքի ուղիղ Մատուցումը:

ԻՆՉՊԵՍ ՈՄԱՆՔ իրենց անտեղյակությամբ սխալ են գնահատում մեծ ճարտարապետի և շինարարի հմտությունն ու իմաստությունը՝ նրա անավարտ գործի պատճառով, այնպես էլ շատերն իրենց անտեղյակությամբ սխալ են գնահատում Աստծուն՝ Նրա անավարտ գործի պատճառով, բայց ի վերջո, երբ չարի կոպիտ փայտամածը (որը թույլատրվել էր մարդուն պատժելու համար և որը, ի վերջո, կվերանա՝ ի բարօրություն նրա) հեռացվի և աղբը մաքրվի, Աստծու *ավարտուն գործն* ամենուր կհռչակի Նրա անսահման իմաստությունն ու զորությունը, և ակնհայտ կլինի, որ Նրա ծրագրերը ներդաշնակ են Նրա փառահեղ բնույթին:

Քանի որ Աստված մեզ ասում է, որ Նա ունի հստակ նպատակ, և որ Իր բոլոր ծրագրերն անպայման իրականանալու են, մենք՝ որպես Նրա զավակներ, պետք է ջանասիրաբար ձգտենք հասկանալ այդ ծրագրերը,

որպեսզի կարողանանք ներդաշնակ լինել դրանց: Ուշադրություն դարձրեք, թե ինչպիսի ուժգնությամբ է Եհովան հաստատում Իր նպատակի հաստատունությունը. «Զորությունների Տերը երդվեց և ասաց. «Անշուշտ, ինչպես խորհել եմ, այնպես էլ կլինի, ինչպես ծրագրել եմ, այն էլ կկատարվի»: «Արդարև, ինչ որ Զորությունների Տերը որոշել է, ո՞վ կարող է այն խափանել»: «Ես եմ Աստված, ուրիշը չկա, ես եմ Աստված, ինձ նմանը չկա... Ես ասում եմ, որ իմ խորհուրդը պիտի իրականանա, և անում եմ այն ամենը, ինչ որ ինձ հաճելի է... Ինչ ասել եմ, կատարելու եմ, ինչ որոշել եմ, անելու եմ (Ես. 14:24-27, 46:9-11): Հետևաբար անկախ այն բանից, թե որքան քաոսային կամ խորհրդավոր կարող են թվալ մարդկանց հետ ունեցած Աստծու գործերը, Նրա Խոսքի այս վկայությանը հավատացողները պետք է ընդունեն, որ Նրա սկզբնական և անփոփոխ ծրագիրը հետևողականորեն իրականացվել է և շարունակում է իրականացվել մինչև ավարտին հասնելը:

Մինչ մարդկանց մեծ մասը, անգիտության խավարում խարխափելով, պետք է սպասի, մինչև Աստծու ծրագիրն սկսի իրականանալ, որ կարողանա հասկանալ Աստվածային Ճարտարապետի փառահեղ բնույթը, Աստծու զավակը՝ իր հավատքի և լամպի լույսի շնորհիվ, ունի ապագայի կանխագուշակված փառքերը տեսնելու մենաշնորհը և այդպիսով հասկանալու անցյալի և ներկայի այլապես խորհրդավոր իրադարձությունները: Հետևաբար, որպես Աստծու շահագրգիռ որդիներ և խոստացված ժառանգության ժառանգներ, մենք դիմում ենք մեր Հոր Խոսքին, որպեսզի հասկանանք Նրա նպատակները՝ հիմնվելով դրանց մեջ ներկայացված ծրագրերի և պահանջների վրա: Այնտեղ մենք իմանում ենք, որ Աստծու՝ մարդկության համար նախատեսված ծրագիրն ընդգրկում է երեք մեծ ժամանակաշրջան՝ սկսած մարդու արարումից և հասնելով մինչև անսահման

ապագա: Պետրոսն ու Պողոսն այս ժամանակաշրջաններն անվանում են «երեք աշխարհներ», որոնք մենք պատկերել ենք ստորև բերված սխեմայում:

«Աշխարհներ» կոչված մեծ դարաշրջանները

Այս երեք մեծ դարաշրջանները ներկայացնում են Աստվածային Նախախնամության երեք տարբեր դրսևորումները: Առաջինը՝ աշխարհի արարչագործությունից մինչև ջրհեղեղը, տեղի է ունեցել հրեշտակների առաջնորդությամբ, և Պետրոսն այն անվանել է «այն ժամանակվա աշխարհը» (Բ Պետրոս 3:6):

Երկրորդ մեծ դարաշրջանը՝ Ջրհեղեղից մինչև Աստծու Թագավորության հաստատումը, գտնվում է Սատանայի՝ «այս աշխարհի իշխանի» սահմանափակ վերահսկողության տակ և, հետևաբար, կոչվում է «այս չար աշխարհը» (Գաղ. 1:4, Բ Պետ. 3:7):

Երրորդը կլինի «հավիտենական աշխարհը» (Ես. 45:17)՝ Աստվածային առաջնորդությամբ՝ Աստծու Արքայությունը, որը կոչվում է «ԳԱԼԻՔ ԱՇԽԱՐՀԸ, որտեղ արդարությունն է բնակվում» (Եբր. 2:5, Բ Պետ. 3:13):

Այս դարաշրջաններից կամ «աշխարհներից» առաջինը՝ հրեշտակների առաջնորդությամբ, ձախողվեց,

երկրորդը՝ բռնազավթիչ Սատանայի իշխանության ներքո, իսկապես «չար աշխարհ» է, սակայն երրորդը կլինի արդարության և օրհնության ժամանակաշրջան երկրի բոլոր ազգերի համար:

Այս «աշխարհներից» վերջին երկուսը հատկապես են հիշատակվում, և դրանց վերաբերյալ պնդումները կտրուկ հակադրվում են: Ներկայիս կամ երկրորդ ժամանակաշրջանը կոչվում է «այս չար աշխարհը» ոչ թե այն պատճառով, որ այնտեղ ոչ մի լավ բան չկա, այլ որովհետև թույլատրված է, որ այնտեղ գերակշռի չարը: «Եվ հիմա մենք երանի ենք ասում գոռոզներին, և բարգավաճում են անօրենություն անողները, մինչև անգամ Աստծուն են փորձում և ազատվում» (Մաղ. 3:15):

Երրորդ աշխարհը կամ դարաշրջանը՝ «ԳԱԼԻՔ ԱՇԽԱՐՀԸ, որտեղ արդարությունն է բնակվում», այսպես է կոչվում ոչ թե որովհետև դրանում չարիք չի լինելու, այլ որովհետև չարը չի գերակշռելու: Չարի վերացումը տեղի է ունենալու աստիճանաբար, որի համար պահանջվելու է ողջ առաջին հազարամյակը: Այդ ժամանակ չարն այլևս չի իշխելու, չի բարգավաճելու, չարագործներն այլևս չեն ծաղկելու, այլ «արդարը պիտի ծաղկի» (Սաղմ. 72:7), հնազանդները կճաշակեն երկրի բարիքը (Ես.1:19) և «չարերը կոչնչանան» (Սաղմ. 37:9):

Այս տեսանկյունից, հաջորդ ժամանակաշրջանն այնքան տարբեր է լինելու ներկայից, որ գրեթե ամեն ինչում լինելու է դրա լրիվ հակառակը: Մեր Տիրոջ խոսքերը ցույց են տալիս, թե ինչու պետք է տարբերակում լինի ներկա և ապագա ժամանակաշրջանների միջև: Դա պայմանավորված է նրանով, որ Նա լինելու է գալիք աշխարհի իշխանը կամ միապետը, որտեղ կծաղկեն արդարությունն ու ճշմարտությունը, բայց քանի որ Սատանան այս չար աշխարհի իշխանն է (կառավարիչը), այժմ չարը ծաղկում է, իսկ չարերը՝ բարգավաճում: Քանի

որ, ինչպես Հիսուսն ասաց, այս աշխարհի իշխանը «ինձ վրա ոչ մի իշխանություն չունի» - և հետևաբար ոչ մի հետաքրքրություն չունի Նրա հետևորդների նկատմամբ, բացի նրանց հակադրվելուց, գայթակղելուց, զայրացնելուց և հարվածելուց (Հովհ. 14:30, Բ Կոր. 12:7) - այս չար աշխարհում կամ դարաշրջանում բոլորը, ովքեր կամենում են աստվածապաշտությամբ ապրել, պիտի հալածվեն, մինչդեռ չարերը կծաղկեն դալար ծառի պես (Բ Տիմ. 3:12, Սաղմ. 38:35):

Հիսուսն ասաց. «Իմ թագավորությունն այս աշխարհից չէ», և մինչև չգա այդ դարաշրջանը կամ «գալիք աշխարհը», Քրիստոսի թագավորությունը չի հաստատվի երկրի վրա: Այդ իսկ պատճառով մեզ սովորեցնում են հուսալ և աղոթել. «Թող Քո թագավորությունը գա, Քո կամքը լինի երկրի վրա»: Սատանան «այս աշխարհի խավարի իշխանն է», ուստի «խավարը կծածկի երկիրը, և մառախուղը՝ ժողովուրդներին»: Նա այժմ իշխում և գործում է ապստամբ որդիների սրտերում (Եփես. 2:2, 6:12):

Թերևս Մեծ Ճարտարապետի՝ մարդկության փրկության ծրագրի ինչ-որ կարևոր մաս դեռ լիովին չի իրականացվել, այլապես նոր Թագավորը և նոր ժամանակաշրջանը վաղուց ներկայացված կլինեին: Թե ինչու դա հետաձգվեց մինչև նշանակված ժամանակը, և թե ինչպես է տեղի ունենալու Սատանայի առաջնորդությամբ չարի այս տիրապետությունից անցումը Քրիստոսի առաջնորդությամբ արդարության տիրապետության՝ սրանք հարցեր են, որոնք ավելի մանրամասն կքննարկվեն ստորև: Առայժմ բավարար է ասել, որ այս աշխարհի թագավորությունները, որոնք այժմ ենթարկվում են Սատանային, ճիշտ ժամանակին կդառնան մեր Տիրոջ և Նրա Օծյալի թագավորությունները (Հայտն. 11:15):

Ենթատեքստը ենթադրում է, որ այս փոփոխությունը տեղի է ունենալու համընդհանուր նեղության ժամանակաշրջանում: Այս մասին խոսելով՝ Հիսուսն ասաց. «Ոչ ոք, զորեղ մարդու տունը մտնելով, չի կարող նրա ունեցվածքը կողոպտել, եթե նախ այդ զորեղ մարդուն չկապի. հետո նրա տունը կկողոպտի» (Մրկ. 3:22-27): Այսպիսով, մեզ ուսուցանվում է, որ նախքան Քրիստոսի՝ արդարության և խաղաղության թագավորության սկսվելը, Սատանան նախ պետք է կապվի, զսպվի և գահընկեց արվի: Հետևաբար ներկայացվում է, որ Սատանային կապելը պետք է լինի նոր ժամանակաշրջանի առաջին գործը (Հայտն. 20:2):

Հարկ է հիշել, որ այս երկիրը բոլոր այս «աշխարհների» և ժամանակաշրջանների հիմքն է, և թեև դարեր են անցնում և ժամանակաշրջանները փոխվում են, երկիրը դեռևս կա. «Երկիրը հավիտյան կմնա» (Ժող. 1:4): Շարունակելով նույն փոխաբերությունը՝ Պետրոսն այս ժամանակաշրջաններից յուրաքանչյուրն անվանում է առանձին երկինք և երկիր: Այստեղ *երկինք* բառը խորհրդանշում է բարձրագույն կամ հոգևոր կառավարող ուժերը, իսկ *երկիրը*՝ մարդկային կառավարումն ու հասարակական կարգը: Այսպիսով, առաջին երկինքն ու երկիրը, կամ այն ժամանակ գոյություն ունեցող աշխարհակարգն ու կառուցվածքը, իրագործելով իրենց նպատակը, վերացան ջրհեղեղի ժամանակ: Սակայն ֆիզիկական երկինքը (երկինքը և մթնոլորտը) և ֆիզիկական երկիրը չանհետացան. դրանք մնացին: Նմանապես և այս աշխարհը (երկինքը և երկիրը) կանհետանա մեծ աղմուկով, կրակով և հալվելով՝ քաոսով, աղետով և քայքայվելով: Կապված լինելով՝ ուժեղ մարդը (Սատանան) կպայքարի իր իշխանությունը պահպանելու համար: Կվերանա կառավարման և հասարակության ներկայիս կարգը կամ կառուցվածքը, այլ ոչ թե ֆիզիկական երկինքն ու երկիրը: Այս *երկինքը* (հոգևոր

տիրապետության ուժերը) պետք է իր տեղը զիջի «նոր երկնքին»՝ Քրիստոսի հոգևոր տիրապետությանը: Այս *երկիրը* (մարդկային հասարակությունը, որն այժմ կազմակերպված է Սատանայի իշխանության ներքո) պետք է (խորհրդանշականորեն) հալվի և քայքայվի «Տիրոջ օրվա» սկզբում՝ «վառվող, ինչպես հնոցը» (Մաղ. 4:1): Այն կփոխարինվի «նոր երկրով», այսինքն՝ հասարակությամբ՝ վերաձևավորված երկրի նոր Իշխանի՝ Քրիստոսի հետ ներդաշնակ կերպով: Արդարությունը, խաղաղությունը և սերը կտիրեն մարդկանց մեջ, երբ ներկայիս կարգը զիջի իր տեղը նոր և ավելի լավ թագավորությանը, որի հիմքը լինելու է ամենախիստ արդարադատությունը:

Պողոսին տրվեց հաջորդ ժամանակաշրջանի կամ, ինչպես ինքն է այն անվանում, «գալիք աշխարհի» ակնարկը: Նա ասում է, որ ինքը «հափշտակվել է» (ֆիզիկապես կամ մտավոր կերպով, կամ երկուսն էլ՝ նա չէր կարող վստահ լինել, քանի որ ամեն ինչ այնքան իրական էր) և ժամանակի հոսքի մեջ «տարվել է» դեպի իրերի նոր վիճակ, դեպի «նոր երկինք», այն է՝ «երրորդ երկինք»: Այսպիսով, նա տեսել է, թե ինչ է լինելու Քրիստոսի հոգևոր տիրապետության ներքո. անպատմելի բաներ, որ նա չպետք է խոսեր դրանց մասին (Բ Կորնթ. 12:2-4): Սրանք անկասկած նույն իրադարձություններն էին, որոնց Հովհաննեսը հետագայում ականատես եղավ, և որոնք իրեն թույլ տրվեցին ներկայացնել Եկեղեցուն *խորհրդանիշներով*, որոնց իմաստը կարելի է հասկանալ միայն ճիշտ ժամանակին: Հովհաննեսը, Տիրոջ կողմից Պատմոս կղզում իրեն տրված հայտնության մեջ, տեսիլքով անցավ այս ամբողջ քրիստոնեական դարաշրջանի և դրա եկեղեցական ու քաղաքական կյանքի փոփոխվող տեսարանների միջով, մինչև այս չար աշխարհի կամ դարաշրջանի ավարտը, և այնտեղ, մարգարեական տեսիլքներով, նա տեսավ կապված

Սատանային, թագավորող Քրիստոսին և հաստատված նոր երկինքն ու նոր երկիրը, քանզի առաջին երկինքն ու երկիրն անցել էին (Հայտն. 21:1):

Դարաշրջաններ կամ ժամանակաշրջաններ

Այժմ մենք կանդրադառնանք այն ժամանակաշրջաններին, որոնց բաժանված են այս մեծ դարաշրջանները, ինչպես ցույց է տրված ստորև բերված սխեմայում:



Այս մեծ դարաշրջաններից («աշխարհներից») առաջինը ենթաբաժիններ չունի. Աստծու՝ մարդկանց հետ վարվելու ձևը մնացել է անփոփոխ այս ամբողջ ժամանակահատվածում՝ Ադամի անկումից մինչև ջրհեղեղը: Աստված մարդուն տվել է Իր օրենքը՝ գրված նրա էության մեջ, բայց մեղանչելուց հետո Նա ակնհայտորեն թողել է, որ նա գնա իր սեփական ուղով, այն է՝ դեպի ներքև, «չար՝ մշտապես», որպեսզի մարդը ճանաչի իր հիմարությունը, և որպեսզի բացահայտվի Աստծու իմաստությունը, որը պահանջում է բացարձակ հնազանդություն: Այս ժամանակաշրջանն ավարտվեց ջրհեղեղով, որը վերացրեց բոլորին, բացի հավատարիմ Նոյից և նրա ընտանիքից: Այսպիսով, առաջին ժամանակաշրջանը ոչ միայն ցույց տվեց մեղքի աղետալի հետևանքները, այլև այն, որ մեղքը հակված է դեպի ներքև՝ դեպի ավելի մեծ անկում և տառապանք՝ ապացուցելով Եհովայի միջամտության անհրաժեշտությունը, եթե երբևէ հնարավոր է վերականգնել «կորածը»՝ մարդու սկզբնական վիճակը:

Երկրորդ դարաշրջանը, կամ «այս աշխարհը», բաղկացած է երեք ժամանակաշրջաններից, որոնցից յուրաքանչյուրը ներկայացնում է չարին տապալելու Աստծու ծրագրի մի փուլը: Յուրաքանչյուր փուլ բարձր է նախորդից և առաջ է մղում ծրագիրը՝ մոտեցնելով ավարտին:

Երրորդ մեծ դարաշրջանը՝ «գալիք աշխարհը», ապագան է, որն սկսվում է Քրիստոսի երկրորդ գալուստով: Այն ներառում է Հազարամյա Թագավորությունը կամ «վերականգնման ժամանակները»: Դրան հաջորդում են այլ «գալիք դարաշրջաններ», որոնց մանրամասները չեն բացահայտվում: Ներկայիս հայտնությունները վերաբերում են մարդկության՝ մեղքից ազատագրմանը, այլ ոչ թե դրան հաջորդող հավերժական փառքին:

Մենք «այս աշխարհի» առաջին դարաշրջանն անվանում ենք ՆԱՀԱՊԵՏԱԿԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆ կամ ժամանակաշրջան, քանի որ այդ ժամանակահատվածում Աստված շփվել և շնորհ է արել միայն մի քանի անհատների, մինչդեռ մնացած մարդիկ համարյա անտեսվել են: Այս ընտրյալների թվում էին Նոյ, Աբրահամ, Իսահակ և Հակոբ նահապետները: Նրանցից յուրաքանչյուրը կարծես իր հերթին ընտրվել է Աստծու կողմից: Հակոբի մահով այս դարաշրջանը կամ կարգն ավարտվեց: Հակոբի մահից հետո նրա սերունդները սկզբում կոչվեցին «Իսրայելի տասներկու ցեղեր» և միասնաբար Աստծու կողմից ճանաչվեցին որպես Նրա «ընտրյալ ժողովուրդ»: Խորհրդանշական զոհաբերությունների միջոցով նրանք խորհրդանշական կերպով հանդիսանում էին «սուրբ ժողովուրդ», որն առանձնացված էր մյուս ազգերից հատուկ նպատակով և, հետևաբար, կոչված էր վայելելու հատուկ շնորհներ: Աստվածային ծրագրի այս մասին հատկացված ժամանակը, որն սկսվում է այստեղից և ավարտվում

Քրիստոսի մահով, մենք անվանում ենք ՀՐԵԱԿԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆ կամ Օրենքի ժամանակաշրջան: Այդ դաաշրջանում Աստված հատկապես օրհնեց այդ ժողովրդին: Նա նրանց տվեց Իր Օրենքը, Նա հատուկ ուխտ կնքեց նրանց հետ, Նա նրանց տվեց Խորանը, որի փառքը Սրբություն Սրբոցում խորհրդանշում էր Եհովայի ներկայությունը նրանց մեջ՝ որպես իրենց Առաջնորդ և Թագավոր: Նա նրանց մոտ ուղարկեց մարգարեներ և, ի վերջո, Իր Որդուն: Հիսուսը հրաշքներ գործեց և ուսուցանեց նրանց մեջ և ո՛չ Ինքն էր գնում և ո՛չ էլ թույլ էր տալիս Իր աշակերտներին գնալ հարևան ազգերի մոտ: Նա ուղարկեց նրանց՝ ասելով. «Դեպի հեթանոսները տանող ճանապարհով չգնաք և սամարացիների քաղաք չմտնեք. ավելի լավ է՝ Իսրայելի տան կորած ոչխարների մոտ գնաք» (Մատթ. 10:5,6): Եվ կրկին. «Այլ տեղ չեմ ուղարկված, եթէ ոչ Իսրայելի տան կորուսյալ ոչխարների մոտ» (Մատթ. 15:24):

Այն, որ այս ազգային շնորհն ավարտվեց Հիսուսի մերժմամբ և Նրա խաչելությամբ, վկայում են հենց Հիսուսի խոսքերը, երբ Իր խաչելությունից հինգ օր առաջ ասաց. «Ահա ձեր տունը ավերակ կթողնվի ձեզ» (Մատթ. 23:38):

Այնտեղ, Հիսուսի մահով, սկսվեց մի նոր դարաշրջան՝ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆԸ կամ ԱՎԵՏԱՐԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԸ, երբ արդարացման բարի լուրը պետք է ավետվեր ոչ միայն հրեաներին, այլև բոլոր ազգերին, քանի որ Հիսուս Քրիստոսը, Աստծու շնորհով, մահը ճաշակեց յուրաքանչյուր մարդու փոխարեն: Ավետարանական այս դարաշրջանում գոյություն ունի նաև մի խումբ, որը կոչված է հատուկ շնորհի, որին տրվում են հատուկ խոստումներ, այսինքն՝ նրանք, որոնք հավատքով ընդունում են Հիսուս Քրիստոսին՝ որպես իրենց Տեր և Փրկիչ, և գնում են Նրա հետքերով: Ավետարանի քարոզչությունը տարածվեց ամբողջ երկրով

մեկ գրեթե տասնինը դարերի ընթացքում, այնպես որ այժմ կարելի է ասել, որ այն շատ, թե քիչ քարոզվել է գրեթե բոլոր ազգերի մեջ: Այն ազգերին դարձի չի բերել. այս դարաշրջանը դրա համար նախատեսված չէր, այլ այստեղից-այնտեղից ընտրել է մի քանիսին՝ «փոքրիկ հոտին», ինչպես Հիսուսը կանխատեսել էր (Ղուկ. 12:32), որոնց Հայրը բարեհաճել է տալ Արքայությունը սրան հաջորդող դարաշրջանում:

Այս դարաշրջանով ավարտվում է «այս չար աշխարհը»: Եվ լավ հիշեք, թեև Աստված թույլ է տվել չարի տիրապետությունն ու զորությունը, ինչը, կարծես, վնասակար է Իր գործի համար, սակայն Նրա խորը դիտավորությունները հաստատուն կերպով կատարվում են՝ նախասահմանված և որոշակի ծրագրի համաձայն և Իր կողմից սահմանված եղանակների ճշգրիտ հերթականությամբ: Այս դարաշրջանի վերջում և հաջորդի՝ Հազարամյա դարաշրջանի սկզբին, Սատանան կկապվի, և նրա իշխանությունը կտապալվի՝ իբրև նախապատրաստում Քրիստոսի Թագավորության հաստատման և «գալիք աշխարհի, որտեղ արդարությունն է բնակվում»:

«Հազարամյակ» տերմինը, որը նշանակում է «հազար տարի», սովորաբար օգտագործվում է՝ նշելու համար Հայտնություն 20:4-ում նշված ժամանակահատվածը՝ Քրիստոսի հազարամյա թագավորությունը, «գալիք աշխարհի» առաջին ժամանակաշրջանը: Հազարամյակի ընթացքում կվերականգնվի այն ամենը, որ կորսվել է Ադամի անկման պատճառով (Գործք 3:19–21), և դրա ավարտից առաջ կսրբվեն բոլոր արցունքները: Դրանից հետո՝ հաջորդող երանելի դարաշրջաններում, այլևս մահ չի լինի, ո՛չ սուգ, ո՛չ աղաղակ, ո՛չ ցավ և ո՛չ չարչարանք, քանի որ առաջինն անցավ (Հայտն. 21:4): Աստծու հայտնությունները լրացուցիչ մանրամասներ չեն տալիս, և մենք այստեղ կանգ կառնենք:

Այստեղ մենք միայն համառոտակի անդրադարձանք դարերի այս ծրագրի ընդհանուր ուրվագծին: Որքան ավելի մանրամասն ուսումնասիրենք այն, այնքան ավելի կատարյալ ներդաշնակություն, գեղեցկություն և կարգուկանոն կբացահայտենք այնտեղ: Յուրաքանչյուր դարաշրջան պետք է իր հասանելիքն անի, որն անհրաժեշտ է Աստծու ամբողջական ծրագրի լիարժեք իրականացման համար: Այս ծրագիրը բնույթով առաջընթացիկ է, որ աստիճանաբար բացահայտվում է դարից դար, ձգտելով դեպի վեր և առաջ՝ դեպի Աստվածային Ճարտարապետի սկզբնական ծրագրի վեհաշուք ավարտը, «որ ամեն ինչ հաջողեցնում է իր կամքի խորհուրդների համաձայն» (Եփես. 1:11): Այս մեծ ժամանակահատվածներից ոչ մեկը մեկ ժամով ավելի երկար կամ կարճ չէ, քան անհրաժեշտ է իր նպատակին հասնելու համար: Աստված ժամանակի և միջոցների իմաստուն կառավարիչ է, չնայած Նրա ռեսուրսներն անսահմանափակ են, և ոչ մի ուժ, որքան էլ չարամիտ լինի, մի պահ անգամ չի կարող հետաձգել կամ խոչընդոտել Նրա ծրագրերը: Բոլոր իրադարձությունները, թե՛ բարի, թե՛ չար, Աստվածային հսկողության և ներգործության ներքո, նպաստում են Նրա կամքի կատարմանը:

Աստծու ծրագրի բարդ մեխանիզմի միայն մի փոքր մասն ըմբռնելու ունակ անուս և անկարգապահ մտքի համար այն թվում է անարխիա, քաոս և ձախողում, ինչպես որ երեխային կթվար բարդ մեքենան ամբողջությամբ կամ նույնիսկ դրա մի մասը: Նրանց անհաս և անուս մտքի համար այն անհասկանալի է, իսկ դրա անիվների ու գոտիների՝ հակառակ ուղղությամբ շարժումները թվում են պարզապես քաոս: Սակայն հասունությունն ու ուսումնասիրությունը կբացահայտեն, որ թվացյալ խառնաշփոթը գեղեցիկ ներդաշնակություն է, որը լավ արդյունքներ է տալիս: Սակայն այս մեքենան

նույնքան հաջողակ էր թե՛ երեխայի կողմից դրա աշխատանքի ընկալումից առաջ և թե՛ հետո: Այսպիսով, մինչդեռ Աստծու ծրագիրը հաջողությամբ իրականացվում էր և իրականացվում է դարեր շարունակ, մարդը ստանում է անհրաժեշտ ուսուցում ոչ միայն դրա բարդ մեխանիզմները հասկանալու, այլև դրա օրինյալ պտուղները քաղելու համար:

Քանի որ մենք շարունակում ենք ուսումնասիրել Աստվածային ծրագիրը, մեզ համար կարևոր է հիշել այս դարաշրջանները, դրանց առանձնահատկությունները և նպատակները, քանի որ այս ծրագիրը լիովին չի բացահայտվում դրանցից *որևէ մեկում*, *այլ բոլորում միասին*, ինչպես որ մեկ օղակը շղթա չի հանդիսանում, այլ մի քանի փոխկապակցված օղակներն են կազմում շղթա: Մենք ճիշտ գաղափար ենք կազմում ողջ ծրագրի մասին՝ նկատելով դրա յուրաքանչյուր մասի առանձնահատկությունները, և այդպիսով ձեռք ենք բերում Ճշմարտության Խոսքը ճիշտ մեկնաբանելու ունակություն:

Մեկ դարաշրջանին կամ ժամանակաշրջանին վերաբերող արտահայտությունները չպետք է կիրառվեն մեկ այլ դարաշրջանի կամ ժամանակաշրջանի համար, քանի որ այն, ինչ ճիշտ է մի ժամանակաշրջանի համար, միշտ չէ, որ ճիշտ է մեկ այլ ժամանակաշրջանի համար: Օրինակ՝ սխալ կլինի ներկայիս ժամանակի մասին ասել, որ ամբողջ երկիրը լցվելու է Տիրոջ գիտությամբ, կամ որ պետք չէ մերձավորին ասել. «Ճանաչի՛ր Տիրոջը» (Ես. 11:9, Երեմ. 31:34): Սա չի վերաբերում այս դարաշրջանին, և չի կարող վերաբերել, մինչև Տերը կրկին գա և հաստատի Իր թագավորությունը, քանի որ այս դարաշրջանում շատ գայթակղիչ մոլորություններ են եղել, և ասվում է, որ նույնիսկ դարաշրջանի ավարտին – «վերջին օրերին... չար և խաբեբա մարդիկ չարից այն կողմ էլ պիտի գնան. իրենք մոլորված՝ պիտի մոլորեցնեն ուրիշներին (Բ Տիմ.

3:1,13): Հազարամյա Թագավորության մեջ Մեսիայի գահակալության արդյունքում է, որ գիտելիքն ու արդարությունը կծածկեն երկիրը, ինչպես ջրերը՝ ծովը:

Նմանատիպ և շատ տարածված սխալ է այն ենթադրությունը, որ Աստծու Թագավորությունն արդեն իսկ հաստատված է և գործում է երկրի վրա, և որ Նրա կամքն արդեն կատարվում է ազգերի մեջ: Սա ակնհայտորեն հեռու է ճշմարտությունից, քանի որ այս աշխարհի թագավորությունները գոյատևում և հարստանում են ճնշումներով, անարդարությամբ և խաբեությամբ այնքանով, որքանով թույլ կտա մարդկանց աճող միտքը: Սատանան՝ «այս աշխարհի իշխանը», դեռ պետք է տապալվի, և այս թագավորությունները, որոնք այժմ գտնվում են նրա իշխանության տակ, պետք է դառնան մեր Տիրոջ և Նրա Օծյալի թագավորությունները, երբ Նա ստանձնի Իր մեծ իշխանությունը և թագավորի:

Հավատքի տանը այժմ հասանելի լույսի ներքո մենք տարբերակում ենք այն համակարգն ու կարգը, որոնք բացահայտում են մեր Աստծու վեհ քայլերն անցյալ դարերի ընթացքում, և չենք կարող չհիշել Քոուփերի գեղեցիկ տողերը՝ ոգեշնչված կենդանի հավատքով, որը վստահում էր Ամենակարող Եհովային այնտեղ, որտեղ չէր կարող հետևել Նրա ճանապարհներին:

ԳԼՈՒԽ 5

ԾԱԾԿՎԱԾ ԽՈՐՀՈՒՐԴԸ
«Այն Խորհուրդը Որ Ծածկված Էր Անցած Դարերից և Սերունդներից, Հիմա իր Սրբերին Հայտնվեցավ» Կող. 1:26

Առաջին Խոստման Պայծառ Լույսը - Աբրահամին Տրված Խոստումը - Հետաձգված Հույսը - Խորհուրդն Սկսում է Բացահայտվել Հոգեգալստյան ժամանակ - Ի՞նչ է Խորհուրդը – Ինչո՞ւ է Այն Այդքան Երկար Ժամանակ Գաղտնի Պահվել - Աշխարհի Համար Այն Դեռևս Մնում է Խորհուրդ - Իր Ժամանակին Այն Կբացահայտվի Բոլորին - Երբ Կավարտվի Խորհուրդը:

Մինչ մարդկությունը գտնվում էր չարի տիրապետության տակ և անկարող էր հասկանալ դրա անհրաժեշտությունը, Աստված բազմիցս հայտնել է գալիք Փրկչի միջոցով նրանց վերականգնելու և օրհնելու Իր մտադրության մասին: Սակայն այդ Փրկչի ինքնությունը գաղտնի պահվեց չորս հազար տարի և հստակորեն բացահայտվեց միայն Քրիստոսի հարությունից հետո՝ քրիստոնեական կամ Ավետարանական դարաշրջանի սկզբում:

Հետ նայելով այն ժամանակներին, երբ մեր նախածնողները կորցրեցին իրենց կյանքն ու եդեմական ուրախությունները՝ մենք տեսնում ենք, թե ինչպես են նրանք արդարացիորեն պատժվում իրենց մեղքի համար՝ լի վշտով և հույսի ամենափոքր շողից զուրկ, բացառությամբ անորոշ հայտարարությունից բխած

հույսի, ըստ որի՝ կնոջ սերունդը ջախջախելու էր օձի գլուխը: Թեև հետագա իրադարձությունների լույսի ներքո սա մեզ համար հսկայական նշանակություն ունի, սակայն նրանց համար դա ընդամենը թույլ և առկայծող լույս էր: Անցել էր գրեթե երկու հազար տարի, սակայն դրա կատարման ոչ մի նշան չկար:

Մոտ երկու հազար տարի անց Աստված կանչեց Աբրահամին և խոստացավ, որ երկրի բոլոր ազգերը նրա սերնդով կօրհնվեն: Թվում էր, թե Աստված դեռևս հավատարիմ էր Իր նախկինում հայտարարած ծրագրին և այժմ պատրաստվում էր այն իրագործել: Ժամանակն անցնում էր, սակայն Քանանի խոստացված երկիրը դեռևս նրա սեփականությունը չէր, նրանք սերունդ չունեին, իսկ Աբրահամն ու Սառան ծերանում էին: Աբրահամը որոշեց, որ պետք է օգնի Աստծուն կատարել Իր խոստումը. այսպես ծնվեց Իսմայելը: Բայց նրա օգնության կարիքը չկար, քանի որ իր ժամանակին ծնվեց Իսահակը՝ հույսի և խոստման զավակը: Այդժամ կարծես թե եկավ ազգերի՝ խոստացված իշխանն ու օրհնողը: Բայց ոչ. տարիներ անցան, և թվում էր, թե Աստծու խոստումը չկատարվեց, քանի որ Իսահակը մահացավ և նրա ժառանգ Հակոբը՝ նույնպես: Սակայն մի քանիսի հավատը դեռևս ամուր կառչած էր խոստմանը, որին աջակցում էր Աստված Ինքը, քանի որ «Այն ուխտը, որ նա կնքեց Աբրահամի հետ» երաշխավորվեց Աստծու «երդումով Իսահակի հետ: Եվ հաստատեց, որ Հակոբի համար... Իսրայելի համար հավիտենական ուխտ լինի (Ա Մն. 16:16, 17):

Երբ Հակոբի մահից հետո նրա սերունդներն առաջին անգամ կոչվեցին ԻՍՐԱՅԵԼԻ ՏԱՍՆԵՐԿՈՒ ՑԵՂԵՐ և Աստծու կողմից ճանաչվեցին որպես «ընտրյալ ազգ»

(Ծնն. 49:28, Բ Օր. 26:5), թվում էր, թե իրականացման եզրին է այն սպասումը, որ այդ ազգը՝ որպես ամբողջություն, որպես Աբրահամի խոստացված սերունդ, կտիրանա Քանանին, կիշխի աշխարհի վրա և կօրհնի այն, քանի որ վայելելով Եգիպտոսի բարեհաճությունը՝ նրանք արդեն իսկ դառնում էին հզոր ազգ: Սակայն հույսը գրեթե մարեց, իսկ խոստումը գրեթե մոռացվեց, երբ եգիպտացիները, տիրելով նրանց, երկար ժամանակ պահեցին ստրկության մեջ:

Իսկապես, Աստծու խոստումները պարուրված էին առեղծվածով, և Նրա ճանապարհները թվում էին անքննելի: Սակայն Մովսեսը՝ մեծ ազատարարը, հայտնվեց ճիշտ ժամանակին, որի ձեռքով Աստված նրանց դուրս բերեց ստրկությունից՝ նրանց համար կատարելով մեծամեծ հրաշքներ: Քանան մտնելուց առաջ այս մեծ ազատարարը մահացավ, բայց որպես Տիրոջ խոսնակ՝ նա հայտարարեց. «Քո Տեր Աստվածը քո եղբայրների միջից ինձ նման մի մարգարե մեջտեղ պիտի հանի քեզ համար» (Բ Օր. 18:15, Գործք 3:22): Սա Աստծու նպատակի ավելի խորն ընկալում տրամադրեց՝ ցույց տալով, որ իրենց ազգն ամբողջությամբ ոչ միայն կապված կլինի իշխելու և օրհնելու ապագա գործի հետ, այլև նրանց միջից ընտրված մեկը նրանց կառաջնորդի դեպի հաղթանակ և խոստման իրագործում: Այնուհետև Հեսուն, որի անունը նշանակում է «ազատարար» կամ «փրկիչ», դարձավ նրանց առաջնորդը, և նրա առաջնորդությամբ նրանք մեծ հաղթանակներ տարան և իրապես մտան ուխտով խոստացված երկիրը: Այդժամ իսկապես թվում էր, թե եկել է իսկական առաջնորդը, և որ խոստումը լիովին կատարվելու է:

Սակայն Հեսուն մահացավ, և նրանք՝ իբրև ազգ, որևէ առաջընթաց չգրանցեցին, մինչև որ Դավիթը, ապա Սողոմոնը տրվեցին նրանց իբրև թագավորներ, որով նրանք հասան իրենց փառքի գագաթնակետին, բայց շուտով, խոստումը կատարված տեսնելու փոխարեն, կորցրեցին իրենց իշխանությունը և դարձան ենթակա այլ ազգերին: Այնուամենայնիվ ոմանք անսասանորեն հավատարիմ մնացին Աստծու խոստմանը և շարունակեցին սպասել մեծ փրկչին, որի նախատիպերն էին Մովսեսը, Հեսուն, Դավիթը և Սողոմոնը:

Հիսուսի ծննդյան ժամանակներում բոլոր մարդիկ անհամբեր սպասում էին Մեսիային՝ Իսրայելի և Իսրայելի միջոցով՝ ամբողջ աշխարհի գալիք Թագավորին: Սակայն Իսրայելի հույսն իրենց գալիք թագավորի փառքի և պատվի հանդեպ՝ ոգեշնչված Նրա մեծության և զորության մասին մարգարեություններով և նախատիպերով, նրանց դրդեց անտեսելու նախատիպերի և մարգարեությունների մեկ այլ շարք, որը մատնանշում էր տառապանքի և մահվան ուղին՝ որպես մեղավորների քավություն, որն անհրաժեշտ էր, որ օրհնությունը գար: Սա նախանշվեց Զատկին՝ նախքան նրանց Եգիպտոսից ազատագրումը, Օրենքի ուխտի հաստատման ժամանակ, կենդանիների սպանդով (Եբր. 9:11–20, 10:8–18) և քահանաների կողմից ամեն տարի մատուցվող քավության զոհերով: Նրանք նաև անտեսեցին մարգարեների խոսքերը, որ «ի սկզբանե վկայեցին Քրիստոսի չարչարանքների և դրանից հետո փառքի մասին» (Ա Պետ. 1:11): Հետևաբար երբ Հիսուսը եկավ որպես զոհ, նրանք չճանաչեցին Նրան. նրանք չգիտեին Նրա գալստյան ժամանակը (Ղուկ. 19:44): Նույնիսկ Նրա անմիջական հետևորդները մեծապես շփոթված էին, երբ Հիսուսը մահացավ, և նրանք տխուր ասացին. «Իսկ մենք

հույս ունեինք, թե նա է փրկելու Իսրայելը» (Ղուկ. 24:21): Ըստ երևույթին, նրանց հույսերը Նրա հանդեպ ապարդյուն էին: Նրանք չկարողացան հասկանալ, որ իրենց առաջնորդի մահը Նոր Ուխտի գրավականն էր, որով պետք է տրվեին օրհնությունները, այն է՝ խոստացված ուխտի մասնակի կատարումը: Սակայն, երբ նրանք իմացան, որ Նա հարություն է առել գերեզմանից, նրանց մարած հույսերն սկսեցին կրկին վերակենդանանալ (Ա Պետ. 1:3), և երբ Նա պատրաստվում էր հեռանալ նրանցից, նրանք հարցրեցին իրենց երկար փայփայած և հաճախ հետաձգված հույսի մասին՝ ասելով. «Տե՛ր, այս ժամանա՞կ ես Իսրայելի թագավորությունը վերահաստատելու»: Այն, որ նրանց հույսերը հիմնականում ճիշտ էին, թեև նրանք չէին կարող իմանալ դրանց կատարման ժամանակը, ակնհայտ է դառնում մեր Տիրոջ պատասխանից. «Ձեր գործը չէ ժամերն ու ժամանակներն իմանալը, որ Հայրն իր իշխանությամբ սահմանեց» (Գործք 1:6,7):

«Ի՞նչ շրջադարձ է ստացել Աստծու ծրագիրը հիմա»,- հավանաբար սա այն հարցն է, որն աշակերտներն իրենք իրենց տվեցին Հիսուսի համբարձումից հետո, քանի որ չպետք է մոռանանք, որ Տիրոջ ուսմունքները երկնքի արքայության մասին հիմնականում արտահայտվում էին առակներով և խորհրդավոր ասացվածքներով: Նա ասաց նրանց. «Դեռ շատ բան ունեմ ձեզ ասելու, բայց հիմա չեք կարող տանել: Սակայն երբ նա՝ ճշմարտության Հոգին, գա, ձեզ կառաջնորդի դեպի ամբողջ ճշմարտությունը», «նա ամեն բան ձեզ կուսուցանի ու կհիշեցնի ձեզ այն ամենը, ինչ ձեզ ասացի» (Հովհ. 16:12,13, 14:26): Այսպիսով, նրանք չէին կարող հասկանալ, մինչև Հոգեգալստյան օրհնության գալը:

Նույնիսկ այդ ժամանակ որոշ ժամանակ պահանջվեց մինչև նրանք հստակ և ամբողջական պատկերացում կազմեցին կատարվող աշխատանքի և սկզբնական ուխտի հետ ունեցած դրա կապի մասին (Գործք 11:9, Գաղ. 2:2, 12, 14): Սակայն կարծես թե, նույնիսկ մինչև լիովին և հստակորեն հասկանալն էլ, նրանք օգտագործվում էին որպես Աստծու խոսնակներ, և հավանաբար նրանց ոգեշնչված խոսքերը ճշմարտության ավելի հստակ և խորն արտահայտություն էին, քան իրենք լիովին գիտակցում էին: Օրինակ՝ կարդացեք Հակոբոսի խոսքը, որտեղ նա ասում է. «Շմավոնը պատմեց, թե ինչպե՞ս Աստված սկզբից ևեթ հոգացել էր, որ հեթանոսներից իր անունով մի ժողովուրդ [հարս] ձևավորի: Դրան են համապատասխանում մարգարեների խոսքերը, ինչպես որ գրված է. "Սրանից հետո [հեթանոսներից այդ ժողովրդին ձևավորելուց հետո] կվերադառնամ ու Դավթի քանդված տունը [երկրային իշխանությունը] կվերաշինեմ, նրա ավերակները կվերակառուցեմ և կվերականգնեմ այն"» (Գործք 15:14-16):

Հակոբոսն սկսեց տեսնել Աստծու նախախնամությունը (Ավետարանը Պետրոսի միջոցով ուղարկվեց առաջին հեթանոս նորադարձին և Պողոսի միջոցով՝ հեթանոսներին ընդհանրապես), որ այս դարաշրջանում հավատացյալ հրեաներն ու հեթանոսները պետք է վայելեին հավասար շնորհ: Այնուհետև նա անդրադարձավ մարգարեություններին և տեսավ, որ այդպես է գրված, և որ այս Ավետարանական դարաշրջանի ավարտից հետո է, որ կատարվելու են մարմնավոր Իսրայելին տրված խոստումները: Աստիճանաբար այդքան երկար ժամանակ թաքնված մեծ խորհուրդը հասկանալի դարձավ քչերի համար՝ սրբերի, Աստծու հատուկ «ընկերների» համար:

Պողոսը հայտարարում է (Կող. 1:27), որ դարեր ու սերունդներ շարունակ ծածկված այս խորհուրդը, այժմ բացահայտված է Իր սրբերին, «որ է Քրիստոսը ձեր մեջ, այն փառքի հույսը»:

Սա Աստծու մեծ խորհուրդն է, որը ծածկված էր բոլոր նախորդ դարերի ընթացքում և դեռևս ծածկված է բոլորից, բացի մարդկանց հատուկ շրջանակից՝ սրբերից կամ նվիրագործված հավատացյալներից: Բայց ի՞նչ է նշանակում «Քրիստոսը ձեր մեջ»: Մենք գիտենք, որ Հիսուսն օծվել է Սուրբ Հոգով (Գործք 10:38), ուստի մենք ճանաչում ենք Նրան որպես Քրիստոս՝ Օծյալ, քանի որ *Քրիստոս* նշանակում է *օծյալ*: Եվ Հովհաննես առաքյալն ասում է, որ *օծումը*, որը մենք (նվիրագործված հավատացյալները) ընդունել ենք, *մեր մեջ է բնակվում* (Ա Հովհ. 2:27): Այսպիսով, այս Ավետարանական դարաշրջանի սրբերը կազմում են օծյալների խումբը, օծված՝ Աստծու թագավորներ և քահանաներ լինելու համար (Բ Կորնթ. 1:21, Ա Պետ. 2:9), և Հիսուսի՝ իրենց առաջնորդի և Տիրոջ հետ միասին նրանք հանդիսանում են Եհովայի Օծյալը՝ Քրիստոսը:

Հովհաննեսի այս խոսքին համահունչ, ըստ որի մենք նույնպես *օծյալ* ենք՝ Պողոսը մեզ վստահեցնում է, որ այս խորհուրդը, որն անցյալ դարերում ծածկված էր, բայց այժմ բացահայտվում է սրբերին, այն է, որ *Քրիստոսը* (Օծյալը) «մեկ անդամ չէ, այլ բազմաթիվ», ճիշտ այնպես, ինչպես մարդու մարմինը մեկն է, բայց ունի շատ անդամներ, և ինչպես մարմնի բոլոր անդամները, թվով շատ, կազմում են մեկ մարմին, այնպես էլ Օծյալը՝ Քրիստոսը (Ա Կորնթ. 12:12–28): Հիսուսն օծվել է որպես Գլուխը կամ Տերը Եկեղեցու, որը Նրա մարմինն է (կամ Նրա հարսնացուն, ինչպես արտահայտված է մեկ այլ պատկերում՝ Եփես.

5:25–30), և միասին նրանք կազմում են խոստացված «Սերունդը»՝ Մեծ Ազատարարը. «Եվ եթե դուք Քրիստոսինն եք, ուրեմն Աբրահամի սերունդն եք ու խոստման համաձայն՝ ժառանգներ» (Գաղ. 3:29):

Առաքյալն զգուշորեն պաշտպանում է Եկեղեցին ցանկացած հավանական պնդումներից՝ Հիսուսի մասին ասելով, որ «Եվ ամեն բան նրա ոտքերի տակ հնազանդեցրեց, նրան եկեղեցու գլուխ դրեց՝ ամեն ինչից վեր», «որպեսզի ամեն բանում նա լինի *առաջինը*» (Եփես. 1:22, Կող. 1:18): Այնուամենայնիվ, մարդկային մարմնի պատկերն օգտագործելով՝ նա գեղեցիկ և համոզիչ կերպով ցույց է տալիս մեր սերտ կապը: Հիսուսը նույնպես ուսուցանեց այս նույն միասնության մասին՝ ասելով. «Ես եմ որթատունկը, իսկ դուք՝ ճյուղերը» (Հովհ. 15:5):

Մեր միասնությունը Տեր Հիսուսի հետ որպես Քրիստոսի՝ օծյալների խմբի անդամներ, լավ երևում է բուրգի պատկերով:



Վերին քարն ինքնին կատարյալ բուրգ է: Դրա տակ կարելի է տեղադրել այլ քարեր, և եթե դրանք ներդաշնակ լինեն վերին քարի բոլոր բնորոշ գծերին, ամբողջը կլինի կատարյալ բուրգ: Որքա՜ն գեղեցիկ է սա պատկերում մեր դիրքը որպես «Սերնդի»՝ «Քրիստոսի» անդամներ:

Միավորված և կատարյալ ներդաշնակության մեջ լինելով մեր Գլխի հետ՝ մենք, իբրև կենդանի քարեր, կատարյալ ենք, իսկ Նրանից բաժանված՝ մենք ոչինչ ենք:

Հիսուսը՝ Կատարյալը, բարձրացված է մինչև երկինք, և այժմ մենք ներկայանում ենք Նրան՝ Նրա օրինակով ձևավորվելու և որպես Աստծու շինություն կառուցվելու համար: Սովորական շենքում *գլխավոր* անկյունաքար չկա, բայց մեր կառույցում կա մեկ գլխավոր անկյունաքար՝ «գլխավոր քարը», ինչպես գրված է. «Ահա Սիոնում դնում եմ ընտիր, պատվական անկյունաքար», «մոտ եք կենդանի Վեմին... դուք կենդանի քարերի պես կառուցվում եք որպես հոգևոր տաճար սուրբ քահանայության համար, որպեսզի Հիսուս Քրիստոսի միջոցով Աստծուն բարեհաճ հոգևոր զոհեր[2] մատուցեք» (Ա Պետ. 2:4-6): Եվ մենք հավատում ենք, որ շատ շուտով կամբողջանա միությունը Հիսուսի՝ «Գլխի» և «Եկեղեցու միջև, որը Նրա մարմինն է»:

Եվ, սիրելինե՛ր, մենք պետք է շատ փորձությունների դիմակայենք և շատ մաքրագործումներով անցնենք, շատ փոխակերպումների ենթարկվենք և մեծապես համապատասխանենք Նրա օրինակին՝ մեծ Վարպետ-Շինարարի առաջնորդությամբ: Եվ որպեսզի շինարարի կարողություններն ու կատարելատիպը դրսևորվեն մեզանում, մենք պետք է այնպես անենք, որ մեր համառ կամքը չընդդիմանա կամ չխոչընդոտի Նրա կամքի կատարմանը մեզանում. մենք պետք է լինենք մանուկների նման և խոնարհ. «խոնարհությո՛ւն ունեցեք, որովհետև «Աստված ամբարտավաններին հակառակ է, իսկ խոնարհներին շնորհ է տալիս»»: Աստծու հզոր ձեռքի տակ

[2] Սինայի ձեռագրում «զոհեր» բառից առաջ «հոգևոր» բառը բաց է թողնված:

խոնարհվենք, որպեսզի մեզ ժամանակին բարձրացնի (Ա Պետ. 5:5,6), ինչպես որ բարձրացրեց մեր Գլխին ու Նախակարապետին (Փիլ. 2:8,9):

Սա իսկապես հրաշալի պատգամ է, և երբ մենք դիմում ենք Աստծու Խոսքին՝ քննելու մեր մեծ և բարձր կոչումը, մենք տեսնում ենք, որ բոլոր մարգարեները պերճախոս են՝ հռչակելու մեզ սահմանված շնորհը [ողորմությունը կամ օրհնությունը] (Ա Պետ. 1:10), մինչդեռ նախատիպերը, առակները և մինչ այդ անհասկանալի ասացվածքներն այժմ պարզ են դառնում՝ լույս սփռելով այն «նեղ ճանապարհի» վրա, որով օծյալների խումբը կոչված է վազելու՝ այժմ տեսանելի մրցանակի համար: Դա իսկապես աներևակայելի մի խորհուրդ էր, որ Աստված մտադիր էր վեր հանել ոչ թե մեկ ազատարարի, այլ բազմաթիվ անդամներից կազմված ազատարարի: Սա այն «*բարձր կոչումն*» է, որին Ավետարանի դարաշրջանի նվիրագործված հավատացյալներն արտոնություն ունեն արժանանալու: Հիսուսը չփորձեց սա բացահայտել աշակերտներին, երբ նրանք դեռ բնական մարդիկ էին, այլ սպասեց, որ Հոգեգալստյան օրը նրանք օծվեն՝ ծնվեն նոր էությամբ: Պողոսի բացատրությունից իմանում ենք, որ այժմ ոչ ոք, բացի «նոր արարածներից», չի կարող գնահատել կամ հասկանալ այս բարձր կոչումը: Նա ասում է. «խոսում ենք Աստծու խորհրդավոր և ծածուկ իմաստության [ծրագրի] մասին, որն Աստված հավիտենությունից առաջ մեր փառքի համար սահմանել էր, և որն այս աշխարհի իշխաններից [գլխավորներից] ոչ ոք չճանաչեց... այլ ինչպես գրված է. «Ինչ որ աչքը չտեսավ, ուականջը չլսեց, և մարդու սիրտը չընկավ, այն Աստված պատրաստեց իրեն սիրողների համար»: Բայց Աստված մեզ իր Հոգու միջոցով հայտնեց» (Ա Կորնթ. 2:6-14):

Գաղատացիներին ուղղված իր նամակում Պողոսը բացահայտում է ամբողջ խորհուրդը և ցույց է տալիս, թե ինչպես պետք է կատարվի Աբրահամի ուխտը: Նա ցույց է տալիս, որ Իսրայելին տրված Օրենքը չի հակասում սկզբնական ուխտին (Գաղ. 3:15–18), և որ Աբրահամի սերունդը, որը պետք է օրհնի բոլոր ազգերին, Քրիստոսն է (համար 16): Այնուհետև, զարգացնելով արդեն ակնարկված միտքը, որ Քրիստոսը ներառում է բոլոր Հոգով օծվածներին, նա ասում է. «Ձեզանից ովքեր Քրիստոսով մկրտվեցին, Քրիստոսով զգեստավորվեցին... Եվ եթե դուք Քրիստոսինն եք, ուրեմն [Հիսուսի հետ միասին] *Աբրահամի սերունդն եք* ու խոստման համաձայն՝ ժառանգներ» (Աբրահամին տրված խոստման համաձայն) (27,29 համարներ): Նույն տրամաբանությամբ շարունակելով՝ նա ցույց է տալիս (Գաղ. 4), որ Աբրահամը Եհովայի նախատիպն էր, Սառան՝ ուխտի կամ խոստման նախատիպը, իսկ Իսահակը՝ Քրիստոսի նախատիպը (գլուխ և մարմին), ապա ավելացնում է. «Իսկ մենք, եղբայրնե՛ր, Իսահակի պես խոստման որդիներ ենք» (համար 28): Այսպիսով, Աստծու ծրագիրը ծածկված էր նախատիպերով մինչև Քրիստոսի զարգացումը, որն սկսվեց Ավետարանական դարաշրջանում:

Հարկ էր այս խորհուրդը ծածուկ պահել, այլապես այն այդպես չէր պահվի: Դա անհրաժեշտ էր, քանի որ մարդկությանը այս ծրագրի լիարժեք բացահայտումը կհանգեցներ դրա խափանմանը: Եթե մարդիկ իմանային, չէին խաչի ո՛չ փառքի Տիրոջը, ո՛չ էլ Եկեղեցուն, որը Նրա մարմինն է (Ա Կորնթ. 2:8): Եթե ծրագիրը աշխարհից գաղտնի չպահվեր, այն կկանխեր ոչ միայն Քրիստոսի մահը՝ որպես մարդու փրկագին, այլև Եկեղեցու հավատքի փորձությունը՝ որպես Քրիստոսի չարչարանքների մասնակից, քանզի «աշխարհը մեզ [որպես

ժառանգորդների] նրա համար չի ճանաչում, որ [նույն պատճառով] նրան չճանաչեց» (Ա Հովհ. 3:1):

Ոչ միայն Աստծու ծրագիրը և այն մարմնավորող Քրիստոսն են մեծ խորհուրդ աշխարհի համար, այլև այս փոքրիկ հոտի հատուկ ուղին է, որը նրա անդամներին տարբերակում է որպես «Աստծու ընտրյալ ժողովուրդ»: Աշխարհի համար առեղծված էր, թե ինչու է այնպիսի կարողություններ ունեցող մարդը, ինչպիսին Նազովրեցի Հիսուսն էր, այդպես ծախսել իր ժամանակն ու տաղանդը, այնինչ եթե ուշադրություն դարձներ քաղաքականությանը, իրավաբանությանը, առևտրին կամ ժողովրդական կրոնին, կարող էր մեծ և հարգված դառնալ: Մարդիկ կարծում էին, որ Նա իր կյանքը հիմարաբար վատնել է, և ասում էին. «Նա դև ունի և մոլագար է»: Նրա կյանքն ու ուսմունքները նրանց համար առեղծված էին: Նրանք չէին կարողանում հասկանալ Նրան:

Առաքյալներն ու նրանց ուղեկիցները նույնպես առեղծված էին աշխարհի համար, քանի որ նրանք հրաժարվեցին իրենց գործնական հեռանկարներից և այլ զբաղմունքներից՝ քարոզելու արհամարհված և խաչված Հիսուսի մահվան միջոցով շնորհված մեղքերի թողությունը: Պողոսը հրաժարվեց իր բարձր դիրքից և հասարակական ազդեցությունից՝ իր ձեռքերով աշխատելու և Քրիստոսին քարոզելու, ինչպես նաև իրեն հետևող բոլոր հավատացյալների անտեսանելի պսակի համար: Սա այնքան առեղծվածային էր, որ ոմանք ասում էին. «Ցնորվում ես, Պողո՛ս, քո բազում գիտելիքները քեզ մոլագարության են տանում»: Եվ բոլոր նրանք, որ գնում են Տիրոջ հետքերով, ինչպես Պողոսը, հիմար են համարվում հանուն Քրիստոսի:

Սակայն Աստծու ծրագիրը միշտ չէ, որ պարուրված է լինելու առեղծվածով. Հազարամյա Թագավորության արշալույսը մարդկանց կբերի Աստծու լիարժեք լույսը, և «երկիրը պիտի լցվի Տիրոջ փառքի գիտությամբ»: Արդարության Արեգակը, որը ծագելու է՝ իր թևերով բժշկություն բերելով և անգիտության խավարը ցրելով, Քրիստոսն է՝ Հազարամյա Թագավորության փառքի մեջ. ոչ միայն Գլուխը, այլև Նրա Մարմնի անդամները, քանզի գրված է. «եթե նրա չարչարանքներին կցորդ ենք, փառքին էլ հաղորդակից լինենք»: «Բայց երբ Քրիստոսը՝ մեր կյանքը, հայտնվի, այն ժամանակ դուք էլ նրա հետ փառքով կհայտնվեք» և «Այդ ժամանակ արդարները արեգակի պես կփայլեն իրենց Հոր արքայության մեջ» (Հռոմ. 8:17, Բ Տիմ. 2:11,12, Կող. 3:4, Մատթ. 13:43):

Այժմ բոլորին, բացի նրանցից, ովքեր նոր միտք են ստացել՝ ընդունելով «Քրիստոսի միտքը», այն խոստումները, որոնց մենք հավատում ենք, և այն հույսերը, որոնք մենք փայփայում ենք, թվում են անիրական և չափազանց անհավանական՝ ընդունելու կամ գործելու համար: Գալիք դարաշրջանում, երբ Աստված «իր Հոգուց պիտի հեղի ամեն մարմնի վրա», ինչպես այս դարաշրջանում Նա այն հեղում է Իր «ծառաների և աղախինների» վրա, այդ ժամանակ իսկապես բոլորը կհասկանան և կգնահատեն այն խոստումները, որոնք այժմ ընկալում է «փոքր հոտը» և նրանք կցնծան Եկեղեցու հնազանդությամբ և վեհացմամբ՝ ասելով. «Ուրախանանք և ցնծանք ու փառք տանք նրան, որովհետև Գառան հարսանիքը հասավ, և նրա կինը պատրաստեց ինքն իրեն» (Հայտ. 19:7): Նրանք կցնծան Եկեղեցու փառաբանությամբ, որի միջոցով օրհնություններ կհեղվեն իրենց վրա: Եվ չնայած նրանք գիտակցում են, որ Օծյալի (Գլուխ և Մարմին) կողմից

ժառանգված «ամենամեծ ու պատվական խոստումները» նախատեսված չեն իրենց համար, այլ վերաբերում են մեզ, նրանք կօրհնվեն Եկեղեցում ի ցույց դրված դասի միջոցով: Եվ, սպասելով այն օրհնություններին, որոնք *այդ ժամանակ կառաջարկվեն իրենց*, նրանք կօգտվեն Եկեղեցու օրինակից և կփառաբանեն Աստծուն Եկեղեցու համար: Սակայն այս գիտելիքը նրանց չի տանի ագահության, քանի որ իրերի նոր կարգում մարդկային կատարյալ բնության՝ նրանց ուղղված կոչը լիովին կբավարարի նրանց և նրանց համար ավելի ցանկալի կթվա, քան էության փոփոխությունը:

Այդ ժամանակ «խորհուրդը» կավարտվի, քանի որ աշխարհը կհասկանա, որ դա Աստծու Հոգին էր Քրիստոսի մեջ և Քրիստոսի Հոգին՝ մեր մեջ, որը նրանք մինչ այդ չէին կարողանում հասկանալ: Այդ ժամանակ նրանք կտեսնեն, որ մենք ո՛չ խելագար էինք, ո՛չ էլ հիմար, այլ որ մենք ընտրել էինք ավելի լավ մասը, երբ վազում էինք իրենց համար անտեսանելի, բայց հավերժական հարստության, պատվի և թագի հետևից:

Որոշակի պահի Աստծու խորհուրդը կավարտվի յոթերորդ [խորհրդանշական] փողի հնչեցման ժամանակ (Հայտն. 10:7): Սա վերաբերում է խորհրդին՝ իր կիրառության երկու իմաստներով. այդժամ Աստծու *ծրագրի* խորհրդավոր կամ գաղտնի առանձնահատկությունները կբացահայտվեն և հստակ տեսանելի կդառնան, ինչպես նաև «Աստծու խորհուրդը»՝ Եկեղեցին, այդ ծրագրի մարմնացումը: Այդժամ երկուսն էլ կավարտվեն: Գաղտնի, ծածուկ ծրագիրը կապահովի Քրիստոսի Մարմնի լիակատար, ամբողջական անդամակցությունը, և հետևաբար ՔՐԻՍՏՈՍԻ ՄԱՐՄԻՆԸ կլինի ամբողջական: Այս ծրագիրը կդադարի

խորհուրդ լինելուց, քանի որ այլևս հարկ չի լինի պահել դրա գաղտնիությունը: Այդքան երկար գաղտնի պահված և խոստումների, նախատիպերի և խորհրդանիշների մեջ թաքնված խորհրդի մեծությունը, ինչպես նաև այդ խորհրդին մասնակցելու կոչվածներին տրված հրաշալի շնորհը (Եփես. 3:9) մեզ հուշում են, որ դրա ավարտին հաջորդող գործը, որի համար Եհովան մարդկությանը սպասման և հույսի մեջ է պահել վեց հազար տարի, պետք է լինի հսկայական ձեռնարկ, հոյակապ գործ՝ արժանի նման հսկայական նախապատրաստությունների: Ինչպիսի՜ օրհնություններ են սպասվում ամբողջ աշխարհին, երբ գաղտնիության վարագույրը վերանա և օրհնությունների հեղեղ թափվի: Հենց սա է պատճառը, որ ողջ արարչագործությունը դեռևս հեծեծում և հառաչում է՝ սպասելով այս խորհրդի կատարմանը՝ Աստծու Որդիների՝ խոստացված «Սերնդի» հայտնվելուն, որով բոլորը կօրհնվեն (Հռոմ. 8:19, 21, 22):

ԳԼՈՒԽ 6

Մեր Տիրոջ Վերադարձը – Դրա Նպատակը, Բոլոր Բաների Վերահաստատությունը. Գործք առ. 3:21

Մեր Տիրոջ Անձնական Երկրորդ Գալուստը Հազարամյակից Առաջ – Առաջին Գալստյան Հետ ունեցած Կապը – Եկեղեցու Ընտրությունը ու Աշխարհի Դարձը – Ընտրություն և Ձրի Շնորհ – Հույսի Գերիներ - Վերահաստատության Վերաբերյալ Մարգարեական Վկայություն – Մեր Տիրոջ վերադարձը Եկեղեցու և Աշխարհի Հույսն է

«Եվ ուղարկի ձեզ համար նշանակված Քրիստոսին՝ Հիսուսին: որը պիտի մնա երկնքում մինչև որ գան բոլոր բաների վերականգնման ժամանակները, ինչի մասին Աստված խոսեց հնում ապրած իր սուրբ մարգարեների միջոցով» (Գործք առ. 3:20, 21):

Մենք հավատում ենք, որ բոլոր նրանք, ովքեր ծանոթ են Սուրբ Գրքին, ընդունում և հավատում են, որ մեր Տերը ցանկացել է Իր աշակերտներին հստակ ցույց տալ, որ Նա կրկին կգա որոշակի նպատակով, որոշակի ձևով և որոշակի ժամանակին: Այո, Հիսուս ասաց. «Ես ձեզ հետ ամեն օր, մինչև աշխարհի վերջը» (Մատթեոս 28:20) – և իր Հոգով ու իր Խոսքով նա անընդմեջ եղել է Եկեղեցու հետ՝ առաջնորդելով, ուղղելով, մխիթարելով ու զորացնելով Իր սրբերին և ոգեշնչելով նրանց կյանքի բոլոր տառապանքների մեջ: Չնայած Եկեղեցին ուրախ էր իմանալով, որ Տերը գիտի նրա բոլոր ճանապարհները, անընդհատ հոգ է տանում նրա մասին և սիրում է նրան,

այնուամենայնիվ, նա կարոտում է նրա խոստացված անձնական վերադարձին, որովհետև, երբ նա ասաց. «Եթե գնամ, դարձյալ կգամ» (Հովհ. 14:3), նա անշուշտ նկատի ուներ երկրորդ անձնական գալուստը:

Ոմանք կարծում են, որ նա նկատի ուներ Սուրբ Հոգու իջնելը Պենտեկոստեի ժամանակ, մյուսները՝ Երուսաղեմի ավերումը և այլն, սակայն, ըստ երևույթին, նրանք անտեսում են այն փաստը, որ Աստվածաշնչի վերջին գրքում, որը գրվել է Պենտեկոստեից մոտ վաթսուն տարի անց և Երուսաղեմի ավերումից քսանվեց տարի անց, նա, ով մեռած էր և այժմ կենդանի է, խոսում է այդ իրադարձության մասին որպես դեռևս ապագա, ասելով. «Ահա, ես շուտով կգամ և Իմ վարձը ինձ հետ է»: Եվ ոգեշնչված Հովհաննեսը պատասխանում է. «Ամե՛ն: Ե՛կ, Տե՛ր Հիսուս» (Հայտնություն 22:12, 20):

Շատերը կարծում են, որ երբ մեղավորները դարձի են գալիս, դա Քրիստոսի գալստի մի մասն է, և որ նա այդպես շարունակելու է գալ, մինչև ամբողջ աշխարհը դարձի գա: Հետո, ասում են նրանք, նա ամբողջությամբ կգա:

Նրանք ակնհայտորեն մոռանում են Սուրբ Գրքի վկայությունը այս հարցի վերաբերյալ, որը հակառակն է նրանց ակնկալիքին. որ մեր Տիրոջ երկրորդ գալստյան ժամանակ աշխարհը հեռու կլինի Աստծուն դառնալուց. որ «վերջին օրերում չար ժամանակներ կգան, որովհետև մարդիկ կլինեն ավելի ցանկասէր քան թէ աստվածասէր» (Բ Տիմ. 3:1-4), որ «չար և խաբեբա մարդիկ ավելի ու ավելի առաջ կգնան չարության մեջ՝ մոլորեցնելով ու մոլորվելով» (13-րդ խոսք): նրանք մոռանում են Տիրոջ հատուկ նախազգուշացումը իր փոքր հոտին. «Զգույշ եղեք ձեր անձերին, որ ձեր սրտերը չծանրանան … Որովհետև այդ օրը որոգայթի պես կհասնի բոլորին, (ովքեր չեն զգուշանում) որ ապրում են երկրի վրա»

(Ղուկաս 21:34,35): Մեկ անգամ ևս կարող ենք վստահ լինել, որ երբ ասվում է, «երկրի բոլոր ցեղերը կողբան», երբ տեսնեն, որ նա գալիս է (Հայտնություն 1:7), ոչ մի հղում չի արվում մեղավորների ապաշխարությանը: Արդյո՞ք բոլոր մարդիկ հառաչում են մեղավորների ապաշխարության համար: Հակառակը, եթե այս հատվածը, ինչպես գրեթե բոլորն են ընդունում, վերաբերում է Քրիստոսի երկրի վրա ներկայությանը, ապա այն ուսուցանում է, որ երկրի վրա ոչ բոլորը կընդունեն նրա հայտնությունը, ինչպես անշուշտ կանեին, եթե բոլորը ապաշխարեին: Արդյո՞ք բոլոր մարդիկ ողբում են մեղավորների ապաշխարության համար: Հակառակը, եթե այս հատվածը, ինչպես գրեթե բոլորն են ընդունում, վերաբերում է Քրիստոսի երկրի վրա ներկայությանը, ապա պարզ է դառնում, որ երկրի վրա ոչ բոլորը կընդունեն Նրա հայտնվելը. մինչդեռ նրանք կնդունեին՝ եթե բոլորը դարձի եկած լինեին:

Ոմանք սպասում են Տիրոջ իրական գալստին և ներկայությանը, սակայն այս իրադարձության ժամանակը շատ հեռու են դնում՝ պնդելով, որ ներկայիս վիճակում գտնվող Եկեղեցու ջանքերով աշխարհը պետք է փոխակերպվի և այդպիսով սկսվի հազարամյա դարաշրջանը: Նրանք պնդում են, որ երբ աշխարհը դարձի գա, Սատանան կապվի, Տիրոջ գիտելիքը լցնի ողջ երկիրը, և ազգերը այլևս պատերազմ չսովորեն, այն ժամանակ եկեղեցու ներկայիս վիճակում նրա գործը կավարտվի, և երբ նա կատարի այս մեծ ու դժվարին առաջադրանքը, Տերը կգա՝ ավարտելու երկրային գործերը, պարգևատրելու հավատացյալներին և դատապարտելու մեղավորներին:

Որոշ գրություններ, առանձին վերցված, կարծես աջակցում են այս տեսակետին, սակայն երբ Աստծո Խոսքը և ծրագիրը դիտվում են որպես ամբողջություն, պարզվում է, որ դրանք բոլորը աջակցում են հակառակ

տեսակետին, այն է՝ որ Քրիստոս գալիս է աշխարհի փոխակերպումից առաջ և թագավորում է աշխարհը փոխակերպելու նպատակով, որ Եկեղեցին այժմ փորձության մեջ է, և որ հաղթողներին խոստացված պարգևը այն է, որ փառավորվելուց հետո նրանք կկիսեն Տեր Հիսուսի հետ այն թագավորությունը, որը Աստծո նշանակած միջոցն է աշխարհը օրհնելու և Տիրոջ ճանաչումը հասցնելու յուրաքանչյուր արարածի: Ահա Տիրոջ հատուկ խոստումները. «Ով հաղթի, նրան թույլ կտամ, որ ինձ հետ նստի իմ գահին» (Հայտն. 3:21) «Նրանք կենդանացան ու Քրիստոսի հետ թագավորեցին հազար տարի» (Հայտնություն 20:4):

Կան երկու տեքստեր, որոնց վրա հիմնականում հենվում են նրանք, ովքեր պնդում են, որ Տերը չի գա մինչև հազարամյակի ավարտը, որոնց վրա մենք այստեղ կկենտրոնանանք: Մեկը ասում է. «Արքայության այս ավետարանը պիտի քարոզվի ամբողջ աշխարհում՝ բոլոր ազգերին վկայություն լինելու համար, և այն ժամանակ կգա վերջը» (Մատթեոս 24:14): Նրանք պնդում են, որ սա վերաբերում է աշխարհի դարձի գալուն Ավետարանական դարի ավարտից առաջ: Սակայն աշխարհին վկայելը չի ենթադրում աշխարհի դարձի գալը: Տեքստը ոչինչ չի ասում, թե ինչպես կընդունվի վկայությունը: Այս վկայությունը արդեն տրված է: 1861 թվականին Աստվածաշնչային ընկերությունների զեկույցները ցույց տվեցին, որ Ավետարանը հրատարակվել է աշխարհի բոլոր լեզուներով, թեև երկրի միլիոնավոր մարդկանցից ոչ բոլորն են այն ստացել: Կենդանի գտնվող 1600 միլիոն մարդուց անգամ կեսը երբևէ չի լսել Հիսուսի անունը: Այնուամենայնիվ, տեքստի պայմանը կատարվել է. ավետարանը քարոզվել է ամբողջ աշխարհում որպես վկայություն՝ յուրաքանչյուր ազգի համար:

Առաքյալը (Գործք 15:14) ասում է, որ ներկայիս դարում ավետարանի գլխավոր նպատակը «ժողովուրդ հանելն» է Քրիստոսի անվան համար՝ հաղթական Եկեղեցին, որը նրա երկրորդ գալստին միավորվելու է նրա հետ և կստանա նրա անունը: Այս դարում աշխարհին վկայելը երկրորդական նպատակ է:

Մյուս տեքստը այսպես է. «Նստիր իմ աջ կողմում, մինչև քո թշնամիներին ոտքերիդ պատվանդան դարձնեմ» (Սաղմոս 110:1): Այս տեքստի վերաբերյալ անորոշ, անճշգրիտ պատկերացումը կարծես այն է, որ Քրիստոսը նստած է նյութական գահի վրա երկնքում, մինչև Եկեղեցու միջոցով նրա համար բոլոր բաների ենթարկման գործը ավարտվի, և միայն այնուհետև նա կգա իշխելու: Սա սխալ պատկերացում է: Այստեղ նշված Աստծո աթոռը նյութական չէ, այլ վերաբերում է Նրա գերագույն իշխանությանը և տիրապետությանը: Եվ Տեր Հիսուսը բարձրացվեց, որպեսզի մասնակցի այդ տիրապետությանը: Պողոսը հայտարարում է. «Դրա համար էլ Աստված առավել բարձրացրեց նրան և նրան տվեց մի անուն, որ բարձր է բոլոր անուններից»: Նա Նրան տվեց իշխանություն բոլոր մյուսներից վեր, երկրորդ տեղում Հորից հետո: Եթե Քրիստոս նստած է նյութական գահի վրա, մինչև որ իր թշնամիները դառնան նրա ոտքերի պատվանդանը [ամեն ինչ նվաճվի], ապա, բնականաբար, նա չի կարող գալ, մինչև ամեն ինչ չնվաճվի: Բայց եթե այս տեքստում «աջ կողմը» վերաբերում է ոչ թե կայուն վայրին և նստարանին, այլ, ինչպես մենք պնդում ենք, ուժին, իշխանությանը, տիրապետությանը, ապա հետևում է, որ քննարկվող տեքստը ոչ մի կերպ չի հակասում մյուս գրությանը, որը սովորեցնում է, որ Նա գալիս է «ամեն ինչ հնազանդեցնելու Իրեն» (Փիլիպ. 3:21)՝ իրեն տրված իշխանության ուժով: Օրինակ՝ մենք ասում ենք, որ կայսր Վիլհելմը Գերմանիայի գահին է, սակայն մենք ինկատի

չունենք թագավորական գահը: Իրականում նա հազվադեպ է նստում այնտեղ: Երբ ասում ենք, որ նա գահին է, նկատի ունենք, որ նա կառավարում է Գերմանիան: Աջ կողմը նշանակում է բարձրագույն տեղը, գերազանցության կամ շնորհի դիրքը՝ գլխավոր իշխանին մոտ: Այսպես, Գերմանիայի կայսրը բարձրացրեց կամ նստեցրեց իշխան Բիսմարկին իշխանության աջ կողմում, իսկ Յովսեփը Եգիպտոսի թագավորությունում Փարավոնի աջ կողմում էր՝ ոչ բառացիորեն, այլ այնտեղ տարածված փոխաբերական արտահայտությամբ: Հիսուսի խոսքերը Կայիափային համապատասխանում են այս մտքին. «Սրանից հետո կտեսնեք մարդու որդուն զորության աջ կողմում նստած և երկնքի ամպերով գալիս» (Մատթեոս 26:64): Նա կլինի աջ կողմում, երբ գա, և կմնա աջ կողմում հազարամյա դարաշրջանի ողջ ընթացքում և հավիտյան:

Աստծո հայտնված ծրագրերի հետագա ուսումնասիրությունը կտա ավելի լայն պատկերացում թե՛ առաջին, թե՛ երկրորդ գալուստների նպատակի մասին, և մենք պետք է հիշենք, որ երկու դեպքերն էլ մի ծրագրի մասեր են: Առաջին գալուստի հատուկ գործը մարդկանց փրկելն էր, իսկ երկրորդի գործը փրկվածներին վերականգնելը, օրհնելը և ազատելն է: Իր կյանքը բոլորի համար փրկագին տալով՝ մեր Փրկիչը երկինք համբարձվավ, որպեսզի այդ զոհը Հոր առջև ներկայացնի և այդպիսով մարդու անօրենության համար հաշտեցում կատարի: Նա սպասում է և թույլ է տալիս «այս աշխարհի իշխանին» շարունակել չարի իշխանությունը մինչև «Հարսի, Գառան կնոջ» ընտրությունը, որը, որպեսզի արժանի համարվի այդ պատվին, պետք է հաղթահարի ներկայիս չար աշխարհի ազդեցությունները: Այնժամ կմեկնարկի մարդկությանը նրա զոհաբերությամբ ապահովված մեծ

օրհնությունները պարգևելու գործը, և Նա կգա, որպեսզի օրհնի երկրի բոլոր ընտանիքները:

Ճիշտ է, վերականգնումն ու օրհնությունը կարող էին սկսվել անմիջապես, երբ Փրկիչը վճարեց փրկանքի գինը, և այդ դեպքում Մեսիայի գալը կլիներ միակ իրադարձությունը, իսկ թագավորությունն ու օրհնությունը կսկսվեին անմիջապես, ինչպես սկզբում սպասում էին առաքյալները (Գործք 1:6): Բայց Աստված մեզ՝ քրիստոնեական Եկեղեցու համար նախատեսեց «ավելի լավ բան» (Եբր. 11:40), ուստի մեր օգտին է, որ Քրիստոսի թագավորությունը այս տասնինը դարերի ընթացքում առանձնացված է գլխի տառապանքներից, որպեսզի իր աշակերտները հնարավորություն ունենան մասնակից լինելու իր չարչարանքներին, որպեսզի արժանի համարվեն իր փառքին էլ մասնակից լինելու:

Այս ժամանակաշրջանը առաջին և երկրորդ գալուստների միջև, կամ բոլորի համար փրկագին վճարելու և բոլորի օրհնության միջև եղած ժամանակահատվածը եկեղեցու փորձության և ընտրության համար է, որը Քրիստոսի մարմինն է, հակառակ դեպքում կլիներ միայն մեկ գալուստ, և այն գործը, որը կատարվելու է նրա երկրորդ ներկայության շրջանում՝ հազարամյակում, կհետևեր Հիսուսի հարությանը: Կամ, փոխարենը ասելու, որ երկրորդ գալուստի գործը անմիջապես կհետևեր առաջինի գործին, ասենք, որ եթե Եհովան չնախատեսեր «փոքր հոտի», «Քրիստոսի մարմնի» ընտրությունը, առաջին գալուստը չէր տեղի ունենա այն ժամանակ, երբ տեղի ունեցավ, այլ կկատարվեր երկրորդ գալուստի ժամանակ, և կլիներ միայն մեկը: Քանզի Աստված ակնհայտորեն վեց հազար տարի թույլ է տվել չարի գոյությունը, իսկ յոթերորդ հազարամյակում կկատարվի բոլորի մաքրագործությունն ու վերականգնումը:

Այսպիսով, Հիսուս որպես զոհ և փրկանք մեղավորների համար՝ օրհնության և վերականգնման ժամանակից այնքան առաջ եկավ, որքան ժամանակ որ անհրաժեշտ էր Նրա «փոքր հոտը»՝ «ժառանգակիցների» ընտրության համար: Սա որոշների համար կբացատրի Աստծո կողմից խոստացված և փրկանքով ապահովված օրհնությունները տալու ակնհայտ ուշացումը: Օրհնությունները կգան ճիշտ ժամանակին, ինչպես սկզբում էր նախատեսված, սակայն փառավոր նպատակով դրանց գինը տրամադրվել էր ավելի վաղ, քան մարդիկ կսպասեին:

Առաքյալը մեզ ասում է, որ Հիսուսը իր համբարձումից մինչև վերականգման կամ հազարամյա դարը Հիսուսը բացակայում էր երկրից (երկնքում գտնվելով). «որը պիտի մնա երկնքում մինչև որ գան բոլոր բաների վերականգնման ժամանակները » և այլն (Գործք 3:21). Քանի որ Սուրբ Գիրքը սովորեցնում է, որ մեր Տիրոջ երկրորդ գալուստի նպատակը ամեն ինչի վերականգնումն է, և որ Նրա հայտնության ժամանակ ազգերը հեռու կլինեն ապաշխարությունից՝ նրանք կբարկանան (Հայտնություն 11:18) և կդեմ կկանգնեն Նրան, հետևաբար պետք է ընդունել, որ կամ Եկեղեցին չի կատարի իր առաքելությունը, և Աստծո ծրագիրը կխափանվի, կամ այս ներկայիս դարում աշխարհի հոգևոր վերածնունդը չի կարելի ակնկալել Եկեղեցուց (ինչը մենք պնդում ենք և արդեն ցույց ենք տվել), քանի որ նրա առաքելությունն էր ամբողջ աշխարհում ավետարան քարոզել որպես վկայություն և աստվածային առաջնորդության ներքո ինքն իրեն պատրաստել մեծ ապագա աշխատանքի համար: Աստված ոչ մի կերպ չի սպառել Իր ուժը աշխարհը փոխակերպելու համար: Ավելին, Նա դեռևս անգամ չի փորձել այն փոխակերպել:

Սա ոմանց համար տարօրինակ կարող է թվալ, սակայն թող նրանք խորհեն, որ եթե Աստված ձեռնարկել

է նման գործ, ապա ակնհայտորեն ձախողվել է, որովհետև, ինչպես տեսանք, երկրի միլիարդավոր մարդկանցից միայն փոքրիկ մասն է երբևէ խելամիտ կերպով լսել այն միակ անունը, որով նրանք պետք է փրկվեն: Մենք ներկայացրել ենք մի շարք առաջատար հարանվանությունների՝ մկրտականների, պրեսբիտերականների և այլոց տեսակետներն ու ուսմունքները, ըստ որոնց Աստված աշխարհից ընտրում է «փոքր հոտը»՝ Եկեղեցին: Նրանք հավատում են, որ Աստված այս Եկեղեցին ընտրելուց ավել ոչինչ չի անի, մինչդեռ մենք տեսնում ենք, որ Սուրբ Գիրքը ուսուցանում է աստվածային ծրագրի մեկ այլ քայլ՝ աշխարհի համար ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ, որը պետք է իրականացվի ընտրված Եկեղեցու միջոցով, երբ այն ամբողջացվի և փառավորվի: Այս Ավետարանական դարի «փոքր հոտը», հաղթողները, միայն «Սերունդն» են, մարմինն են, որի միջոցով աշխարհի բոլոր ազգերը պիտի օրհնվեն:

Նրանց համար, ովքեր պնդում են, որ Եհովան վեց հազար տարի է ինչ փորձում է աշխարհը դարձի բերել, սակայն անընդմեջ ձախողվում է, դժվար կլինի այդ տեսակետները համատեղել Աստվածաշնչի այն վստահության հետ, որ Աստծո բոլոր նպատակները կկատարվեն, և որ Նրա Խոսքը դատարկ չի վերադառնա, այլ կհաջողվի այն գործում, որի համար այն ուղարկվել է (Ես. 55:11): Այն փաստը, որ աշխարհը դեռ դարձի չի եկել և ամբողջ երկիրը դեռ չի լցվել Տիրոջ գիտությամբ, ապացուցում է, որ այն դեռ չի ուղարկվել այդ առաքելությամբ:

Այս ամենը մեզ հասցնում է երկու հասկացությունների, որոնք դարեր շարունակ բաժանել են քրիստոնյաներին՝ ընտրություն և ձրի շնորհ: Ոչ մի Աստվածաշնչագետ չի կարող հերքել, որ այս երկու ուսմունքները, չնայած իրենց ակնհայտ հակասությանը, գտնում են հաստատում Սուրբ Գրքում: Այս փաստը

անմիջապես պետք է մեզ հասցնի այն եզրակացությանը, որ ինչ-որ կերպ երկուսն էլ պետք է ճշմարիտ լինեն, սակայն դրանք որևէ կերպ չեն կարող համատեղվել, եթե չպահպանվի երկնային օրենքը, կարգը և եթե «ճշգրիտ չբացատրվի ճշմարտության խոսքը» այս հարցում: Այս կարգը, ինչպես ներկայացված է դարերի ծրագրում, եթե պահպանվի, հստակ ցույց կտա, որ մինչ ընտրությունը ընթացքի մեջ է եղել ներկայիս և անցյալ դարերում, այն, ինչը առանձնացված կերպով կոչվում է ձրի շնորհ, Աստծո ողորմասեր կանխահոգածությունն է ընդհանուր աշխարհի համար հազարամյա դարաշրջանում: Եթե նախորդ գլխում ներկայացված դարաշրջանների և ժամանակաշրջանների առանձնահատկությունները հիշենք և ուսումնասիրենք ու զետեղենք Ընտրության և Ձրի Շնորհի վերաբերյալ բոլոր հատվածները, պարզ կդառնա, որ Ընտրության մասին խոսող բոլոր հատվածները վերաբերում են ներկա և անցյալ դարերին, մինչդեռ Ձրի Շնորհ ուսուցանող հատվածները ամբողջությամբ վերաբերում են հաջորդ դարին:

Այնուամենայնիվ, Ընտրությունը, ըստ Աստվածաշնչի, ոչ թե կամայական հարկադրություն կամ ճակատագրապաշտություն է, ինչպես սովորաբար ենթադրում և ուսուցանում են դրա կողմնակիցները, այլ ընտրություն՝ հիմնված որակների և հարմարվողության վրա՝ ըստ այն նպատակի, որը Աստված նախատեսել է, և այն ժամանակահատվածում, որը հատկացված է այդ նպատակին:

Աստծո՝ Քրիստոսով ցույց տրված շնորհը կամ ողորմությունը միշտ ձրի է, այն իմաստով՝ որ պարտավոր չէր տալու, սակայն մարդու մեղքի մեջ ընկնելուց մինչև այսօր, Աստծո զանազան շնորհները սահմանափակված են որոշ անհատների, ազգերի և դասակարգերի մեջ. մինչդեռ առաջիկա դարերում ամբողջ աշխարհը կհրավիրվի այն ժամանակ ընծայված շնորհներից բաժին

ստանալու՝ այն պայմանների համաձայն, որոնք բոլորին ծանոթ կլինեն: «Եվ նա, ով ցանկանում է, թող վերցնի կյանքի ջուրը ձրի» (Հայտն. 22:17):

Վերադառնալով անցյալին՝ մենք նկատում ենք Աբրահամի և նրա սերնդի որոշ ներկայացուցիչների ընտրությունը որպես այն միջոցների, որոնց միջոցով պետք է գար խոստացված Սերունդը՝ երկրի բոլոր ընտանիքների օրհնողը (Գաղ. 3:29): Մենք նաև նկատում ենք Իսրայելի ընտրությունը բոլոր ազգերի միջից՝ որպես այն մեկը, որի մեջ, խորհրդանշորեն, Աստված պատկերավոր ցույց տվեց, թե ինչպես պետք է իրականացվի աշխարհի վերաբերյալ այն մեծ գործը:Նրանց ազատագրումը Եգիպտոսից, նրանց Քանանը, ուխտերը, օրենքները, մեղքի ու հանցանքի ջնջման, և ժողովուրդը մաքրագործելու համար կատարված զոհերը, ինչպես նաև քահանայությունը, որը պետք է իրականացներ այս ամենը, հանդիսանում էին նախատիպը այն իրական քահանայության և զոհերի՝ որոնցով մարդկային ցեղը պիտի մաքրագործվի: Աստված, խոսելով ժողովրդին, ասաց, «Երկրի բոլոր ազգատոհմերից միայն ձեզ եմ ճանաչել» (Ամոս 3:2): Մինչև Քրիստոսի գալը միայն այս ժողովուրդն էր ճանաչվում, այո, և դրանից հետո ևս, որովհետև նրա ծառայությունը սահմանափակված էր նրանցով, և նա թույլ չէր տալիս իր աշակերտներին գնալ ուրիշների մոտ՝ ասելով. «Հեթանոսների ճանապարհով չգնաք և սամարացիների քաղաքը չմտնեք»: Ինչու՞ Տե՛ր: Նա բացատրում է. «Ես ուրիշի չուղարկվեցի, այլ Իսրայելի տան կորած ոչխարներին» (Մատթ. 10:5,6, 15:24): Նրա ամբողջ ժամանակը մինչև մահ նվիրված էր նրանց, և հենց այնտեղ կատարվեց աշխարհի համար նրա առաջին գործը՝ նրա ձրի և ամենաառատ շնորհքի առաջին դրսևորումը, որը «իր ժամանակին» իսկապես օրհնություն կլինի բոլորի համար:

Աստծո այս ամենազարմանահրաշ պարգևը սահմանափակված չէր միայն մեկ ժողովրդով կամ դասով: Այն նախատեսված էր ոչ միայն Իսրայելի համար, այլ ամբողջ աշխարհի, որովհետև Հիսուս Քրիստոսը Աստծո շնորհով, ամեն մարդու համար մահ ճաշակեց (Եբր. 2:9):

Եվ այժմ, Ավետարանական դարաշրջանում, գործում է որոշակի ընտրություն. աշխարհի որոշ շրջաններ ավելի օգտված են ավետարանով (որը ձրի է բոլոր լսողների համար), քան մյուսները. նայեք աշխարհի քարտեզին և տեսեք, թե որքան փոքր է այն հատվածը, որը լուսավորված կամ օրհնված է Քրիստոսի ավետարանով. Համեմատեք ձեզ՝ ձեր արտոնություններով ու գիտելիքներով, այսօր հեթանոսական խավարում գտնվող միլիոնավոր մարդկանց հետ, որոնք երբեք չեն լսել հրավերը և, հետևաբար, չեն կանչվել: Երբ կանչվածների դասակարգը (ովքեր կանչվել են դառնալու Աստծո որդիներ, Աստծո ժառանգներ և մեր Տեր Հիսուս Քրիստոսի ժառանգակիցներ և ովքեր իրենց կոչն ու ընտրությունը հաստատուն են դարձրել) ամբողջանա, միայն այդժամ Աստծո ծրագիրը աշխարհի փրկության համար կսկսվի:

Մինչ այն չընտրվի, չզարգացվի և չբարձրացվի իշխանության, Սերունդը օձի գլուխը չի ջախջախի: «Խաղաղության Աստվածը շուտով կջախջախի Սատանային ձեր ոտքերի տակ» (Հռոմեացիներ 16:20, Ծննդոց 3:15): Ավետարանական դարաշրջանը պատրաստում է անարատ կույսին, հավատարիմ Եկեղեցուն, գալիք Փեսայի համար: Եվ դարաշրջանի վերջում, երբ նա «պատրաստել է իրեն» (Հայտնություն 19:7), հարսի Փեսան գալիս է, և ովքեր պատրաստ են, մտնում են նրա հետ հարսանիք — երկրորդ Ադամն ու երկրորդ Եվան միանում են, և ապա սկսվում է փառավոր վերականգնման գործը: Հաջորդ ժամանակաշրջանի մեջ՝

նոր երկնքում և նոր երկրի վրա, Եկեղեցին այլևս նշանացու կույսը չի լինի, այլ՝ հարսը, և այնժամ «Հոգին ու հարսը ասում են՝ Ե՛կ: Եվ նա, ով լսում է, թող ասի՝ Ե՛կ: Նա, ով ծարավ է, թող գա, և նա, ով ցանկանում է, թող վերցնի կյանքի ջուրը ձրի» (Հայտն. 22:17):

Ավետարանական դարը, ոչ թե կը վերջացնի եկեղեցու առաքելությունը, այլ նրան կպատրաստի գալիք մեծ գործի համար: Այս խոստացված և գալիք օրհնության համար ամբողջ ստեղծագործությունը մինչև հիմա հառաչում է ու ցավի մեջ է, սպասելով Աստծո որդիների հայտնվելուն (Հռոմեացիներ 8:22,19): Եվ օրհնյալ իրողություն է, որ Աստծո Հոր ծրագրում ձրի շնորհը լիակատար չափով, ոչ միայն կենդանիների, այլև մեռածների համար, նախատեսված է որպես գալիք դարի օրհնյալ հնարավորություն:

Ոմանք, ովքեր ինչ-որ չափով տեսնում են երկրորդ գալուստին պատկանող օրհնությունները և որոշ չափով գնահատում են այն փաստը, որ Տերը գալիս է շնորհելու իր մահով ձեռք բերված մեծ օրհնությունը, չեն տեսնում այս վերջին պնդումը՝ այն, որ գերեզմաններում գտնվողները նույնքան շահ ունեն Մեսիայի փառավոր իշխանության մեջ, որքան նրանք, ովքեր այդ ժամանակ կենդանի կմնան: Բայց քանի որ Հիսուսը բոլորի համար մեռավ, նրանք բոլորը պետք է ստանան այն օրհնությունները և հնարավորությունները, որոնք Նա ձեռք բերեց Իր սեփական թանկագին արյունով: Սա նշանակում է, որ Հազարամյա դարաշրջանում օրհնություններ են սպասվում և՛ գերեզմաններում գտնվողների, և՛ նրանց համար, ովքեր դեռևս կենդանի են: Եվ այս մասին մենք կգտնենք բազմաթիվ փաստեր, երբ ավելի խորությամբ ուսումնասիրենք Տիրոջ վկայությունը այս թեմայի շուրջ: Քանի որ Աստված ունի նրանց ազատագրման ծրագիր, գերեզմանում գտնվողները կոչվում են «հույսի գերիներ»:

Հաշված է, որ Ադամի ստեղծումից ի վեր վեց հազար տարիների ընթացքում երկրի վրա ապրել է մոտ 143 միլիարդ մարդ: Նրանցից՝ ամենալայն, սակայն հիմնավոր հաշվարկով, Աստծո սրբեր են եղել մեկ միլիարդից պակաս մարդ: Այս լայն հաշիվը թողնում է հարյուր քառասուն երկու միլիարդ (142,000,000,000) հսկայական ընդհանուր թվաքանակ, որոնք մեռան առանց հավատքի և հույսի միակ այն անվան նկատմամբ, որ տրված է երկնքի տակ կամ մարդկանց մեջ, որով կարող ենք փրկվել: Իրականում, նրանց մեծամասնությունը երբեք չի ճանաչել և չի լսել Հիսուսի մասին, և չէին կարող հավատալ նրան, ում մասին չէին լսել:

Մենք հարցնում ենք՝ ինչ է պատահել այս մեծ բազմությանը, որի մասին թվերը լիովին անբավարար պատկերացում են տալիս: Ի՞նչ է նրանց վիճակը այժմ և ի՞նչ է լինելու նրանց վիճակը: Միթե Աստված անտեսել է նրանց, որոնց վիճակն ու հանգամանքները Նա անշուշտ կանխատեսել էր:Կամ միթե՞ նա աշխարհի սկիզբեց ի վեր նրանց համար անհույս ու հավիտենական տանջանքի խղճալի ու անգութ կարգադրություն արեց: Կամ գուցե Նա, ի վերջո, նրանց համար (Իր ծրագրի ամբողջ բարձրության, խորության, երկարության և լայնության մեջ) պահպանել է հնարավորությունը ճանաչելու այն միակ Անունը և ուրախանալու հավիտենական կյանքով՝ հնազանդվելով այդ ժամանակի պայմաններին:

Այս հարցերին, որոնք յուրաքանչյուր մտածող քրիստոնյա տալիս է ինքն իրեն և ձգտում է տեսնել դրանց անկեղծ և Եհովայի բնավորությանը համահունչ պատասխան, տրվում են բազմազան պատասխաններ:

Աթեիզմը պատասխանում է՝ նրանք հավիտենապես մեռած են. ապագա կյանք չկա. նրանք այլևս երբեք չեն ապրի:

Կալվինիզմը պատասխանում է. «Նրանք փրկության համար չեն ընտրվել: Աստված նրանց համար նախանշել և պատրաստել է մոռացություն—դժոխք—և նրանք այժմ այնտեղ են, տառապում են ցավից, և այնտեղ կմնան հավիտյան, հույսից զրկված»:

Արմինիականությունը պատասխանում է՝ «Մենք հավատում ենք, որ Աստված շատերին ներում է նրանց անտեղյակության պատճառով: Նրանք, ովքեր արել են ամենալավը, ինչ գիտեին, անշուշտ կլինեն, «Անդրանիկների եկեղեցու» անդամներ, նույնիսկ եթե երբեք չեն լսել Հիսուսի մասին»:

Բոլոր դավանանքների քրիստոնյաների մեծամասնությունը հակված է ընդունել այս տեսակետը, կարծելով, որ ցանկացած այլ տեսանկյուն անհամատեղելի է Աստծո արդարության հետ: Բայց արդյո՞ք Սուրբ Գիրքը աջակցում է այս տեսակետին: Արդյո՞ք այն ուսուցանում է, որ անտեղյակությունը փրկության հիմքն է: Ոչ: Սուրբ Գրքում նշված փրկության միակ պայմանը հավատքն է Քրիստոսի նկատմամբ որպես մեր Տիրոջ ու փրկչի: «Շնորհքով եք փրկվել, հավատի միջոցով» (Եփես. 2:8): Հավատքով արդարացումը քրիստոնեության հիմնարար սկզբունքն է: Երբ հարցրին. «Ի՞նչ անեմ, որ փրկվեմ», առաքյալները պատասխանեցին. «Հավատա Տեր Հիսուս Քրիստոսին» «Երկնքի տակ չկա մարդկանց տրված ուրիշ անուն, որով մենք կարող ենք փրկվել» (Գործք 4:12), և «Ով Տիրոջ անունը կանչի, կփրկվի» (Հռոմ. 10:13):

Բայց Պողոսը հիմնավորում է, որ նախքան մարդը կարողանա հավատալ, նա պետք է լսի Ավետարանը. «Արդ ինչպե՞ս կկանչեն նրան, ում չհավատացին, կամ ինչպե՞ս կհավատան նրան, ում մասին չլսեցին» (Հռոմ. 10:14):

Ոմանք պնդում են, որ Պողոսի խոսքերը՝«սրանք թեև օրենք չունեն, իրենք են իրենց համար օրենք» (Հռոմ. 2:14), սովորեցնում են, որ անտեղյակությունը կփրկի մարդկանց: Այդ հիմքով նրանք եզրակացնում են, որ իրենց խղճի կողմից սահմանված օրենքը բավարար է արդարացման համար: Սակայն նման մարդիկ սխալ են հասկանում Պողոսին: Նրա փաստարկն այն է, որ ամբողջ աշխարհը մեղավոր է Աստծո առջև (Հռոմեացիներ 3:19), որ հեթանոսները, որոնք չունեին գրված օրենքը, դատապարտվեցին, ոչ թե արդարացվեցին: Խղճի լույսը, որը, թե՛ արդարացներ նրանց, թե՛ մեղադրեր, ապացուցում էր, որ նրանք հեռու են կատարելությունից և անարժան կյանքի, ինչպես հրեաները, որոնք ունեին գրված օրենքը, դատապարտվեցին դրա կողմից, «որովհետև օրենքով մեղքի ճանաչումն է» (Հռոմ. 3:20). Հրեային տրված Օրենքը բացահայտեց հրեայի թուլությունը: Նրա նպատակը վկայելն էր Աստծո առջև ինքնուրույն արդարացվելու անհնարության մասին, «քանզի Օրենքի գործերով ոչ մի մարմին չի արդարացվի Նրա [Աստծո] առջև»: Գրավոր Օրենքը դատապարտեց հրեաներին: Հեթանոսներն էլ ունեին խղճի բավարար լույս, որը դատապարտում էր նրանց: Եվ այդպիսով յուրաքանչյուր բերան փակվում է, չի համարձակվում պահանջել կյանքի իրավունք, և ամբողջ աշխարհը մեղավոր է ճանաչվում Աստծո առջև:

Հիշելով Հակոբոսի (2:10) խոսքը, որ նա ով պահում է ամբողջ օրենքը, բայց թերանում է մեկ կետում, մեղավոր է և չի կարող պահանջել Օրենքի ուխտով խոստացված որևէ օրհնություն, մենք հասկանում ենք, որ իսկապես «արդար ոչ ոք չկա, ոչ մեկը»: (Հռոմեացիներ 3:10) Արդյունքում, Սուրբ Գիրքը փակում է բոլոր հույսի դռները, բացի մեկից, ցույց տալով, որ դատապարտված ոչ մի մարդ չի կարող հավիտենական կյանք ձեռք բերել վարձատրության արժանի գործերով, և որ նույնքան

անօգուտ է փրկության հիմք ընդունել անտեղյակությունը: Անտեղյակությունը ոչ ոքի չի արժանացնում հավատքի ու հնազանդության վարձատրության:

Շատ քրիստոնյաներ, որոնք չեն ցանկանում հավատալ, որ միլիոնավոր անգիտակ մանուկներ և հեթանոսներ հավիտյան կորստի կմատնվեն (այսինքն՝ ինչպես նրանց սովորեցրել են, կուղարկվեն հավիտենական ու հուսահատ տանջանքների վայր), պնդում են, որ, չնայած այս աստվածաշնչյան ապացույցներին, Աստված չի դատապարտի անգիտակներին: Մենք հիանում ենք նրանց բարեսրտությամբ և Աստծո բարության նկատմամբ ունեցած նրանց գիտակցությամբ, սակայն խորհուրդ ենք տալիս չշտապել մերժելու կամ անտեսելու Աստվածաշնչյան պնդումները: Աստված բոլորի համար օրհնություններ ունի՝ որոնք կարելի է ստանալ անտեղյակությունից շատ ավելի լավ ճանապարհով:

Բայց արդյո՞ք նրանք գործում են իրենց հռչակած հավատքի համաձայն: Ոչ: Նույնիսկ երբ նրանք հռչակում են, որ անտեղյակները կփրկվեն իրենց անտեղյակության շնորհիվ, նրանք, այնուամենայնիվ, շարունակում են ուղարկել միսիոներներ հեթանոսների մոտ՝ հազարավոր թանկարժեք կյանքերի և միլիոնավոր ֆունտների գնով: Եթե նրանց բոլորը, կամ նույնիսկ նրանց կեսը, փրկվել են անտեղյակության շնորհիվ, ապա նրանց մոտ առաքյալներ ուղարկելն ու Քրիստոսի մասին ուսուցանելը մեծ վնաս կլիներ, քանի որ միսիոներների այցի դեպքում միայն հազարից մեկն է հավատում: Եթե այս տեսակետը ճիշտ է, ապա շատ ավելի լավ է նրանց թողնել անտեղյակության մեջ, որովհետև այդ դեպքում շատ ավելի մեծ թվով մարդիկ կփրկվեն: Նույն տրամաբանությամբ շարունակելով՝ մի՞թե չենք եզրակացնի, որ եթե Աստված բոլոր մարդկանց թողներ

անտեղյակության մեջ, ապա բոլորն էլ կփրկվեին: Եթե այդպես լիներ, ապա Հիսուսի գալը և մահը անօգուտ կլինեին, առաքյալների և սրբերի քարոզչությունն ու տառապանքները ապարդյուն կլինեին, և կոչված Ավետարանը, փոխարենը բարի լուր լինելու, շատ վատ լուր կլիներ: Ավելի անտեղի և անխոհեմ է միսիոներներ ուղարկել հեթանոսների մոտ նրանց կողմից, ովքեր հավատում են Կալվինյան և ճակատագրապաշտական նախանշման տեսակետներին՝ ըստ որոնց յուրաքանչյուր մարդու հավիտենական ճակատագիրը վճռված է դեռևս նրա գոյությունից առաջ:

Այնուամենայնիվ, Աստվածաշունչը, որը լի է միսիոնարական ոգով չի սովորեցնում, որ փրկության մի քանի ճանապարհներ կան՝ մեկը հավատքով, մյուսը գործերով, երրորդը՝ անտեղյակությամբ: Այն նաև չի ուսուցանում Աստծուն անարգող ճակատագրապաշտության ուսմունքը: Չնայած այն ցույց է տալիս, որ մարդկության առջև բոլոր մյուս հույսի դռները փակ են, այն լայնորեն բացում է միակ դուռը և հայտարարում, որ ով ուզում է, կարող է մտնել կյանքի մեջ, և ցույց է տալիս, որ բոլոր նրանք, ովքեր այժմ չեն տեսնում կամ չեն գնահատում մտնելու այս օրհնված արտոնությունը, ժամանակի ընթացքում կհասցվեն լիակատար գիտելիքի և ըմբռնման: Միակ ճանապարհը, որով անհատապես և բոլորը միասին դատապարտված մարդկանց ցեղից կարող են գալ Աստծո մոտ, ոչ թե գործերի և անտեղյակության միջոցով է, այլ Քրիստոսի թանկագին արյան նկատմամբ հավատքի միջոցով, որը վերացնում է աշխարհի մեղքը (Ա Պետրոս 1:19, Հովհաննես 1:29). Սա է Ավետարանը՝ մեծ ուրախության բարի լուրը, «որը բոլոր ժողովրդին պիտի լինի» (Ղուկաս 2:10):

Դիտարկենք այս հարցերը այնպես, ինչպես Աստված է նկարագրում դրանք, և Նրա բնավորության

պաշտպանությունը թողնենք միայն Նրան: Հարց է ծագում. «Ի՞նչ է պատահել այս 142 միլիարդ մարդկանց հետ:

Ինչ էլ որ նրանց հետ պատահած լինի, մենք կարող ենք վստահ լինել, որ նրանք այժմ չեն տառապում: Աստվածաշունչը ոչ միայն ուսուցանում է, որ Եկեղեցու ամբողջական և լիակատար վարձատրություն չի տրվի մինչև Քրիստոսի գալուստը, երբ որ նա կվարձատրի ամեն մարդու (Մատթ. 16:27), այլև անարդարներնել կստանան իրենց պատիժը այդ ժամանակ: Ինչ էլ որ լինի նրանց ներկայիս վիճակը, դա չի կարող լինել նրանց ամբողջական վարձատրությունը, որովհետև Պետրոսն ասում է. «Տերը գիտի, թե ինչպես անիրավներին պահել մինչև դատաստանի օրը, որ պատժի նրանց» (Բ Պետրոս 2:9), և նա այդպես էլ կանի:

Նրանց համար, ովքեր ունեն անգամ մի փոքր սեր ու ողորմություն, իսկապես տխուր միտք կլիներ, որ մեր բազմաթիվ մտերիմներ կործանվել են, քանի որ չեն ունեցել հնարավորություն ձեռք բերելու փրկության համար անհրաժեշտ գիտելիքները: Սակայն այդ դեպքում կան Աստվածաշնչյան բազմաթիվ հատվածներ, որոնք չեն համընկնում այս տեսակետի հետ:Հաշվի առեք այս. եթե մենք մերժենք բոլոր հույսերը ապագա դարում վերականգնման միջոցով ստացվելիքի նկատմամբ և անցյալն ու ներկան դիտարկենք որպես միակ հնարավորություններ, ապա ինչպես պետք է հասկանանք այս արտահայտությունները՝ «Աստված սեր է», և «Աստված այնքան սիրեց աշխարհը, որ Իր միածին Որդուն տվեց, որ ով նրան հավատա, չկորչի, այլ հավիտենական կյանք ունենա»՞ (1 Հովհաննես 4:8, Հովհաննես 3:16): Չե՞ք կարծում, որ եթե Աստված այդքան սիրեց աշխարհը, Նա կարող էր նախատեսել ոչ միայն հավատացյալների փրկությունը, այլև այն, որ բոլորը լսեին՝ որպեսզի հավատային:

Մենք կարդում ենք. «Այն է ճշմարիտ լույսը, որ լուսավորում է ամեն մարդու, որ աշխարհ է գալիս» (Հովհաննես 1:9), մեր դիտարկումները ցույց են տալիս, որ դեռ ոչ բոլոր մարդիկ են լուսավորված. մենք տեսնում ենք, որ մեր Տերը երկրի միլիարդավոր մարդկանցից միայն մի փոքր մասին է լուսավորել: Նույնիսկ մեր համեմատաբար լուսավորված դարում միլիոնավոր հեթանոսներ որևէ նշան չեն ցուցաբերում այդպիսի լուսավորության, ինչպես որ Սոդոմի բնակիչներն ու այլոք անցյալում:

Մենք կարդում ենք, որ Հիսուս Քրիստոսը Աստծո շնորհքով մահ ճաշակեց «ամեն մարդու համար» (Եբր. 2:9): Բայց եթե նա մահը ճաշակեց հարյուր քառասուն երեք միլիարդ մարդու համար, և ինչ-որ պատճառով այդ զոհաբերությունը արդյունավետ դարձավ միայն մեկ միլիարդի համար, չէ՞ որ փրկությունը համեմատաբար ձախողված կլիներ: Եվ այդ դեպքում, Առաքյալի հայտարարությունը չափազանց ընդարձակ չէ՞: Երբ կրկին կարդում ենք. «Ահա մեծ ուրախություն եմ ավետում ձեզ, որ ամբողջ ժողովրդին պիտի լինի» (Ղուկաս 2:10), և, երբ շուրջը նայենք, կտեսնենք, որ այս խոսքերը բարի լուր են դարձել միայն «փոքր հոտի» համար, և ոչ թե բոլոր ժողովրդին, ինչը ստիպում է մեզ մտածել՝ արդյոք հրեշտակները չե՞ն չափազանցեցրել իրենց ուղերձի բարությունն ու լայնությունը և չե՞ն գերագնահատել այն գործի կարևորությունը, որը պետք է իրականացներ նրանց հայտարարած Մեսիան:

Կա մեկ այլ հատված. «Քանզի մեկ Աստված կա և մեկ միջնորդ՝ Աստծո և մարդկանց միջև՝ Քրիստոս Հիսուս մարդը, որ իր անձը որպես փրկագին տվեց բոլորի համար՝ ժամանակին վկայվելու» (Ա Տիմ. 2:5,6): Փրկանք բոլորի համար՞ Ուրեմն ինչո՞ւ բոլորը չպետք է օգտվեն Քրիստոսի մահից: Ինչո՞ւ բոլորը չպետք է գան ճշմարտության գիտության, որպեսզի հավատան:

Առանց բանալու, որքան մութ և անհամապատասխան են թվում այս հայտարարությունները, սակայն երբ գտնում ենք Աստծո ծրագրի բանալին, այս բոլոր հատվածները մեկ ձայնով հայտարարում են. «Աստված սեր է»: Այս բանալին գտնվում է վերջին մեջբերված տեքստում «Որ իր անձը որպես փրկագին տվեց բոլորի համար՝ ժամանակին վկայվելու»: Աստված ամեն ինչի համար ունի իր ժամանակը: Նա կարող էր վկայել դա նրանց անցյալ կյանքի ընթացքում, սակայն քանի որ չի արել, դա ապացուցում է, որ նրանց «հարմար ժամանակը» պետք է լինի ապագայում: Բայց նրանց համար, ովքեր լինելու են Եկեղեցին՝ Քրիստոսի հարսնացուն, ովքեր կկիսեն Նրա թագավորական պատիվները, Ներկան է «հարմար ժամանակը» լսելու համար, և ով այժմ ունի ականջ լսելու, թող լսի և ուշադրություն դարձնի, և նա կօրհնվի դրա համաձայն: Չնայած Հիսուս վճարեց մեր փրկանքը դեռևս մեր ծնվելուց առաջ, շատ տարիներ անցան, մինչև մեզ համար եկավ «նշանակված ժամանակը» դրա մասին լսելու, և միայն դրա գնահատումը բերեց պատասխանատվություն, և դա միայն մեր կարողության և գնահատման չափով: Նույն սկզբունքն է գործում բոլորի համար. Աստծո հարմար ժամանակին դա վկայվելու է բոլորին, և բոլորը կունենան հնարավորություն հավատալու և դրա շնորհիվ օրհնվելու:

Ընդհանուր կարծիքն այն է, որ մահը ավարտում է բոլոր փորձաշրջանները, սակայն ոչ մի աստվածաշնչյան համար դա չի սովորեցնում, և վերոհիշյալ բոլոր ու բազմաթիվ այլ համարներ անիմաստ կլինեին, կամ ավելի վատ՝ եթե մահը վերջ տար աշխարհի անտեղյակ զանգվածների բոլոր հույսերին: Այս լայնորեն ընդունված տեսակետը հիմնավորելու համար մեջբերվում է հետևյալ համարը՝ «Երբ ծառը ընկնում է դեպի հարավ կամ

հյուսիս, մնում է այնտեղ, որտեղ ընկնում է» (Ժողովող 11:3): Եթե սա որևէ առնչություն ունի մարդու ապագայի հետ, ապա դա ցույց է տալիս, որ անկախ նրանից, թե ինչ վիճակում նա կհայտնվի գերեզմանում, այդ վիճակը չի փոխվի մինչև նրա հարությունը: Այսպիսին է այս թեմայով բոլոր համարների միատեսակ ուղերձը, ինչը ցույց կտրվի հաջորդ գլուխներում: Քանի որ Աստված մարդկանց անտեղյակության պատճառով փրկելու մտադրություն չունի, այլ «ուզում է, որ բոլոր մարդիկ գան ճշմարտության ճանաչմանը» (Ա Տիմ. 2:4), և քանի որ մարդկության զանգվածները անտեղյակության մեջ են մահացել և քանի որ «գերեզմանում ոչ մի գործ, ոչ մի ծրագիր, ոչ մի գիտելիք, ոչ մի իմաստություն չկա» (Ժողովող 9:10), այդ պատճառով Աստված պատրաստել է մեռելների վերակենդանացում՝ որպեսզի նրանք ստանան գիտություն, հավատք ու փրկություն: Այսպիսով, Նրա ծրագիրն այն է, որ «ինչպես որ Ադամով բոլորը մեռնում են, այնպես էլ Քրիստոսով բոլորը պիտի կենդանանան, սակայն յուրաքանչյուրը իր կարգով» — առաջին հերթին Ավետարանական Եկեղեցին, հարսը՝ Քրիստոսի մարմինը. ապա մյուս բոլորը Հազարամյա դարաշրջանում, ովքեր կդառնան Նրանը այն հազար տարվա ներկայության ընթացքում (սխալ թարգմանված՝ «գալստի»), Տիրոջը հարմար ժամանակին՝ որտեղ բոլորը հնարավորություն կունենան՝ փոքրից մինչև մեծ իրեն ճանաչելու (Ա կորնթ. 15:22):

Ինչպես մահը եկավ առաջին Ադամի միջոցով, այնպես էլ կյանքը գալիս է Քրիստոսի՝ երկրորդ Ադամի միջոցով: Այն ամենը ինչ մարդկությունը կորցրեց առաջին Ադամով, պետք է վերադարձվի նրանց, ովքեր հավատում են երկրորդ Ադամին: Երբ նրանք մահվան քնից արթնանան՝ անցյալի մեջ ունեցած փորձառությամբ ու առավելությամբ, որը Ադամը չուներ, եթե նրանք երախտապարտորեն ընդունեն փրկությունը

որպես Աստծո նվեր, կկարողանան հավիտյան ապրել, սկզբնական հնազանդության պայմանով: Խաղաղության իշխանի արդար իշխանության տակ պահանջվելու է կատարյալ հնազանդություն, և դրա համար տրվելու է կատարյալ կարողություն: Ահա այս է աշխարհին առաջարկվող փրկությունը:

Հիմա եկեք դիտարկենք մեկ այլ հատված, որը անտեսվում է բոլորի կողմից, բացի համընդհանուր փրկության կողմնակիցներից: Չնայած մենք համընդհանուր փրկության կողմնակիցներ չենք, մենք պաշտպանում ենք Աստծո Խոսքի յուրաքանչյուր վկայությունը ընդունելու, դրան հավատալու և դրանով ուրախանալու իրավունքը: Կարդում ենք. «Մեր հույսը դրել ենք կենդանի Աստծո վրա, որ բոլոր մարդկանց փրկիչն է՝ հատկապես ովքեր հավատում են» (Ա Տիմ. 4:10): Աստված կփրկի բոլոր մարդկանց, սակայն («ամբողջապես») ոչ ոքի չի փրկի, բացի նրանցից, ովքեր իրեն են գալիս Քրիստոսի միջոցով (Եբր. 7:25): Աստծո կողմից բոլոր մարդկանց ընծայվելիք բացարձակ փրկությունը չի խախտի նրանց ազատ կամքը կամ ընտրության ազատությունը՝ նրանց կամքի դեմ կյանք պարգևելու համար: «կյանքն ու մահը ձեր առջև դրեցի… կյանքը ընտրիր, որ ապրես» (2 Օրենք 30:19):

Սիմեոնը այս երկու փրկությունները համեմատեց, ասելով. «Որովհետև իմ աչքերը տեսան քո փրկությունը … Լույս՝ հեթանոսներին լուսավորելու, և փառք՝ քո (ճշմարտապես) Իսրաել ժողովրդի համար»: Սա համահունչ է Առաքյալի հայտարարությանը, որ Հիսուս Քրիստոսը, Միջնորդը, իր անձը որպես փրկանք տվեց բոլորի համար, որ իր ժամանակին վկայություն պիտի տրվի բոլորին: Այս լուրը կհասցվի բոլոր մարդկանց՝ անկախ նրանց հավատքից կամ կամքից. Փրկչի այս ավետիսը ամբողջ ժողովրդինն է լինելու (Ղուկաս 2:10, 11), սակայն մեղքից և մահից հատուկ փրկությունը

կիասնի միայն նրա ժողովրդին (Մատթեոս 1:21) — նրանց, ովքեր հավատում են նրան — որովհետև կարդում ենք, որ Աստծո բարկությունը (մահվան դատապարտությունը) մնում է անհավատների վրա (Հովհաննես 3:36):

Այսպիսով, մենք տեսնում ենք, որ ընդհանուր փրկությունը, որը կիասնի յուրաքանչյուր անհատին, բաղկացած է ճշմարիտ լույսից և կյանք ընտրելու հնարավորությունից, և քանի որ մարդկության մեծամասնությունը գտնվում է գերեզմանում, անհրաժեշտ կլինի նրանց դուրս բերել գերեզմանից, փրկչի ուրախության ավետիսը նրանց վկայելու համար, ինչպես նաև, որ հատուկ փրկությունը, որով հավատացյալները այժմ վայելում են հույսով (Հռոմեացիներ 8:24), և որի իրականությունը հազարամյա դարաշրջանում նույնպես կբացահայտվի նրանց, ովքեր «հավատալու են այն օրը», կնշանակի ազատում մեղքի ստրկությունից և մահվան ապականությունից՝ դեպի Աստծո որդիների փառավոր ազատություն: Բայց այս բոլոր օրհնություններին հասնելը կախված կլինի Քրիստոսի Թագավորության օրենքների սրտագին հնազանդությունից, իսկ կատարելության տիրանալու արագությունը պիտի ցույց տա թագավորի ու նրա օրենքի հանդեպ ունեցած սիրո աստիճանը: Եթե որևէ մեկը, ճշմարտության լուսավորված, Աստծո սիրո ճանաչման բերված և (իրականում կամ պայմանական) մարդկային կատարելության վերականգնված, դառնա «վախկոտ» ու «հետ կանգնի» (Եբր. 10:38,39), ապա նրանք անհավատների հետ (Հայտն. 21:8) կոչնչացվեն ժողովրդի միջից: (Գործք 3:23) Սա երկրորդ մահն է:

Այսպիսով մենք տեսնում ենք, որ մինչ այժմ դժվար թվացող բոլոր այս տեքստերը բացատրվում են «իր ժամանակին վկայություն պիտի տրվի»

արտահայտությամբ (Ա Տիմ 2:6): Իր ժամանակին այդ ճշմարիտ լույսը լուսավորելու է ամեն մարդու, ով աշխարհ է գալիս (Հովհ. 1:9): Իր ժամանակին դա լինելու է «մեծ ուրախության ավետիս բոլոր մարդկանց համար» (Ղուկաս 2:10): Եվ ոչ մի այլ կերպ այս գրությունները չեն կարող օգտագործվել առանց դրանք խեղաթյուրելու: Պողոսը այս փաստարկը ընդգծում է Հռոմեացիներ 5:18–19-ում: Նա հիմնավորում է, որ ինչպես Ադամի մեղքի պատճառով բոլոր մարդիկ դատապարտվեցին մահվան, այնպես էլ Քրիստոսի արդարությունն ու մինչև մահ հնազանդությունը արդարացման հիմք կնծայեն, և ինչպես առաջին Ադամով բոլորը կորցրին կյանքը, այնպես էլ բոլորը, իրենց արժանիքից անկախ, կարող են ստանալ կյանքը՝ ընդունելով երկրորդ Ադամին:

Պետրոսն ասում է, որ այս վերականգնման մասին խոսել են բոլոր սուրբ մարգարեները (Գործք 3:19-21): նրանք բոլորը դրա մասին են քարոզում: Եզեկիելը չոր ոսկորների հովտի մասին ասում է. «Այս ոսկորներն ամբողջ Իսրայելի տունն են» (Եզ. 37:11): Եվ Աստված Իսրայելին ասում է. «Ահա ես բացելու եմ ձեր գերեզմանները, ձեզ հանելու եմ դրանց միջից ու բերելու եմ Իսրայելի երկիր: Եվ դուք կիմանաք, որ ես Եհովան եմ, երբ ... իմ հոգին կդնեմ ձեր մեջ, և ձեզ կբնակեցնեմ ձեր երկրում: Այնժամ դուք կիմանաք, որ ես՝ Եհովաս եմ ասել ու արել դա»,– ասում է Եհովան» (Եզեկիել 37:11-14):

Սա հաստատվում է նաև Պողոսի խոսքերով, (Հռոմ. 11:25,26) — «Իսրայելի մի մասի զգայունակությունը բթացավ, մինչև որ մյուս ազգերի մարդկանց [ընտրյալ դասակարգը, Քրիստոսի հարսի] ամբողջական թիվը գա և այդպես ամբողջ Իսրայելը կփրկվի», կամ կվերադարձվի իրենց մերժված վիճակից, որովհետև «Աստված չմերժեց իր ժողովրդին, որին նախապես ճանաչեց» (Հռոմ. 11:2): Նրանք թեև մերժվել էին Նրա շնորհքից, երբ ընտրվում էր Քրիստոսի հարսնացուն,

սակայն կվերականգնվեն, երբ այդ գործը ավարտվի (Հռոմ. 11:28–33): Մարգարեությունները լի են վկայություններով, թե ինչպես Աստված նրանց կրկին կհաստատի իրենց երկրի մեջ, և նրանք այլևս արմատախիլ չեն լինի: «Այսպես է ասում Իսրայելի Աստված Եհովան. ... Իմ աչքերը նրանց վրա կուղղեմ ի բարին և նրանց հետ կբերեմ այս երկիրը: Կկառուցեմ նրանց և չեմ քանդի: Կտնկեմ նրանց և արմատախիլ չեմ անի: Եվ նրանց այնպիսի սիրտ կտամ, որ ճանաչեն ինձ, թե ես եմ Եհովան, և նրանք իմ ժողովուրդը կլինեն, իսկ ես՝ նրանց Աստվածը, որովհետև իրենց ամբողջ սրտով ինձ են դառնալու (Երեմիա 24:5-7, 31:28, Երեմիա 32:40-42, 33:6-16): Սրանք չեն կարող վերաբերվել միայն Բաբելոնի, Սիրիայի և այլ նախկին գերությունից վերականգնումներին, քանի որ նրանք այնուհետև արմատախիլ են եղել:

Բացի դրանից, Տերը ասում է. «Այն օրերին այլևս չեն ասի. «Հայրերն ազոխ կերան, որդիների ատամները թմրեցին»: Այլ ամեն մարդ իր անօրենության համար պիտի մեռնի» (Երեմիա 31:29,30): Այժմ այդպես չէ: Այժմ ոչ ոք չի մեռնում իր սեփական մեղքի համար, այլ Ադամի մեղքի համար՝ «Ադամով բոլորը մեռնում են»: Նա կերավ մեղքի թթու ազոխը, և մեր հայրերը շարունակեցին ուտել այն, ինչը իրենց զավակների վրա բերեց ավելի ծանր հիվանդություններ և տառապանքներ, այդպիսով արագացնելով մահվան պատիժը: Օրը, երբ «յուրաքանչյուրը [ով մեռնում է] կմեռնի [միայն] իր սեփական անօրինության համար», հազարամյակն է՝ վերականգնման օրը:

Չնայած ապագա օրհնությունների վերաբերյալ բազմաթիվ մարգարեություններն ու խոստումները կարծես միայն Իսրայելին են վերաբերում, պետք է հիշել, որ նրանք տիպիկ ժողովուրդ էին, և, հետևաբար, նրանց տրված խոստումները, թեև երբեմն հատուկ

կիրառություն ունեին նրանց համար, ընդհանուր առմամբ վերաբերում են նաև ողջ մարդկությանը, որի խորհրդապատկերն էր այդ ազգը: Իսրայելը որպես ազգ նախապատկերն էր ամբողջ աշխարհի, սակայն նրա քահանայությունը նախապատկերն էր ընտրյալ «փոքր հոտի», Քրիստոսի գլխի և մարմնի, «Թագավորական քահանայության». իսկ Իսրայելի համար մատուցված զոհերը, մաքրագործումները և քավությունները խորհրդապատկերներն էին «ավելի լավ զոհերի», ավելի լիակատար մաքրագործումների և իրական քավության, «ամբողջ աշխարհի մեղքերի համար», որոնց մի մասն էին իրենք:

Եվ ոչ միայն այսպես, այլ Աստված հիշատակում է նաև այլ ազգերի անուններ և խոստանում նրանց վերականգնումը: Որպես հստակ օրինակ նշենք Սոդոմացիներին: Իհարկե, եթե մենք գտնենք Սոդոմի բնակիչների վերականգնման հստակ հիշատակություն, մենք կկարողանանք գոհանալ բոլոր մարդկանց վերականգնման այս փառավոր ուսմունքի ճշմարտությամբ, որը բոլոր սուրբ մարգարեները իրենց բերանով հռչակեցին: Եվ ինչո՞ւ Սոդոմացիները չպետք է ունենան հնարավորություն հասնելու կատարելության և հավիտենական կյանքի, ինչպես Իսրայելը կամ մեզնից յուրաքանչյուրը: Այո, նրանք արդար չէին, սակայն Իսրայելն էլ արդար չէր, ինչպես և մենք, ովքեր այժմ լսում ենք ավետարանը: «Արդար մարդ չկա, նույնիսկ մեկը չկա», բացի Քրիստոսի վերագրված արդարությունից, ով մեռավ բոլորի համար: Մեր Տիրոջ խոսքերը ցույց են տալիս, որ թեև Աստված երկնքից կրակ ուղարկեց և ոչնչացրեց նրանց բոլորին իրենց մեղքերի պատճառով, սակայն Նրա աչքերում Սոդոմի բնակիչները այնքան մեղավոր չէին, որքան հրեաները, ովքեր ավելի մեծ գիտելիք ունեին (Ծննդոց 19:24, Ղուկաս 17:29). Կափառնաումի հրեաներին Նա ասաց. «Եթե այն

հրաշքները, որ քո մեջ են կատարվել, Սոդոմում կատարված լինեին, մինչև այսօր պահպանված կլիներ» (Մատթ. 11:23):

Այսպիսով մեր Տերը սովորեցնում է, որ Սոդոմացիները չեն ունեցել լիարժեք հնարավորություն, և նա նրանց երաշխավորում է այդպիսի հնարավորություն՝ ավելացնելով (24-րդ համար). «Բայց ձեզ ասում եմ, որ սոդոմացիների երկրի համար դատաստանի օրն ավելի հեշտ կլինի, քան քեզ համար»: Դատաստանի օրվա բնույթն ու նրա գործը կներկայացվի հաջորդ էջերում: Այստեղ մենք միայն ուշադրություն ենք հրավիրում այն փաստին, որ Կապառնաումի համար դա դյուրին ժամանակ կլինի, իսկ Սոդոմի համար՝ ավելի դյուրին, որովհետև, թեև ոչ մեկը, ոչ մյուսը դեռևս ամբողջական գիտելիք և «Սերնդի» միջոցով գալիք բոլոր օրհնությունները չէին ստացել, Կապառնաումը, այնուամենայնիվ, մեղանչեց ավելի մեծ լույսի դեմ:

Եվ եթե Կապառնաումը և ամբողջ Իսրայելը պետք է հիշվեն և օրհնություններ ստանան «Նոր Ուխտի» ներքո, որը կնքված է Հիսուսի արյունով, ինչո՞ւ Սոդոմացիները չպետք է օրհնություններ ստանան «երկրի բոլոր ազգերի» հետ միասին: Եվ նրանք, անշուշտ, դրանք կստանան: Պետք է հիշել, որ թեև Աստված Հիսուսից շատ դարեր առաջ «երկնքից կրակ ու ծծումբ իջեցրեց և նրանց բոլորին ոչնչացրեց», ապա Երբ խոսվում է նրանց վերականգնման մասին, դա ենթադրում է նրանց արթնացումն ու գերեզմանից դուրս գալը:

Այժմ եկեք քննենք Եզեկիելի մարգարեությունը (Եզ. 16:48-63): Կարդացեք այն ուշադիր: Աստված այստեղ խոսում է Իսրայելի մասին և համեմատում նրան իր հարևան Սամարիայի և Սոդոմացիների հետ, որոնց մասին ասում է. «Վերացրի նրանց, ինչը և պատշաճ համարեցի»: Ոչ Հիսուսը, ոչ էլ մարգարենը որևէ

բացատրություն չեն տալիս Աստծո գործողությունների այդ թվացյալ անհավասարության վերաբերյալ՝ Սոդոմը ոչնչացնելու և Սոդոմից ավելի մեղավորներին անպատիժ թողնելու առումով: Ամեն ինչ պարզ կդառնա, երբ «իր ժամանակին» նրա մեծ ծրագրերը հայտնի դառնան: Մարգարեն պարզապես նշում է, որ Աստված «պատշաճ համարեց» այդպես վարվել, իսկ Հիսուսը ավելացնում է, որ դատաստանի օրը նրանց համար ավելի հեշտ կլինի, քան ավելի մեղավորների համար: Բայց եթե ենթադրենք, որ մահը վերջ է դնում բոլոր հնարավորություններին, և որ դրանից հետո ոչ ոք հնարավորություն չի ունենա ճանաչելու ճշմարտությունը և հնազանդվելու դրան, ապա կարող ենք արդարացիորեն հարցնել. ինչո՞ւ Աստված «պատշաճ» համարեց վերացնել այս մարդկանց՝ առանց նրանց հնարավորություն տալու փրկվելու այն մի անունի ճանաչման միջոցով, որով նրանք կարող են փրկվել: Պատասխանը հետևյալն է. որովհետև դեռ նրանց համար «հարմար ժամանակը» չէր եկել: «Իր ժամանակին» նրանք կարթնանան մեռածներից և կհասցվեն ճշմարտության գիտության, և այդպիսով օրհնված կլինեն երկրի բոլոր ընտանիքների հետ միասին՝ խոստացված «Սերնդի» միջոցով: Այնուհետև նրանք կկանգնեն հավիտենական կյանք ստանալու փորձության առջև:

Միայն այս (և ոչ այլ) տեսանկյունն է մեզ թույլ տալիս հասկանալու սիրո Աստծո վարքը Ամաղեկի և այն մյուս ազգերի հանդեպ, որոնք Իսրայելին թույլատրվեց—և, ավելի ճիշտ, հրամայվեց ոչնչացնել: «Հիմա գնա՛ և ջարդի՛ր Ամաղեկին ու ոչնչացրո՛ւ նրա ամբողջ ունեցվածքը. չխնայես նրանց, կոտորի՛ր բոլորին՝ տղամարդ և կին, երեխա և կաթնակեր, արջառ և ոչխար, ուղտ և էշ» (Ա Թագ. 15:3): Այդպիսի, առաջին հայացքից անխնա թվացող կյանքերի ոչնչացումը անհամատեղելի է Աստծուն վերագրվող սիրառատ բնույթի հետ, ինչպես

նաև Հիսուսի «սիրեք ձեր թշնամիներին» ուսուցման հետ, մինչև որ մենք չսկսենք ընկալել Աստծո ծրագրի համակարգված կարգը և «Նրա ժամանակը» դրա իրականացման համար դրա յուրաքանչյուր առանձնահատկության, ինչպես նաև այն փաստի, որ մարդկային ցեղի յուրաքանչյուր անդամի համար դրա մեջ նախատեսված է իր տեղը:

Այժմ կարող ենք տեսնել, որ Ամաղեկացիները, Սոդոմացիները և այլ ազգեր ծառայեցին որպես Աստծո արդար բարկության և չարագործներին ամբողջությամբ ու լիովին ոչնչացնելու Նրա վճռականության օրինակներ – օրինակներ՝ որոնք ոչ միայն ուրիշների օգտի համար պետք է ծառայեն, այլև իրենց համար էլ՝ երբ գա նրանց դատաստանի կամ փորձության օրը: Այս մարդիկ նույնքան հեշտությամբ կարող էին մեռնել հիվանդությունից կամ ժանտախտից: Նրանք պարզապես չարի գիտության մեջ կզարգանային. իրենց մահը իրենց ապագա օգտի համար էր: Երբ նրանք որոշված ժամանակին վերակենդանանան ու ենթարկվեն դատաստանի, իվիճակի կլինեն սովորել արդարություն և բարին տարբերելով ու ընտրելով ունենալ կյանք:

Բայց եկեք ավելի հեռուն գնանք մարգարեության ուսումնասիրության մեջ: Իսրայելին Սոդոմի և Սամարիայի հետ համեմատելով և ամբողջությամբ մեղավոր հայտարարելուց հետո (Եզեկիել 16:48–54), Տերը ասում է՝ «Երբ ես նրանց գերիներին ետ բերեմ, Սոդոմի ու նրա դուստրերի գերիներին, այնժամ ետ եմ բերելու նաև քո գերության գերիներին նրանց հետ միասին»: Այստեղ նշված գերությունը ոչ այլ ինչ է, քան մահվան գերությունը, որովհետև այստեղ թվարկված բոլորը այդ պահին արդեն մեռած էին: Բոլորը մահվան գերության մեջ են, և Քրիստոս եկավ բացելու գերեզմանի դռները և ազատելու գերիներին (Ես. 61:1, Զաք. 9:11):

55-րդ խոսքում սա կոչվում է «նախկին վիճակին վերադառնալ»՝ վերականգնում:

Ոմանք, որոնք ավելի մեծ լույսի և գիտության ներքո պատրաստ են ընդունելու Աստծո ողորմությունը Քրիստոսի միջոցով՝ իրենց սեփական մեղքերի և տկարությունների ներման համար՝ չեն կարող պատկերացնել, որ նույն շնորհքը Նոր Ուխտի ներքո կարող է վերաբերել նաև ուրիշներին, թեև նրանք կարծես ընդունում են Առաքյալի այն խոսքերը, որ Հիսուս Քրիստոսը, Աստծո շնորհքով, մահ ճաշակեց յուրաքանչյուր մարդու համար: Նրանցից ոմանք ենթադրում են, որ այս մարգարեության մեջ Տերը հեգնական տոնով է խոսում հրեաների հետ՝ ենթադրելով, որ նա նույնքան պատրաստակամ կլիներ վերադարձնել Սոդոմացիներին, որքան նրանց, սակայն իրականում ոչ մեկին վերականգնելու մտադրություն չուներ: Բայց եկեք տեսնենք, թե ինչպես են հաջորդող հատվածները համապատասխանում այս գաղափարին: Տերը ասում է. «Իսկ ես պիտի հիշեմ քո մանկության օրերին քեզ հետ իմ կապած ուխտը և քեզ հետ հավիտենական ուխտ պիտի հաստատեմ Ու պիտի հիշես քո ճանապարհները և ամաչես, երբ մեծ քույրերիդ և փոքրերին ընդունես … Եվ ես իմ ուխտը պիտի հաստատեմ քեզ հետ, և դու պիտի իմանաս, որ ես եմ Տերը: Որպեսզի հիշես և ամաչես, բերանդ դարձյալ բացել չկարողանաս քո անարգանքի պատճառով, երբ ես քեզ քավություն պարգևեմ քո բոլոր կատարածների համար», - ասում է Տեր Աստված» (Եզեկիել 16:60-62): Երբ խոստումը այսպես ստորագրվում է Մեծ Եհովայի կողմից, բոլոր նրանք, ովքեր իրենց կնիքն են դրել, որ Աստված ճշմարիտ է, կարող են վստահությամբ ուրախանալ դրա ճշմարտացիությամբ, հատկապես նրանք, ովքեր գիտակցում են, որ այս Նոր Ուխտի օրհնությունները հաստատվել են Աստծո կողմից՝

Քրիստոսով, որի թանկարժեք արյունը կնքում է այս ուխտը:

Դրան Պողոսն իր վկայությունն է ավելացնում, ասելով. «Այսպիսով ամբողջ Իսրայելը [կենդանի թե մեռած] կփրկվի [կազատվի կուրությունից], ինչպես գրված է. «Ազատարարը կգա Սիոնից և ամբարիշտ գործերը կհեռացնի Հակոբից. Եվ սա կլինի իմ ուխտը նրանց հետ, երբ ես կհեռացնեմ նրանց մեղքերը»... Նրանք սիրելի են հայրերի պատճառով, որովհետև Աստծու շնորհն ու կոչումը անփոփոխելի են» (Հռոմեացիներ 11:26-29):

Մենք չպետք է զարմանանք, որ հրեաները, Սոդոմի բնակիչները, սամարացիներն ու ողջ մարդկությունը ամաչելու և ապշելու են, երբ «իր ժամանակին» Աստված ցույց տա Իր շնորհի ամբողջ հարստությունը: Եվ շատերը նրանցից, ովքեր այժմ Աստծո զավակներ են, կամաչեն և կզարմանան, երբ տեսնեն, թե ինչպես Աստված այնքան սիրեց ԱՇԽԱՐՀԸ և որքան են նրա խորհուրդները և ծրագրերը գերազանցում իրենց սեփականը (Եսայիա 55:8-13):

Շատ քրիստոնյաներ հավատում են, որ Աստծո օրհնությունները բացառապես պատկանում են ընտրված Եկեղեցուն: Սակայն այժմ մենք սկսում ենք տեսնել, որ Աստծո ծրագիրը ավելի լայն է, քան մենք ենթադրում էինք, և թեև Նա Եկեղեցուն տվել է «չափազանց մեծ և թանկագին խոստումներ», Նա նաև առատորեն նախատեսել է միջոցներ աշխարհի համար, որին Նա այնքան սիրեց, որ փրկեց այն: Հրեաները նույնպես նման սխալ գործեցին՝ հավատալով, որ Աստծո բոլոր խոստումները վերաբերում են միայն իրենց և նախատեսված են բացառապես իրենց համար: Բայց երբ «որոշված ժամանակը» եկավ և հեթանոսները ստացան ողորմություն, Իսրայելի «մնացորդը» (որ

բավականաչափ լայնամիտ էր Աստծո շնորհքի ավելի ընդարձակ դրսևորմամբ ուրախանալու համար) ստացավ իր բաժինը այս ողորմությունից, որը ընդլայնվել էր, մինչդեռ մնացած բոլորը կարծրացել էին նախապաշարմունքներով և մարդկային ավանդույթներով: Եկեղեցում նրանք, ովքեր այսօր տեսնում են Հազարամյա դարաշրջանի արշալույսի շողերը՝ իր շնորհառատ և օգտակար առավելություններով ողջ աշխարհի համար, թող զգուշ լինեն, որ անզգուշաբար չդիմադրեն աճող լույսին և ժամանակավորապես չկուրանան նրա փառքին ու օրհնություններին:

Կալվինականության և Արմինիականության երկու անհամաձայն տեսությունները որքան են խեղաթյուրում ճշմարտությունները, և որքան հեռու են Աստծո հրաշալի ծրագրից, որ ներկայումս «փոքր հոտ»-ը ընտրելով ապագայում շատերը կօրհնվեն: Վերոհիշյալ երկու հարանվանություններից առաջինը՝ մերժում է Աստվածաշնչյան ձրի շնորհի ուսմունքը և խղճալի կերպով խեղաթյուրում է Ընտրության փառավոր ուսմունքը: իսկ վերջինը մերժում է Ընտրության ուսմունքը և չի կարողանում ըմբռնել Աստծո Ձրի Շնորհի օրհնյալ լիությունը:

Կալվինիզմը պնդում է. «Աստված ամենագետ է, Նա սկզբից ի վեր գիտի վերջը. Քանի որ Նրա բոլոր նպատակները կիրականանան, Նա երբեք չէր կարող մտադրել փրկել որևէ մեկին, բացի մի քանիսից՝ Եկեղեցուց. Նա նրանց ընտրել է և նախասահմանել հավիտենական փրկության համար.» Իսկ մնացած բոլորը նախասահմանված և ընտրված էին հավիտենական տանջանքներ կրելու համար, քանի որ «Նրա բոլոր գործերը հավիտենությունից հայտնի են Աստծուն»:

Այս տեսակետը ունի իր դրական կողմերը: Այն ընդունում է Աստծո ամենագիտությունը: Աստծո մեր տեսլականը կարող էր լինել հենց այսպիսին եթե միայն նրա մեծության երկու էական հատկանիշները՝ սերը և արդարությունը, բացակայած չլինեին, որոնցից ոչ մեկը չի արտահայտվում աշխարհ բերելով 142 միլիարդ արարածներ, որոնք դեռ չծնված դատապարտված են հավիտենական տանջանքների և խաբված են Նրա սիրո հանդիսավոր հավաստիացումներով: Եթե Աստված սեր է, իսկ արդարությունը Նրա աթոռի հիմքն է, ապա այսպիսին չի կարող լինել նրա բնավորությունը:

Արմինիականությունը ասում է. Աստված սեր է, Մարդկանց աշխարհ բերելիս Նա նրանց համար չար չէր ցանկանում, այլ միայն բարիք: Սակայն Սատանան հաջողությամբ գայթակղեց առաջին զույգին, և այդպես մեղքը մտավ աշխարհ, իսկ մեղքի միջոցով՝ մահը: Այդ օրվանից ի վեր Աստված ամեն ինչ արել է, որպեսզի մարդուն փրկի նրա թշնամուց, և նույնիսկ տվեց Իր Որդուն: Եվ թեև այսօր, վեց հազար տարի անց, Ավետարանը հասել է մարդկության միայն մի փոքր մասին, մենք, այնուամենայնիվ, հույս ու հավատք ունենք, որ հաջորդ վեց հազար տարիների ընթացքում, Եկեղեցու եռանդի և մեծահոգության շնորհիվ, Աստված կբուժի Սատանայի բերած չարիքը այնքան, որ այդ ժամանակ ապրող բոլոր մարդիկ առնվազն կկարողանան իմանալ Նրա սիրո մասին և կունենան հնարավորություն հավատալու և փրկվելու:

Չնայած այս տեսակետը Աստծուն ներկայացնում է որպես սիրով ու բարի մտադրություններով լի էակ, այնուամենայնիվ ենթադրում է, որ Աստված չունի անհրաժեշտ կարողություն ու կանխագիտություն՝ Իր ողորմած ծրագրերը իրականություն դարձնելու համար, այսինքն՝ Իր իմաստությունն ու զորությունը պակաս են: Այս տեսանկյունից կարող է թվալ, որ երբ Աստված

կազմակերպում և կարգավորում էր Իր նոր ստեղծած զավակների բարօրությունը, Սատանան աննկատորեն սողոսկեց և մեկ հմուտ հարվածով ոչնչացրեց Աստծո բոլոր ծրագրերը, այն աստիճան, որ անգամ իր ամբողջ զորությունը վատնելուց հետո, Աստված ստիպված կլիներ տասներկու հազար տարի սպասել արդարությունը վերականգնելու համար: Բայց ըստ այս տեսակետի՝ անցյալ վեց հազար տարիների ընթացքում ապրած 142 միլիարդ մարդ, և, հավանաբար, նույնքան էլ ապագայում, հավիտենապես կորած են, չնայած Աստծո սիրուն, որովհետև Սատանան խառնաշփոթ է մտցրել Նրա ծրագրերում: Այսպիսով, Աստծո կողմից փառքի համար փրկված յուրաքանչյուր մեկի դիմաց Սատանան կստանա հազարավոր մարդկանց հավիտենական տանջանքների համար:

Այսպիսի տեսակետը անշուշտ բարձրացնում է մարդու պատկերացումները Սատանայի իմաստության և զորության մասին, միաժամանակ նվազեցնելով այդ հատկանիշները Աստծո մեջ, որի մասին Սաղմոսերգուն ասում է հակառակը՝ «Նա խոսեց ու կատարվեց, նա հրամայեց ու հաստատվեց»: Ոչ, սա Աստծո համար անակնկալ չէր, և թշնամին նրան անպատրաստ չգտավ: Սատանան ոչ մի կերպ չխոչընդոտեց Նրա ծրագրերը: Աստված ամբողջությամբ վերահսկում է իրավիճակը և միշտ էլ վերահսկել է, և վերջում պարզ կդառնա, որ ամեն ինչ նպաստել է Նրա նպատակների իրականացմանը:

Թեև ընտրության և ձրի շնորհի ուսմունքները, ինչպես դրանք ուսուցանում են կալվինիզմն ու արմինիանիզմը, երբեք չեն կարող համատեղվել միմյանց, տրամաբանության կամ Աստվածաշնչի հետ, սակայն այս երկու փառավոր Աստվածաշնչյան ուսմունքները կատարյալ ներդաշնակ և գեղեցիկ են, երբ դիտվում են դարերի ծրագրի տեսանկյունից:

Ուստի, տեսնելով, որ մարդու մեղքից ու մահից փրկության համար Աստծո ծրագրի բազմաթիվ մեծ ու փառավոր առանձնահատկությունները վերաբերում են ապագային, և որ մեր Տեր Հիսուսի երկրորդ գալուստը նախատեսված առաջին քայլն է վաղուց ի վեր խոստացված ու երկար սպասված օրհնությունների իրականացման մեջ, մի՞թե մենք ավելի եռանդուն չենք ձգտի Նրա երկրորդ գալուստի ժամանակին, քան պակաս տեղեկացված հրեան էր ձգտում Նրա առաջին գալստին: Տեսնելով, որ չարի, անարդարության և մահվան ժամանակը կավարտվի այն իշխանությամբ, որը նա գործի կդնի, և որ արդարությունն, ճշմարտությունն ու խաղաղությունը կդառնան համընդհանուր, ո՞վ չի ուրախանա տեսնել այդ օրը: Եվ ո՞վ է որ այժմ Քրիստոսի հետ տառապում է՝ ոգեշնչված այն թանկագին խոստումով, որ «եթե նրա հետ տառապում ենք, նրա հետ էլ կթագավորենք» չի բարձրացնի իր գլուխը և չի հրճվի Տիրոջ գալստի ցանկացած նշանի առջև, գիտակցելով, որ մեր փրկությունն ու նրա հետ փառավորվելը մոտենում են: Իրոք, բոլոր նրանք, ովքեր համակրում են նրա օրհնության առաքելությանը և նրա սիրո ոգուն, ողջունելու են նրա գալստի յուրաքանչյուր նշան՝ որպես մերձեցում այն «մեծ ուրախության՝ որ բոլոր ժողովրդին պիտի լինի» (Ղուկաս 2:10):

ԳԼՈՒԽ 7

Չարի Թույլատրումը և Դրա Առնչությունը Աստծո Ծրագրի Հետ

Ինչու՞ Չարիքը Թույլատրվեց - Ճիշտն ու Սխալը Սրպես Սկզբունքներ – Բարոյական Գիտակցությունը – Աստված Թույլադրեց Չարությունը ու Այն Բարի Ավարտի Պիտի Առաջնորդե - Աստված Մեղքի Հեղինակը չէ – Ադամի Փորձությունը Ձավեշտ չէր – Նրա Փորձությունը Խիստ էր – Նա Կամովին Մեղանչեց - Մեղքի Պատիժը Ոչ Անարդար էր, Ոչ Էլ Չափազանց Խիստ – Ադամով Բոլորին Դատապարտելը իր Մեջ Արտահայտում է Իմաստություն, Սեր և Արդարություն - Աստծո Օրենքը Տիեզերական է

Չարիքը այն է, ինչը բերում է դժբախտություն, ցանկացած բան, որը ուղղակի կամ անուղղակի պատճառ է դառնում ցանկացած տեսակի տառապանքի - (Վեբսթերի բառարան): Այս թեման ուրեմն, ոչ միայն անրադառնում է մարդկային հիվանդություններին, վշտերին, ցավերին, տկարություններին ու մահվանը, այլև վերադառնում է դրանց բոլորի հիմնական պատճառին՝ մեղքին, և դրա բուժմանը: Քանի որ մեղքը չարիքի պատճառն է, դրա վերացումը միակ միջոցն է հիվանդությունը ընդմիշտ բուժելու համար:

Գուցե ոչ մի դժվարություն այնքան հաճախ չի առաջանում հետաքրքրասեր մտքում, որքան այս հարցերը՝ ինչո՞ւ Աստված թույլ տվեց չարի ներկայիս տիրապետությունը: Ինչո՞ւ նա թույլ տվեց Սատանային փորձության մեջ գցել մեր առաջին ծնողներին, երբ ստեղծել էր նրանց կատարյալ և ուղղամիտ: Կամ ինչո՞ւ

նա թույլ տվեց արգելված ծառին աճել բարիների մեջ: Չնայած բոլոր փորձերին հարցը շրջանցելու, այն անխուսափելիորեն առաջ է գալիս՝ միթե Աստված չէր կարող կանխել մարդու անկման ամեն հնարավորությունը:

Դժվարությունը անշուշտ ծագում է Աստծո ծրագրի չընմբռնումից: Աստված կարող էր կանխել մեղքի մուտքը, սակայն այն, որ Նա դա չարեց, պետք է մեզ համար բավարար ապացույց լինի, որ մեղքի ներկայիս թույլատրումը ապագայում ավելի մեծ բարիք բերելու նպատակ ունի: Աստծո ծրագրերը իրենց կատարելության մեջ տեսնողը կգնահատի այս ուղղության իմաստությունը: Ոմանք հարցնում են՝ միթե Աստված, որի համար ամեն բան հնարավոր է, չէր կարող ժամանակին միջամտել՝ Սատանայի ծրագրի լիակատար իրականացումը կանխելու համար: Անշուշտ, նա կարող էր, սակայն նման միջամտությունը կխոչընդոտեր Իր սեփական նպատակների իրականացմանը: Նրա նպատակը Իր օրենքի կատարելությունը, մեծությունը և արդար իշխանությունը բացահայտելն էր, ինչպես նաև մարդկանց ու հրեշտակներին ցույց տալ դրա խախտումից բխող բացասական հետևանքները: Բացի այդ, կան բաներ, որոնք իրենց բնույթով անգամ Աստծո համար են անհնարին: ինչպես նշվում է Սուրբ Գրքում. «Անհնար է որ Աստված սուտ խոսի» (Եբր. 6:18). «Նա չի կարող ուրանալ ինքն իրեն» (Բ Տիմ. 2:13): Աստված չի կարող սխալվել, ուստի չէր կարող ընտրել իր արարածներին կյանքի բերելու որևէ այլ բան, քան ամենաիմաստուն ու լավագույն ծրագիրը, նույնիսկ եթե մեր կարճատես հայացքը ժամանակավորապես չի կարողանում նկատել անսահման իմաստության թաքնված աղբյուրները:

Աստվածաշունչը մեզ ասում է, որ Տերը մեր շուրջը ամեն ինչ ստեղծել է Իր սեփական կամքով (Հայտնություն

4:11), անշուշտ հաճույք ստանալով Իր օրհնությունները շնորհելու և Իր փառավոր էության հատկանիշները հայտնելու մեջ: Եվ թեև Իր ողորմած նպատակները իրականացնելիս Նա ժամանակավորապես թույլ է տալիս չարիքին և չարագործներին գործել, սա չի արվում չարիքի համար, և Աստված մեղքի հետ միաբան չէ, քանի որ գրված է, որ նա «Անօրենություն ուզող Աստված չէ» (Սաղմոսներ 5:4): Չնայած որ Աստված ամեն առումով հակադրվում է չարին, Նա թույլ է տալիս (չի խոչընդոտում) այն մի ժամանակով, որովհետև Նրա իմաստությունը տեսնում է մի ճանապարհ, որով Նրա արարածները կարող են ստանալ տևական և արժեքավոր դաս:

Ինքնին ակնհայտ ճշմարտություն է, որ յուրաքանչյուր ճիշտ սկզբունքի դիմաց գոյություն ունի համապատասխան սխալ սկզբունք, օրինակ՝ ճշմարտություն և կեղծիք, սեր և ատելություն, արդարություն և անարդարություն: Մենք այս հակադիր սկզբունքները գործնականում իրենց ունեցած ազդեցության համեմատ իրարից տարբերակում ենք, որպես ճիշտ և սխալ: Այն սկզբունքը, որի արդյունքը, օգտակար է և վերջնական կարգ, ներդաշնակություն և երջանկություն է բերում, մենք անվանում ենք ճիշտ սկզբունք, իսկ հակառակը, որը առաջացնում է անհամաձայնություն, դժբախտություն և ավերածություն, մենք անվանում ենք սխալ սկզբունք: Այս սկզբունքների գործնականում տված արդյունքները մենք անվանում ենք բարիք և չարիք, իսկ այն գիտակից էակը, որը կարող է տարբերել ճիշտ սկզբունքը սխալից և հոժարակամորեն առաջնորդվել դրանցից որևէ մեկով, մենք անվանում ենք առաքինի կամ մեղավոր:

Ճիշտ և սխալ սկզբունքները տարբերելու կարողությունը կոչվում է բարոյական զգացողություն կամ խիղճ: Այս բարոյական զգացումը, որը Աստված տվել

է մարդուն, մենք կարող ենք Աստծո մասին դատողություն անել և ճանաչել, որ նա բարի է: Այս բարոյական զգացմանն է, որ Աստված միշտ դիմում է՝ ապացուցելու Իր արդարությունը կամ իրավունքը. և նույն բարոյական զգացումով Ադամը կարող էր ճանաչել մեղքը կամ անարդարությունը որպես չարիք, նույնիսկ մինչև նա կիմանար դրա բոլոր հետևանքները: Աստծո ստեղծագործության ստորին դասակարգերը օժտված չեն այս բարոյական գիտակցությամբ: Շունը ունի որոշակի բանականություն, բայց ոչ այս աստիճան. թեև կարող է սովորել, որ որոշ գործողություններ իր տիրոջից բերում է գովասանք և պարգև, իսկ մյուսները՝ նրա դժգոհությունը: Նա կարող է գողանալ կամ կյանք ու գույք պաշտպանի, սակայն երբեք առաքինի կամ մեղավոր չի կոչվի, քանի որ իր գործողությունների բարոյական կողմը չի գիտակցում:

Մարդկությանը ստեղծելիս Աստված կարող էր նրանց անկարող դարձնել բարու և չարի միջև տարբերություն տեսնելու, կամ կարող դարձնել տարբերություն տեսնելու և միայն բարիք գործելու: Սակայն մարդկությանը այսպես ստեղծելը կնշանակեր նրանց դարձնել ոչ ավելի, քան կենդանի մեքենաներ, այլ ոչ թե իրենց Ստեղծչի մտավոր պատկեր: Կամ նա կարող էր մարդուն կատարյալ և ազատ կամքով օժտված ստեղծել, ինչպես որ արեց, և պաշտպանել նրան Սատանայի փորձությունից: Այդ դեպքում, երբ մարդու փորձը սահմանափակված լիներ միայն բարիով, նա անընդհատ ենթակա կլիներ արտաքին չարի առաջարկությունների կամ ներսից բխող փառասիրության, որոնք անորոշ կդարձնեին նրա հավիտենական ապագան, և անհնազանդության ու խառնաշփոթի բռնկումը միշտ հնարավոր կլիներ, բացի այդ, բարին երբեք այդքան բարձր չէր գնահատվի, եթե չլիներ չարի հետ հակադրություն:

Աստված առաջին հերթին իր արարածներին ծանոթացրեց բարուն՝ Էդեմում նրանց դրանով շրջապատելով, իսկ հետո, որպես անհնազանդության պատիժ, նրանց տվեց չարի խիստ գիտությունը: Էդեմից վտարված և իր հետ որդիական հաղորդակցությունից զրկված, Աստված թույլ տվեց նրանց ունենալ հիվանդության, ցավի և մահվան փորձառություն, որպեսզի նրանք մեկընդմիշտ ճանաչեն չարը, ինչպես նաև մեղքի անպետքությունը ու չափազանց մեղավորությունը:

Հետևանքները համեմատելով՝ նրանք սկսեցին հասկանալ և ճիշտ գնահատել երկուսն էլ: «Այնժամ Եհովա Աստված ասաց.. ««Այժմ մարդը մեզնից մեկի պես է դարձել՝ բարին ու չարը իմացող» (Ծննդոց 3:22): Նույն ճակատագիրը հասավ նրանց սերունդներին, միայն թե նրանք նախ ձեռք են բերում չարի գիտելիքը և չեն կարող ամբողջությամբ հասկանալ, թե ինչ է բարին, մինչև հազարամյակի ընթացքում չփորձեն այն՝ այն մեկի փրկության շնորհիվ, ով այդ ժամանակ կլինի նրանց Դատավորն ու Թագավորը:

Բարոյական զգացողությունը՝ այսինքն՝ բարիքի և չարիքի միջև տարբերություն տեսնելու կարողությունը, ինչպես նաև այդ կարողությունն իրացնելու ազատությունը, որով օժտված էր Ադամը, Աստծու նմանության կարևոր գծեր էին: Բարիքի և չարիքի օրենքը գրված էր նրա բնական կազմվածքում: Դա նրա բնության մի մասն էր, ինչպես որ դա աստվածային բնության մի մասն է: Բայց չմոռանանք, որ այս պատկերը (Աստծո նմանությունը, մարդկային բնության սկզբնական վիճակը, որի մեջ գրված էր օրենքը) կորցրել է իր հստակ ուրվագիծը մեղքի ավերիչ և նվաստացուցիչ ազդեցության հետևանքով: Ուստի այսօր այս պատկերը այլևս այնպիսին չէ, ինչպիսին որ, այն առաջին մարդու մեջ էր: Սիրելու ունակությունը ենթադրում է ատելու

ունակություն: Հետևաբար, կարող ենք ենթադրել, որ Ստեղծիչը չէր կարող մարդուն ստեղծել Իր պատկերով՝ միայն սիրելու և բարին գործելու ունակությամբ, առանց համապատասխան ատելության և չարիք գործելու ունակության: Ընտրության այս ազատությունը, որը հայտնի է որպես բարոյական սկզբունք կամ ազատ կամք, մարդու սկզբնական պարգևի մի մասն է: Իր մտավոր և բարոյական կարողությունների ամբողջությամբ՝ սա նրան դարձրեց իր Արարչի պատկերին: Այսօր, վեց հազար տարվա անկման արդյունքում, այդ սկզբնական նմանության մեծ մասը մեղքի պատճառով այնքան է քայքայվել, որ մենք այլևս ազատ չենք և որոշ չափով կապված ենք մեղքի և դրա հետևանքներից: Ընկած մարդկային ցեղի համար մեղքը այսօր ավելի հանդուրժելի է, և, հետևաբար, ավելի ընդունելի, քան արդարությունը:

Չենք կասկածում, որ Աստված կարող էր Ադամին տալ մեղքի բազմաթիվ ավերիչ հետևանքների այնպիսի վառ պատկերացում, որը կխոչընդոտեր նրան մեղանչել, սակայն մենք հավատում ենք, որ Աստված կանխատեսեց, որ չարի իրական փորձառությունը կլինի ամենաապահով և ամենատևական դասը, որը ծառայելու է մարդուն հավիտենապես և հենց այդ պատճառով Աստված չարգելեց, այլ թույլ տվեց մարդուն կատարել իր ընտրությունը և իր մաշքի վրա զգալ չարի հետևանքները: Եթե երբեք չտրվեր մեղք գործելու հնարավորություն, մարդը չէր կարողանա դիմադրել մեղքին, և, հետևաբար, նրա բարի գործերում ոչ առաքինություն կլիներ, ոչ էլ արժանիք: Աստված փնտրում է նրանց, ովքեր կերգրպագեն Իրեն հոգով և ճշմարտությամբ: Նա ցանկանում է գիտակից և կամավոր հնազանդություն, ոչ թե կույր, մեխանիկական ծառայություն: Նախկինում Նրա կամքը կատարելու համար կիրառվում էին անկենդան գործիքներ, սակայն

Նրա նպատակը ավելի հոյակապ մի բան ստեղծելն էր՝ Իր նմանությամբ մի գիտակից էեակ, երկրի տիրակալ, որի հավատարմությունն ու արդարությունը հիմնված կլինեին ճիշտը կեղծիքից, բարին չարից տարբերելու կարողության վրա:

Ճշտի և սխալի սկզբունքները, որպես սկզբունքներ, միշտ գոյություն են ունեցել և միշտ էլ պետք է գոյություն ունենան և Աստծո նմանությամբ ստեղծված բոլոր կատարյալ, բանական արարածները պետք է ազատ լինեն ընտրելու դրանցից որևէ մեկը, թեև միայն ճիշտ սկզբունքն է հավիտյան շարունակելու գործել: Աստվածաշունչը մեզ տեղեկացնում է, որ երբ չարի սկզբունքի գործունեությունը բավականաչափ թույլատրվի Աստծո նպատակը իրականացնելու համար, այն հավիտյան դադարելու է գործել, և բոլոր նրանք, ովքեր շարունակում են ենթարկվել դրա իշխանությանը, իսպառ կդադարեն գոյություն ունենալուց (Ա Կորնթ. 15:25, 26, Եբր. 2:14): Միայն բարիք գործողները կմնան հավիտյան:

Բայց այս հարցը ներկայանում է մեզ այլ ձևով. չէ՞ր կարող մարդը ծանոթանալ չարին այլ կերպ, քան փորձառության միջոցով: Գոյություն ունեն գիտելիք ձեռք բերելու չորս ձևեր՝ ինտուիցիա, դիտարկում, փորձառություն և հուսալի աղբյուրներից ստացված տեղեկատվություն: Ինտուիտիվ գիտելիքը ուղղակի ընկալումն է՝ առանց տրամաբանական գործընթացի կամ ապացուցման անհրաժեշտության: Այսպիսի գիտելիք բնորոշ է միայն աստվածային Եհովային՝ բոլոր իմաստության և ճշմարտության հավիտենական աղբյուրին, Ով իր բնույթով, գերազանցում է իր բոլոր արարածներին: Ուստի մարդու բարու և չարի գիտությունը չի կարող լինել ինտուիտիվ: Մարդը կարող էր գիտելիք ձեռք բերել դիտարկման միջոցով, սակայն այդ դեպքում անհրաժեշտ էր, որ մարդու համար լիներ

չարի և դրա հետևանքների մի ցուցադրություն: Սա ենթադրում է չարի թույլտվություն ինչ-որ տեղ, ինչ-որ արարածների մեջ. Ուրեմն, ինչո՞ւ դա չլիներ մարդկանց մեջ և երկրի վրա, այլ ոչ թե մի ուրիշ տեղ:

Ինչո՞ւ մարդը չլիներ այդ օրինակը և ձեռք բերեր այդ գիտելիքը գործնական փորձառության միջոցով: Եվ այդպես էլ կա՝ մարդը ձեռք է բերում գործնական փորձ և ծառայում է որպես օրինակ ուրիշների համար, լինելով «...տեսարան... հրեշտակների համար»

Ադամը՝ տեղեկությամբ արդեն չարի նկատմամբ գիտություն ուներ, սակայն դա բավարար չէր նրան զսպելու համար, որպեսզի չփորձի: Ադամն ու Եվան ճանաչում էին Աստծուն որպես իրենց Արարչի, և հետևաբար՝ որպես այն մեկին, ով իրավունք ուներ վերահսկելու և առաջնորդելու իրենց: Աստված արգելված ծառի մասին ասել էր. «Այն օրը, երբ նրանից ուտես, անպայման կմեռնես»: Այսպիսով, նրանք ունեին չարի մասին տեսական գիտելիք, թեև երբեք չէին տեսել կամ զգացել դրա հետևանքները: Արդյունքում նրանք չգնահատեցին իրենց Ստեղծչի սիրառատ իշխանությունն ու նրա օգտակար օրենքը, որով նա ուզում էր նրանց պաշտպանել վտանգներից: Ուստի նրանք ենթարկվեցին գայթակղությանը, որը Աստված իմաստությամբ թույլատրեց՝ նախապես կանխատեսելով դրանից բխող վերջնական օգուտը:

Շատ քչերն են գնահատում այն փորձության լրջությունը, որի տակ ընկան մեր նախածնողները, ինչպես նաև Աստծո արդարությունը, երբ Նա սահմանեց այդքան խիստ պատիժ այն բանի համար, ինչը շատերը համարում են աննշան խախտում: Բայց մի փոքր խորհելուց հետո ամեն ինչ պարզ է դառնում: Աստվածաշունչը մեզ պատմում է մի պարզ պատմություն այն մասին, թե ինչպես մի կին՝ որը ավելի տկար էր,

մոլորվեց և դարձավ օրինազանց: Նրա փորձառությունն ու Աստծո ճանաչումը ավելի սահմանափակ էին, քան Ադամինը, քանի որ նա ստեղծվել էր առաջինը: Նույնիսկ Եվայի ստեղծումից առաջ Աստված բացահայտ տեղեկացրել էր Ադամին մեղքի պատժի մասին, մինչդեռ Եվան, ամենայն հավանականությամբ, դրա մասին իմացել է Ադամից: Պտուղը համտեսելու և Սատանայի խաբուսիկ խոսքերին հավատալու արդյունքում նա, ակնհայտ է, չի գիտակցել իր մեղքի ամբողջ չափը, թեև, հավանաբար, ունեցել է նախազգացումներ և անորոշ անհանգստություններ, որ ինչ-որ սխալ է արել: Եվ չնայած նա խաբված էր, Պողոսն ասում է, որ նա օրինազանց էր, թեև ոչ այնքան մեղավոր, որքան կլիներ, եթե մեղանչեր ավելի մեծ լույսի դեմ:

Մեզ ասվում է, որ Ադամը, ի տարբերություն Եվայի, չխաբվեց (Ա Տիմ. 2:14), հետևաբար նա ավելի լավ էր գիտակցում իր գործած մեղքի ծանրությունը. Նա գիտեր նախասահմանված պատիժը ու վստահ էր որ պետք է մեռնի: Դժվար չէ տեսնել, թե ինչ փորձություն էր այն, որը ստիպեց նրան այդքան անզգուշորեն իր վրա բերել սահմանված պատիժը: Հաշվի առնելով, որ նրանք կատարյալ արարածներ էին՝ իրենց Ստեղծչի մտավոր և բարոյական նմանությամբ, աստվածային սիրո տարրը ակնառու կերպով արտահայտվեց կատարյալ մարդու կողմից իր սիրելի ընկերուհու՝ կատարյալ կնոջ հանդեպ: Գիտակցելով մեղքը և վախենալով Եվայի մահից, և, հետևաբար, նրա կորուստից (և դա առանց վերականգնման հույսի, քանի որ նման հույս չէր տրվել), Ադամը հուսահատությամբ անխոհեմաբար եզրակացրեց, որ չի կարող ապրել առանց նրա: Նրա ընկերակցության բացակայությամբ իր կյանքը դժբախտ ու անարժեք համարելով՝ նա կամավոր կերպով մասնակցեց նրա անհնազանդության գործողությանը, որպեսզի կիսեր այն մահվան պատիժը, որը, ամենայն

հավանականությամբ, կարծում էր, որ ընկած է Եվայի վրա: Երկուսն էլ «հանցավոր» էին, ինչպես ցույց է տալիս Առաքյալը (Հռոմ. 5:14, Ա Տիմ. 2:14): Սակայն Ադամն ու Եվան մեկն էին և ոչ թե «երկուսը», հետևաբար Եվան կիսեց այն դատավճիռը, որը իր անխոհեմ ընթացքով բերեց Ադամի վրա (Հռոմ. 5:12,17-19):

Աստված ոչ միայն կանխատեսեց, որ մարդուն ընտրության ազատություն տալով՝ նա, մեղքի և դրա հետևանքների լիարժեք գիտություն չունենալու պատճառով կնտրե մեղքը, այլև տեսավ, որ մեղքի հետ ծանոթանալով հանդերձ, նրան կհարի, քանի որ այդ ծանոթությունը այնքան կապականի նրա բարոյական բնույթը, որ չարը աստիճանաբար նրա համար ավելի հաճելի և ցանկալի կդառնա, քան բարին: Եվ այնուամենայնիվ Աստված որոշեց թույլ տալ չարիքը, որովհետև, ունենալով մարդուն դրա հետևանքներից ազատելու համար նախատեսված բուժումը, Նա տեսավ, որ արդյունքում մարդը փորձի միջոցով կհասկանա «մեղքի անպետքությունը ու անիծապարտությունը» և ի հակառակ դրան, կտեսնի առաքինության անզուգական փայլը՝ սովորելով ավելի շատ սիրել և պատվել իր Արարչին, ով ամեն բարիքի արմատն ու աղբյուրն է, և հավիտյան խուսափել այն ամենից, ինչն այնքան շատ վիշտ ու տառապանք բերեց: Այսպիսով, վերջնական արդյունքը կլինի Աստծո հանդեպ ավելի մեծ սեր և ավելի մեծ ատելություն նրա կամքի դեմ եղող ամեն ինչի նկատմամբ, և, հետևաբար, հավիտենական արդարության մեջ ամուր հաստատում բոլոր նրանց, ովքեր կօգտվեն այն դասերից, որոնք Աստված այժմ սովորեցնում է մեղքի և դրան համապատասխան չարիքների թույլտվության միջոցով: Այնուամենայնիվ, անհրաժեշտ է տարբերել Աստծո կողմից մեղքը թույլատրելու անվիճելի փաստի և որոշների լուրջ սխալի միջև, որոնք Աստծուն համարում են մեղքի հեղինակ ու

դրդիչ: Վերջին տեսակետը և հայհոյական է, և հակասում է Սուրբ Գրքում ներկայացված փաստերին: Նման սխալի մեջ ընկնողները սովորաբար դա անում են փորձելով գտնել փրկության այնպիսի ծրագիր, որը տարբերվում է Աստծո կողմից Քրիստոսի զոհաբերության միջոցով նախատեսված մեզ փրկագնելու ծրագրից: Հաջողությամբ համոզելով իրենք իրենց և ուրիշներին, որ Աստված պատասխանատու է բոլոր մեղքերի, չարիքների և հանցանքների[3] համար, և որ մարդը, որպես Նրա

[3] Այս տեսությունը հիմնավորելու համար օգտագործվում են Սուրբ Գրքի երկու համարներ (Եսայա 45:7 և Ամոս 3:6), սակայն երկուսի մեջ էլ «չարիք» բառը սխալ է մեկնաբանվում: Մեղքը միշտ չարիք է, սակայն չարիքը միշտ մեղք չէ: Երկրաշարժը, հրդեհը, ջրհեղեղը կամ համաճարակը աղետ, չարիք կլինեին, սակայն դրանցից ոչ մեկը մեղք չէր լինի: Բերված տեքստերում «չարիք» բառը նշանակում է աղետներ: Նույն եբրայերեն բառը շատ տեղերում թարգմանվում է որպես «դժբախտություն» «նեղություն» «թշվառություն» «ցավ» «վնաս», «կորուստ», «կսկիծ», «պատուհաս» «չարիք» «չարություն», «դժբախտություն» և «տրտմություն»: Սաղմոս 106:39, Երեմիա 48:16, Սաղմոս 26:5, 40:1, 87:4, 106:26, Երեմիա 51:2, Ողբ Երեմիա 1:21, Ա Թագավորաց 10:19, Սաղմոս 93:13, Սաղմոս 33:20, Սաղմոս 9:27, 33:20, Զաք. 1:15, Սաղմոս 140:5, ժող.. 7:14. Սաղմոս 34:19, 107:39, Երեմիա 48:16, Զաքարիա 1:15, Սաղմոս 27:5, 41:1, 88:3, 107:26, Երեմիա 51:2, Սաղմոս 10:6, 94:13, 141:5, Նեեմիա 2:17:

Ես. 45:7-ում և Ամոս 3:6-ում Տերը Իսրայելին հիշեցնում էր նրանց հետ որպես ազգ կնքված ուխտը՝ որ եթե նրանք հնազանդվեին Նրա օրենքներին, Նա կօրհներ նրանց և կպաշտպաներ աշխարհում ընդհանուր առմամբ տարածված աղետներից, իսկ եթե նրանք լքեին Նրան, Նա նրանց վրա որպես պատիժ կբերեր աղետներ (չարիքներ): Տես Երկրորդ օրենք. 28:1-14,15-32, Ղևտ. 26:14-16, Հեսու. 23:6-11,12-16.

Սակայն երբ նրանց վրա աղետներ եկան, նրանք հակված էին դրանք դիտարկել ոչ թե պատիժներ, այլ պատահական դեպքեր: Այդ պատճառով Աստված նրանց ուղարկեց մարգարեներ, հիշեցնելով նրանց իրենց ուխտի մասին և հայտնելով, որ իրենց աղետները գալիս են Նրանից և Նրա կամքով՝ նրանց ուղղելու համար: Անհեթեթ է այս տեքստերը օգտագործել Աստծուն մեղքի հեղինակ հռչակելու համար, քանի որ դրանք ընդհանրապես մեղքի մասին չեն:

ձեռքում անմեղ գործիք, ուժով ներքաշվել է մեղքի մեջ, նրանք հարթել են ճանապարհը այն տեսության համար, որ անհրաժեշտ է ոչ թե զոհաբերություն մեր մեղքերի համար, ոչ էլ որևէ ձևի ողորմություն, այլ միայն ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ: Այսպիսով նրանք հիմք են դնում իրենց կեղծ տեսության մեկ այլ մասի՝ համընդհանուր փրկության համար, պնդելով, որ քանի որ Աստված պատճառ է դարձել բոլոր մեղքերի, չարիքի և հանցանքի, նա նաև պատճառ կդառնա ամբողջ մարդկության փրկությանը մեղքից և մահից: Եվ խորհելով, որ Աստված կամեցավ և մեղքի պատճառ դարձավ, և որ ոչ ոք չի կարող ընդիմանալ նրան, նրանք հավատում են, որ երբ նա կամենա արդարություն, բոլորը նույնպես անզոր կլինեն ընդդիմանալու նրան: Բայց բոլոր նման տրամաբանություններում մարդու ամենանվիրական հատկությունը՝ կամքի ազատությունը կամ ընտրության կարողությունը, նրա Արարչին նմանության ամենաառավել աչքի ընկնող հատկանիշը, ամբողջությամբ անտեսվում է և մարդը տեսականորեն նվաստացվում է մինչև մի պարզ մեքենայի կարգավիճակ, որը գործում է միայն այնպես, ինչպես նրա վրա են ազդում: Եթե այդպես լիներ, մարդը, փոխարենը լինելու երկրի տերը, ստորադաս կլիներ անգամ միջատներին, որովհետև նրանք անշուշտ ունեն կամք կամ ընտրության ուժ: Նույնիսկ փոքրիկ մրջյունին տրված է կամքի ուժ, որը մարդը, թեև իր մեծ ուժով կարող է հակառակվել ու ընկճել, բայց չի կարող ոչնչացնել:

Այո, Աստված ունի զորություն մարդուն մեղքի կամ արդարության կողմն մղելու, սակայն Նրա Խոսքը հաստատում է, որ Նա նման մտադրություն չունի: Համահունչ լինելով Իրեն, Նա չի կարող մարդուն մեղքի կողմն ուղղորդել նույն պատճառով, որով «Նա չի կարող ուրանալ ինքն իրեն»: Այդպիսի վարքագիծ

անհամապատասխան կլիներ նրա արդար բնույթին և, հետևաբար, անհնարին: Նա փնտրում է միայն նրանց պաշտամունքն ու սերը, ովքեր պաշտում են իրեն հոգով և ճշմարտությամբ: Այս նպատակով նա մարդուն պարգևել է իրեն նման կամքի ազատություն և ցանկանում է, որ նա ընտրի արդարությունը: Մարդուն ինքնուրույն ընտրելու թույլտվությունը հանգեցրեց նրա անկմանը աստվածային ընկերակցությունից, շնորհքից և օրհնություններից՝ մինչև մահ:

Մեղքի և մահվան փորձառությամբ մարդը գործնականում սովորում է այն, ինչ Աստված առաջարկում էր նրան տեսականորեն սովորեցնել՝ առանց մեղքի և դրա դառը հետևանքների փորձառության: Աստծո կանխագիտությունը մարդու գործողությունների վերաբերյալ չի օգտագործվում նրա դեմ՝ որպես արդարացում նրան պարզապես մեքենայական էակ դարձնելու համար. ընդհակառակը, այն օգտագործվում է մարդու օգտին: Քանզի Աստված, կանխատեսելով այն ճանապարհը, որ մարդը կհետապնդեր, եթե ազատ կամքով ինքնուրույն ընտրելու հնարավորություն ստանար, նրան չխանգարեց փորձառաբար ճաշակել մեղքը և դրա դառը հետևանքները, այլ անմիջապես սկսեց հոգ տանել նրա առաջին հանցանքից ապաքինվելու միջոցի մասին՝ տրամադրելով Ազատարար, մեծ Փրկիչ, ով կարող է լիակատար փրկել բոլոր նրանց, ովքեր նրա միջոցով կվերադառնան Աստծուն: Այս նպատակով՝ որպեսզի մարդը ունենա ազատ կամք և միևնույն ժամանակ կարողանա օգտակար դասեր քաղել իր առաջին ձախողումից՝ Աստված ոչ միայն բոլորի համար փրկանք պատրաստեց, այլև ապահովեց, որ ժամանակին հայտնի դառնա Նրա հետ հաշտվելու առաջարկվող հնարավորության մասին (Ա Տիմ. 2:3-6):

Պատժի խստությունը Աստծո կողմից ատելության կամ չարության դրսևորում չէր, այլ չարի այն անհրաժեշտ, անխուսափելի և վերջնական հետևանքն էր, որը Աստված թույլ տվեց մարդուն տեսնել և զգալ: Աստված կարող է կյանքը պահպանել այնքան ժամանակ, որքան համարում է անհրաժեշտ՝ չնայած գոյություն ունեցող չարի ավերիչ ազդեցությանը, սակայն նման կյանքը հավիտենորեն պահպանելը Աստծո համար նույնքան անհնարին է, որքան ստելը: Դա բարոյապես անհնարին է: Նման կյանքը աստիճանաբար կդառնար տառապանքի աղբյուր թե՛ տվյալ մարդու, և թե՛ ուրիշների համար: Ուստի Աստված չափազանց բարի է, որպեսզի պահպանի նման գոյություն, որը անօգուտ և վնասակար է թե՛ տվյալ մարդու համար, և թե՛ ուրիշների համար: Եվ երբ Նրա պահպանող ուժը հետ է վերցվում, գալիս է ոչնչացումը՝ չարի բնական հետևանքը: Կյանքը շնորհ է, Աստծո պարգև, և այն հավիտենապես կշարունակվի միայն հնազանդների համար:

Այն որ Ադամի սերունդից յուրաքանչյուրին անհատական փորձություն չի տրվել, դա նրանց հանդեպ անարդարություն չի համարվում: Եհովան որևէ կերպ պարտավոր չէր մեզ գոյության բերելու, և մեզ գոյության բերելուց հետո արդարության կամ իրավունքի որևէ օրենք նրան չի պարտադրում հավերժորեն պահպանել մեր գոյությունը, և նույնիսկ չի պարտավորվում մեզ փորձ շնորհել՝ հավիտենական կյանքի խոստումով, եթե հնազանդվենք: Լավ հիշեք այս կետը: Ներկա կյանքը, որը թեև Օրորոցից մինչև գերեզման մահվան մի գործընթաց է՝ չնայած իր բոլոր չարիքներին ու հիասթափություններին, պարգև է, շնորհ, նույնիսկ եթե չլիներ ապագա կյանք: Մեծամասնությունը այդպես է գնահատում այն, բացառությունները (ինքնասպանները) համեմատաբար քիչ են, և մեր դատարանները բազմիցս որոշել են, որ նրանք մտային անհավասարակշռության

մեջ են, քանի որ հակառակ դեպքում չէին զրկի իրենց ներկայիս օրհնություններից: Բացի այդ, կատարյալ մարդու՝ Ադամի վարքագիծը ցույց է տալիս, թե ինչպիսին կլիներ նրա զավակների վարքագիծը նմանատիպ հանգամանքներում:

Շատերը տարված են սխալ պատկերացմամբ, թե Աստված մեր մարդկային ցեղին կյանքի փորձության է ենթարկել՝ հավիտենական տանջանքների այլընտրանքով, մինչդեռ այդպիսի որևէ բան չի հիշատակվում պատժի մեջ: Կյանքը՝ շարունակական կյանքը, զերծ տառապանքից, հիվանդությունից և քայքայման ու մահվան բոլոր այլ տարրերից, շնորհ է, Աստծո օրհնություն Իր հնազանդ զավակների համար: Ադամը ամբողջությամբ ստացավ այս օրհնությունը, սակայն նախազգուշացվեց, որ կորցնելու է այս «նվերը», եթե դադարի հնազանդվել Աստծուն: «Այն օրը, երբ նրանից ուտես, անպայման կմեռնես»: Նա ոչինչ չգիտեր մեղքի համար պատժի նման տանջալի կյանքի մասին: Անմահ կյանքը ոչ ոքի և ոչ մի տեղ չի խոստացվում, բացի հնազանդներից: Կյանքը Աստծո պարգևն է, իսկ մահը (կյանքի հակառակը) այն պատիժն է, որ Նա սահմանել է:

Անվերջանալի տանջանքները ոչ մի տեղ չեն հիշատակվում Հին Կտակարանում, և Նոր Կտակարանում միայն մի քանի արտահայտություններ կան, որոնք սխալ մեկնաբանելով միայն կարելի է պաշտպանել նման ուսմունքը. և դրանք հանդիպում են կամ Հայտնության խորհրդապատկերներում, կամ մեր Տիրոջ առակների ու խոսքերի մեջ, որոնք չէին հասկանում դրանք լսող մարդիկ (Ղուկաս 8:10), և որոնք, հավանաբար, այսօր էլ այնքան էլ լավ չեն հասկացվում: «Մեղքի վարձքը մահն է»: (Հռոմեացիներ 6:23) «Այն հոգին, որը մեղք է գործում, մեռնելու է» (Եզեկիել 18:4):

Շատերը համարել են Աստծուն անարդար, որ թույլ է տալիս Ադամի դատապարտությունը փոխանցվի նրա սերունդներին, փոխարենը յուրաքանչյուրին տալու փորձություն և հավիտենական կյանքի հնարավորություն, ինչպես վայելեց Ադամը: Բայց ի՞նչ կասեն նրանք, եթե այժմ պարզվի, որ աշխարհի կյանքի հնարավորությունն ու փորձությունը շատ ավելի բարենպաստ կլինեն, քան Ադամինն էին, և դա հենց այն պատճառով, որ Աստված որդեգրել է այս ծրագիրը՝ թույլ տալով Ադամի սերունդին բնական կերպով կիսել նրա պատիժը: Մենք հավատում ենք, որ այդպես է, և կփորձենք դա պարզ ներկայացնել:

Աստված մեզ վստահեցնում է, որ ինչպես դատապարտությունը Ադամով բոլորի վրա տարածվեց, այնպես էլ Նա մարդկային ցեղի համար սահմանել է նոր գլուխ, հայր կամ կյանք պարգևող, որի մեջ բոլորը կարող են փոխադրվել հավատքի և հնազանդության միջոցով, և ինչպես Ադամում գտնվող բոլորը կիսեցին մահվան անեծքը, այնպես էլ Քրիստոսում գտնվող բոլորը կկիսեն վերականգնման օրհնությունը, բացառությամբ Եկեղեցու (Հռոմ. 5:12,18,19): Այս տեսանկյունից անարատ ու անմեղ Հիսուսի մահը Աստծո առջև Ադամի մեղքի համար կատարյալ ու համապատասխան գին էր: Ինչպես մեկ մարդ մեղանչեց, և բոլորը նրա մեջ կիսեցին նրա անեծքը, նրա պատիժը, այնպես էլ Հիսուսը, վճարելով այդ մեկ մեղավորի պատիժը, փրկեց ոչ միայն Ադամին, այլև նրա բոլոր սերունդներին՝ բոլոր նրանց, ովքեր ժառանգել են նրա թույլ կողմերը, մեղքերը և դրանց պատիժը՝ մահը: Մեր Տերը՝ «Մարդ Քրիստոս Հիսուսը», ինքն անարատ, ընդունված իր մեջ ունենալով կատարյալ, չծնված սերունդ կամ ցեղ, որը նույնպես անաղարտ էր մեղքից, տվեց իր ամբողջ մարդկային կյանքն ու իրավունքները որպես լիակատար փրկանքի

գին Ադամի և նրա մեջ դատապարտված ցեղի կամ սերնդի համար:

Ադամի և նրա սերնդի կյանքերը լիովին գնելուց հետո Քրիստոս առաջարկում է ընդունել որպես Իր սերունդ կամ որդիներ Ադամի սերնդից բոլոր նրանց, ովքեր կնդունեն Իր Նոր Ուխտի պայմանները և այսպես հավատքի ու հնազանդության միջոցով գան Աստծո ընտանիք և ստանան հավիտենական կյանք: Այսպիսով, Փրկիչը «կտեսնի իր սերունդը [Ադամի սերնդից բոլոր նրանց, որոնք կընդունեն որդեգրումը՝ իր պայմաններով] և կերկարացնի իր օրերը [հարություն դեպի մարդկայինից ավելի բարձր մակարդակ, որը Հոր կողմից տրվեց իրեն իր հնազանդության դիմաց]» (Ես 53:10) և այս ամենը՝ ամենաանհավանական ձևով՝ կյանքի և սերնդի զոհաբերությամբ: Եվ այսպես է գրված. «Ինչպես Ադամով բոլորը մեռնում են, այնպես էլ Քրիստոսով բոլորը կկենդանանան» (Ա կորնթ. 15:22):

Ադամի անկման միջոցով ստացված վնասը (չնայած որ մենք որևէ կերպ անարդարության չենք ենթարկվել) Աստծո ողորմությամբ պետք է փոխարինվի Քրիստոսի միջոցով ցույց տրվելիք շնորհքով և բոլորը ուշ թե շուտ (Աստծո «հարմար ժամանակին») կունենան լիակատար հնարավորություն վերականգնվելու նույն դիրքին, որում Ադամն էր մեղանչելուց առաջ: Նրանք, ովքեր ներկայում չեն ստանում Աստծո այս շնորհքի լիակատար գիտելիք և հավատքով չեն վայելում այն (և նրանց մեծամասնությունը՝ երեխաներն ու հեթանոսները), անշուշտ կունենան այս արտոնությունները հաջորդ դարում կամ «գալիք աշխարհում», այսինքն՝ ներկայիս դարաշրջանից հետո գալիք ժամանակաշրջանում: Այդ նպատակով «բոլոր նրանք, ովքեր գերեզմաններում են... դուրս կգան»: Եվ երբ յուրաքանչյուր անհատ (այս դարում լինի, թե հաջորդում) ամբողջությամբ գիտակցում է մեր Տեր Հիսուսի վճարած փրկանքի գինը և դրան հաջորդող

արտոնությունները, նա համարվում է փորձության տակ, ինչպես Ադամը և հնազանդությունը բերում է հավիտենական կյանք, իսկ անհնազանդությունը՝ հավիտենական մահ՝ «երկրորդ մահ»: Այնուամենայնիվ, կատարյալ հնազանդությունը, առանց դրա իրականացնելու կատարյալ կարողության, ոչ ոքից չի պահանջվի: Շնորհի Ուխտի ներքո, Ավետարանական դարաշրջանում Եկեղեցու անդամներին հավատքի միջոցով վերագրվել է Քրիստոսի արդարությունը՝ մարմնի թուլության պատճառով անխուսափելի թերությունները լրացնելու համար: Աստվածային շնորհը հազարամյա դարաշրջանում նույնպես կգործի բոլոր նրանց համար, ովքեր կձգտեն քայլել «սրբության ճանապարհով»: Ամբողջական բարոյական կատարելության ակնկալությունը չի լինի մինչև ֆիզիկական կատարելության հասնելը (որը բոլորի արտոնությունն է լինելու հազարամյա դարաշրջանի ավարտից առաջ): Փրկության և Նոր Ուխտի արդյունքում ստեղծված նոր փորձությունը տարբերվելու է Եդեմի փորձությունից, քանի որ այստեղ յուրաքանչյուրի գործողությունները կանդրադառնան միայն նրա սեփական ապագային:

Արդյո՞ք սա մարդկության որոշ ներկայացուցիչների համար հավիտենական կյանք ձեռք բերելու երկրորդ հնարավորություն չպետք է նշանակի՞: Մենք պատասխանում ենք՝ շնորհիվ հայր Ադամի անհնազանդությանը՝ հավիտենական կյանքի առաջին հնարավորությունը թե իր և թե «իր երանքի մեջ գտնվող» սերնդի համար կորսված էր: Այդ սկզբնական փորձության ժամանակ «դատապարտություն եկավ բոլոր մարդկանց վրա»: Աստծո ծրագիրն այն էր, որ Քրիստոսի քավիչ զոհաբերության միջոցով Ադամին և բոլոր նրանց, ովքեր կորցրել էին կյանքը նրա ձախողման հետևանքով, (երբ նրանք ճաշակեցին մեղքի ծայրահեղ

անիծապարտությունը և զգացին դրա պատժի ծանրությունը) տրվի հնարավորություն վերադառնալ Աստծո մոտ՝ Փրկչի նկատմամբ հավատքի միջոցով: Եթե որևէ մեկը ցանկանում է սա անվանել «երկրորդ հնարավորություն», թող այդպես անի: Իհարկե, Ադամի համար դա կլինի երկրորդ հնարավորություն, և որոշ չափով այդպես կլինի ամբողջ փրկված մարդկության համար: Բայց Ադամի սերունդների համար դա կլինի իրենց առաջին անհատական հնարավորությունը, քանի որ նրանք արդեն ծնվելիս մահվան դատապարտության տակ էին: Անվանեք այն ինչպես ուզում եք, բայց փաստը մնում է փաստ. Ադամի անհնազանդության պատճառով բոլորը դատապարտվեցին մահվան, և բոլորը (Հազարամյա դարաշրջանում) կունենան լիակատար հնարավորություն ձեռք բերելու հավիտենական կյանքը Նոր Ուխտի բարենպաստ պայմանների ներքո: Սա, ինչպես հրեշտակները հայտնեցին, «մեծ ուրախության ավետիս է, որը լինելու է բոլոր մարդկանց համար»: Եվ, ինչպես առաքյալն ասաց, Աստծո այս շնորհը՝ որ մեր Տեր Հիսուսը «իրեն տվեց որպես փրկանք բոլորի համար», պետք է «վկայվի» բոլորին «իր ժամանակին»: (Հռոմ. 5:17-19, Ա Տիմ. 2:4-6) Ոչ թե Աստված, այլ մարդիկ են սահմանափակել կյանք ստանալու այս հնարավորությունը միայն Ավետարանական դարաշրջանով: Աստված, ընդհակառակը, ասում է, որ Ավետարանական դարաշրջանը միայն Եկեղեցու, թագավորական քահանայության ընտրության համար է, որոնց միջոցով հաջորդ դարաշրջանում բոլոր մյուսները ճշգրիտ գիտություն կստանան ճշմարտության մասին և կունենան լիարժեք հնարավորություն ստանալու հավիտենական կյանքը Նոր Ուխտի ներքո:

Բայց, ի՞նչ առավելություն ունի այս մոտեցումը: Ինչո՞ւ չտրվի բոլոր մարդկանց անհատական հնարավորություն կյանք ստանալու հենց հիմա,

անմիջապես, առանց Ադամի դատավարության և դատապարտման երկար գործընթացի, առանց նրա սերունդների ներգրավման այդ դատապարտման մեջ, առանց Քրիստոսի զոհաբերությամբ բոլորին խոստացված հավիտենական կյանքի նոր պարգևին սպասելու: Եթե չարի գոյությունը թույլատրվում է մարդու կամքի ազատության պատճառով, ապա ինչո՞ւ դրա վերացումը պետք է տեղի ունենա այդքան տարօրինակ, ոլորապտույտ ճանապարհով: Ինչո՞ւ թույլ տալ, որ այդքան տառապանք հասցվի նրանց, ովքեր ի վերջո կընդունեն կյանքի պարգևը որպես Աստծո հնազանդ զավակներ:

Այո, հենց սա է այն կետը, որի շուրջ կենտրոնացած է այս թեմայի նկատմամբ հետաքրքրությունը: Եթե Աստված այլ կերպ կազմակերպեր մեր ցեղի բազմացումը, այնպես, որ երեխաները չկիսեին իրենց ծնողների մեղքերի հետևանքները (մտավոր, բարոյական և ֆիզիկական թույլ կողմերը), և եթե Ստեղծիչը բոլորի համար նախատեսեր Էդեմի բարենպաստ պայմանները փորձության համար, և միայն օրենքի խախտողները դատապարտվեին և «կորսվեին». ապա քանի՞ մարդ այդպիսի բարենպաստ պայմաններում, կհամարվեր կյանքի արժանի, և քանիսը՝ անարժան:

Եթե որպես չափանիշ ընդունենք Ադամի օրինակը (և նա անշուշտ, ամեն առումով, կատարյալ մարդկության օրինակն էր), ապա եզրակացության պիտի գանք, որ ոչ ոք չէր կարողանա ապացուցել իր կատարյալ հնազանդությունն ու արժանի լինելը, քանի որ ոչ ոք չէր ունենա Աստծո հետ հաղորդակցության այնպիսի հստակ գիտելիք և փորձ, որպեսզի իր մեջ զարգացներ Աստծո օրենքների նկատմամբ լիակատար վստահություն՝ անկախ սեփական դատողություններից: Մենք ունենք այն վստահությունը, որ հենց Հոր ճանաչումն էր, որը թույլ տվեց Քրիստոսին անվերապահ վստահել և

հնազանդվել (Ես. 53:11): Բայց եկեք ենթադրենք, որ կյանք կստանար մեկ քառորդը, նույնիսկ ավելին, ենթադրենք, որ կեսը արժանի կհամարվեր, իսկ մյուս կեսը կկրեր մեղքի վարձքը՝ մահը: Այնժամ ի՞նչ: Ենթադրենք, հնազանդների կեսը երբեք չի ճանաչել մեղքը և ականատես չի եղել դրան: Միթե նրանք հավիտենապես չէին զգա հետաքրքրասիրություն արգելված բաների հանդեպ: Զսպվելով միայն Աստծո պատժի վախով նրանց ծառայությունը չէր կարող լինել այնքան սրտանց, որքան որ այն պետք է լիներ եթե նրանք ճանաչեին բարին և չարը, և հետևաբար լիովին գնահատեին Արարչի բարեհաճ մտադրությունները՝ օրենքներ սահմանելու մեջ, որոնք կառավարում են ոչ միայն իր, այլև Նրա արարածների ընթացքը:

Դիտարկենք երկրորդ խումբը, որը գիտակցաբար գործած մեղքի հետևանքով ենթակա կլիներ մահվան: Նրանք հավերժապես կտրված կլինեին կյանքից, և նրանց միակ հույսը կլիներ, որ Աստված սիրով կհիշեր նրանց որպես իր արարածներին, իր ձեռքի գործը, և նրանց համար կտրամադրեր մեկ այլ փորձություն: Բայց ինչո՞ւ այդպես անել: Միակ պատճառը կարող էր լինել այն հույսը, որ եթե նրանք կրկին արթնանային և նորից փորձության ենթարկվեին, նրանցից ոմանք՝ իրենց ավելի մեծ փորձառության շնորհիվ, այդժամ կընտրեին հնազանդությունը և կյանքը: Բայց նույնիսկ եթե այդպիսի ծրագիրը իր արդյունքներով նույնքան լավ լիներ, որքան այն, որ Աստված է որդեգրել, դրա դեմ լուրջ առարկություններ կլինեին:

Որքա՜ն ավելի է համապատասխանում Աստծո իմաստությանը մեղքը սահմանափակել որոշակի սահմաններով, ինչպես դա արվում է Նրա ծրագրում: Որքա՜ն ավելի հաջողությամբ են անգամ մեր սահմանափակ մտքերը կարողանում հասկանալ, որ պետք է լինի միայն մեկ կատարյալ և անաչառ օրենք, որը

հաստատում է, որ դիտավորյալ մեղքի վարձքը մահն է՝ ոչնչացում, կյանքից զրկում: Այսպիսով Աստված սահմանափակում է թույլատրված չարիքը, նախանշելով, որ Քրիստոսի հազարամյա թագավորությունը կհանգեցնի չարիքի և դիտավորյալ չարություն անողների վերացմանը և կբերի հավիտենական արդարություն, որը հիմնված կլինի կատարյալ էեակների լիակատար գիտելիքի և ամբողջական կամավոր հնազանդության վրա:

Բայց կան ևս երկու դիտարկում առաջարկվող ծրագրի վերաբերյալ, որը ենթադրում է յուրաքանչյուր անհատի նախնական փորձություն: Աստծո ընդունած ծրագրում մեկ փրկիչը լիովին բավական էր, քանի որ միայն մեկն էր մեղք գործել և միայն մեկը դատապարտվել էր (մյուսները կիսեցին նրա դատապարտումը): Բայց եթե առաջին փորձությունը անհատական լիներ, և մարդկության կեսը մեղանչեր ու անհատապես դատապարտվեր, ապա յուրաքանչյուր դատապարտվածի համար անհրաժեշտ կլիներ Փրկչի առանձին զոհաբերություն: Մեկ չկորած կյանք կարող էր քավել մեկ կորած կյանք, բայց ոչ ավելին: Մեկ կատարյալ մարդ՝ «Մարդ Քրիստոս Հիսուսը», փրկելով ընկած Ադամին (և այն ամենը, ինչ մենք կորցրել ենք նրա մեջ), որևէ այլ հանգամանքներում, բացի Աստծո կողմից ընտրված ծրագրից, չէր կարող «իրեն որպես փրկանք տալ բոլորի համար» [որպես համապատասխան գին]:

Ենթադրենք, որ Ադամից ի վեր մարդկանց ընդհանուր թիվը հասնում է հարյուր միլիարդի: Ենթադրենք, որ նրանց կեսը մեղք է գործել: Այդ դեպքում հիսուն միլիարդ հնազանդներ, կատարյալ մարդկանց կպահանջվեր մեռնել և վճարել [համապատասխան գինը] հիսուն միլիարդ մեղավորների համար: Այս ծրագրի համաձայն մահը կհասներ բոլորին: Այդպիսի ծրագիրը կպահանջեր ոչ պակաս տառապանք, քան կա այսօր:

Այսպիսի ծրագրի մյուս առարկությունը կայանում է նրանում, որ այն լուրջ խախտում կհանդիսանար Աստծո ծրագրերի համար՝ «փոքր հոտի», Քրիստոսի մարմնի ընտրության և աստվածային բնության բարձրացման առումով, որի անդամների գլուխն ու Տերը Հիսուսն է:

Աստված արդարացիորեն չէր կարող հրամայել հիսուն միլիարդ հնազանդ որդիներին հանձնել իրենց իրավունքները, արտոնությունները և կյանքը որպես փրկանք մեղավորների համար, քանի որ Նրա օրենքով նրանք իրենց հնազանդությամբ արդեն վաստակած կլինեին հավիտենական կյանքի իրավունքը: Հետևաբար, եթե այս կատարյալ մարդկանցից պահանջվեր դառնալ ընկածների փրկիչները, ապա Աստծո ծրագրում՝ ինչպես մեր Տեր Հիսուսի դեպքում, անհրաժեշտ կլիներ նրանց շնորհել ինչ-որ հատուկ պարգև, որպեսզի նրանք, իրենց առաջարկված ուրախության համար, ընդունեին իրենց եղբայրների պատիժը: Եվ եթե նրանք ստանային նույն պարգևը, ինչ մեր Տիրոջը տրվեց, այսինքն՝ դառնալ նոր, աստվածային բնության մասնակիցներ, բարձրացվելու էին հրեշտակներից, իշխանություններից, զորություններից և ամեն անունից վեր, որ անվանվում է՝ լինելու Եհովայից անմիջապես հետո (Եփես.1:20,21) — ապա աստվածային մակարդակում կլիներ անհաշիվ բազմություն, որը Աստծո իմաստությունը ակնհայտորեն չհավանեց: Բացի այդ, նման պայմաններում այս հիսուն միլիարդը հավասար կլինեին միմյանց, առանց որևէ առաջնորդի կամ գլխի: Բայց Աստծո ընդունած ծրագիրը խոսում է միայն մեկ Փրկչի մասին, որը բարձրացվել է աստվածային բնության մեջ, և այնուհետև՝ «փոքր հոտի» մասին, որոնց Նա փրկել է, ովքեր հետևում են Նրա տառապանքի և անձնուրացության «քայլերին», որպեսզի կիսեն Նրա անունը, Նրա պատիվը, Նրա փառքը և Նրա բնությունը՝ ինչպես կինն է կիսում իր ամուսնու ժառանգությունը:

Նրանք, ովքեր կարող են գնահատել Աստծո ծրագրի այս առանձնահատկությունը, որը մեկ ներկայացուցչի մեջ դատապարտելով բոլորին՝ բացեց ճանապարհը մեկ փրկչի միջոցով բոլորի փրկության և վերականգնման համար, կգտնեն դրանում բազմաթիվ խնդիրների լուծումը: Նրանք կհասկանան, որ մեկի մեջ բոլորի դատապարտումը նրանց ոչ մի վնաս չի պատճառել, այլ մեծ ողորմություն է եղել բոլորի համար, երբ դա դիտվում է Աստծո ծրագրի համատեքստում՝ բոլորի արդարացման ապահովման համար մեկ ուրիշի զոհաբերության միջոցով: Չարիքը հավիտյան կոչնչանա, երբ Աստծո նպատակը չարի թույլատրության մեջ կկատարվի, և երբ փրկանքի առավելությունները կհամընկնեն մեղքի պատժի հետ: Սակայն Աստծո ծրագրի այս առանձնահատկությունը ճիշտ չի կարելի գնահատել առանց մեղքի անիծապարտությունը լիովին գիտակցելու, առանց դրա պատժի՝ մահվան, էությունը ըմբռնելու: Առանց մեր Տեր Հիսուսի տված փրկանքի կարևորությունն ու արժեքը գիտակցելու, ինչպես նաև անհատի ամբողջական և լիակատար վերականգնման՝ բարենպաստ պայմանների, որոնց մեջ նա կենթարկվի ամբողջական և համապարփակ փորձության, և մինչև նա ճանաչվի արժանի պարգևի (հավիտենական կյանք) կամ պատժի (հավիտենական մահ):

Փրկության մեծ ծրագրի և Քրիստոսի միջոցով «բոլոր բաների վերականգնմամբ» մենք տեսնում ենք, որ չարի թույլտվության շնորհիվ օրհնություններ են բխում, որոնք, հավանաբար, այլ կերպ այդքան լիովին չէին իրականանա:

Մարդիկ ոչ միայն հավիտենապես կշահեն ձեռք բերված փորձառությունից, իսկ հրեշտակները՝ մարդկանց մեջ տեղի ունեցածը դիտելուց, այլև բոլորը ավելի կհարստանան Աստծո բնավորության ավելի լիարժեք ճանաչումով, ինչպես այն բացահայտվում է Նրա

ծրագրում: Երբ այս ծրագիրը լիովին իրականանա, բոլորը կկարողանան լիովին գնահատել Նրա իմաստությունը, արդարությունը, սերը և զորությունը: Նրանք կտեսնեն այն արդարությունը, որը չէր կարող խախտել աստվածային հրամանը և փրկել արդարացիորեն դատապարտված մարդկանց առանց կամավոր Փրկչի կողմից նրանց պատժի լիակատար չեղարկման: Նրանք կտեսնեն այն սերը, որը մատուցեց այս ազնիվ զոհը և բարձրացրեց Փրկչին Աստծո աջ կողմը, շնորհելով Նրան իշխանություն և զորություն վերակենդանացնելու նրանց, ում Նա գնել է Իր թանկարժեք արյունով: Նրանք կտեսնեն այն ուժն ու իմաստությունը, որոնք կարողացան իրենց արարածների համար հիասքանչ վախճան պատրաստել և ուղղորդել յուրաքանչյուր դիմադրություն՝ այն դարձնելով գիտակցական կամ անգիտակցական գործիք Իր մեծաշուք նպատակների առաջընթացի և վերջնական իրականացման համար: Մենք չենք կարող պատկերացնել, որ նման արդյունքներ հնարավոր լինեին առանց չարի թույլտվության և աստվածային նախախնամության նպատակային ուղղորդման: Այսպիսով, մարդկանց մեջ չարի ժամանակավոր թույլտվությունը բացահայտում է հեռատես իմաստություն, որը հաշվի է առել բոլոր ուղեկցող հանգամանքները, գտել է միջոց և Իր զորությամբ ու շնորհքով որոշել է վերջնական արդյունքը:

Ավետարանական դարաշրջանում մեղքը և նրա ուղեկցող չարը ավելի լայնորեն օգտագործվեցին Եկեղեցու ուսուցման և նախապատրաստման համար: Եթե մեղքը թույլատրված չլիներ, մեր Տիրոջ և Նրա Եկեղեցու զոհաբերությունը, որի պարգևը աստվածային բնությունն է, անհնարին կլիներ:

Պարզ է թվում, որ իրապես նույն Աստծո օրենքը, որը այժմ տիրում է մարդկանց վրա, որին հնազանդվելը

կյանքի պարգև ունի, իսկ չինազանդվելը՝ մահվան պատիժ, վերջապես պետք է կառավարի Աստծո բոլոր բանական արարածներին, և այդ օրենքը, ինչպես սահմանել է մեր Տերը, կարճ և հակիրճ ամփոփվում է մեկ բառով՝ Սեր: «Սիրիր քո Տեր Աստծուն քո ամբողջ սրտով, քո ամբողջ հոգով, քո ամբողջ զորությամբ և քո ամբողջ մտքով, ու դրացուդ քո անձի պես» (Ղուկաս 10:27). Վերջ ի վերջո, երբ Աստծո նպատակները կիրականանան, աստվածային բնավորության փառքը ակնհայտ կդառնա բոլոր բանական արարածների համար, և բոլորը կհասկանան, որ չարի ժամանակավոր թույլտվությունը աստվածային ռազմավարության մեջ իմաստուն քայլ էր: Այժմ սա տեսանելի է միայն հավատքի աչքով, որը նայում է առաջ՝ Աստծո Խոսքի միջոցով դեպի այն, ինչ ասվել է բոլոր սուրբ մարգարեների բերանով աշխարհի սկզբից ի վեր՝ բոլոր բաների վերականգնումը:

ԳԼՈՒԽ 8

Դատաստանի Օրը

Դատաստանի Օրվա Մասին Ընդհանուր Տեսակետը - Արդյո՞ք Ամ Աուրբգրային է – Դատաստան և Օր Բառերի Սահմանումը – Սուրբ Գրքի Մեջ Հիշատակված Մի Քանի Դատաստանի Օրեր – Առաջին Դատաստանի Օրը և Դրա Արդյունքները – Մեկ Այլ Նշանակված Օր – Դատավորը – Գալիք Դատաստանի Բնույթը - Առաջին և երկրորդ Դատաստանների Նմանություններն ու Տարբերությունները – Աշխարհի Ներկա Պատասխանատվությունը – Երկու Միջանկյալ Դատաստաններ և Դրանց Նպատակները – Գալիք Դատաստանի Վերաբերյալ Տարբեր Կարծիքներ - Ինչպես Էին Մարգարեներն ու Առաքյալները Այն Ընկալում

«Որովհետև նա սահմանել է մի օր, երբ արդարությամբ պետք է դատի աշխարհն այն մարդու միջոցով, որին նա ընտրել է» - «Հիսուս Քրիստոսին՝ արդարին» «Որովհետև Հայրը ոչ ոքի չի դատում, այլ դատելու ողջ իշխանությունը Որդուն է տվել» (Գործք 17:31, Ա Հովհ. 2:1, Հովհ. 5:22):

Դատաստանի օրվա վերաբերյալ գոյություն ունի շատ անորոշ և անճշգրիտ պատկերացում: Ընդհանուր առմամբ ընդունված է այն տեսակետը, որ Քրիստոսը կգա երկիր՝ նստած մեծ սպիտակ աթոռի վրա, և կհավաքի ու կկանգնեցնի Իր առջև բոլոր սրբերին և մեղավորներին՝ նրանց դատելու համար: Սա տեղի կունենա մեծ բնական աղետների ֆոնին՝ երկրաշարժերի, գերեզմանների

բացվելու, ժայռերի ճեղքվելու և լեռների փլուզվելու պայմաններում: Դողացող մեղավորները կհանվեն հավիտենական տառապանքի խորքերից, որպեսզի կրկին լսեն իրենց մեղքերի մասին, և վերադառնան իրենց հավերժական ու անողոք դատավճռին և որ սրբերը երկնքից կբերվեն՝ դատապարտյալների տառապանքն ու հուսահատությունը տեսնելու, իրենց գործերի վերաբերյալ վճիռը կրկին լսելու և ապա վերադառնալու համար: Ըստ գերիշխող տեսության՝ բոլորը իրենց դատավճիռն ու պարգևը ստանում են մահվան պահին, և սա, որը առանձնացնելու համար սովորաբար կոչվում է «համընդհանուր դատաստան», ընդամենը առաջին դատաստանի կրկնությունն է, թեև լիովին անհասկանալի է, թե ինչ նպատակ է հետապնդում, քանի որ նրանք պնդում են, որ մահվան պահին կայացվում է վերջնական և անփոփոխ որոշում:

Ասվում է, որ միլիարդավոր մարդկանց դատելու այս հսկայական գործի համար հատկացված է միայն մեկ՝ քսանչորս ժամ տևող օր: Սա շատ պարզունակ պատկերացում է և ամբողջությամբ հակասում է Աստծո խոսքին: Այն ծագում է մեր Տիրոջ ոչխարների և այծերի առակի չափազանց բառացի մեկնաբանությունից (Մատթեոս 25:31-46): Այն ցույց է տալիս, թե որքան անհեթեթ է փորձել բառացի մեկնաբանություն պարտադրել փոխաբերական լեզվին: Առակը երբեք չի հանդիսանում ճշգրիտ խոսք. այն ճշմարտության պատկերում է՝ օգտագործելով մի բան, որը բազմաթիվ առումներով նման է նրան: Եթե առակը բառացիորեն նկարագրեր դատաստանի ընթացքի ձևը, ապա այն պետք է կիրառվեր բառացի ոչխարների և այծերի վրա՝ ինչպես որ այնտեղ նշվում է, և ոչ մի կերպ՝ մարդկանց վրա: Այժմ եկեք դիտարկենք Աստծո սահմանած Մեծ Դատաստանի

օրվա ընթացքի և արդյունքի ավելի աստվածաշնչյան և, անշուշտ, ավելի իմաստուն տեսակետ՝ տրամաբանական և սուրբգրային եզրակացություններով, որոնց հետ բոլոր առակներն ու պատկերները համաձայնեցված կլինեն:

«Դատաստան» տերմինը նշանակում է ավելին, քան պարզապես վճիռ կայացնելը: Այն ներառում է քննության գաղափարը, ինչպես նաև այդ քննության հիման վրա կայացված որոշումը: Սա ոչ միայն հունարեն բառի նշանակությունն է, որից թարգմանվել է ավետարանը, այլև հայկական լեզվի մեջ էլ դատաստան բառը ունի նույն նշանակությունը: Սիմոն Գաբամաճեանի բառարանի մեջ դատաստան բառի ստուգաբանությունը հետևալն է – «Իրավանց վրա քննություն կամ որոշում»:

Չնայած «օր» տերմինը (նույնպես և Սուրբ Գրություններում, և առօրյա խոսքում) ամենից հաճախ օգտագործվում է տասներկու կամ քսանչորս ժամ տևողությամբ ժամանակահատվածը նշելու համար, այն իրականում վերաբերում է ցանկացած կոնկրետ կամ հատուկ ժամանակահատվածի: Այսպիսով, օրինակ, մենք խոսում ենք Նոյի օրվա, Լյութերի օրվա, Վաշինգտոնի օրվա մասին, և այսպես Աստվածաշնչում ամբողջ արարման ժամանակը կոչվում է «օր», երբ կարդում ենք «այն օրը, երբ Եհովա Աստված ստեղծեց երկինքն ու երկիրը» (Ծննդոց 2:4) — երկար, որոշակի ժամանակահատված: Այնուհետև կարդում ենք «փորձության օրը անապատում» — քառասուն տարի (Եբր. 3:8,9), «փրկության օրը» (Բ Կորնթ. 6:2), ինչպես նաև «վրեժխնդրության օրը», «բարկության օրը» և «նեղության օրը»— տերմիններ, որոնք վերաբերում են հրեական դարաշրջանի ավարտին՝ քառասուն տարվա ժամանակահատվածին, և Ավետարանական

դարաշրջանի վերջում նմանատիպ նեղության ժամանակաշրջանին: Այնուհետև կարդում ենք «Քրիստոսի օրվա», «դատաստանի օրվա» և «նրա օրվա» մասին՝ արտահայտություններ, որոնք վերաբերում են Հազարամյա դարաշրջանին, երբ Մեսիան արդարությամբ կթագավորի, կկառավարի և կդատի աշխարհը՝ ինչպես տալով կյանքին տիրանալու փորձ, այնպես էլ կայացնելով դատավճիռ: Եվ այդ ժամանակաշրջանի մասին գրված է. Նա արդարությամբ կդատի աշխարհը, և իր օրը կհայտնի, թե ով է այն Երանելին և միակ հզոր Թագավորների Թագավորը և տերերի Տերը (Գործք 17:31, Ա Տիմ. 6:15): Դժվար է հասկանալ, թե ինչպես կարելի է այս դատաստանի օրը դիտարկել որպես տասներկու կամ քսանչորս ժամ տևող օր, միևնույն ժամանակ ընդունելով «օր» բառի ավելի լայն իմաստը նմանատիպ այլ դեպքերում: Պետք է եզրակացնել, որ նման մարդիկ առաջնորդվում են ավանդույթով՝ առանց համապատասխան ապացույցների կամ ուսումնասիրության:

Յուրաքանչյուր ոք, ով ուշադիր ուսումնասիրի Դատաստանի օրը ամբողջ Աստվածաշնչի համատեքստում և հաշվի առնի այդ ժամանակահատվածում կատարվելիք գործի բնույթն ու ծավալը, շուտով կհասկանա ընդհանուր ընդունված տեսակետի անհեթեթությունն ու «օր» տերմինին ավելի լայն իմաստ հաղորդելու անհրաժեշտությունը:

Չնայած Աստվածաշունչը խոսում է դեռևս գալիք մեծ դատաստանի կամ փորձարկության օրվա մասին և ցույց է տալիս, որ մարդկության զանգվածային քնությունն ու վերջնական դատավճիռը կկայանան այդ օրը, այն նաև ուսուցանում է, որ եղել են այլ դատաստանի օրեր, որոնց

ընթացքում քննության են ենթարկվել որոշ ընտրյալ խմբեր:

Առաջին մեծ դատաստանը [քննություն և դատավճիռ] տեղի ունեցավ հենց սկզբում՝ Եդեմում, երբ ողջ մարդկային ցեղը, ներկայացված իր գլուխ Ադամի մեջ, կանգնած էր Աստծո առջև քննության: Այդ քննության դատավճիռն էր՝, որ նա հանցավոր, անհնազանդ, կյանքին անարժան էր: Իսկ գործադրված պատիժը մահն էր՝ «Մահով կմեռնես» (Ծննդոց 2:17): Ու այսպես «Ադամով բոլորը մեռնում են»:

Եդեմի այս փորձաշրջանը աշխարհի առաջին Դատաստանի օրն էր, և այն ժամանակից ի վեր Դատավորի (Եհովայի) դատավճիռը կատարվում է:

«Աստծու բարկությունը երկնքից հայտնվում է մարդկանց ամեն ամբարշտության և անիրավության վրա»: Դա երևում է յուրաքանչյուր հուղարկավորության թափորում: Յուրաքանչյուր գերեզման վկայում է դրա մասին: Դա զգացվում է մեր ապրած յուրաքանչյուր ցավում և տառապանքում, որոնք բոլորը առաջին քննության և դատավճռի հետևանքներն են՝ Աստծո արդար դատավճռի, ըստ որի մենք անարժան ենք կյանքին և սկզբնական այն օրհնություններին, որոնք նախատեսված էին մարդու համար, երբ նա հնազանդ էր և Աստծո պատկերով: Բայց մարդկությունը պետք է վերականգնվի այդ առաջին դատավճռի դատապարտությունից՝ այն մեկ զոհաբերությամբ, որը Մեծ Փրկիչը տվեց բոլորի համար: Բոլորը պետք է ազատվեն գերեզմանից և մահվան՝ ոչնչացման դատավճռից, որը այս քավության շնորհիվ այլևս չի կարող դիտվել որպես մահ բառի լիարժեք, հավիտենական իմաստով, այլ որպես ժամանակավոր քուն, քանի որ

Հազարամյակի առավոտյան բոլորը կարթնանան Կյանքի Տիրոջ կողմից, ով փրկագնել է բոլորին: Միայն Քրիստոսի հավատացյալ Եկեղեցին է որևէ իմաստով ազատված կամ «փախած» այս սկզբնական դատավճռից և պատժից, և նրանց փրկությունը դեռևս իրական չէ, այլ միայն այդպիսին է համարվում հավատքի միջոցով: «Մենք փրկված ենք միայն հույսով»: Մեր իրական ազատագրումը այս մահվան պատժից (որը կրեցինք Ադամում և որից փախանք՝ մտնելով Քրիստոսի մեջ) ամբողջությամբ չի զգացվի մինչև հարության առավոտը, երբ գոհ կլինենք արթնանալով մեր Փրկչի նմանությամբ: Բայց այն փաստը, որ մենք, ովքեր հասել ենք Աստծո շնորհալի ծրագրի գիտությանը Քրիստոսում, «փրկվել ենք պղծություններից, որը [դեռևս] տիրում է աշխարհում), ոչ թե ապացուցում է, որ մյուսները ապագա փախուստի հույս չեն ունենա, այլ հակառակը՝ իրականում մենք առաջին պտուղներն ենք նրա արարածների մեջ (Հակոբոս 1:18): Մեր փախուստը Ադամի մահվան դատապարտությունից դեպի կյանք Քրիստոսում ընդամենը կանխավայելումն է այն փրկության, որը սպասվում է բոլոր նրանց, ովքեր ցանկանում են ազատվել ապականության (մահվան) ստրկությունից՝ դեպի կյանքի այն ազատությունը, որը հատուկ է բոլոր նրանց, ում Աստված որդիներ կճանաչի: Բոլորը, ովքեր կամենան, կարող են ազատվել մահից և անցնել դեպի կյանք, չնայած բնության այն տարբերությանը, որը Աստված սահմանել է Իր որդիների համար գոյության տարբեր մակարդակներում: Ավետարանական դարաշրջանը կյանքի և մահվան քննության օր է նրանց համար, ովքեր կանչված են աստվածային բնության:

Բայց Աստված նշանակել է մի օր, երբ կդատի աշխարհը: Ինչպե՞ս է դա հնարավոր: Արդյո՞ք Նա փոխել է

Իր միտքը: Արդյո՞ք Նա եզրակացրել է, որ առաջին մարդու դատավարությունն ու համընդհանուր դատաստանն անարդար և չափազանց խիստ էր, և արդյո՞ք այժմ Նա որոշել է աշխարհը դատել անհատապես: Ոչ: Ոչ թե Աստված առաջին դատաստանի իր որոշումը անարդար է համարում, այլ Նա պատրաստել է քավություն առաջին դատաստանի պատժի համար, որպեսզի հնարավոր դարձնի մեկ այլ դատաստան (քննություն) բոլոր մարդկանց համար ավելի բարենպաստ պայմաններում՝ բոլոր նրանց համար, ովքեր ճաշակած կլինեն մեղքը և դրա հետևանքները: Աստված անգամ մի փոքրիկ կետով չի փոխել Իր սկզբնական ծրագիրը, որը կազմել էր դեռ աշխարհի ստեղծումից առաջ: Տերը հստակ ասում է մեզ, որ Նա չի փոխվում և ոչ մի կերպ չի արդարացնի մեղավորներին. ընդհակառակը կիրականանա այն ամբողջ պատիժը, որը նա արդարացիորեն սահմանել է: Եվ այս ամբողջ պատիժը կրեց Փրկիչը (փոխարինողը), որին ինքն Աստված տրամադրեց՝ Հիսուս Քրիստոսը, Ով «Աստծո շնորհով բոլորի համար մահ ճաշակեց»(Եբր.2:9): Մեր Տերը, Ադամի ու նրա սերնդի համար Իր սեփական կյանքով փրկագին վճարելով, արդարացիորեն կարող է նրանց բոլորին կյանքի նոր առաջարկ անել: Եկեղեցուն ուղղված այս առաջարկը զոհաբերության ուխտի ներքո է (Սղմ. 50:5, Հռոմ. 12:1), իսկ աշխարհի համար այն կլինի Նոր Ուխտի ներքո (Հռոմ. 14:9, Եբր. 10:16, Երեմ. 31:31):

Այնուհետև մենք իմանում ենք, որ այս անհատական քննության կամ փորձության դատավորը կլինի Քրիստոսը, որին Եհովան այս կերպ կպատվի՝ որպես վարձատրություն մեր փրկության համար ցույց տված մինչև մահ հավատարմության համար: Աստված նրան չափազանց բարձրացրեց, որպեսզի նա լինի Տեր և Փրկիչ, (Գործք 5:31) որպեսզի կարողանա ազատի մահից ու

շնորհել դատաստան բոլոր նրանց, ովքեր գնվել են նրա թանկագին արյունով: Աստված ամբողջ դատաստանը հանձնել է Որդուն, տալով նրան ամեն իշխանություն երկնքում և երկրի վրա (Հովհաննես 5:22):

Հետևաբար, խոստացված ապագա դատաստանում աշխարհի Դատավորը ոչ այլ ոք է, քան այս բարձրացված, փառավորված Քրիստոսը, Ով այնքան սիրեց աշխարհը, որ Իր կյանքը տվեց որպես փրկանքի գին: Եվ հենց Եհովան է նրան նշանակել այդ պաշտոնում, հենց այդ նպատակով: Քանի որ Սուրբ Գիրքը այս հարցի շուրջ հստակ է խոսում, վախի որևէ պատճառ չկա: Հակառակը, յուրաքանչյուր մարդ ունի բոլոր հիմքերը ուրախանալու Դատաստանի օրհնյալ օրվա սպասումով: Դատավորի բնավորությունը բավարար երաշխիք է, որ դատաստանը լինելու է արդար և ողորմած: Հաշվի է առնվելու յուրաքանչյուրի թույլ կողմերը, մինչև այն ժամանակ, երբ հնազանդները վերականգնվեն Եդեմում կորսված սկզբնական կատարելությանը:

Հին ժամանակներում դատավորը իրականացնում էր արդարություն և օգնում ճնշվածներին: Օրինակ՝ Իսրայելը, որը իր մեղքերի պատճառով թշնամիների կողմից ճնշված էր, բազմիցս ազատություն և օրհնություն ստացավ իրենց վրա նշանակված դատավորների միջոցով: Մենք կարդում ենք. «Այնժամ Իսրայելի որդիները Տիրոջն աղաղակեցին, և Տերը նրանց համար փրկիչ հանեց... Գեդեոնը… Տիրոջ Հոգին նրա վրա եկավ, և նա դարձավ Իսրայելի դատավորը: Պատերազմելու ելավ… և նրա ձեռքը զորացավ… Եվ երկիրը հանգստացավ քառասուն տարի» (Դատավորներ 3:9–11): Չնայած աշխարհը երկար ժամանակ գտնվում է թշնամի՝ Սատանայի իշխանության և ճնշման տակ,

այնուամենայնիվ, Նա, ով Իր թանկագին արյունով վճարեց բոլորի մեղքի գինը, շուտով կվերցնի Իր մեծ իշխանությունը և կթագավորի: Նա ազատելու և դատելու է նրանց, ում այդքան շատ սիրեց:

Բոլոր մարգարեությունները համաձայն են այս եզրակացության հետ: Գրված է. «Նա դատելու է աշխարհին արդարությամբ ու ժողովուրդներին՝ անաչառությամբ» (Սաղմոս 98:9):

Այս ապագա դատաստանը հիմնված կլինի առաջինի նման նույն սկզբունքների վրա: Ներկայացվելու է նույն հնազանդության օրենքը, կյանքի նույն վարձատրությամբ և նույն մահվան պատժով: Ինչպես առաջին դատաստանն սկսվեց, ընթացավ և ավարտվեց դատավճռով, այնպես էլ երկրորդը, և դատավճիռը կլինի կյանք արդարների համար և մահ՝ մեղավորների համար: Երկրորդ փորձը (դատաստանը) ավելի բարեհաճ կլինի, քան առաջինը՝ առաջին դատաստանի արդյունքներից ձեռք բերված փորձառության շնորհիվ: Առաջին դատաստանից տարբերվող այս երկրորդում յուրաքանչյուր մարդ ինքն է միայն կանգնելու քննության առջև, ոչ թե մեկ ուրիշի փոխարեն: Այն ժամանակ ոչ ոք չի մեռնի Ադամի մեղքի կամ ժառանգական թերությունների պատճառով: Այլևս չեն ասի. «Հայրերն ազոխ կերան ու որդիների ատամները սզացին», այլ՝ «ով ազոխ է ուտում նրա ատամները պիտի սզան»: «Այն հոգին, որը մեղք է գործում, ինքն էլ կմեռնի» (Եզեկիել 18:4, Երեմիա 31:29,30): Եվ այն ժամանակ աշխարհի համար ճշմարիտ կլինի այն, ինչ հիմա ճշմարիտ է Եկեղեցու համար՝ մարդը չի դատվելու չունեցածի համաձայն, այլ ունեցածի (Բ Կորնթ. 8:12): Քրիստոսի իշխանության ներքո մարդկությունը աստիճանաբար կստանա կրթություն, պատրաստություն և

կարգապահություն, մինչև որ հասնի կատարելության: Հասնելով կատարելության, մարդկանցից պահանջվելու է լինել Աստծո հետ կատարյալ ներդաշնակության մեջ և ովքեր այդ ժամանակ չեն հասնի կատարյալ հնազանդությանը, կոչնչանան՝ ճանաչվելով կյանքին անարժան: Հանցանքը, որը Ադամի միջոցով մահ բերեց մարդկային ցեղին, ընդամենը մեկ անհնազանդ արարք էր, սակայն այդ արարքով նա ընկավ իր կատարելությունից: Աստված իրավունք ուներ պահանջելու նրանից կատարյալ հնազանդություն, քանի որ նա ստեղծվել էր կատարյալ, և նա նույնն է պահանջելու բոլոր մարդկանցից, երբ նրանց վերականգնման մեծ գործը ավարտվի: Ոչ ոքի չի թույլատրվի ունենալ հավիտենական կյանք, եթե նա նույնիսկ ամենափոքր չափով պակասի կատարելությունից: Այն ժամանակ, կատարելության համեմատ չընթանալը, կնշանակի կամովին մեղանչում կատարյալ լույսի և կարողության դեմ:

Յուրաքանչյուր ոք, ով կամավորապես մեղք կգործի լիակատար լույսի և կարողության դեմ, կկորչի երկրորդ մահվամբ: Եվ եթե որևէ մեկը այդ փորձության դարաշրջանում, լույսի լիակատար շողի տակ մերժի առաջարկված շնորհները և հարյուր տարվա ընթացքում ոչ մի առաջընթաց չգրանցի կատարելության ուղղությամբ, նրան կհամարեն կյանքին անարժան և «կկտրվի», չնայած որ հարյուր տարեկանում նա համեմատաբար դեռ մանկության շրջանում կլինի: Այսպես է գրված այն օրվա մասին: «Մարդ կմահանա որպես պատանի, նույնիսկ եթե հարյուր տարեկան լինի, և մեղավորը նույնիսկ հարյուր տարեկանում կանիծվի» (Ես. 65:20): Հետևաբար բոլորին պետք է տրվի առնվազն հարյուր տարի փորձության համար: Եվ եթե նրանք չլինեն այնքան համառ, որ հրաժարվեն առաջ շարժվելուց, նրանց

փորձությունը կշարունակվի ամբողջ Քրիստոսի օրվա ընթացքում և կհասնի իր գագաթնակետին հենց վերջում:

Աշխարհի գալիք դատաստանի վերջավորությունը հստակ ցույց է տրվում ոչխարների ու այծերի առակայում (Մատթեոս 25:31-46), նաև Հայտնություն 20:15, 21:8 և Ա Կորնթացիներ 15:25-ում: Այս և այլ համարներ ցույց են տալիս, որ վերջում այդ երկու դասակարգերը ամբողջությամբ առանձնացված կլինեն՝ հնազանդներն ու անհնազանդները՝ նրանք, ովքեր համահունչ են Աստծո օրենքի տառին և ոգուն, և նրանք, ովքեր դրանից դուրս են: Նրանք մտնում են հավիտենական կյանք, իսկ մյուսները դատապարտվում են մահվան՝ ոչնչացման («երկրորդ մահ»), նույն դատավճիռը, ինչ առաջին դատաստանում, որից նրանք պայմանական առումով ազատվել էին Քրիստոսի կողմից, ով իր արյամբ նրանց փրկագինը վճարելով՝ իրավունք ստացավ նրանց ազատելու: Սա նրանց երկրորդ մահն է: Նրանց համար փրկանք չի տրվի, և նրանց համար ոչ ազատում կլինի, ոչ հարություն, քանի որ նրանց մեղքը կամավոր, անհատական մեղք է՝ լիակատար լույսի և հնարավորության դեմ, առավել բարենպաստ անհատական քննության ընթացքում:

Մենք չենք ցանկանում, որ մեզ համարեն աշխարհի ներկա պատասխանատվությունը անտեսող: Յուրաքանչյուր մարդ կրում է այս պատասխանատվությունը ըստ ստացված լույսի չափի՝ լինի դա մեծ թե փոքր, լինի դա բնության լույսը կամ հայտնության լույսը: «Տիրոջ աչքերը ամենուր են, քննում են չարերին ու բարիներին» «Քանզի Աստված ամեն գործ, ամեն ծածուկ բաների հետ, թե բարին, և թե չարը դատաստանի պիտի բերէ» (Առակաց 15:3, Ժողովող

12:14): Ներկա ժամանակի բարի և չար գործերը կստանան իրենց արդար հատուցումը կամ հիմա կամ ապագայում: «Որոշ մարդկանց մեղքերը հայտնի են և արդեն դատաստանի հասած, իսկ ոմանցն էլ հետո հայտնի կլինեն» (Ա Տիմ. 5:24). Տիրոջ առջև շնորհ գտած «փոքր հոտից», բացի դեռևս ոչ ոք չունի բավարար լույս, որպեսզի կրի վերջնական պատիժը՝ երկրորդ մահը: Այստեղ մենք աշխարհի ներկա պատասխանատվության թեման հանձնեցինք հանրությանը, մանրամասները թողնելով հետագա քննարկման համար:

Աշխարհի առաջին և երկրորդ դատաստանի օրերի միջև ընկած է մոտ վեց հազար տարվա ժամանակահատված, և այս երկար ժամանակահատվածում Աստված մարդկության միջից առանձնացնում է երկու հատուկ խմբեր, որոնք առանձնակի ստուգման, կարգապահության և ուսուցման են ենթարկվում, որպեսզի նրանք դառնան նրա պատվավոր գործիքները աշխարհի դատաստանի օրվա ընթացքում:

Այս երկու խմբերը համապատասխանաբար սահմանվում են Պողոս առաքյալի կողմից (Եբր. 3:5, 6) որպես որդիների տուն և ծառաների տուն: Առաջինը կազմված է քրիստոնեական դարաշրջանի ընթացքում ստուգված և հավատարիմ գտնված հաղթողներից, իսկ երկրորդը՝ քրիստոնեական դարաշրջանից առաջ եղած հավատարիմ հաղթողներից: Այս հատուկ ընտրությունները որևէ կերպ չեն խանգարում մարդկությանը այս Ավետարանական դարաշրջանից հետո խոստացված դատաստանին կամ փորձությանը: Այս երկու հատուկ դասակարգերից ովքեր հաջողությամբ կանցնեն իրենց փորձը, աշխարհի հետ դատաստանի չեն

ենթարկվի, այլ կստանան իրենց վարձատրությունը երբ կսկսվի աշխարհի դատը: Նրանք կլինեն Աստծո գործիքները աշխարհի օրհնության գործում՝ մարդկանց տալով նրանց վերջնական փորձի և դատաստանի համար անհրաժեշտ խրատն ու ուսուցումը: «Չգիտե՞ք, որ սրբերը պիտի դատեն աշխարհը» (Ա Կորնթ. 6:2):

Այս հատուկ ընտրված դասակարգերը, ինչպես մարդկության մնացած մասը, մի ժամանակ Ադամի դատապարտության տակ էին, սակայն հավատքի միջոցով ստացան բաժին Քրիստոսի մահվամբ ընծայած բարիքներից: Նախ՝ Աստծո խոստումների նկատմամբ ունեցած հավատքով արդարացված և ապա՝ իրենց կոչման հետագա պայմանները կատարելուց հետո նրանք ճանաչվում են արժանի՝ բարձրացվելու պատվի և իշխանության դիրքի:

Այս երկու խմբերի փորձությունը կամ դատաստանը, շատ ավելի խիստ է եղել, քան աշխարհի գալիք դատաստանի օրը, որովհետև նրանք ստիպված են եղել դիմակայել այս աշխարհի իշխան Սատանային՝ նրա բոլոր խորամանկություններով ու նենգություններով, մինչդեռ աշխարհի դատաստանի օրը Քրիստոս կթագավորի, իսկ Սատանան կապված կլինի, որպեսզի այլևս չխաբի ազգերին (Հայտնություն 20:3): Նրանք հալածվում ու տառապանք են կրում արդարության համար, իսկ ապագայում մարդիկ պիտի պարգևատրվեն արդարության համար և պատժվեն միայն անօրենության համար: Նրանց ճանապարհին մեծ խոչընդոտներ և թակարդներ կային, որոնք կհեռացվեն, երբ աշխարհը կհայտնվի փորձի առջև: Բայց քանի որ այս երկու առանձնահատուկ խմբերի փորձությունը շատ ավելի խիստ էր, քան աշխարհի փորձությունը, նրանց

վարձատրությունը համապատասխանաբար ավելի մեծ կլինի:

Մեծ խաբեբայի՝ Սատանայի, սոֆիստիկ հնարքների տակ թե աշխարհը, թե անվանական Եկեղեցին զրկվել են արդար դատաստանի գալիք ժամանակի օրհնյալ վստահություններից: Նրանք գիտեն, որ Աստվածաշունչը վկայում է գալիք դատաստանի օրվա մասին, սակայն նայում են դրան միայն վախով ու սարսափով, և այդ վախի պատճառով նրանց համար չկա ավելի անընդունելի լուր, քան այն, որ Տիրոջ օրը մոտ է: Նրանք այն հեռու են վանում իրենցից և անգամ չեն ցանկանում, որ դրա մասին խոսք անգամ հնչի: Նրանք ոչ մի պատկերացում չունեն այն օրհնությունների մասին, որոնք սպասվում են աշխարհին Նրա փառավոր իշխանության տակ, որին Աստված նշանակել է արդարությամբ դատելու աշխարհը: Սատանայի կողմից հորինված՝ մարդկանց վերջին դատաստանի ճշմարտությունից անտեղյակ պահելու ամենամեծ կուրացնող գործոններից մեկը տարբեր կրոնական հարանվանությունների վարդապետություններում և երգարաններում ներթափանցած սխալ ուսմունքներն են: Շատերը սկսեցին այդ սխալ ուսմունքները համարել ավելի կարևոր, քան Աստծո Խոսքը:

Որքան տարբեր կերպ էին մարգարեներն ու առաքյալները ընկալում այդ խոստացված դատաստանի օրը: Ուշադրություն դարձրեք Դավթի ուրախ մարգարեական խոսքերին (Ա Մնաց. 16:31-34). Նա ասում է՝

Թող երկինքն ուրախանա, երկիրը ցնծա,

Եվ ասեն ազգերի մեջ. «Եհովան թագավորում է»:

Ծովն իր լիությամբ թող գոռա,

Դաշտն ու նրանում բոլոր եղողները թող ուրախանան:

Այն ժամանակ կցնծան Եհովայի առաջ անտառի բոլոր ծառերը,

Քանզի նա գալիս է երկիրը դատելու:

Գոհացեք Եհովայից, քանի որ բարի է,

Որ նրա ողորմությունը հավիտյան է:

Նույն օրվա մասին է նաև նշում Առաքյալը, վստահեցնելով մեզ, որ դա փառավոր և բաղձալի օր կլինի, և որ դրա համար ամբողջ ստեղծվածները միասին հառաչում են և ցավի մեջ են՝ սպասելով Մեծ Դատավորին, որպեսզի նա ազատի և օրհնի աշխարհը, ինչպես նաև բարձրացնի և փառավորի Եկեղեցին (Հռոմ. 8:21,22):

Հովհաննես 5:28,29-ում աշխարհի համար հավիտենական կյանքի դատաստանի վերաբերյալ թանկագին խոստումը թարգմանական սխալի պատճառով վերածվել է սարսափելի անեծքի: Ըստ հունարեն բնագրի, նրանք որ չար գործեր են արել - որոնք չեն ստացել աստվածային հավանություն – դուրս պիտի գան դատաստանների, պատիժների, խրատների հարության (Կատարելություն բարձրանալու) համար: Նույնիսկ հայերեն Աստվածաշնչի տարբեր թարգմանություններում այս համարը տարբեր ձև է թարգմանված: Որոշ թարգմանություններում գրված է՝ «Դատապարտության հարություն» իսկ մյուսներում «Դատաստանի հարություն»: Մինչդեռ բոլորնել գիտեն, որ դատաստանը ու դատապարտությունը իրարից խիստ տարբերվում են և ունեն տարբեր նշանակություն:

ԳԼՈՒԽ 9

Փրկանք ԵՎ Վերահաստատություն

Վերահաստատություն, Երաշխավորված Փրկանքով - Փրկանքը Ապահովեց Ոչ Թե Հավիտենական Կյանքը, Այլ դրա ստացման փորձը - Փորձի պայմաններն ու Առավելությունները - Քրիստոսի Զոհաբերության Անհրաժեշտությունը - Ինչպես էր Հնարավոր Մեկի Մահով Փրկել Մարդկային Ցեղին և Ինչպես Դա Տեղի ունեցավ - Հավատն ու Գործերը Դեռևս Անհրաժեշտ Են - Կամավոր Մեղքի Վարձատրությունը Անխուսափելի է

Աստծո հայտնված ծրագրի մինչ այժմ ներկայացված ընդհանուր նկարագրությունից պարզ է, որ մարդկության համար Նրա նպատակը Եդեմում կորսված կատարելության և փառքի վերականգնումն է (վերահաստատություն): Այն վերականգնումը, որի մասին խոսել են առաքյալներն ու մարգարեները, պետք է հաջորդի փրկանքին որպես նրա արդար և տրամաբանական շարունակություն: Այս հարցում ամենահզոր և գոհացուցիչ ապացույցը առավել հստակ երևում է, երբ լիովին գնահատում ենք փրկանքի չափն ու բնույթը: Ըստ Աստծո կողմից փրկանք տրամադրման կարգադրությամբ, մարդկությունը (բացի նրանցից ովքեր գիտակցաբար կընդիմանան Մեծ Ազատարարի փրկարար ուժին) պետք է ազատվեն սկզբնական պատժից՝ «ապականության ստրկությունից», մահից, հակառակ դեպքում փրկանքը ոչ բոլորին կօգնի:

Այս առումով Պողոսի դատողությունը առավել քան պարզ ու ընդգծված է: Նա ասում է (Հռոմեացիներ 14:9).

«Քրիստոսը մահացավ և կրկին կենդանացավ, որպեսզի Տերը լինի [Ղեկավարը] ինչպես մահացածների, այնպես էլ կենդանի եղողների»: Այսինքն մեր Տիրոջ մահվան ու հարության նպատակը պարզապես միայն ողջերի վրա իշխելը, նրանց օրհնելը ու վերականգնելը չէր, ապա նաև իր բացարձակ իշխանությունը մեռելների[4] վրա տարածելն էր՝ և իր փրկանքի օրհնությունները բոլորին հավասարապես բաժանելը: Նա «իրեն տվեց որպես փրկանք [համապատասխան գին] բոլորի համար», որպեսզի օրհնի բոլորին և յուրաքանչյուր մարդու տա անհատական փորձ կյանք ստանալու համար: Ասել՝ թե Նա տվեց իրեն «փրկանք բոլորի համար», և միևնույն ժամանակ պնդել, որ միայն մի բուռ փրկագնվածներ երբևէ որևէ օգուտ կստանան դրանից, անհեթեթ է. քանի որ դա կնշանակեր, որ կամ Աստված ընդունեց փրկանքի գինը, Այնուհետև անարդարացիորեն հրաժարվեց ազատ արձակել փրկագնվածներին, կամ հակառակ դեպքում Տերը, փրկագնելով բոլորին, կամ չկարողացավ կամ էլ չցանկացավ իրականացնել սկզբնական բարեհաճ ծրագիրը: Աստվածային ծրագրերի անփոփոխելիությունը, (ոչ պակաս, քան աստվածային արդարության և սիրո կատարելությունը) մերժում և հերքում են նման միտքը և մեզ վստահություն են տալիս, որ սկզբնական և բարեհաճ ծրագիրը, որի հիմքը «բոլորի համար տրված փրկանքն» էր, ամբողջությամբ կիրականացվի Աստծո «որոշած

[4] Պաշտպանելով հանդերձ վերոհիշյալ խոսքի ճշմարտությունը՝ որ մեր Տերը իր մահվամբ ամբողջ մարդկային ընտանիքի Տերը կամ Իշխանը դարձավ, մենք առաքյալի խոսքերում ավելի խոր իմաստ ենք տեսնում: «Մահացածներ» արտահայտությունը ընդգրկում է ամբողջ մարդկային ցեղը: Աստծո տեսանկյունից մահվան դատապարտված ողջ մարդկությունը համարվում է մեռած (Մատթեոս 8:22), ուստի «կենդանի եղողներ» արտահայտությունը այլևս չի վերաբերում մարդկությանը, այլ նրանց, որոնց կյանքը չի կորսվել՝ հրեշտակներին:

ժամանակին», և հավատարիմ հավատացյալներին կբերի Ադամի դատապարտումից ազատվելու օրհնություն և հնարավորություն վերադառնալ Աստծո որդիների իրավունքներին ու ազատություններին, այն ամեն բաներին՝ որոնք գոյություն ունէին մեղքից ու անեծքից առաջ:

Երբ որ փրկանքի իրական բարիքներն ու արդյունքները հստակ տեսանելի դառնան, այդժամ անխուսափելիորեն կվերանան նրա համընդհանուր կիրառման դեմ բոլոր առարկությունները: «Մարդ Քրիստոս Հիսուսի» կողմից տրված «բոլորի համար փրկանքը» ոչ ոքի չի տալիս և չի երաշխավորում հավիտենական կյանք կամ օրհնություն, սակայն այն երաշխավորում է յուրաքանչյուր մարդու համար և՛ս մեկ հնարավորություն, և՛ս մեկ փորձ՝ հավիտենական կյանք ստանալու համար: Մարդու առաջին փորձը, որը ավարտվեց սկզբնական օրհնության կորստով, Աստծո կողմից տրված փրկանքի շնորհիվ, իրականում սրտով նվիրվածների համար օրհնված փորձառություն դարձավ: Բայց այն, որ մարդիկ փրկագնվել են առաջին պատժից, դեռ չի երաշխավորում, որ նրանք, ստանալով անհատական փորձ հավիտենական կյանք ձեռք բերելու համար, կհնազանդվեն, «հնազանդություն» առանց որի ոչ ոքի չի տրվի հավիտենական կյանք: Մարդը՝ մեղքի ու նրա դառը պատժի հետ ունեցած ներկա փորձառությամբ ամբողջությամբ զգուշացված կլինի, և երբ, փրկանքի շնորհիվ, իրեն տրվում է մեկ այլ, անհատական փորձ, նրա աչքի և վերահսկողության ներքո, ով այդքան սիրեց նրան, որ Իր կյանքը տվեց նրա համար, և ով չի ուզում, որ որևէ մեկը կորչի, այլ որ բոլորը դառնան Աստծո մոտ և ապրեն, մենք կարող ենք վստահ լինել, որ միայն կամավոր անհնազանդները կստանան երկրորդ դատաստանի կամ

փորձի պատիժը: Այդ պատիժը կլինի երկրորդ մահը, որի դիմաց չի լինի ոչ փրկանք, ոչ ազատում, որովհետև այլ փրկանքի կամ հետագա փորձության իմաստ չի լինի: Բոլորը լիովին տեսած ու ճաշակած կլինեն թե՛ բարին, թե՛ չարը. բոլորը կհավաստիանան և կզգան Աստծո բարությունն ու սերը, բոլորը կունեևան կյանքի համար լիարժեք, արդար, անհատական փորձ՝ առավել բարենպաստ պայմաններում: Սրանից ավելին անհնար է պահանջել, և ավելին չի էլ տրվի: Այս դատաստանը վերջնականապես կորոշի, թե ո՞վ կմնա արդար և սուրբ հազար փորձության մեջ, և ո՞վ հազար փորձության մեջ կմնա անարդար ու անմաքուր:

Անօգուտ կլիներ կյանքի մեկ այլ փորձ թույլ տալ նույն հանգամանքներում: Թեև փորձվողների հանգամանքները կլինեն տարբեր՝ ավելի բարենպաստ, նրանց անհատական հավիտենական կյանքի փորձի պայմանները կմնա նույնը, ինչ որ Ադամի փորձի դեպքում. Աստծո օրենքը կմնա նույնը՝ այն չի փոխվում: Այն դեռ կասի. «Այն հոգին, որ մեղք է գործում, կմեռնի»: Միջավայրի այն վիճակը որի մեջ կլինեն մարդիկ, Եդեմի պայմաններից չի լինի ավելի բարենպաստ: Սակայն մեծ տարբերություն կլինի գիտելիքի աճի առումով: Չարի փորձառությունը, եթե համեմատենք գալիք դարի փորձության մեջ յուրաքանչյուրի ձեռք բերած բարու փորձի հետ, կլինի այն առավելությունը, որի շնորհիվ երկրորդ փորձության արդյունքները այդքան շատ կտարբերվեն առաջինի արդյունքներից, և որը հաշվի առնելով աստվածային Իմաստությունը և Սերը պատրաստեցին «փրկանք բոլորի համար» և այդպիսով երաշխավորեցին բոլորին նոր փորձի օրհնությունը: Անհնար է պատկերացնել ավելի բարենպաստ փորձություն, ավելի բարենպաստ օրենք կամ ավելի

բարենպաստ պայմաններ կամ հանգամանքներ՝ որպես պատճառ մեկ այլ փրկանքի կամ փորձի:

Տրված փրկանքը ոչ ոքի մեղքը չի արդարացնում, այն չի ձգտում մեղավորներին սուրբ համարել և այդպիսով առաջնորդել հավիտենական երջանկության: Այն միայն ազատում է փրկանքը ընդունող մեղավորին առաջին դատապարտումից և դրա ուղղակի թե անուղղակի հետևանքներից և կրկին դնում է նրան կյանքի փորձի մեջ, որի ընթացքում նրա կամավոր հնազանդությունը կամ կամավոր անհնազանդությունը կորոշեն՝ արդյոք նա կունենա հավիտենական կյանք, թե ոչ:

Չպետք է ենթադրել (ինչպես շատերը հակված են անելու), որ բոլոր նրանք, ովքեր ապրում են քաղաքակիրթ հասարակությունում և տեսնում կամ տիրապետում են Աստվածաշնչին, ունեն կյանքի լիարժեք հնարավորություն կամ փորձ: Պետք է հիշել, որ Ադամի անկումը իր բոլոր զավակների վրա միևնույն չափով չի ազդել: Ոմանք աշխարհ են եկել այնքան թույլ ու դեգրադացված, որ Սատանային՝ այս աշխարհի աստծուն, հեշտ է նրանց կուրացնել և գայթակղել շրջապատող մեղքով: Բոլորը, այս կամ այն կերպ, գտնվում են այս ազդեցության տակ, և նույնիսկ եթե ցանկանան բարիք գործել, չարիքը ներկա է, և ավելի ազդեցիկ՝ միջավայրի, հանգամանքների և այլնի պատճառով: Ուստի այն բարիքը, որը նրանք ցանկանում են գործել, նրանց համար գրեթե անհնարին է, մինչդեռ չարիքը, որը նրանք ցանկանում են մերժել, գրեթե անխուսափելի է:

Փոքր է իսկապես նրանց թիվը, ովքեր ներկայիս ժամանակներում ճշմարտապես և փորձառաբար ճանաչում են այն ազատությունը, որով Քրիստոս ազատում է նրանց, ովքեր ընդունում են Նրա փրկանքը և

իրենց հանձնում Նրա ձեռքերին՝ հետագա առաջնորդության համար: Այնուամենայնիվ, միայն այս քչերը՝ Եկեղեցին, որը կանչված և նախապես փորձված է հատուկ նպատակով՝ դառնալու Աստծո համագործակիցը աշխարհը օրհնելու գործում (այժմ վկայելով, իսկ փորձության դարաշրջանում առաջնորդելով աշխարհին, օրհնելով այն և իրականացնելով նրա դատաստանը) — որոնք որոշ չափով վայելում են փրկանքի օգուտները, այսինքն՝ նրանք այժմ անցնում են կյանքի փորձությունը: Միայն այս քչերին են վերագրվում վերականգնման բոլոր օրհնությունները, որոնք ապագա դարաշրջանում կտրվեն աշխարհին (նրանք դրանք ստանում են հավատքի միջոցով): Չնայած նրանք դեռ կատարյալ չեն, և չեն վերականգնվել այն վիճակին, որը ուներ Ադամը, նրանք այդպիսին են համարվում: Փաստորեն, այս տարբերությունը նրանց համար փոխհատուցվում է: Քրիստոսի հանդեպ հավատքի շնորհիվ նրանք համարվում են կատարյալ, այսինքն՝ վերականգնված կատարելության և աստվածային շնորհի: Նրանց թերությունները և անխուսափելի տկարությունները, փրկանքի շնորհիվ փոխհատուցված լինելով, նրանց չեն վերագրվում, այլ ծածկվում են Փրկչի կատարելությամբ: Ուստի Եկեղեցու դատաստանը Քրիստոսով վերագրված դիրքի պատճառով, նույնքան արդար է, որքան այն դատաստանը, որին աշխարհը կենթարկվի իր ժամանակին: Ամբողջ աշխարհը կհասցվի Ճշմարտության լիակատար գիտության, և յուրաքանչյուր ոք, ընդունելով դրա սկզբունքներն ու պայմանները, այլևս չի համարվի մեղավոր, այլ որպես որդի, որի համար նախատեսված են վերականգնման բոլոր օրհնությունները:

Դատաստանի ենթարկված աշխարհի ու եկեղեցու փորձառության միջև եղած տարբերություններից մեկը

այն կլինի՝ որ աշխարհի հնազանդ մարդիկ անմիջապես կսկսեն վայելել վերականգնման օրհնությունները՝ աստիճանաբար վերացնելով իրենց մտավոր և ֆիզիկական թույլ կողմերը, մինչդեռ Ավետարանական Եկեղեցին, մինչև ի մահ նվիրված Տիրոջ ծառայությանը, մեռնում է և ակնթարթորեն ստանում է իր կատարելությունը առաջին հարության ժամանակ: Երկու փորձությունների միջև մեկ այլ տարբերություն կայանում է նրանում, որ գալիք դարաշրջանի պայմանները այսօրվա համեմատ ավելի բարենպաստ կլինեն՝ այն ժամանակ հասարակությունը, կառավարությունը և այլն կխրախուսեն արդարությունը, հավատքն ու հնազանդությունը, իսկ մեղքը կպատժեն, մինչդեռ այժմ, այս աշխարհի իշխանի տիրապետության տակ, Եկեղեցու փորձությունը ընթանում է արդարության, հավատքի և այլնի համար անբարենպաստ պայմաններում: Բայց սա, ինչպես տեսել ենք, փոխհատուցվում է Եկեղեցուն առաջարկվող աստվածային բնության փառքի ու պատվի պարգևով, հավիտենական կյանքի պարգևին հավելյալ:

Ադամի մահը անխուսափելի էր, թեև դրա իրականացումը տեղի ունեցավ աստիճանաբար 930 տարվա ընթացքում. և քանի որ նա այլևս մեռնող էակ էր, նրա բոլոր զավակները ծնվեցին նույն մահացող վիճակում, առանց կյանքի իրավունքի. և իրենց ծնողների պես՝ նրանք բոլորը ուշ թե շուտ մահանում են: Այնուամենայնիվ, պետք է հիշել, որ մեղքի պատիժը ոչ թե մահվան ժամանակ առաջացող ցավն ու տառապանքն է, այլ մահը՝ կյանքի դադարեցումը – որը մեռնելու ընթացքի վերջակետն է: Տառապանքը միայն ուղեկցում է այն, և շատերի համար այս պատիժը ուղեկցվում է միայն թեթև տառապանքով կամ առանց դրա: Պետք է նաև հիշել, որ երբ Ադամը կորցրեց իր կյանքը, այդ կորուստը

անդառնալի էր և նրա սերունդներից ոչ մեկը երբևէ չի կարողացել քավել իր մեղքը կամ վերականգնել կորցրած ժառանգությունը: Մարդկային ամբողջ ցեղը կամ մեռած է, կամ դեռ մահանում է: Եվ եթե մարդիկ չեն կարող քավել իրենց մեղքը մահվանից առաջ, ապա, բնականաբար, չեն կարող դա անել նաև մեռած վիճակում՝ երբ գոյություն ունենալուց դադարել են: Մեղքի պատիժը պարզապես մեռնելը չէր՝ կյանքի վերադառնալու արտոնությամբ և իրավունքով: Հայտարարված պատժի մեջ ազատման որևէ ակնարկ չկար (Ծննդոց 2:17): Ուստի վերահաստատությունը Աստծո կողմից ձրի շնորհի կամ ողորմության գործ է: Եվ հենց պատիժը կիրառվելուց, նույնիսկ այն հայտարարվելու պահին, հայտարարվեց Աստծո ձրի շնորհը, որը երբ իրականանա՝ կատարելապես ի հայտ կբերի նրա սերը:

Եթե չլիներ այն հույսի շողը, որ կնոջ սերունդը կջաղջախի օձի գլուխը, մարդկային ցեղը հուսահատության մատնված կլիներ: Սակայն այս խոստումը ցույց է տալիս, որ Աստված ծրագիր ունի ի նպաստ մարդկության: Երբ Աստված Աբրահամին երդվեց որ իր սերնդով երկրի բոլոր ազգերը կօրհնվեն, դա ենթադրում էր հարություն և վերականգնում բոլորի համար, քանի որ շատերը այն ժամանակ արդեն մեռած էին, իսկ մյուսները շարունակում էին մահանալ առանց օրհնություն ստանալու: Սակայն խոստումը անփոփոխ է՝ բոլորն էլ կօրհնվեն, երբ գա վերահաստատության կամ թարմության ժամանակները (Գործք առ. 3:19): Բացի այդ, քանի որ օրհնությունը արտահայտում է շնորհ, իսկ Աստծո շնորհը հետ վերցվեց և մեղքի պատճառով նրա անեծքը եկավ, ապա այս ապագա օրհնության խոստումը ենթադրում էր անեծքի վերացում և, հետևաբար, նրա շնորհի վերադարձը: Այն նաև ենթադրում էր, որ Աստված

կամ կմեղմանա, կփոխի իր վճիռը և կմաքրի մեղավոր ցեղը, կամ էլ որ նա ուներ մի ծրագիր, որով կկարողանար փրկել մարդկային ցեղը՝ վերջինիս պատիժը մեկ ուրիշի վրա դնելով:

Աստված Աբրահամին կասկածի մեջ չթողեց, թե ինչ էր իր ծրագիրը, այլ տարբեր խորհրդանշական զոհերի միջոցով, (որոնք պարտավոր էին իրեն բոլոր մոտեցողները բերել), ցույց տվեց, որ նա չի կարող և չի ներում մեղքը, և որ միակ ճանապարհը մեղքը ջնջելու և պատիժը վերացնելու համար բավարար զոհաբերություն մատուցելն է, որը կհամապատասխանի այդպիսի պատժին: Սա Աբրահամին ցույց տրվեց ամենաազդեցիկ ձևով. նրա որդին, որի մեջ կենտրոնացած էր խոստացված օրհնությունը, նախ պետք է զոհ դառնար, որպեսզի կարողանար օրհնել, և Աբրահամը նրան որպես նախատիպ ստացավ մեռելներից (Հեբր. 11:19): Այդ պատկերում Իսահակը խորհրդանշում էր իսկական սերունդը՝ Քրիստոս Հիսուսին, ով մեռավ մարդկանց փրկագնելու համար, որպեսզի բոլոր փրկագնվածները ստանան խոստացված օրհնությունը: Եթե Աբրահամը մտածեր, որ Տերը կների և կարդարացնի մեղավորներին, նա կզգար, որ Աստված փոփոխական է, և, հետևաբար, չէր կարող լիակատար վստահություն ունենալ իրեն տրված խոստման նկատմամբ: Նա կարող էր այսպես մտածել. «Եթե Աստված մեկ անգամ փոխել է իր միտքը, ինչո՞ւ չի կարող փոխել այն կրկին»: Եթե նա մեղմացավ մահվան անեծքի հարցում, ինչո՞ւ չի կարող ետ կանգնել նաև խոստացված ողորմության և օրհնության հարցում: Բայց Աստված մեզ չի թողնում այդպիսի անորոշության մեջ: Նա տալիս է բավարար ապացույցներ Իր արդարության և անփոփոխության մասին:

Ինչպես ամբողջ մարդկային ցեղը Ադամի մեջ էր, երբ նա դատապարտվեց և նրա միջոցով կորցրեց կյանքը, այնպես էլ, երբ Հիսուս «իրեն տվեց որպես փրկանք բոլորի համար», նրա մահը ներառում էր իր երանքում դեռ չծնված ցեղի հնարավորությունը (Նրա երանքում էլ մեռավ սերունդ): Այսպիսով, բոլոր մարդկանց համար լիակատար հատուցում կամ համապատասխան գին դրվեց Արդարության ձեռքում՝ «իր ժամանակին» կիրառելու համար, և նա, ով այսպես գնեց բոլորին, ունի լիակատար իշխանություն վերականգնելու բոլոր նրանց, ովքեր նրա միջոցով գալիս են Աստծո մոտ: (Ամեն մարդու համար արդարության կատարյալ հատուցում կամ համապատասխան գին տրվեց):

Ուրեմն ինչպես մեկ հանցանքի հետևանքով ամեն տեսակ մարդկանց վրա դատապարտություն եկավ, այդպես էլ արդարացում բերող մեկ արարքի արդյունքում ամեն տեսակ մարդիկ արդար են հայտարարվում կյանքի համար: Եվ ինչպես մեկ մարդու անհնազանդությամբ շատերը մեղավորներ դարձան, այդպես էլ մեկ մարդու հնազանդությամբ շատերը արդարներ կդառնան: (Հռոմ. 5:18,19): Վերոհիշյալ խոսքերը բավականին պարզ են. բոլոր նրանք, ովքեր Ադամի մեղքի պատճառով մահվան արժանացան, մեր Տեր Հիսուսի կողմից կստանան կյանքին հասնելու հնարավորություններ, Ով նրանց համար մեռավ և (Իր զոհաբերության միջոցով) դարձավ Ադամի փոխանորդը խախտված օրենքի առջև՝ «Իրեն տալով որպես փրկանք բոլորի համար»: Նա մեռավ «արդարը՝ անարդարների համար, որպեսզի մեզ մոտեցնի Աստծուն» (Ա Պետրոս 3:18): Սակայն երբեք չպետք է մոռանանք, որ մեր մարդկային ցեղի համար Աստծո բոլոր մտադրությունները հաշվի են առնում մարդու կամքը որպես այն գործոնը, որը մեզ հնարավորություն է տալիս

ստանալ այդքան առատորեն շնորհված աստվածային օրհնությունները: Ոմանք անտեսում են այս կետը, վերոհիշյալ համարները ուսումնասիրելիս (Հռոմեացիներ 5:18,19). Այնուամենայնիվ, առաքյալը հայտարարում է, որ ինչպես դատապարտման վճիռը տարածվեց Ադամի ամբողջ սերնդի վրա, այնպես էլ մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հոր ծրագրի հանդեպ ցույց տրված հնազանդությամբ և մեր համար մատուցված զոհաբերության միջոցով բոլորին շնորհվեց ձրի պարգև՝ ներողամտության պարգև, որը, եթե ընդունվի, կհանդիսանա արդարացման և հավիտենական կյանքի հիմք: Եվ «ինչպես մեկ մարդու անհնազանդությամբ շատերը մեղավորներ դարձան, այդպես էլ մեկ մարդու հնազանդությամբ շատերը արդարներ կդառնան [և ոչ թե դարձան]»: Եթե փրկանքը ինքնին, առանց մեր այն ընդունելու, մեզ արդարացներ, ապա այն կկարդացվեր այսպես՝ «Մեկ մարդու հնազանդությամբ շատերը արդարներ դարձան»:

Բայց թեև փրկանքի գինը Փրկչի կողմից վճարվել է, Ավետարանական դարաշրջանում միայն մի քանիսն են արդարացվել՝ «Նրա արյան նկատմամբ հավատքի միջոցով»: Քանի որ Քրիստոսը ողջ աշխարհի մեղքերի քավությունն (հատուցումն) է, բոլոր մարդիկ կարող են Նրա միջոցով՝ Նոր Ուխտի ներքո, արդարացվել և ազատվել Ադամի մեղքի պատժից:

Աստծո մոտ անարդարություն չկա, ուստի «Եթե խոստովանենք մեր մեղքերը, նա հավատարիմ է ու արդար՝ մեր մեղքերը մեզ ներելու և մեզ բոլոր անիրավություններից մաքրելու համար» (Ա Հովհ. 1:9): Որքան անարդար կլիներ թույլ տալ մեզ խուսափել հայտարարված պատժից մինչև հատուցումը կատարվեր,

այնպես էլ անարդար կլիներ մեր վերականգնմանը արգելք դնել, քանի որ իր իսկ կարգադրությամբ մեր պատիժը վճարվել է մեր փոխարեն: Նույն անշեղ արդարությունը, որը մի ժամանակ մարդուն դատապարտեց մահվան, այսօր ազատության երաշխիք է բոլոր նրանց համար, ովքեր, խոստովանելով իրենց մեղքերը, կյանք են խնդրում Քրիստոսի միջոցով: «Ո՞վ է, որ Աստծու ընտրյալներին մեղադրելու է. Աստված է, որ արդարացնում է: Ո՞վ է, որ դատապարտելու է: Քրիստոս Հիսուսը, որ մեռավ, ավելին՝ որ հարություն էլ առավ, Աստծու աջ կողմում է և մեզ համար բարեխոս էլ է» (Հռոմեացիներ 8:33-34):

Փրկանքի կատարելությունը ամենազօրավոր փաստն է՝ բոլոր մարդկանց վերահաստատության օգտին, ովքեր կընդունեն այն առաջարկվող պայմաններով (Հայտնություն 22:17): Աստծո արդար ու պատվախնդիր բնույթը այս բանի ապահով երաշխիքն է: Նրա յուրաքանչյուր խոստումը վկայում է այս մասին: Յուրաքանչյուր խորհրդանշական զոհը մատնանշում էր ավելի մեծ ու բավարար զոհաբերություն՝ «Աստծո Գառին, որ վերցնում է [իր վրա] ԱՇԽԱՐՀԻ ՄԵՂՔԸ», Նա մեր՝ [Եկեղեցու] «մեղքերի քավությունն [հատուցումն] է. ու ոչ միայն մեր, այլ նաև ամբողջ աշխարհի» (Հովհ. 1:29, Ա Հովհ. 2:2). Եվ քանի որ մեղքի պատիժը կամ վարձը մահն է, հետևաբար, երբ որ մեղքը ջնջված է, պետք է որ վարձն էլ դադարի: Յուրաքանչյուր այլ տեսակետ անհիմն և անարդար կլիներ: Այն իրողությունը որ մինչև հիմա Ադամական կորուստից որևէ վերադարձ չի տեղի ունեցել, թեև մեր Տիրոջ մեռնելուց անցել է մոտ երկու հազար տարի, չի ապացուցում որ վերահաստատություն տեղի չի ունենա. Ինչպես որ նրա մահվանից առաջ չորս հազար տարիները ապացույց չէին, որ Աստված փրկագնումը աշխարհի հաստատվելուց առաջ չի ծրագրել: Քրիստոսի

մահից անցած երկու հազար տարիներն ու Նրա մահից առաջ եղած չորս հազար տարիները Աստծո գործի ուրիշ մասերի իրականացման համար նախագծված ժամանակներ էին. Նախապատրաստական քայլեր՝ «Ամեն բաների վերականգմնան ժամանակներ»ին առաջնորդող:

Թող ոչ ոք չշտապի եզրակացնել, որ այս տեսակետը որևէ կերպ հակասում է Սուրբ Գրքի ուսմունքին, ըստ որի Աստծո հանդեպ հավատը, մեղքի համար զղջումն ու բնավորության փոփոխությունը անհրաժեշտ են փրկության համար: Այս հարցը հետագայում ավելի մանրամասն կքննարկենք, սակայն այժմ հիշենք, որ մինչ օրս միայն մի քանիսն են ունեցել բավարար լույս՝ լիակատար հավատքի, ապաշխարության և վերափոխման հասնելու համար: Ոմանք մասամբ, ոմանք էլ ամբողջությամբ կուրացել են այս աշխարհի աստծո կողմից, և նրանց պետք է փրկել և՛ կուրությունից, և՛ մահից, որպեսզի յուրաքանչյուրն ինքնուրույն լիակատար հնարավորություն ունենա՝ հնազանդությամբ կամ անհնազանդությամբ ապացուցելու իր արժանավորությունը կամ անարժանությունը հավիտենական կյանքի համար: Նրանք, ովքեր կհայտնվեն անարժան կյանքի, կրկին կմահանան՝ երկրորդ մահվամբ, որի համար փրկություն չի լինի և, հետևաբար, հարություն ևս չի լինի: Ադամի մեղքի պատճառով եկող մահը և դրա հետևանքով առաջացող բոլոր անկատարությունները կհեռացվեն, Հիսուս Քրիստոսի կատարած փրկագնման շնորհիվ, սակայն անհատական, կամավոր ապստամբության արդյունքում առաջացող մահը վերջնական է: Այս մեղքը երբեք չի ներվում, և դրա պատիժը՝ երկրորդ մահը, հավիտենական է՝ ոչ թե հավիտենական մահվան աստիճանաբար

գործընթաց, այլ հավիտենական մահ՝ այնպիսի մահ, որը չի ընդհատվում հարության կողմից:

Փրկության ծրագրի փիլիսոփայությունը կքննարկվի հաջորդ հատորում: Այստեղ մենք միայն հաստատում ենք այն փաստը, որ Քրիստոս Հիսուսի միջոցով փրկությունը իր օրհնյալ արդյունքներով և հնարավորություններով պետք է նույնքան լայնածավալ լինի, որքան Ադամի մեղքը իր հուսախաբություններով և ավերածությամբ, — որպեսզի բոլոր նրանք, ովքեր դատապարտվել և տառապել են մեկի պատճառով, նույնքան վստահորեն, «իր ժամանակին», ազատվեն բոլոր այդ չարիքներից մեկ ուրիշի շնորհիվ: Այնուամենայնիվ, ոչ ոք չի կարող գնահատել այս Սուրբ Գրքի փաստարկը, եթե չի ընդունում Սուրբ Գրքի հայտարարությունը, որ մահը՝ գոյության վերացումը, մեղքի վարձքն է: Նրանք, ովքեր մահը համարում են տանջանքի մեջ ապրել, ոչ միայն անտեսում են «մահ» և «կյանք» բառերի՝ որպես հակադիր հասկացությունների նշանակությունը, այլև երկու անհեթեթության մեջ են ընկնում: Անհեթեթ է ենթադրել, որ Աստված Ադամին հավիտենական տանջանքների է մատնել, իր գործած որևէ մեղքի համար, իսկ առավել ևս՝ համեմատաբար փոքր մեղքի համար՝ արգելված պտուղը ուտելու համար: Եթե Հիսուսը մարդկությունը փրկելու համար մեր տեղը (մեր համար) գնաց դեպի մահ, որպեսզի մենք դրանից ազատվենք, միթե՞ ապացույց չէր, որ այն մահը որ նա ճաշակեց անարդարների համար, այն միևնույն տեսակն էր՝ որին դատապարտված էր ողջ մարդկությունը: Արդյո՞ք Նա մեր մեղքերի համար կրում է հավիտենական տանջանքներ: Իսկ եթե ոչ, եթե նա մեղքերի համար մեռավ՝ ապա մեր մեղքերի պատիժնել մահը պետք է լինի, և ոչ թե կյանքը որևէ իմաստով կամ ձևով:

Բայց ահա թե ինչն է տարօրինակ: Ոմանք, պարզելով, որ հավիտենական տանջանքների տեսությունը անհամատեղելի է այն պնդման հետ, որ «Տերը նրա վրա դրեց մեր բոլորի անօրենությունը» և որ «Քրիստոս մեռավ մեր մեղքերի համար», և տեսնելով, որ դրանցից մեկը կամ մյուսը պետք է մերժվի որպես ակնհայտ հակասություն, այնքան են կպչել հավիտենական տանջանքների գաղափարին և այն այնպես են սիրում, ինչպես մի անուշ պատառ, որ կառչում են դրանից՝ հակառակվելով Սուրբ Գրքի ուսուցմանը, գիտակցաբար հերքելով, որ Հիսուսը վճարել է աշխարհի փրկանքը, չնայած որ Աստվածաշնչի յուրաքանչյուր էջը սա է ուսուցանում:

ԳԼՈՒԽ 10

Հոգեղեն և Մարմնեղեն Բնությունները Անջատ են և Տարբեր

Տարածված Սխալ Պատկերացումներ – Երկրային կամ Մարդկային և Երկնային կամ Հոգեղեն Բնություններ – Երկրային Փառք և Երկնային Փառք - Հոգեղեն Էակների Վերաբերյալ Աստվածաշնչյան Վկայություն – Մահկանացություն և Անմահություն Կարո՞ղ են Մահկանացու Արարածները ունենալ Հավիտենական Կյանք Արդարություն Շնորհի Բաշխման Մեջ – Ենթադրյալ Սկզբունքի Քննարկում Բազմազանություն Կատարելության Մեջ – Աստծո Գերագույն Իրավունքները Մարդու Համար Աստծո Կանխահոգածությունը Գոհացուցիչ Բաժին է - Քրիստոսի Մարմնի Ընտրությունը - Ինչպե՞ս է Տեղի ունենում Նրանց Բնության Փոփոխությունը:

Չտեսնելով, որ Աստծո ծրագիրը մարդկության համար ընդհանուր առմամբ նախատեսում է վերականգնում իր նախկին վիճակին՝ Եդեմում կորսված մարդկային կատարելությանը – և որ քրիստոնեական եկեղեցին, որպես այս ընդհանուր ծրագրի բացառություն, պետք է ենթարկվի մարդկային բնությունից դեպի հոգեղեն բնություն փոխակերպմանը, հետևաբար քրիստոնյաների մեծամասնությունը եզրակացրել է, որ ոչ ոք չի փրկվի, բացի նրանցից, ովքեր ձեռք են բերել հոգեղեն բնություն: Այնուամենայնիվ, Սուրբ Գրությունները, որոնք հաստատում են կյանքի, օրհնության և վերականգնման խոստումները երկրի բոլոր ընտանիքների համար, միայն

Ավետարանական դարաշրջանում ընտրված Եկեղեցուն են առաջարկում և խոստանում դեպի հոգեղեն բնության փոփոխություն: Եվ ոչ մի հատված չի գտնվի, որը կարող է հիմնավորել նման հույսեր որևէ մեկ ուրիշի համար:

Երբ մարդկության զանգվածները փրկվեն մեղքի բոլոր հետևանքներից՝ անկում, թուլություն, ցավ, դժբախտություն և մահ, և վերականգնվեն անկումից առաջ գոյություն ունեցած մարդկային կատարելության վիճակին, նրանք նույնքան իրապես և ամբողջությամբ փրկված կլինեն այդ անկումից, որքան նրանք, ովքեր Ավետարանական դարաշրջանի հատուկ «բարձր կոչի» ներքո դառնում են «աստվածային բնության մասնակիցներ»:

Կատարյալ մարդու հատկանիշների ոչ ճիշտ ընկալման, «մահկանացու» և «անմահ» տերմինների սխալ ըմբռնումը, ինչպես նաև արդարության սխալ գաղափարները միասին հանգեցրել են բազմաթիվ նախկինում հեշտությամբ հասկացվող տողերի սխալ մեկնաբանությանը և խճճմանը: Ընդհանուր կարծիք կա, թեև Աստվածաշնչի ոչ մի տեքստով չհաստատված, որ կատարյալ մարդ երբեք երկրի վրա չի եղել, որ երկրի վրա մարդու տեսածը միայն մասամբ զարգացած մարդն է, և որ կատարելության հասնելու համար նա պետք է դառնա հոգեղեն: Այսպիսի տեսակետը խճճում է Աստվածաշունչը, փոխարենը բացահայտելու այն ներդաշնակությունը ու գեղեցկությունը, որը բխում է ճշմարտության խոսքի ճիշտ բացատրությունից:

Սուրբ Գիրքը սովորեցնում է, որ եղել են երկու, և միայն երկու կատարյալ մարդ՝ Ադամն ու Հիսուսը: Ադամը ստեղծվել է Աստծո պատկերով՝ նույն մտավոր ունակություններով՝ մտքի, հիշողության,

բանականության և կամքի, ինչպես նաև բարոյական հատկանիշներով՝ արդարություն, ողորմություն, սեր և այլն: «Երկրից՝ երկրային»՝ նա հոգեղեն էակների երկրային պատկերն էր, նույնանման հատկություններով, թեև էապես տարբերվում էր աստիճանով, սահմանով և մեծությամբ: Մարդն այնքան Աստծո պատկերն է, որ անգամ ընկած մարդուն Աստված կարող է ասել. «Հիմա եկեք, վիճաբանենք (տրամաբանենք)» (Ես. 1:18):

Ինչպես Եհովան ամեն բաների վրա կիշխե, այնպես էլ մարդը ստեղծվել է երկրի վրա ամեն բաների իշխան լինելու համար. «Թող նա իշխի ծովի ձկների ու երկնքի թռչունների, անասունների ու ամբողջ երկրի վրա» (Ծննդոց 1:26): Մովսեսը մեզ ասում է (Ծննդոց 1:31), որ Աստված ճանաչեց այն մարդուն, որին Նա ստեղծել էր (ոչ միայն սկսել, այլ ավարտին հասցնելով), այսինքն՝ Նա Իր ստեղծածը համարեց «շատ լավ», կատարյալ, քանի որ Աստծո համար Նրա բանական արարածների մեջ կատարելության չհասածը չի համարվում չափազանց լավ:

Ստեղծված մարդու կատարելությունը նկարագրվում է Սաղմոս 8:5–8-ում՝ «Նրան մի քիչ ցածրացրիր երկնային էակներից, բայց փառքով ու պատվով պսակեցիր նրան, Դու իշխան կարգեցիր նրան քո ձեռքի գործերի վրա. ամեն բան դրեցիր նրա ոտքերի տակ՝ Բոլոր ոչխարներն ու եզները, նաև վայրի գազանները, Երկնքի թռչուններն ու ծովի ձկները, և ինչ որ անցնում է ծովի ճանապարհներով»: Ոմանք, ցանկանալով Աստվածաշունչը հարմարեցնել էվոլյուցիայի տեսությանը, առաջարկել են, որ Եբր. 2:7-ում «մի քիչ» արտահայտությունը կարելի է հասկանալ որպես «կարճ ժամանակով»՝ այլ ոչ թե հրեշտակներից ցածր լինելու իմաստով: Բայց նման մեկնաբանության համար ոչ մի

հիմք կամ պատճառ չկա: Այս բառերը մեջբերված են Սաղմոս 8:5-ից, և եբրայերեն ու հունարեն տեքստերի քննադատական համեմատությունը ոչ մի կասկած չի թողնում դրանց իմաստի վերաբերյալ: Այստեղ արտահայտված գաղափարը պարզ է՝ հրեշտակներից մի փոքր ցածր կարգի:

Սաղմոսում Դավիթը խոսում է մարդու սկզբնական վիճակի մասին և մարգարեաբար նշում է, որ Աստված չի լքել Իր սկզբնական ծրագիրը՝ մարդուն Իր պատկերով, որպես երկրի թագավոր դարձնելու, և որ Նա կհիշի նրան, կփրկի նրան և կվերականգնի նրան: Առաքյալը (Եբր. 2:7)-ում ուշադրություն է հրավիրում նույն փաստին՝ որ Աստծու սկզբնական նպատակը լքված չէ, որ մարդը սկզբում վսեմ ու կատարյալ էր, երկրի թագավորը պիտի հիշվի, պիտի այցելվի ու վերականգվի: Այնուհետև նա ավելացնում է, որ մենք դեռ չենք տեսնում այս խոստացված վերականգնումը, սակայն տեսնում ենք Աստծո առաջին քայլը դրա իրականացման ուղղությամբ: Մենք տեսնում ենք Հիսուսին, մարդկային կատարելության փառքով ու պատվով պսակված, որպեսզի Նա (որպես համապատասխան փրկանք կամ մարդկության փոխանորդ) Աստծո շնորհով մահ ճաշակի ամեն մարդու համար և այդպիսով հարթի ճանապարհը մարդու վերականգնման համար դեպի այն ամենը, ինչ կորսվել էր: Ռոթերհեմը՝ ամենա բարեխիղճ թարգմանիչներից մեկը, այս հատվածը թարգմանում է այսպես՝

«Ի՞նչ է մարդը՝ զոր դուն կը հիշես

Եվ կամ մարդու որդին՝ որուն կայցելես

Դու զայն պատգամաբերներից քիչ մը ավելի պզտիկ ըրիր

Փառքով ու պատվով պսակեցիր,

Ու զայն ձեռագործներուդ վրա նշանակեցիր»

Չպետք է ենթադրել, որ աստիճանով մի փոքր ցածր լինելը նշանակում է մի փոքր պակաս կատարյալ լինել: Մի արարած կարող է կատարյալ լինել, սակայն գոյության ավելի ցածր հարթակում գտնվել, քան մեկ ուրիշը: Այսպիսով, կատարյալ ձին կլինի ավելի ցածր, քան կատարյալ մարդը, և այլն: Կան զանազան բնություններ՝ կենդանի և անկենդան: Սա պատկերացնելու համար մենք կազմել ենք հետևյալ աղյուսակը:

Հոգեղեն գոյության աստիճանները	Երկրային կամ կենդանական գոյության աստիճանները	Բուսական աշխարհի աստիճանները	Միներալների աստիճանները
Աստվածային	Մարդ	Ծառեր	Ոսկի
----------	Կենդանի	Թփեր	Արծաթ
----------	Թռչուն	Խոտեր	Պղինձ
Հրեշտակային	Ձուկ	Մամութներ	Երկաթ

Հիշատակված մետաղներից յուրաքանչյուրը կարող է մաքուր լինել, սակայն ոսկին զբաղեցնում է ամենաբարձր տեղը: Եթե բուսականության յուրաքանչյուր տեսակ կատարյալ դառնար, դրանք բնույթով և կարգով դեռևս կտարբերվեին: Նույնն է նաև կենդանիների դեպքում. եթե յուրաքանչյուր տեսակ կատարյալ դառնա, այնուամենայնիվ կմնա տեսակների բազմազանություն, քանի որ բնույթի կատարելագործումը չի փոխում նրա

բնությունը[5]: Նույն կերպ՝ հոգևոր էակների մակարդակները, չնայած իրենց կատարելությանը, միմյանց նկատմամբ բնությամբ կամ տեսակով ավելի բարձր կամ ավելի ցածր են: Աստվածային բնությունը բոլոր հոգեղեն բնություններից ամենաբարձրն ու գերազանցն է: Քրիստոսը Իր հարության ժամանակ «ավելի լավ» դարձավ կատարյալ հրեշտակներից, որքան որ աստվածային բնությունն է գերազանցում հրեշտակային բնությանը (Եբր. 1:3-5):

Ուշադիր նկատեք, որ չնայած վերոհիշյալ աղյուսակում նշված դասակարգերը տարբեր և առանձին են, այնուամենայնիվ, նրանց միջև կարելի է համեմատություն անցկացնել այսպես. հանքային աշխարհի ամենաբարձր մակարդակը ստորադաս է կամ մի փոքր ցածր բուսական աշխարհի ամենացածր մակարդակից, քանի որ բուսականության մեջ կյանք կա: Իսկ, բուսական աշխարհի ամենաբարձր մակարդակը մի փոքր ցածր է կենդանական աշխարհի ամենացածր դասից, քանի որ կենդանական կյանքը, անգամ իր ամենացածր ձևով, բավականաչափ ընկալունակ է, որպեսզի գիտակցի իր գոյությունը: Նույնպես մարդը, թեև կենդանիների կամ երկրային արարածների մեջ ամենաբարձրն է, «հրեշտակներից մի փոքր ցածր է»,

[5] «Բնություն» բառը հաճախ օգտագործվում է փոխաբերական իմաստով: Օրինակ՝ կարելի է ասել, որ շունը վայրենի բնություն ունի, կամ որ ձին ազնիվ բնություն ունի կամ վատ բնության տեր է: Սակայն նման օգտագործումը պարզապես ցույց է տալիս նկարագրվողի բնավորությունը՝ համեմատած մյուսների հետ, և, անկեղծ ասած, որևէ առնչություն չունի բնության հետ:

որովհետև հրեշտակները հոգեղեն կամ երկնային արարածներ են:

Այնուամենայնիվ, զարմանալի տարբերություն կա այսօր մեղքով անարգված մարդու և Աստծո կողմից Իր պատկերով ստեղծված կատարյալ մարդու միջև: Մեղքը աստիճանաբար փոխել է նրա արտաքինը, ինչպես նաև նրա բնավորությունը: Տգիտությունը, անառակությունը և ընդհանուր անկումը այնքան են աղավաղել և պղծել մարդկությանը, որ, մեծ մասամբ, մեր ցեղը գրեթե կորցրել է Աստծո նմանությունը: Բարոյական և մտավոր հատկությունները նվազել են, իսկ կենդանական բնազդները, անկանոն կերպով զարգացած՝ այլևս չեն հավասարակշռվում բարձրագույն հատկությունների հետ: Մարդը կորցրել է իր ֆիզիկական ուժը այն աստիճան, որ, չնայած բժշկական գիտության բոլոր օգնությանը, նրա միջին կյանքի տևողությունը մոտ երեսուն տարի է, մինչդեռ սկզբում նա նույն պատժի տակ ապրել է ինը հարյուր երեսուն տարի: Եվ չնայած մեղքը և դրա պատիժը՝ մահը, որը գործում է նրա մեջ, ապականել և նվաստացրել են մարդուն, նա պետք է վերականգնվի իր սկզբնական մտքի և մարմնի կատարելությանը, փառքին, պատվին և իշխանությանը՝ Քրիստոսի հազարամյա թագավորության ընթացքում և դրա միջոցով: Այն, ինչ պետք է վերականգնվի Քրիստոսի միջոցով, այն է, ինչ կորցվել էր Ադամի ապստամբության պատճառով (Հռոմ. 5:18,19): Մարդը չկորցրեց երկնային, այլ երկրային դրախտը: Մահվան պատժի տակ նա չկորցրեց հոգեղեն, այլ մարդկային գոյությունը, և ամենը, ինչ կորսվել էր, գնվեց նրա Փրկչի կողմից, ով հայտարարեց, որ եկել է փնտրելու և փրկելու կորածին (Ղուկաս 19:10):

Ավելին, մենք ունենք ապացույց, որ կատարյալ մարդը հոգեղեն էակ չէ: Մեզ ասվում է, որ մեր Տերը, նախքան իր փառքը թողնելը՝ մարդ դառնալու համար, «Աստծո կերպարանք ուներ»՝ հոգեղեն կերպարանք, հոգեղեն էակ, սակայն մարդկության փրկագին լինելու համար պետք է, որ մարդ դառնար, միևնույն բնությամբ, ինչ մեղավորը, միայն թե կատարյալ՝ որպեսզի իր մահվամբ կարողանար վճարել նրա փրկության գինը և դրա համար անհրաժեշտ էր, որ նրա բնությունը փոխվեր: Եվ Պողոսն ասում է, որ նա չվերցրեց հրեշտակների բնությունը, որը մեկ աստիճան ցածր էր իր սեփականից, այլ իջավ երկու աստիճանով և վերցրեց մարդկանց բնությունը՝ դարձավ մարդ, նա «մարմին առավ» (Եբր. 2:16, Փիլ. 2:7,8 Հովհ. 1:14):

Նկատեք, որ սա ոչ միայն սովորեցնում է, որ հրեշտակային բնությունը միակ հոգեղեն էակների կարգը չէ, այլև որ այն ավելի ցածր բնություն է, քան այն բնությունը, որը մեր Տերը ուներ նախքան մարդ դառնալը: Ավելին, Նա այն ժամանակ այնքան բարձր չէր, որքան այժմ է, քանի որ «Աստված խիստ բարձրացրեց Նրան» իբրև վարձատրություն մարդու համար կամավոր փրկանք դառնալու հնազանդության պատճառով (Փիլ. 2:8,9): Այժմ Նա պատկանում է հոգեղեն էակների ամենաբարձր կարգին՝ Նա կիսում է աստվածային (Եհովայի) բնությունը:

Այսպիսով, մենք ոչ միայն գտնում ենք ապացույց, որ աստվածային, հրեշտակային և մարդկային բնությունները անջատ են և տարբերվում են միմյանցից, այլև ընդունում ենք, որ կատարյալ մարդ լինելը ընդհանրապես չի նշանակում հրեշտակ լինել, ինչպես որ հրեշտակային բնության կատարելությունը չի նշանակում,

որ հրեշտակները աստվածային են և հավասար Եհովային: Հիսուսը չստացավ հրեշտակային բնություն, այլ ընդունեց մեկ այլ՝ մարդկային բնություն, սակայն ոչ այն անկատար մարդկային բնությունը, որը մենք այսօր ունենք, այլ կատարյալ բնություն: Նա դարձավ մարդ, բայց ոչ այնպիսի մարդ, ինչպիսին մարդիկ են այսօր՝ ընկած և գրեթե մեռած, այլ մարդ՝ կատարելության լիարժեք ուժով:

Բացի այդ, Հիսուսը պետք է լիներ կատարյալ մարդ, հակառակ դեպքում նա չէր կարող պահպանել կատարյալ օրենքը, որը կատարյալ մարդու կարողության լիակատար չափն է: Եվ նա պետք է լիներ կատարյալ մարդ, այլապես չէր կարող փրկագին (համապատասխան գին՝ Ա Տիմ. 2:6) վճարել կատարյալ մարդ Ադամի կորցրած կյանքի համար. «Քանի որ մարդով եղավ մահը, մարդով եղավ նաև մեռելների հարությունը» (Ա Կոր. 15:21): Եթե նա անգամ ամենափոքր չափով անկատար լիներ, ապա դա կհաստատեր, որ նա դատապարտման տակ էր, և, հետևաբար, չէր կարող լինել ընդունելի զոհաբերություն, և ոչ էլ կարող էր կատարյալ կերպով պահպանել Աստծո օրենքը: Կատարյալ մարդը փորձության ենթարկվեց, ձախողվեց և դատապարտվեց, և միայն կատարյալ մարդը կարող էր վճարել համապատասխան գինը որպես Փրկագնող:

Հիմա հարցը բնականաբար առաջ է գալիս մեզ մոտ այլ ձևով. եթե Հիսուսը մարմնով կատարյալ մարդ էր, ինչպես վկայում է Սուրբ Գիրքը, միթե սա չի ապացուցում, որ կատարյալ մարդը մարդկային, ֆիզիկական էակ է՝ ոչ թե հրեշտակ, այլ նրանցից մի փոքր ցածր: Այսպիսի տրամաբանական եզրակացությունը անսխալ է: Բացի այդ, ունենք Սաղմոսերգուի ներշնչված խոսքերը (Սաղմոս 8:5–9) և Պողոս առաքյալի հղումը դրան (Եբր. 2:7–9):

Հիսուսը նաև երկու բնությունների՝ մարդկայինի և հոգեղենի, խառնուրդ չէր: Երկու բնությունների խառնուրդը չի ստեղծում ոչ մեկը, ոչ մյուսը, այլ անկատար, խառնածին մի էակ, որը հակասում է աստվածային կարգին: Երբ Հիսուսը մարմնի մեջ էր, նա կատարյալ մարդկային էակ էր, մինչ այդ նա կատարյալ հոգեղեն էակ էր, իսկ հարությունից հետո նա բարձրագույն կամ աստվածային դասի կատարյալ հոգեղեն էակ է: Հիսուսը ստացավ աստվածային բնության ժառանգության երաշխիքը (Մատթ. 3:16, 17) իր մինչև մահ նվիրման պահից, ինչը խորհրդանշորեն արտահայտվեց նրա մկրտությամբ երեսուն տարեկանում (ըստ Օրենքի՝ հասունության տարիք և որպես մարդ նվիրվելու համապատասխան ժամանակ): Նա Աստվածային բնության նույնիսկ գրավը ստանալուց առաջ պետք է իր մարդկային բնության մինչև ի մահ նվիրման ուխտ կատարեր: Եվ միայն այն բանից հետո, երբ այդ նվիրումը իրականացվեց և նա իրապես զոհաբերեց իր մարդկային բնությունը մինչև ի մահ, մեր Տեր Հիսուսը աստվածային բնության լիուլի մասնակից դարձավ: Մարդ դառնալուց հետո նա հնազանդվեց մինչև մահ, ուստի «Աստված նրան խիստ բարձրացրեց» Աստվածային բնության (Փիլ. 2:8,9): Եթե այս համարը ճշմարիտ է, ապա դա նշանակում է, որ Հիսուսը աստվածային բնության չի բարձրացվել, մինչև իր մարդկային բնությունը իրականում զոհաբերված՝ մեռած չլիներ:

Ինչպես տեսնում ենք, Հիսուսի մեջ բնությունների խառնուրդ չկար, սակայն Նա երկու անգամ ենթարկվեց բնության փոփոխության՝ առաջին անգամ հոգեղենից մարդկային, իսկ հետո մարդկայինից հոգեղեն բնության ամենաբարձր՝ աստվածային աստիճանին: Եվ

յուրաքանչյուր դեպքում մեկ բնությունը զոհաբերվեց մյուսի համար:

Մարդկային կատարելության այս վսեմ օրինակով, որը անթերի կանգնած էր աշխարհի առջև մինչև զոհաբերվելը նրա փրկության համար՝ մենք տեսնում ենք այն կատարելությունը, որից մեր ցեղը ընկավ Ադամի միջոցով և որին պետք է վերականգնվի: Մարդու համար փրկագին դառնալով՝ մեր Տեր Հիսուսը տվեց մարդու կորցրածի համարժեք գինը, որով, ամբողջ մարդկությունը Քրիստոսի հանդեպ հավատքի և Նրա պահանջներին հնազանդվելու միջոցով, կարող է կրկին ստանալ, ոչ թե հոգեղեն, այլ փառավոր, կատարյալ մարդկային բնություն՝ ինչը կորսվել էր:

Կատարյալ մարդու կատարյալ կարողություններն ու հմտությունները կարելի է անվերջ զարգացնել նոր, բազմազան և հետաքրքիր ուղղություններով, և ձեռք բերել մեծ գիտելիք ու հմտություն: Սակայն գիտելիքի կամ կարողությունների որևէ ավելացում չի կարող փոխել բնությունը և չի դարձնի այն ավելի կատարյալ: Այն կարող է միայն ընդլայնել ու զարգացնել մարդկային կատարյալ զորությունները: Գիտության և հմտության աճը անշուշտ մարդու օրհնված առանձնաշնորհումն է լինելու հավիտենապես, սակայն նա կմնա մարդ և միայն կսովորի ավելի լիովին օգտագործել արդեն իսկ տիրապետած մարդկային բնության ուժերը: Նա չի կարող հույս ունենալ կամ ցանկանալ առաջ գնալ դրա լայն սահմաններից դուրս, քանի որ նրա ցանկությունները սահմանափակված են նրա ուժերի շրջանակով:

Չնայած Հիսուսը, որպես մարդ, կատարյալ մարդկային բնության նմուշ էր, որին մարդկության մեծ մասը կվերականգնվի, սակայն Իր հարությունից ի վեր Նա

Աստվածային փառավոր բնության նմուշ է, որը հաղթող Եկեղեցին հարության ժամանակ կկիսի նրա հետ:

Եվ թեև ներկայիս դարաշրջանը հիմնականում հատկացված է այն դասակարգի զարգացմանը, որին բնության փոփոխություն է խոստացվել, և առաքյալների ուղերձները հենց «փոքր հոտին» ուսուցանելու համար էին, սա չի նշանակում, որ Աստծո ծրագրերը կավարտվեն այս ընտրյալ խմբի ամբողջացմամբ: Մյուս կողմից, չպետք է ընկնել հակառակ ծայրահեղության մեջ՝ ենթադրելով, որ նրանց տրված աստվածային բնության, հոգեղեն մարմինների և այլնի վերաբերյալ հատուկ խոստումները Աստված նախատեսել է ողջ մարդկության համար: Նրանց տրվել են «մեծ ու թանկագին խոստումներ», որոնք գերազանցում են ողջ մարդկությանը տրված մյուս թանկագին խոստումները: Ճշմարտության Խոսքը ճիշտ բացատրելու համար պետք է նկատենք, որ Աստվածաշունչը Աստվածային բնության կատարելությունը «փոքր հոտին» է վերագրում, իսկ մարդկային կատարելությունը՝ վերահաստատված մարդկությանը: Իրարից երկու տարբեր բաներ:

Այժմ եկեք ավելի մանրամասը քննենք՝ ովքե՞ր կամ ի՞նչ են հոգեղեն էակները, ի՞նչ զորություններ ունեն և ի՞նչ օրենքներով են կառավարվում: Շատերը կարծես կարծում են, որ քանի որ չեն ըմբռնում հոգևոր արարածի բնությունը, այն պետք է լինի միայն մի առասպել, և այս առնչությամբ մեծ նախապաշարումներ է տիրում: Բայց Պողոսը, կարծես, նման գաղափարներ չի ունեցել: Չնայած նա հայտնում է, որ մարդը չի կարող ըմբռնել բարձրագույն, հոգեղեն բնությունը (Ա Կորնթ. 2:14), նա, այնուամենայնիվ, հստակ հայտարարում է, կարծես զգուշացնելով մեզ ամեն տեսակի առասպելներից և

նախապաշարմունքներից, որ գոյություն ունի և՛ հոգեղեն մարմին, և՛ շնչավոր (մարդկային), երկնային և երկրային, և որ գոյություն ունի երկրային փառք և երկնային փառք: Ինչպես տեսանք, երկրային փառքը կորսվեց Ադամի մեղքի պատճառով, սակայն այն պետք է վերադարձվի մարդկությանը Տեր Հիսուսի և Նրա հարսի (Քրիստոսի՝ Գլխի ու Մարմնի) միջոցով հազարամյա թագավորության ընթացքում: Երկնայինի փառքը դեռևս անտեսանելի է, բացառությամբ այն դեպքերի, երբ այն հավատքի աչքին է հայտնվում Հոգու կողմից՝ Խոսքի միջոցով: Այս փառքերը անջատ են և տարբեր (Ա Կոր. 15:38-49): Մենք որոշ չափով գիտենք, թե ինչ է շնչավոր, երկրային, հողեղեն մարմինը, որովհետև այժմ ունենք նման մարմիններ, թեև միայն մասամբ կարող ենք գնահատել դրա կատարելության փառքը: Դա մարմին, արյուն և ոսկոր է, որովհետև «մարմնից ծնվածը մարմին է» (Հովի. 3:6): Եվ քանի որ դրանք երկու տարբեր տեսակի մարմիններ են, գիտենք, որ հոգեղեն մարմինը, ինչ էլ որ լինի, չի կազմված մսից, արյունից և ոսկորներից. այն երկնային, աստվածային, հոգեղեն է — «Հոգուց ծնվածը հոգի է»: Բայց թե ինչ է հոգեղեն մարմինը, չգիտենք, որովհետև «դեռևս հայտնի չէ, թե ինչ ենք լինելու. բայց … նրա նման պիտի լինենք» — մեր Տեր Հիսուսին նման (Հովի. 3:6, Ա Հով. 3:2):

Մենք չունենք որևէ տվյալ, որ որևէ հոգեղեն կամ մարդկային էակ երբևէ ենթարկվել է մեկ բնությունից մյուսը փոխակերպման, բացառությամբ Աստծո Որդու և սա բացառիկ դեպք էր բացառիկ նպատակով: Երբ Աստված ստեղծեց հրեշտակներին, անշուշտ ուզում էր, որ նրանք հավերժ մնան հրեշտակներ, և նույնն էր մարդկանց դեպքում՝ յուրաքանչյուրը կատարյալ իր մակարդակում: Աստվածաշունչը որևէ այլ նպատակի

մասին որևէ հուշում չի տալիս: Ինչպես անկենդան ստեղծագործության մեջ կա հաճելի և գրեթե անսահման բազմազանություն, այնպես էլ կենդանի և բանական ստեղծագործության մեջ հնարավոր է նման կատարելության բազմազանություն: Յուրաքանչյուր արարած իր կատարելության մեջ փառավոր է, սակայն, ինչպես Պողոսն է ասում, երկնավորների փառքը ուրիշ է, իսկ երկրավորների փառքը՝ ուրիշ և տարբեր:

Մեր Տեր Հիսուսի հարության և հոգեղեն էակներ հանդիսացող հրեշտակների մասին արձանագրված փաստերը ուսումնասիրելով՝ այսպես «հոգևոր բաները համեմատելով հոգևորի հետ» (Ա Կոր. 2:13), կարող ենք ձեռք բերել որոշ ընդհանուր տեղեկություններ հոգեղեն էակների վերաբերյալ: Նախ՝ հրեշտակները կարող են ներկա լինել և հաճախ ներկա են լինում, սակայն անտեսանելի են: «Տիրոջ հրեշտակը բանակ է դնում նրանից վախեցողների չորսբոլորը և փրկում է նրանց» (Սաղմոս 34:7), և «Չէ՞ որ բոլորն էլ սպասավոր հոգիներ են՝ ուղարկված ծառայելու նրանց, ովքեր փրկությունը պիտի ժառանգեն» (Եբր. 1:14): Ինչպե՞ս էին նրանք կատարում իրենց ծառայությունը՝ տեսանելի՞, թե՞ անտեսանելի: Անշուշտ՝ վերջինը: Երբ Եղիսեն շրջապատված էր Ասորիների բանակով, նրա ծառան սարսափեց: Բայց Եղիսեն աղոթեց Տիրոջը, և երիտասարդի աչքերը բացվեցին. նա տեսավ, որ շրջապատող լեռները ծածկված են հրեղեն կառքերով և ձիավորներով. Եվ կրկին, երբ հրեշտակը Բաղամի համար անտեսանելի էր, էշը, որի աչքերը բացվեցին, նրան տեսավ:

Երկրորդ՝ հրեշտակները կարող են մարդկային մարմին ընդունել և երևալ իբրև մարդ: Տերը և երկու

հրեշտակներ հայտնվեցին Աբրահամին, ով նրանց համար ընթրիք պատրաստեց, որից նրանք կերան: Սկզբում Աբրահամը կարծում էր, որ նրանք երեքն էլ մարդ էին, և միայն նրանց մեկնելու պահին հասկացավ, որ նրանցից մեկը Տերն է, իսկ մյուս երկուսը՝ հրեշտակներ, որոնք հետո իջան Սոդոմ և փրկեցին Ղովտին (Ծննդոց 18:1,2): Հրեշտակը մարդու կերպարանքով Գեդեոնին երևաց, սակայն հետո հայտնեց իր իսկությունը: Սամսոնի հորն ու մորը մի հրեշտակ հայտնվեց, և նրանք նրան մարդ էին կարծում, մինչև որ զոհասեղանի կրակի միջից երկինք բարձրացավ (Դատավորներ 6:11-22, 13:20):

Երրորդ՝ հոգեղեն էակները իրենց բնական վիճակում փառավոր են և հաճախ նկարագրվում են որպես փառավոր ու պայծառ: Գերեզմանի մուտքի մոտից քարը գլորած հրեշտակի դեմքը «փայլակի նման» էր: Դանիելը հոգեղեն մարմնի մի շող տեսավ, որը նկարագրեց այսպես՝ Նրա մարմինը ոսկեքարի նման էր, նրա դեմքը փայլակի [կայծակի] տեսք ուներ, աչքերը կրակե ջահերի պես էին, նրա բազուկներն ու ոտքերը՝ փայլուն պղնձի նման, և նրա խոսքերի ձայնը բազմության ձայնի պես էր: Որի առջև Դանիելը ընկավ մեռածի պես (Դան. 10:6, 10, 15, 17): Տարսոնացի Սողոսն էլ նույնանման լույսի շող տեսավ Քրիստոսի փառավորված մարմնից, որը կեսօրվա արևի լույսից էլ պայծառ էր շողում. Սողոսը կորցրեց տեսողությունը և ընկավ գետին:

Այսպիսով, մենք տեսանք, որ հոգեղեն էակները իսկապես փառավոր են, թեև մարդկանց անտեսանելի՝ բացի այն դեպքերից, երբ նրանց աչքերը բացվում է նրանց տեսնելու համար, և երբ նրանք հայտնվում են մարմնով որպես մարդ: Այս եզրակացությունը ավելի է հաստատվում, երբ ուսումնասիրում ենք այս

հայտնությունների առանձնահատուկ մանրամասները: Տերը երևաց միայն Սողոսին, իսկ նրա հետ ճանապարհորդող մարդիկ լսեցին ձայնը, սակայն ոչ ոքի չտեսան (Գործք առ. 9:7): Դանիելի հետ եղողներն էլ չտեսան նրա նկարագրած փառավոր էակին, այլ նրանց վրա մեծ վախ ընկավ, և նրանք փախան ու թաքնվեցին: Մեկ այլ անգամ այս փառավոր էակը հայտարարեց. «Պարսից թագավորության իշխանը քսանմեկ օր դիմադրեց ինձ» (Դան. 10:13): Արդյո՞ք Դանիելը, Տիրոջ կողմից շատ սիրված մարդը, մեռածի պես ընկավ այն էակի առջև, որին Պարսից իշխանը քսանմեկ օր դիմադրեց: Ինչպե՞ս պետք է սա հասկանալ: Անշուշտ, նա իշխանին փառքով չի հայտնվել: Կամ անտեսանելի էր նրա համար, կամ էլ իբրև մարդ է երևացել նրան:

Նրա հարությունից ի վեր մեր Տերը հոգեղեն էակ է: Հետևաբար նույն զորությունները, որոնք մենք տեսնում ենք հրեշտակների (հոգեղեն էակների) մեջ, պետք է նրան ևս հատուկ լինեն: Եվ դա ճշմարիտ է, ինչը մենք ավելի լիովին կտեսնենք հաջորդ գլխում:

Այսպիսով մենք տեսնում ենք, որ գրությունները հոգեղեն և մարմնեղեն բնությունները համարում են անջատ և տարբեր, և ոչ մի ապացույց չեն տալիս, որ մեկ բնությունը կանցնի կամ կզարգանա մյուսի մեջ. Հակառակը, դրանք ցույց են տալիս, որ միայն քչերն են փոխվելու մարդկային բնությունից դեպի աստվածային բնություն, որին արդեն բարձրացվել է նրանց Գլուխը՝ Հիսուսը: Եվ այս զարմանալի ու նշանակալի առանձնահատկությունը Եհովայի ծրագրում ունի նույնքան զարմանալի ու առանձնահատուկ նպատակ՝ նրանց պատրաստել որպես Աստծո գործիքներ բոլոր բաների վերականգնման ապագա մեծ գործի համար:

Այժմ եկեք քննենք հետևյալ արտահայտությունները

Մահկանացություն և Անմահություն

Մենք կտեսնենք, որ դրանց իրական իմաստը ամբողջությամբ համապատասխանում է այն, ինչ մենք սովորեցինք, երբ համեմատեցինք Աստվածաշնչյան խոսքերը մարդկային և հոգեղեն էակների, ինչպես նաև երկրային և երկնային խոստումների մասին: Այս բառերին հաճախ շատ անորոշ իմաստ են վերագրում, և հենց դրա պատճառով դրանց նշանակության վերաբերյալ սխալ պատկերացումները առաջ են բերում սխալ տեսակետներ այն թեմաների շուրջ, որոնց հետ այս բառերը կապված են՝ և՛ առօրյա օգտագործման մեջ, և՛ Աստվածաշնչում:

«Մահկանացություն» նշանակում է մահվան ենթակա լինելու վիճակ, ոչ թե մահվան վիճակ, այլ այնպիսի վիճակ, որտեղ մահը հնարավոր է:

«Անմահություն» նշանակում է այնպիսի վիճակ, որը մահվան ենթակա չէ, ոչ միայն մահվանից ազատ լինելու վիճակ, այլ այնպիսի վիճակ, որտեղ մահը անհնարին է:

Մահկանացության վերաբերյալ ընդհանուր, սակայն սխալ պատկերացումը այն է, որ դա մի դրություն կամ վիճակ է, որտեղ մահը անխուսափելի է, մինչդեռ անմահության նշանակության վերաբերյալ ընդհանուր կարծիքը ավելի մոտ է ճշմարտությանը:

Անմահություն բառը նշանակում է մահկանացություն չունեցող: Հետևաբար բառերի կառուցվածքը ինքնին ցույց է տալիս դրանց ճշգրիտ նշանակությունը: Մահկանացու բառի վերաբերյալ սխալ պատկերացումների լայն տարածվածության պատճառով շատերը շփոթվում են, երբ փորձում են պարզել՝ արդյոք

Ադամը մահկանացու՞, թե անմահ էր իր մեղք գործելուց առաջ: Նրանք այսպես են տրամաբանում. որ եթե նա անմահ լիներ, Աստված չէր ասի. «այն օրը, երբ նրանից ուտես, անշուշտ պիտի մեռնես», քանի որ անմահ էակի համար մահանալը անհնարին է: Սա տրամաբանական եզրակացություն է: Մյուս կողմից, նրանք ասում են, եթե նա մահկանացու լիներ, ի՞նչպես կարող էր «անշուշտ պիտի մեռնես» խոսքերը համարվել պատիժ նրա համար: Ի վերջո, մահկանացու լինելով (ըստ նրանց սխալ սահմանման), նա ամեն դեպքում չէր կարող խուսափել մահից:

Մենք կտեսնենք, որ ամբողջ խնդիրը կայանում է «մահկանացու» բառին վերագրված սխալ նշանակության մեջ: Եկեք կիրառենք ճիշտ սահմանումը, և ամեն ինչ պարզ կդառնա: Ադամը մահկանացու էր, այսինքն՝ գտնվում էր այնպիսի վիճակում, որտեղ մահը հնարավոր էր: Նա ուներ կյանք լիակատար և կատարյալ չափով, սակայն ոչ անբաժան: Այն սնվում էր «երկրի մեջ գտնվող բոլոր ծառերից», բացառությամբ արգելված ծառի: Եվ քանի դեռ Ադամը ենթարկվում էր իր Ստեղծչին և ներդաշնակ էր Նրա հետ, նրա կյանքը ապահով էր՝ կյանքը վառ պահող սնուցող տարրերը չէին կարող նրանից վերցվել: Այս տեսանկյունից՝ Ադամը կյանք ուներ, և մահից ամբողջությամբ հնարավոր էր խուսափել, սակայն նա գտնվում էր այնպիսի վիճակում, որ մահը հնարավոր էր— նա մահկանացու էր:

Ուրեմն հարց է ծագում՝ եթե Ադամը մահկանացու էր և ենթարկվում էր փորձության, արդյո՞ք այդ փորձության նպատակը անմահություն ձեռք բերելն էր: Շատերը կպատասխանեին՝ Այո: Մենք պատասխանում ենք՝ Ոչ: Նրա փորձության նպատակը պարզելն էր՝ արդյոք նա

արժանի՞ է արդեն իսկ ունեցած կյանքի և օրհնությունների շարունակությանը: Քանի որ ոչ մի տեղ չի խոստացվել, որ եթե նա հնազանդվեր, անմահ կդառնար, մենք պարտավոր ենք նման բոլոր ենթադրությունները դուրս թողնել հարցից: Նրա վայելած օրհնությունների հարատեվությունը խոստացված էր այնքան երկար՝ որքան որ նա հավատարիմ կմնար, իսկ անհնազանդության դեպքում, կյանքի կորուստ՝ սպասվում էր մահ: Մահկանացու բառի իմաստի վերաբերյալ այս սխալ պատկերացումն է, որ ընդհանուր առմամբ մարդկանց մղում է եզրակացնելու, թե բոլոր այն էակները, որոնք չեն մեռնում, անմահ են: Այս դասին նրանք, հետևաբար, դասում են մեր երկնային Հորը, մեր Տեր Հիսուսին, հրեշտակներին և ամբողջ մարդկությանը: Սակայն սա սխալ է: Անկումից փրկված մարդկությունը, ինչպես նաև երկնքի հրեշտակները, միշտ մահկանացու կմնան: Թեև լինելով կատարելության և երանության վիճակում, նրանք միշտ պատկանում են այն մահկանացու բնությանը, որը ենթակա է մահվան (մեղքի պատիժ), եթե նրանք մեղանչեն: Նրանց գոյության ապահովությունը, ինչպես Ադամի դեպքում, կախված կլինի ամենաիմաստուն Աստծո հանդեպ հնազանդությունից:

Աստվածաշնչում ոչ մի տեղ չի ասվում, որ հրեշտակները անմահ են կամ որ վերականգված մարդկությունը անմահ կլինի: Հակառակը, անմահությունը վերագրվում է միայն աստվածային բնությանը՝ սկզբում միայն Եհովային, հետո մեր Տեր Հիսուսին՝ իր ներկայիս բարձրացված վիճակում, և վերջապես՝ խոստման համաձայն՝ Եկեղեցուն, Քրիստոսի մարմնին, երբ այն փառավորվի նրա հետ (Ա Տիմ. 6:16, Հովհ. 5:26, 2 Պետրոս 1:4, Ա Կորնթ. 15:53,54):

Մենք ոչ միայն ունենք ապացույց, որ անմահությունը պատկանում է միայն աստվածային բնությանը, այլև ունենք ապացույց, որ հրեշտակները մահկանացու են՝ այն փաստով, որ Սատանան, ով նրանց առաջնորդն էր, պետք է ոչնչացվի (Եբր. 2:14): Նրա ոչնչացման ենթակա լինելու իրողությունը ապացուցում է, որ հրեշտակները որպես դասակարգ անմահ չեն:

Այսպիսով, երբ անուղղելի մեղավորները ոչնչացվեն, անմահ և մահկանացու արարածները հավիտյան կապրեն ուրախությամբ, երջանկությամբ և սիրով: Առաջին դասակարգը՝ ունի մեռնելու անկարող բնություն, անբաժան կյանք՝ իրենք իրենց մեջ կյանք ունենալով (Հովհ. 5:26), մինչդեռ երկրորդ դասակարգը, թեև ունի մահվան ենթակա բնություն, այնուամենայնիվ, իրենց բնության կատարելության և չարի ու մեղքի գիտելիքի շնորհիվ, մահվան որևէ պատճառ չեն տա: Աստծո օրենքի ճանաչումն ստանալով՝ նրանք հավիտյան ապահովված կլինեն կատարելության մեջ մնալու համար անհրաժեշտ տարրերով և երբեք չեն մեռնի:

«Մահկանացու» և «անմահ» տերմինների իմաստի, ինչպես նաև Սուրբ Գրքում դրանց օգտագործման ճիշտ ըմբռնումը վերացնում է հավիտենական տանջանքների ուսմունքի ամբողջ հիմքը: Այն հիմնված է ոչ աստվածաշնչային այն տեսության վրա, թե Աստված մարդուն ստեղծել է անմահ, որ նա չի կարող դադարել գոյություն ունենալուց և որ Աստված չի կարող նրան ոչնչացնել: Այստեղից էլ բխում է այն փաստարկը, որ անուղղելիները պետք է ինչ-որ տեղ և ինչ-որ կերպ շարունակեն ապրել, իսկ եզրակացությունն այն է, որ քանի որ նրանք Աստծո հետ անհամաձայնության մեջ են, նրանց հավիտենությունը պետք է լինի տառապանքի

հավիտենություն: Բայց Աստծո Խոսքը վստահեցնում է մեզ, որ մարդը մահկանացու է, և որ լիակատար լույսի և գիտության դեմ գործած կամավոր մեղքի ամբողջ պատիժը չի լինելու տանջանքների կյանքը, այլ երկրորդ մահը. «Այն հոգին, որը մեղք է գործում, մեռնելու է» (Եզեկիել 18:4):

Բայց դու ո՞վ ես, ո՛վ մարդ, որ Աստծո դեմ պատասխան ես տալիս Հռոմ. 9:20

Ոմանց սխալ պատկերացումն է, թե արդարությունը պահանջում է, որ Աստված իր շնորհները իր արարածների միջև բաշխելիս ոչ մի տարբերություն չդնի, որ եթե նա մեկին բարձր դիրքի է բարձրացնում, ապա արդարության համաձայն նույնը պետք է անի բոլորի համար, եթե միայն չապացուցվի, որ ոմանք կորցրել են իրենց իրավունքները, որի դեպքում նրանց արդարացիորեն կարելի է ավելի ցածր դիրքի իջեցնել: Եթե նման սկզբունքը ճիշտ լիներ, դա կնշանակեր, որ Աստված իրավունք չուներ Հիսուսին հրեշտակներից բարձր ստեղծելու և նրան աստվածային բնության բարձրացնելու, եթե Նա չէր նախատեսում նույնը անել բոլոր հրեշտակների և մարդկանց համար: Այս սկզբունքը ավելի հեռուն տանելով՝ որ եթե որոշ մարդիկ պետք է բարձրացվեն և դառնան աստվածային բնության մասնակիցներ, ապա բոլոր մարդիկ վերջիվերջո պետք է բարձրացվեն նույն դիրքին: Եվ ինչո՞ւ չտանել այս սկզբունքը իր ծայրահեղությանը և նույն առաջընթացի օրենքը կիրառել կենդանիների և միջատների աշխարհին՝ ասելով, որ քանի որ նրանք բոլորը Աստծո արարածներ են, ապա նրանք բոլորը վերջիվերջո պետք է հասնեն գոյության ամենաբարձր մակարդակին՝ աստվածային բնությանը: Սա ակնհայտ անհեթեթություն է:

Գուցե ոչ ոք չի ձգտի այդ սխալ ենթադրությունը այդքան հեռու տանել: Սակայն եթե դա հիմնված լիներ պարզապես արդարության վրա, ո՞րտեղ այն կարող էր կանգ առնել և դեռևս արդար մնալ: Եվ եթե դա իսկապես Աստծո ծրագիրը լիներ, ո՞րտեղ կլիներ հաճելի բազմազանությունը Նրա բոլոր գործերում: Բայց Աստծո ծրագիրը այդպիսին չէ: Ամբողջ բնությունը, թե՛ կենդանի, թե՛ անկենդան, ցուցադրում է աստվածային զորության և իմաստության փառքը և բազմազանությունը: Եվ ինչպես «Երկինքը պատմում է Աստծու փառքը, և երկնքի հաստատությունը հռչակում է նրա ձեռքի գործերը» զարմանահրաշ բազմազանությամբ և գեղեցկությամբ, այնպես էլ շատ ավելի Նրա բանական արարածները բազմազանությամբ կցուցադրեն Նրա զորության գերազանց փառքը: Մենք այսպիսի եզրակացության ենք գալիս՝ հիմնվելով Աստծո Խոսքի հստակ ուսուցման, տրամաբանության և բնության օրինաչափությունների վրա:

Մեզ համար շատ կարևոր է արդարության վերաբերյալ ճիշտ պատկերացում ունենալը: Շնորհը երբեք չի կարելի դիտարկել որպես արդարությամբ վաստակած պարգև: Պարզ արդարության դրսևորումը առանձնահատուկ երախտագիտության պատճառ չէ, և ոչ էլ սիրո ապացույց: Բայց Աստված Իր մեծ սերը Իր արարածների հանդեպ ցուցաբերում է անարժան շնորհների անվերջ շարքով, որոնք, իրենց հերթին, նրանց մեջ պետք է արթնացնեն սեր և գովեստ:

Եթե Նա ցանկանար, Աստված իրավունք ուներ մեզ ստեղծելու սահմանափակ գոյության ժամկետով, նույնիսկ եթե մենք երբեք չմեղանչեինք: Այսպես ստեղծվեցին Նրա որոշ ստորին դասի արարածները: Նա կարող էր թույլ տալ

մեզ վայելել Իր օրհնությունները միայն կարճ ժամանակով, և ապա, առանց որևէ անարդարություն գործելու, զրկել մեզ բոլորիս գոյությունից: Իրականում նույնիսկ այդպիսի կարճատև գոյությունը ողորմություն կլիներ: Մենք ընդհանրապես գոյություն ունենք միայն Նրա ողորմության շնորհիվ: Իսկ որքան ավելի մեծ շնորհ է այն փրկությունը, որը վերականգնում է մեղքի պատճառով կորսված գոյությունը: Ավելին, Աստծո շնորհքն է, որ մենք մարդիկ ենք, ոչ թե կենդանիներ, միայն Աստծո ողորմությամբ են հրեշտակները բնությամբ մի փոքր գերազանցում մարդկանց. Նույնպես Աստծո շնորհքն է, որ Տեր Հիսուսը և նրա հարսը դառնում են աստվածային բնության մասնակիցներ. Ուստի բոլոր գիտակից արարածներին մնում է երախտագիտությամբ ընդունել այն ամենը, ինչ Աստված շնորհում է: Մարդը իրավունք չունի ձգտել դառնալ հրեշտակ, քանի որ երբեք չի հրավիրվել այդ դիրքի, և հրեշտակն էլ իրավունք չունի ձգտելու աստվածային բնության, քանի որ այն երբեք նրան չի առաջարկվել:

Սատանայի հպարտության ձգտումն էր, որ իր նվաստացման պատճառ եղավ և որը իր կործանումով կվերջանա (Ես. 14:14): «Ով իր անձը բարձրացնում է՝ կխոնարհվի, և ով իր անձը խոնարհեցնում է՝ կբարձրանա» (Ղուկաս 14:11), սակայն ոչ պարտադիր բարձրագույն դիրքի:

Մասամբ արդարության վերաբերյալ սխալ գաղափարներով և մասամբ այլ պատճառներից ելնելով՝ Սուրբ Գրություններում ուսուցանվող ընտրության թեման բազմաթիվ վեճերի և սխալ ըմբռումների առիթ է դարձել: Շատ քչերն են հերքում, որ Սուրբ Գիրքը ուսուցանում է ընտրության մասին, սակայն հենց այն սկզբունքը, որի

վրա հիմնված է այս ընտրությունը, հանդիսանում է տեսակետների լուրջ տարաձայնությունների առարկա: Ոմանք կարծում են, որ դա կամայական, անպայմանական ընտրություն է, մինչդեռ մյուսները պնդում են, որ այն պայմանական է: Մենք հավատում ենք, որ այս երկու տեսակետներում էլ կա որոշակի ճշմարտություն: Աստծո կողմից ընտրությունը որոշակի նպատակի, պաշտոնի կամ վիճակի համար նրա կամքի ու ընտրության արտահայտությունն է: Աստված ընտրել է, որ իր արարածներից ոմանք լինեն հրեշտակներ, ոմանք՝ մարդիկ, ոմանք՝ կենդանիներ, թռչուններ, միջատներ և այլն, և ոմանք էլ՝ պատկանեն Իր սեփական աստվածային բնությանը: Եվ թեև Աստված որոշ պայմաններով ընտրում է նրանց, ովքեր ընդունվելու են աստվածային բնության մեջ, չի կարելի ասել, որ ոմանք դրան ավելի արժանի են, քան մյուսները, քանի որ ցանկացած արարածի գոյությունը ցանկացած մակարդակում բացառապես շնորհքի արդյունք է:

«Ուրեմն ո՛չ ցանկացողից է կախված և ո՛չ էլ ջանքերից, այլ Աստծուց, որը ողորմած է» (Հռոմեացիներ 9:16): Դա ոչ թե այն պատճառով է, որ ընտրյալները մյուսներից լավն էին, որ Աստված նրանց հրավիրեց աստվածային բնության, քանի որ Նա անտեսեց չմեղանչած հրեշտակներին և կանչեց փրկագնված մեղավորներից ոմանց աստվածային պատվին: Աստված իրավունք ունի Իր սեփականության հետ վարվել ըստ Իր կամքի, և Նա կիրառում է այս իրավունքը՝ Իր ծրագրերը իրականացնելու համար: Ուստի, քանի որ մեր ունեցած ամեն ինչը աստվածային շնորհքի պարգև է, «Դու ո՞վ ես, ո՛վ մարդ, որ Աստծո դեմ պատասխան ես տալիս» Մի՞թե պատրաստված իրը կասի իրեն պատրաստողին. «Ինչո՞ւ ինձ այսպիսին պատրաստեցիր»: Մի՞թե բրուտն

իշխանություն չունի կավի վրա, որ նույն զանգվածից մեկին պատվի անոթ պատրաստի, մյուսին անպատվության» (կամ պակաս պատվի) (Հռոմ. 9:20-21): Բոլորն էլ ստեղծվել են նույն աստվածային զորությամբ՝ ոմանք՝ ավելի մեծ բնության և ավելի մեծ պատվի համար, իսկ ոմանք՝ ավելի ցածր բնության և նվազ պատվի համար:

Այսպես է ասում Եհովան՝ Իսրայելի Սուրբը, նրա [մարդու] Արարիչը. «Կհարցնե՞ք իմ որդիների ապագայի մասին, թե՞ հրամաններ կտաք իմ ձեռքի գործի մասին»: Ես եմ արարել երկիրը և ստեղծել մարդուն նրա վրա. իմ ձեռքերն են տարածել երկինքը, և ես եմ հրամայել նրա ամբողջ զորքին: Այսպես է ասում Եհովան՝ երկնքի Արարիչը՝ ճշմարիտ Աստվածը՝ երկիրը Կազմավորողն ու Ստեղծողը, Նա, ով հաստատեց այն, զուր տեղը չարարեց, այլ բնակվելու համար ստեղծեց այն. «Ես Եհովան եմ, և ուրիշը չկա (Ես. 45:11,12,18): Ոչ ոք իրավունք չունի Աստծուն հրամայելու: Եթե Նա հիմնեց երկիրը, եթե այն զուր տեղը չստեղծեց, այլ վերականգնվող կատարյալ մարդկանց բնակության համար ստեղծեց, ապա ո՞վ ենք մենք, որ Աստծուն հակադրվենք՝ ասելով, թե անարդար կլինի չփոխել նրանց բնությունը և չդարձնել նրանց բոլորին հոգեղեն բնության մասնակիցներ՝ լինի դա հրեշտակների նմանությամբ, թե Իր սեփական աստվածային բնության նմանությամբ: Որքա՜ն ավելի տեղին է Աստծո Խոսքին խոնարհությամբ մոտենալ և «հարցնել» ապագայի մասին, քան «հրամայել» կամ պնդել, որ Նա պետք է մեր գաղափարները իրականացնի: Տե՜ր, պահպանիր Քո ծառաներին ամբարտավան մեղքերից՝ որ դրանք մեզ վրա իշխանություն չունենան: Մենք հավատում ենք, որ Աստծո զավակներից ոչ մեկը գիտակցաբար չի հրամայի Տիրոջը, սակայն որքան հեշտ

ու գրեթե անգիտակցաբար շատերը ընկնում են այդպիսի սխալի մեջ:

Մարդկային ցեղը ստեղծագործությամբ Աստծո զավակներն են՝ Նրա ձեռքի գործը, և նրանց համար նախատեսված ծրագիրը հստակ բացահայտվում է Նրա Խոսքում: Պողոսն ասում է, որ առաջին մարդը (որը որպես կատարելության հասած ապագա ցեղի նմուշ) երկրից էր, հողեղեն: Նրա սերունդը՝ բացի Ավետարանական Եկեղեցուց, հարության ժամանակ դարձյալ կլինի հողեղեն, մարդկային և երկրի վրա ապրելու համար սահմանված (Ա Կորնթ. 15:38, 44): Դավիթն ասում է, որ մարդը ստեղծվել է միայն մի փոքր ցածր հրեշտակներից և պսակվել է փառքով, պատվով, իշխանությամբ (Սաղմոս 8:5–10): Պետրոսը, մեր Տերը և բոլոր մարգարեները աշխարհի սկզբից հայտարարում են, որ մարդկությունը պետք է վերականգնվի այդ փառավոր կատարելությանը ու իր ներկայացուցչի՝ Ադամի պես իշխանություն ունենա երկրի վրա (Գործք 3:19–21):

Ահա այս է այն բաժինը որ Աստված ընտրել է մարդկության համար: Ու արդարև ինչ փառավոր բաժին է սա: Մի պահ փակեք ձեր աչքերը կարիքի, վշտի, տառապանքի, անկումի բոլոր տեսարանների վրա, որոնք դեռ գոյություն ունեն մեղքի պատճառով և ձեր երևակայության մեջ պատկերեք կատարյալ երկրի փառքը, ուր մեղքի ոչ մի բիծ չի խաթարի կատարյալ հասարակության ներդաշնակությունն ու խաղաղությունը: Ոչ մի դառը միտք, ոչ մի անբարյացակամ հայացք կամ խոսք: Յուրաքանչյուր սրտից բխող սերը գտնում է հարազատ արձագանք մեկ այլ սրտում և բարեսիրությունն ու գթությունը դրսևորվում է յուրաքանչյուր արարքում: Այլևս չի լինի ոչ հիվանդություն,

ոչ ցավ, ոչ տառապանք, անգամ քայքայման մի նշան և նման բաների վախն էլ չի լինի: Խորհեք մարդկային ձևի ու դիմագծի, առողջության ու գեղեցկության համեմատական բոլոր օրինակների մասին, որ երբևէ տեսել եք և գիտակցեք որ կատարյալ մարդկությունը ավելի հիասքանչ կլինի: Ներքին մաքրությունը, մտավոր և բարոյական կատարելությունը կտարբերեն և կզարդարեն յուրաքանչյուր շողշողուն դիմագիծ: Այսպիսին կլինի երկրային հասարակությունը ու բոլոր հարազատ կորցրած արտասվողների աչքերը կսրբվեն, երբ ավարտված կլինի հարության գործը (Հայտն. 21:4):

Եվ սա միայն մարդկային հասարակության մեջ տեղի ունենալիք փոփոխությունն է: Մենք նաև հիշում ենք, որ երկիրը, որը ստեղծվել էր այս կարգի էակների «բնակության համար» պետք է լինի հարմար և հաճելի բնակավայր, ինչպես ներկայացված է Եդեմի դրախտում, որտեղ սկզբում դրվել էր մարդկության ներկայացուցիչը: Դրախտը կվերականգնվի: Երկիրը այլևս չի տա փուշ ու տատասկ, և մարդը այլևս չի վաստակի իր հացը ճակատի քրտինքով, այլ «երկիրը [հեշտությամբ և բնականորեն] կտա իր պտուղը»: «Անապատը կծաղկի շուշանի պես» (Ես 35:1): Ստորին դասի կենդանական աշխարհը կլինի կատարյալ, կամավոր և հնազանդ ծառաներ: Բնությունը՝ իր բոլոր գրավիչ բազմազանությամբ, ամեն քայլափոխի կկանչի մարդուն փնտրել և ճանաչել Աստծո փառքը, զորությունը և սերը, և միտքն ու սիրտը կուրախանան Նրանով: Այսօր գերիշխող նորի հանդեպ անհանգիստ ցանկությունը բնական վիճակ չէ, այլ անկանոն մի վիճակ է, որը ծագում է մեր անկատարությունից ու մեզ շրջապատող անգոհացուցիչ հանգամանքներով: Նման անհանգիստ փափագը նորի հանդեպ բնորոշ չէ աստվածայնությանը: Աստծո հետ կապված շատ բաներ

հին են, և Նա առավելապես ուրախանում է այն բաներով, որոնք հին են ու կատարյալ: Այդպես կլինի նաև մարդու հետ, երբ նա վերականգնվի Աստծո պատկերին: Կատարյալ մարդը չի կարողանա ամբողջությամբ ճանաչել կամ գնահատել, և, հետևաբար, չի նախընտրի հոգեղեն էակի փառքը՝ իր բնույթով տարբեր լինելու պատճառով, ինչպես ձկներն ու թռչունները նույն պատճառով առավելագույնս նախընտրում և վայելում են իրենց բնությունն ու բնական միջավայրը: Մարդը այնքան կլանված և հիացած կլինի մարդկային մակարդակի վրա իրեն շրջապատող փառքով, որ չի ունենա ոչ ձգտում, ոչ էլ նախապատվություն այլ բնույթի կամ այլ պայմանների նկատմամբ, քան այն, ինչին տիրապետում է: Եկեղեցու ներկայիս փորձառությանը մեկ հայացք գցելը սա կհաստատի: «Որքան դժվար է» — ինչ ջանքերով են այս աշխարհի հարստություններ ունեցող մարդիկ մտնելու Աստծո արքայությունը: Չարության և մահվան ներկայիս տիրապետության պայմաններում անգամ համեստ ունեցվածքի տիրապետությունը այնքան է գերում մարդկային բնությունը, որ մեզ անհրաժեշտ է Աստծո հատուկ օգնությունը՝ որպեսզի մեր հայացքն ու նպատակը կենտրոնացնենք հոգևոր խոստումների վրա:

Որ Քրիստոնեական Եկեղեցին, Քրիստոսի մարմինը, բացառություն է Աստծո մարդկության հանդեպ ունեցած ընդհանուր ծրագրից, ակնհայտ է այն խոսքից, որ նրա ընտրությունը որոշված էր Աստծո ծրագրում աշխարհի հիմնվելուց առաջ (Եփեսացիներ 1:4,5), երբ Աստված ոչ միայն կանխատեսեց մարդկության անկումը մեղքի մեջ, այլև կանխորոշեց այս խմբի արդարացումը, սրբացումը և փառավորումը, որին Նա Ավետարանական դարաշրջանում աշխարհից կանչել է՝ որպեսզի նրանք կերպարանափոխվեն Իր Որդու պատկերին, մասնակից

դառնան աստվածային բնությանը և ժառանգակիցներ լինեն Քրիստոս Հիսուսի հետ Հազարամյա Թագավորությունում՝ համընդհանուր արդարության և խաղաղության հաստատելու համար (Հռոմ. 8:28-31):

Սա ցույց է տալիս, որ Եկեղեցու ընտրությունը Աստծո կողմից նախասահմանված բան էր, սակայն նկատեք, որ սա Եկեղեցու անհատական անդամների անպայման ընտրություն չէ: Աշխարհի հիմնվելուց առաջ Աստված որոշեց, որ նման մի ժողովուրդ ընտրվի նման նպատակի համար որոշակի ժամանակի՝ Ավետարանական դարաշրջանի ընթացքում: Չնայած մենք չենք կարող կասկածել, որ Աստված կարող էր կանխատեսել Եկեղեցու յուրաքանչյուր անհատական անդամի վարքը և նախապես իմանալ, թե ովքեր կլինեն արժանի և, հետևաբար, կկազմեն այդ «փոքր հոտը», սակայն սա այն ձևը չէ, որով Աստվածաշունչը ներկայացնում է ընտրության ուսմունքը: Առաքյալները չէին ձգտում սերմանել անհատական նախասահմանության գաղափարը, այլ այն, որ Աստծո մտադրությամբ նախասահմանված էր մի դասակարգ, որը պետք է զբաղեցներ այս պատվավոր դիրքը, և որի ընտրությունը պետք է տեղի ունենար հավատքի ու հնազանդության խիստ փորձությունների, ինչպես նաև երկրային արտոնությունների զոհաբերության և այլ պայմաններով՝ մինչև ի մահ: Այսպիսով, անհատական փորձության և անհատական «հաղթանակի» միջոցով այս նախասահմանված խմբի անհատական անդամները ընտրվում են (կամ ընդունվում են) այն բոլոր օրհնություններին և առանձնաշնորհումներին, որոնք Աստծուց նախասահմանված են այդ դասակարգի համար:

Հռոմ. 8:30-ում հիշատակված «փառավորված» բառը հունարեն տօքսազո բառից է թարգմանված՝ նշանակում է պատվված: Այն դիրքը կամ պաշտոնը որի համար ընտրված է եկեղեցին՝ մեծ պատիվ է: Ոչ մի մարդ անգամ չի կարող երազել նման բարձր պատվի մասին: Նույնիսկ մեր Տեր Հիսուսը դրան ձգտելուց առաջ նախ հրավիրվեց, ինչպես կարդում ենք՝ «Այնպես էլ Քրիստոսը, ոչ թե ինքն իր անձը փառավորեց, [տօքսազո՝ պատվեց], որ քահանայապետ լինի, այլ Նա, ով ասաց Նրան. «Դու իմ Որդին ես, ես այսօր քեզ ծնեցի» (Սաղմոս 2:7): Երկնային Հայրը այսպես պատվեց մեր Տեր Հիսուսին: Նմանապես ընտրյալ մարմնից բոլոր նրանք, ովքեր Նրա հետ ժառանգակիցներ են լինելու, Եհովայի շնորհով այս կերպ պատվի կարժանանան: Եկեղեցին, ինչպես իր Գլուխը, սկսում է մասնակցել այս «պատվին» այն պահից, երբ Աստված նրան ծնում է հոգևոր բնության՝ ճշմարտության խոսքի միջոցով (Հակոբոս 1:18), և ամբողջությամբ կմտնի այդ պատվի մեջ, երբ ծնվի Հոգուց՝ որպես հոգեղեն էակ՝ Գլխի պատկերովը փառավորված: Բոլոր նրանց, ում Աստված այսպես պիտի պատվի, պարտավոր են լինել կատարյալ և մաքուր, ու քանի որ մենք ժառանգականօրեն մեղավորներ էինք, նա ոչ միայն մեզ այս պատվին կանչեց կամ հրավիրեց, այլև Իր Որդու մահվամբ մեղքից արդարացում տվեց, որպեսզի մենք կարողանանք ընդունել այն պատիվը, որին նա կանչեց մեզ:

«Փոքր հոտը» ընտրելիս Աստված շատ ընդհանուր կոչ է անում՝ «շատերն են կանչված»: Բոլորը չեն կանչված: Սկզբում, մեր Տիրոջ ծառայության ժամանակ, կոչը սահմանափակված էր մարմնեղեն Իսրայելով: Բայց այժմ Աստծո ծառաները, ում էլ հանդիպեն (Ղուկաս 14:23), պետք է նրանց հորդորեն և խրախուսեն (ոչ թե պարտադրեն) գալ այս շնորհաց խնջույքին: Բայց անգամ

նրանցից, ովքեր լսում են և գալիս են, ոչ բոլորն են արժանի: Չնայած նրանց տրվում են հարսանեկան հանդերձներ (Քրիստոսի՝ իր հետևորդներին վերագրած արդարությունը), ոմանք չեն հագնում դրանք և, հետևաբար, մերժվում են (Մատթեոս 22:12,13): Իսկ ոմանք էլ, ովքեր հագնում են արդարության հանդերձները և ունենում են պատիվ ծնվելու դեպի նոր բնություն, թերանում են իրենց կոչումն ու ընտրությունը հաստատուն դարձնել՝ մնալով հավատարիմ իրենց ուխտին (Բ Պետրոս 1:10): Գառի հետ փառքով հայտնվելու արժանի եղողների մասին գրված է. «Նրանք, ովքեր կանչված, ընտրված և հավատարիմ են» (Հայտնություն 14:1, 17:14):

Կոչը ճշմարիտ է. Աստծո վճռականությունը՝ ընտրելու և բարձրացնելու Եկեղեցի, անփոփոխ է. սակայն թե ովքեր կպատկանեն այս ընտրյալ խմբին, կախված է պայմաններից. Բոլոր նրանք, ովքեր ցանկանում են մասնակից լինել նախասահմանված պատվին, պետք է կատարեն կոչման պայմանները. «Ուրեմն զգուշանանք. քանի դեռ նրա հանգստի մեջ մտնելու խոստումը մնում է, ձեզանից որևէ մեկը դուրս չմնա» (Եբր. 4:1): Այս մեծ շնորհը ո՛չ ցանկացողից է, ո՛չ էլ վազողից, այլ կանչվելուց հետո ցանկացողին ու վազողին է պատկանում:

Հուսալով, որ կարողացանք պաշտպանել Աստծո՝ իրենների հանդեպ իր կամքի համաձայն վարվելու բացարձակ իրավունքն ու նպատակը՝ մենք հիմա ուշադրություն ենք հրավիրում այն փաստին, որ Աստծո բոլոր շնորհների բաշխման հատկանշական սկզբունքը, բոլորի ընդհանուր բարօրության համար է:

Այսպիսով, Սուրբ Գրքերի հեղինակության հիման վրա, մենք այն համարում ենք հաստատված փաստ, որ

երկրային և հոգեղեն բնությունները անջատ և տարբեր են, որ այդ երկու բնությունների խառնուրդը Աստծո ծրագրի մի մասը չէ, այլ կլիներ անկատարություն, և որ մեկ բնությունից մյուսի փոփոխությունը կանոն չէ, այլ բացառություն՝ որը միմիայն Օծյալ դասակարգի նկատմամբ է տեղի ունենում: Հետաքրքրական է իմանալ՝ թե ինչպես պետք է տեղի ունենա այս փոփոխությունը: Ինչ պայմաններով է այն հնարավոր ձեռք բերել և ինչ եղանակով այն պիտի իրականանա:

Եկեղեցու՝ իր Տիրոջ հետ աստվածային բնության (Ա Պետրոս 1:4) բարձրացման պայմանները նույնն են, ինչ այն պայմանները, որոնցով նա ստացավ այն. հետևելով նրա հետքերին (Ա Պետրոս 2:21), ինքներս մեզ մատուցելով որպես կենդանի զոհ, ինչպես նա արեց, և ապա հավատարիմ մնալով այդ սրբազան նվիրաբերության ուխտին մինչև որ զոհը մահվամբ վերջանա (մինչև զոհաբերության ավարտը): Մարդկային բնությունից աստվածայինի այս փոփոխությունը որպես պարգև է տրվում նրանց, ովքեր Ավետարանական դարաշրջանում, ինչպես մեր Տերը, մինչև ի մահ զոհաբերում են իրենց մարդկային բնությունը՝ իր բոլոր շահերով, հույսերով ու նպատակներով՝ (թե ներկայի, թե ապագայի հետ կապված): Նրանք հարություն կառնեն, ոչ թե մարդկության մնացած մասի հետ մասնակից լինելու մարդկային կատարելության օրհնված վերականգնմանը և դրան կից բոլոր օրհնություններին, այլ մասնակից լինելու Տիրոջ նմանությանը, փառքին և ուրախությանը որպես աստվածային բնության նրա բաժնեկիցներ (Հռոմ. 8:17, Բ Տիմ. 2:12):

Նոր բնության սկիզբն ու զարգացումը նմանեցվում են մարդկային կյանքի սկզբին ու զարգացմանը: Ինչպես առաջինի դեպքում նախ տեղի է ունենում հղիացում, ապա ծնունդ, այնպես էլ երկրորդի դեպքում: Սրբերի մասին ասվում է, որ նրանք Աստծո կողմից ծնված (հղիացած) են Ճշմարտության Խոսքով (Ա Պետրոս 1:3, Ա Հովհաննես 5:18, Հակոբոս 1:18): Այսինքն՝ նրանք ստանում են աստվածային կյանքի առաջին կայծը Աստծուց՝ Իր Խոսքի միջոցով: Երբ, փրկանքի նկատմամբ հավատքով ձրի արդարացվելուց հետո, նրանք լսում են կոչը՝ «Ձեր մարմինները ներկայացրեք որպես կենդանի զոհ, սուրբ [փրկվագնված, արդարացված—և հետևաբար] Աստծուն ընդունելի, որ է ձեր բանավոր պաշտոնը» (Հռոմ. 12:1), և երբ, այդ կոչին հնազանդվելով, նրանք ամբողջությամբ նվիրաբերում են իրենց արդարացված մարդկային բնությունը որպես կենդանի զոհ՝ Հիսուսի հետ կողք-կողքի, այն ընդունվում է Աստծո կողմից, և հենց այս գործողության մեջ է սկսվում հոգևոր կյանքը: Այդպիսիները միանգամից սկսում են մտածել և գործել այնպես, ինչպես նրանց նոր [կերպարանափոխված] միտքն է հուշում, նույնիսկ մարդկային ցանկությունները խաչելու աստիճան: Նվիրման պահից սկսած՝ Աստված նրանց համարում է «նոր արարածներ»:

Այսպիսով, այս սաղմնային «նոր արարածների» համար հինը անցնում է [մարդկային ցանկություններ, հույսեր, ծրագրեր և այլն], և ամեն ինչ նոր է դառնում: Սաղմնային «նոր արարածը» շարունակում է աճել և զարգանալ, քանի որ մարդկային հին բնությունը՝ իր հույսերով, նպատակներով, ցանկություններով խաչվում է: Այս երկու գործընթացները զուգահեռ են ընթանում՝ սկսած նվիրման պահից մինչև մարդկայինի մահը և հոգեղենի ծնունդը: Երբ Աստծո Հոգին Իր Խոսքի միջոցով

շարունակում է ավելի ու ավելի քողազերծել Իր ծրագրերը, այդպիսով կենդանացնում է անգամ մեր մահկանացու մարմինները (Հռոմ. 8:11), դարձնելով դրանք Աստծուն ծառայելու ունակ: Բայց ճիշտ ժամանակին մենք կունենանք նոր՝ հոգեղեն, երկնային մարմիններ բոլոր առումներով հարմարեցված նոր, աստվածային մտքին:

«Նոր արարածի» ծնունդը տեղի է ունենում հարության ժամանակ (Կող. 1:18), և այս դասակարգի հարությունը կոչվում է առաջին (կամ գլխավոր) հարություն (Հայտն. 20:6): Պետք է հիշել, որ մենք իրապես հոգեղեն արարածներ չենք դառնում մինչև հարությունը, թեև այն պահից, երբ ստանում ենք որդեգրության Հոգին, մեզ այդպիսին են համարում (Հռոմ. 8:23-25, Եփես. 1:13,14, Հռոմ. 6:10,11): Երբ մենք իսկապես դառնանք հոգեղեն էակներ, այսինքն՝ երբ ծնվենք Հոգուց, այլևս մարմնավոր էակներ չենք լինի, որովհետև «Հոգուց ծնվածը հոգի է» (Մատթեոս 3:6):

Հոգեղեն բնության հարության ժամանակվա այս ծնունդը պետք է նախորդի Սուրբ Հոգու հղիացումով, որը կատարվում է նվիրման ժամանակ, ինչպես մարմնեղեն ծնունդին նախորդում է մարմնեղեն հղիացումը: Մարմնապես ծնված բոլոր նրանք, ովքեր նման են առաջին Ադամին՝ երկրայինին, նախապես մարմնից են հղիացվել, իսկ ոմանք կրկին հղիացվել են Աստծո Հոգով՝ ճշմարտության խոսքի միջոցով, որպեսզի հարմար ժամանակին՝ առաջին հարության ժամանակ Հոգուց ծնվեն երկնային նմանությամբ: «ինչպես որ հողեղենի պատկերը կրեցինք, այնպես էլ երկնայինի պատկերը պիտի կրենք»— եթե հավատարիմ մնանք (Ա Կորնթ. 15:49, Եբր. 6:6):

Թեև երկնային կոչման ընդունումն ու մեր նվիրումը որպես դրա հնազանդության նշան տեղի են ունենում մեկ կոնկրետ պահին, սակայն ամեն միտք Աստվածային կամքի համաձայնության բերելը՝ աստիճանական գործ է, մեր մտքի ու սրտի դեպի երկինք հառելը աստիճանական գործ է, որոնք բնականոն կերպով դեպի երկիր են հակված: Առաքյալը այս գործընթացը կոչում է կերպարանափոխման գործ՝ ասելով. «Եվ մի՛ կերպարանափոխվեք այս աշխարհի կերպարանքով, այլ վերափոխվե՛ք ձեր մտքի նորոգությամբ, որպեսզի դուք քննեք Աստծու կամքը, թե որն է բարին, հաճելին ու կատարյալը» (Հռոմ. 12:2):

Պետք է նկատի առնել, որ Առաքյալի այս խոսքերը ուղղված չեն անհավատ աշխարհին, այլ նրանց, ում նա ճանաչում է որպես եղբայրներ, որը երևում է նախորդ համարից՝ «Ուրեմն, աղաչում եմ ձեզ, եղբայրներ, ... որ ձեր մարմինները ներկայացրեք որպես կենդանի զոհ, սուրբ, Աստծուն ընդունելի, որ է ձեր բանավոր պաշտոնը» (Հռոմ. 12:1):

Ընդհանուր առմամբ ասվում է, որ եթե մարդը փոխվել է՝ այսինքն՝ մեղքից արդարություն է դարձել, մերժել է անհավատությունը, դադարել է դիմադրել Աստծուն և սկսել է ապավինել նրան, ապա սա այն փոխակերպումն է, որի մասին Պողոսն էր խոսում: Սա, անշուշտ, մեծ փոփոխություն, վերափոխում է, սակայն դա այն կերպարանափոխությունը չէ, որի մասին Պողոսն այստեղ խոսում է: Սա բնավորության վերափոխում է, մինչդեռ Պողոսը խոսում է բնության վերափոխման մասին, որը որոշ պայմաններով խոստացվել է Ավետարանական դարաշրջանի հավատացյալներին, և հորդորում է նրանց կատարել այդ պայմանները: Եթե նրա խոսքին լսողների

մեջ տեղի ունեցած չլիներ բնավորության նման փոփոխություն, նա չէր կարող նրանց կոչել եղբայրներ, որոնք ունեն «սուրբ և ընդունելի» բան՝ զոհաբերությամբ նվիրելու Աստծուն: Միայն նրանք, ովքեր փրկանքի նկատմամբ հավատով արդարացվում են, Աստծո կողմից համարվում են սուրբ և ընդունելի: Բնության այսպիսի կերպարանափոխումը տեղի է ունենում նրանց մոտ, ովքեր Ավետարանական դարաշրջանում իրենց արդարացված մարդկային բնությունը մատուցում են որպես կենդանի զոհ, ինչպես Հիսուսը մատուցեց Իր կատարյալ մարդկային բնությունը որպես կենդանի զոհ՝ հրաժարվելով ապագա մարդկային գոյության բոլոր իրավունքներից և պահանջներից, ինչպես նաև անտեսելով ներկայիս մարդկային վայելքները, արտոնությունները, իրավունքները և այլն: Առաջինը զոհաբերվում է մարդկային կամքը, և դրանից հետո մեզ այլևս չի կարելի առաջնորդվել ոչ մեր սեփական, ոչ էլ որևէ այլ մարդկային կամքով, այլ միայն աստվածային կամքով: Աստվածային կամքը դառնում է մեր կամքը, մինչդեռ մենք այլևս մեր մարդկային կամքը չենք դիտարկում որպես մեր սեփականը, այլ որպես ուրիշի կամք, և այս կամքը պետք է անտեսվի և զոհաբերվի: Երբ աստվածային կամքը դառնում է մեր կամքը, մենք սկսում ենք մտածել, տրամաբանել և դատել աստվածային տեսանկյունից: Աստծո ծրագիրը դառնում է մեր ծրագիրը, և Աստծո ճանապարհները դառնում են մեր ճանապարհները: Այդպիսի փոփոխությունը ոչ ոք չի կարող ամբողջությամբ հասկանալ, ով բարի հավատքով չի մատնել ինքն իրեն որպես զոհ և, ինքն անձամբ չի ապրել դա: Նախկինում մենք կարող էինք հաճույք ստանալ ամեն ինչից, որը իրականում մեղք չէր, քանի որ աշխարհը և դրա մեջ եղած ամեն բարիք ստեղծվել են մարդու ուրախության համար,

և միակ խնդիրը մեղավոր հակումները զսպելն էր: Բայց նվիրվածներն ու կերպարանափոխվածները, մեղքը զսպելու ջանքերի կողքին, պետք է զոհաբերեն ներկայիս բարիքները և իրենց բոլոր ուժերը նվիրեն Աստծո ծառայությանը: Արդարև, այս ծառայության ու զոհաբերության մեջ հավատարիմները օր օրի պիտի ըմբռնեն, որ այս աշխարհը նրանց հանգստավայրը չէ, և որ այստեղ նրանք մնայուն քաղաք չունեն, այլ իրենց սրտերն ու հույսերը ուղղեն դեպի այն հանգիստը «որը մնում է Աստծո ժողովրդի համար» (Եբր. 4:9): Եվ այդ օրհնյալ հույսը իր հերթին կենդանացնելու և ոգեշնչելու է նրանց շարունակական զոհաբերության:

Այսպիսով, նվիրման միջոցով միտքը նորոգվում կամ փոխակերպվում է, և ցանկությունները, հույսերն ու նպատակները ուղղվում են խոստացված հոգեղեն և անտեսանելի բաներին, մինչդեռ մարդկային հույսերն ու նմանատիպ բաները մեռնում են: Այս կերպ կերպարանափոխվածները կամ այս փոփոխման ընթացքի մեջ գտնվողները համարվում են «նոր արարածներ», Աստծուց հղիացած և այդ չափով մասնակիցներ աստվածային բնությանը: Լավ նկատեք տարբերությունը այս «նոր արարածների» և այն հավատացյալների ու «եղբայրների» միջև, որոնք միայն արդարացված են: Վերջիններս դեռևս երկրային են, հողեղեն, հետևաբար նրանց հույսերը, ձգտումները և նպատակները (բացի մեղավոր ցանկություններից) լիովին կբավարարվեն խոստացված բոլոր բաների վերահաստատության ժամանակ: Առաջին դասակարգին պատկանողները՝ նոր արարածները, սակայն, այս աշխարհից չեն, ինչպես Քրիստոսը այս աշխարհից չէ, նրանց հույսերը կենտրոնացած են անտեսանելիի վրա, որտեղ Քրիստոսը նստած է Աստծո աջ կողմում: Երկրային

փառքի հեռանկարը, որը այդքան գրավիչ է երկրային մարդու համար, երկնային հույսով ծնվածների համար այլևս գոհացուցիչ բաժին չէ, ովքեր տեսնում են երկնային խոստումների փառքերը և գնահատում են իրենց վերապահված դերը աստվածային ծրագրում: Այս նոր, աստվածային միտքը մեր ամբողջական աստվածային բնության – մտքի և մարմնի ժառանգության գրավականն է: Թերևս ոմանք կարող են մի փոքր զարմանալ «աստվածային մարմին» արտահայտությունից, սակայն մեզ ասվում է, որ Հիսուսը այժմ Իր Հոր էության ճշգրիտ պատկերն է (Եբր. 1:3) և որ հաղթողները «նրա նման կլինեն և նրան կտեսնեն այնպես, ինչպես որ նա կա» (Ա Հովի. 3:2): «Կա շնչավոր [մարդկային] մարմին, և կա հոգևոր մարմին»: (Ա Կորնթ. 15:44) Մենք չենք կարող պատկերացնել ո՛չ մեր Երկնային Հորը, ո՛չ մեր Տեր Հիսուսին միայն որպես մեծ մտքեր առանց մարմնի: Նրանք ունեն փառավոր հոգեղեն մարմիններ, թեև մեզ դեռ հայտնի չէ նրանց փառքի չափը ու հայտնի չպիտի լինի՝ մինչև որ մենք էլ չկիսենք աստվածային բնությունը:

Չնայած մտքի այս փոխակերպումը մարդկայինից դեպի հոգեղեն աստիճանական գործընթաց է, մարդկային մարմնից հոգեղեն մարմին անցումը չի լինի աստիճանական, այլ վայրկենական (Ա Կորնթ. 15:52): Ինչպես Պողոսն է ասում, այս գանձը (աստվածային միտքը) ունենք կավե անոթներում (Բ կորնթ. 4:7), սակայն իր ժամանակին գանձը կլինի իրեն համապատասխան փառավոր անոթում՝ հոգեղեն մարմնում:

Մենք տեսանք, որ մարդկային բնությունը հոգեղենի նմանությունն է (Ծնունդոց 5:1): Օրինակ՝ Աստված ունի կամք, որը մարդիկ ու հրեշտակները նույնպես ունեն: Աստված ունի տրամաբանություն և միտք, նույնպես նրա

գիտակից արարածները՝ հրեշտակներն ու մարդիկ: Մտային գործողության բնույթը նրանց բոլորի մեջ նույնն է: Տրամաբանության միևնույն տվյալով ու նույնանման պայմաններում, այս տարբեր բնությունները կարող են միևնույն եզրակացություններին հանգել: Չնայած աստվածային, հրեշտակային և մարդկային բնությունների մտավոր ունակությունները նույնանման են, մենք գիտենք, որ հոգեղեն բնությունը մարդկայինից բարձր զորություններ ունի՝ որոնք, մեր կարծիքով, պայմանավորված են ոչ թե առանձին ունակություններից, այլ նույն ունակությունների ավելի լայն շրջանակից և այն տարբեր հանգամանքներից, որոնց ներքո դրանք գործում են: Մարդկային բնությունը հոգեղեն բնության կատարյալ երկրային պատկերն է, ունի նույն ունակությունները, սակայն սահմանափակված է երկրային ոլորտով և ունի ընդունակություն ու հակում ընկալելու միայն այնքան, որքան Աստված հարկ է համարում բացահայտել մարդու օգտի և երջանկության համար:

Աստվածային բնությունը հոգեղեն բնության ամենաբարձր կարգն է և որքան անչափելի է այն հեռավորությունը, որը կա Աստծո և նրա արարածների միջև: Մենք կարող ենք միայն նշույլներ տեսնել աստվածային իմաստության, զորության և բարության փառքից, երբ Նա ասես համայնապատկերի տեսքով, թույլ է տալիս, որ Իր հզոր գործերից մի քանիսը անցնեն մեր առջևից: Բայց կարող ենք չափել և ըմբռնել կատարյալ մարդկության փառքը:

Այս մտքերը հստակ գիտակցելով՝ մենք կարող ենք ըմբռնել, թե ինչպես է մարդկային բնությունը փոխակերպվում հոգեղենի՝ նույն մտավոր

կարողությունները բարձրագույն պայմաններին փոխադրելով: Երբ հագնված լինենք երկնային մարմնով, կունենանք նաև այն երկնային կարողությունները, որոնք հատուկ են այդ փառավոր մարմնին, և կունենանք խորհելու այն սահմանը ու զորության այն մեծությունը, որոնք նրան են պատկանում:

Մտքի երկրայինից երկնայինի կերպարանափոխությունը կամ փոփոխությունը, որի միջով անցնում են նվիրվածները, բնության փոփոխման սկիզբն է: Դա ուղեղի փոփոխություն չէ, կամ նրա գործունեության հրաշք, այլ կամքն ու մտքի հակումն են փոխվում: Մեր կամքն ու զգացմունքներն ներկայացնում են մեր անհատականությունը, հետևաբար, երբ մեր կամքն ու զգացմունքները այսպես փոխվում են, մենք կերպարանափոխվում ենք, կարծես համարվում ենք երկնային բնության պատկանողներ: Ճիշտ է, սա միայն շատ փոքր սկիզբ է, սակայն այն, ինչը կոչվում է «սկզբնավորություն», միշտ էլ միայն փոքր սկիզբ է, այնուամենայնիվ, դա ավարտված գործի գրավականը կամ երաշխիքն է (Եփես. 1:13,14):

Ոմանք հարցնում են՝ երբ փոխված լինենք, ինչպե՞ս կճանաչենք ինքներս մեզ: Ինչպե՞ս կիմանանք, որ մենք միևնույն անձինքն ենք, որ այս փառքին հասնելու համար ապրեցինք, տառապեցինք ու զոհաբերվանք: Կլինե՞նք արդյոք նույն գիտակից էակները: Անշուշտ, այո: Եթե Քրիստոսի հետ մեռանք, հավատում ենք, որ նրա հետ էլ կապրենք (Հռոմ. 6:8): Մեր մարդկային մարմիններում ամեն օր տեղի ունեցող փոփոխությունները չեն ստիպում

մեզ մոռանալ անցյալը կամ կորցնել մեր ինքնությունը:[6]

Այս խորհրդածությունները թերևս օգնել մեզ նաև ըմբռնելու՝ թե ինչպես Որդին, երբ փոխվեց հոգևոր վիճակից մարդկային պայմանների՝ մարդկային բնության և երկրային սահմանափակումների մեջ, դարձավ մարդ և թեև երկու դեպքերում էլ նույն էակն էր, առաջին վիճակում նա հոգեղեն էր, իսկ երկրորդում մարդկային: Եվ թեև երկու բնությունները անջատ և տարբեր են, սակայն մեկը մյուսի նմանությունն է, և միևնույն մտավոր կարողությունները (հիշողություն և այլն) ընդհանուր են երկուսին էլ: Ուստի Հիսուսը կարող էր հիշել Իր նախկին փառքը, որը նա ուներ մինչև մարդ դառնալը, բայց որը չուներ մարդ եղած ժամանակ: Սա հաստատվում է Նրա խոսքերով՝ «Եվ հիմա, Հա՛յր, փառավորիր ինձ՝ այն փառքով, որ Ես ունեի Քեզ մոտ՝ աշխարհի լինելուց առաջ» (Հովհաննես 17:5) - Իր հոգեղեն բնության փառքը: Հիսուսի այս աղոթքը ավելի առատորեն պատասխանվեց, իր ներկայիս բարձրացումով դեպի հոգեղեն գոյության ամենաբարձր կարգի՝ աստվածային բնության:

---

[6] Գիտությունը ասում է, որ յուրաքանչյուր յոթ տարին մեկ մեր ատոմները որից մենք բաղկացած ենք, ամբողջությամբ փոխվում են: Ուստի մարդկայինից հոգեղեն մարմինների խոստացված փոփոխությունը ոչ թե կոչնչացնի հիշողությունը կամ ինքնությունը, այլ կմեծացնի նրանց ուժն ու սահմանը: Միևնույն Աստվածային միտքը, որը այժմ մերն է՝ նույն հիշողությամբ, նույն տրամաբանելու ուժով և այլն, այն ժամանակ կընդարձակվեն անչափելի բարձրությունների և խորքերի՝ համապատասխան իր նոր հոգեղեն մարմնի և հիշողությունը կհետևի մեր ամբողջ կյանքի ճանապարհին՝ սկսած վաղ մանկությունից, և մենք, հակադրությամբ, կկարողանանք լիովին ըմբռնել մեր զոհաբերության փառավոր վարձատրությունը: Բայց այս ամենը անհնար կլիներ, եթե մարդկայինը հոգեղենի պատկեր չլիներ:

Թող յուրաքանչյուրը, ով իր ամբողջ ունեցածը զոհաբերության սեղանին է դրել, միշտ հիշի, որ թեև Աստծո Խոսքը պարունակում է և՛ երկրային, և՛ երկնային խոստումներ, միայն վերջիններն են պատկանում մեզ: Մեր գանձը երկնքում է, ուստի թող մեր սրտերը մշտապես այնտեղ լինեն: Մեր կոչումը վերաբերում է ոչ միայն հոգեղեն բնությանը, այլև հոգեղեն բնության ամենաբարձր կարգին՝ աստվածային բնությանը, որը «հրեշտակներից այքան ավելի լավ» (Բ Պետրոս 1:4, Եբր.1:4): Այս երկնային կոչը սահմանափակված է Ավետարանական դարաշրջանով. այն երբեք չի եղել դրանից առաջ և կդադարի դրա ավարտին: Երկնային կոչումից առաջ տրվեց երկրային կոչ, թեև այն ամբողջությամբ չէր հասկացվել, և մեզ ասվում է, որ այն կշարունակվի Ավետարանական դարաշրջանից հետո: Կյանքը [նրանց համար ովքեր պետք է վերականգվեն որպես մարդիկ] և անմահությունը [մրցանակը, որի համար Քրիստոսի մարմինը վազում է] ի լույս են բերվել ներկա դարաշրջանի ընթացքում (Բ Տիմ. 1:10): Թե մարդկային և թե հոգեղեն բնությունները փառավոր պիտի լինեն իրենց կատարելության մեջ, սակայն անջատ և տարբեր: Աստծո ավարտված գործի փառքի կարևոր առանձնահատկությունը կլինի հիասքանչ բազմազանությունը, ամեն բաների՝ կենդանի և անկենդան զարմանալի ներդաշնակությամբ - ներդաշնակությունը՝ միմյանց և Աստծո հետ:

ԳԼՈՒԽ 11

Երեք Ճանապարհներ – Լայն Ճանապարհ, Նեղ Ճանապարհ, Պողոտա

Դեպի կորուստ տանող ընդարձակ ճանապարհը – Կյանքի տանող նեղ ճանապարհը - Ի՞նչ է կյանքը – Աստվածային բնությունը - Աստվածային և մարդկային բնությունների փոխկապակցվածությունը - Նեղ ճանապարհի վերջում սպասվող վարձատրությունը - Վերին կոչը սահմանափակված է Ավետարանական դարաշրջանով – Նեղ ճանապարհի դժվարություններն ու վտանգները – Սրբության Պողոտան

«Լայն է այն դուռը և ընդարձակ այն ճանապարհը, որ դեպի կորուստ է տանում, և շատ են նրանք, որ մտնում են դրանով, որովհետև նեղ է այն դուռը և նեղվածք է այն ճանապարհը, որ դեպի կյանք է տանում, և քչերն են, որ գտնում են այն» (Մատթ.7:13,14):

«Այնտեղ պողոտա և ճանապարհ կլինի, որին սուրբ ճանապարհ կասեն. այդ տեղով անմաքուրը չպիտի անցնի, դա նրանցը կլինի. այդ ճանապարհով գնացողները, հիմարներն անգամ չեն մոլորվի: Այնտեղ առյուծ չի լինելու, այնտեղով գիշատիչ գազան չի անցնի. դրանք այնտեղ չեն գտնվելու. բայց փրկագնվածները ման կգան այնտեղ» (Եսայիա 35:8,9):

Այսպիսով, Սուրբ Գրություններում մեր ուշադրությանն են ներկայացվում երեք ճանապարհներ՝ «ընդարձակ ճանապարհը», «նեղ ճանապարհը» և «Պողոտան»:

Դեպի կորուստ տանող ընդարձակ ճանապարհը

Այս ճանապարհը այդպես է կոչվում, որովհետև այն ամենահեշտն է անկյալ մարդկային ցեղի համար: Վեց հազար տարի առաջ Ադամը՝ կործանման դատապարտված մեղապարտը (և նրա մեջ ներկայացված ողջ մարդկությունը), ոտք դրեց այս ճանապարհին և ինը հարյուր երեսուն տարի անց հասավ դրա վերջին՝ կործանմանը:

Տարիներն ու դարերը անցել են, և ներքև տանող ուղին ավելի ու ավելի հարթ ու մաշված է դարձել, իսկ մարդկությունը ավելի ու ավելի արագ շտապեց դեպի կործանում, ճանապարհը օրեցօր ավելի է փայլփլել, սղվել և սայթաքուն դարձել մեղքի պատճառով: Եվ ոչ միայն ճանապարհը դառնում է ավելի սայթաքուն, այլև մարդկությունը օրեցօր կորցնում է դիմադրության ուժը, այնպես որ այժմ մարդու կյանքի միջին տևողությունը մոտավորապես երեսունհինգ տարի է: Մարդիկ այժմ ճանապարհի վերջին՝ ոչնչացմանը, հասնում են ինը հարյուր տարով ավելի արագ, քան առաջին մարդը:

Վեց հազար տարի մարդկությունը շարունակ հետևել է լայն՝ դեպի վար տանող ճանապարհին: Համեմատաբար միայն քչերն են փորձել փոխել իրենց ընթացքը և հետ վերադառնալ իրենց քայլերով: Իրականում բոլոր քայլերը հետ վերադարձնելը և սկզբնական կատարելությանը հասնելը անհնարին է եղել, թեև որոշների այդ ջանքերը գովելի են եղել և առանց օգտակար արդյունքների չեն մնացել: Վեց հազար տարի մեղքն ու մահը անողոքորեն տիրել են մարդկության վրա և նրանց մղել այս լայն ճանապարհով դեպի կործանում: Եվ միայն Ավետարանական դարաշրջանում հայտնվեց փրկության ճանապարհը: Չնայած նախորդ դարերում հույսի շողերը

թույլ էին երևում նախատիպերում և ստվերներում, որոնք մի քանիսը ուրախությամբ ողջունեցին և որոնցով առաջնորդվեցին, սակայն կյանքն ու անմահությունը լույսի բերված չէր, մինչև մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի հայտնվելը և մինչև առաքյալների կողմից փրկության, մեղքերի թողության և հետևաբար կործանումից հարության բարի լուրերի քարոզչությունը (Բ Տիմ. 1:10): Հիսուսի և առաքյալների ուսուցումները դեպի լույս բերեցին կյանքը՝ բոլոր մարդկանց համար կյանքի վերահաստատություն կամ վերականգնում, որը հիմնված է Փրկչի արժանիքի և զոհաբերության վրա: Դրանք ցույց տվեցին, որ սա հին Կտակարանի բազմաթիվ խորհրդաբանական պատկերների նշանակությունն է: Դրանք նաև լույսի մեջ բերեցին անմահությունը՝ Ավետարանական Եկեղեցու վերին կոչման մրցանակը:

Թեև Ավետարանի միջոցով կործանումի լայն ճանապարհից ազատվելու միջոց է ի լույս բերված, սակայն մարդկության մեծ զանգվածը այս բարի լուրին ուշադրություն չի դարձնում, որովհետև մեղքի միջոցով ապականված ու հակառակորդից կուրացած են: Նրանք, ովքեր այժմ երախտագիտորեն ընդունում են կյանքի խոստումը՝ Քրիստոսի միջոցով մարդկային գոյության վերականգնումը, նրանց ցույց է տրվում մի նոր ճանապարհ, որով նվիրված հավատացյալները կարող են անցնել մարդկային բնությունից և փոխվել ավելի բարձր՝ հոգեղեն բնության: Այս նոր ճանապարհը, «մեզ համար բացված» — թագավորական քահանայության (Եբր. 10:20) — մեր Տերը անվանեց

Կյանքի տանող նեղ ճանապարհ

Մեր Տերը մեզ ասում է, որ հենց այս ճանապարհի նեղության պատճառով շատերը նախընտրում են մնալ

լայն ճանապարհին, որը դեպի կորուստ է տանում: «Նեղ է այն դուռը և նեղվածք է այն ճանապարհը, որը դեպի կյանք է տանում, և քչերն են, որ գտնում են այն»:

Այս ճանապարհը և դրա վտանգներն ու դժվարությունները քննարկելուց առաջ նկատենք այն վերջնակետը, որին այն տանում է՝ կյանք: Ինչպես արդեն տեսանք՝ կյանքը կարելի է վայելել գոյության տարբեր մակարդակներում՝ թե՛ մարդկայինից բարձր, թե՛ ցածր: Կյանքը լայն և ընդգրկուն հասկացողություն է, բայց այստեղ մեր Տերը կյանքի ամենաբարձր դասի՝ անմահությանն է ակնարկում, որը Աստվածային բնությանն է պատկանում և սա այն մրցանակն է, որին հասնելու համար նա հրավիրեց մեզ վազել: Ի՞նչ է կյանքը: Մենք այն ոչ միայն զգում ենք այն մեր մեջ, այլև տեսնում ենք դրա գործունեությունը կենդանիների և նույնիսկ բուսականության մեջ, և մեզ ասվում է դրա գոյության մասին բարձրագույն ձևերում՝ հրեշտակային և աստվածային: Ինչպե՞ս սահմանենք այսքան համապարփակ տերմինը:

Չնայած մենք չկարողանանք բացահայտել բոլորի մեջ գտնվող կյանքի թաքնված աղբյուրները, սակայն կարող ենք վստահորեն ենթադրել, որ Աստվածային Էակը՝ Եհովան է ամեն կյանքի մեծ աղբյուրը, որից սնվում են այս բոլոր աղբյուրները: Բոլոր կենդանի արարածները ստանում են կյանքը նրանից և կախված են նրանից: Ամեն կյանք, լինի Աստծո մեջ, թե նրա արարածների մեջ՝ միևնույն է՝ այն մի էներգիա հաղորդող սկզբունք է, ոչ թե նյութ: Դա մի սկզբունք է, որը կենտրոնացած է Աստծո մեջ, սակայն նրա արարածների մեջ՝ այն առաջ է գալիս Աստծո սահմանած որոշ պատճառներից, և, հետևաբար, Նա դրա պատճառն է, հեղինակը կամ աղբյուրը: Ուստի արարածը

ոչ մի իմաստով Ստեղծչի էության կամ բնության մի մասը կամ ճյուղը չէ, ինչպես ոմանք են պատկերացնում, այլ Աստծո ձեռքի գործն է, կյանքով օժտված:

Ըմբռնելով այն փաստը, որ միայն աստվածային բնության մեջ կյանքը անկախ, անսահման, անսպառ, անընդմեջ է և ոչ մի հանգամանքով չի ստեղծվում կամ վերահսկվում, մենք տեսնում ենք, որ Եհովան գերազանցում է այն ֆիզիկական օրենքներն ու միջոցները, որոնք Նա սահմանել է իր արարածների գոյատևման համար: Այս հատկությունը, որը պատկանում է միայն աստվածային բնությանը, կոչվում է անմահություն: Ինչպես ցույց տրվեց նախորդ գլխում, անմահություն նշանակում է մահվան ենթակա չլինել, հետևաբար նաև հիվանդության և ցավի ենթակա չլինել: Իրականում անմահությունը կարելի է օգտագործել որպես աստվածության հոմանիշ: Աստվածային, անմահ աղբյուրից բխում է ամեն կյանք ու օրհնություն, ամեն բարի և կատարյալ պարգև, ինչպես որ երկիրը արևից ընդունում է լույսն ու զորությունը:

Արևը երկրի համար լույսի մեծ աղբյուր է, որը լուսավորում է իր շուրջը գտնվող ամեն բան և ստեղծում է գույների ու երանգների հարուստ բազմազանություն՝ կախված այն առարկայի բնույթից, որի վրա այն շողում է: Միևնույն արևի լույսը, երբ ընկնում է ադամանդի, աղյուսի և տարբեր տեսակի ապակիների վրա, առաջ է բերում տարբեր արդյունքներ: Լույսը նույնն է, սակայն առարկաները՝ որոնց վրա այն փայլում է, տարբերվում են այն ընդունելու և արտացոլելու կարողությամբ: Նույնն է կյանքի դեպքում. այն ամբողջությամբ բխում է մեկ անսպառ աղբյուրից: Ոստրեն կյանք ունի, սակայն նրա օրգանիզմը այնպիսին է, որ չի կարող օգտագործել շատ

կյանք, ինչպես աղյուսը վատ է արտացոլում արևի լույսը: Նույնն է կյանքի բարձրագույն դրսևորումների դեպքում՝ կենդանիների, ձկների և թռչունների մեջ: Ինչպես արևի տակ տարբեր տեսակի ապակիները, այնպես էլ այս տարբեր արարածները իրենց բնական կարողությունները դրսևորում են տարբեր ձևերով՝ կարողություններ, որոնք նրանք ունեն, երբ կյանքը կենդանացնում է նրանց մարմինները:

Հղկված ադամանդը այնքան ներդաշնակ է լույսին, որ թվում է, թե ինքն է այն կրում իր մեջ և ինքն է մի փոքրիկ արև: Նույնն է նաև մարդու դեպքում՝ Աստծո ստեղծագործության գլուխգործոցներից մեկը, «երկնային հրեշտակներից մի փոքր ցածր»: Նա այնքան հրաշալիորեն էր ստեղծված, որ կարող էր ընդունել և պահպանել կյանքը՝ օգտագործելով Աստծո տրամադրած միջոցները, և երբեք չթառամել: Այսպիսով, իր անկումից առաջ Ադամը ավելի հիասքանչ էր, քան ցանկացած այլ երկրային արարած՝ ոչ թե իրեն տրված կյանքի սկզբունքի որևէ տարբերության պատճառով, այլ ավելի վսեմ կազմություն ունենալու շնորհիվ: Սակայն պետք է հիշել, որ ինչպես ադամանդը չի կարող արտացոլել լույսը, եթե այն արևի ճառագայթներով չի լուսավորվում, այնպես էլ մարդը կարող է տիրապետել և վայելել կյանքը միայն այնքան ժամանակ, երբ կյանքի մատակարարումը շարունակվում է: Մարդը իր մեջ ինքնաբուխ կյանք չունի: Նա կյանքի աղբյուր չէ, ինչպես ադամանդը լույսի աղբյուր չէ: Եվ ամենաակնառու ապացույցներից մեկը, որ մեր մեջ կյանքի անսպառ պաշար չկա, կամ, այլ կերպ ասած, որ մենք անմահ չենք, այն է, որ մեղքի մուտքից ի վեր մահը տարածվել է բոլորի վրա:

Աստված կարգադրել էր, որ մարդը Եդեմի մեջ ազատություն պիտի ունենա մոտենալու կյանքը վառ պահող ծառերին: Նրան բնակեցրած դրախտը առատորեն տնկված էր «ամեն տեսակ ծառերով», որոնք հաճելի էին աչքին և լավ կերակուր էին (Ծննդոց 2:9, 16, 17): Ուտելու հարմար կյանքի ծառերի մեջ մեկը արգելված էր: Չնայած ժամանակավորապես արգելված էր ուտել գիտության ծառից, մարդը ազատ էր ուտել այն ծառերից, որոնք կատարյալ կերպով պահպանում էին կյանքը: Մեղանչելուց հետո միայն նա զրկվեց դրանցից, որպեսզի մահվան պատիժը այդպիսով ուժի մեջ մտնի (Ծննդոց 3:22):

Այսպիսով մարդկության փառքը և գեղեցկությունը կախված են կյանքի անընդմեջ մատակարարումից, ինչպես ադամանդի գեղեցկությունը կախված է արևի անընդմեջ լույսից: Երբ մեղքը զրկեց մարդկությանը կյանքի իրավունքից, և մատակարարումը դադարեց, անմիջապես գոհարը սկսեց կորցնել իր փայլը և գեղեցկությունը, և վերջապես գերեզմանում զրկվեց իր վերջին շողքից: Ցեցի պէս կը մաշվին նրա ցանկալի բաները (Սաղմոս 39:11): Ինչպես ադամանդը կորցնում է իր գեղեցկությունն ու փայլը, երբ լույսը նրանից հեռացվում է, այնպես էլ մարդը կորցնում է կյանքը, երբ Աստված նրանից վերցնում է իր աջակցությունը: «Բայց մարդը մեռնում, գնում է, այո, ավանդում է իր հոգին, և ուր է նա» (Հոբ 14:10): «Նրա որդիները պատվի են հասնում, սակայն ինքը չի իմանում, աղքատության են մատնվում, ու նա տեղյակ չէ այդ մասին»: (21-րդ խոսք) «Որովհետև գերեզմանում, ուր որ գնալու ես, գործ, նշանակություն, գիտություն և իմաստություն չկա» (Ժողովող 9:10): Բայց քանի որ փրկանք է գտնվել, երբ Փրկիչը վճարեց մահվան պատիժը, թանկարժեք քարը պետք է վերականգնի իր նախկին գեղեցկությունը և կրկին կատարյալ կերպով

արտացոլի Ստեղծչի պատկերը, երբ Արդարության Արեգակը ծագի՝ իր թևերի վրա բժշկություն ունենալով (Մաղ. 4:2): Դա մեղքի զոհի, Քրիստոսի զոհաբերության շնորհիվ է, որ «բոլոր նրանք, ովքեր գերեզմաններում են, դուրս կգան»: Կլինի ամեն բաների վերականգնում. առաջին հերթին բոլորին վերականգնման հնարավորություն կամ առաջարկ, և վերջապես՝ մարդկային կատարելություն բոլոր նրանց, ովքեր կհնազանդվեն Փրկչին:

Սակայն սա այն պարգևը չէ, որի մասին Հիսուսը խոսում է նեղ ճանապարհի ավարտին: Սուրբ Գրքի այլ հատվածներից իմանում ենք, որ նեղ ճանապարհով ընթացողներին խոստացված պարգևը «աստվածային բնությունն» է՝ ինքնաբուխ կյանք, այն գերագույն աստիճանում, որը հատուկ է միայն աստվածային բնությանը՝ անմահություն: Ի՜նչ մեծ հույս է սա: Արդյո՞ք համարձակվում ենք ձգտել այդպիսի փառքի բարձրության: Իհարկե ոչ, առանց դրական և հստակ հրավերի ոչ ոք օրինականորեն չի կարող դրան հավակնել:

Ա Տիմ. 6:14-16-ից իմանում ենք, որ անմահ կամ աստվածային բնությունը սկզբնապես պատկանել է միայն Աստվածությանը: Կարդում ենք. «Նա [Հիսուս] իր ժամանակին [Հազարամյա դարաշրջանում] ցույց պիտի տա, թե ով է օրհնյալն ու միակ իշխանը՝ թագավորների Թագավորն ու տերերի Տերը, որ միայն նա ունի անմահությունը, որ բնակվում է անհասանելի լույսի մեջ, որին մարդկանցից ոչ ոք չի տեսել ու ոչ էլ կարող է տեսնել»: Բոլոր մյուս արարածները՝ հրեշտակները, մարդիկ, գազանները, թռչունները, ձկները և այլն, ընդամենը անոթներ են, որոնք յուրաքանչյուրն իր չափով կյանք են պարունակում, և բոլորն էլ տարբերվում են նկարագրով,

կարողությամբ և հատկությամբ՝ կախված այն մարմնի ձևից, որը Ստեղծողը հաճեց շնորհել յուրաքանչյուրին:

Այնուհետև մենք իմանում ենք, որ Եհովան, Ով Ինքն սկզբից ուներ անմահություն, բարձրացրեց Իր Որդուն, մեր Տեր Հիսուսին, նույն աստվածային, անմահ բնությանը: Նա այժմ Հոր էության պատկերն է (Եբր. 1:3): Մենք կարդում ենք՝ «Ինչպես Հայրն ինքն իր մեջ կյանք ունի, [Աստծո սահմանումը «անմահություն» - կյանք իր անձի մեջ, ոչ այլ աղբյուրներից ստացած, և ոչ էլ կախված է որևէ հանգամանքից, այլ անկախ և անբաժան կյանք], այնպես էլ Որդուն տվեց որ ինքն իր մեջ կյանք ունենա» (Հովհ. 5:26): Հետևաբար, Տեր Հիսուսի հարությունից ի վեր գոյություն ունեն երկու անմահ էակներ, և ինչ հիասքանչ շնորհ՝ որ նույն պարգևը խոստացված է Գառան հարսին, որը ընտրվում է ողջ Ավետարանական դարաշրջանի ընթացքում: Սակայն անվանական եկեղեցու մեջ գտնվող մեծ բազմությունը, որը իրեն Եկեղեցի է կոչում, չի ստանա այս մեծ մրցանակը, այլ միայն հաղթողների «փոքր հոտը», որոնք վազում են այն ձեռք բերելու համար, որոնք ուշադիր հետևում են Տիրոջ հետքերին, որոնք, ինչպես Նա, քայլում են զոհաբերության նեղ ճանապարհով մինչև մահ: Երբ նրանք մեռելներից հարություն առնելով նորից ծնվեն, նրանք կունենան աստվածային բնություն և կերպարանք: Այս անմահ, անկախ, ինքնագոյ, Աստվածային բնությունը, այն կյանքն է, որին տանում է նեղ ճանապարհը:

Այս դասակարգը գերեզմանից հարություն չի առնի որպես մարդկային էեակներ, որովհետև առաքյալը մեզ վստահեցնում է, որ, թեև գերեզմանի մեջ հողեղեն մարմիններ կսերմանվի, սակայն որպես հոգեղեն մարմիններ պիտի հարություն առնեն: Բոլորը «փոխվելու»

են, և ինչպես մի ժամանակ կրել են հողեղեն, մարդկային բնության պատկերը, այնպես էլ կկրեն երկնայինի պատկերը: Բայց «դեռևս հայտնի չէ, թե ինչ ենք լինելու» — ինչ է հոգեղեն մարմինը, սակայն «բայց գիտենք, որ երբ նա հայտնվի, նրա նման պիտի լինենք» և կկիսենք «հայտնվելիք փառքը» (Ա Հովհ. 3:2, Կող. 1:27, Բ Կորնթ. 4:17, Հովհ. 17:22, Ա Պետ. 5:10, Բ Թեսաղ. 2:14):

Բնության փոփոխության այս վերին կոչը ոչ միայն բացառապես սահմանափակված է Ավետարանական դարաշրջանով, այլև այն այս դարի միակ առաջարկն է: Ուստի մեր Տիրոջ խոսքերը, որոնք մեջբերված են այս գլխի սկզբում, ոչնչացման լայն ճանապարհին են թողնում բոլոր նրանց, ովքեր չեն գտնվում այժմ առաջարկվող միակ մրցանակի նեղ ուղղու վրա: Մինչ այժմ միայն առաջիններն են խուսափել աշխարհի վրա կախված դատապարտությունից: Սա է կյանքի միակ ճանապարհը, որը այժմ բաց է, և իր դժվարության պատճառով, քչերն են ցանկանում քայլել դրանով: Մարդկության զանգվածները իրենց թուլության պատճառով, նախնտրում են անձնահաճության ընդարձակ ու հեշտ ուղղով քայլել:

Նեղ ճանապարհը, թեև ավարտվում է կյանքով ու անմահությամբ, կարելի է այն անվանել մահվան ճանապարհ, քանի որ նրա մրցանակը ձեռք է բերվում մարդկային բնության մինչև ի մահ զոհաբերման միջոցով: Սա մահվան նեղ ճանապարհն է, որը դեպի կյանք է տանում: Ադամական մեղքի ու մահվան դատապարտությունից ազատ համարված, նվիրվածները կամավոր հանձնում կամ զոհաբերում են իրենց վերապահված մարդկային իրավունքները, որոնք նրանք, ի վերջո, իսկապես կստանային ամբողջ աշխարհի հետ միասին: Ինչպես «Քրիստոս Հիսուս Մարդը» աշխարհի

համար զոհաբերեց իր կյանքը, այնպես էլ նրանք դառնում են զոհաբերության մասնակիցներ Նրա հետ միասին (Կող.1:24, Ա Պետրոս 4:12,13, Գործք առ. 9:4,5): Ոչ թե նրա զոհաբերությունը անբավարար էր և անհրաժեշտ էին ուրիշներ, այլ՝ թեև նրա զոհաբերությունը լիովին բավարար է, նրանց թույլատրվում է ծառայել և չարչարվել նրա հետ, որպեսզի դառնան նրա հարսը և ժառանգակիցը: Ուստի, մինչ աշխարհը մահվան դատապարտության տակ է, մեռնում է Ադամի հետ, այս «փոքրիկ հոտի» մասին ասվում է, որ նա հավատքով արդար հայտարարվելու և զոհաբերության ընթացքի շնորհիվ, Քրիստոսի հետ է մեռնում: Նրանք զոհաբերվում և մեռնում են նրա հետ որպես մարդիկ, որպեսզի դառնան նրա հետ աստվածային բնության և փառքերի մասնակիցներ, որովհետև հավաստի է այս խոսքը. «Եթե նրա հետ մեռանք, նրա հետ էլ կապրենք»: Եթե հաղորդակից լինենք Նրա չարչարանքներին, ապա նրա փառքին էլ հաղորդակից կլինենք (Բ Տիմոթեոս 2:11,12 – Հռոմ. 8:17):

Հազարամյա դարաշրջանի սկզբին նրանք, ովքեր այժմ քայլում են նեղ ճանապարհով, կստանան այն մեծ մրցանակը, որի համար վազեցին՝ անմահությունը և այդպիսով, հագնված աստվածային բնությամբ ու զորությամբ, նրանք պատրաստ կլինեն աշխարհը վերականգնելու և օրհնելու մեծ գործին, որը տեղի կունենա այդ դարաշրջանում: Ավետարանական դարաշրջանի ավարտին նեղ ճանապարհը անմահության կփակվի, քանի որ այն փորձելու և ապացուցելու համար նախատեսված ընտրյալ «փոքր հոտը» արդեն ամբողջացած կլինի: «Հիմա է ընդունելի ժամանակը» — այն ժամանակը, երբ զոհաբերողները, Հիսուսի արժանիքով գալով և նրա հետ մեռնելով, Աստծուն

ընդունելի են՝ որպես անուշահոտ զոհ: Մահը, որպես Ադամական դատապարտություն, հավիտյան չի թույլատրվի. այն կոչնչանա հազարամյա դարաշրջանում: Որպես զոհ այն ընդունելի և պարգևատրելի կլինի միայն Ավետարանական դարաշրջանի ընթացքում:

Այս դարի սրբերը միայն որպես «նոր արարածներ» են կյանքի ճանապարհին, սակայն որպես մարդկային էակներ, մենք որպես զոհ նվիրաբերված ենք ոչնչացմանը: Եթե որպես մարդկային արարածներ Քրիստոսի հետ մեռանք, ապա որպես նոր, հոգեղեն էակներ, նրա հետ պիտի ապրինք (Հռոմ. 6:8): Աստծո միտքը մեր մեջ, փոխակերպված միտքը, նոր բնության սերմն է: Մեր մեջ գտնվող Աստծո միտքը՝ կերպարանափոխված միտքը, նոր բնության սերմն է:

Նոր կյանքը կարող է հեշտությամբ խեղդվել: Պողոսը առաքյալը վստահեցնում է մեզ, որ եթե ճշմարտության միջոցով ծնվել ենք Հոգուց, ապա մարմնով ապրելու դեպքում կմեռնենք (կկորցնենք մեր կյանքը), սակայն եթե Հոգու միջոցով մարմնի գործերը (մարդկային բնության հակումները) մեռցնենք, ապա մենք (որպես նոր արարածներ) կենդանի կմնանք, որովհետև Աստծո որդիները նրանք են, ում առաջնորդում է Աստծո Հոգին (Հռոմ. 8:13,14): Սա առավել կարևոր միտք է բոլոր նվիրվածների համար, որովհետև եթե մենք Աստծո հետ ուխտ ենք կապել զոհաբերելու մարդկային բնությունը, և եթե այդ զոհաբերությունը ընդունվել է Նրա կողմից, ապա անիմաստ է փորձել այն հետ վերցնել: Մարդկային բնությունը Աստծո կողմից այժմ համարվում է մեռած և պետք է իրականում մեռնի՝ այլևս երբեք չվերականգնվելու համար: Ուստի մարմնավոր կյանքին վերադառնալով ձեռք

բերելիք ամենը մի քանի մարդկային հաճույքներ են՝ նոր հոգեղեն բնության հաշվին (Նո բնության կորուստ):

Այնուամենայնիվ, կան շատ նվիրվածներ, ովքեր ձգտում են մրցանակին և ովքեր ծնվել են Հոգուց, սակայն մասամբ հաղթվում են աշխարհի հրապույրներից, մարմնի ցանկություններից կամ սատանայի հնարքներից: Նրանք մասամբ իրենց աչքերից կորցնում են մեզ առաջարկվող մրցանակը և փորձում են ընթանալ միջին ճանապարհով՝ փորձելով միաժամանակ պահպանել թե՛ Աստծո, թե՛ աշխարհի բարեհաճությունը, մոռանալով, որ «աշխարհի սերը թշնամություն է Աստծո դեմ» (Հակոբոս 4:4), և որ մրցանակին հասնելու համար ասպարեզում վազողներին տրված հրահանգներն են «Մի՛ սիրեք աշխարհը, և մի՛ ընդունեք փառք միմյանցից, բացի այն փառքից, որ գալիս է Աստծուց» (Ա Հովհաննես 2:15, Հովհաննես 5:44):

Նրանք, որոնք սիրում են ներկա աշխարհը, սակայն ամբողջությամբ չեն թողել Տիրոջը և չեն անարգել իրենց ուխտը, ստանում են մտրակներ և մաքրվում են տառապանքի կրակով: Ինչպես հայտնում է Առաքյալը, նրանք մատնված են Սատանային մարմնի կործանման համար, որպեսզի հոգին (նորածին բնությունը) փրկվի Տեր Հիսուսի օրը (Ա Կորնթ. 5:5): Եթե նրանք ճիշտ ընդունեն այդպիսի խրատը, ապա վերջապես կընդունվեն հոգեղեն վիճակ: Նրանք կունենան հավիտենական հոգեղեն կյանք, ինչպես հրեշտակներն ունեն, սակայն կկորցնեն անմահության պարգևը: Նրանք կծառայեն Աստծուն նրա տաճարում և կկանգնեն աթոռի առջև՝ ձեռքերում արմավենու ճյուղեր բռնած (Հայտնություն 7:9-17), սակայն, թեև դա փառավոր կլինի, այն չի լինի այնքան փառավոր, որքան հաղթողների «փոքր հոտի» դիրքը, որոնք կլինեն Աստծու թագավորներ և քահանաներ,

նստած Հիսուսի հետ աթոռին որպես նրա հարս և ժառանգակից, և նրա հետ պսակված անմահությամբ:

Մեր ճանապարհը անհարթ, կտրուկ և նեղ է, և եթե ճանապարհորդության յուրաքանչյուր հաջորդ քայլի համար ուժ չտրամադրվեր, մենք երբեք չէինք հասնի նպատակակետին: Բայց մեր Զորավարի խոսքը քաջալերիչ է. «Քաջասիրտ եղեք: Ես հաղթեցի: Իմ շնորհքը քեզ բավական է, որովհետև Իմ զորությունը տկարության մեջ է կատարյալ դառնում» (Հովի. 16:33, Բ Կորնթ. 12:9): Այս ճանապարհի դժվարությունները պետք է ծառայեն որպես մաքրագործող սկզբունք «սեփական ժողովրդի» սրբացման և հղկման համար, որպեսզի նրանք դառնան «Աստծո ժառանգներ և Քրիստոսի ժառանգակիցներ»: Սա հիշելով՝ համարձակությամբ մոտենանք շնորհի աթոռին, որպեսզի ողորմություն ստանանք ու շնորհ գտնենք մեզ օգնության պատեհ ժամին, մինչ մղում ենք հավատքի բարի պատերազմ, ամուր բռնելով «փառքի անթառամ պսակը»—անմահությունը, աստվածային բնությունը (Բ Տիմ. 4:8, Ա Պետրոս 5:4):

Սրբության Պողոտան

Չնայած Ավետարանական դարաշրջանի հատուկ հույսը անչափ փառավոր է, և դրան տանող ճանապարհը համապատասխանաբար դժվար՝ նեղ, յուրաքանչյուր քայլին շրջապատված դժվարություններով և վտանգներով, այնպես որ քչերն են գտնում այն և ստանում դրա վերջում գտնվող մեծ մրցանակը, գալիք դարաշրջանի նոր կարգը ամբողջովին տարբեր է լինելու: Այլ հույսն էլ տանում է այլ ճանապարհով: Անմահության ճանապարհը այնպիսի ճանապարհ է, որը պահանջում է զոհաբերել իրապես օրինավոր և պատշաճ հույսերի, ձգտումների, և ցանկությունների՝ մարդկային բնության ընդմիշտ

զոհաբերություն: Բայց մարդկային կատարելության, վերահաստատման, աշխարհի հույսի ճանապարհը պահանջում է միայն մեղքի մերժումը՝ ոչ թե մարդկային իրավունքների և արտոնությունների զոհաբերությունը, այլ դրանց ճիշտ վայելումը: Այն կհանգեցնի անհատական մաքրագործման և դեպի Աստծո պատկերի վերականգնման, ինչպես այն վայելում էր Ադամը մինչև մեղքը կմտներ աշխարհ:

Վերադարձի ճանապարհը դեպի իրական մարդկային կատարելություն կդառնա շատ պարզ և հեշտ, այնքան պարզ, որ ոչ ոք չկարողանա սխալվել ճանապարհին, այնքան պարզ, որ «ճանապարհը գնացողը և տկարամիտներն էլ չեն մոլորվի» (Ես. 35:8), այնքան պարզ, որ ոչ ոք իր դրացուն չի սովորեցնի՝ ասելով. «ճանաչիր Տիրոջը», որովհետև նրանք բոլորը պիտի ճանաչեն ինձ, նրանց փոքրից մինչև նրանց մեծը (Երեմ. 31:34): Ճիշտ հակառակ նեղ ճանապարհին, որը քչերն են գտնում, այս ճանապարհը կոչվում է «Պողոտա» հանրային ճանապարհ — ոչ թե նեղ, կտրուկ, անհարթ, դժվար, ցանկապատված կողմնակի ուղի, այլ հատուկ պատրաստված հեշտ ճանապարհորդության համար — հատուկ կազմակերպված ճանապարհորդների հարմարավետության և հանգստության համար: Եսայիա 35:8-9 համարները ցույց են տալիս, որ դա հանրային ճանապարհ է, բաց բոլոր փրկվածների համար՝ յուրաքանչյուր մարդու համար: Յուրաքանչյուր մարդ, որի համար Քրիստոսը մեռավ, ով կճանաչի և կօգտվի թանկագին արյունով ձեռք բերված հնարավորություններից և օրհնություններից, կկարողանա բարձրանալ այս Սրբության պողոտայով դեպի մարդկային կատարելության մեծ նպատակակետին և հասնի հավիտենական կյանքին:

Նրանք չեն համարվի արդարացված և չեն ստանա սրբության ու կատարելության վերագրված կարգավիճակ Աստծո առաջ: Երբ սկսեն քայլել սրբության պողոտայով, նրանք կարող են բարձրանալ դեպի իրական կատարելություն՝ ջանքերի և հնազանդության արդյունքում: Այդ նպատակով նրանց Փրկիչը, ով այդ ժամանակ իշխանությամբ կկառավարի, նրանց համար կստեղծի առավել բարենպաստ պայմաններ: Յուրաքանչյուր անհատ, իր կարիքներին համապատասխան, օգնություն պիտի ստանա նոր թագավորության իմաստուն և կատարյալ վարչությունից: Սա, ինչպես ոմանք պիտի հիշեն, փրկանքի օրինական արդյունքն է: Քանի որ մեր Տերը՝ Քրիստոս Հիսուսը մարդը, ինքն է տվել իրեն որպես փրկանք բոլորի համար և ցանկանում է, որ բոլորը գան ճշմարտության գիտության և այդպիսով հասնեն իրական կատարելության: Ինչո՞ւ նա անմիջապես չի ստեղծում լավ և լայն պողոտա բոլորի համար: Ինչո՞ւ չի հեռացնում խոչընդոտները, գայթակղիչ քարերը, փոսերն ու որոգայթները: Ինչո՞ւ չի օգնում մեղավորին վերադառնալ Աստծո հետ լիակատար ներդաշնակության, փոխարենը ճանապարհը դարձնելով նեղ, անհարթ, փշոտ և դժվար քայլելու համար: Ճշմարտության Խոսքը ճիշտ բացատրելու անկարողությունը՝ և անտեսումը, որ ներկայիս նեղ ճանապարհը տանում է դեպի հատուկ վարձատրության և որը փոքր հոտի՝ Քրիստոսի մարմնի քննության և ընտրության համար է, որը երբ ընտրվի և իր Գլխի հետ բարձրանա, պիտի օրհնե բոլոր ազգերը, որոշ մարդկանց այս հարցի շուրջ շատ շփոթված պատկերացումների է բերել: Աստծո ծրագիրը չտեսնելով՝ շատերը փորձում են քարոզել սրբության պողոտա, կյանքի հեշտ ուղի ներկայիս դարաշրջանում, երբ նման

ճանապարհ գոյություն չունի, և նրանք խճճում են խնդիրը՝ փորձելով փաստերն ու Սուրբ Գիրքը հարմարեցնել իրենց սխալ տեսություններին: Շուտով բացվելիք Պողոտայի մեջ, մի միայն մեղսալից բաները արգելված կլինեն, մինչդեռ նեղ ճանապարհով գնացողները պետք է հրաժարվեն իրենցից և զոհաբերեն բազմաթիվ ոչ մեղսալից բաներ, ինչպես նաև անընդհատ պայքարեն իրենց պաշարող մեղքերի դեմ: Սա զոհաբերության շավիղ է, մինչդեռ առաջիկա դարում՝ արդարության պողոտա կլինի:

Այդ ճանապարհի մասին խորհրդանշական լեզվով հստակ ասվում է. «Ոչ առյուծ կլինի այնտեղ, ոչ էլ գիշատիչ գազան կանցնի այնտեղով» (Ես. 35:9): Քանի, քանի առյուծներ կան այժմ նրանց ճանապարհին, ովքեր ուրախությամբ կհրաժարվեին մեղսավոր ճանապարհներից և կհետևեին արդարությանը: Ահա անբարոյական հանրային կարծիքի առյուծը, որը շատերին է կանգնեցնում, զրկելով նրանց քաջությունից՝ հնազանդվելու խղճի հրամաններին առօրյա կյանքի գործերում՝ հագուստի, տան, աշխատանքի և այլն: Ոգելից խմիչքի գայթակղության առյուծը խոչընդոտում է հազարավորներին, ովքեր ուրախ կլինեին տեսնել դրա վերացումը: Ոգելից խմիչքի դեմ պայքարողները ներկայումս կանգնած են իրենց ուժերից վեր մի առաջադրանքի առջև, որը միայն գալիք դարի զորությամբ և իշխանությամբ կարող է իրականացվել: Նույնը կարելի է ասել բարոյական բարեփոխումների այլ գովելի փորձերի մասին: «Եվ ոչ էլ գիշատիչ գազան կանցնի այնտեղով»: Չի հանդուրժվելու որևէ հսկա կորպորացիա, որը կազմակերպված է առաջ մղելու ինքնասեր, անհատական շահերը ընդհանուր բարիքի հաշվին: «Նրանք չեն վնասելու ու չեն կործանելու իմ սուրբ լեռան

(թագավորության) վրա», — ասում է Տերը (Ես. 11:9): Չնայած լինելու են դժվարություններ՝ պայքարելու չարի նկատմամբ հակումների հաղթահարման գործում և այլն, այնուամենայնիվ, այս դարի նեղ ճանապարհի համեմատ դա հեշտ ճանապարհ կլինի: Քարերը (գայթակղության քարերը) բոլորը կհեռացվեն, և ճշմարտության դրոշը կբարձրացվի ժողովրդի համար (Ես. 62:10): Անտեղյակությունը և նախապաշարումը կդառնան անցյալի մաս, և արդարությունը կստանա իր արժանի վարձատրությունը, մինչդեռ չարը իր արժանի պատիժը կստանա (Մաղ. 3:15,18): Օգտակար պատիժներով, հարմար խրախուսանքներով և պարզ հրահանգներով, որպես վերադարձած անառակ որդիներ, մարդկությունը պիտի կրթվի և հրահանգվի այն վսեմ կատարելության համար, որից Ադամը ընկավ: Այսպես «Տիրոջ փրկագնածները կվերադառնան [կործանումից, սրբության Պողոտայով]...և նրանց գլխի վրա հավիտենական ուրախություն պիտի լինի, նրանք կգտնեն ցնծություն ու ուրախություն, իսկ տխրությունն ու հառաչը կփախչեն» (Ես. 35:10): Մեր Տերը հիշատակեց միայն այս ճանապարհներից երկուսը, որովհետև երրորդի հայտնվելու ժամանակը դեռ չէր եկել — ինչպես որ ուրախ լուրերը հայտնելիս ասաց. «Այսօր այս գրվածքը կատարվեց», սակայն չնշեց «վրեժխնդրության օրվա» մասին, քանի որ դրա ժամանակը դեռ չէր եկել (Համեմատեք Ղուկաս 4:19 և Եսայիա 61:2): Սակայն այժմ, երբ նեղ ճանապարհը մոտենում է ավարտին, արդարության հիանալի պողոտան ավելի ու ավելի է երևում ծագող օրվա լույսի ներքո:

Այսպիսով մենք պարզեցինք, թե ինչ է «ընդարձակ ճանապարհը», որով այժմ քայլում է մարդկության բազմությունները խաբված «այս աշխարհի իշխան»-ի

կողմից և առաջնորդված խեղաթյուրված պատկերացումներով: Մենք պարզեցինք, որ երբ այս ճանապարհը բացվեց (մեր ցեղը անխոհեմաբար ոտք դրեց դրա վրա) «մեկ մարդու անհնազանդության» միջոցով: Մենք տեսանք, որ «Սրբության պողոտան» պետք է բացվի մեր Տիրոջ կողմից, ով Իրեն տվեց որպես փրկանք բոլորի համար և փրկում է բոլորին այն ոչնչացումից, որի կողմն է տանում «ընդարձակ ճանապարհը», և որ այն, իր ժամանակին, մատչելի և հեշտ կլինի բոլոր փրկագնվածների համար, որոնց Նա գնել է Իր թանկագին արյունով: Մենք նաև տեսանք, որ ներկա «Նեղ ճանապարհը», բացված միևնույն թանկագին արյան արժանիքով, հատուկ ուղի է՝ հատուկ մրցանակի տանող, և այն դարձվել է այդքան նեղ ու դժվարին հենց նրանց քննելու և մաքրելու համար, ովքեր ընտրվել են մասնակից դառնալու աստվածային բնությանը և մեր Տեր Հիսուսի հետ ժառանգակիցներ լինելու փառքի Թագավորությունում, որը շուտով կբացահայտվի բոլորի օրհնության համար: Ովքեր ունեն այս հույսը՝ ովքեր տեսնում են այս մրցանակը, կարող են մնացյալ բոլոր հույսերը կորուստ և աղբ համարել սրա համեմատությամբ (Փիլ. 3:8-15):

ԳԼՈՒԽ 12

Դարերի Ծրագիրը Ներկայացնող Քարտեզի Բացատրությունը

Դարաշրջանները – Հունձքերը – Մակարդակներ Իրական և Հաշվված Կանգնումի – Մեր Տեր Հիսուս Քրիստոսի Ընթացքը – Իր Հետևորդների Ընթացքը – Երեք Դասակարգեր Անվանական Եկեղեցու Մեջ – Բաժանումը Հունձքի Ժամանակ – Օծյալ Դասակարգը Փառավորված – Մեծ Նեղության Դասակարգը – Այրված Որոմները – Օրհնված աշխարհը – Փառավոր Արդյունքը

Այս հատորի վերջում կցված է քարտեզ, որը ներկայացնում է աշխարհի փրկության համար Աստծո ծրագիրը: Մենք փորձել ենք աչքի միջոցով նպաստել մտքին՝ հասկանալու Աստծո ծրագրի առաջադիմական բնույթը և այն հաջորդական քայլերը, որոնք պետք է ձեռնարկեն բոլոր նրանք, ովքեր ակնկալում են ունենալ կատարյալ փոփոխություն մարդկային բնությունից դեպի աստվածային բնություն:

Նախ և առաջ, մենք ունենք երեք մեծ Դարաշրջանների կամ Տնօրենությունների՝ *A, B, C,* շրջագիծը: Առաջինը (*A*) տևել է մարդու ստեղծումից մինչև ջրհեղեղը: Երկրորդը (B)՝ ջրհեղեղից մինչև Քրիստոսի հազարամյա իշխանության սկիզբը, նրա երկրորդ գալստին: Եվ երրորդը՝ «Ժամանակների լրման տնտեսությունը» (C), սկսվում է Քրիստոսի իշխանության սկիզբից և ձգվում է դեպի «գալիք դարեր» (Եփես. 1:10, 2:7): Այս երեք մեծ դարաշրջանները հաճախ

հիշատակվում են Սուրբ Գրություններում. *A-ն* կոչվում է «այն ժամանակվա աշխարհ», *B-ն* մեր Տերը կոչել է «այս աշխարհը», Պողոսը՝ «ներկա չար աշխարհ», իսկ Պետրոսը՝ «հիմիկվա աշխարհ»: *C-ն* կոչվում է «գալիք դար», որում «բնակվում է արդարությունը», — ի հակադրություն ներկայիս չար դարին: Այսօր տիրում է չարը, իսկ արդարները տառապում են, մինչդեռ ապագա դարում ամեն ինչ հակառակն է լինելու՝ տիրելու է արդարությունը, իսկ չարագործները տառապելու են, մինչև չարը վերջնականապես ոչնչացվի:

Այս մեծ տնօրենություններից, դարաշրջաններից, կամ «աշխարհներից» յուրաքանչյուրում Աստծո ծրագիրը մարդկանց նկատմամբ ունի անջատ և տարբեր ուրվագիծ, սակայն յուրաքանչյուրը միայն մեկ մեծ ծրագրի մի մասն է, որը, երբ ամբողջանա՝ կբացահայտի աստվածային իմաստությունը — թեև առանձին վերցրած անհնար է տեսնել նրանց խոր նպատակը: Քանի որ առաջին «աշխարհը» («երկինք և երկիր», իրերի կարգը) անցավ ջրհեղեղով, դա, ըստ երևույթին, այլ կարգ էր, քան «ներկայիս չար դարում», որի իշխանը, մեր Տիրոջ խոսքով, սատանան է: Հետևաբար, ներկայիս չար աշխարհի իշխանը, այն աշխարհի իշխանը չէր, որը գոյություն ուներ մինչ ջրհեղեղը, թեև այդ ժամանակ նա ազդեցություն ուներ: Սուրբ Գրքի որոշ համարներ լույս են սփռում Աստծո այդ ժամանակահատվածում ունեցած գործունեության վրա և այդպիսով տալիս են ամբողջական պատկերացում Նրա ծրագրի մասին: Այդտեղից պարզ է դառնում, որ առաջին «աշխարհը», նախաջրհեղեղյան տնօրենությունը, գտնվում էր «հրեշտակների» վերահսկողության և հատուկ ծառայության ներքո, որոնց թույլատրվեց իրենց ջանքերը ի գործ դնել, ընկած ու դեգրադացված մարդկային ցեղը

բարձրացնելու համար: Առանց որևէ կասկածի, Աստծո թույլտվությամբ նրանք ձգտում էին դա անել, քանի որ նրանց հետաքրքրվածությունը դրսևորվել էր դեռ այն ժամանակ, երբ նրանք երգում և ցնծում էին ուրախությունից՝ տեսնելով ստեղծագործության գործը (Հոբ 38:7): Այն որ հրեշտակներին թույլատրվել էր դառնալ առաջին դարաշրջանի կառավարիչներ, թեև անհաջող, վկայում են ոչ միայն այդ ժամանակաշրջանին վերաբերող բոլոր հղումները, այլև կարելի է հիմնավոր եզրակացություն անել առաքյալի խոսքի հիման վրա, ով, համեմատելով ներկայիս դարաշրջանը անցյալի և ապագայի հետ, ասում է (Եբր. 2:5). «Աստված հրեշտակներին չհնազանդեցրեց գալիք աշխարհը». Այդ աշխարհը պետք է լինի Տեր Հիսուսի և Նրա ժառանգակիցների վերահսկողության տակ: Այսինքն՝ դա կլինի ոչ միայն ավելի արդար կառավարում, քան «ներկա չար աշխարհում» է, այլև ավելի հաջողակ, քան առաջին աշխարհում՝ այն դարաշրջանում, որը «հրեշտակների» ծառայության ներքո էր, և որոնց անկարողությունը մարդկությունը վերականգնելու հարցում ակնհայտ է այն փաստից, որ մարդկային չարությունը այքան շատացավ, որ Աստված իր արդար բարկությամբ ոչնչացրեց այն ժամանակ ապրող ողջ ցեղը, բացի ութ հոգուց (Ծննդոց 7:13):

«Ներկա չար աշխարհում» մարդուն թույլատրվում է փորձել ինքնուրույն ղեկավարել ինքն իրեն, սակայն անկման պատճառով նա գտնվում է սատանայի՝ «այս աշխարհի իշխանի» ազդեցության տակ, որի գաղտնի դավադրությունների և մեքենայությունների դեմ նա ապարդյուն պայքարել է իր երկարատև ինքնակառավարման փորձերում՝ Նոյի ջրհեղեղից մինչև մեր օրերը: Մարդու տիրապետելու այս փորձը, սատանայի

ազդեցության ներքո, պետք է ավարտվի աշխարհի երբևէ տեսած մեծ նեղությամբ և տառապանքով: Այսպիսով կհաստատվի ոչ միայն հրեշտակային զորության ապարդյունությունը մարդկության փրկության գործում, այլև մարդու սեփական ջանքերի ապարդյունությունը բավարար պայմանների հասնելու հարցում:

Այս մեծ դարաշրջաններից երկրորդը (B) բաղկացած է երեք տարբեր դարաշրջաններից, որոնցից յուրաքանչյուրը, որպես առաջընթաց քայլ, առաջ և վեր է տանում Աստծո ծրագրում:

D դարը այն ժամանակաշրջանն էր, երբ Աստված ուներ առանձնահատուկ հարաբերություններ Աբրահամի, Իսահակի և Հակոբի նման հայրապետների հետ:

E -ն հրեական դարն է, կամ Հակոբի մահից հետո այն ժամանակահատվածը, երբ Աստված իր բոլոր սերունդներին համարում էր Իր հատուկ հոգածության առարկա՝ «Իր ժողովուրդը»: Նա նրանց հանդեպ ցուցաբերում էր Իր առանձնահատուկ ողորմությունները՝ ասելով. *«Երկրի բոլոր ազգատոհմերից միայն ձեզ եմ ճանաչել»* (Ամոս 3:2): Նրանք, որպես ազգ, նախապատկերն էին քրիստոնեական Եկեղեցու՝ «սուրբ ազգի» «սեփական ժողովրդի»: Նրանց տրված խոստումները պատկերն էին մեզ տրված «ավելի լավ խոստումների»: Նրանց անապատով անցած ճանապարհը դեպի խոստացված երկիր պատկերն էր մեր մեղքի անապատով անցած ճանապարհին դեպի երկնային Քանան: Նրանց զոհաբերությունները նրանց արդարացնում էին միայն խորհրդանշորեն, ոչ թե իրականում, որովհետև հնարավոր չէ, որ նոխազների և ցուլերի արյունը կարողանար մեղքերը վերացնել (Եբր.

10:4): Բայց Ավետարանական դարաշրջանում, *F*, մենք ունենք «ավելի լավ զոհաբերություններ», որոնք քավում են ամբողջ աշխարհի մեղքերը: Մենք ունենք «թագավորական քահանայություն», որը կազմված է բոլոր նրանցից, ովքեր իրենց նվիրում են Աստծուն որպես «կենդանի զոհեր»՝ սուրբ և ընդունելի, Հիսուս Քրիստոսի միջոցով, ով մեր «Մեծ քահանայապետն» է (Եբր. 3:1): Ավետարանական դարում մենք տեսնում ենք այն իրականությունները, որոնց համար հրյական դարը, նրա ծառայությունները և ծիսակարգերը ստվերներ էին (Եբր. 10:1):

Ավետարանական դարաշրջանը (F) այն ժամանակահատվածն է, երբ Քրիստոսի մարմինը կանչվում է աշխարհից: Հավատքի միջոցով նրան ցուցադրվում է կյանքի պսակը, ինչպես նաև չափազանց մեծ ու թանկագին խոստումներ, որոնց շնորհիվ նրանք կարող են դառնալ աստվածային բնության մասնակիցներ (Վերին կոչմանը ու նրա պահանջներին ենթարկվելու միջոցով - Բ Պետրոս 1:4): Չարիքը դեռևս թույլատրվում է տիրապետել և կառավարել աշխարհը, որպեսզի նրանք, ունենալով շփում դրա հետ, փորձության ենթարկվեն և ցույց տան, արդյոք պատրաստ են զոհելու իրենց մարդկային բնությունը՝ իր բոլոր իրավունքներով և օրհնություններով մեկտեղ, լինելու կենդանի զոհեր՝ Քրիստոսի մահվան կերպարանակից լինելով, որպեսզի արժանի համարվեն նրա փառքին էլ կերպարանակից լինելու հարության ժամանակ (Սաղմոս 17:15):

Երրորդ մեծ դարաշրջանը (C) բաղկացած է լինելու բազմաթիվ դարերից՝ «գալիք դարերից»: Դրանցից առաջինը՝ Հազարամյակի դարաշրջանը (G), միակն է, որի մասին մենք ունենք հստակ տեղեկություններ: Սա հազար

տարի է, որոնց ընթացքում Քրիստոս կթագավորի և կօրհնի երկրի բոլոր ազգերը՝ իրականացնելով «ամեն բաների վերահաստատությունը, ինչի մասին Աստված դարեր առաջ խոսեց իր սուրբ մարգարեների բերանով» (Գործք առ. 3:19-21): Այդ դարաշրջանում մեղքն ու մահը հավիտյան կվերացվեն. «Որովհետև Քրիստոսը պետք է թագավորի, մինչև որ բոլոր թշնամիներին իր ոտքերի տակ դնի. Վերջին թշնամին, որ կխափանվի, մահն է» (Ա Կորնթ. 15:25,26). Սա վերաշինության մեծ շրջան կլինի: Այդ թագավորության մեջ Քրիստոս Հիսուսի հետ միասին կլինի Եկեղեցին՝ նրա հարսնացուն, նրա մարմինը, ինչպես որ նա խոստացավ՝ ասելով. «Ով հաղթի, նրան թույլ կտամ, որ ինձ հետ նստի իմ գահին, ինչպես որ ես հաղթեցի և իմ Հոր հետ նստեցի իր գահին» (Հայտն. 3:21):

«Գալիք դարերը», *Հ*, մեծ վերակառուցման շրջանից հետո լինելու են կատարելության, օրհնության և երջանկության դարեր, որոնց գործի մասին Սուրբ Գրքերը լուռ են: Այս պահին բավական է իմանալ, որ դրանք լինելու են փառքի և օրհնության դարեր՝ աստվածային շնորհի ներքո:

Յուրաքանչյուր այս դարաշրջան ունի իր գործունեության մեկնարկի և զարգացման հստակ սահմանված ժամանակը, և յուրաքանչյուրը ավարտվում է հնձով, որը ցույց է տալիս իր պտուղները: Հրեական դարաշրջանի ավարտին հունձքը տևեց քառասուն տարի՝ սկսվելով Հիսուսի ծառայության սկզբից, երբ նա Աստծո կողմից Հոգով օծվեց (Գործք 10:37,38), մ.թ. 29 թ.-ին ու վերջացավ Երուսաղեմի կործանումով մ.թ. 70 թ.-ին. Այս հունձքի ընթացքում ավարտվեց հրեական դարը և սկսվեց Ավետարանական դարը: Ինչպես ցույց է տրված քարտեզում, այս դարերը միմյանց մեջ են ներառվում:

Հրեական դարը մասամբ ավարտվեց, երբ Տերը, իր երեք ու կես տարվա ծառայության ավարտին, մերժեց այդ ազգին՝ ասելով. «Ահա ձեր տունը ձեզ ավերակ կթողնվի» (Մատթեոս 23:38): Այնուամենայնիվ, նրանց նկատմամբ ևս երեք ու կես տարի շնորհք ցուցաբերվեց՝ Ավետարանի կոչը նրանց համար սահմանափակելով, համահունչ մարգարեի հայտարարությանը (Դանիել 9:24-27) նրանց նկատմամբ շնորհքի յոթանասուն շաբաթների (տարիների) վերաբերյալ, որոնց վերջինի մեջ Մեսիան պետք է կտրվեր (մեռներ), սակայն ոչ իր համար: «Քրիստոս մեռավ [ոչ իր համար, այլ] մեր մեղքերի համար», և այդպիսով զոհը ու պատարագը դադարեցին շաբաթվա մեջտեղում—երեք ու կես տարի առաջ հրեական շնորհքի յոթանասուն շաբաթների ավարտից: Երբ իրական զոհաբերությունը կատարվեց, բնականաբար տիպիկ զոհաբերությունները այլևս չէին կարող ընդունվել Եհովայի կողմից:

Այսպիսով, ավելի լիարժեք իմաստով Հրեական դարը ավարտվեց յոթանասուներորդ շաբաթվա լրանալովը, կամ խաչելությունից երեք ու կես տարի անց—որից հետո Ավետարանը քարոզվեց նաև հեթանոսներին, սկսած Կոռնելիոսից: (Գործք 10:45): Սա ավարտեց նրանց դարը այն առումով, որ Աստծո շնորհն ու ճանաչումը հրեական եկեղեցու նկատմամբ դադարեցին և նրանց ազգային գոյությունը ավարտվեց հաջորդած մեծ նեղության ժամանակ:

Հրեական հունձքի այդ շրջանում սկիզբ է առնում Ավետարանական դարը: Այս դարի նպատակն է հրավիրել, զարգացնել և դատել (Աստծո Քրիստոսը) – Գլուխն ու մարմինը: Սա հոգեղեն տնօրենություն է, ուստի ճիշտ կլինի ասել, որ Ավետարանական դարը սկսվեց Հիսուսի «Սուրբ Հոգով և զորությամբ» օծվելու պահից (Գործք

10:38, Ղուկ. 3:22, 4:1,18) իր մկրտության ժամանակ: Ինչ վերաբերում է Եկեղեցուն՝ Նրա մարմնին, այն սկսվեց երեք ու կես տարի անց:

Ավետարանական դարի վերջում էլ գոյություն ունի հունձք, որտեղ դարձյալ երկու դարերը միմյանց մեջ են ներառվում «ավարտվում է Ավետարանական դարը, և սկսվում է Վերականգնման կամ Հազարամյա դարը: Ավետարանական դարը աստիճանաբար է ավարտվում, ինչպես դա տեղի ունեցավ նրա օրինակ կամ «ստվեր» հանդիսացող հրեական դարի դեպքում: Ինչպես որ հրեական հունձքի առաջին յոթը տարիները հատուկ իմաստով հատկացված էին մարմնավոր Իսրայելին և նրան վերաբերող գործին, այնպես էլ այստեղ մենք գտնում ենք յոթ տարիներ, որոնք միևնույն նշանակությունը ունեն ավետարանական եկեղեցու համար, որոնց կիետևի նեղության («կրակի») շրջան աշխարհի համար՝ որպես պատիժ անարդարության և պատրաստություն արդարության տիրապետության, ինչի մասին կխոսվի ապագայում:

Փառքի Ճամփան

K, L, M, N, P, R, յուրաքանչյուրը ներկայացնում է տարբեր մակարդակ: *N-ը կատարյալ մարդկային* բնության մակարդակն է: Ադամը գտնվում էր այս մակարդակի վրա մինչև մեղք գործելը, սակայն անհնազանդությունից սկսած նա ընկավ ապականության և մեղքի (*R*) մակարդակ, որտեղ ծնվում են նրա բոլոր սերունդները: Սա համապատասխանում է «ընդարձակ ճանապարհին», որը տանում է կործանման: *P-ն* ներկայացնում է տիպային արդարացման հարթությունը, որը համարվում է Օրենքի զոհաբերությունների միջոցով իրականացված: Դա իրական կատարելություն կամ

արդարություն չէր, քանի որ «օրենքը ոչ մի բան կատարյալ չդարձրեց »(Եբր. 7:19):

N-ը ներկայացնում է ոչ միայն մարդկային կատարելության մակարդակը, որը մի ժամանակ զբաղեցրել է կատարյալ մարդը՝ Ադամը, այլև բոլոր արդարացված անձանց դիրքը: «Քրիստոսը մեր մեղքերի համար մեռավ՝ համաձայն Գրքերի», ուստի բոլոր նրանք, ովքեր հավատում են Քրիստոսին՝ ընդունելով Նրա կատարյալ և ավարտված գործը, որպես իրենց արդարացնելու միջոց – իրենց հավատքի պատճառով համարվում են արդարացված, կարծես կատարյալ մարդիկ, կարծես երբեք չեն մեղանչել: Հետևաբար, Աստծո տեսանկյունից բոլոր նրանք, ովքեր ընդունում են Քրիստոսին որպես իրենց Փրկիչ, պայմանականորեն գտնվում են մարդկային կատարելության (N) մակարդակի վրա: Միայն այսպես մարդը կարող է մոտենալ Աստծուն կամ ունենալ որևէ հաղորդակցություն Նրա հետ: Աստված այս մակարդակի վրա բոլոր եղողներին կոչում է որդիներ՝ մարդկային որդիներ. Ադամը նույնպես որդի էր (Ղուկաս 3:38), և ուներ հաղորդակցություն մինչև անհնազանդ դառնալը: Բոլոր նրանք, ովքեր ընդունում են մեր Տեր Հիսուսի կատարած փրկանքի գործը, դիտվում են և *համարվում են* վերականգնված սկզբնական մաքրությանը, որի շնորհիվ նրանք ունեն հաղորդակցություն կամ միություն Աստծո հետ:

Ավետարանական դարում Աստված հատուկ առաջարկ արեց արդարացված մարդկային արարածներին՝ ասելով, որ որոշակի պայմանների դեպքում նրանք կարող են կրել բնության փոփոխություն, դադարել լինել երկրային մարդիկ և դառնալ երկնային, հոգեղեն՝ Քրիստոսի իրենց Փրկիչ նման: Որոշ

հավատացյալներ՝ արդարացված անձինք, գոհ են իրենց ունեցած ուրախության և խաղաղության համար, որոնք բխում են այն համոզմունքից, որ սրբված են իրենց մեղքերից և ուշադրություն չեն դարձնում այն ձայնին, որը կանչում է նրանց բարձրանալ ավելի վեր: Մյուսները, ոգևորված Աստծո սիրուց, որը երևում է նրանց մեղքից փրկելու մեջ, և զգալով, որ իրենք իրենցը չեն, այլ գնված են մեծ գնով, հարցնում են. «Տե՛ր, ի՞նչ ես ուզում, որ անեմ» Նմաններին Տերը պատասխանում է Պողոսի միջոցով, ով ասում է. «Աղաչում եմ ձեզ եղբայրներ, Աստծո ողորմությամբ, որ ձեր մարմինները ներկայացնեք որպես կենդանի զոհ, սուրբ, Աստծուն ընդունելի, որ ձեր բանավոր պաշտամունքն է» (Հռոմ. 12:1): Ի՞նչ է նկատի ունենում Առաքյալը, երբ այսպես հորդորում է մեզ մատուցել ինքներս մեզ որպես կենդանի զոհեր: Նա նկատի ունի, որ մենք պետք է նվիրաբերենք Աստծո ծառայությանը մեր բոլոր ուժերն ու տաղանդները, որպեսզի այսուհետ չապրենք ոչ ինքներս մեզ համար, ոչ ընկերների, ոչ ընտանիքի, ոչ աշխարհի, ոչ էլ որևէ այլ բանի համար, այլ միայն Նրա համար՝ ով մեզ գնեց Իր թանկագին արյունով:

Բայց քանի որ Աստված չի ընդունում արատավոր կամ անկատար այլաբանական զոհերը, և քանի որ մենք բոլորս Ադամի պատճառով մեղքի մեջ ընկանք, արդյո՞ք կարող ենք լինել ընդունելի զոհեր: Պողոսը բացատրում է, որ մենք ընդունելի զոհ ենք միայն այն պատճառով, որ սուրբ ենք: Մեր սրբությունը Հիսուսի նման չէ, ով միշտ անմեղ էր, որովհետև մենք պատկանում ենք դատապարտված ցեղին, և ոչ էլ սուրբ ենք այն պատճառով, որ ամբողջությամբ հասել ենք վարքի կատարելության, որովհետև չենք համարում, թե հասել ենք այն կատարելությանը, որին կանչված ենք, այլ այս գանձը

ունենք (մեղանչական և անկատար) կավե անոթներում, որպեսզի մեր վերջնական կատարելության փառքը երևա որպես Աստծո շնորհի, ոչ թե մեր սեփական կարողությունների արդյունք: Բայց մեր սրբությունը և Աստծու կողմից որպես զոհեր ընդունվելը Արարչի շնորհն է միայն, որ Աստված մեզ ձրի արդարացրել է բոլոր մեղքերից՝ որովհետև հավատացինք Քրիստոսի մեզի համար կատարած փրկագործությունը:

Այս կոչումը գնահատողներն ու դրան պատասխանողները ուրախ են, որ ճանաչվել են արժանի կրելու անարգանքներ Քրիստոսի անվան համար, և նայում են ոչ թե տեսանելի, այլ անտեսանելիին՝ «կյանքի պսակին», «Հիսուս Քրիստոսով մեր վերին կոչման մրցանակին» «և այն փառքին որ մեր մեջ պիտի հայտնվի»: Այս մարդիկ, Աստծուն նվիրվելու պահից սկսած, այլևս չեն համարվում մարդկային էակներ, այլ համարվում են Աստծուց հղիացած՝ ճշմարտության խոսքի միջոցով, այլևս ոչ մարդկային, այլ հոգեղեն զավակներ: Հիմա նրանք մեկ քայլ ավելի մոտ են մրցանակին, քան այն ժամանակ, երբ առաջին անգամ հավատացին: Սակայն նրանց հոգեղեն էությունը դեռևս անկատար է. նրանք հղիացած վիճակի մեջ են միայն, դեռևս ծնված չեն Հոգուց: Նրանք սաղմնային փուլում գտնվող հոգեղեն էակներ են, *M* մակարդակում՝ հոգեղեն հղիացման մակարդակում: Հոգուց հղիացած՝ նրանք այլևս չեն համարվում մարդկային, այլ հոգեղեն, որովհետև մարդկային բնությունը, որը երբևէ իրենցն էր և արդարացվել էր, նրանք մեռած համարեցին կամ մատուցեցին որպես կենդանի զոհ, սուրբ, հաճելի և Աստծուց ընդունված: Նրանք այժմ նոր արարածներ են Քրիստոս Հիսուսով: Հինը (մարդկային հույսեր, իղձեր, փառասիրություններ) անցել է, և ամեն բան նոր է դարձել, որովհետև «Դուք

մարմնով չէք՝ այլ հոգով, եթէ Աստծո Հոգին ձեզանում բնակված է» (Բ Կոր. 5:17, Հռոմ. 8:9): Եթե դուք հղիացած եք Հոգուց, ապա «(որպես մարդկային էակներ) մեռած եք, և ձեր կյանքը պահված է Քրիստոսին հետ Աստծո մեջ» (Կող. 3:3):

Լ մակարդակը ներկայացնում է *կատարյալ հոգեղեն* գոյության վիճակը, սակայն մինչև *Լ* հարթակին հասնելը պետք է կատարել մեր ուխտի պայմանները: Մեկ բան է Աստծո հետ ուխտ կապել, որ մենք մեռած կլինենք բոլոր մարդկային բաների նկատմամբ, և բոլորովին այլ բան է այդ ուխտը իրականացնել մեր երկրային կյանքի ողջ ընթացքում՝ «մարմինը հպատակեցնելով» (մեռած պահելով), մեր սեփական կամքը անտեսելով և միայն Տիրոջ կամքը կատարելով: *Լ* մակարդակին անցումը կոչվում է ծնունդ կամ որպես հոգեղեն էակի կյանքի լիակատար ձեռքբերում: Ամբողջ Եկեղեցին կմտնի այս մակարդակ, երբ աշխարհից հավաքվեն (ընտրվեն) «հունձքի» կամ Ավետարանական դարի ավարտին: «Քրիստոսով ննջողները առաջինն են հարություն առնելու» (Ա Թես. 4:16): Այնժամ մենք, ովքեր կենդանի կմնանք, մի վայրկյանում կփոխվենք՝ դառնալով կատարյալ հոգեղեն արարածներ՝ Քրիստոսի նման փառավոր մարմիններով (քանզի «այս մահկանացուն պիտի անմահություն հագնի»): Եվ երբ գա կատարյալը, այն, ինչը մասամբ է (հղիացած վիճակը՝ մարմնի տարբեր խոչընդոտներով, որոնց ենթարկվում ենք այժմ), կանհետանա:

Բայց կա ևս մեկ քայլ, որը պետք է անցնել հոգեղեն գոյության կատարելությունից այն կողմ՝ դեպի «հետագա փառքը»՝ դեպի *Կ մակարդակը*: Այստեղ մենք խոսում ենք ոչ թե անձնական փառքի, այլ իշխանության ու դիրքի

փառքի մասին: *Հարթակ L-ին* հասնելը բերում է անձնական փառքի լիությունը, այսինքն՝ փառավոր գոյություն, Քրիստոսի նման: Բայց երբ այդպես կատարյալ դառնանք և ամբողջությամբ նմանվենք մեր Տիրոջը և Գլխին, մենք պետք է միանանք նրան իշխանության և դիրքի փառքում՝ նստելու նրա գահին, ինչպես նա, իր հարության ժամանակ, բարձրացվեց Աստծո աջ կողմը: Այսպիսով մենք կմտնենք հավիտենական փառք՝ *K* մակարդակ:

Այժմ եկեք ուշադիր ուսումնասիրենք քարտեզը և ուշադրություն դարձնենք, թե ինչպես է այն պատկերում Աստծո ծրագրի տարբեր կողմերը: Այս պատկերներում մենք օգտագործում ենք բուրգի պատկերը կատարելության ներկայացման համար՝ նրա հարմարության և Սուրբ Գրություններում դրա ակնհայտ հղման պատճառով:

Ադամը կատարյալ էակ էր, *բուրգ a*: Ուշադրություն դարձրեք նրա դիրքին՝ *N* մակարդակում, որը ներկայացնում է մարդկային կատարելությունը: *R* մակարդակում, մեղքի և անկատարության կամ ապականության մակարդակում, առանց գագաթի բուրգը *b*, անավարտ կառուցվածք, ներկայացնում է ընկած Ադամին և նրա սերունդներին՝ ապականված, մեղավոր և դատապարտված:

Աբրահամն ու այդ օրերի մյուսները, ովքեր հավատքով արդարացվել էին Աստծո հետ միության համար, ներկայացվում են *N* հարթակի վրա գտնվող (*c*) բուրգով: Աբրահամը պատկանում էր ապականված մարդկային ընտանիքին և ինքն էլ էր գտնվում *R* մակարդակում մյուսների հետ, սակայն Պողոսն ասում է, որ Աբրահամը հավատքով արդարացվեց, այսինքն՝ իր հավատքի

պատճառով Աստծո կողմից նա համարվեց անմեղ և կատարյալ մարդ: Սա, Աստծո գնահատմամբ, բարձրացրեց նրան ապականված մեղավոր մարդկանց աշխարհից՝ *N* մակարդակ, և թեև նա իրականում դեռ անկատար էր, նրա նկատմամբ ցուցաբերվեց այն շնորհը, որը կորցրել էր Ադամը՝ Աստծո հետ ունենալ միություն որպես ընկեր (Հակոբոս 2:23): Բոլոր նրանք, ովքեր գտնվում են կատարյալ (անմեղ) *N* մակարդակում, Աստծո ընկերներն են, իսկ Նա նրանց ընկերն է: Բայց մեղավորները (*R* մակարդակում) Աստծո թշնամիներն են՝ «թշնամիներ իրենց չար գործերի համար»:

Ձրիեղեղից հետո ողջ մարդկային ցեղը, ներկայացված *d* տառով, շարունակում էր գտնվել *R* մակարդակում՝ լի թշնամանքով, և այդպես կմնա մինչև այն պահը, երբ ընտրվի Ավետարանական Եկեղեցին և սկսվի Հազարամյա դարը:

«Մարմնեղեն Իսրայելը» Հրեական դարում, երբ ցուլերի և նոխազների այլաբանական զոհաբերությունները մաքրում էին նրանց (ոչ իրականում, այլ տիպիկ իմաստով, «օրենքը ոչ մի բան կատարյալ չդարձրեց» (Եբր. 7:19), պատկերավոր միայն արդարացվեց, տես (*e*) *P* գծի վրա) որը այլաբանական արդարության մակարդակն է և դրա շնորհիվ գտնվում է R մակարդակում՝ պատկերավոր արդարացման մակարդակում, որը տևեց Սինա լեռան վրա Օրենքի տրվելուց մինչև Հիսուսը վերջ դրեց Օրենքին՝ մեխելով այն իր խաչին: Այնտեղ այլաբանական արդարացումը ավարտվեց «ավելի լավ զոհերի» հաստատմամբ, որոնք իսկապես «վերցնում են աշխարհի մեղքը» և «իրենց մոտեցողներին իսկապես կատարյալ են դարձնում» (Եբր. 10:1):

Դատաստանի և նեղության այն կրակը, որով մարմնավոր Իսրայելը անցավ, Հիսուսի ներկայության ժամանակ, երբ նա մաղում էր նրանց և իրենց անվանական եկեղեցուց հանելով ցորենը՝ «իրական Իսրայելացիներին», և հատկապես երբ, ցորենի առանձնացումից հետո, նա «հարդը այրեց [այդ *համակարգի* մերժելի մասը] անմար կրակով», պատկերված է *f* - ով: Դա նեղության այնպիսի ժամանակ էր, որը նրանք անզոր էին կանխել (տես Ղուկ. 3:17, 21:22, Ա Թես. 2:16):

Հիսուսը, երեսուն տարեկանում, կատարյալ, չափահաս մարդ էր (*g*), ով լքել էր հոգեղեն վիճակի փառքը և դարձել *մարդ*, որպեսզի (Աստծո ողորմությամբ) ամեն մարդու համար մահ ճաշակեր: Աստծո օրենքի արդարությունը բացարձակ է՝ աչք աչքի դիմաց, ատամ ատամի դիմաց և կյանք կյանքի դիմաց: Պետք էր, որ կատարյալ *մարդը* մեռներ մարդկության համար, քանի որ արդարության պահանջները այլ կերպ չէին կարող բավարարվել: Հրեշտակի մահը չէր կարող ընդունվել իբրև փրկագին և ազատել մարդկությունը, ինչպես որ «ցուլերի և նոխազների մահը, երբեք չէր կարող մեղքերը վերցնել»: Ուստի, Նա, ում անվանել են «Աստծո ստեղծագործության սկիզբը», դարձավ *մարդ*, որպեսզի վճարի այն փրկագինը (համապատասխան գինը), որը կփրկեր մարդկությանը: Նա պետք է լիներ կատարյալ մարդ, հակառակ դեպքում նա չէր կարող վճարել փրկագինը ինչպես ընկած ցեղի որևէ անդամ: Նա «սուրբ, անմեղ, անարատ և մեղավորներից զատված» էր: Նա կերպարանքով մեղավորներին նմանվեցավ «մեղավոր մարմնի նմանությամբ», այսինքն՝ մարդկային նմանությունը: Բայց այդ նմանության կատարյալ վիճակը միայն ստացավ. և մեր մեղքերից ու անկատարություններից որևէ բաժին

չստացավ, բացի նրանից, որ իր ծառայության ընթացքում կամավոր կիսեց որոշ մարդկանց վշտերն ու ցավերը, իր վրա առնելով իրենց ցավերն ու տկարությունները, մինչդեռ իր կենսունակությունը, առողջությունն ու զորությունը կընծայեր: Գրված է. «Նա մեր ցավերը վեր առավ, եվ մեր վշտերը բեռնեց իր վրա» (Ես. 53:4), և «զորություն [կյանք, կենսունակություն, կորով] դուրս եկավ նրանից և նրանց բոլորին բժշկեց» (Մարկ. 5:30, Ղուկ. 6:19, Մատթ. 8:16,17):

Դառնալով (կատարյալ) մարդու նման, Նա խոնարհեցրեց Ինքն Իրեն և հնազանդ եղավ մինչև մահ: Նա Աստծուն ներկայացրեց ի անձը, ասելով. «Ահա, ես գալիս եմ (գրքի հատորում գրված է իմ մասին) քո կամքը կատարելու, ո՛վ Աստված» — և ջրի մկրտությամբ խորհրդանշեց իր նվիրումը: Երբ նա այդպես ներկայացրեց ինքն իրեն և նվիրեց իր էությունը, նրա զոհաբերությունը սուրբ (մաքուր) և հաճելի էր Աստծուն, որը փոխադարձաբար իր ընդունելությունը հայտնեց, տալով նրան իր հոգին և զորությունը - երբ Սուրբ Հոգին իջավ նրա վրա և օծեց նրան:

Սուրբ Հոգու այս ստացումը՝ աստվածային բնության հղիացումն էր, որը պետք է կատարելապես զարգանար կամ ծնվեր, երբ նվիրումը, մարդկային բնության զոհաբերությունը ամբողջությամբ ավարտվեր: Այս հղիացումը մարդկային վիճակից վեր էր և պատկերված է *M* մակարդակի *h* բուրգով, որը Հոգու հղիացման մակարդակն է: Այս մակարդակում Հիսուսը անցկացրեց իր կյանքի վերջին երեք ու կես տարիները՝ մինչև իր մարդկային գոյությունը ավարտվեց խաչի վրա: Այնուհետև, երեք օր մեռած մնալուց հետո, հարությամբ կյանք ստացավ դեպի հոգեղեն էակի կատարելություն (*i*, մակարդակ *L*), ծնվեց Հոգուց՝ «մեռելներից անդրանիկը»:

«Հոգուց ծնվածը Հոգի է»: Ուստի Հիսուսը Իր հարության ժամանակ և դրանից հետո հոգի էր՝ հոգեղեն էակ, և ոչ մի իմաստով այլևս մարդկային էակ չէր:

Ճիշտ է, հարությանց հետո նա ուներ զորություն հայտնվելու և հայտնվեց աշակերտներին մարդու կերպարանքով, որպեսզի ուսուցաներ իր աշակերտներին և ապացուցեր նրանց, որ նա կենդանի է, այլևս մեռած չէ, սակայն նա մարդկային էակ չէր և այլևս չէր ենթարկվում մարդկային պայմաններին, այլ կարող էր գալ ու գնալ ինչպես քամին (նույնիսկ երբ դռները փակ էին), և ոչ ոք չէր կարող ասել, թե որտեղից եկավ կամ ուր գնաց: «*այդպես է և Հոգուց ծնված ամեն ոք*» (Հովհաննես 3:8*)* Համեմատեք_20:19, 26:

Մկրտության պահից՝ իրեն որպես զոհ նվիրած վայրկյանից սկսած՝ մարդկային բնությունը համարվեց մեռած, և սկիզբ առավ նոր բնությունը, որի կատարելագործումը տեղի ունեցավ հարության ժամանակ, երբ նա հասավ կատարյալ հոգեղեն մակարդակին, *L*— բարձրացվեց հոգեղեն մարմնով:

Հարությունից քառասուն օր անց, Հիսուսը համբարձվեց երկնային փառք – դեպի աստվածային փառքի մակարդակը *K* (բուրգ *k*). Ավետարանական դարում նա փառքի մեջ է եղել (*I*), «նստելով Հոր հետ նրա գահին» և գլուխն է երկրի վրա գտնված իր Եկեղեցու՝ նրա ղեկավարն ու առաջնորդը: Այս ամբողջ Ավետարանական դարում Եկեղեցին գտնվել է զարգացման, ուսուցման և քննության գործընթացում՝ այն նպատակով, որ դարի վերջում կամ հնձման ժամանակ նա դառնա նրա հարսն ու ժառանգակիցը: Ուստի նա ունի նրա տառապանքներում մասնակցություն, որպեսզի որոշված ժամանակին՝ նրա հետ էլ փառավորվի (*K* մակարդակի վրա):

Եկեղեցու քայլերը դեպի փառք նույնն են, ինչ նրա առաջնորդի ու Տիրոջ քայլերը, ով «մեզ օրինակ թողեց, որ մենք քայլենք նրա հետքերով»—բացառությամբ այն բանի, որ Եկեղեցին սկսում է ավելի ցածր մակարդակից: Մեր Տերը, ինչպես տեսանք, եկավ աշխարհ մարդկային *կատարելության N* մակարդակում, մինչդեռ մենք՝ Ադամական ցեղից բոլորս, գտնվում ենք ավելի ցածր՝ *R* մակարդակում՝ մեղքի, անկատարության և Աստծո դեմ թշնամության մակարդակում: Այսպիսով, մեզ համար առաջին անհրաժեշտությունն *արդարացվելն* է և այդպիսով հասնել *N* մակարդակին: Ինչպե՞ս դա անել: Գուցե Բարի գործերո՞վ: Ոչ, մեղավորները չեն կարող կատարել որևէ բարի գործեր: Մենք ոչինչ չունենք, որով կարող ենք ներկայանալ Աստծո առջև, ուստի «Աստված Իր սերը մեզ հայտնեց դրանով՝ որ երբ մենք դեռ մեղավոր էինք, Քրիստոսը մեռավ մեզ համար» (Հռոմ. 5:8): Այսպիսով, այն պայմանը, որի շնորհիվ մենք հասնում ենք արդարացված կամ կատարյալ մարդկային մակարդակին, այն է, որ Քրիստոս մեռավ մեր մեղքերի համար, փրկեց մեզ և բարձրացրեց «Նրա արյան նկատմամբ հավատքի միջոցով» դեպի այն կատարյալ մակարդակը, որտեղից մենք ընկել էինք Ադամում: «Մենք հավատքով արդարացած [բարձրացվում ենք *N* մակարդակ]» Եվ «հավատով արդարացած լինելով, խաղաղություն ունենք Աստծո հետ» (Հռոմ. 5:1), և այլևս Աստծո կողմից չենք համարվում թշնամիներ, այլ արդարացված մարդկային որդիներ՝ նույն մակարդակի վրա, ինչ Ադամն ու մեր Տեր Հիսուսը, բացառությամբ այն բանի, որ նրանք իրականում կատարյալ էին, մինչդեռ մենք միայն այդպիսին ենք համարվում Աստծո կողմից: Այս հաշվարկված արդարացումը մենք ստանում ենք Աստծո Խոսքի նկատմամբ հավատքի միջոցով, որը

ասում է՝ «Դուք գնվել եք», «փրկագնվել եք», «ձրի արդարացվել եք ամեն ինչից»: Աստծո աչքերում մենք անմեղադրելի, անարատ և սուրբ ենք՝ հագած Քրիստոսի արդարության զգեստը, որը մեզ վերագրվում է հավատքի միջոցով: Նա համաձայնեց, որ Իրեն *վերագրվեն* մեր մեղքերը, որպեսզի նա կարողանա կրել մեր պատիժը մեր փոխարեն և նա մեռավ մեր փոխարեն, կարծես ինքն էր մեղավորը: Հետևաբար, Նրա արդարությունը, *վերագրվում* է բոլոր նրանց, ովքեր ընդունում են նրա փրկագործությունը, և այն բերում է իր հետ բոլոր այն իրավունքներն ու օրհնությունները, որոնք վայելում էին մեր նախածնողները մինչ մեղքը կմտներ աշխարհ: Սա մեզ վերադարձնում է կյանքին և Աստծո հետ միությանը: Այս ընկերակցությունը մենք կարող ենք ունենալ անմիջապես մեր հավատքի շնորհիվ, իսկ կյանքը, ավելի լիարժեք ընկերակցությունն ու ուրախությունը երաշխավորված են Աստծո «հարմար ժամանակին»:

Բայց հիշեք, որ թեև արդարացումը օրհնություն է, այն չի փոխում մեր բնությունը:[7] Մենք դեռևս մարդկային արարածներ ենք: Մենք ազատվել ենք մեղքի ողորմելի վիճակից և Աստծուց օտարված լինելուց, մենք այլևս ոչ

---

[7] Երբ մենք ասում ենք, որ մարդը վատ բնություն ունի , *«բնություն»* բառը օգտագործվում է մի փոքր այլ իմաստով: Իրականում ոչ մի մարդ բնությամբ չար չէ: Մարդկային բնությունը «չափազանց լավն» է, *աստվածային բնության երկրային պատկեր*: Հետևաբար, յուրաքանչյուր մարդ բնությամբ լավն է: Դժվարությունն այն է, որ այս լավ բնությունը փչացել է: Ուստի մարդու համար անբնական է լինել չար, կոպիտ և այլն, և լիովին բնական է լինել Աստծո նման: Հենց այս սկզբնական իմաստով ենք մենք օգտագործել *«բնություն»* բառը: Քրիստոսով արդարացած՝ իրավունք ունենք վերստանալու այն ամեն շնորհներն ու օրհնությունները, որոնք կպատկանին մեր մարդկային բնության, որը Աստծո բնության երկրային պատկերն է:

թե մեղավոր մարդիկ ենք, այլ մարդկային որդիներ: Եվ քանի որ մենք որդիներ ենք, Աստված մեզ հետ որպես որդիների է խոսում: Ավետարանական դարաշրջանում Նա կոչ է անում «փոքր հոտին»՝ «ժառանգակիցներին», ասելով. «Որդյակ իմ, տուր ինձ քո սիրտը» — տուր ինձ քեզ, քո բոլոր երկրային ուժերը, քո կամքը, տաղանդները, ամեն ինչ, ինչ ունես, ինչպես օրինակ ցույց տվեց Հիսուսը, և այսպիսով՝ որպես իմ որդիս Ես քեզ մարդկայինից ավելի բարձր մակարդակի կբարձրացնեմ: Ես քեզ կդարձնեմ հոգեղեն որդի՝ հոգեղեն մարմնով, հարություն առած Հիսուսի նման «Հոր էության ճշգրիտ պատկերը»: Եթե թողնես երկրային բոլոր հույսերը, ըղձանքներդ, նպատակներդ և այլն, ամբողջությամբ նվիրաբերես քո մարդկային բնությունը և ծառայեցնես Իմ ծառայությանը, Ես քեզ կտամ մի բնություն, որը գերազանցում է, ինչ կտրվի մյուսներին: Ես քեզ կդարձնեմ «աստվածային բնության մասնակից» «Աստծո ժառանգ, և Քրիստոսի ժառանգակից, *եթե միայն Նրա հետ տառապում ենք*, որպեսզի Նրա հետ *փառավորվենք»:*

Ավետարանում ներկայացված այս պարգևը ճիշտ գնահատողները ուրախությամբ մի կողմ են դնում ամեն բեռ և համբերությամբ անցնում իրենց առջև դրված մրցավազքը՝ այն ձեռք բերելու համար: Մեր գործերը չէին որ ապահովեցին մեր արդարացումը: Մեր Տեր Հիսուսը կատարեց բոլոր այն գործերը, որոնք կարելի էր անել այդ նպատակով, և երբ հավատքով ընդունեցինք Նրա ավարտված գործը, մենք արդարացվեցինք, բարձրացանք *N* մակարդակ: Բայց հիմա, եթե ուզում ենք առաջ գնալ, չենք կարող դա անել առանց գործերի: Ճիշտ է, չպետք է կորցնենք մեր հավատքը, այլապես կորցնելու ենք մեր արդարացումը, սակայն արդարացված լինելով և

հավատքի մեջ մնալով՝ կարող ենք (Հոգու վերածննդով մեզ տրված շնորհի միջոցով) գործեր կատարել, Աստծուն ընդունելի պտուղներ բերել: Եվ Աստված պահանջում է սա, քանի որ սա այն զոհաբերությունն է, որը ուխտեցինք կատարել: Աստված պահանջում է, որ մենք մեծ պարգևի նկատմամբ մեր գնահատանքը ցուցաբերենք՝ տալով ամեն ինչ, ինչ ունենք, և մեր ամբողջ էությունը՝ որպես սուրբ զոհաբերություն, որը (Քրիստոսի միջոցով) ընդունելի է Նրա համար որպես մեր բանական պաշտամունք:

Երբ մենք հանձնում ենք այս ամենը, մենք ասում ենք՝ – Տե՛ր, ինչպես ես պետք է մատուցեմ սա՝ իմ զոհը, իմ ժամանակը, տաղանդը, ազդեցությունը և այլն: Այնուհետև, Աստվածաշունչը ուսումնասիրելով պատասխանի համար, լսում ենք Նրա ձայնը, որը մեզ հրահանգում է մեր *ամեն ինչը* մատուցել Նրան, ինչպես մեր Տեր Հիսուսը արեց՝ բարիք գործելով բոլոր մարդկանց հանդեպ, երբ առիթ ունենք, հատկապես հավատքի ընտանիքի անդամների համար՝ նրանց ծառայելով հոգևոր կամ բնական սննդով, հագցնելով նրանց Քրիստոսի արդարությամբ կամ երկրային հագուստով, ըստ մեր կարողության կամ նրանց կարիքների: Ամեն ինչ նվիրաբերելուց հետո մենք հղիացվում ենք Հոգուց և հասնում ենք Մ մակարդակին: Հիմա, շնորհիվ մեզ տրված զորության, եթե մենք այն օգտագործենք, կկարողանանք կատարել մեր բոլոր ուխտերը և դուրս գալ հաղթողներ, և ավելի քան հաղթողներ՝ Նրա (Հոգու կամ զորության) միջոցով, ով սիրեց մեզ և գնեց մեզ իր սեփական թանկագին արյունով: Բայց այսպես քայլելով Հիսուսի հետքերով

Չառնես ոչ մեկ պահ դադար
Զի չես շահած հաղթանակ
Պիտի տևէ միշտ քո պայքար
Մինչ ստանաս քու պսակ

Մենք կստանանք պսակը միայն այն ժամանակ, երբ, ինչպես մեր հավատարիմ եղբայր Պողոսը, ավարտենք մեր բարի պայքարը և ավարտենք մեր ընթացքը, բայց ոչ շուտ: Մինչ այդ ամեն օր մեր աշխատանքի և ծառայության զոհաբերության կրակը պետք է բարձրանա ամեն օր – զոհաբերություն՝ որ անուշահոտ է Աստծո համար և ընդունելի՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի միջոցով:

Այս հաղթողների դասին պատկանող, «ննջեցյալները», հարություն կառնեն որպես հոգեղեն էակներ՝ *Լ* մակարդակում, իսկ նույն դասի նրանք, ովքեր կենդանի են և մնում են մինչև Տիրոջ գալը, «կփոխվեն» և կարժանանան նույն հոգեղեն էակի մակարդակին և ոչ մի վայրկյան չեն «ննջի», թեև «փոխակերպումը» կպահանջի երկրային անոթի քայքայում: Այլևս թույլ, երկրային, մահկանացու, ապականված արարածներ չեն լինի, այլ ամբողջությամբ Սուրբ Հոգուց ծնված՝ երկնային, հոգեղեն, անապական, անմահ արարածներ (Ա Կորնթ. 15:44,52):

Մենք չգիտենք, թե որքան ժամանակ կանցնի նրանց «փոխակերպումից» կամ որպես հոգեղեն էակներ (*Լ* հարթակ) կատարելագործվելուց հետո, մինչ նրանք, որպես ամբողջական ու լիարժեք խումբ, փառավորվեն (*Կ* մակարդակ) Տիրոջ հետ, միավորված նրա հետ զորությամբ և մեծ փառքով: Այսպես ենք ըմբռնում, որ Քրիստոսի ամբողջ մարմնի՝ Գլխի հետ միավորումը և փառավորումը հենց «Գառի հարսանիքն» է իր հարսի

հետ, երբ նա լիովին կմտնի իր Տիրոջ ուրախությունների մեջ:

Նորից նայեք քարտեզին —*n, m, p, q* – դա չորս տարբեր դասակարգեր են, որոնք միասնաբար ներկայացնում են նոմինալ Ավետարանական Եկեղեցին որպես ամբողջություն, որը ինքն իրեն համարում է Քրիստոսի մարմին: *n* և *m* դասերը գտնվում են հոգուց հղիացման մակարդակում (*M*): Այս երկու դասերը միասին գոյություն են ունեցել Ավետարանական դարաշրջանի ողջ ընթացքում, երկուսն էլ ուխտ են կապել Աստծո հետ դառնալու կենդանի զոհեր, երկուսն էլ «ընդունված են Սիրելիով» և Հոգով հղիացած են որպես *«նոր ստեղծվածներ»*: Բայց նրանց միջև կա հետևյալ տարբերությունը. *n-ը* ներկայացնում է նրանց, ովքեր կատարում են իրենց ուխտը՝ և Քրիստոսի հետ մեռած են երկրային կամքի, նպատակների ու ձգտումների համար, մինչդեռ *m-ը* ներկայացնում է ավելի մեծ թվով հոգուց հղիացած զավակների մեծ բազմությունը, որոնք ուխտ են կապել, սակայն, ցավոք, հետ են քաշվում իրենց ուխտի կատարումից. *n* դասը բաղկացած է հաղթողներից, որոնք լինելու են Քրիստոսի հարսնացուն և Տիրոջ հետ նրա գահին պիտի նստեն փառքով—*K* մակարդակ: Սա «փոքր հոտն» է, որին Հայրը բարեհաճեց տալ թագավորությունը (Ղուկաս 12:32): m դասի անդամները խուսափում են մարդկային կամքի մահից, սակայն Աստված դեռ սիրում է նրանց: Ուստի, Նա նրանց զրկանքների և տառապանքների միջով կհասցնի *L* մակարդակ՝ կատարյալ հոգեղեն մակարդակ: Սակայն նրանք կորցնում են *K* մակարդակի՝ փառքի գահը, քանի որ չեն եղել հաղթողներ: Եթե մենք բարձր ենք գնահատում մեր Հոր սերը, եթե որոնում ենք մեր Տիրոջ հաճությունը, եթե ձգտում ենք լինել Նրա մարմնի անդամներ, Նրա հարսը և նստել Նրա գահին, ապա պետք է հավատարմորեն և ուրախությամբ կատարենք մեր զոհաբերության ուխտը:

Նոմինալ (անվանական) Եկեղեցու մեծամասնությունը ներկայացված է *p* բաժինով: Ուշադրություն դարձրեք, նրանք գտնվում են ոչ թե *M* մակարդակում, այլ *N* մակարդակում: Նրանք արդարացված են, բայց ոչ նվիրագործված: Նրանք ամբողջությամբ չեն նվիրվել Աստծուն և, հետևաբար, հղիացած չեն որպես հոգեղեն էակներ: Սակայն նրանք գտնվում են աշխարհից վեր, քանի որ ընդունել են Հիսուսին որպես իրենց մեղքի փրկագին: Բայց նրանք չեն ընդունել այս դարի վերին կոչումը՝ դառնալ Աստծո հոգեղեն ընտանիքի անդամ: Եթե նրանք պահպանեն հավատը և ամբողջությամբ ենթարկվեն Քրիստոսի Թագավորության արդար օրենքներին (Վերականգնման ժամանակներում), ապա վերջնականապես կհասնեն կատարյալ երկրային մարդու՝ Ադամի նմանությանը: Նրանք ամբողջությամբ կվերագտնեն այն ամենը, որոնք կորսվեցին Ադամի մեղքի պատճառով: Նրանք կհասնեն նույն մարդկային կատարելությանը՝ մտավոր, բարոյական և ֆիզիկական, և կրկին կլինեն Աստծո պատկերով, ինչպես Ադամն էր, որովհետև այս ամենի համար նրանք փրկվել են: Նրանց արդարացման դիրքը, N մակարդակը (որպես նրանց, ովքեր լսել և հավատացել են Քրիստոսի միջոցով փրկությանը), հանդիսանում է առանձնահատուկ օրհնություն, որը նրանք հավատքի միջոցով ստանում են մինչև ամբողջ մնացած աշխարհը (քանի որ Հազարամյակի դարում բոլորը կհասցվեն ճշմարտության ճշգրիտ գիտելիքին): Այնուամենայնիվ, նրանք կունենան այն առավելությունը, որ սկսել են ավելի վաղ և արդեն ինչ-որ չափով առաջընթաց են ունեցել ճիշտ ուղղությամբ: Սակայն *p* դասը ներկայումս թերանում է օգտվել այս հավատքի արդարացման իրական օգուտից: Այն տրված է այսօր հատուկ նպատակով՝ թույլ տալ որոշներին դառնալ հաճելի զոհ, դառնան n դասի անդամներ, «Քրիստոսի մարմնի» անդամներ: p դասին պատկանողները Աստծո շնորհը (արդարացումը) ընդունում են «զուր տեղը» (Բ

Կոր. 6:1). Նրանք թերանում են իրենց արդարացումը շահավետ կերպով գործածելուց, որպեսզի առաջ գնան և ներկայացնեն իրենց որպես ընդունելի զոհ հենց այն ժամանակ, երբ նման զոհերը ընդունելի են Աստծուն: Չնայած նրանք «սրբեր» չեն, չեն պատկանում նվիրաբերված «մարմնին», առաքյալը նրանց «եղբայրներ» է կոչում (Հռոմ. 12:1): Նույն իմաստով ամբողջ մարդկային ցեղը, երբ վերածնվի, հավիտյան կլինեն Քրիստոսի եղբայրներ և Աստծո որդիներ, թեև այլ բնության մեջ: Աստված հայր է բոլոր նրանց ովքեր իր հետ համերաշխորեն կապրին, անկախ նրանից թե ինչ մակարդակի և բնության տեր են:

Մեկ այլ դասակարգ, որը կապված է անվանական Եկեղեցու հետ, որը երբեք չի հավատացել Քրիստոսին որպես զոհ իր մեղքերի համար և, հետևաբար, չի արդարացվել, այսինքն՝ չի գտնվում *N* մակարդակում, ցույց է տրված *q* մասով *N* մակարդակից ներքև: Սրանք «հափշտակող գայլեր են ոչխարի հանդերձով»: Բայց նրանք իրենց անվանում են քրիստոնյաներ և անվանական եկեղեցու անդամներ են ճանաչվում: Իրականում նրանք չեն ընդունում Քրիստոսին որպես իրենց Փրկչի և պատկանում են *R* մակարդակին: Նրանք աշխարհի մի մասն են, նրանց տեղ չկա Եկեղեցում, նրանք մեծ վնաս են պատճառում նրան: Այսպիսի խառը վիճակում, որտեղ *n, m, p* և *q* տարբեր դասակարգերը միասին էին (և յուրաքանչյուրը, ով պատկանում էր դրանց, իրեն քրիստոնյա էր անվանում), Եկեղեցին գոյություն է ունեցել ողջ Ավետարանական դարաշրջանում: Ինչպես կանխատեսեց մեր Տերը, երկնքի անվանական թագավորությունը (անվանական Եկեղեցին) նման է դաշտի, որը ցանված է և՛ ցորենով, և՛ որոմով: Նա ասաց, որ «թողնի երկուսին էլ միասին աճեն մինչև հնձի ժամանակը» դարաշրջանի վերջում: Հնձման ժամանակ Նա կասի հնձողներին («հրեշտակներին»՝

պատվիրակներին). «Նախ որո՛մը քաղեք և խուրձ-խուրձ կապեք, իսկ ցորենը հավաքե՛ք իմ շտեմարանի մեջ» (Մատթեոս 13: 30, 38, 41, 49):

Մեր Տիրոջ այս խոսքերը ցույց են տալիս, որ թեև Նա նախատեսել էր, որ երկուսն էլ դարաշրջանի ընթացքում միասին կաճեն և կհամարվեն անվանական Եկեղեցու անդամներ, Նա նաև նախատեսել էր այս անհամապատասխան տարրերի բաժանման ժամանակը, երբ կհայտնվեն նրանք, ովքեր իսկապես են Եկեղեցի՝ Նրա սրբերը (n), որոնք ճանաչված և ընդունված են Աստծո կողմից (Մատթ. 13:39):

Ավետարանական դարի ընթացքում լավ սերմի հետ որոմներ կամ կեղծ ցորեններ էլ կաճին: «Լավ սերմը թագավորության որդիներն են», հոգեղեն որդիները՝ *n* և *m* դասակարգերը, մինչդեռ «որոմները չարի որդիներն են»: Ուստի *q* դասի բոլորը և *p* դասի շատերը որոմներ են, քանի որ «ոչ ոք չի կարող երկու տիրոջ ծառայել», և «ում ինքներդ ձեզ ծառա ներկայացնեք՝ նրան հնազանդվելու, ծառաներ եք նրան»: Քանի որ *p*-ի դասակարգի անդամները չեն նվիրաբերում իրենց ծառայությունն ու տաղանդները (կարողությունները) Տիրոջը, ով գնել է նրանց՝ ողջամիտ ծառայության համար, անշուշտ նրանք իրենց ժամանակի ու տաղանդի մեծ մասը իրականում տալիս են Աստծո հակառակ գործերին, և հետևաբար, թշնամու ծառայության մեջ են:

Այժմ ուշադրություն դարձրեք քարտեզին և դիտեք Ավետարանական դարի հունձքը կամ ավարտի ժամանակը: Նկատեք, որ այն բաժանված է երկու մասի՝ յոթ տարի և երեսուն երեք տարի, ինչը ճշգրիտ զուգահեռ է Հրեական դարաշրջանի հնձին: Այս հունձքը, ինչպես հրեականը, նախ պետք է լինի Եկեղեցու քննության և բաժանման ժամանակ, իսկ հետո՝ բարկության կամ «վերջին յոթ պատուհասների» թափվելու ժամանակ

աշխարհի, այդ թվում՝ անվանական Եկեղեցու վրա: Հրեական Եկեղեցին «ստվեր» էր, մարմնավոր մակարդակում օրինակ այն ամենի, ինչը Հոգեղեն Եկեղեցին վայելում է հոգեղեն մակարդակում: Մարմնավոր Իսրայելը իր դարի հունձքի ժամանակ դատվեց ներկայացված ճշմարտությամբ: Այն ժամանակվա համար ներկայացված ճշմարտությունը հանդիսանում էր մանգաղ, որը առանձնացրեց «ճշմարիտ Իսրայելացիներին» անվանական հրեական եկեղեցուց: Բայց իսկական ցորենը կազմում էր միայն փոքր մասը՝ համեմատած նրանց հետ, ովքեր իրենց ներկայացնում էին որպես ցորեն: Այդպես է նաև այս դարի հնձի դեպքում: Ավետարանական դարի հունձքը, ինչպես Հրեական դարի հունձքը, գտնվում է գլխավոր Հնձողի՝ մեր Տեր Հիսուսի հսկողության տակ, ով ներկա պիտի լինի այդ ժամանակ (Հայտնություն 14:14): Այս դարաշրջանի հնձման ժամանակ մեր Տիրոջ առաջին գործը կլինի ճշմարիտը կեղծիքից բաժանելը: Անվանական Եկեղեցին, իր խառը վիճակի պատճառով, Տերը անվանել է «Բաբելոն»՝ խառնակություն: Եվ հունձքը այն ժամանակն է որի մեջ անվանական եկեղեցու այլ և այլ դասակարգերը պիտի բաժանվին, և երբ n դասակարգը պիտի հասունանա ու կատարելության հասնի: Ցորենը կզատվի որոմից, հասուն ցորենը՝ ոչ հասունից և այլն: n դասին պատկանողները ցորենի «առաջին բերքերն» են, որոնք իրենց բաժանվելուց հետո՝ սահմանված ժամանակին կդառնան Քրիստոսի Հարսը, հավիտյան կլինեն իրենց Տիրոջ հետ և նրա նման կլինեն:

Այս փոքր հոտի Բաբելոնից առանձնացումը պատկերված է *s* տառով: Նա իր Տիրոջ հետ մեկ լինելու, նրա անունը կրելու և փառքին մասնակցելու ընթացքի մեջ է: Փառավորված Քրիստոսը, Գլուխն ու Մարմինը, պատկերված է *w* տառով: *t*, *u* և *v* տառերը ներկայացնում են Բաբելոնը՝ անվանական Եկեղեցին, որը ընկնում է և

բաժանվում մասերի «նեղության ժամանակի» ընթացքում՝ Տիրոջ օրվա մեջ: Չնայած սա կարող է թվալ սարսափելի բան, իրականում դա մեծ օգուտ կբերի ողջ ճշմարիտ ցորենին: Բաբելոնը ընկնում է, քանի որ իրականում այն չէ, , ինչպիսին պնդում է լինել: Անվանական Եկեղեցին պարունակում է բազմաթիվ կեղծավորներ, որոնք միացել են իրեն՝ աշխարհի աչքերում նրա պատվավոր դիրքի համար, և իրենց ապրելակերպով դարձնում են Բաբելոնը աշխարհի քթանցքներում գարշահոտություն: Տերը միշտ գիտեր նրանց իսկական նկարագիրը, սակայն՝ ըստ Իր մտադրության, թույլ էր տալիս նրանց մնալ այնտեղ մինչև հնձի ժամանակը, երբ Նա կհավաքի «Իր Թագավորությունից [իրական Եկեղեցուց] բոլոր գայթակղությունները և անօրինություն գործողներին, և գցի նրանց կրակի հնոցի մեջ» [նեղության, և իրենց անվանական դրության և կեղծ դավանության ջնջման].. Այնժամ արդարները [*ո դասակարգը*] արևի նման կշողան իրենց Հոր թագավորության մեջ» (Մատթեոս 13:41-43). Եկեղեցու վրա գալիք նեղության պատճառը մեծապես պայմանավորված կլինի տարբեր տեսակի անհավատության և ոգեհարցության աճով: Սա կդառնա ծանր փորձություն բաբելոնի համար, քանի որ Բաբելոնը աջակցում է բազմաթիվ ուսմունքների, որոնք հակասում են Աստծո Խոսքին: Ինչպես Հրեական դարի հունձքի ժամանակ Քրիստոսի *խաչը* փառք ու իշխանության ձգտող հրեաների համար դարձավ գայթակղության քար, իսկ հույն իմաստունների համար՝ հիմարություն, այնպես էլ Ավետարանական դարի հունձքի ժամանակ այն կրկին կլինի գայթակղության քար և գլորման վեմ:

Յուրաքանչյուր ոք, ով Քրիստոսի վրա ոսկու, արծաթի և ճշմարտության թանկարժեք քարերի, ինչպես նաև համապատասխան բնավորության փոխարեն որևէ այլ բան է կառուցել, կունենա ծանր փորձության («կրակի»)

ժամանակ, քանի որ վարդապետությունների և շինվածքների ողջ փայտը, հարդը և եղեգը կայրվեն: Այն, ով ճիշտ է կառուցել և, հետևաբար, ունի հաստատված բնավորություն, ներկայացվում է *s* տառով, մինչդեռ *t-ն* ներկայացնում է «մեծ բազմությունը», որը թեև հղիացած է Հոգուց, սակայն փայտով, հարդով և եղեգով կառուցված է - ցորեն է, բայց դեռ չի հասունացել առաջին բերքի (*s*) հավաքման պահին: Նրանք (*t*) կորցնում են գահի վարձատրությունը և աստվածային բնությունը, սակայն ի վերջո ծնունդ կստանան որպես հոգեղեն էակներ՝ աստվածային բնությունից ցածր կարգում: Չնայած նրանք իսկապես նվիրված են, սակայն աշխարհիկ ոգու կողմից այնքան են հաղթված, որ իրենց կյանքերը իրապես զոհաբերելու գործի մեջ թերանում են: Նույնիսկ «հունձքի» ժամանակ, երբ հարսի կենդանի անդամները *ճշմարտության* զորությամբ առանձնանում են մյուսներից, մյուսների, այդ թվում՝ *t* դասի, ականջները կմնան խուլ: Նրանք դանդաղ կհավատան և դանդաղ կգործեն այդ բաժանման ժամանակ: Չկա կասկած, որ հետո նրանք խորապես տրտմելու են, երբ հասկանան, որ Հարսը ամբողջացած ու Տիրոջ հետ միացած է, իսկ նրանք՝ անհոգության և աշխարհի հոգսերով ծանրաբեռնված, կորցրել են այս մեծ վարձատրությունը: Բայց Աստծո ծրագրի գեղեցկությունը, որը նրանք այդ ժամանակ կսկսեն տեսնել որպես նրանց և ողջ մարդկության հանդեպ սիրով լեցուն ծրագիր, ամբողջությամբ կհաղթահարի նրանց վիշտը, և նրանք կաղաղակեն. «Ալելո՛ւիա, որովհետեւ Ամենակալ Տէր Աստվածը թագավորեց: Ուրախանանք և ցնծանք ու փառք տանք նրան, որովհետև Գառան հարսանիքը հասավ, և նրա կինը պատրաստեց ինքն իրեն» (Հայտն. 19:6,7): Նաև նկատի առեք Տիրոջ լիառատ հոգածությունը: Նա նրանց ուղղված ուղերձով դիմում է՝ թեև Գառնուկի հարսը չեք, սակայն կարող եք ներկա լինել հարսանեկան ընթրիքին՝ «Երանելի են Գառան հարսանիքի ընթրիքին

կանչվածները» (9-րդ համար): Այս բազմությունը, իր ժամանակին, Տիրոջ ուղղիչ պատիժների միջոցով, իր ժամանակին կհասի լիակատար համաձայնության Նրա և Նրա ծրագրի հետ և կլվանան իրենց հանդերձները, որպեսզի Լ հոգեղեն մակարդակում զբաղեցնեն իրենց դիրքը՝ հարսի ստացած դիրքից մեկ աստիճան ներքև (Հայտնություն 7:14,15):

Նեղության ժամանակը (որ պիտի ազդե աշխարհի վրա) կգա այն բանից հետո, երբ Բաբելոնը սկսի ընկնել և փշվել: Դա կլինի մարդկային ընկերությունների և կառավարությունների տապալում, որը կպատրաստի աշխարհը արդարության տիրապետության համար: Այս նեղության ժամանակ մարմնավոր Իսրայելը, որը մերժված էր մինչև որ հեթանոսների ժամանակը լրանային, կվերադարձվի Աստծո ողորմությանը, իսկ Ավետարանական Եկեղեցին (հոգևոր Իսրայելը) կամբողջանա և կփառավորվի: Հազարամյա դարաշրջանում Իսրայելը կլինի աշխարհի առաջատար ազգը՝ բոլորի գլուխը երկրային գոյության մակարդակում, որի միասնության և ներդաշնակության մեջ աստիճանաբար կներգրավվեն բոլոր հնազանդները: (Իրենց մեջ գոյություն ունեցող միության և համերաշխության համար, բոլոր օրհնություն և արդարություն ցանկացող ազգերը իրենց պիտի դիմեն հնազանդվելու իրենց կանոններին և օրհնվեն):

Նրանց վերականգնումը կատարյալ մարդկային բնության մեջ, ինչպես նաև ողջ աշխարհի վերանորոգումը, կլինի աստիճանական, և դրա լիակատար ավարտին անհրաժեշտ կլինի ամբողջ Հազարամյակի տևողությունը: Քրիստոսի հազարամյա տիրապետության ընթացքում աստիճանաբար կջնջվեն Ադամի մահվան հետևանքները: Նրա տարբեր երևույթները՝ հիվանդություն, վիշտ, տկարություն և գերեզմանը, խոնարհվելու են Մեծ Վերանորոգչի

զորության առջև, մինչև որ դարի վերջավորությանը մեր քարտեզի վրայի բուրգը ամբողջանա: Քրիստոսը (x) կլինի ամենքի Գլուխը՝ Մեծ բազմության, հրեշտակների և մարդկանց, հաջորդը Հորից հետո: Երկրորդ կարգի կամ աստիճանի վրա կլինի մեծ բազմությունը, իբրև հոգեղեն էակներ, (y), հետո՝ հրեշտակները, ապա մարմնեղեն Իսրայելը (z), պարփակելով միայն ճշմարիտ Իսրայելացիներին՝ որպես երկրի ազգերի գլուխը, որից հետո գալիս է մարդկային աշխարհը (W), կյանքի կատարելության մեջ վերահաստատված, այն վիճակի մեջ՝ որտեղ գտնվում էր մարդկային ցեղի գլուխը Ադամը՝ իր մեղանչելուց առաջ: «Վերահաստատության ժամանակների»-ի այս վերանորոգությունը տեղի կունենա աստիճանաբար հազարամյա դարի ընթացքում (Գործք 3:21): Սակայն ոմանք կոչնչանան ժողովրդի միջից. առաջին հերթին՝ բոլոր նրանք, ովքեր, ունենալով լիարժեք լույս և հնարավորություններ, հարյուր տարվա ընթացքում կմերժեն առաջադիմել արդարության և կատարելության ճանապարհի մեջ (Ես. 65:20), և երկրորդ՝ նրանք, ովքեր, հասնելով կատարելության, անհավատարիմ կգտնվեն վերջին քննության ժամանակ՝ Հազարամյա դարաշրջանի ավարտին (Հայտնություն 20:9): Նրանք կմեռնեն երկրորդ մահով, որի համար ոչ հարություն, ոչ վերականգնում չի խոստացվել: Նախատեսված է միայն մեկ ամբողջական անհատական փորձ և տրված է միայն մեկ փրկանք: Քրիստոս այլևս չի մեռնի:

Երբ մենք նայում ենք մեր երկնային Հոր ծրագրի մեջ պատրաստված եկեղեցու բարձրացումը, և նրա միջոցով Իսրայելի և երկրի բոլոր ազգերի օրհնվելը, որը տեղի պիտի ունենա ամեն բաների վերահաստատությամբ, դա մեզ հիշեցնում է հրեշտակների երգը՝ «Փա՛ռք Աստծուն բարձունքներում, երկրի վրա՝ խաղաղություն, ու մարդկանց մեջ՝ հաճություն» (Ղուկաս 2:14): Այսպիսին է լինելու Աստծո ծրագրի իրականացումը՝ «ամեն բաները

Քրիստոսի ներքև հավաքելը»: Ո՞վ է որ այն ժամանակ կասի, որ Աստծո ծրագիրը ձախողվել է: Ո՞վ կասի որ Նա չվերածեց չարը բարիքի: Եվ որ մարդկանց ու դևերի բարկությունը չի ծառայել Նրա փառաբանմանը:

Բուրգի պատկերը ոչ միայն հարմար կերպով ծառայում է կատարյալ էակների պատկերմանը, այլև ծառայում է ցույց տալու ամբողջ ստեղծագործության տիեզերական միությունը, երբ Աստծո ծրագիրը իրականություն կդառնա, երբ, թե երկնքի մեջ ու թե երկրի վրա կատարյալ խաղաղություն, սեր ու միաբանություն կտիրի, երբ Քրիստոս ամենքի գլուխը, իր մարմնի կամ եկեղեցու հետ, երկնքում թե երկրի վրա գտնված ամեն բաները կատարելության ու ներդաշնակության կհասցնի (Եփես. 1:10):

Քրիստոս Հիսուսը այս հիասքանչ շինության «սկիզբ»ը, «գլուխ»ը, «գագաթնավէմը», «գլխավոր վերին անկյունաքարը»: Եվ յուրաքանչյուր ստորին քար պետք է շարվի վերնաքարի ուղղության և անկյունների հետ ներդաշնակ: Անկախ նրանից, թե քանի տեսակի քարեր կարող են լինել այս կառույցում, անկախ նրանից, թե քանի տարբեր բնություններ կարող են լինել Աստծո որդիների մեջ՝ երկնային թե երկրային, որպեսզի հավիտյան ընդունելի լինեն Նրան, պետք է որ նրանք բոլորը իր որդու նմանությանը համապատասխանեն: Բոլոր նրանք ովքեր փափագում են այս շինության մեջ բաժին ունենալ՝ անհրաժեշտ է որ իրենց մեջ մշակեն Աստծո հանդեպ հնազանդության և սիրո ոգի: Անհրաժեշտ է նաև որ սովորեն սիրել Աստծո բոլոր արարածներին (որը կատարելապես արտահայտված էր Հիսուսում) որպես օրենքի կատարում՝ «Եվ սիրի՛ր քո Տեր Աստծուն քո ամբողջ սրտով, ամբողջ հոգով, ամբողջ մտքով ու ամբողջ զորությամբ և քո ընկերոջը քո անձի պես»:

Սուրբ Գիրքը նկարագրում է, թե ինչպես է ամեն ինչ՝ երկնայինն ու երկրայինը, հավաքվում մեկ ամբողջության մեջ, մեկ գլխի ներքև, ցույց տալով, որ առաջինն ընտրվեց Քրիստոս Հիսուսը՝ Գլուխը, ապա՝ Եկեղեցին՝ Նրա Մարմինը: Հաջորդ շարքի մեջ կլինեն հրեշտակները և հոգեղեն ուրիշ դասակարգեր, ապա Իսրայելի հին սուրբերը և աշխարհի մարդկությունը: Բարձրագույնից սկսելով՝ դասավորումը պիտի շարունակվի, մինչև որ բոլոր ցանկացողները համաձայնության և միության մեջ բերվեն:

Հատկանշականն այն է, որ այս փորձված, Գլխավոր, Անկյունային - Վերին քարը առաջինն է դրված և կոչվում է *հիմնաքար*: Այսպես՝ լավ կերպով լուսաբանված է այն փաստը, որ Աստծո և արդարության հանդեպ բոլոր հույսերի հիմքը դրվել է ոչ թե երկրի վրա, այլ երկինքներում: Իսկ բոլոր նրանք, ովքեր հաստատված են դրա տակ և միացված այս երկնային հիմնաքարին, կապված են դրան երկնային ձգողականությամբ և օրենքներով: Եվ թեև այս կարգը ամբողջությամբ տարբերվում է երկրային շինարարությունից, լիովին հիմնավորված է, որ քարը, որի նմանությամբ պետք է կառուցվի ամբողջ շենքը, դրվում է առաջինը: Եվ որքան հաճելի է իմանալ, որ մեր հիմքը դրված է *վերևում, ոչ ներքևում*, որ մենք, որպես կենդանի քարեր, «իր մեջ կկառուցվենք» ամեն բաներով: Այս աշխատանքը կշարունակվի Հազարամյա դարում, մինչև յուրաքանչյուր արարած՝ յուրաքանչյուր բնության մեջ՝ թե՛ երկնքում, թե՛ երկրի վրա, չի սկսի օրհներգել Աստծուն և ծառայել Նրան կատարյալ հնազանդության պահանջներին համապատասխան: Այդժամ ամբողջ Տիեզերքը մաքրագործված կլինի, որովհետև այն օրը «Ամեն մարդ, ով այդ մարգարեին չլսի, ժողովրդի միջից պիտի բնաջնջվի»՝ երկրորդ մահվամբ (Գործք 3:22,23):

Անապատի Խորանը

Նույն դասախոսությունը, որը ներկայացված է «Դարերի քարտեզում», այստեղ ուսուցանվում է այս աստվածային կարգով կազմված պատկերում, որը հետագայում ավելի լիովին կքննարկենք: Մենք այն տեղադրում ենք քարտեզի կողքին, որպեսզի Սրբություն Սրբոց տանող տարբեր մակարդակներն ու աստիճանները պատշաճ կերպով նկատվեն կամ գնահատվեն՝ որպես նույն քայլերի ուսուցում, որոնք մենք արդեն մանրամասն քննարկեցինք: Խորանի գավիթից դուրս գտնվում է ամբողջ աշխարհը՝ մեղքի մեջ, ապականված հարթակում (*R*.): «Մուտքով» անցնելով՝ երբ մտնում ենք գավիթ, մենք դառնում ենք հավատացյալներ կամ *արդարացված* անհատներ (*N* մակարդակ): Իրենց նվիրման մեջ ավելի առաջ գնացողները մոտենում են Խորանի դռանը և, ներս մտնելով (*M* հարթակ), դառնում են քահանաներ: Նրանք այնտեղ աճում ու զորանում են «առաջավորության-հացով», լուսավորվում են «աշտանակի» լույսով և Հիսուս Քրիստոսի միջոցով «Ոսկե սեղանի» վրա կարողանում են մատուցել Աստծուն ընդունելի խունկ: Եվ ի վերջո, առաջին հարության ժամանակ նրանք մտնում են կատարյալ հոգեղեն վիճակ՝ «Սրբությունների Սրբություն» (*L* մակարդակ), և ապա միավորվում են Հիսուսի հետ Թագավորության փառքում՝ *K* մակարդակ:

ԳԼՈՒԽ 13

Այս Աշխարհի Թագավորությունները

Առաջին Տիրապետությունը – Նրա Կորուստը – Նրա Փրկագնումը և Վերականգնումը – Աստծո Խորհրդանշական Թագավորությունը – Բռնատերը - Ներկա Տիրապետության Երկու Մասերը – Աստծո կողմից սահմանված Իշխանությունները – Նաբուգոդոնոսորի տեսիլքը – Դանիելի տեսիլքը և Դրա Մեկնությունը - Այս Աշխարհի Թագավորությունները՝ Դիտարկված այլ Տեսանկյունից - Եկեղեցու Ճիշտ Վերաբերմունքը Ներկայիս Կառավարությունների Հանդեպ - Թագավորների Աստվածային Իրավունքը և Դրա Կարճ Ակնարկը - Քրիստոնեության Սխալ Պնդումները - Հինգերորդ Համաշխարհային Կայսրության Լավագույն Հույսը:

Աստվածային հայտնության առաջին գլխում Աստված հայտարարում է Իր երկրի ստեղծման և նրա կառավարման վերաբերյալ Իր նպատակը. «Եվ Աստված ասեց. Մեր պատկերովը եվ մեր նմանութեան պէս մարդ շինենք, որ իշխեն ծովի ձկների եւ երկնքի թռչունների, անասունների եւ բոլոր երկրի վրա, եվ երկրի վրա սողացող բոլոր սողունների վրա»: Եվ Աստուած ստեղծեց մարդը իր պատկերովը. Աստծո պատկերովը ստեղծեց նրան. արու եւ էգ ստեղծեց նրանց: «Եվ Աստված օրհնեց նրանց, եվ Աստված ասաց նրանց. Աճեցէք եվ շատացէք, եվ լցրէք երկիրը, եվ տիրեցէք նրան. եվ իշխեցէք ծովի ձկների, եվ երկնքի թռչունների վրա, եվ երկրի վրա սողացող բոլոր կենդանիների վրա» (Ծննդոց 1:26-28):

Այսպիսով, երկրի տիրապետությունը վստահվեց մարդկային սերնդին՝ ներկայացված առաջին մարդ Ադամով, ով կատարյալ էր և, հետևաբար, լիովին որակավորված՝ լինելու երկրի տերը, կառավարիչը և թագավորը: Այս հանձնարարությունը՝ բազմանալու, լցնելու, և երկրին տիրելու վերաբերում էր ոչ միայն Ադամին, այլև ողջ մարդկությանը. «Տիրեցեք նրան» և այլն: Եթե մարդկությունը կատարյալ և անմեղ մնար, երբեք չէր կորցնի այս տիրապետությունը:

Նշենք, որ այս հանձնարարությունը որևէ անհատի չի շնորհել իր մերձավորների նկատմամբ իշխանություն կամ լիազորություն, այլ ամբողջ մարդկային ցեղին էր տրվել իշխանություն երկրի վրա՝ այն մշակելու և նրա պտուղները ընդհանուր բարիքի համար օգտագործելու համար: Ոչ միայն բուսական ու հանքային հարստությունները էին այդպիսով մարդու տնօրինման տակ, այլև կենդանական աշխարհի բոլոր բազմազանությունները նրա տրամադրության և ծառայության համար էին: Եթե մարդկությունը մնար կատարյալ և իրականացնեին Ստեղծչի սկզբնական ծրագիրը, ապա, երբ նրանց թիվը մեծանար, մարդիկ ստիպված կլինեին խորհրդակցել, համակարգել իրենց ջանքերը և որոշել ընդհանուր բարիքների արդար ու իմաստուն բաշխման ձևերն ու միջոցները: Եվ եթե ժամանակի ընթացքում, բնակչության աճող թվի պատճառով, անհնար լիներ հավաքվել և խորհրդակցել, ապա մարդկանց տարբեր դասակարգերը պետք է ընտրեին իրենց միջից որոշ անհատների՝ ներկայացնելու իրենց ընդհանուր շահերը և գործելու իրենց անունից: Եվ եթե բոլոր մարդիկ կատարյալ լինեին (մտավորապես, ֆիզիկապես և բարոյապես), եթե բոլորը Աստծուն և Նրա պատվիրանները ամենից վեր սիրեին, իսկ իրենց

մերձավորին՝ ինչպես իրենց անձը, ապա նման հասարակությունում ոչ մի բախում տեղի չէր ունենա:

Այսպիսով, Ստեղծչի սկզբնական ծրագիրը երկրի կառավարման համար հասարակապետական ձևն էր՝ կառավարման այնպիսի ձև, որում յուրաքանչյուր անհատ բաժին պիտի ունենար, որտեղ յուրաքանչյուր մարդ կլիներ կառավարիչ, լիովին որակավորված յուրաքանչյուր առումով՝ իր պարտականությունները կատարելու համար ինչպես անձնական, այնպես էլ ընդհանուր բարօրության նպատակով:

Մարդուն շնորհված այս երկրի տիրապետությունը ուներ միայն մեկ պայման, որից կախված էր դրա հավիտենական հարատևությունը. և դա այն էր, որ այս աստվածանվեր տիրապետությունը շարունակ գործածվի Տիեզերքի Գերագույն Տիրակալի կամքի համաձայն, որի միակ օրենքը, մեկ խոսքով ասած, Սերն է. «Սերը օրենքի լրումն է» «Սիրի՛ր քո Տեր Աստծուն քո ամբողջ սրտով, ամբողջ հոգով, ամբողջ մտքով ու ամբողջ զորությամբ և քո ընկերոջը քո անձի պես» (Հռոմ. 13:10, Մատթ. 22:37-40):

Մարդուն շնորհված այս մեծ շնորհքի մասին Դավիթը, Աստծուն գովաբանելով, ասում է. «մի քիչ ցածրացրիր նրան հրեշտակներիցը, բայց փառքով ու պատվով պսակեցիր նորան. Դու իշխան կարգեցիր նրան քո ձեռքի գործքերի վրա. ամեն բան նրա ոտքի տակ դրիր» (Սաղմոս 8:5,6): Ադամով մարդկությանը տրված այս տիրապետությունը երկրի վրա Աստծո Թագավորության առաջին հաստատումն էր: Այսպիսով մարդը, որպես Աստծո ներկայացուցիչ, գործադրում էր իշխանություն: Սակայն մարդու Բարձրագույն Տիրակալի հանդեպ զրկեց նրան ոչ միայն կյանքից, այլև բոլոր իրավունքներից ու

արտոնություններից՝ որպես Աստծո ներկայացուցիչ՝ կառավարիչ երկրի վրա: Նա դրանից հետո դարձավ ապստամբ, գահընկեց և դատապարտվեց մահվան: Այնուհետև երկրի վրա Աստծո արքայությունը դադարեց, որը մինչև հիմա չի վերահաստատվել, բացի Իսրայելում կարճ ժամանակով, որպես խորհրդաբանական օրինակ: Չնայած Եդեմում մարդը կորցրեց իր կյանքի և տիրապետության իրավունքները, դրանք անմիջապես չեն վերցվել նրանից, և մինչև դատապարտված կյանքի տևողությունը մարդուն թույլատրվում է տիրապետել երկրին ըստ իր պատկերացումների և կարողության, մինչև գա Աստծո կողմից նշանակված ժամանակը՝ երբ Քրիստոս, ում իրավունքն է, պիտի վերցնի տիրապետությունը որը իր արյամբ գնեց:

Մեր Տիրոջ մահը փրկագնեց կամ գնեց ոչ միայն մարդուն, այլև նրա բոլոր սկզբնական ժառանգությունը, այդ թվում՝ երկրի տիրապետությունը: Այս ամենը գնելով՝ այժմ իրավունքը իրեն է պատկանում. նա արդեն օրինական ժառանգն է, և իր ժամանակին, շուտով, կդառնա տերը իր գնած ստացվածքի (Եփ. 1:14): Սակայն ինչպես մարդուն նա գնել է ոչ թե որպես ստրուկ պահելու համար, այլ որպեսզի վերականգնի նրան իր նախկին վիճակին, այնպես էլ երկրի տիրապետության դեպքում է: Նա մարդը ու իր բոլոր սկզբնական օրհնությունները գնեց նրան վերադարձնելու համար, երբ մարդը կրկին կկարողանա դրանք գործածել Աստծո կամքի համաձայն: Այդ պատճառով Մեսիայի երկրի վրա ունենալիք իշխանությունը հավիտենական չի լինի: Այն կշարունակվի միայն այնքան ժամանակ, մինչև նա իր հզոր երկաթյա գավազանով ճնշի ամեն ապստամբությունն ու անհնազանդությունը և վերականգնի ընկած մարդկային ցեղը սկզբնական կատարելությանը, երբ նրանք

ամբողջությամբ կկարողանան ճիշտ կերպով իրականացնել երկրի տիրապետությունը, ինչպես սկզբնապես նախատեսված էր: Երբ այդպես վերականգնվի, այն կրկին կլինի Աստծո Թագավորությունը երկրի վրա՝ մարդու՝ Աստծո նշանակած ներկայացուցչի ղեկավարությամբ:

Հրեական դարի ընթացքում Աստված Մովսեսի և դատավորների ղեկավարությամբ կազմակերպեց Իսրայելի ժողովուրդը որպես իր թագավորություն (մի տեսակ հասարակապետություն) որը սակայն այլաբանական էր միայն: Հետագայում, հատկապես Դավթի և Սողոմոնի օրոք հաստատված միահեծան իշխանությունը որոշ առումներով խորհրդապատկերն էր խոստացված թագավորության, երբ Մեսիան պետք է իշխեր: Շրջապատող ազգերից տարբերվելով՝ Իսրայելը որպես թագավոր ուներ Եհովային, և նրանց իշխանները ծառայում էին նրա ենթակայությամբ, ինչպես մենք իմանում ենք Սաղմոս 78:70,71 -ից: Սա հստակ նշված է 2 Մնաց. 13:8 և, 1 Մնաց. 29:23 հատվածներում, որտեղ Իսրայելը կոչվում է «Եհովայի Թագավորություն», և որտեղ ասվում է, որ Սողոմոնը «նստեց Եհովայի աթոռին՝ իր հոր՝ Դավթի փոխարեն», ով նախորդ քառասուն տարիների ընթացքում նստեց կամ իշխեց միևնույն գահի վրա՝ առաջին թագավոր Սավուղից հետո:

Երբ Իսրայելի ժողովուրդը մեղանչեց Տիրոջ դեմ, Նա բազմիցս պատժեց նրանց, մինչև որ ամբողջությամբ վերցրեց նրանց թագավորությունը: Սեդեկիա թագավորի օրերում, վերջինը Դավթի տոհմից, թագավորական իշխանության գավազանը վերցվեց: Այդ ժամանակ խորհրդանշական Աստծո թագավորությունը կործանվեց:

Աստծո որոշումը արտահայտվեց այս խոսքերով. «Եվ դու, ո՛վ պիղծ և ամբարիշտ իշխան Իսրայելի, օրդ հասել է, քո անօրենության վերջին պատժի ժամանակը: Այսպես է ասում Տեր Եհովան. Հեռացրո՛ւ խույրը և հանի՛ր թագը. այլևս նույնը չի լինելու. ցածրին բարձրացրո՛ւ և բարձրին ցածրացրո՛ւ: Տակնուվրա, տակնուվրա, տակնուվրա պիտի անեմ նրան. սա չպիտի լինի, մինչև որ նա, ում պատկանում է իրավունքը, գա. նրան եմ տալու այն» (Եզեկ. 21:25-27): Այս մարգարեության կատարման համար Բաբելոնի արքան արշավեց Իսրայելի դեմ, գերի վերցրեց ժողովրդին և գահընկեց արեց նրանց թագավորին: Չնայած հետագայում Պարսից Կյուրոսի կողմից ազգային գոյություն վերականգնվեց, նրանք ենթարկվում և հարկեր էին վճարում Մարա-Պարսկական, Հունական և Հռոմեական հաջորդական կայսրություններին մինչև իրենց ազգության վերջնական կործանումը մ.թ. 70 թվականին: Այդ օրվանից ի վեր նրանք ցրված են բոլոր ազգերի մեջ:

Մարդու անկումից ի վեր Իսրայելի թագավորությունը միակն էր, որը, Աստված որոշ իմաստով ճանաչեց որպես իր կառավարություն՝ օրենքների և այլնի ներկայացուցիչ: Նրանցից առաջ եղել են բազմաթիվ ազգեր, սակայն ոչ մեկը օրինավորապես չէր կարող պնդել, որ Աստված նրա հիմնադիրն է կամ որ նրա իշխանները Աստծո ներկայացուցիչներն են: Երբ Սեդեկիայից վերցվեց թագը և Իսրայելի թագավորությունը կործանվեց, այնպես վճռվեց, որ այն մնա կործանված, մինչև Քրիստոս, աշխարհի օրինական ժառանգը գա այն ուզելու: Այս եզրակացությամբ, մինչև Աստծո թագավորության վերահաստատումը, մյուս բոլոր թագավորությունները «այս աշխարհի թագավորություններ» անվամբ կկոչվին «այս աշխարհի իշխանի» ներքև, ուստի նրանցից որևէ

մեկի՝ Աստծո թագավորություն լինելու որևէ հայտարարություն կեղծ է: Ոչ էլ Աստծո այս թագավորությունը Քրիստոսի առաջին գալստյան ժամանակ է հաստատվել (Ղուկաս 19:12): Այդ ժամանակից ի վեր Աստված աշխարհից ընտրում է նրանց, ովքեր արժանի կհամարվեն Քրիստոսի հետ որպես ժառանգակիցներ թագավորելու: Երկրորդ գալստյան ժամանակ է միայն որ Քրիստոս պիտի առնի թագավորությունը, զորությունը և փառքը ու թագավորե որպես բոլորի Տեր:

Իսրայելի թագավորությունից բացի մյուս բոլոր թագավորությունները Սուրբ Գրություններում կոչվում են հեթանոս կամ ազգերի թագավորություններ՝ «այս աշխարհի թագավորություններ», «այս աշխարհի իշխանի»՝ Սատանայի իշխանության տակ: Սեդեկիայի օրերում Աստծո թագավորության վերացումով՝ աշխարհը առանց աստվածահաճո կառավարության մնաց, այսինքն չկար կառավարություն, որի օրենքներն ու գործերը Նա հատուկ հսկեր: Աստված միայն անուղղակիորեն ճանաչեց հեթանոս կառավարությունները, երբ նա հրապարակայնորեն հայտարարեց իր վճիռը (Ղուկաս 21:24), որ գահընդմիջության այդ ժամանակաշրջանում Երուսաղեմի և աշխարհի տիրապետությունը պետք է իրականացվի հեթանոս կառավարությունների կողմից:

Այս միջակայքը՝ այսինքն՝ ժամանակահատվածը, որը ընկած է Աստծո գավազանի և իշխանության հեռացումից մինչև նրանց վերականգնումը Քրիստոսի միջոցով ավելի մեծ զորությամբ և փառքով, Սուրբ Գրքում կոչվում է «Հեթանոսների ժամանակներ»: Եվ այս «ժամանակները» կամ տարիները, որոնց ընթացքում «այս աշխարհի թագավորություններին» թույլատրվում է իշխել, որոշված

և սահմանափակ են, ինչպես որ Մեսիայի ներքո Աստծո թագավորության վերահաստատման ժամանակը հավասարապես որոշված և նշանակված է Սուրբ Գրություններում:

Թեև այս հեթանոսական կառավարությունները չար են, դրանք թույլատրվել կամ «Աստծուց կողմից կարգվել» էին իմաստուն նպատակով (Հռոմեացիներ 13:1): Նրանց անկատարությունը և վատթար կառավարումը կազմում են մեղքի խիստ մեղսալիության ընդհանուր դասի մի մասը և ապացուցում են ընկած մարդու անկարողությունը ինքնուրույն կառավարվելու, անգամ իր սեփական հաճության համար: Աստված, ընդհանուր առմամբ, թույլ է տալիս նրանց իրականացնել իրենց սեփական նպատակները այնպես, ինչպես կարող են, միջամտելով միայն այն ժամանակ, երբ նրանք կարող են խոչընդոտել Իր ծրագրերին: Նա սահմանել է, որ ի վերջո ամեն ինչ բարուն գործակից պիտի լինի, և որ վերջում անգամ «մարդու բարկությունը նրան կօրհնի»: Մնացածը, որոնք ոչ մի բարիք չեն մատուցանի, որևէ նպատակի չեն ծառայի և որևէ դաս չեն սովորեցնի, Նա զսպում է (Սաղմոս 76:10):

Մարդու անկարողությունը կատարյալ կառավարություն հաստատելու մեջ բխում է նրա մեղավոր ու ընկած վիճակի տկարություններից: Սատանան օգտվում է այդ տկարություններից, որոնք ինքնին խոչընդոտ են համարվում մարդու կատարյալ կառավարություն ստեղծելու ջանքերին, և նա առաջուց գայթակղեց մարդուն ապստամբելու Գերագույն Տիրակալին: Սատանան անընդհատ օգտվել է մարդու թույլ կողմերից, բարին ներկայացնելով որպես չար, չարը՝ որպես բարի, և խեղաթյուրելով Աստծո նկարագիրը ու ծրագրերը՝ մարդկանց կուրացրել է ճշմարտության

հանդեպ: Այսպիսով, ներգործում է անհնազանդության որդիների մեջ (Եփես. 2:2), նա նրանց իր կամքի գերի է դարձրել և դարձել է այն, ինչ մեր Տերն ու առաքյալները նրան են կոչել՝ այս աշխարհի իշխան կամ կառավարիչ (Հովհաննես 14:30, 12:31): Նա իրավամբ այս աշխարհի իշխանը չէ, այլ դարձել է այդպիսին զավթման, խարդախության, գայթակղման և ընկած մարդկանց տիրելով: Հենց որովհետև նա զավթիչ է, վերջնականապես պաշտոնանկ պիտի լինի: Եթե նա իսկապես իրավունք ունենար լինել այս աշխարհի իշխան, նրա հետ այդպես չէին վարվի:

Այսպիսով պարզ է դառնում, որ երկրի տիրապետությունը, ինչպես այն ներկայումս գործադրվում է, ունի և անտեսանելի, և տեսանելի կազմ: Առաջինը հոգեղեն, իսկ երկրորդը՝ մարդկային կազմն է – աշխարհային տեսանելի թագավորությունները, որոնք որոշ չափով գտնվում են հոգեղեն իշխանի՝ Սատանայի վերահսկողության տակ: Սատանան, ունենալով այդպիսի վերահսկողություն, կարող էր առաջարկել մեր Տիրոջը դառնալ երկրի գերագույն տեսանելի ինքնիշխանը իր ղեկավարությամբ (Մատթ. 4:9): Երբ ավարտվի հեթանոսների ժամանակը, ներկայիս իշխանության երկու կազմերն էլ կդադարեն: Սատանան կկապվի, և այս աշխարհի թագավորությունները կկործանվեն:

Անկյալ ու կուրացած, հառաչող մարդկությունը դարեր շարունակ անդադար տքնած է իր տաղտկալի ճանապարհի մեջ, ամեն քայլափոխի պարտված, նույիսկ իր ամենալավ ջանքերը անպտուղ են եղել, սակայն միշտ հուսացել է՝ թե իր փիլիսոփաների երազած ոսկեդարը մոտ է: Նա չի գիտակցում, որ սպասվածից և ցանկալիից էլ ավելի մեծ ազատագրություն է գալու արհամարհված

Նազովրեցու և Նրա հետևորդների միջոցով, որոնք որպես Աստծո որդիներ շուտով հայտնվելու են թագավորական զորությամբ՝ իր ազատագրության համար (Հռոմեացիներ 8:22,19):

Որպեսզի նրա զավակները մթության մեջ չմնան ներկայիս չար կառավարությունների հանդեպ նրա թույլտվության առումով և նրա վերջնական մտադրության վերաբերյալ՝ ավելի լավ կառավարություն հաստատելու, երբ այս թագավորությունները, նրա վերահսկող նախախնամության ներքո, ծառայեն այն նպատակին, որի համար թույլատրվել էին, Աստված մարգարեների միջոցով մեզ տվել է «այս աշխարհի թագավորությունների» մի քանի մեծամաշտաբ և իմաստալից խորհրդապատկերներ, և յուրաքանչյուր անգամ, մեր հուսադրման համար, ցույց է տվել դրանց տապալումը՝ հաստատելով իր սեփական արդար և հավիտենական թագավորությունը, որը տեղի պիտի ունենա Մեսիայի՝ Խաղաղության Իշխանի միջոցով:

Մարդու ներկայիս տիրապետություն ունենալու ջանքերը ոչ թե Եհովայի կամքին ու զորության դեմ պայքար է, այլ նրա թույլտվությամբ է, որը ցույց է տրված Աստծո կողմից Նաբուգոդոնոսորին ուղղված պատգամի մեջ, որտեղ Աստված *թույլ է տալիս* չորս մեծ կայսրությունների իշխել (մինչև Քրիստոսի Թագավորության հաստատման ժամանակը). Բաբելոնը, Մարա-Պարսից, Հույն և Հռոմեական կայսրությունները (Դանիել 2:37–43): Այստեղ հստակ ցույց է տրվում, թե որտեղ կավարտվի այս իշխանության վարձակալությունը:

Ինչպես այժմ մեկ հայացքով նայում ենք այս մարգարեական տեսություններին, հիշենք, որ դրանք սկսվում են Բաբելոնից՝ Իսրայելի թագավորության, Տիրոջ

խորհրդանշական թագավորության, կործանման ժամանակ:

Նաբուգոդոնոսորի աշխարհային կառավարությունների տեսիլքը

Ինչ որ սկզբից գրվեց մեր սովորելու համար գրվեց, որպեսզի մենք ովքեր հրահանգված են ենթարկվել գոյություն ունեցող իշխանություններին, համբերությամբ և Գրքերում գտնվող մխիթարությամբ ամուր բռնենք մեր հույսը (Հռոմեացիներ 15:4, 13:1): Դրանիցից մեկը Նաբուգոդոնոսորի երազն է՝ մարգարեի միջոցով տրված աստվածային մեկնաբանությամբ (Դան. 2:31–45):

Դանիելը բացատրեց երազը՝ ասելով. «Դու, ո՛վ թագավոր, նայում էիր և ահա մի հսկա արձան էր կանգնած: Այդ մեծ ու արտասովոր փայլ ունեցող արձանը կանգնած էր քո առաջ և ահազդու տեսք ուներ: Արձանի գլուխը զտված ոսկուց էր, կուրծքն ու ձեռքերը արծաթից էին, որովայնն ու ազդրերը պղնձից էին, սրունքները երկաթից էին, իսկ ոտնաթաթերի մի մասը երկաթից էր, մի մասը՝ կավից: Դու նայում էիր, մինչև որ մի քար պոկվեց, բայց ոչ մարդու ձեռքով, և հարվածեց արձանի ոտնաթաթերին, որոնք երկաթից ու կավից էին, և ջարդուփշուր արեց դրանք:

«Այդ ժամանակ երկաթը, կավը, պղինձը, արծաթն ու ոսկին միասին ջարդուփշուր եղան և ամառվա կալի մղեղի պես դարձան: Քամին քշեց տարավ դրանք, և դրանց հետքն անգամ չմնաց: Իսկ այն քարը, որը հարվածել էր արձանին, մեծ լեռ դարձավ ու լցրեց ողջ երկիրը:

«Սա է երազը, և մենք կհայտնենք թագավորին դրա մեկնությունը: Ո՛վ թագավոր՝ թագավորների՛ թագավոր, որին երկնքի Աստվածը թագավորություն, զորություն, ուժ

և փառք է տվել, որի ձեռքն է տվել դաշտի գազաններին ու երկնքի թռչուններին (որտեղ էլ որ բնակվելիս լինեն մարդկանց որդիները), և որին նա կառավարիչ է նշանակել այդ ամենի վրա, այն ոսկե գլուխը դու ես:

«Քեզնից հետո ուրիշ թագավորություն է վեր կենալու, որը քեզնից ստորադաս է լինելու: Հետո մեկ ուրիշ թագավորություն է վեր կենալու՝ երրորդը, որը պղնձից է լինելու և ղեկավարելու է ողջ երկիրը: Իսկ չորրորդ թագավորությունը երկաթի պես ամուր է լինելու, որովհետև ինչպես որ երկաթն է փշրում ու մանրացնում ամեն ինչ, այնպես էլ նա ջարդուփշուր անող երկաթի պես կոտրելու և ջարդուփշուր է անելու այդ բոլոր թագավորությունները: Եվ ինչպես տեսնում էիր, որ ոտնաթաթերի ու մատների մի մասը բրուտի կավից էր, մի մասը՝ երկաթից, այնպես էլ թագավորությունն է բաժանված լինելու»:

Պատմություն ուսումնասիրողները՝ հեշտությամբ կարող են գտնել երկրի վրա առաջացած բազմաթիվ փոքր կայսրությունների մեջ գտնել վերոհիշյալ չորսը, որոնք նկարագրվեցին Դանիելի կողմից: Դրանք կոչվում են ԱՇԽԱՐՀԱԿԱԼ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ — Առաջինը՝ Բաբելոն, ոսկե գլուխը (38-րդ խոսք), երկրորդը՝ Մարա-Պարսկաստանը, կուրծքը ու թևերը արծաթ, Բաբելոնին նվաճողը, երրորդը՝ Հունաստան, պղնձե մեջքը, Մարա-Պարսկաստանին նվաճողը, և չորրորդը՝ Հռոմ, ուժեղ երկաթե սրունքներով և կավով խառնված ոտնաթաթերը: Այս կայսրություններից երեքը արդեն անցել էին, իսկ չորրորդը՝ Հռոմը, Տիրոջ ծննդյան ժամանակ աշխարհակալորեն տիրում էր, ինչպես կարդում ենք. «Այն օրերին Օգոստոս կայսրից հրաման արձակվեց, որ ամբողջ երկրում մարդահամար անցկացվի» (Ղուկաս 2:1):

Երկաթյա կայսրությունը՝ Հռոմը, անկասկած հզորագույնն էր և գոյատևեց ավելի երկար, քան իր նախորդները: Իրականում Հռոմեական կայսրությունը դեռևս շարունակվում է՝ ներկայացված Եվրոպայի ազգերով: Այս բաժանումը ներկայացված է արձանի ոտքի տասը մատներով: Կավը՝ որը ոտքի մասում շաղախված էր երկաթի հետ, ներկայացնում է եկեղեցու և պետության միաձուլումը: Այս խառնուրդը Սուրբ Գրություններում կոչվում է «Բաբելոն»՝ խառնակություն: Ինչպես շուտով կտեսնենք, *քարը* Աստծո ճշմարիտ Թագավորության խորհրդապատկերն է, իսկ Բաբելոնը քարի կեղծ տեսակն է՝ կավ, որը (երկաթի) Հռոմեական կայսրության մնացյալ մասերի հետ է միացված: Եվ այս խառնուրդ կազմը՝ եկեղեցի և պետություն (անվանական եկեղեցի, որը ամուսնացած է այս աշխարհի թագավորությունների հետ, որին Տերը կոչում է «Բաբելոն»՝ խառնակություն), համարձակվում է իրեն կոչել քրիստոնեություն, Քրիստոսի Թագավորություն: Դանիելը բացատրում է՝ «Եվ այն, որ երկաթը թաց կավի հետ խառնած տեսար, ցույց է տալիս, որ նրանք խառնվելու են մարդկային սերնդի հետ, [եկեղեցի և աշխարհ միաձուլվում են՝ Բաբելոն], բայց չեն միաձուլվելու, ինչպես որ երկաթը կավի հետ չի խառնվում»: Նրանք չեն կարող ամբողջությամբ միաձուլվել: «Այն թագավորների օրերում [ոտքի մատներով ներկայացված թագավորությունները, որոնք անարժանաբար «քրիստոնեական թագավորություններ» կամ «քրիստոնեություն» կոչված են] երկնքի Աստվածը մի թագավորություն է հաստատելու, որը երբեք չի ավերվելու: Այդ թագավորությունը ուրիշ ժողովրդի չի տրվելու: Այն փշրելու է և վերջ է դնելու այս բոլոր թագավորություններին, իսկ ինքը մնալու է հավիտյան» (Դանիել 2:43,44):

Դանիելը այստեղ չի նշում այս հեթանոս թագավորությունների ավարտի ժամանակը՝ դա մենք գտնում ենք մեկ այլ տեղ, սակայն յուրաքանչյուր կանխատեսված հանգամանք ցույց է տալիս, որ այսօր այդ վերջը մոտ է, անգամ դռների մոտ: Պապական համակարգը երկար ժամանակ պնդել է, որ ինքն է այն թագավորությունը, որը երկնքի Աստվածը այստեղ խոստացել էր հաստատել, և որ այս մարգարեության կատարման ընթացքում այն փշրել և վերջ է դրել բոլոր մյուս թագավորությունները: Սակայն ճշմարտությունն այն է, որ անվանական Եկեղեցին պարզապես միացավ աշխարհային կայսրություններին, ինչպես կավը երկաթին, և Պապականությունը երբեք չի եղել Աստծո ճշմարիտ Թագավորությունը, այլ միայն դրա կեղծ տարբերակը: Մեկ լավագույն ապացույցներից մեկը, որ Պապականությունը չի կործանել և չի ոչնչացրել այս աշխարհային թագավորությունները, այն է, որ դրանք դեռ գոյություն ունեն: Եվ հիմա, երբ տղմուտ կավը չորացել է և «դյուրաբեկ» է դարձել, այն կորցնում է իր կպչունության ուժը, թե երկաթը ու թե կավը քայքայման նշաններ են ցույց տալիս և շուտով կփշրվեն, «քարի»՝ ճշմարիտ Թագավորության հարվածից:

Շարունակելով իր մեկնաբանությունը՝ «Դանիելը ասում է. որովհետև դու տեսար, որ լեռից քար պոկվեց, բայց ոչ մարդու ձեռքով, և փշրեց երկաթը, պղինձը, կավը, արծաթն ու ոսկին: Մեծ Աստվածը իմացրել է թագավորին, թե ինչ է լինելու հետագայում: Երազը վստահելի է, և մեկնությունը՝ արժանահավատ» (Դանիել 2:45):

Լեռից առանց ձեռքի պոկված քարը, որը հարվածեց և փշրեց հեթանոս զորությունները, ներկայացնում է ճշմարիտ Եկեղեցին՝ Աստծո Թագավորությունը:

Ավետարանական դարի ընթացքում է որ այս «քարը» թագավորությունը «պոկվում», տաշվում և ձևավորվում է իր ապագա դիրքի և մեծության համար՝ ոչ թե մարդկային ձեռքերով, այլ հոգով ու ճշմարտության զորությամբ, որը Եհովայի աներևույթ զորությունն է: Երբ այն ամբողջանա, ամբողջությամբ պոկվի, այն կհարվածի և կկործանի այս աշխարհի թագավորությունները: Արձանով խորհրդանշված են ոչ թե ժողովուրդները, այլ կառավարությունները, և հենց դրանք պետք է ոչնչացվեն, որպեսզի ժողովուրդը ազատվի: Մեր Տեր Հիսուսը չեկավ մարդկանց կյանքը կորցնելու, այլ փրկելու (Հովհաննես 3:17):

Քարը՝ իր պատրաստության ժամանակ, երբ այն դեռ պոկվում է, իր ապագա վիճակը նկատի ունենալով՝ կարելի է այն կոչել սաղմնային լեռ: Նույնպես Եկեղեցին կարելի է, և երբեմն անվանում են, Աստծո Թագավորություն: Իրականում, սակայն, քարը չի դառնում լեռ մինչև այն չխփի ու չխորտակի արձանը և այդպես Եկեղեցին, լիակատար իմաստով, կդառնա աշխարհը լցնող Թագավորություն՝ երբ «Տիրոջ օրը», ազգերի վրա «բարկության օրը» կամ «նեղության ժամանակը» ավարտվի, և երբ այն հաստատվի և բոլոր մյուս իշխանությունները նրան հպատակվեն:

Արդ՝ մտաբերեցեք մեր Տիրոջ խոստումները ուղղված քրիստոնեական եկեղեցուն: «Ով հաղթի, նրան թույլ կտամ, որ ինձ հետ նստի իմ գահին» — «և ով հաղթի ու պահի իմ գործերը մինչև վերջ, նրան իշխանություն եմ տալու ազգերի վրա, և նա պիտի հովվի նրանց երկաթե գավազանով, նրանք փշրվելու են բրուտի ամանների պես, այնպես ինչպես ես իմ Հորից ստացա» (Հայտնություն 3:21, 2:26, 27, Սաղմոս 2:8–12): Երբ երկաթե գավազանը

ավարտի կործանման գործը, այն ժամանակ ջախջախող ձեռքը կդառնա բուժելու, ու ժողովուրդը Տիրոջը կդառնա ու նա պիտի բժշկե նրանց (Ես. 19:22, Երեմ. 3:22, 23, Օս. 6:1, 14:5, Ես. 2:3, Ես. 61:3), նրանց մոխրի փոխարեն փառք, սգի փոխարեն ուրախության յուղ և կոտրած հոգու փոխարեն գովության պատմուճան պիտի տա:

Դանիելի աշխարհային կառավարությունների տեսիլքը

Նաբուգոդոնոսորի տեսիլքում մենք տեսանք աշխարհի կայսրությունները, որոնք դիտված էին աշխարհային տեսանկյունից, որպես մարդկային փառքի, մեծության և զորության ցուցադրություն, սակայն դրանում տեսնում ենք նաև նրանց անկման և վերջնական ոչնչացման ակնարկը, որը արտահայտվում է ոսկուց մինչև երկաթ և կավ վատթարացմամբ:

Քար դասակարգը, ճշմարիտ Եկեղեցին, իր ընտրության կամ լեռից պոկվելու ժամանակին աշխարհի կողմից անարժեք բան է համարվել: Այն արհամարված ու մերժված է մարդկանց կողմից: Նրանք դրա մեջ գեղեցկություն չեն տեսնում, որ ցանկանային այն: Աշխարհը սիրում, հիանում, գովաբանում և պաշտպանում է այս մեծ արձանով ներկայացված իշխաններին ու կառավարություններին, թեև անընդհատ հիասթափվել, խաբվել, վիրավորվել և ճնշվել է նրանց կողմից: Աշխարհը արձակ և ոտանավոր գրություններով բարձրացնում է այս արձանի մեծ ու հաջողակ ներկայացուցիչներին՝ Ալեքսանդրներին, Կեսարներին, Բոնապարտներին և մյուսներին, որոնց մեծությունը դրսևորվեց իրենց ընկերների մեծաքանակ կոտորածով, և որոնք իշխանության ծարավով միլիոնավոր որբ և որբևայրիների պատճառ եղան: Եվ նույն ոգին դեռևս

գոյություն ունի արձանի «տասը մատների» մեջ, ինչպես տեսնում ենք այսօր՝ նրանց կազմակերպած ավելի քան տասներկու միլիոն մարդուց բաղկացած բանակներում, որոնք զինված են ժամանակակից հնարամտության ամեն տեսակ սարքավորումներով՝ պատրաստ սպանելու իրենց վեհապետների հրամանով:

Ներկայումս հպարտներին երանի՜ կտրվի ու ամբարշտություն անողները զորության գլուխ կդրվին (Մաղ. 3:15): Արդյո՞ք չենք տեսնում, որ այս մեծ արձանի քարի հարվածով ոչնչացումը և Աստծո թագավորության հաստատումը, ճնշվածների ազատագրումն է նշանակում ու բոլորի օրհնությունը: Եվ թեև նման փոփոխությունը որոշ ժամանակով աղետի և տառապանքի պատճառ կդառնա, այն ի վերջո կբերի արդարության խաղաղ պտուղներ:

Բայց հիմա, հիշելով տեսակետների տարբերությունը, նայենք նույն աշխարհակալ չորս կայսրություններին Աստծո և նրա հետ ներդաշնակ լինողների տեսանկյունից, ինչպես դրանք պատկերված են սիրելի մարգարե Դանիելի տեսիլքում: Ինչպես որ մեզ համար այս թագավորությունները անփառունակ և գազանային են թվում, այնպես էլ նրա համար այս չորս համաշխարհային կայսրությունները ներկայացվեցին որպես չորս մեծ ու վայրենի գազաններ: Նրա տեսության մեջ Աստծո գալիք Թագավորությունը (քարը) համեմատաբար ավելի վսեմ էր, քան այն, ինչ տեսել էր Նաբուգոդոնոսորը: Դանիելն ասում է. «Գիշերը ես տեսիլքներ էի տեսնում, և ահա երկնքի չորս քամիները ալեկոծում էին մեծ ծովը: Չորս հսկա գազաններ էին դուրս գալիս ծովից, և յուրաքանչյուրը տարբերվում էր մյուսներից: Առաջինը առյուծի էր նման և արծվի թևեր ուներ ... երկրորդը, արջի

էր նման... և ահա տեսա մեկ այլ գազան, որն ընձառյուծի էր նման ... Դրանից հետո ես նայում էի գիշերվա տեսիլքներում, և ահա տեսա չորրորդ գազանին, որը ահեղ ու զարհուրելի էր և արտասովոր ուժ ուներ: Նա երկաթե մեծ ատամներ ուներ, խժռում ու ջարդուփշուր էր անում, իսկ մնացածը կոխկռտում էր ոտքերով: Նա տարբերվում էր իրենից առաջ եղող մյուս բոլոր գազաններից և տասը եղջյուր ուներ (Դանիել 7:2-7):

Մենք բաց ենք թողնում առաջին երեք գազանների (Բաբելոնը՝ առյուծը, Մարա-Պարսկաստանը՝ արջը, Հունաստանը՝ ընձառյուծ) վերաբերյալ մանրամասները՝ նրանց խորհրդանշական գլուխներով, ոտքերով, թևերով և այլն, քանի որ այս ուսումնասիրության մեջ դրանք պակաս կարևոր են, քան չորրորդ գազանի՝ Հռոմի, մանրամասնությունները:

Չորրորդ գազան՝ Հռոմի մասին Դանիելն ասում է. «Դրանից հետո ես նայում էի գիշերվա տեսիլքներում, և ահա տեսա չորրորդ գազանին, որը ահեղ ու զարհուրելի էր և արտասովոր ուժ ուներ... և տասը եղջյուր ուներ: Ես ուշադիր նայում էի այդ եղջյուրներին, և ահա մեկ ուրիշ եղջյուր, որը փոքր էր, դուրս եկավ դրանց մեջտեղը, և նախկին եղջյուրներից երեքը կոտրվեցին նրա առաջ: Այս եղջյուրը մարդու աչքերի պես աչքեր ուներ, նաև բերան, որը մեծ-մեծ բաներ էր խոսում (Դանիել 7:7,8):

Այստեղ պատկերված է Հռոմեական կայսրությունը, և նրա իշխանության բաժանումը ներկայացվում են տասը եղջյուրներով, քանի որ եղջյուրը իշխանության խորհրդանիշ է: Փոքր եղջյուրը, որը նրանց միջից բարձրացավ, վերցրեց երեքի իշխանությունը և գերիշխեց մյուսների վրա, ներկայացնում է Հռոմի եկեղեցու՝ պապական իշխանության, փոքր սկիզբն ու

աստիճանական բարձրացումը իշխանության մեջ: Նրա ազդեցության աճի հետ մեկտեղ Հռոմեական կայսրության երեք մասեր, երեք եղջյուրներ կամ իշխանություններ (Հերուլի, Արևելյան Մարզպանություն և Օստրոկոթները) արմատախիլ եղան, ճանապարհ հարթելով նրա՝ որպես քաղաքացիական իշխանության, այսինքն՝ եղջյուրի, հաստատման համար: Այս վերջին, առանձնապես նշանավոր եղջյուրը՝ Պապականությունը, առանձնանում է իր աչքերով, որոնք խորհրդանշում են մտավոր կարողությունը, և իր բերանով, իր արտահայտություններով, իր ասածներով և այլն:

Այս չորրորդ գազանին, որը ներկայացնում է Հռոմը, Դանիելը որևէ նկարագրական անուն չի տալիս: Մինչդեռ մյուսները նկարագրվում են որպես առյուծանման, արջանման և ընձանման, չորրորդը այնքան դաժան ու սարսափելի էր, որ երկրի ոչ մի գազան նրա հետ համեմատելի չէր: Հայտնություն գրող Հովհաննես առաքյալը, տեսիլքում տեսնելով նույն այլաբանական գազանին (կառավարություն), նույնպես չէր գտնում համապատասխան անուն, որով կկարողանար նկարագրել այն, և ի վերջո տվեց մի քանի անուններ: Նրանց թվում էր «սատանա» անունը (Հայտն. 12:9): Նա անշուշտ ընտրեց համապատասխան անուն, որովհետև Հռոմը, երբ դիտվում է իր արյունալի հալածանքների լույսի ներքո, անկասկած երկրային բոլոր կառավարություններից ամենասատանայականն էր: Նույնիսկ իր փոփոխության ընթացքում՝ հեթանոսական Հռոմից դեպի պապական Հռոմ, այն մարմնավորեց Սատանայի գլխավոր հատկանիշներից մեկը. նա նույնպես փոխակերպվում է, որպեսզի երևա *որպես* լույսի հրեշտակ (Բ Կորնթ. 11:14), ինչպես որ Հռոմը ինքն իրեն

կերպարանափոխեց հեթանոսությունից ու Քրիստոնյա – Քրիստոսի Թագավորություն[8] անվանվեց.

Այս վերջին՝ հռոմեական գազանին, և հատկապես նրա արտասովոր՝ պապական եղջյուրին վերաբերող որոշ մանրամասներ ներկայացնելուց հետո մարգարեն հայտնում է, որ այս եղջյուրի դեմ դատաստան կհայտարարվի, և այն սկսելու է կորցնել իր տիրապետությունը, որը աստիճանաբար *կթուլանա*, մինչև *գազանը* ոչնչանա:

Այս գազանը կամ Հռոմեական կայսրությունը իր եղջյուրներովը կամ բաժանումներովը դեռ գոյություն ունի, և որը Տիրոջ օրվա մեջ կսպանվի ժողովուրդների զանգվածային ապստամբությամբ և կառավարությունների տապալմամբ, որպես երկնային իշխանության ճանաչման նախապատրաստություն: Սա հստակ երևում է այլ գրություններում, որոնք դեռ պետք է քննվեն: Բայց նախ պետք է տեղի ունենա պապական եղջյուրի *սպառումը*: Նրա զորությունը ու ազդեցությունը սկսեց սպառվել, երբ Նապոլեոնը Պապին գերի վերցրեց և տարավ Ֆրանսիա: Այնուհետև, երբ ոչ Պապերի անեծքները, ոչ էլ նրանց աղոթքները նրանց չազատեցին Բոնապարտի իշխանությունից, ազգերի առջև պարզ դարձավ, որ Պապականության վերագրվող աստվածային իշխանությունն ու զորությունը հիմնավորում չունեին: Դրանից հետո Պապականության աշխարհիկ

[8] Այն փաստը, որ Հռոմը կոչվում է «Սատանա», ոչ մի կերպ չի ժխտում *անհատական* սատանայի գոյությունը. ընդհակառակը: Քանի որ գոյություն ունեն առյուծներ, արջեր և ընձառյուծներ՝ հայտնի հատկանիշներով, կառավարությունները նմանեցվում են նրանց. և այդպես, քանի որ գոյություն ունի Սատանա՝ հայտնի հատկանիշներով, չորրորդ կայսրությունը նմանեցվում է նրան:

իշխանությունը՝ արագորեն թուլացավ, մինչև որ 1870 թ. սեպտեմբերին Վիկտոր Էմանուելի ձեռքով կորցրեց իր քաղաքական զորության վերջին հենարանը - Հռոմը:

Այնուամենայնիվ, իր «սպառման» ողջ ընթացքում պապությունը երբեք չի դադարել հնչեցնել ամբարտավան, ճոռոմ և հայհոյական խոսքեր, և նրա վերջին մեծ հայտարարությունը եղավ 1870 թվականին, երբ, իր տապալումից ընդամենը մի քանի ամիս առաջ, հայտարարեց պապերի *անսխալականությունը*: «Այն ժամանակ շարունակում էի նայել» (*այսինքն՝ «*եղջյուրի» դեմ վճիռը արձակվելուց հետո, նրա սպառումը սկսվելուց հետո) այն եղջյուրի մեծ խօսքերուն ձայնի համար» (Դանիել 7:11):

Այսպես պատմությունը մինչև մեր օրեր է հասնում, որտեղ ցույց է տրված մեզ սպասվելիք իրադարձությունները, որտեղ կայսրություններին, սպասվում է լիակատար ոչնչացում: Հաջորդ իրադարձությունը նկարագրվում է այս խոսքերով.« Ես նայում էի, և ահա գազանը սպանվեց, նրա մարմինը ոչնչացվեց, և նա բորբոքված կրակին մատնվեց»: Սպանելը և այրելը, ինչպես նաև գազանը, խորհրդաբանական են և նշանակում են ներկայիս կազմակերպված կառավարության ամբողջական և անհույս կործանումը: 12-րդ համարում մարգարեն նշում է այս չորրորդ գազանի և նրա նախորդների ավարտների միջև տարբերությունը: Այդ երեքը (Բաբելոնը, Պարսկաստանը և Հունաստանը) հերթով կորցրին իրենց *տիրապետ*ությունը՝ դադարելով պահել երկրի իշխանությունը, սակայն որպես ազգեր նրանց գոյությունը անմիջապես չդադարեց: Հունաստանն ու Պարսկաստանը դեռևս ունեն որոշ կյանք, թեև արդեն դարեր են անցել, երբ

համընդհանուր տիրապետությունը դուրս եկավ նրանց ձեռքից: Սակայն չորրորդ և վերջին՝ Հռոմեական կայսրության դեպքում դա այդպես չի լինի: Այն միաժամանակ կորցնելու է և տիրապետությունն և կյանքը ու կհայտնվի ամբողջական ոչնչացման մեջ, և նրա հետ մյուսներն էլ (Դանիել 2:35):

Անկախ այն միջոցներից կամ գործիքներից, որոնք կարող են կիրառվել, այս անկման *պատճառը* կլինի երկրի հինգերորդ Աշխարհակալ Կայսրության՝ Աստծո Թագավորության հաստատումը, Քրիստոսի գլխավորությամբ, որին պատկանում է տիրապետություն ստանձնելու իրավունքը: Չորրորդ գազանի թագավորության նախասահմանված ժամանակին Մեսիայի Հինգերորդ թագավորության փոխանցվելը, մարգարեի կողմից նկարագրվում է հետևյալ խոսքերով՝ «Հետո գիշերվա տեսիլքներում նայում էի, և ահա երկնքի ամպերով գալիս էր մարդու որդու նման մեկը: Նրան թույլ տրվեց մոտենալ Հինավուրցին, և նա մոտ բերվեց Նրան: Եվ նրան (Քրիստոսը – Գլուխը և մարմինը ամբողջացած) տրվեց իշխանություն, պատիվ ու թագավորություն, որպեսզի բոլոր ժողովուրդները, ազգություններն ու լեզուները ծառայեն նրան: Նրա իշխանությունը հավիտենական իշխանություն է, որը չի անցնի, և նրա թագավորությունը չի ավերվի: Այս հրեշտակը բացատրեց, որ «Թագավորությունը, իշխանությունն ու ողջ երկնքի թագավորությունների մեծությունը տրվել են Ամենաբարձրյալի սրբերին: Նրանց թագավորությունը դարեդար տևող թագավորություն է, և բոլոր իշխանությունները կծառայեն ու կհնազանդվեն նրանց» (Դանիել 7:13, 14, 27):

Այսպիսով, երկրի իշխանությունը պետք է տրվի Քրիստոսին՝ Եհովայի կողմից, ով «ամեն բան կդնի նրա ոտքերի տակ» (Ա Կորնթ. 15:27): Աստծո արքայության գահին բազմած՝ նա պետք է իշխի մինչև որ Եհովայի կամքին ու օրենքին հակառակ ամեն իշխանություն և զորություն խափանի: Այս մեծ առաքելության իրականացման համար նախ հարկավոր է տապալել այս հեթանոսական կառավարությունները, որովհետև «այս աշխարհի թագավորությունները», ինչպես «այս աշխարհի իշխանը», խաղաղությամբ չեն հանձնվի, այլ պետք է կապվեն ու զսպվեն ուժով: Այսպես է գրված. «Որպեսզի նրանց թագավորներին կապեն շղթաներով և նրանց իշխաններին՝ երկաթե ոտնակապերով. Որպեսզի նրանց համար գրված դատավճիռը կատարեն. ահա սա է նրա բոլոր սրբերի փառքը» (Սաղմոս 149:8, 9):

Այսպիսով, երբ մենք ներկայիս կառավարություններին դիտարկում ենք մեր Տիրոջ և մարգարե Դանիելի տեսանկյունից և գիտակցում դրանց դաժան, ավերիչ, գազանային և եսասեր բնույթը, մեր սրտերը ակնկառույց սպասում են հեթանոսական կառավարությունների ավարտին և ուրախությամբ սպասում այն օրհնյալ ժամանակին, երբ ներկայիս դարի հաղթողները իրենց Գլխի՝ Հիսուսի հետ կգահակալեն՝ իշխելու, օրհնելու և վերականգնելու հառաչող մարդկությունը: Արդարև, Աստծո բոլոր զավակները իրենց Տիրոջ հետ կարող են սրտաբուխ աղոթել «Թագավորությունդ եկեսցէ, կամքդ եղիցի ի վերա երկրիս, որպես ի վերա երկին»:

Երբ մենք ներկայիս կառավարություններին նայում ենք մեր Տիրոջ և մարգարե Դանիելի աչքերով և ճանաչում դրանց դաժան, ավերիչ, բռնի և ինքնասեր բնույթը, մեր

սրտերը ձգտում են այս հեթանոսական տիրապետությունների ավարտին և ուրախությամբ սպասում են այն օրհնյալ ժամանակին, երբ այս դարի հաղթողները իրենց Գլխի հետ միասին կնստեն գահին՝ առաջնորդելու, օրհնելու և նորոգելու հառաչող ստեղծածին: Առանց որևէ կասկածի, Աստծո բոլոր զավակները կարող են իրենց Տիրոջ հետ միասին ամբողջ սրտով աղոթել՝ «ՔՈ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԱ. Քո կամքը լինի ինչպես երկնքում՝ այնպես էլ երկրի վրա»:

Ինչպես որ արձանով ու գազաններով ներկայացված այս յուրաքանչյուր կառավարությունները գոյություն են ունեցել աշխարհակալ կայսրություններ լինելուց առաջ, նույնպես և Աստծո ճշմարիտ Թագավորությունը՝ այն երկար ժամանակ գոյություն է ունեցել աշխարհից անջատ, չի ձգտել իշխանության, այլ սպասել է Հինավուրցի կողմից սահմանված ժամանակին: Եվ, ինչպես մյուսները, այն պետք է ստանա իր պաշտոնը և իշխանությունը, [այսինքն՝ հաստատվի] *նախքան* կկարողանա իր ուժը կիրառել իրեն նախորդող գազանի կամ թագավորության հարվածելու և ոչնչացնելու գործում: Այդ պատճառով տեղին է ասվածը՝ «Այս թագավորների օրերում [երբ նրանք դեռ իշխանություն ունեն] երկնքի Աստված կհիմնի [ուժի և իշխանության մեջ կհաստատի] մի թագավորություն»: Եվ երբ այն հաստատվի, «Այն փշրելու է և վերջ է դնելու այս բոլոր թագավորություններին, իսկ ինքը մնալու է հավիտյան» (Դանիել 2:44): Ուստի, որքան էլ որ մենք նրան սպասենք, պետք է ակնկալենք, որ Աստծո Թագավորության սկսվելը տեղի կունենա այս աշխարհի թագավորությունների անկումից *առաջ*, և որ նրա զորությունն ու հարվածը կհանգեցնեն դրանց կործանմանը:

Այս աշխարհի թագավորությունները՝ դիտարկված այլ տեսանկյունից

Աշխարհը կառավարելու գերագույն իրավունքն ու լիազորությունը պատկանում են և միշտ կպատկանեն Արարչին՝ Եհովային, անկախ նրանից, թե ում նա թույլ կտա կամ կլիազորի ստորադաս կառավարում ունենալ: Թագավորների Թագավորի հանդեպ անհնազանդության հետևանքով առաջացած անկատարությունների և տկարությունների պատճառով Ադամը շուտով թուլացավ և անօգնական դարձավ: Որպես միապետ՝ նա սկսեց կորցնել այն զորությունը, որով սկզբում իր կամքի ուժով հրամայում և հնազանդ էր պահում ստորին դասի անասունները: Նա նաև կորցրեց ինքն իրեն կառավարելու զորությունը, այնպես որ երբ ուզում էր բարիք անել, իր տկարությունները խանգարում էին, և չարը կգործեր և այն բարիքը, որը նա անգամ ուզում էր անել, չէր անում, իսկ այն չարիքը, որը չէր ուզում, անում էր:

Այսպիսով, չփորձելով արդարացնել մեր ապստամբ մարդկային ցեղը, մենք կարող ենք կարեկցել նրա ապարդյուն փորձերին՝ ինքնուրույն կառավարվելու և սեփական բարօրության համար կազմակերպվելու մեջ: Այս առումով աշխարհի հաջողության մասին նույնպես կարելի է խոսել, որովհետև նույնիսկ երբ ճանաչում ենք այս գազանային կառավարությունների իրական բնույթը, որոնք թեև ապականված են, սակայն ավելի լավ են քան եթե ընդհանրապես գոյություն չունենային՝ շատ ավելի լավ, քան անօրինականությունն ու քաոսը: Չնայած անիշխանակությունը, հավանաբար, բավական ընդունելի կլիներ «այս աշխարհի իշխանին», այն նրա ենթակաների համար ընդունելի չէ, և նրա իշխանությունը ամբողջական չէ. այն սահմանափակվում է մարդկանց միջոցով գործելու

նրա կարողությամբ, և նրա քաղաքականությունը մեծապես պետք է համապատասխանի մարդկանց գաղափարներին, կրքերին և նախապաշարմունքներին: Մարդու գաղափարականը Աստծուց անկախ ինքնակառավարումն էր, և երբ Աստված թույլ տվեց նրան փորձել այն, Սատանան օգտվեց առիթից՝ իր ազդեցությունն ու տիրապետությունը ընդլայնելու համար: Այսպիսով, Աստծուն մոռանալու ցանկության (Հռոմեացիներ 1:28) պատճառով մարդը ենթարկվեց այս խորամանկ, հզոր, սակայն անտեսանելի թշնամու ազդեցությանը, և այդ օրվանից ի վեր նա ստիպված է պայքարել ոչ միայն Սատանայի նենգությունների, այլև իր սեփական տկարությունների դեմ:

Այսպիսով, եկեք կրկին հայացք նետենք այս աշխարհի թագավորություններին՝ բայց այս անգամ դիտենք նրանց այնպես, ինչպես որ ընկած մարդկությունը ձգտում է ինքն իրեն կառավարել՝ Աստծուց անկախ: Չնայած անհատական ապականությունը և եսասիրությունը շեղել են արդարության ընթացքը, այնպես որ այս աշխարհի թագավորությունների ներքո հազվադեպ է ամբողջությամբ կիրառվում արդարությունը, սակայն մարդկանց մեջ երբևէ կազմակերպված բոլոր կառավարությունների հռչակված նպատակը եղել է խթանել արդարությունը ու աշխատել բոլոր մարդկանց բարօրության համար:

Թե որքանով է այդ նպատակը իրագործվել՝ ուրիշ հարց է, սակայն բոլոր կառավարությունների հայտարարությունները հենց այդպիսին էին, և հենց այդ շարժառիթներն էին, որոնք առաջնորդում էին իրենց ենթականերին, երբ նրանք ենթարկվում և աջակցում էին նրանց: Եվ այնտեղ, որտեղ արդարության սկզբունքները

կոպիտ կերպով անտեսվում էին, մարդիկ կամ կուրացվում և խաբվում էին դրանց վերաբերյալ, կամ արդյունքում բռնկվում էին պատերազմներ, խռովություններ և հեղափոխություններ:

Աշխարհի կառավարություններում իշխանության հասած ստոր ու անբարո բռնապետների մութ գործերը չէին ներկայացնում այդ կառավարությունների օրենքներն ու ինստիտուտները, այլ՝ իշխանությունը զավթելով ու այն ստոր նպատակների ծառայեցնելով, նրանք այդ կառավարություններին հաղորդեցին իրենց գազանային բնույթը: Յուրաքանչյուր կառավարություն ունեցել է իմաստուն, արդար և բարի օրենքների մեծամասնություն՝ կյանքի և գույքի պաշտպանության, ներքին և առևտրային շահերի պահպանության, հանցագործությունների պատժման և այլն համար: Նրանք ունեցել են նաև վեճերի հարցերով բողոքարկման դատարաններ, որտեղ, առնվազն որոշ չափով, արդարություն է կիրառվում, և որքան էլ թերի լինեն պաշտոնյաները, նման հաստատությունների առավելությունն ու անհրաժեշտությունը ակնհայտ են: Չնայած այս կառավարությունները աղքատ են եղել, առանց դրանց հասարակության ստորին տարրը թվական առավելությամբ կհաղթեր ավելի արդար ու լավ տարրին:

Այսպիսով, թեև մենք ճանաչում ենք այս կառավարությունների գազանային բնույթը, որը ձևավորվել է անարդար ղեկավարների բազմության իշխանության գալու միջոցով՝ Սատանայի խարդախությունների և խաբեությունների շնորհիվ, որոնք գործում են մարդու թույլ կողմերի, ապականված ճաշակի և հայացքների միջոցով, այնուամենայնիվ, մենք դրանք ընդունում ենք որպես խեղճ, ընկած մարդկության

ինքնակառավարման լավագույն փորձերը: Դարեր շարունակ Աստված թույլ է տվել նրանց ձեռնարկել այդ ջանքերը և տեսնել արդյունքները: Սակայն դարերի փորձարկումներից հետո այսօրվա արդյունքները նույնքան անբավարար են, որքան աշխարհի պատմության ցանկացած այլ շրջանում: Իրականում դժգոհությունը երբևէ եղածից ավելի ընդհանուր և լայնածավալ է դարձել՝ ոչ թե այն պատճառով, որ ճնշումն ու անարդարությունը այսօր ավելի են մեծացել, այլ որովհետև Աստծո կարգադրությամբ գիտելիքի աճի շնորհիվ մարդկանց աչքերը բացվում են:

Ժամանակ առ ժամանակ իշխանության եկած տարբեր կառավարություններ ցույց տվեցին, որ ժողովուրդը (որին նրանք ներկայացնում էին) *միջին կարողություն* ուներ ինքնակառավարվելու: Նույնիսկ այն դեպքերում, երբ գոյություն են ունեցել բռնապետական կառավարություններ, զանգվածների կողմից դրանց հանդուրժումը ապացուցում էր, որ որպես ժողովուրդ նրանք անկարող էին ստեղծել և պահպանել ավելի լավ կառավարություն, թեև անհերքելիորեն շատ անհատներ միշտ էլ զգալիորեն առաջ էին սովորական աստիճանից:

Երբ համեմատում ենք աշխարհի ներկայիս վիճակը որևէ նախորդ ժամանակաշրջանի հետ, նկատում ենք զանգվածների տրամադրություններում ակնառու տարբերություն: Անկախության ոգին այժմ տարածված է, և մարդիկ այլևս այնքան հեշտ չեն կուրանում, խաբվում ու առաջնորդվում իշխանավորների ու քաղաքական գործիչների կողմից, ուստի չեն ենթարկվի նախկին օրերի լծակներին: Հանրային տրամադրությունների այս փոփոխությունը չի եղել աստիճանական մարդու ինքնակառավարման ջանքերի սկզբից, այլ հստակ

արտահայտվել է միայն 16-րդ դարից, և վերջին 50 տարիների ընթացքում դրա առաջընթացը եղել է առավել արագ: Այս փոփոխությունը, հետևաբար, անցյալ դարերի փորձի արդյունք չէ, այլ մարդկության զանգվածների շրջանում գիտելիքի վերջին աճի և ընդհանուր տարածման բնական հետևանքն է: Գիտելիքների այս ընդհանուր տարածման նախապատրաստումը սկսվեց տպագրության հայտնագործությամբ՝ մոտ 1440 թ. Ք.Հ. և դրա հետևանքով գրքերի ու նորությունների պարբերականների բազմացմամբ: Այս հայտնագործության ազդեցությունը հանրային լուսավորության վրա սկսեց զգացվել մոտ 16-րդ դարում, և այդ ժամանակից ի վեր ձեռնարկված առաջընթաց քայլերը բոլորին հայտնի են: Ժողովրդի ընդհանուր կրթությունը դարձել է լայնորեն տարածված, իսկ հայտնագործություններն ու նորագիտությունները դարձել են առօրյա երևույթներ: Մարդկանց շրջանում այս գիտելիքի աճը, որը Աստծո նշանակմամբ է և իր ժամանակին է տեղի ունենում, հզոր ազդեցություններից մեկն է, որոնք այժմ գործում են՝ կապելու Սատանային, նվազեցնելու նրա ազդեցությունը և սահմանափակելու նրա զորությունը այս *«Պատրաստության* Օրվա» ընթացքում՝ Աստծո թագավորությունը երկրի վրա հաստատելու համար:

Գիտելիքի աճը բոլոր ուղղություններով արթնացնում է մարդկանց մեջ անձնասիրության զգացում և նրանց բնական ու անձեռնմխելի իրավունքների գիտակցություն, և նրանք այլևս չեն թույլատրի, որ այդ իրավունքները անտեսվեն կամ անարգվեն, փոխարենը նրանք կդիմեն հակառակ ծայրահեղությանը: Եկեք նայենք անցած դարերին և տեսնենք, թե ինչպես են ժողովուրդները իրենց դժգոհության պատմությունը արյունով գրել: Եվ

մարգարեներն հայտարարում են, որ գիտելիքի աճի պատճառով ավելի ընդհանուր և լայնածավալ դժգոհությունը վերջապես արտահայտվելու է համաշխարհային հեղափոխությամբ՝ բոլոր օրենքների և կարգուկանոնի տապալմամբ, որ արդյունքում քաոս և տառապանք կլինի բոլոր խավերի համար, սակայն այս խառնաշփոթության մեջ երկնքի Աստված ԿՀԱՍՏԱՏԻ Իր Թագավորությունը, որը կբավարարի բոլոր ազգերի ցանկությունները. Սեփական ձախողումներից հոգնած ու հուսահատված և տեսնելով, որ իրենց վերջին ու ամենամեծ ջանքերը քաոս են առաջացնում, մարդիկ ուրախությամբ կընդունեն և կխոնարհվեն երկնային իշխանության առջև և կճանաչեն նրա զորավոր ու արդար կառավարումը: Այսպիսով մարդու ծայրահեղությունը կդառնա Աստծո հնարավորությունը, և «բոլոր ազգերի ցանկալի բաները պիտի գան»՝ Աստծո Թագավորությունը՝ զորությամբ և մեծ փառքով (Անգե 2:7):

Գիտակցելով, որ սա Աստծո նպատակն է, ոչ Հիսուսը, ոչ էլ առաքյալները որևէ կերպ չեն միջամտել երկրային իշխանություններին: Հակառակը, նրանք Եկեղեցուն պատվիրեցին հնազանդվել այդ իշխանություններին, չնայած հաճախ տառապում էին նրանց իշխանության չարաշահումներից: Նրանք Եկեղեցուն սովորեցնում էին ենթարկվել օրենքներին և հարգել իշխանություններին իրենց պաշտոնի պատճառով, նույնիսկ եթե անձամբ արժանի չէին հարգանքի, վճարել սահմանված հարկերը և, բացի այն դեպքերից, երբ դրանք հակասում էին Աստծո օրենքներին (Գործք 4:19, 5:29, Հռոմ. 13:1–7, Մատթ. 22:21): Տեր Հիսուսը, առաքյալները և վաղ եկեղեցին բոլորը օրինապահ էին, թեև անջատված էին այս աշխարհի կառավարություններից և դրանցում որևէ մասնակցություն չունեին:

Թեև աշխարհի մեջ գոյություն ունեցող կառավարությունները Աստծուց են կարգված, որպեսզի մարդկությունը նրանց միջոցով ստանա անհրաժեշտ փորձառություն, սակայն Եկեղեցին՝ ուխտուածները, որոնք Աստծո թագավորության պաշտոնին կտեսնչան, չպետք է փնտրեն պատիվ կամ պաշտոնական վարձատրություն այս աշխարհի թագավորություններից և ոչ էլ պետք է հակադրվեն այդ զորություններին: Նրանք երկնային արքայության համաքաղաքացիներ ու ժառանգակիցներ են (Եփես. 2:19), և որպես այդպիսին պետք է պահանջեն միայն այն իրավունքներն ու արտոնությունները, որոնք *օտարների* համար են նախատեսված: Նրանց առաքելությունը ոչ թե աշխարհին օգնելն է բարելավել իր ներկա վիճակը, և ոչ էլ ներկայումս որևէ առնչություն ունենալ նրա գործերի հետ: Դա կլիներ միայն ջանքերի ապարդյուն վատնում, քանի որ աշխարհի ընթացքն ու նրա ավարտը երկուսն էլ հստակ սահմանված են Գրություններում և ամբողջությամբ գտնվում են նրա վերահսկողության տակ, ով իր ժամանակին *մեզ կտա* թագավորությունը: Աստծո նպատակն է թույլ տալ աշխարհին լիովին փորձի իր ինքնակառավարման կարողությունը: Թեև Ճշմարիտ Եկեղեցին, գտնվում է աշխարհում, չպետք է լինի աշխարհի մի մասը: Սրբերը թերևս կարող են ազդել աշխարհի վրա միայն աշխարհից անջատ մնալով և թույլ տալով, որ *իրենց լույսը* շողա և այսպես՝ իրենց կյանքի միջոցով ճշմարտության Հոգին կհանդիմանի աշխարհին: Այսպես որպես խաղաղասեր, կանոնապահ հնազանդողներ և ամեն արդար օրենքների ջատագովներ՝ անկարգությունը և մեղքը հանդիմանողներ՝ քարոզենք Աստծո խոստացված Թագավորությունը և նրա միջոցով սպասվող օրհնությունները, և ոչ թե այն ընդունված մեթոդով, երբ

խառնվում են քաղաքականությանը և աշխարհի հետ դավադրություններ են հյուսում իշխանություն ձեռք բերելու համար և այդպիսով ներքաշվում պատերազմների, մեղքերի և ընդհանուր ստորացման մեջ: Խաղաղության Իշխանի ապագա հարսը, իր փառավոր կուսության մեջ, պետք է լինի բարի զորություն աշխարհի մեջ, որպես իր Տիրոջ ներկայացուցիչ:

Աստծո Եկեղեցին պետք է իր *ամբողջ ուշադրությունն* ու ջանքերը նվիրի Աստծո Թագավորության քարոզչությանը և այդ Թագավորության շահերի առաջխաղաղացմանը՝ ըստ Սուրբ Գրքում ներկայացված ծրագրի: Եթե սա հավատարմորեն իրականացվի, չի լինի ո՛չ ժամանակ, ո՛չ միտում ներգրավվելու ներկայիս կառավարությունների քաղաքականության մեջ: Տերը դրա համար ժամանակ չուներ, նույնպես և առաքյալները, և նրանց օրինակին հետևող սրբերը:

Առաքյալների մահից քիչ անց վաղ Եկեղեցին հենց այս փորձության զոհը դարձավ: Աստծո գալիք Թագավորության քարոզչությունը՝ որը պետք է կործաներ բոլոր երկրային թագավորությունները, նույնպես և խաչյալ Քրիստոսի քարոզչությունը՝ որպես ժառանգ այդ թագավորության՝ անժողովրդական դարձան, որը իր քարոզիչների վրա հալածանք, արհամարանք և նախատինք էր բերում: Այնուամենայնիվ, ոմանք խորհեցին կատարելագործել Աստծո ծրագիրը, որպեսզի տառապելու փոխարեն, Եկեղեցին աշխարհի աչքերում արտոնյալ դիրք ունենա: Նրանք կարողացան իրենց ծրագիրը հաջողացնել՝ աշխարհիկ իշխանությունների հետ միավորվելով: Արդյունքում ձևավորվեց Պապականությունը, որը հետագայում դարձավ ազգերի տիրուհին ու Թագուհին (Հայտնություն 17:3–5, 18:7):

Այս քաղաքականությամբ ամեն ինչ փոխվեց. տառապանքի փոխարեն եկավ պատիվը, խոնարհության փոխարեն՝ հպարտությունը, ճշմարտության փոխարեն՝ սուտը, և հալածվելու փոխարեն նա դարձավ բոլոր նրանց հալածիչը, ովքեր դատապարտում էին նրա նոր և անօրինական պատիվները: Շուտով նա սկսեց հնարել նոր տեսություններ և սոփեստություններ՝ իր վարքագիծը արդարացնելու համար: Նախ ինքն իրեն խաբելով, ապա ազգերին համոզելով, որ Քրիստոսի խոստացված հազարամյա թագավորությունը եկել է և որ Քրիստոս, Թագավորը ներկայացնում են իր պապերը, որոնք որպես նրա փոխանորդներ տիրապետեցին երկրի թագավորների վրա: Այս պնդումներով նա հաջողությամբ մոլորեցրեց ողջ աշխարհին: «Նա բոլոր ազգերին *գինով* հարբեցրեց» իր սխալ վարդապետություններով (Հայտնություն 17:2), ու ահաբեկեց նրանց այն ուսուցմամբ՝ որ հավիտենական տանջանքներ են սպասում բոլոր նրանց, ովքեր հակառակվում են իր հայտարարություններին: Շուտով Եվրոպայի թագավորները նրա ենթադրյալ իշխանության ներքո սկսեցին նրա հրամանով կամ թագադրվել, կամ գահընկեց արվել:

Որպես սրա արդյունք, այսօր Եվրոպայի թագավորությունները իրենց համարում են քրիստոնեական թագավորություններ, և հայտարարում են, որ իրենց վեհապետները թագավորում են «Աստծո շնորհով», այսինքն՝ կամ Պապականության և կամ որոշ բողոքական հարանվանության որոշումով: Թեև բարեկարգիչները մերժեցին Պապության բազմաթիվ պահանջները եկեղեցական իրավասության և այլնի վերաբերյալ, նրանք ամուր բռնեցին այն պատիվը, որը երկրի թագավորները քրիստոնեությանը կմիացներ: Եվ այսպես բարեկարգիչները միևնույն մոլորության մեջ

ընկան՝ գործածելով միապետների լիազորությունը կառավարություններ ու թագավորներ նշանակելու և հաստատելու գործում, և այդպիսիք անվանելով «քրիստոնեական թագավորություններ», կամ Քրիստոսի թագավորություններ: Դրա համար էլ շատ ենք լսում այդ տարօրինակ առեղծվածի՝ *«Քրիստոնեական* աշխարհի» մասին, իսկապես առեղծված, երբ նայում ենք Ավետարանի ճշմարիտ սկզբունքների լույսի ներքո: Մեր Տերը Իր աշակերտների մասին ասաց. «Նրանք աշխարհից չեն, ինչպես որ ես աշխարհից չեմ»: Իսկ Պողոսն էլ հորդորում է. «Եվ մի՛ կերպարանվեք այս աշխարհի կերպարանքով» (Հովհ. 17:16, Հռոմ. 12:2):

Աստված երբեք չի հավանել, որ այս թագավորությունները կոչվեն Քրիստոսի անունով: Անվանական եկեղեցուց խաբված՝ այս ազգերը կեղծ գույներով են ներկայացնում իրենց, իրենց համարելով այն, ինչ իրականում չեն: Նրանց միակ իրավունքը, բացի ժողովրդի քվեից, գտնվում է Աստծո *սահմանափակ* շնորհման մեջ, որը տրված էր Նաբուգոդոնոսորին՝ մինչև որ գա նա, ում պատկանում է այդ իշխանությունը:

Այն հայտարարությունը՝ որ այս թագավորությունները իրենց անկատար օրենքներով ու հաճախ շահախնդիր ու անառակ իշխաններովը, «մեր Տիրոջ և նրա Օծյալի թագավորություններն» են, սոսկալի կշտամբանք է Քրիստոսի ճշմարիտ Թագավորության հանդեպ, որի առջև նրանք շուտով կընկնեն, ու նրա «Խաղաղության Իշխանի» ու արդար իշխանների առջև (Ես. 32:1):

Այս մոլորության մեկ այլ լուրջ վնասը այն է, որ Աստծո զավակների ուշադրությունը շեղվել է խոստացված երկնային թագավորությունից: Նրանք սխալ մտերմություն են հաստատել երկրային

թագավորությունների հետ, ինչպես նաև գրեթե ապարդյուն փորձեր են արել վայրի, աշխարհիկ արմատներին փոխպատվաստել քրիստոնեության շնորհքներն ու բարոյականությունը՝ անտեսելով թագավորության և նրա մեջ կենտրոնացած հույսերը: Այս խաբեության ազդեցությամբ ոմանք ներկայումս ձգտում են, որպեսզի Աստծո անունը ներառվի Միացյալ Նահանգների Սահմանադրության մեջ, որպեսզի *այդպիսով* երկիրը դառնա քրիստոնեական ազգ: Բարեփոխված երիցականները տարիներ շարունակ հրաժարվել են քվեարկել կամ պաշտոն զբաղեցնել այս կառավարության ներքո, *քանի որ* այն Քրիստոսի Թագավորությունը չէ: Այսպիսով նրանք ճանաչում են, որ քրիստոնյաների համար անպատշաճ է մասնակցել որևէ այլ թագավորության: Մենք մեծ համակրանք ունենք այս տեսակետի հանդեպ, սակայն ոչ՝ այն եզրակացության, թե եթե Սահմանադրությունում նշվեր Աստծո *անունը*, այդ փաստը կփոխեր այս կառավարությունը աշխարհի թագավորությունից Քրիստոսի թագավորություն և կտար նրանց ազատություն քվեարկելու և պաշտոնավարելու: Օ, Ի՜նչ անհեթեթություն: Ինչ մեծ խաբեություն է, որով «պոռնիկների մայրը» բոլոր ազգերին արբեցրել է (Հայտնություն 17:2), քանի որ նույն կերպ ասվում է, որ Եվրոպայի թագավորությունները Սատանայից փոխանցվել են Քրիստոսին և դարձել են «քրիստոնեական ազգեր»:

Թող պարզ լինի, որ երկրի լավագույն ու վատագույն ազգերը ընդամենը «այս աշխարհի թագավորություններն» են, որոնց Աստծուց ստացած իշխանության ժամկետը շուտով կավարտվի, որպեսզի նրանք զիջեն իրենց տեղը նշանակված իրավահաջորդին՝ Մեսիայի Թագավորությանը, Երկրի Հինգերորդ

Աշխարհակալ Կայսրությանը (Դանիել 2:44, 7:14,17,27): Այս տեսակետը մեծապես կնպաստի ճշմարտության հաստատմանը և խաբեության տապալմանը:

Այնուամենայնիվ, այս առնչությամբ պապականության գործողությունները, որոնք հաստատվել են բողոքական բարեփոխիչների կողմից, քրիստոնեական շրջանակներում անքննադատելի են մնում: Քանի որ նրանք պետք է պաշտպանեն Քրիստոսի Թագավորությունը, նրանք իրենց պարտավոր են զգում պաշտպանել ներկայիս անկողմանի, այսպես կոչված քրիստոնեության թագավորությունները, որոնց ժամանակը արագ ավարտվում է, և այդպիսով նրանց համակրանքը հաճախ ուղղվում է ճնշողի կողմը, ոչ թե ճշմարտության ու ազատության կողմը՝ այս աշխարհի թագավորությունների և այս աշխարհի իշխանի կողմը, ոչ թե Քրիստոսի գալիք ճշմարիտ Թագավորության կողմը (Հայտնություն 17:14, 19:11–19):

Աշխարհը ավելի ու ավելի է գիտակցում, որ այս աշխարհի «թագավորությունները» քրիստոսանման չեն, և նրանց Քրիստոսի կողմից նշանակված լինելու պնդումները բավականին կասկածելի են: Մարդիկ սկսում են խորհել այս և նմանատիպ հարցերի շուրջ: Նրանք իրենց համոզմունքները շատ ավելի բուռն կերպով պիտի գործադրեն, երբ հասկանան, որ իրենք խաբված են Արդարության Աստծո և Խաղաղության իշխանի անունով իրենց «Հոգևոր Հովիվների» կողմից: Իրականում շատերը սկսում են եզրակացնել, որ քրիստոնեությունը ինքնին հիմնազուրկ խաբեություն է և որ քաղաքական իշխանների հետ միաբանվելով նրա նպատակը միայն հասարակության ազատությունները զսպելն է:

Երանի թե մարդիկ իմաստուն լինեին ու բացեին իրենց սրտերը, ըմբռնելու համար Տիրոջ գործն ու Ծրագիրը: Այն ժամանակ ներկայիս թագավորությունները աստիճանաբար կքայքայվեին՝ բարեփոխությունը արագորեն կհաջորդեր ուրիշ բարեփոխության, ու ազատությունը ուրիշ ազատության, իսկ արդարությունն ու ճշմարտությունը կպայքարեին՝ մինչև որ երկրի մեջ իրավունք հաստատվեր: Բայց նրանք դա չեն անի, և չեն էլ կարող անել իրենց ընկած վիճակում, ուստի, շահախնդրությամբ զինված՝ յուրաքանչյուր ոք գերակշռության համար կպայքարի, ու այս աշխարհի թագավորությունները մեծ տառապանքի շրջանով կոչնչանան, որի նմանը մարդկության սկզբից ի վեր չի եղել: Ինչ վերաբերում է նրանց, ովքեր ապարդյուն փորձում են պահպանել անցողիկ տիրապետությունը, որը անցած է ու տրված է Նրան՝ ով ունի դրա իրավունքը, Տերը ակնարկում է նրանց ասելով՝ որ նրանք պայքարում են նրա դեմ՝ մի պայքար, որում նրանք անխուսափելիորեն պարտվելու են: Նա ասում է՝

Ինչո՞ւ են խռովություն անում հեթանոսները, և ազգերը ունայնն են մտածում: Երկրի թագավորները վեր են կենում, և իշխաններն իրար հետ խորհուրդ են անում Տիրոջ դեմ և նրա Օծյալի դեմ՝ ասելով. «Կոտրենք նրանց կապանքները և նրանց չվանները դեն նետենք մեզնից»: Երկնքում բնակվողը ծիծաղում է, Տերը ծաղրում է նրանց: Այն ժամանակ նա պիտի բարկությամբ խոսի նրանց հետ և իր զայրույթով շփոթեցնի նրանց՝ ասելով. «Ես օծեցի իմ թագավորին իմ սուրբ Սիոն լեռան վրա: … Արդ, ո՜վ թագավորներ, խոհեմացե՛ք. խրատվեցե՛ք, ո՜վ երկրի դատավորներ: Վախով ծառայե՛ք Տիրոջը և դողալով ցնծացե՛ք: Որդուն համբուրեցե՛ք, որ չբարկանա, և դուք չկորչեք ճանապարհի մեջ, որովհետև շուտով պիտի

բորբոքվի նրա բարկությունը: Երանի նրանց, որ ապավինել են նրան (Սաղմոս 2:1–6, 10–12):

ԳԼՈՒԽ 14

Աստծո Թագավորությունը

Թեմայի Կարևորությունը – Թագավորության Բնույթը – Թագավորությունը Ավետարանական Դարում – Սխալ Տեսությունները Պողոսի Կողմից Ուղղված – Թագավորության Սխալ Պատկերացումների Հետևանքները – Աստծո Թագավորության Երկու Մասերը – Հոգեղեն Մասը ու Նրա Գործը – Երկրային Մասը ու Նրա Գործը – Նրանց Ներդաշնակ Գործունեությունը – Երկրային Մասի Փառքը –Երկնային Մասի փառքը – Ուխտի Արմատը՝ Որտեղից Աճում են այս Ճյուղերը – Թագավորության Երկրային՝ Իսրայելական Մասը – Կորած Ցեղերը – Երկնային Երուսաղեմը – Իսրայելը Որպես Տիպիկ ժողովուրդ – Իսրայելի Կորուստը և Վերականգնումը – Ընտրյալ Դասակարգերը – Թագավորության Ժառանգները – Երկաթյա Իշխանությունը – Թագավորությունը Հորը Հանձնված – Աստծո սկզբնական ծրագրի լիակատար իրականացումը:

Ովքեր այս թեմային ուշադիր չեն մոտեցել՝ Աստվածաշունչը ձեռքներին, զարմացած կմնան, երբ դա անեն, տեսնելով դրա նշանակությունը Սուրբ Գրություններում: Հին Կտակարանը լի է խոստումներով և մարգարեություններով, որոնցում Աստծո Թագավորությունը և նրա Թագավորը՝ Մեսիան, կենտրոնական դեր են զբաղեցնում: Յուրաքանչյուր իսրայելացու հույսն էր (Ղուկաս 3:15), որ որպես ժողովուրդ Աստված կբարձրացնի իրենց ազգը Մեսիայի միջոցով, և երբ Տերը եկավ նրանց մոտ, նա եկավ որպես

իրենց Թագավոր՝ հաստատելու երկար ժամանակ խոստացված Աստծո Թագավորությունը երկրի վրա:

Մեր Տեր Հիսուսի կարապետը և մունետիկը՝ Հովհաննեսը սկսեց իր առաքելությունը հետևյալ հայտարարությամբ. «Ապաշխարեցեք, քանի որ մոտեցել է երկնքի թագավորությունը» (Մատթեոս 3:2): Տերը սկսեց իր ծառայությունը նույն հայտարարությամբ (Մատթեոս 4:17), և առաքյալները ուղարկվեցին քարոզելու նույն պատգամը (Մատթեոս 10:7, Ղուկաս 9:2): Թագավորությունը ոչ միայն այն թեման էր, որով Տերը սկսեց իր հրապարակային ծառայությունը, այլև իրականում նրա քարոզչության գլխավոր թեման էր (Ղուկաս 8:1, 4:43, 19:11): Մյուս թեմաները հիշվում էին միայն այս մեկ թեմայի հետ կապ ունենալու կամ դրա բացատրության համար: Նրա առակների մեծ մասը կամ նկարագրում էր թագավորությունը տարբեր տեսանկյուններից ու տարբեր հանգամանքներով, կամ ծառայում էր ուշադրություն հրավիրել Աստծուն ամբողջությամբ նվիրվելու անհրաժեշտության վրա՝ որպես այս թագավորությանը մեջ բաժին ունենալու պայման, ինչպես նաև ուղղելու հրեական սխալ պատկերացումները, թե Թագավորությունը անխուսափելիորեն իրենցն է լինելու, քանի որ նրանք Աբրահամի բնական որդիներն էին և, հետևաբար, խոստումների բնական ժառանգները:

Մեր Տեր Հիսուսը իր հետևորդների հետ ունեցած զրույցներում զորացնում և քաջալերում էր նրանց ակնկալիքները գալիք թագավորության նկատմամբ, ասելով նրանց. «Եվ ես ուխտում եմ ձեզ թագավորություն՝ ինչպես իմ Հայրն էլ ինձ թագավորութիւն ուխտեց, որ ուտէք եվ խմէք իմ սեղանի վրա իմ արքայությունում, եվ

աթոռների վրա նստէք՝ Իսրայէլի տասներկու ցեղերին դատաստան անելու համար» (Ղուկաս 22:29,30): Եվ կրկին՝ «Մի՛ վախեցիր, փոքրի՛կ հոտ, որովհետև ձեր Հայրը հաճեց թագավորությունը տալ ձեզ» (Ղուկաս 12:32): Եվ երբ, թագադրվելու և գահ բարձրանալու փոխարեն, նրանց ճանաչած թագավորը խաչվեց, նրա աշակերտները խորապես հիասթափվեցին: Ինչպես նրանցից երկուսը արտահայտվեցին իր հարությունից հետո՝ երբ Էմմաուսի ճանապարհին շփոթեցին նրան օտարականի հետ, ասելով *«Իսկ մենք հույս ունեինք, թե նա է փրկելու Իսրայելը»*՝ ազատելով նրանց Հռոմեական լծից և Իսրայելը դարձնելով Աստծո թագավորությունը զորությամբ ու փառքով: Բայց նրանք խորապես հուսախաբված էին վերջին մի քանի օրերի իրադարձություններից: Հետո Հիսուս բացեց նրանց միտքը՝ Սուրբ Գրքերից ցույց տալով, որ իր զոհաբերությունը անհրաժեշտ էր առաջին հերթին, նախքան թագավորությունը կհաստատվեր (Ղուկաս 24:21, 25–27):

Աստված կարող էր Հիսուսին տալ երկրի տիրապետությունը առանց մարդուն փրկելու, որովհետև «Բարձրյալն է տիրում մարդկանց թագավորության վրա և այն տալիս է նրան, ում որ ուզում է» (Դանիել 4:32): Բայց Աստված ավելի վսեմ ծրագիր ուներ, քան այն, ինչ հնարավոր էր հասնել նման ծրագրով: Այդպիսի թագավորությունը կարող էր բերել օրհնություններ, որոնք, որքան էլ լավ լինեին, միայն ժամանակավոր բնույթ կունենային, քանի որ ողջ մարդկությունը մահվան դատապարտության տակ էր: Իր թագավորության օրհնությունները հավիտենական և կատարյալ դարձնելու համար մարդկային ցեղը նախ պետք է փրկագնվեր մահից

և այդպիսով օրինականորեն ազատվեր Ադամով բոլորի վրա տարածված դատապարտությունից:

Այն փաստը, որ Հիսուսը մարգարեությունները բացատրելու ընթացքում կենդանացրեց աշակերտների մեջ գալիք թագավորության հույսը, ակնհայտ է նրանից, որ ավելի ուշ, երբ Նա նրանցից հեռանում էր, նրանք հարցրին. «Տե՛ր, այս ժամանա՞կ ես Իսրայելի թագավորությունը վերահաստատելու» Նրա պատասխանը, թեև ոչ սպառիչ, չէր հակասում նրանց հույսերին. Նա ասաց. «Ձեր գործը չէ ժամերն ու ժամանակներն իմանալը, որ Հայրն իր իշխանությամբ սահմանեց» (Գործք 1:6,7):

Ճիշտ է, աշակերտները սկզբում, ինչպես ողջ հրեա ազգը, անկատար պատկերացում ունեին Աստծո թագավորության մասին՝ կարծելով, որ այն բացառապես երկրային թագավորություն է, ինչպես շատերը այսօր սխալվում են հակառակ ուղղությամբ՝ կարծելով, որ այն բացառապես երկնային թագավորություն է: Եվ մեր Տեր Հիսուսի բազմաթիվ առակներն ու խորհրդավոր խոսքերը այդ ժամանակ նախատեսված էին ուղղելու այս սխալ պատկերացումները: Բայց նա միշտ արտահայտում էր թագավորության գաղափարը, մի կառավարություն, որը պետք է հաստատվեր *երկրի վրա* և իշխեր մարդկանց մեջ: Եվ նա ոչ միայն նրանց մեջ սերմանեց՝ այդ թագավորության մեջ բաժին ունենալու հույսը, այլև պատվիրեց նրանց աղոթել դրա հաստատման համար՝ «Քո թագավորությունը գա, Քո կամքը լինի, ինչպես երկնքում՝ այնպես էլ երկրի վրա»:

Աշխարհիկ իմաստուն հրեաների համար մեր Տերը թվում էր խաբեբա և մոլեռանդ, իսկ նրա աշակերտներին՝ պարզապես խաբվածներ: Նրա իմաստությունն ու

խելամտությունը, ինչպես նաև հրաշքները նրանք չէին կարող հերքել կամ տրամաբանական բացատրություն տալ, սակայն իրենց անհավատության տեսանկյունից նրա հաստատումը, թե նա աշխարհի ժառանգն է և կհիմնի խոստացված թագավորությունը, որը կկառավարի աշխարհը, և որ իր հետևորդները, որոնցից յուրաքանչյուրը ստորին խավերից էին, կլինեն նրա ժառանգակիցները այդ թագավորությունում, թվում էր անհեթեթ, որպեսզի արժանանար քննարկման: Հռոմը՝ իր կրթված մարտիկներով, հմուտ հրամանատարներով և հսկայական հարստությամբ, աշխարհի տիրակալն էր ու օր օրի ավելի էր զորանում: Ուրեմն ո՞վ էր այս Նազարեթցին, և ովքե՞ր էին այդ ձկնորսները՝ առանց փողի կամ ազդեցության, և ընդամենը մի փոքրիկ հետևորդ խմբով հասարակ ժողովրդի մեջ: Ովքեր էին նրանք, որ խոսում էին երկար սպասված Թագավորության հաստատման մասին, որը երկրի ամենավսեմը և ամենազորավորը պիտի լիներ:

Փարիսեցիները, հույս ունենալով բացահայտել մեր Տիրոջ հաստատումների ենթադրյալ թուլությունը և բաց անել նրա հետևորդների աչքերը, հարցրին նրան՝ «Ե՞րբ է գալու Աստծու թագավորությունը, որի մասին դու քարոզում ես,— ե՞րբ կհասնեն քո զինվորները, — ե՞րբ է հայտնվելու Աստծո այդ թագավորությունը» (Ղուկաս 17:20-30): Մեր Տիրոջ պատասխանը նոր միտք կտար նրանց, եթե նրանք նրա նկատմամբ նախապաշարմունք չունենային և իրենց կարծեցյալ իմաստությամբ կուրացած չլինեին: Նա պատասխանեց, որ իր թագավորությունը երբեք չի հայտնվի իրենց ակնկալած կերպով: Նա քարոզում էր անտեսանելի թագավորության մասին, որի համատեղ ժառանգությանը հրավիրում էր իր հետևորդներին, և նրանք չպետք է ակնկալեին դրա

տեսանելի լինելուն: Նա պատասխանեց նրանց ու ասաց. «Աստծու արքայությունը տեսանելի նշանով [արտաքին դրսևորմամբ] չի գալու, ոչ էլ կասեն. «Ահա այստեղ է կամ ահա այնտեղ է». որովհետև ահա Աստծու արքայությունը հենց ձեր ներսում[9] է» Մեկ խոսքով՝ նա ցույց տվեց, որ երբ նրա թագավորությունը գա, այն ամենուր ներկա կլինի և ամենուրեք պիտի զգացվի նրա զորությունը, սակայն ոչ մի տեղ տեսանելի չի լինի: Այսպես Տերը նրանց պատկերացում տվեց այն հոգեղեն Թագավորության մասին, որի մասին քարոզում էր, սակայն նրանք անպատրաստ լինելով չընդունեցին այն: Խոստացված թագավորության վերաբերյալ հրեական ակնկալիքներում կային ճշմարտության որոշ չափ, որը ժամանակին կիրականանա, որի մասին կխոսենք, սակայն մեր Տիրոջ այս ակնարկը վերաբերում է թագավորության այն հոգեղեն մասին, որը անտեսանելի կլինի: Եվ քանի որ այս մասը առաջինն է հաստատվելու, նրա ներկայությունը անտեսանելի կլինի և որոշ ժամանակ անճանաչելի: Աստծո Թագավորության այս հոգեղեն մասի ժառանգության արտոնությունը այն ժամանակվա միակ առաջարկն էր, և մեր վերին կոչման միակ հույսն է ողջ Ավետարանական դարում: Սա է պատճառը, որ Հիսուսը խոսեց բացառապես դրա մասին (Ղուկաս 16:16): Սա

[9] Diaglott-ի և Rotherham-ի աստվածաշնչյան թարգմանությունները այս տեքստը թարգմանում են «ձեր մեջ», որը համարժեք է «ձեր միջև» արտահայտությանը: Անշուշտ, ոչ մի տեսության հետ չի համընկնի այն պնդումը, որ այն թագավորությունը, որի շուտով հաստատման մասին խոսեց Հիսուսը, լինելու է Փարիսեցիների սրտերում, որոնց նա անվանեց կեղծավորներ և ծեփած գերեզմաններ: Բայց այս թագավորությունը, երբ հաստատվի, կլինի ամեն դասակարգերի «մեջ» կամ «միջև», իշխելով և դատելով բոլորին:

ավելի հստակ կերևա, երբ առաջ շարժվենք այս թեմայի մեջ:

Միգուցե հասարակության մեջ, հատկապես Փարիսեցիների շրջանում, տիրող բացասական տրամադրությունների պատճառով Նիկոդեմոսը գիշերով եկավ Հիսուսի մոտ՝ ձգտելով հասկանալ գաղտնիքը, սակայն, ըստ երևույթին, ամաչում էր հրապարակայնորեն ընդունել, որ այդ հաստատումները որևէ ազդեցություն են ունեցել իր մտքի վրա: Հովհաննես 3-րդ գլխի մեջ արձանագրված Տիրոջ և Նիկոդեմոսի միջև տեղի ունեցած զրույցը թեև միայն մասամբ է արձանագրված, մեզ հնարավորություն է տալիս ավելի խոր պատկերացում կազմել Աստծո Թագավորության բնույթի շուրջ: Զրույցի հիմնական կետերը նշված են, որոնցից մենք հեշտությամբ կարող ենք ամբողջական նպատակը ըմբռնել, որը տրամաբանորեն կարող ենք հետևալ կերպ մեկնաբանել:

Նիկոդեմոսը՝ «Ռա՛բբի, գիտենք, որ Աստծուց ես եկել իբրև վարդապետ, որովհետև ոչ ոք չի կարող գործել այն հրաշքները, որ դու ես գործում, եթե Աստված նրա հետ չլինի» (Հովհ. 3:2): Սակայն քո խոսքերից որոշները իմ համար անըմբռնելի թվացին և ես եկել եմ խնդրելու մեկնություն:

Օրինակ՝ դու և քո աշակերտները շրջում եք, քարոզելով, որ «Երկնքի թագավորությունը մոտեցել է», սակայն դուք չունեք ո՛չ բանակ, ո՛չ հարստություն, ո՛չ ազդեցություն, և ըստ երևույթին այս հավաստումը ճշմարիտ չէ, և այս առումով դուք, մոլորեցնում եք ժողովրդին: Փարիսեցիները ընդհանրապես քեզ համարում են խաբեբա, սակայն ես համոզված եմ, որ քո ուսուցումների մեջ անշուշտ կա ճշմարտություն, «Որովհետև ոչ ոք չի կարող գործել այն հրաշքները, որ դու

ես գործում, եթե Աստված նրա հետ չլինի»: Իմ այցի նպատակը պարզելն է՝ ի՞նչ տեսակ, ե՞րբ և ո՞րտեղից է այն թագավորությունը, որը դու քարոզում ես, և երբ ու ինչպես է այն հաստատվելու:

Հիսուս — Քո խնդրանքը երկնքի թագավորության մասին լիակատար պատկերացում կազմելու վերաբերյալ այժմ քեզ գոհացնելու չափ հնարավոր չէ պատասխանել. ոչ թե այն պատճառով, որ ես դրա մասին կատարյալ գիտություն չունեմ, այլ որ քո ներկա վիճակում, դու չես կարողանա ըմբռնել ու գնահատել այն, եթե նույնիսկ լիուլի բացատրեմ այն քեզ «եթե մեկը վերստին չծնվի, չի կարող տեսնել[10] Աստծու արքայությունը [հունարեն իիտոն, գիտենալ կամ ծանոթանալ]»:

Նույնիսկ իմ աշակերտները դեռևս շատ անորոշ գաղափարներ ունեն իրենց քարոզած թագավորության բնույթի նկատմամբ: Ես չեմ կարող նրանց պատմել, այն միևնույն պատճառով, որ քեզ չեմ կարող պատմել, որովհետև նրանք չեն կարող ըմբռնել: Սակայն, Նիկոդեմոս՝ Աստծո վարվելակերպի մի առանձնահատկությունն այն է, որ Նա պահանջում է հնազանդություն նախապես ստացած լույսի հանդեպ, նախքան ավելի շատ լույս տալը, իսկ նրանց ընտրության մեջ, ովքեր կհամարվեն արժանի թագավորության մեջ բաժին ունենալու, պահանջվում է հավատքի դրսևորում:

---

[10] Նույն հունարեն բառը «Գործք առաքելոց» 15:6-ում թարգմանվում է որպես «քննել». «Առաքյալներն ու երեցները հավաքվեցին *քննելու* [իմանալու, ուսումնասիրելու] այս հարցը»: Նույն բառը Հռոմեացիներ 11:22-ում թարգմանվում է «տեսնել»՝ «Հիմա տես [նկատիր, ըմբռնիր] Աստծո բարությունն ու խստությունը»: Նույնպես Ա Հովհաննես 3:1-ում՝ *«Տեսեք* [նկատեք, իմացեք, հասկացեք], թե Հայրը մեզ ինչպիսի սեր շնորհեց»:

Նրանք պետք է լինեն այնպիսիք, ովքեր պատրաստ կլինեն քայլ առ քայլ հետևել Աստծո առաջնորդությանը, հաճախ միայն հաջորդ քայլը հստակ տեսնելով: Նրանք քայլում են հավատքով, ոչ թե տեսողությամբ:

Նիկոդեմոս — Բայց ես ձեզ չեմ հասկանում: Ի՞նչ նկատի ունեք «Մարդ ինչպե՞ս կարող է ծնվել, եթե ծեր է: Մի՞թե նա կարող է երկրորդ անգամ իր մոր արգանդը մտնել ու ծնվել» Կամ ուզում եք ասեք, որ «Հովհաննես Մկրտչի» քարոզած ապաշխարությունը, որը արտահայտվում է ջրի մկրտությամբ, ինչ-որ կերպ խորհրդանշական *ծնունդ* է՞: Ես նկատել եմ, որ ձեր աշակերտները միևնույն կերպով են քարոզում ու մկրտում: Արդյո՞ք սա այն նոր ծնունդն է, որը անհրաժեշտ է նրանց համար, ովքեր ցանկանում են տեսնել կամ մտնել ձեր թագավորությունը:

Հիսուս — Մեր ազգը նվիրված ազգ է, ուխտի ժողովուրդ: Եգիպտոսից դուրս գալիս նրանք բոլորը Մովսեսով մկրտվեցին ՝ ծովում և ամպի տակ: Աստված նրանց ընդունեց Մովսեսի միջոցով, ով Սինա Լեռան վրա տրված ուխտի միջնորդն էր, սակայն նրանք մոռացել են իրենց ուխտը, ոմանք բացահայտ ապրում են որպես հարկահավաքներ և մեղավորներ, և շատերը ինքնարդար կեղծավորներ են: Ուստի Հովհաննեսի քարոզչությունը և իմ աշակերտների քարոզչությունը *մեղքերի ապաշխարությունն* է՝ վերադարձ Աստծուն և կնքված ուխտի ճանաչում:

Հովհաննեսի մկրտությունը հենց այս ապաշխարությունն ու սրտի և կյանքի վերափոխումն է նշանակում, և ոչ թե նոր ծնունդը: Բայց եթե այսքանից ավելին չունենաս, երբեք չպիտի տեսնես թագավորությունը: Եթե Հովհաննեսի մկրտությամբ

խորհրդանշված սրտի բարեկարգությունից զատ հոգու հղիացում և ծննունդ չնդունես՝ դու չես կարող տեսնել իմ թագավորությունը: Ապաշխարությունը քեզ կվերադարձնի արդարացած վիճակի: Այդ վիճակի մեջ՝ դու անմիջապես կճանաչես Ինձ որպես Մեսիա՝ Մովսեսի հակապատկերը ու այսպես ինձ նվիրվելով՝ դու Հորից նոր կյանքի և աստվածային բնության կիղիանաս, որը, եթե զարգանա և կենդանանա, առաջին հարության մեջ քեզ կապահովի որպես նոր արարած, հոգեղեն էակ ծնվելուն: Եվ դառնալով այդպիսին, որպես նոր արարած՝ դու ոչ միայն կտեսնես Թագավորությունը, այլև կժառանգես թագավորությունը:

Հոգու այս նոր ծննդի միջոցով կատարվելիք փոփոխությունը, արդարև մեծ է. որովհետև մարմնից ծնվածը մարմին է, իսկ Հոգուց ծնվածը՝ հոգի: Այդ պատճառով մի զարմանա իմ առաջին խոսքի վրա, որ դու պետք է վերստին *ծնվես*, որպեսզի կարողանաս հասկանալ, իմանալ և գնահատել այն բաները, որոնց մասին հարցնում ես: «Մի՛ զարմացիր, որ քեզ ասացի. Դուք պետք է վերստին ծնվեք»: Քո ներկայիս՝ մարմնից ծնված վիճակի և Հոգով ծնվածների, որոնք կմտնեն կամ կկազմեն այն թագավորությունը, որի մասին ես քարոզում եմ, վիճակի միջև տարբերությունը չափազանց մեծ է: Թույլ տուր քեզ մի օրինակ բերեմ, որով դու պատկերացում պիտի կազմես այն էակների մասին, որոնք, Հոգուց ծնվելով, կկազմեն այս թագավորությունը. «Քամին ուր ուզում է, փչում է, և նրա ձայնը լսում ես, բայց չգիտես, թե որտեղի՛ց է գալիս և ո՛ւր է գնում. այդպես է և Հոգուց ծնված ամեն ոք»: Քամին փչում է այստեղ ու այնտեղ, դու չես կարող նրան տեսնել, սակայն նա իր ազդեցությունը զգալի է դարձնում քո շուրջը, ոչ էլ գիտես թե որտեղից է գալիս և ուր է գնում: Սա լավագույն

օրինակն է, որ կարող եմ քեզ տալ նրանց մասին, ովքեր Հոգուց են ծնվում հարության ժամանակ, ովքեր «մտնելու են» կամ կազմելու են այն Թագավորությունը, որի մասին ես այժմ քարոզում եմ: Նրանք բոլորն էլ քամու նման աներևույթ կլինեն, և մարդիկ՝ որոնք Հոգուց չեն ծնվել, ոչ կիմանան, թե որտեղից են գալիս, ոչ էլ՝ ուր են գնում:

Նիկոդեմոս — Դա ինչպե՞ս կարող է լինել — աներևույթ Էակներ:

Հիսուս — «Դու Իսրայելի վարդապետն ես ու դա չգիտե՞ս» — որ Հոգեղեն էակներ կարող են ներկա գտնվել՝ բայց անտեսանելի: Դու, ով փորձում ես ուրիշներին ուսուցանել, երբևէ չե՞ս կարդացել Եղիսեի ու նրա ծառայի, կամ Բաղամի էշի մասին, և Սուրբ Գրքերում հիշված ուրիշ շատ օրինակներ մասին, որոնք նկարագրում են այս սկզբունքը՝ որ հոգեղեն էակները կարող են ներկա լինել մարդկանց մեջ, սակայն մնալ անտեսանելի: Բացի այդ, դու փարիսեցիների դասին ես պատկանում, ովքեր հրապարակայնորեն հավատում են, որ հրեշտակները հոգեղեն էակներ են: Սակայն սա ցույց է տալիս այն, ինչ ես սկզբում ասացի քեզ. եթե մարդ վերստին չծնվի, (չհղիանա) չի կարող տեսնել [ճանաչել, ծանոթանալ կամ տրամաբանականորեն ըմբռնել] Աստծո Թագավորությունը և դրա հետ առնչվող այլևայլ բաները:

Եթե ցանկանում ես մտնել և դառնալ ինձ հետ ժառանգակից այն թագավորության, որի մասին ես ավետում եմ, պետք է քայլ առ քայլ հետևես լույսին: Երբ այդպես վարվես, ավելի շատ լույս կգա, և այն կգա այնքան արագ, որքան դու դրա համար պատրաստ կլինես: Ես այժմ քարոզում եմ այս բաները և կատարում հրաշքներ, և դուք ինձ ընդունում եք որպես Աստծուց ուղարկված ուսուցիչ, սակայն դու քո հավատքը հրապարակայնորեն

չես արտահայտել՝ բացահայտորեն դառնալով իմ աշակերտն ու հետևորդը: Դու չպետք է ակնկալես ավելին տեսնելու, մինչև չապրես այն ամենի համաձայն, ինչն արդեն տեսնում ես: Եթե այդպես վարվես, այնժամ Աստված քեզ կտա ավելի շատ լույս և ապացույց հաջորդ քայլի համար: «Ճշմարիտ ճշմարիտ կըսեմ քեզի, թէ ինչ որ գիտենք՝ կը խօսինք եվ ինչ որ տեսանք՝ կը վկայենք ու դուք (Փարիսեցիներդ) մեր վկայությունը չէք ընդունում: Եթե ձեզ երկրային բաներն ասացի, ու ինձ չեք հավատում, հապա ինչպե՞ս պիտի հավատաք, եթե երկնային բաներն ասեմ»: Ապարդյուն է, որ ես ձեզ երկնային բաներ պատմեմ, որովհետև դուք չեք համոզվի, և իմ քարոզը ձեզ համար ավելի հիմարական կթվա: Եթե այն, ինչ ես սովորեցրել եմ, որը երկրային բնույթ ունի, կամ երկրային օրինակներով է ներկայացված, որը թեև դու ըմբռնումես՝ բայց քո մտքում բավարար համոզմունք չի առաջացրել, որպեսզի բացահայտ դառնաս իմ աշակերտն ու հետևորդը, ապա քո համար ավելի համոզիչ չի լինի, եթե ես պատմեմ քեզ երկնային բաների մասին, որոնց մասին դու ոչինչ չգիտես, քանի որ ոչ ոք երբևէ երկինք չի բարձրացել, ուստի ոչ ոք չի կարող հաստատել իմ վկայությունը: Միայն Ես, Ով իջել է երկնքից, հասկանում է երկնային բաները: «Ոչ մի մարդ երկինք չի բարձրացել, բացի նրանից, որ երկնքից ցած իջավ, Մարդու Որդին, որ Երկնքում է»[11] Երկնային բաների գիտությունը կարելի է ստանալ միայն Հոգու հղիացումից հետո, իսկ բուն երկնային բաները՝ Հոգուց ծնված ժամանակ, որպես հոգեղեն Էակներ:

[11] «որ երկնքում է» խոսքերը («13-րդ համարը») չի հանդիպում ամենահին և ամենահուսալի ձեռագրերում:

Տիրոջ կողմից մեծ համբերություն էր պահանջվում, որպեսզի քարոզեր թագավորության բնույթը այնպիսիներին, որոնց նախապաշարմունքներն ու ուսումը արգելք էին հանդիսանում ըմբռնել, երկրային մակարդակի խեղաթյուրալ տեսակետներից բացի ուրիշ որևէ մի բան: Այնուամենայնիվ, Մեսիայի թագավորությունում մասնակցելու համար համապատասխան խմբի ընտրությունը շարունակվեց, թեև Իսրայելից ընտրվեցին միայն մի քանիսը, և այդ առաջարկը նրանց արվեց յոթ տարիների ընթացքում: Ինչպես Աստված նախապես գիտեր, նրանց անպատրաստության և ներկայացված պայմանները չհասկանալու ու չկատարելու պատճառով, Մեսիայի թագավորությանը բաժնեկից լինելու արտոնությունը որպես ժողովուրդ նրանցից վերցվեց, միայն նրանց մի մնացորդ ստացավ այն, և այն հասավ նաև հեթանոսներին, որպեսզի նրանցից ևս Աստված հանի «ժողովուրդ իր անվան համար» (Գործք 15:14): Եվ նրանց մեջ նույնպես միայն մի մնացորդ՝ «փոքր հոտ»-ն, է գնահատում այդ արտոնությունը և արժանի համարվում նրա թագավորությանը և փառքին ժառանգակից լինելու:

Լուրջ սխալ է մտցվել անվանական քրիստոնեա եկեղեցու մեջ, որը այս խոստացված թագավորությունը սխալ է մեկնաբանում, ներկայացնելով այն որպես միայն անվանական եկեղեցու ներկայիս վիճակը և նրա գործը՝ որպես միայն շնորհի գործ հավատացյալների սրտերում, և այս սխալը այնքան խոր արմատ է գցել, որ շատերը անվանական եկեղեցու աշխարհի հետ ներկայիս պիղծ դաշինքն ու իշխանությունը համարում են Աստծո թագավորության իշխանությունը երկրի վրա: Ճիշտ է, մի իմաստով Եկեղեցին այժմ Աստծո Թագավորությունն է, և շնորհի գործը այժմ ընթանում է հավատացյալների

սրտերում, բայց այս ամենը հաշվի առնելով՝ մերժել մի ճշմարիտ ապագա Աստծո Թագավորություն, որը դեռ պետք է հաստատվի ամբողջ երկնքի տակ, որտեղ Աստծո կամքը պետք է գործադրվի ինչպես երկնքում, նշանակում է դարձնել անիմաստ և անարժեք մեր Տիրոջ, առաքյալների և մարգարեների կողմից արձանագրված ամենազորավոր և ամենահամոզիչ խոստումները, որոնք նախատեսված են մեր հուսադրման և աշխարհին հաղթահարելու օգնության համար:

Մեր Տիրոջ առակներում Եկեղեցին հաճախ կոչվում է թագավորություն, և Առաքյալը խոսում է այն թագավորության մասին, որի վրա Քրիստոսը այժմ տիրում է, ասելով, որ Աստված մեզ փոխադրել է խավարի թագավորությունից դեպի Իր սիրելի Որդու թագավորություն: Մենք, ովքեր այժմ ընդունում ենք Քրիստոսին, ճանաչում ենք Նրա ձեռք բերած տիրապետության իրավունքը և Նրան երախտագիտական ու կամավոր հնազանդություն ենք մատուցանում մինչ Նա ուժով այն հաստատի աշխարհի վրա: Մենք ճանաչում ենք արդարության օրենքների, որոնք նա կիրականացնի, և խավարի թագավորության միջև տարբերությունը, որը ներկայումս աջակցվում է զավթչի՝ այս աշխարհի իշխանի կողմից: Արդյունքում, Աստծո խոստումներին հավատալը փոխում է մեր հավատարմությունը, և մենք մեզ համարում ենք նոր Իշխանի հպատակները և Նրա շնորհքով՝ Նրա հետ ժառանգակիցներ այն թագավորության մեջ, որը պետք է հաստատվի զորությամբ և մեծ փառքով:

Բայց այս փաստը ոչ մի կերպ չի չեղարկում այն խոստումները, որ վերջ ի վերջո Քրիստոսի թագավորությունը կլինի «Ծովից մինչև ծով և Եփրատ

գետից մինչև երկրի ծայրերը» (Սաղմոս 72:8), որ բոլոր ազգերը կծառայեն ու կհնազանդվեն նրան, և որ երկնքում և երկրի վրա ամեն ծունկ կխոնարհվի նրա առջև (Դանիել 7:27, Փիլ. 2:10): Հակառակը, «փոքր հոտի» ներկայիս ընտրությունը միայն հաստատում է այս խոստումները:

Երբ մեր Տիրոջ առակները ուշադրությամբ քննվեն, պարզ կդառնա, որ դրանք հստակ ուսուցանում են, որ Աստծո Թագավորության զորությամբ գալը կամ հաստատվելը ապագայում է պատկանում, և իհարկե, չի կատարվի մինչև Թագավորի գալը: Այսպիսով, երիտասարդ ազնվականի առակը, որը հեռավոր երկիր է մեկնում՝ թագավորություն ստանալու և վերադառնալու համար, և այլն (Ղուկաս 19:11–15), հստակ ցույց է տալիս, որ Թագավորության հաստատումը տեղի կունենա Քրիստոսի վերադարձի ժամանակ: Եվ Տիրոջ ուղարկած ուղերձը Եկեղեցուն տարիներ անց այսպիսին էր. «Հավատարի՛մ եղիր մինչև մահ, և ես կյանքի պսակը կտամ քեզ» (Հայտնություն 2:10): Այստեղից պարզ է, որ նրանք, ովքեր նրա հետ կթագավորեն, *այս* կյանքում ոչ պսակ կստանան, ոչ էլ որպես թագավորներ իշխեն:

Ուստի, այսօր Եկեղեցին ոչ թե զորությամբ ու փառքով հաստատված Աստծո Թագավորությունն է, այլ իր սկզբնական, սաղմնային վիճակում է: Արդարև, Նոր Կտակարանում նրա վերաբերյալ բոլոր արտահայտությունները հենց դա են ուսուցանում: Երկնքի Թագավորությունը այժմ աշխարհի ձեռքով բռնության է ենթարկվում, Թագավորին արհամարեցին և խաչեցին և ով ցանկանա հետևել նրա հետքերին, միևնույն կերպով կհալածվի ու կխոշտանգվի: Սակայն, նկատի առնելու է, որ սա վերաբերում է միայն *իրական* Եկեղեցուն, ոչ թե անվանականին: Սակայն խոստումը հնչում է, որ եթե այժմ

մենք (Եկեղեցին, սաղմնային թագավորությունը) չարչարվում ենք Քրիստոսի հետ, ապա ժամանակին, երբ Նա ստանա Իր մեծ զորությունը և թագավորի, մենք ևս պիտի փառավորվենք և թագավորենք Նրա հետ:

Յակոբոսը (2:5)ը, մեր Տիրոջ ուսուցմանը համահունչ, ասում է, որ Աստված այս աշխարհի չափանիշներով աղքատներին և արհամարհվածներին ընտրել է ոչ թե այժմ թագավորելու համար, այլ որպես «թագավորության *ժառանգներ*, որը նա խոստացավ» Տերը ասում է. «Որքա՜ն դժվար կլինի հարուստների համար Աստծու թագավորություն մտնել» (Մարկոս 10:23): Պարզ է, որ մեր Տերը նկատի չուներ անվանական Եկեղեցին, որը այժմ աշխարհի հետ միասին իշխում է, քանի որ հարուստները հենց այնտեղ են ընդգրկվում: Պետրոսը հորդորում է թագավորության ժառանգներին լինել համբերատար, հաստատակամ, բարեպաշտ և հավատացող, ասելով. «Ուրեմն, եղբայրնե՛ր, ջանացե՛ք, որ ձեր կոչումը և ընտրությունը հաստատուն դարձնեք, որովհետև դրանք անելով՝ երբեք հանցանք չեք գործի, քանի որ այսպես առատությամբ ձեզ մուտք պիտի շնորհվի դեպի մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի հավիտենական արքայությունը» (Բ Պետրոս 1:10, 11):

Պողոսի հայտարարությունը Հռոմեացիներ 14:17-ում, ըստ որոշների, վերաբերում է *այլաբանական* թագավորությանը: Սակայն համատեքստի լույսի ներքո ուսումնասիրելիս պարզ է դառնում, որ հատվածը նշանակում է պարզապես այսպես՝ Մենք, եղբայրներ, այժմ փոխադրված Աստծո սիրելի Որդու թագավորություն, ունենք որոշ ազատություններ մեր սննդի հարցում և այլն, որոնք չունեինք որպես հրեաներ ըստ օրենքի (14-րդ համար), սակայն ավելի լավե չգործածենք այս

ազատությունը՝ եթե մեր այն եղբայրների համար, որոնք դեռևս չեն հասկացել սա, դա գայթակղության և խղճի խախտման պատճառ է դառնում: Մեր սննդի ազատությամբ չգայթակղեցնենք մեր եղբորը, որի համար Քրիստոս մեռավ, այլ հիշենք, որ թագավորության արտոնությունները, թե՛ այժմ և թե՛ ապագայում, պարունակում են շատ ավելի մեծ օրհնություններ, քան սննդի ազատությունը՝ այն է՝ մեր ազատությունը բարություն գործելու մեջ, մեր խաղաղությունը Աստծո հետ Քրիստոսի միջոցով և Աստծու Սուրբ Հոգու մեջ բաժին ունենալու մեր ուրախությունը: Այս թագավորության ազատությունները (ներկայում և հավիտյան) այնքան մեծ են, որ սննդի վերաբերյալ փոքր ազատությունը կարող է զոհաբերվել մեր եղբոր բարօրության համար:

Այսպիսով, անկախ նրանից, թե Սուրբ Գրքերի որ տեսանկյունից ենք նայում հարցին, հերքվում է այն կարծիքը, թե Թագավորության խոստումները առասպելական խաբեություն են կամ թե մեր ներկայիս պայմանները կատարում են այդ խոստումները:

Առաջին Եկեղեցու համար թագավորության պատվի և Տիրոջ հետ ժառանգակից լինելու խոստումները մեծ խթան էին հավատարիմ մնալու համար՝ այն փորձությունների և հալածանքների առջև, որոնց մասին նրանք նախազգուշացվել էին: Եվ յոթ եկեղեցիներին ուղղված Հայտնության բոլոր մխիթարիչ ու հուսադրող խոսքերի մեջ ոչինչ չի փայլում ավելի հստակ և ուժգին, որքան այն խոսքերը, որոնք ասում են, «Ով հաղթի, նրան թույլ կտամ, որ ինձ հետ նստի իմ գահին, ինչպես որ ես հաղթեցի և իմ Հոր հետ նստեցի իր գահին» և «Հաղթողին

իշխանություն եմ տալու ազգերի վրա» (Հայտն. 3:21, 2:26):

Սրանք այն խոստումներն են, որոնք տրամաբանօրեն չեն կարող սխալ մեկնաբանվել՝ որպես ներկա շնորհի գործ մարդկանց սրտերում, և ոչ էլ որպես ազգերի վրա տիրապետություն ներկայիս կյանքում, քանի որ բոլոր նրանք, ովքեր պետք է հաղթեն, պետք է դա անեն ծառայության մեջ *մահվան* միջոցով և այդպիսով ձեռք բերեն թագավորության պատիվները (Հայտն. 20:6):

Բայց մարդկային բնությունը ձգտում է խուսափել տառապանքից և միշտ պատրաստ է բռնել պատիվն ու իշխանությունը, ուստի մենք տեսնում ենք, որ նույնիսկ առաքյալների օրերում եկեղեցում ոմանք ձգտում էին ներկայիս կյանքում կիրառել ապագա պատվի ու իշխանության խոստումները և սկսեցին գործել այնպես, կարծես արդեն եկել է ժամանակը, երբ աշխարհը պետք է պատվեր և նույնիսկ հնազանդվեր եկեղեցուն: Պողոսը Առաքյալը, գիտակցելով, որ նման գաղափարները կվնասեն Եկեղեցուն՝ սնուցելով հպարտություն և հեռացնելով զոհաբերությունից, գրում է՝ ուղղելով այս սխալը: Նա նրանց հեգնանքով ասում է. «Արդեն կշտացել եք. արդեն հարստացաք ու առանց մեզ թագավորեցիք»: Եվ ապա նա լրջօրեն ավելացնում է. «Երանի թե թագավորեիք, որ մենք էլ (Հալածված Առաքյալներս) նույնպես թագավորեինք ձեզ հետ» (Ա Կորնթ. 4:8): Նրանք իրենց քրիստոնեությունից վայելք էին ստանում՝ փորձելով հնարավորինս շատ պատիվ ձեռք բերել դրանով, և առաքյալը լավ գիտեր, որ եթե նրանք Տիրոջ *հավատարիմ հետևորդները* լինեին, նրանք այդպիսի վիճակում չէին լինի: Ուստի նա նրանց հիշեցնում է, որ եթե երկար սպասված թագավորությունը իսկապես սկսված լիներ,

ինքն էլ նրանց պես կթագավորեր, սակայն այն փաստը որ նա հավատարիմ լինելով հանդերձ տառապում է ճշմարտության սիրո համար՝ ապացույց էր որ նրանց թագավորելը վաղաժամ էր և ավելի շուտ ծուղակ, քան թե փառք: Այնուհետև, մի փոքր հեգնանքով, ավելացնում է. «Մենք (առաքյալներս և հավատարիմ ծառաներս) հիմարներ ենք Քրիստոսի համար, իսկ դուք՝ իմաստուններ Քրիստոսով, մենք տկար ենք, իսկ դուք՝ զորավոր, դուք փառավորյալ, իսկ մենք՝ անարգված»: Ես սա չեմ գրում միայն ձեզ ամաչեցնելու համար. Ես բարձր ու ազնիվ նպատակ ունիմ՝ Ձեզ Զգուշացնել. որովհետև ներկա պատվի շավիղը չի առաջնորդում գալիք փառքի, այլ ներկա տառապանքն ու անձնուրացությունն են կազմում փառքի, պատվի, անմահության և թագավորության մեջ ժառանգակիցներ լինելու նեղ ճանապարհը: Ուստի խնդրում եմ ձեզ՝ *ինձ ընդօրինակեք*: Չարչարվեք, անարգվեցեք ու հալածվեք այժմ, որպեսզի ինձ հետ կարողանաք ժառանգել կյանքի պսակը, որը Տերը՝ արդար Դատավորը, կտա ինձ *այն օրը*, և ոչ միայն ինձ, այլև բոլոր նրանց, ովքեր սիրեցին Նրա հայտնությունը (Ա Կորնթ. 4:10–17, Բ Տիմ. 4:8):

Բայց երբ վաղ Եկեղեցին հավատարմորեն տոկած բազմաթիվ հալածանքներին, սկսեցին տարածվել վարդապետություններ, ըստ որոնց Եկեղեցու առաքելությունն էր նվաճել աշխարհը, երկրի վրա հաստատել երկնային արքայությունը և իշխել ազգերի վրա Տիրոջ երկրորդ գալստից առաջ: Սա հիմք դրեց աշխարհիկ դավադրությունների, պերճության ու գոռոզության, եկեղեցու ցուցամոլ հանդեսների ու արարողությունների, որոնք աշխարհը տպավորելու, գերելու և ահաբեկելու համար էին ծրագրված, և որը քայլ առ քայլ հանգեցրեց Պապականության մեծ

հայտարարություններին՝ թե ինքը որպես Աստծո թագավորություն, աշխարհի վրա իրավունք ունի հրամայելու ամեն ցեղի, ազգի և ժողովրդի՝ պահանջելով որ նրանք հնազանդվեն իր օրենքներին ու պաշտոնյաներին: Այս կեղծ պնդմամբ (և, թվում է, նրանք խաբեցին ոչ միայն ուրիշներին, այլև իրենք իրենց) Պապականությունը մի ժամանակ թագավորեց և գահազրկեց Եվրոպայի Թագավորներին, ու դեռ իրեն է վերագրում միևնույն իշխանությունը, որը այժմ չի կարող գործադրել:

Միևնույն գաղափարը Պապականության միջոցով հասել է նաև բողոքականությանը, որը նույնպես ընդունում է, թեև ավելի անորոշ կերպով՝ որ ինչ-որ կերպ Քրիստոսի թագավորությունը ընթացքի մեջ է և ինչպես կորնթացիները, նրա հետևորդները «կուշտ» և «հարուստ» են, և «թագավորների պես» իշխում են, ինչպես պատկերավոր ցույց է տրված մեր Տիրոջ կողմից (Հայտն. 3:17,18): Այսպիսով ստացվեց, որ եկեղեցու միայն անվանական անդամները՝ նրանք, ովքեր իրականում դարձի չեն եկել, իրական ցորեն չեն, այլ որոմ, ցորենի միայն կեղծը, թվով խիստ գերազանցում են Քրիստոսի ճշմարիտ աշակերտները: Եվ նրանք խիստ հակադրվում են ամեն իրական զոհաբերությանը և անձնուրացությանը, չեն հալածվում արդարության (ճշմարտության) համար, և սրա փոխարեն մեծ մասամբ միայն պահքի արտաքին ձևին են հետևում: Իրականում նրանք աշխարհի հետ միասին թագավորում են և իրական թագավորությանը պատրաստվելու ճանապարհի մեջ չեն, որը Մեր Տիրոջ երկրորդ ներկայության ժամանակ պիտի հաստատվի:

Յուրաքանչյուր ուշադիր դիտորդ կնկատի այս ակնհայտ անհամաձայնությունը, որը գոյություն ունի այս տեսակետի և Հիսուսի ու առաքյալների ուսուցման միջև: Նրանք սովորեցնում էին, որ թագավորություն չի կարող գոյություն ունենալ, մինչև Թագավորը չգա (Հայտնություն 20:6, 3:21, Բ Տիմոթեոս 2:12): Հետևաբար, մինչև նրա փառքով ու զորությամբ հաստատվելը, երկնքի թագավորությունը բռնության ներքև պիտի տառապի:

Աստծո Թագավորության Երկու Մասերը

Թեև մեր Տիրոջ ասածին համապատասխան՝ Աստծո Թագավորությունը (իր առաջին երեվումը) չի գա արտաքին դրսևորումներով, սակայն որոշված ժամանակին այն պետք է բոլորին հայտնվի արտաքին, տեսանելի և անսխալ նշաններով: Լիովին հաստատված վիճակում Աստծո Թագավորությունը բաղկացած կլինի երկու մասից՝ հոգեղեն կամ երկնային մասից և երկրային կամ մարդկային մասից: Հոգեղեն մասը մարդկանց համար միշտ անտեսանելի կմնա, քանի որ այն կազմողները կունենան աստվածային, հոգեղեն բնություն, որը ոչ ոք չի տեսել և չի կարող տեսնել (Ա Տիմ. 6:16, Հովհաննես 1:18): Սակայն նրա ներկայությունն ու զորությունը կարտահայտվի ամենազորեղ ձևով, հիմնականում նրա մարդկային ներկայացուցիչների միջոցով, որոնք Աստծո Թագավորության երկրային մասը կկազմեն:

Թագավորության հոգեղեն մասը կազմողները Ավետարանական դարի հաղթող սրբերն են՝ Եկեղեցին, Գլուխը և Մարմինը փառավորված: Նրանց հարությունը և զորության բարձրացումը նախորդում է բոլոր մյուսների հարությանը և բարձրացմանը, որովհետև հենց այս դասակարգի միջոցով են օրհնվելու բոլոր մյուսները

(Եբր.11:39,40): Նրանց է պատկանում *առաջին հարությունը* (Հայտնություն 20:5)[12]: Այս փառավորված

[12] Այս համարում «Իսկ մնացած մեռելները չկենդանացան, մինչև հազար տարին լրանա» բառերը կեղծ են: Դրանք չեն հանդիպում ամենահին և ավելի հուսալի հունարեն ձեռագրերում՝ Սինայականում, Վատիկանի թիվ 1209 և 1160 ձեռագրերում, ինչպես նաև սիրիական ձեռագրում: Պետք է հիշենք, որ ժամանակակից օրինակներում հանդիպող բազմաթիվ հատվածներ *ավելացվել* են, որոնք իրականում չեն պատկանում Աստվածաշնչին: Քանի որ հրամայված է հավելումներ չանել Աստծո Խոսքին, մեր պարտքն է մերժել այդպիսի հավելումները, երբ դրանց կեղծ բնույթը հաստատվում է: Մատնանշված խոսքերը, ամենայն հավանականությամբ, պատահմամբ են ներթափանցել տեքստի մեջ հինգերորդ դարում, քանի որ ոչ մի ավելի հին ձեռագիր (ոչ հունարեն, ոչ սիրիական) չի պարունակում այս պարբերությունը: Այն, ամենայն հավանականությամբ, սկզբում եղել է ընթերցողի կողմից տեքստի *եզրային նշում,* որը կատարել է որևէ ընթերցող՝ այս գրվածքի վերաբերյալ կարծիք արտահայտելու համար, և որը հետագայում պատճենողներից մեկը պատճենել է տեքստի հիմնական մասում՝ չկարողանալով տարբերել տեքստը մեկնաբանությունից:

Այնուամենայնիվ, այս հատորի մեջ արտահայտված «Ծրագրի» համար կարևոր չէ այս պարբերության մերժումը, որովհետև մյուս մեռելները՝ ամբողջ աշխարհը, բառի բովանդակ նշանակությամբ չեն *ապրելու* կրկին լիարժեք, կատարյալ իմաստով, ինչպես Ադամը *ապրում էր* մինչև մեղանչելը և «կմեռնես» դատավճռի տակ ընկնելը: Կատարյալ կյանքը առանց տկարության կամ մեռնելու, միակ վիճակն է որով Աստված ճանաչում է կյանք բառը: Նրա տեսանկյունից ամբողջ աշխարհը արդեն կորցրել է կյանքը ու մեռնում է և այժմ ավելի ճիշտ կլիներ նկարագրել այն որպես *մեռած*, քան որպես *կենդանի* (Բ Կորնթ. 5:14, Մատթ. 8:22):

«Հարություն» բառը (Հունարեն՝ *անասթասիա*) նշանակում է *վեր բարձրանալ*: Մարդու առումով այն նշանակում է մարդուն վեր բարձրացնել այն վիճակին՝ որտեղից նա ընկել էր, մարդկային բնության լիակատար կատարելությանը՝ այն բանին որ Ադամով կորսվեցավ: Այն կատարելությունը*, որից* մեր ցեղը ընկել է, հենց այն է, դեպի *որը* նրանք աստիճանաբար կբարձրանան հազարամյա

օծված ժողովի՝ Քրիստոսի առջև դրված հսկայական գործը պահանջում է նրանց բարձրացումը աստվածային բնության մեջ: Ոչինչ բացի աստվածային զորությունից չի կարող դա իրականացնել: Նրանց գործը վերաբերում է ոչ միայն այս աշխարհին, այլև *երկնքում և երկրի վրա* գտնվող ամեն ինչին՝ թե՛ հոգևոր էակների, թե՛ մարդկանց մեջ (Մատթ. 28:18, Կող. 1:20, Եփես. 1:10, Փիլ. 2:10, Ա Կորնթ. 6:3):

Աստծո Թագավորության երկրային մասի գործը սահմանափակված կլինի այս աշխարհով և մարդկությամբ: Նրանք, ովքեր արժանացվեն այս բարձր պատվի՝ դրա մեջ մասնակցություն ունենալու, Աստծո կողմից մարդկանց մեջ առավելագույնս կբարձրացվեն և կպատվվեն: Սրանք այն դասակարգն են, որոնց մասին խոսվում է 8-րդ գլխում, որոնց դատաստանի օրը

վերահաստատության կամ հարության (վերականգնումի) հազարամյա դարում: Հազարամյա դարը ոչ միայն փորձի դար է, այլև օրհնության դար և այն ամենը որ կորսված էր, կյանքի հարության կամ վերահաստատության միջոցով պիտի վերականգնվի բոլոր նրանց համար, ովքեր ուրախությամբ կհնազանդվեն՝ երբ կտեղեկանան ու կունենան հնարավորություն: Հարության գործընթացը աստիճանական կլինի և ամբողջ դար կպահանջվի իր լիակատար իրականացման համար, թեև կյանքի և գիտակցության ներկայիս մակարդակին համապատասխան արթնացումը, տեղի կունենա ակնթարթորեն: Հետևաբար մինչև հազար տարիների ավարտը մարդկային ցեղը չի կարողանա հասնել Ադամի մեջ կորսված կյանքի ամբողջ չափին: Եվ քանի որ կատարյալ կյանքից ցանկացած պակասը մասամբ մահվան վիճակ է, հետևում է, որ, թեև վերոհիշյալ խոսքերը չեն պատկանում սուրբ Գրության ներշնչված արձանագրություններին, ճշմարիտ կլինի ասել, որ մյուս *մեռելները չեն կենդանանա* (չվերստացան կորսված կյանքի լիությունը), մինչև վերականգնման և օրհնության հազար տարիները չավարտվեցին (Հայտն. 20:5):

նախորդել է Ավետարանական դարին: Նախապես փորձված և հավատարիմ գտնված՝ նրանք, արթնանալիս, դատաստանի չեն ենթարկվի, այլ անմիջապես կստանան իրենց հավատարմության վարձատրությունը՝ *մարդկային* կատարելության ակնթարթային հարություն: (Այս դասակարգից և հոգեղեն դասակարգից բացի մյուսները հազարամյա դարում *աստիճանաբար* կբարձրացվեն կատարելության): Այսպիսով, այս դասակարգը որպես Քրիստոսի երկրային գործակատարներ՝ անմիջապես պատրաստ կլինի մնացած մարդկությունը վերականգնելու և օրհնելու այս մեծ գործին: Ինչպես հոգեղեն բնությունը անհրաժեշտ է Քրիստոսի գործի իրականացման համար, այնպես էլ կարևոր է մարդկային կատարյալ բնությունը, մարդկանց մեջ կատարվելիք ապագա գործի համար: Նրանք ծառայելու են մարդկանց մեջ և տեսանելի կլինեն նրանց համար, իսկ իրենց կատարելության փառքը մշտապես կծառայի օրինակ և խթան մյուս մարդկանց՝ ձգտելու նույն կատարելությանը: Եվ որ այս հին արժանավորները՝ թագավորության երկրային մասում կլինեն և մարդկանց կողմից տեսանելի կլինեն, լիովին հաստատվում է Հիսուսի խոսքերով՝ ուղղված Նրան մերժած անհավատ հրեաներին: Նա ասաց. «Կտեսնեք Աբրահամին, Իսահակին, Հակոբին և բոլոր մարգարեներին Աստծու թագավորության մեջ» (Ղուկաս 13:28): Պետք է նկատի առնել նաև, որ Տերը չի նշում, թե ինքը կամ առաքյալները տեսանելի կլինեն Աբրահամի հետ: Իրականում մարդիկ կտեսնեն և կմիանան թագավորության երկրային մասին, բայց ոչ հոգեղենին, և ոմանք, անշուշտ, խիստ կվշտանան, տեսնելով որ իրենք մերժել են այդպիսի մեծ պատիվը:

Մենք չունենք մանրամասն տեղեկություններ այն մասին, թե ինչպես են երկնային թագավորության այս

երկու բաժինները ներդաշնակորեն գործելու, սակայն մենք ունենք դրանց *հնարավոր* գործունեության օրինակ Իսրայելի հետ կապված Աստծո գործերում՝ նրանց ներկայացուցիչների՝ Մովսեսի, Ահարոնի, Հեսուի, մարգարեների և այլնի միջոցով: Սակայն գալիք աստվածային զորության դրսևորումները շատ ավելի կգերազանցեն այս այլաբանական դարի դրսևորումները, քանի որ գալիք դարաշրջանի գործը ներառում է բոլոր մեռյալների արթնացումը և *հնազանդների* վերականգնումը կատարելության: Այս գործը կպահանջի մարդկանց մեջ կատարյալ կառավարության հաստատում՝ կատարյալ մարդկանց գլխավորությամբ, որպեսզի նրանք ճիշտ վարեն կառավարության գործերը: Դա կպահանջի նաև բոլոր տեսակի պատշաճ կրթական հաստատությունների ստեղծում, ինչպես նաև տարբեր բնույթի մարդասիրական միջոցառումներ: Եվ այս ազնիվ ու բարձր գործը՝ մարդկային ցեղը հաստատուն ու անխափան քայլերով բարձրացնելու (նույն թագավորության անտեսանելի հոգեղեն անդամների ղեկավարությամբ), մեծ պատիվ է, որին նշանակված են Հին Արժանավորները, և որի համար նրանք շուտով կհայտնվեն՝ այս աշխարհի թագավորությունների վերջնական փլուզումից և իրենց իշխան Սատանայի կապումից հետո: Եվ որպես երկնային թագավորության պատվավոր ներկայացուցիչներ՝ ամեն մարդու հարգանքը ու համագործակցությունը պիտի վայելեն:

Աստծո թագավորության երկրային մասում դիրք գրավելը կնշանակի կատարյալ մարդկային սրտի յուրաքանչյուր ցանկության և ձգտման իրականացումը: Դա կլինի փառավոր և գոհացուցիչ ժառանգություն դեռ առաջին մուտքից սկսած, և ժամանակի և օրինյալ գործի առաջացումովը՝ փառքը կբազմապատկվի: Եվ երբ

հազար տարիների ավարտին Քրիստոսը կավարտի վերականգնման հիասքանչ գործը (մեծ մասամբ այս ազնիվ մարդկային համագործակիցների միջոցով), երբ ամբողջ մարդկային ցեղը (բացառությամբ անուղղելիներից – Մատթ. 25:46, Հայտնություն 20:9) ընդունելի վիճակի մեջ կանգնեն Եհովայի առջև՝ առանց որևէ բծի, թերության կամ նման որևէ բանի, ապա նրանք՝ ովքեր որպես գործիքներ գործածված էին այս վսեմ գործի մեջ, մարդկանց ու Աստծո, Քրիստոսի ու հրեշտակների առջև «աստղերի պես կփայլեն, հավիտյանս հավիտենից» (Դանիել 12:3). Նրանց սիրո գործն ու աշխատանքը երբեք չի մոռացվի իրենց երախտապարտ մերձավորների կողմից: Նրանք հավիտյան կհիշվեն (Սաղմոս 111:6):

Բայց որքան մեծ լինի այն կատարյալ մարդկանց փառքը, որոնք կազմելու են թագավորության երկրային մասը, այնքան ավելի գերազանց է լինելու երկնային փառքը: Եթե առաջինները հավիտյան կփայլեն աստղերի պես, ապա վերջինները երկնքի հաստատության՝ արևի պես (Դան. 12:3): Երկնքի և երկրի պատիվները կդրվեն Քրիստոսի ոտքերի առջև: Մարդկային միտքը կարող է մոտենալ, սակայն չի կարող հստակ պատկերացնել այն փառքը, որը հայտնվելու է Քրիստոսի մեջ հավիտենության անթիվ դարերի ընթացքում (Հռոմ. 8:18, Եփես. 2:7–12):

Թագավորության այս երկու մասերի միջոցով է, որ Աբրահամին տրված խոստումը պետք է իրականանա՝ «Քո սերնդով երկրի բոլոր ազգերը պիտի օրհնվեն շնորհիվ այն բանի, որ լսեցիր իմ ձայնին» «քո սերունդը երկնքի աստղերի եվ ծովեզերքում լինող ավազի պէս շատացնելով կշատացնեմ» — երկրային և երկնային սերունդ, երկուսն էլ Աստծո օրհնության գործիքներ են աշխարհը օրհնելու համար: Խոստումների երկու մասերն էլ Աստծո կողմից

հստակ կանխատեսված և սահմանված էին սկզբից, սակայն Աբրահամը տեսավ միայն երկրային մասը: Աստված բնական սերնդից ընտրեց հոգեղեն դասի գլխավորներին (առաքյալներին և մյուսներին) և այդ ազգից բոլորին առաջարկեց նրանց գլխավոր օրհնությունը՝ հոգեղեն օրհնությունը, որոնք այդ երկնային կոչման ժամանակի մեջ կապրեին, և սա շատ ավելի էր գերազանցում այն, ինչ Աբրահամը երբևէ տեսել էր ուխտի մեջ՝ շնորհ շնորհի վրա:

Պողոսը (Հռոմեացիներ 11:17)-ում Աբրահամական ՈՒխտը նմանեցնում է արմատի, որից բնականաբար աճել է մարմնավոր Իսրայելը, սակայն երբ բնական ճյուղերը անհավատության պատճառով կտրվեցին, նրանց տեղը *պատվաստվեցին* հեթանոս հավատացյալները: Սա ապացուցում է *երկու սերունդների* զարգացման խոստումի կրկնակի կատարումը, երկրային (մարդկային) և երկնային (հոգեղեն), որոնք կազմելու են թագավորության երկու մասերը: Այս Արմատ - ՈՒխտը ունի այս երկու տարբեր տեսակի ճյուղերը, որոնցից յուրաքանչյուրը հարության ժամանակ կտա իր առանձնահատուկ կատարյալ պտուղը՝ մարդկային և հոգեղեն դասերը թագավորության զորության մեջ: Աճի կարգի մեջ առաջինը՝ բնական երկրայինն էր, ապա երկնային իշխանները, սակայն դիրքի մեծության և պաշտոնին անցնելու ժամանակվա տեսակետից, առաջինը հոգեղենը կլինի, ապա՝ մարմնեղենը և այդպես առաջինները վերջիններ կլինեն, իսկ վերջինները՝ առաջիններ (Մատթ. 19:30, Ղուկաս 13:30):

Աբրահամին տրված խոստումը, որին Ստեփանոսը հղում է անում (Գործք 7:5) և որի վրա Իսրայելը հույս էր դրել, աշխարհային էր՝ այն վերաբերում էր *երկրին*:

Ստեփանոսը ասաց. «Աստված խոստացավ, որ այն (Քանանի երկիրը) կտա նրան որպես կալվածք» Եվ Աստված ասաց Աբրահամին. «Աչքերդ բարձրացրո՛ւ և քո կանգնած տեղից նայի՛ր դեպի հյուսիս ու հարավ, դեպի արևելք ու արևմուտք. որովհետև այս ամբողջ երկիրը, որ դու տեսնում ես, քեզ եմ տալու և քո սերնդին հավիտյան: Քո սերունդը երկրի ավազի չափ եմ անելու. եթե մեկը կարող է հաշվել երկրի ավազը, ապա քո սերունդն էլ կհաշվվի «Վե՛ր կաց և շրջի՛ր այս երկիրն իր երկարությամբ ու լայնությամբ, որովհետև քեզ եմ տալու այն» (Ծննդոց 13:14–17): Ստեփանոսը ցույց է տալիս, որ այս խոստումը *դեռ պետք* է կատարվի, որովհետև նա հայտնում է, որ Աստված Աբրահամին «այստեղ (երկրի մեջ) ժառանգություն չտվեց, ոչ էլ անգամ մի ոտնաչափ հող»:

Առաքյալը, գրելով հենց այս նույն հնագույն արժանավորների՝ Աբրահամի և մյուսների մասին, համաձայնվում է Ստեփանոսի խոսքին, որ Աբրահամին տրված խոստումը դեռ չի կատարվել, և նա ավելի հեռուն է գնում և ցույց է տալիս, որ այդ երկրային խոստումները չեն կարող կատարվել և չպիտի իրականան, մինչև որ Քրիստոսի (Գլուխ և Մարմին) վերաբերյալ ավելի բարձր երկնային խոստումները չկատարվեն: Նա նրանց մասին ասում է. «Սրանք բոլորը հավատի մեջ մեռան՝ առանց խոստումներն ստանալու, (առանց ընդունելու նրանց կատարումը) քանի որ Աստված մեզ (եկեղեցու) համար ավելի լավ բան նախապատրաստեց՝ որ նրանք կատարյալ չդառնան առանց մեզ» (Եբր. 11:13, 39, 40): Այսպիսով կրկին ցույց է տրվում, որ Փրկիչն ու Վերականգնիչը հոգևոր է, ով իր մարդկային բնությունը բոլորի տեղը փրկագին տվեց, և որ այս խիստ բարձրացած հոգեղեն դասից պետք է բխի ամեն օրհնություն, անկախ նրանից,

թե ովքեր կարող են պատվվել որպես նրա գործիքներ կամ միջոցներ (Հռոմ. 12:1, Գաղ. 3:29):

Այսպիսով, թագավորության երկրային մասը իսրայելական կլինի և այս փաստի շուրջ են խմբված բազմաթիվ մարգարեություններ, որոնք պատմում են Աստծո ծրագրում աշխարհի ապագա օրհնության համար այս ազգի ունեցած առաջնակարգ դիրքի մասին, երբ որ նրանց խորանը, որը այսքան դարեր ավերված էր, կկերականգնվի և Երուսաղեմը կդառնա գովաբանություն ողջ երկրի վրա: Մենք գտնում ենք թե՛ մարգարեների, թե՛ առաքյալների հայտարարությունները, որոնք հստակ ցույց են տալիս, որ վերականգնման ժամանակներում Իսրայելը որպես ազգ առաջինը կլինի ազգերի մեջ, որը կհամաձայնվի իրերի նոր կարգի հետ, որ երկրային Երուսաղեմը կվերակառուցվի իր հին ավերակների վրա, և որ նրանց պետական կառուցվածքը ինչպես սկզբում, կվերականգնվի իշխանների կամ դատավորների առաջնորդությամբ (Ես. 1:26, Սաղմոս. 45:16, Երեմ. 30:18): Ի՞նչ կարող է լինել ավելի տրամաբանական, քան այն, որ Իսրայելը ամենքից առաջ կուրախանա մարգարեներին և նահապետներին ճանաչելով, և որ նրանց օրենքի հետ ծանոթությունը և դրա երկարատև կրթությունը կպատրաստեն նրանց որպեսզի նրանք հնազանդվեն թագավորության իշխանությանը: Ու թեև Իսրայելը ազգերի մեջ առաջինն է լինելու, ով կստանա ճանաչում և կօրհնվի, սակայն Իսրայելի մասին նաև գրված է որ՝ «Եհովան նախ Հուդայի վրանները կփրկի» (Զաքարիա 12:7):

Մենք կարևոր չենք համարում քննարկման մեջ մտնել այն մասին, թե որտեղ պետք է փնտրել Իսրայելի «կորած ցեղերը»: Միգուցե ճիշտ է, ինչպես ոմանք պնդում են, որ

այդ «կորած ցեղերը» կարելի է գտնել ներկայիս որոշ քաղաքակիրթ ազգերի մեջ, սակայն առաջարկված ապացույցներից մի քանիսը, թեև ոչ անհիմն, ընդհանուր առմամբ ենթադրություններ և կարծիքներ են: Բայց եթե երբևէ հստակ ապացուցվի, որ որոշ քաղաքակիրթ ազգեր կորած ցեղերի ժառանգներն են, դա նրանց *ոչ մի առավելություն* չի տա «երկնային» «վերին կոչման» ներքո, որը, նրանց ազգային մերժումից ի վեր, չի ճանաչում ոչ մի տարբերություն հրեայի ու հույնի: Եթե երբևէ նման ապացույցներ դառնան պարզ (ինչը մինչ այժմ այդպես չէ), դրանք ամբողջությամբ կհամապատասխանեն այս ժողովրդի վերաբերյալ մարգարեություններին և խոստումներին, որոնք դեռ սպասում են կատարմանը թագավորության երկրային մասում:

Բնական միության կապը, ինչպես նաև հնուց ի վեր տրված բայց չիրականացած խոստումների նկատմամբ նրանց մեջ դեռ պլպլացող վստահության կայծը նպաստավոր կլինեն Իսրայելի համար որպեսզի նրանք արագ ընդունեն նոր իշխաններին: Օրենքի հանդեպ նրանց հնազադնության սովորությունը նույնպես կնպաստի, որ իրենք համաձայնվեն նոր կառավարության սկզբունքների հետ:

Ինչպես Երուսաղեմը Աստծո այլաբանական Թագավորության ժամանակ կայսրության մայրաքաղաքն էր, այն կրկին կզբաղեցնի նույն դիրքը և կդառնա «Մեծ Թագավորի քաղաքը» (Սաղմոս 48:2, Մատթ. 5:35): Քաղաքը թագավորության կամ տիրապետության խորհրդանիշ է, հետևաբար Աստծո Թագավորությունը Նոր Երուսաղեմով է պատկերացվում՝ նոր տիրապետությունը՝ որը երկնքից իջնում է երկրի վրա:

Սկզբում այն միայն հոգեղեն դասից բաղկացած կլինի՝ Քրիստոսի հարսից, որը, ինչպես Հովհաննես տեսավ՝ հետզհետե իջնելու է երկրի վրա, այսինքն՝ աստիճանաբար պիտի զորանա և իշխանության գա, երբ ներկայիս կայսրությունները փլուզվեն Տիրոջ օրվա ընթացքում: Սակայն իր ժամանակին այս քաղաքի կամ կառավարության երկրային մասն էլ պիտի հաստատվի, որի մասերը կամ անդամները կլինեն հին արժանավորները: Չի լինելու երկու քաղաքներ (կառավարություններ), այլ մեկ քաղաք, մեկ երկնային կառավարություն՝ այն, որի համար Աբրահամը սպասում էր «հիմերով հաստատված քաղաքին»—արդարությամբ հաստատված կառավարությանը՝ հիմնված Քրիստոսի արդարության ամուր, ժայռի հիմքի վրա, Փրկչի՝ մարդու համար վճարած փրկանքի արժեքի վրա, և աստվածային արդարության անփոփոխության վրա, որը այլևս չի կարող դատապարտել փրկագնվածներին, ինչպես նախկինում չէր կարող արդարացնել մեղավորներին (Հռոմ. 8:31–34, Ա Կորնթ. 3:11):

Խաղաղության Փառավո՛ր քաղաք, որի պարիսպները փրկություն, պաշտպանություն և օրհնություն են նշանակում բոլոր ներս մտնողների համար, որի արդարությամբ դրված հիմքերը երբեք չեն շարժվի, և որի ճարտարապետն ու կառուցողը Աստված է: Աստծո այս փառավոր քաղաքից (թագավորությունից) շողացող լույսի մեջ է որ ազգերը (ժողովուրդները) սրբության պողոտայով պիտի քայլեն դեպի կատարելություն և Աստծո հետ լիակատար ներդաշնակության (Հայտնություն 21:24):

Երբ մարդկությունը կհասնի կատարելության հազարամյա դարի ավարտին, ինչպես որ արդեն ցույց է տրված, նրանք կընդունվեն Աստծո Թագավորության

անդամակցության մեջ և նրանց կտրվի ամբողջական վերահսկողությունը երկրի վրա, ինչպես սկզբում էր նախատեսված՝ յուրաքանչյուր մարդ կլինի ինքնիշխան, Թագավոր: Սա հստակ երևում է Հովհաննեսի խորհրդանշական մարգարեության մեջ (Հայտնություն 21:24–26), որովհետև տեսիլքում նա ոչ միայն տեսավ, որ ազգերը քայլում է նրա լույսով, այլև տեսավ, որ *թագավորները* փառքով մտնում են այնտեղ, սակայն ոչ մի պղծություն գործող, չէր կարող մտնել: Ոչ ոք չի կարող միանալ այդ քաղաքին (թագավորությանը) եթե նախապես ամբողջությամբ չի փորձվել, և ոչ ոք չի կարող միանալ, ով նենգություն ու անարդարություն կգործի կամ կսիրի դրանք, այլ միայն նրանք, որոնց Գառնուկը արժանի կհամարի հավիտենական կյանքի, և որոնց կասի. «Եկե՛ք, իմ Հորից օրհնվածնե՛ր, ժառանգե՛ք աշխարհի սկզբից ձեզ համար պատրաստված թագավորությունը» (Մատթ. 25:34):

Պետք է հիշել, որ թեև անշուշտ բառացի Երուսաղեմի քաղաքը կվերակառուցվի, և, հավանաբար, կդառնա աշխարհի մայրաքաղաքը, այնուամենայնիվ, բազմաթիվ մարգարեություններ, որոնք հիշատակում են Երուսաղեմին և նրա ապագա փառքը, խորհրդանշորեն մատնանշում են Աստծո թագավորությանը , որը մեծ շքեղությամբ կհաստատվի ամբողջ երկնքի տակ:

Երուսաղեմով ներկայացված թագավորության երկրային մասի ապագա փառքի մասին մարգարեները ոգևորությամբ են խոսում՝ ասելով. «Աղաղակեցէք, բարձրաձայն ցնծացէք միասին, ով Երուսաղէմի փլատակներ. որ Եհովան մխիթարեց իր ժողովրդին, փրկեց Երուսաղէմին» «Ահա ես Երուսաղէմը՝ ցնծութեան համար Ու անոր ժողովուրդը ուրախութեան համար կը

ստեղծեմ»: «Ուրախացե՛ք Երուսաղեմի հետ, ցնծացե՛ք նրա համար... որպեսզի վայելեք նրա փառքի առատությունը, որովհետև այսպես է ասում Եհովան. «Ահա ես նրա վրա խաղաղությունը գետի պէս Ու ազգերի փառքը հորդահոս հեղեղի պէս պիտի տարածեմ»: «Այն օրերին Երուսաղեմը Եհովայի գահը կկոչվի, և բոլոր ազգերը Եհովայի անվան համար պիտի հավաքվեն այնտեղ» «Շատ ժողովուրդներ պիտի գնան և ասեն. «Եկեք բարձրանանք Եհովայի լեռը [թագավորությունը], Հակոբի Աստծու տունը, նա մեզ կսովորեցնի իր ճանապարհները, և մենք կքայլենք նրա ուղիներով, որովհետև Սիոնից [հոգեղեն մասից] օրենք է դուրս գալու, և Երուսաղեմից՝ Եհովայի խոսքը» —երկրային մասը (Ես. 52:9, 65:18, 66:10–12, Երեմ. 3:17, Ես. 2:3):

Երբ խորհում ենք Իսրայելին տրված ապագա օրհնությունների բազմաթիվ անգին խոստումների մասին և հույս ունենում դրանց հավատարիմ իրականացման, լավ կլինի հիշել, որ որպես ժողովուրդ նրանք ունեին ոչ միայն իրական, այլև այլաբանական նշանակություն: Մի առումով նրանք համարվում են ողջ մարդկության խորհրդապատկեր, իսկ իրենց հնազանդության և կյանքի օրենքի ուխտը՝ նոր ուխտի խորհրդապատկերն էր, որը հազարամյայում պիտի հաստատվի ամբողջ աշխարհի հետ:

Նրանց այլաբանական ուխտի քավության արյունը և այն քահանայությունը, որը գործածում էր այն այդ ազգի համար, պատկերում էր Նոր Ուխտի արյունը և Թագավորական Քահանայությունը, որը հազարամյայի ընթացքում կիրառելու է այն ամբողջ աշխարհի մաքրագործման և օրհնության համար: Այսպիսով նրանց քահանայությունը պատկերում էր Քրիստոսին, իսկ այդ

ազգը պատկերում էր ամբողջ մարդկությանը, որոնց համար մատուցվեց իրական զոհը և որոնց պիտի գա իրական օրհնությունները՝ «ամեն մարդու», «ողջ աշխարհին»:

Հիշենք, որ թեև ապագա օրհնությունները, ինչպես անցյալում, նախ հրեաներին պիտի գան, ու ապա՝ հեթանոսներին, սակայն հրեաները կունենան Աստվածային շնորհի նախապատվությունը միայն ժամանակի առումով: Ինչպես ցույց ենք տվել, որ սա բնական հետևանք է նրանց օրենքի ներքո կրթության, որը իր ժամանակին կծառայի իր նպատակին՝ նրանց Քրիստոսին բերելու համար: Թեև առաջին գալստյան ժամանակ նրանցից միայն մնացորդն էր պատրաստ, սակայն երկրորդ գալստյան ժամանակ, նրանք որպես ժողովուրդ ԻՐԵՆ ընդունելու պատրաստ կլինեն և ազգերի մեջ կլինեն առաջին պտուղը: Վերջիվերջո Իսրայելին խոստացված բոլոր օրհնությունները, (բացի նրանցից որոնք պատկանում են ընտրված դասկարգերին), ոչ միայն իրականում կկատարվեն այդ ժողովրդի մեջ, այլ նաև իրենց կատարումը կունենան աշխարհի բոլոր ընտանիքների մեջ, որպես Իսրայելի հակապատկեր: Այդ կառավարության ներքո «Աստված յուրաքանչյուրին հատուցելու է իր գործերի համեմատ՝ փառք, պատիվ և խաղաղություն բոլոր նրանց՝ ովքեր բարին են գործում, նախ հրեային, ապա՝ հույնին, որովհետև Աստծո մոտ աչառություն չկա» (Հռոմ. 2:6, 10, 11):

Պողոս Առաքյալը առաջին հերթին մեր ուշադրությունը հրավիրում է Իսրայելին ապագայի վերաբերյալ տրված Աստծո խոստումների ստուգության վրա և ցույց է տալիս, թե ինչ շնորհներ են նրանք կորցրել անհավատության

պատճառով և որ շնորհներն են դեռևս պատկանում նրանց: Նա ասում է, որ հպարտության, սրտի կարծրության և անհավատության պատճառով Իսրայելը որպես ժողովուրդ չստացավ այն, ինչ փնտրում էր՝ Աստվածային շնորհի և ծառայության գլխավոր աստիճանը (Հռոմ. 11:7): Պողոսի այս հղումը վերաբերում է ոչ թե Աբրահամից ի վեր Իսրայելի բոլոր ազգատոհմերին, այլ առաջին գալստի ժամանակ ապրող ազգատոհմերին, և նրա խոսքերը վերաբերում են նաև բոլոր նրանց ազգատոհմերին, որոնք ապրել են Ավետարանական դարի ընթացքում՝ այն դարը, որի տևողության ընթացքում տրվել է գլխավոր շնորհը՝ Աստվածային բնության և Հիսուսի հետ ժառանգակից լինելու վերին կոչը: Իսրայելը՝ որպես ժողովուրդ թերացավ ճանաչելու և ամուր բռնելու այս շնորհը: Եվ թեև Աստված այցելեց հեթանոսներին և ավետարանի միջոցով նրանցից շատերին կանչեց, սակայն նրանք էլ մարմնեղեն Իսրայելի նման՝ չեն կարողանա ստանալ երկնային մրցանակը: Այնուամենայնիվ, բոլոր կանչվածների միջից մի դասակարգ, մի մնացորդ, մի փոքրիկ հոտ ականջ է դնում կոչին, և հնազանդությամբ ու անձնազոհությամբ՝ հաստատ է դարձնում իր կոչն ու ընտրությունը: Այսպիսով, այն, ինչ Իսրայելը որպես ժողովուրդ չկարողացավ ստանալ, և ինչը անվանական քրիստոնեական եկեղեցին նույնպես չի կարողանում ստանալ, տրվում ընտրված դասակարգին, հավատարիմներին՝ «Քրիստոսի մարմնին», որոնք ընտրվել են (Հայր Աստծո կանխագիտության համեմատ) Հոգու սրբացմամբ և ճշմարտության հավատով (Բ Թես. 2:13, Ա Պետրոս 1:2):

Թեև Մեսիային մերժելով Իսրայելը կորցրեց այս ամբողջ առանձնահատուկ շնորհը, սակայն Պողոսը ցույց է տալիս, որ դա չի նշանակում, ամբողջական անջատում

շնորհից, (դա չի նշանակում որ նրանք իսպառ զրկվեցին շնորհից), որովհետև նրանք դեռևս ունեին Քրիստոսի մեջ պատվաստվելու և հոգեղեն շնորհների միևնույն արտոնությունը, որը վայելում էր մնացյալ մարդկությունը, եթե կոչի տևողության ընթացքում նրանք ընդունեին այն հավատքով: Որովհետև Պողոսը ասում է թե՝ Աստված կարող է նրանց կրկին պատվաստել, ու նա պատրաստ է այդ բանը անելու, եթե նրանք չմնան անհավատության մեջ (Հռոմեացիներ 11:23, 24):

Սրանից բացի, Պողոսը փաստում է, որ թեև Իսրայելը կորցրեց գլխավոր օրհնությունը, «որին նա ձգտում էր», Աստծո թագավորության գլխավոր պատիվը, սակայն այդ ժողովրդի համար՝ դեռ մեծ խոստումներ են մնում, որովհետև, ինչպես առաքյալը արտահայտվում է, Աստծու պարգևները, կոչերը, ուխտերը և խոստումները առանց կատարվելու չեն մնա: Աստված սկզբից ի վեր գիտեր վերջը. նա գիտեր, որ Իսրայելը մերժելու է Մեսիային: Հետևաբար, այս գիտելիքի լույսի ներքո, նրանց տրված հաստատ խոստումները մեզ ներշնչում են վստահություն, որ Իսրայելը դեռ կօգտագործվի Տիրոջ կողմից ծառայության մեջ՝ որպես Նրա գործիք աշխարհը օրհնելու համար, չնայած «Իսրայելը չհասավ այն բանին, ինչ փնտրում էր»՝ գլխավոր շնորհին: Պողոսը հետո ցույց է տալիս, որ Աստծու՝ Իսրայելին տրված ուխտի խոստումները ունեին այնպիսի բնույթ, որ բաց և անորոշ էին թողնում՝ թե արդյոք նրանք որպես ժողովուրդ երկնային սերունդն են լինելու, թե երկրայինը, արդյոք ժառանգելու և կատարելու են խոստումների մեջ մատնանշված բարձրագույն ծառայությունը, թե խոնարհագույնը: Աստված բարձրագույն, հոգեղեն շնորհները պահեց գաղտնի մինչև կհասներ հարմար ժամանակը, և նրանց տրված խոստումները մի միայն

երկրային շնորհն էին մատնանշում, թեև նա նրանց պատվեց, հոգեղեն շնորհները առաջինը նրանց առաջարկելով և այդպիսով նրանց իր խոստացածից էլ ավելին առաջարկեց: Մեկ խոսքով՝ երկնային խոստումները թաքնված էին երկրայինների մեջ: Պողոսն ասում է, որ այս խոստումները անփոփոխելի են ու չեն կարող չկատարվել, իսկ առաջին հերթին թաքնված շնորհի առաջարկը և Իսրայելի կուրորեն մերժումը ոչ մի կերպ չեն անվավերացնում կամ չեղյալ չեն դարձնում խոստման մյուս կողմը: Ուստի նա հայտարարում է, որ թեև Իսրայելը որպես ազգ զրկված է շնորհից այն ժամանակվա տևողության ընթացքում, երբ Քրիստոսի հարսնացուն ընտրվում է թե հրեաներից, և՛ թե հեթանոսներից, սակայն կգա ժամանակը, երբ Ազատիչը (Քրիստոսը՝ Գլուխն ու Մարմինը) ամբողջանա, Աստվածային շնորհը կվերադառնա մարմնավոր Իսրայելին, և փառավոր Ազատիչը կհեռացնի ամբարշտությունը Յակոբից,[13] և այդպես ամբողջ Իսրայելը կփրկվի [կվերականգնվի շնորհի մեջ], ինչպես գրված է մարգարեի կողմից (Ես. 59:20-21): Առաքյալի խոսքերը այսպիսին են:

Եղբայրնե՛ր, չեմ ուզում, որ այս խորհուրդը չիմանաք և ձեզ իմաստուն կարծեք. Իսրայելի մեկ մասի վրա եկած կուրությունը կշարունակվի մինչև բոլոր հեթանոսների մտնելը (մինչև որ հեթանոսներից ընտրված թիվը ամբողջությամբ լրանա): Եվ այսպես Իսրայելը կփրկվի, ինչպես որ գրված է.«Սիոնից Փրկիչը (Ազատարարը) կգա և ամբարշտությունները Հակոբից կհեռացնի: Իմ կողմից ուխտը նրանց հետ սա է, երբ նրանց մեղքերը

[13] Հոգևոր Իսրայելը երբեք չի կոչվել «Յակոբ»:

կվերացնեմ»: ԱՎԵՏԱՐԱՆԻ համաձայն՝ նրանք թշնամի են ձեր պատճառով, ընտրության տեսակետից՝ (դեռ) սիրելի են հայրերի միջոցով. որովհետև Աստծու շնորհն ու կոչումը անփոփոխելի են:

Ինչպես որ դուք (հեթանոսներդ) էլ մի ժամանակ Աստծուն չէիք հնազանդվում, իսկ հիմա նրանց անհնազանդությամբ ողորմություն եք գտել, այնպես էլ նրանք այժմ անհնազանդ եղան ձեր ողորմածության համար, որպեսզի իրենք էլ ողորմություն գտնեն (փառավորված եկեղեցու միջոցով): Որովհետև Աստված բոլորին անհավատության մեջ փակեց, որպեսզի բոլորին էլ ողորմի (համեմատիր Հռոմ. 5:17-19-ի հետ): «Ո՜վ Աստծու մեծության, իմաստության և գիտության խորություն, ինչքա՜ն անքննելի են նրա դատաստանները, և անզննելի են նրա ճանապարհները (Հռոմ. 11:25-33):

Թագավորության Ժառանգները

«Ո՞վ է բարձրանալու Եհովայի լեռը (թագավորության խորհրդանիշ) կամ ո՞վ է կանգնելու նրա սրբավայրում (տաճարը): Նա, որ մաքուր ձեռքեր և անբասիր սիրտ ունի» (Սաղմոս. 24:3,4):

Երուսաղեմ քաղաքը կառուցված էր լեռան գագաթին՝ երկու գագաթներով որոնք իրարից Տիրոպեոնի հովիտով էին բաժանվում: Սակայն, դա մեկ քաղաք էր՝ մեկ պարսպով շրջապատված, իսկ կամուրջները կապում էին այս երկու բաժանումները: Այս լեռան գագաթներից մեկի վրա կառուցված էր Տաճարը: Սա թերևս պատկերացնում է փառավորված Եկեղեցու թագավորական և քահանայական հատկությունների միասնությունը, կամ Աստծո մեկ Թագավորությունը՝ իր երկու մասերովը - հոգևոր տաճարը՝ որը երկրային ծագում չունի, այլ նոր,

երկնային կամ հոգևոր բնության է (Եբր. 9:11)՝ նրանից բաժնված, բայց միևնույն ժամանակ միացած երկրային մասի հետ:

Ահնպես է թվում, որ Դավիթը հղում է անում այդ երկու վայրերին: Այդ քաղաքից լինելը պատիվ էր համարվում, իսկ առավել մեծ պատիվ էր՝ տաճար բարձրանալը, դեպի սուրբ սրահները, ուր միայն քահանաներին էր թույլատրված մտնել: Եվ Դավիթը ցույց է տալիս, որ կյանքի մաքրությունն ու սրտի անկեղծությունը անհրաժեշտ են յուրաքանչյուրի համար, ով ցանկանում է հասնել այդ պատիվներից որևէ մեկին: Թագավորական քահանայությանը պատկանել ցանկացողները հորդորված են մաքուր լինել, ինչպես որ իրենց հավատքի քահանայապետն է մաքուր, եթե նրանք ցանկանում են արժանի համարվել լինել նրա հետ ժառանգակից: Եվ ամեն ոք, ով այս հույսն իր մեջ ունի, իր անձը մաքրում է, ինչպես որ նա է մաքուր: Սա, ինչպես արդեն ցույց է տրված, *մտադրության* մաքրություն է, որը մեզ ամբողջական կամ իրական մաքրություն է հաշվված, որովհետև Քրիստոսի վերագրված մաքրությունը ծածկում է մեր անխուսափելի տկարությունները, քանի որ մենք քայլում ենք Հոգու համաձայն, ոչ թե մարմնի:

Մենք չպետք է մոռանանք, որ մաքրությունը, անկեղծությունը և Աստծուն մատուցված ամբողջական նվիրումը կենսական են բոլոր նրանց համար, ովքեր ցանկանում են մտնել Աստծո Թագավորության՝ որևէ մեկ մասը: Այսպիսին էին այն հին արժանավորները, որոնք ժառանգելու են Քրիստոսի ներքո գտնվող Թագավորության երկրային մասը: Նրանք սիրեցին արդարությունը և ատեցին անօրինությունը, և խորապես վշտանում ու զղջում էին, երբ բռնվում էին հանցանքով և

կամ տկարության կամ մեղքի պատճառով սայթաքում էին: Նույնն էր նաև Ավետարանական դարի հավատացյալների դեպքում, և այդպես կլինի նաև Հազարամյա դարում, երբ Աստծո Հոգին, ճշմարտության Հոգին, կթափվի ամեն մարմնի վրա: Այդ դարի հաղթողներին նույնպես անհրաժեշտ կլինի ձգտել սրտի և կյանքի մաքրության, եթե ուզում են (ըստ Աստծո կարգադրության) իրավունք ստանալ մտնելու քաղաք - թագավորությունը որ նրանց համար պատրաստված է աշխարհի սկզբից ի վեր:

Երկաթյա Իշխանությունը

Շատերը սխալմամբ ենթադրում են, որ երբ Հիսուսի հազարամյա թագավորությունը հաստատվի, բոլորը գոհ կլինեն նրա իշխանությունից: Բայց ոչ: Նրա կանոնները շատ ավելի խիստ կլինեն, քան նախորդ ցանկացած կառավարությանը, և մարդկանց ազատությունները սահմանափակվելու են այն աստիճան, որ շատերի համար, ովքեր այժմ պահանջում են ավելի մեծ ազատություն, դա դառնացուցիչ կլինի: Մյուսներին խաբելու, խորամանկելու, խեղաթյուրելու և դավադրություններ հյուսելու ազատությունը ամբողջությամբ կվերանա: Չի թույլատրվի սննդի կամ ըմպելիքի չարաշահումը և դրանով վնասել սեփական անձին կամ մյուսներին և բարի վարքերը ու սովորությունները ապականելը որևէ այլ ձևով նույնպես մերժված կլինի: Որևէ տեսակ սխալ գործելու ազատություն կամ թույլտվություն չի տրվի և ոչ մեկին: Միակ ազատությունը, որը բոլորին էլ կտրվի՝ Աստծո որդիների ճշմարիտ և փառավոր ազատությունն է՝ ազատություն բարին գործելու թե իրենց և թե ուրիշներին, սակայն վնասող կամ ապականող որևէ բան չպիտի թույլատրվի այդ սուրբ Թագավորության մեջ (Ես. 11:9,

Հռոմ. 8:21): Հետևաբար, շատերի կողմից այս իշխանությունը կհամարվի խիստ՝ քանի որ այն վերջ կդնի նրանց բոլոր նախկին սովորույթներին ու ավանդույթներին, և կոչնչացնի այն հաստատությունները, որոնք հիմնված են ազատության այս կեղծ սովորույթների և գաղափարների վրա: Իր ամուր և զորավոր լինելու համար այն խորհրդանշորեն կոչվում է երկաթյա իշխանություն՝ «Եվ նա կհովվի նրանց երկաթե գավազանով» (համեմատեք Հայտնություն 2:26,27, Սաղմոս 2:8–12 և 48:15): Այսպես, ահա կիրականան այն խոսքերը. Որ՝ «Ես իրավունքը չափման լար և արդարությունը՝ կշռաքար պիտի անեմ. և կարկուտը (արդար դատաստանը) հորդումով պիտի կործանի ստության ապաստարանը, և ջրերը [ճշմարտությունը] պիտի հեղեղեն թաքստոցը», և ամեն ծածուկ բան հայտնի կդառնա (Ես. 28:17, Մատթ. 10:26):

Շատերը ապստամբել կցանկանան այդ կատարյալ ու անաչառ իշխանության դեմ, քանի որ անցյալում, ներկա իշխանի (Սատանայի) իշխանության ներքո, սովոր էին տիրել իրենց մահկանացու եղբայրների վրա և ապրել ամբողջովին ուրիշների հաշվին՝ առանց փոխհատուցող ծառայություն մատուցելու: Նրանց ներկայիս անսպառ հաճույքների ու սեփական ցանկությունների գոհացումով ապրելը *բնականաբար* կպահանջի այդ իշխանության ներքո՝ բազմակի ու խիստ պատիժներ, մինչև սովորեն Թագավորության դասերը՝ հավասարություն, իրավունք, արդարություն (Սաղմոս 88:32, Ղուկաս 12:47, 48): Առաջին հերթին ներկայիս սերունդը կստանա նման դասեր, և շուտով (Հակոբոս 5):

Ի՜նչ օրհնյալ միտք է: Երբ Կյանքի Իշխանը երկաթյա իշխանությամբ գործի մեջ կդնի արդարության և

հավասարության օրենքները, մարդկության զանգվածները կսովորեն, որ «Արդարությունը բարձրացնում է ազգին, իսկ մեղքն անարգանք է ժողովուրդների համար» (Առակներ 14:34): Նրանք կսովորեն, որ Աստծո ծրագիրն ու օրենքները բոլոր հետաքրքրվողների բարօրության համար է և վերջիվերջո կսովորեն *սիրել* արդարությունը և ատել անօրինությունը (Սաղմոս 45:7, Եբր. 1:9): Իսկ բոլոր նրանք, ովքեր այդ իշխանության ներքո չսովորեն սիրել արդարությունը, կհամարվեն անարժան երկարատև կյանքին և բնաջինջ կլինեն ժողովրդի միջից (Գործք 3:23, Հայտնություն 20:9, Սաղմոս 10:5–7):

Հավիտենական Թագավորությունը

«Եհովան Թագավոր պիտի լինի ամբողջ երկրի վրա այն օրը» (Զաքարիա 14:9): Այն Թագավորությունը, որը Եհովան հազարամյակի ընթացքում Քրիստոսի ձեռքով կհաստատի՝ կլինի Եհովայի թագավորությունը, սակայն այն կգտնվի Քրիստոսի անմիջական վերահսկողության տակ՝ որպես նրա փոխանորդը: Քրիստոսի հատուկ իշխանությունը երկրի գործերի նկատմամբ սահմանված է որոշակի ժամանակով և հատուկ նպատակով, և այն կավարտվի այդ նպատակի իրականացմամբ: Մարդը իր ապստամբության պատճառով կորցրեց Աստվածատուր իրավունքը՝ այդ թվում ինքնակառավարման իրավունքը՝ ըստ Եհովայի օրենքների: Աստված Քրիստոսի միջոցով փրկեց այս բոլոր իրավունքները և մարդու համար ապահովեց ոչ միայն անհատապես իր նախկին վիճակին վերադառնալը՝ այլև վերստանալու իր նախկին՝ երկրի թագավորի դիրքը: Սակայն, որպեսզի Աստծու ծրագրի համեմատ մարդը հետ բերվի, այնպիսի ճանապարհով, որը լավագույնս կծառայի ներկայիս փորձառության դասը

ներդնելու, ինչը պահանջում է իր կողմից ջանքեր գործադրել իր սեփական փրկության համար— անհրաժեշտ է զորավոր ու կատարյալ կառավարություն: Մարդու ազատագրումը ամբողջացնելու այս պատիվը (որի իրավունքը նա իր սեփական մահվամբ ապահովեց), տրված է Քրիստոսին, և «Նա պետք է թագավորի, մինչև որ բոլոր թշնամիներին իր ոտքերի տակ դնի» — մինչև չմնա ոչ ոք, ով չի ճանաչի, չի պատվի և չի հնազանդվի նրան: Այնուհետև, երբ նա կկատարի մարդկության վերակազմության կամ վերահաստատության առաքելությունը, նա կհանձնի թագավորությունը Աստծուն՝ Հորը ու մարդկությունը ինչպես սկզբում, կհաղորդակցվի Եհովայի հետ, որովհետև Քրիստոս Հիսուսի՝ մարդու համար կատարած միջնորդությունը, լիակատար կերպով իրականացրած կլինի հաշտության մեծ գործը (Ա Կորնթ. 15:25–28):

Երբ Թագավորությունը հանձնվի Հորը, այն դեռ Աստծո թագավորություն կմնա, և օրենքները միշտ նույնը կմնան: Այդ ժամանակ ամբողջ մարդկությունը, լինելով կատարելապես վերականգնված, կկարողանա կատարյալ հնազանդություն մատուցել թե գրով և թե հոգով, մինչդեռ այժմ մարդիկ կարող են միայն հոգով հնազանդվել, այսինքն՝ ունեն ցանկություն պահել Աստծո օրենքը: Այդ կատարյալ օրենքի անթերի գիրը անմիջապես կդատապարտեր նրանց մահվան (Բ Կորնթ. 3:6): Այժմ մեր ընդունելի լինելը միայն Քրիստոսի փրկանքի շնորհիվ է:

Մինչև իրական կատարելության հասնելը՝ «Ահավոր բան է կենդանի Աստծու ձեռքն ընկնելը» (Եբր. 10:31): Թե հիմա և թե մինչև իրապես կատարյալ դառնալը, ոչ ոք չի կարող կանգնել ճշգրիտ արդարության օրենքի առջև. բոլորին անհրաժեշտ է ողորմություն, որը ձրի տրվում է

Քրիստոսի արժանիքների և զոհաբերության շնորհիվ: Բայց երբ Քրիստոս հանձնի թագավորությունը Հորը, նա նրանց *անարատ* կներկայացնի Նրա առջև, հարմար և կարող վայելելու հավիտենական երջանկությունը Եհովայի կատարյալ օրենքի ներքո: Այդ ժամանակ բոլոր վախերը կվերանան, ու Եհովան և իր վերականգնված արարածները կատարյալ ներդաշնակության մեջ կլինեն իրար հետ, ինչպես սկզբում:

Երբ Հազարամյա Դարաշրջանի վերջում Քրիստոս հանձնում է երկրի տիրապետությունը Հորը, Նա դա անում է՝ տիրապետությունը մարդկությանը տալով՝ որպես Հոր ներկայացուցիչների, որոնց համար այս պատիվը նախատեսված էր սկզբից (Ա Կորնթ. 15:24, Մատթեոս 25:34): Այսպիսով, Աստծո Թագավորությունը կմնա հավիտյան: Եվ այսպես էլ կարդում ենք մեր Տիրոջ խոսքերում. «Այդ ժամանակ թագավորն, իր աջ կողմում կանգնածներին կասի. (նրանք, ովքեր հազարամյա իշխանության ընթացքում համաձայնությամբ և հնազանդությամբ հասել են շնորհի դիրքին) Եկե՛ք, իմ Հորից օրհնվածնե՛ր, ժառանգե՛ք աշխարհի սկզբից ձեզ համար պատրաստված թագավորությունը»:

Այս թագավորությունը և պատիվը, որոնք նախապատրաստված են մարդկանց համար, չպետք է շփոթել այն բարձրագույն թագավորության և պատվի հետ, որոնք նախապատրաստված են Քրիստոսի համար, որ «Աստված հավիտենությունից առաջ սահմանեց մեր փառքի համար» (Ա Կորնթ. 2:7), և որի համար մենք Քրիստոսով ընտրված էինք աշխարհի հիմնվելուց առաջ: ՈՒ թեև Քրիստոսի՝ աշխարհի վրա ունեցած հատուկ միջամտությունը ու տիրապետությունը կվերջանա, ինչպես նախապես ցույց տրվեց, չպետք է եզրակացնել, որ

Քրիստոսի փառքը, տիրապետությունն ու զորությունը կդադարեն: Ոչ, Քրիստոսը հավիտյան կապված կլինի աստվածային ամբողջ փառքի ու զորության հետ՝ Եհովայի շնորհքի աջ կողմում, և նրա հարսը և ժառանգակիցը՝ հավիտյան կկիսեն նրա հարաճուն փառքը: Մենք այստեղ չենք փորձի երևակայել՝ թե ինչ զարմանահրաշ գործեր են սպասվում Եհովայի այս մեծարված ներկայացուցչին մյուս միլիոնավոր աշխարհների մեջ, միայն թե ուզում ենք նշել աստվածային զորության անսպառությունը և գործունեությունը ու տիեզերքի անսահմանությունը:

Արդարև, հոգ չէ թե Թագավորության որ մասի վրա է կենտրոնանում մեր հետաքրքրությունը, այն «բոլոր ազգերի ցանկալիքն» է, որովհետև դրա ներքո բոլորն էլ պիտի օրհնվեն: Ուստի բոլորը կարող են թախանձորեն սպասել այդ ժամանակին, և բոլորն էլ կարող են աղոթել՝ «Քո թագավորությունը գա, քո կամքը լինի, ինչպես երկնքում՝ այնպես էլ երկրի վրա»: Սրա համար է, որ ամբողջ ստեղծագործությունը անտեղյակաբար երկար ժամանակ հառաչել և սպասել է՝ սպասելով Աստծո որդիների հայտնվելուն, այն թագավորությանը՝ որը պիտի ջախջախի չարիքը, և օրհնի ու բժշկի բոլոր ազգերը (Հռոմեացիներ 8:19, 16:20):

ԳԼՈՒԽ 15

Եհովայի օրը

Եհովայի Օրը – Վրեժխնդրության Օրը – Բարկության Օրը – Մեծ Նեղության Ժամանակը – Դրա Պատճառը – Դրա Վերաբերյալ Աստվածաշնչի Տված Վկայությունը – Նրա Կրակի, Փոթորկի, Ցնծման և Հալվելու Այլաբանական Լինելը – Դավթի Վկայությունը – Հայտնիչի Վկայությունը – Ներկա Իրավիճակը և Ապագայի Հայացքը, Ինչպես Դրանք Տեսնում Են Հակադիր Կողմերը՝ Կապիտալիստներն ու Գործավորները – Մի Դարման Որը Չպիտի Հաջողի – Քողը Վերցվում Է և Լույսը Թափանցում է Ճիշտ Ժամանակին – Դրա Ապացույցը – Սրբերի վիճակը Նեղության Ժամանակահատվածում և Նրանց Պատշաճ Վերաբերմունքը Դրա Հանդեպ:

«Եհովայի օրը» այն ժամանակաշրջանի անվանումն է, երբ Քրիստոսի միջոցով Աստծո թագավորությունը աստիճանաբար կհաստատվի երկրի վրա, մինչդեռ այս աշխարհի թագավորությունները իրենց անհետացման ընթացքի մեջ են, և Սատանայի իշխանությունն ու ազդեցությունը մարդկության նկատմամբ կապվելու են: Այն Սուրբ Գրքի մեջ ամեն տեղ նկարագրվում է որպես մարդկության համար սաստիկ տառապանքի, նեղության և շփոթության խավար օր: Եվ մի՞թե զարմանալի է, որ այս կարգի հեղափոխությունը ու այս օրինակ հսկա փոփոխության պահանջը, նեղության և տառապանքի պատճառ լինի: Փոքր հեղափոխությունները յուրաքանչյուր դարում նեղությունների պատճառ են դարձել, սակայն սա, գերազանցելով բոլոր նախորդ

հեղափոխությունները, լինելու է այնպիսի նեղության ժամանակ, որի նմանը աշխարհի սկզբից մինչև հիմա չի եղել, և չի էլ լինի (Դանիել 12:1, Մատթեոս 24:21, 22):

Այն կոչվում է «Եհովայի օրը», որովհետև, թեև Քրիստոսը՝ թագավորական տիտղոսով և զորությամբ, ներկա կլինի որպես Եհովայի ներկայացուցիչը և կկառավարի այս նեղության օրվա բոլոր գործերը, սակայն նա կգործի որպես Եհովայի Սպարապետը, նվաճելով ամեն բան, և վերջն էլ որպես խաղաղության իշխան կօրհնի բոլորին: Մինչդեռ կեղծ ու թերի տեսություններն ու համակարգերը կործանվում են, նոր Թագավորի դրոշը կբարձրանա, և ի վերջո նա բոլորի կողմից կճանաչվի և կնդունվի որպես Թագավորների Թագավոր: Այսպիսով Քրիստոսի իշխանության հաստատվելը մարգարեների կողմից ներկայացվում է, իբրև Եհովայի գործ. «Ես հեթանոսներին քեզ ժառանգություն կտամ և երկրի ծայրերը՝ քեզ ունեցվածք» (Սաղմոս 2:8): «Այն թագավորների օրերում երկնքի Աստվածը մի թագավորություն է հաստատելու» (Դանիել 2:44): «Հինավուրցը նստեց, և նրա առաջին մոտեցրին մարդու որդու նման մեկին, և Եվ նրան տրվեց իշխանություն, որպեսզի բոլոր ազգերն ու թագավորությունները նրան հնազանդվեն ու ծառայեն (Դան. 7:9, 13, 14, 22, 27): Իսկ Պողոս առաքյալը ամբողջացնում է այս մարգարեությունը, ասելով՝ որ երբ Քրիստոսը Իր իշխանության նպատակը իրականացնի, «Երբ ամեն բան հնազանդվի նրան, այն ժամանակ Որդին ինքն էլ կհնազանդվի նրան, (Հորը), որ ամեն ինչ հնազանդեցրեց նրան» (Ա Կորնթ. 15:28):

Այս ժամանակաշրջանը կոչվում է «մեր Աստծո վրեժխնդրության օր»ը և կամ «բարկության օր»ը: (Ես. 61:2, 63:1–4, Սաղմոս. 110:5): Եվ այնուամենայնիվ, բոլոր

նրանք որոնք միմիայն Աստվածային ցասման գաղափարն են ստանում կամ ենթադրում են չարասրտություն, չարաչար սխալվում են: Աստված հաստատել է որոշ օրենքներ, որոնց համաձայն գործում է, և բոլոր նրանք, ովքեր որևէ պատճառով ընդհարման են գալիս դրանց հետ՝ իրենց արժանի պատիժը կամ բարկությունը կստանան: Աստծո պատվերները մարդկանց մեծամասնության կողմից շարունակաբար մերժվել են, և ինչպես ցույց տվեցինք, Նա թույլ տվեց որ նրանք իրենց ուզած ճանապարհով գնան (Հռոմեացիներ 1:28): Այնուհետև նա իր հատուկ հոգատարությունը սահմանափակեց Աբրահամով և նրա սերնդով, ովքեր արտահայտեցին ցանկություն հետևելու Նրա ճանապարհներին և ծառայելու Նրան: Հրեա ժողովրդի ցուցադրած խստասրտությունը և Աստծո նկատմամբ տածած սրտի կեղծավորությունը, իբր բնական հետևանք, ոչ միայն խոչընդոտեցին Մեսիայի ընդունմանը, այլև նույնքան բնականօրեն պատրաստեցին և տարան նրանց այն նեղության մեջ, որը ավարտեց նրանց ազգային գոյությունը:

Եվ այսպես այն լույսը, որը Քրիստոսի ճշմարիտ Եկեղեցին (որոնց անունները գրված են երկնքում) բերեց աշխարհին, վկայեց քաղաքակիրթ աշխարհին բարիքի և չարի, ճշտի և սխալի միջև եղած տարբերությանը, ինչպես նաև վկայություն ապագա այն օրվա մասին, երբ ոմանք կվարձատրվեն, իսկ մյուսները կպատժվեն (Հովհաննես 16:8–11, Գործք 24:25): Այս վկայությունը մեծ ազդեցություն կունենար մարդկանց վրա, եթե նրանք ուշադրություն դարձնեին Տիրոջ խրատներին, սակայն, ինչպես միշտ կամակոր, նրանք քիչ են օգտվել Սուրբ Գրքերի խորհուրդներից, և իբր հետևանք այդ անհոգության՝ Տիրոջ օրվա տառապանքը կհասնի իրենց

վրա: Կրկին կարելի է ասել, որ դա Աստծո բարկությունն է, քանի որ այն կգա իր պատվերները անտեսելու պատճառով՝ իբրև անօրենության հատուցում: Սակայն, այլ տեսանկյունից դիտված՝ աշխարհին հասնող տառապանքը մեղքի բնական կամ օրինական հետևանքն է, որը Աստված նախապես տեսել էր, և որի դեմ Նրա խորհուրդները կպաշտպանեին նրանց, եթե նրանք ուշադրություն դարձնեին և հետևեին դրանց:

Մինչ Աստծո պատգամը Եկեղեցուն եղել է՝ «Ձեր մարմինները մատուցեք կենդանի զոհ» (Հռոմեացիներ 12:1), Նրա պատգամը աշխարհին եղել է՝ «Պահի՛ր քո լեզուն չարությունից և քո շրթունքները, որ նենգություն չխոսեն: Հեռացի՛ր չարից և բարի՛ն գործիր. խաղաղությո՛ւն փնտրիր և գնա՛ նրա ետևից» (Սաղմոս. 34:13,14): Շատ քչերն են ուշադրություն դարձրել այս պատգամներից որևէ մեկին: Փոքրիկ է այն հոտը որ զոհաբերում է, իսկ աշխարհը, թեև որդեգրել է «Առաքինությունը լավագույն քաղաքագիտությունն է» կարգախոսը, ընդհանուր առմամբ չի կիրառում այն: Փոխարենը այն ավելի շատ լսել է ագահության ձայնին՝ որը ասում է՝ «Ստացեք այս աշխարհում հնարավորինս շատ հարստություն, պատիվ և իշխանություն, ինչպիսին էլ լինի ձեր ձեռքբերման մեթոդը, և կարևոր չէ, թե ով է տուժում քո շահի պատճառով»: Կարճ ասած՝ այս Տիրոջ օրվա նեղությունը չէր գա, եթե Աստծո օրենքի սկզբունքները որևէ նշանակալի չափով գործադրվեին: Այդ օրենքը ամփոփ այս է՝ Սիրիր քո Տեր Աստծուն քո ամբողջ սրտով, և քո ընկերոջը՝ քո անձի պես (Մատթեոս 22:37–39): Քանի որ ապականված կամ մարմնավոր միտքը հակադրվում է Աստծո այս օրենքին և չի ենթարկվում դրան, իբրև արդյունք, ինչպես հնձաքաղ

սերմնացանից հետո, տառապանքն ու նեղությունը վրա պիտի հասնին:

Մարմնավոր կամ ապականված միտքը, իր դրացուն իր անձի պես սիրելու փոխարեն, միշտ եղել է եսասեր և ընչաքաղց, ինչը հաճախ հանգեցրել է բռնության և սպանության՝ ուրիշի ունեցվածքին տիրանալու համար: Անկախ նրանից, թե որքանով է այն արտահայտվում, եսասիրական սկզբունքը միշտ նույնն է, բացառությամբ ծննդի, դաստիրակության և միջավայրի հանգամանքների ազդեցության: Այն նույնն է եղել աշխարհի բոլոր դարաշրջաններում և կմնա այդպիսին, մինչև որ Մեսիայի երկաթյա իշխանության ուժով սերը՝ (ոչ թե բռնությունը ու ագահությունը) կվճռի ու կհարկադրի իրավունքը, մինչև բոլորը հնարավորություն ունենան գալ, արդարության ու սիրո օրենքի գիտակցությանը՝ իբր հակադրություն շահախնդրության և բռնության: Մինչև որ ճշմարտության և արդարության ճառագայթների ազդեցության ներքո, մարդու եսախնդիր ու քարացած սիրտը մարմնեղեն սրտի վերածվի, վերադառնալով այն վիճակին՝ երբ Աստված այն «շատ լավ»՝ անվանեց (Եզեկիել 36:26):

Հետադարձ հայացք նետելով՝ մենք առանց դժվարության կարող ենք տեսնել, թե ինչպես մարդու աստվածանման սերն ու բարեսրտությունը անգութ շահախնդրության փոխվեցին: Երբ մարդը անհնազանդության պատճառով կորցրեց Աստվածային շնորհը, և աքսորվեց իր Եդեմական բնակավայրից, որտեղ նրա բոլոր կարիքները այդքան առատորեն բավարարված էին, անմիջապես հանդիպեց եսասիրության հրահրող հանգամանքների: Երբ մեր դատապարտված ծնողները դուրս եկան և սկսեցին կյանքի պայքարը՝ ձգտելով գոյությունը երկարաձգել մինչև վերջին սահմանը, նրանց

անմիջապես դիմավորեցին փշեր, տատասկներ, մացառներ և անբարեբեր հող, և դրանց դեմ պայքարը առաջ բերեց հոգնածություն և ճակատի քրտինք, ինչպես որ Տերը ասել էր: Շուտով մտավոր և բարոյական հատկությունները սկսեցին նվազել գործածության պակասից, մինչդեռ ցածր հատկությունները շարունակեցին ավելի լայն հնարավորություններ ստանալ մշտական գործածության շնորհիվ: Ապրուստը դարձավ կյանքի գլխավոր նպատակն ու հետաքրքրությունը, և աշխատանքի մեջ կենսունակության վատնումը դարձավ այն չափանիշը, որով գնահատվում էին բոլոր մյուս շահերը, իսկ Մամոնան՝ դարձավ մարդու աստվածը: Մի՞թե զարմանալի է երբ նման պայմանների ներքո մարդկությունը դարձավ եսասեր, ագահ և յուրաքանչյուրը ձգտելով առավելագույնի՝ առաջին հերթին անհրաժեշտությունների, և երկրորդ՝ Մամոնայի շնորհած պատիվների ու զեխությունների: Սա պարզապես բնական մի ձգտում է, որից Սատանան մեծապես օգտվեց:

Նախորդ դարերում (տարբեր ազդեցությունների, այդ թվում՝ անտեղյակության, ռասայական խտրականության և ազգային փառասիրությամբ) աշխարհի հսկայական հարստությունը հիմնականում կենտրոնացած էր մի քանիսի՝ իշխողների ձեռքում, որոնց իբրև իրենց ազգային ներկայացուցիչների՝ ամբոխները ստրկային հնազանդություն կմատուցեին, ու նրանց հարստության մեջ փնտրում էին իրենց փառքն ու գոհունակությունը: Բայց երբ մոտեցավ այն ժամանակը, երբ ըստ Եհովայի ծրագրի աշխարհը վերահաստատությամբ պիտի օրհնվեր Քրիստոսի շնորհիվ, Նա սկսեց բարձրացնել անտեղյակության և նախապաշարման քողը՝ ժամանակակից միջոցների և հայտնագործությունների շնորհիվ, և դրանց հետ եկավ ժողովուրդների ընդհանուր

բարձրացումն ու երկրային իշխանների զօրության անկումը: Աշխարհի հարստությունը այլևս թագավորների ձեռքում չէ, այլ մեծամասամբ՝ ժողովրդի ձեռքում:

Չնայած հարստությունը բազմաթիվ չարիքներ է բերում, այն նաև որոշ օրհնություններ է պարգևում. հարուստները ստանում են ավելի լավ կրթություն, ինչի շնորհիվ մտավորապես գերազանցում են աղքատներին և որոշ չափով կապվում արքայական շրջանակների հետ: Այսպիսով գոյություն ունի ազնվապետություն (արիստոկրատիա), որը ունի թե՛ գումար, թե՛ կրթություն իր գոյությունը պահպանելու և ագահ պայքարում ամեն ինչ ձեռք բերելու ու ցանկացած գնով առաջին շարքում մնալու համար:

Բայց երբ գիտելիքը տարածվում է և մարդիկ օգտվում են այսօր առատությամբ առկա կրթական ռեսուրսներից, նրանք սկսում են ինքնուրույն *մտածել*: Ինքնագնահատականի և ինքնավստահության զգացումով, որը ամրապնդվում է *մի փոքր* գիտելիքով (որը երբեմն կարող է վտանգավոր լինել), նրանց թվում է, թե տեսնում են այն ուղիներն ու միջոցները, որոնց միջոցով բոլոր մարդկանց, հատկապես իրենց սեփական շահերն ու հանգամանքները կարելի է ապահովել այն մի քանի մարդկանց հաշվին, որոնց ձեռքում այժմ կենտրոնացած է հարստությունը: Անշուշտ, նրանցից շատերը անկեղծորեն հավատում են, որ Մամոնայի երկրպագողների հակասական շահերը (մի կողմից՝ իրենք, մյուս կողմից՝ հարուստները) կարելի է հեշտությամբ և անաչառ կերպով համատեղել: Բնականաբար, նրանց թվում է, որ եթե հարստություն ունենային, նրանք կլինեին մեծահոգության մարմնացումը և ամբողջովին պատրաստ կլինեին սիրել իրենց մերձավորներին ինչպես սեփական

անձը: Սակայն նրանք անկեղծորեն ինքնախաբեության մեջ են, որովհետև իրենց ներկայիս դիրքում շատ քչերն են իսկապես ցուցաբերում նման ոգի: Եվ ով չի կարող պատշաճ կերպով օգտագործել աշխարհի հարստության փոքր մասը, չի կարողանա հավատարիմ մնալ, եթե ավելի մեծ հարստություն ունենա: Իրականում հանգամանքները հաստատում են սա, քանի որ հարուստների մեջ ամենախստասիրտ ու եսասերները հաճախ նրանք են, ովքեր արագ բարձրացել են ցածր խավերից:

Չփորձելով արդարացնել, այլ հանդիմանելով բոլոր խավերի ագահությունն ու ընչաքաղց եսասիրությունը, տեղին է նշել, որ հիվանդների, անօգնականների և աղքատների համար նախատեսված հաստատությունները՝ հիվանդանոցներ, ծերանոցներ, հանրային գրադարաններ, դպրոցներ և մարդկանց բարօրության ու հարմարավետության համար նախատեսված այլ ձեռնարկություններ, որոնք նախատեսված են ոչ թե հարուստների, այլ բազմության համար, հիմնականում պահպանվում են հարկերի և հարուստների նվիրատվությունների միջոցով: Այս հաստատությունները գրեթե միշտ իրենց գոյությունը պարտավոր են բարի ու հոգատար հարուստների շնորհիվ, և դրանք այնպիսի գործեր են, որոնց հաջող իրականացման համար աղքատ դասակարգը ոչ ժամանակ ունի, ոչ էլ, որպես կանոն, անհրաժեշտ կրթություն կամ հետաքրքրություն:

Այնուամենայնիվ, այսօր հարուստների և աշխատավորների միջև աճում է հակամարտությունը՝ աշխատավորների շրջանում աճող դժգոհություն և հարուստների շրջանում աճող համոզմունք, որ միայն օրենքի կոշտ ձեռքը կպաշտպանի այն, ինչ նրանք

համարում են իրենց իրավունքները: Արդյունքում, հարուստները ավելի են մոտենում կառավարություններին, իսկ աշխատավարձով ապրող զանգվածները, սկսելով մտածել, որ օրենքներն ու կառավարությունները բացառապես ստեղծված են հարուստներին օգնելու և աղքատներին զսպելու համար, ձգվում են դեպի կոմունիզմն ու քաոսը՝ կարծելով, որ դրանք ավելի լավ կծառայեն իրենց շահերին, և չեն գիտակցում, որ ամենավատ և ամենամեծածախս կառավարությունն անգամ ավելի լավ է, քան անիշխանականությունը:

Շատ գրություններ հստակ ցույց են տալիս, որ սա կլինի այն խնդրի բնույթը, որի տակ ներկայիս քաղաքացիական, սոցիալական և կրոնական համակարգերը կանհետանան, որ այսպես կաճի գիտելիքն ու ազատությունը՝ մարդու մտավոր, բարոյական և ֆիզիկական անկատարության պատճառով: Այստեղ, սակայն, արժե ուշադրություն դարձնել դրանցից միայն մի քանիսին՝ հիշեցնելով մեր ընթերցողներին, Հին Կտակարանի բազմաթիվ մարգարեություններում, որոնցում Եգիպտոսը, Բաբելոնը և Իսրայելը այդքան հաճախ են հանդիպում, խոսքը վերաբերում էր ոչ միայն դրանց բառացի իրականացմանը, այլև երկրորդական, շատ ավելի մեծ իրականացմանը: Օրինակ, Բաբելոնի անկման և այլնի վերաբերյալ մարգարեությունները չափազանցված կհամարվեին, եթե մենք չճանաչեինք ոչ միայն բառացի, այլև խորհրդանշական և հակատիպ Բաբելոնը: Հայտնության գիրքը պարունակում է այպիսի մարգարեություններ, որոնք գրանցվել են այն բանից հետո, երբ բառացի Բաբելոնը ավերվել էր, և, հետևաբար, ակնհայտորեն վերաբերում են միայն խորհրդանշական Բաբելոնին, սակայն մարգարեների բառերի սերտ

նմանությունը, որոնք, թվում է, ուղղակիորեն ուղղված են բառացի Բաբելոնին, ցույց է տալիս, որ դրանք հատուկ իմաստով պատկանում են խորհրդանշական Բաբելոնին: Այս ավելի լայն իրականացման մեջ Եգիպտոսը ներկայացնում է աշխարհը, Բաբելոնը՝ անվանական եկեղեցին, որը կոչվում է քրիստոնեություն, մինչդեռ, ինչպես արդեն ցույց է տրված, Իսրայելը հաճախ ներկայացնում է ամբողջ աշխարհը իր *արդարացված* վիճակում՝ իր հրաշափառ Թագավորական Քահանայությունով, իր սուրբ Ղևտացիներով և իր հավատացող ու երկրպագող ժողովուրդով, արդարացված Քավության Ձոհով ու Աստծու հետ հաշտված: Իսրայելին խոստացված են օրհնություններ, Եգիպտոսին՝ պատուհասներ, իսկ հզոր Բաբելոնին՝ զարմանալի, ամբողջական և հավիտենական կործանում՝ «ինչպես մի մեծ աղացքար, որը գցվում է ծովի մեջ» (Հայտնություն 18:21), որը երբեք չի ելնի այդտեղից, այլ կմնա հավիտենական արհամարհանքի առարկա:

Հակոբոս Առաքյալը մատնանշում է այս նեղության օրը ու ասում է, որ այն հեղևանք կլինի այն գժտության, որը գոյություն ունի կապիտալիստների (դրամատերների) և աշխատավորության միջև: Նա ասում է. «Իսկ այժմ, հարուստնե՛ր, լացե՛ք ու ողբացե՛ք այն թշվառությունների վրա, որ գալու են ձեզ վրա: Ձեր հարստությունը փտել է,(իր արժեքը կորցրել է) և ձեր հագուստները ցեցի կեր են դարձել, ձեր ոսկին ու արծաթը ժանգոտել են, և դրանց ժանգը ձեր դեմ վկայություն է լինելու ու ձեր մարմինները կրակի պես ուտելու է: Դուք վերջին օրերի համար գանձեր դիզեցիք: Ահա աղաղակում է վարձը այն մշակների, որոնք ձեր արտերում աշխատեցին, և դուք նրանց վարձը պահեցիք (Ձեզի դրամ դիզելու համար): Հնձողների աղաղակները զորությունների Տիրոջ ականջին հասան

(Հակոբոս 5:1–4): Նա ավելացնում է, որ դժվարությունների մեջ ընկնող խավը սովորել է շքեղության, որը մեծապես ձեռք է բերվել ուրիշների հաշվին, որոնց մեջ եղել են նաև արդարներ, և քանի որ նրանք չեն դիմադրում՝ բուն իրենց կյանքերը ճզմված է: Առաքյալը «եղբայրներին» կոչ է անում համբերությամբ տանել իրենց բաժին տառապանքը, ապագան դիտելով՝ ու Տիրոջ շնորհիվ գալիք ազատությանը սպասելով: Այսօր մենք կարող ենք տեսնել հենց այդպիսի ողբալի վիճակի մոտեցումը, «Մարդիկ կնվաղեն վախից և այն բաների սպասումից, որ երկրի վրա պիտի գան» (Ղուկաս 21:26): Լավ հայտնի է, որ մեր օրերում գոյություն ունի աշխատավարձերի նվազեցման մշտական միտում, բացառությամբ այն դեպքերի, երբ գները արհեստական ապահովված են կամ աճում են տարբեր գործավորական կազմակերպությունների, գործադուլների և այլնի գործունեության արդյունքում: Ընդհանուր ժողովրդի ներկա տրամադրությունը հաշվի առնելով, բոլորը տեսնում են, որ մարդկանց համբերությունը կոտրվելու պահը միայն ժամանակի հարց է, ինչը անխուսափելիորեն կհանգեցնի ապստամբության: Սա կվախեցնի կապիտալին, որը դուրս կքաշվի առևտրի և արդյունաբերության ոլորտներից և կկուտակվի պահոցներում ու գանձարաններում՝ որտեղ անգործության շրջանում պահպանման ծախսերը կկլանեն այն՝ մեծ հիասթափություն պատճառելով սեփականատերերին: Սա իր հերթին անխուսափելիորեն կհանգեցնի սնանկության, ֆինանսական պանիկայի և գործարարության անկման, քանի որ ներկայումս բոլոր խոշոր գործարքները մեծապես իրականացվում են վարկային հիմունքներով: Այս ամենի բնական արդյունքը կլինի այն, որ տասնյակ հազարավոր մարդիկ, որոնք

իրենց օրական հացը վաստակում են աշխատավարձով, կմնան առանց աշխատանքի, իսկ աշխարհը կլցվի թափառաշրջիկներով ու անգործներով, որոնք իրենց անհրաժեշտ բաները հայտատելու համար ոտնակոխ կանեն ամեն օրենք: Այն ժամանակ կլինի, ինչպես նկարագրում է մարգարեն (Եզեկիել 7:10–19). երբ գնորդը չի ուրախանա, և վաճառողը չի սգա, որովհետև նեղություն կլինի ամբողջ բազմության վրա, և գույքի անվտանգություն չի լինի: Այնժամ բոլոր ձեռքերը թույլ ու անօգնական կլինեն՝ չկարողանալով խուսափել դժբախտությունից: Նրանք փողոցներում կգցեն իրենց արծաթը, և նրանց ոսկին կհեռացվի: Նրանց արծաթն ու ոսկին չեն կարողանա փրկել նրանց Տիրոջ բարկության օրը:

Չպետք է մոռանալ, որ թեև Իսրայելի՝ որպես ազգի գոյության վերջին քառասուն տարիները նեղության օրեր էին, «վրեժխնդրության օր» այդ ժողովրդի վրա, որը ավարտվեց նրանց ազգի ամբողջական կործանումով, սակայն նրանց բարկության օրը միայն շուքը կամ գաղափարականն էր անունով քրիստոնեության վրա գալիք ավելի մեծ ու լայնածավալ նեղության, ինչպես որ նրանց անցյալ պատմությունը որպես ժողովուրդ՝ իրենց շնորհքի դարաշրջանում, շուքն էր Ավետարանական դարաշրջանի, ինչը հետագայում ցույց կտրվի: Այդժամ բոլորը կհասկանան, թե ինչու այս մարգարեությունները Տիրոջ օրվա մասին պետք է, և ինչ-որ չափով ուղղված են Իսրայելին ու Երուսաղեմին, թեև կապակցությունները հստակ ցույց են տալիս, որ ամբողջ մարդկությունը ներառված է դրանց լիակատար իրականացման մեջ:

Վերցրեք մեկ այլ մարգարեական վկայություն (Սոփոնիա 1:7–9, 14–18): «Եհովան զոհ է պատրաստել,

սրբացրել է իր կողմից հրավիրվածներին (Համեմատիր Հայտն. 19:17): Եվ Տիրոջ զոհի օրը պիտի պատժեմ իշխանավորներին և թագավորի որդիներին և բոլոր օտար զգեստ հագնողներին: Եվ այդ օրը պիտի պատժեմ շեմի վրայով բոլոր ցատկողներին, որոնք իրենց Տիրոջ տունը լցնում են բռնությամբ և խարդախությամբ: (Սա ցույց է տալիս ոչ միայն, որ այս տառապանքի ժամանակ տեղի կունենա հարստության և իշխանության մեծ կործանում, այլև նաև՝ նոլոր նրանք ովքեր ժամանակավորապես կլինեն երկնքի գործիքները ներկայիս համակարգերը քանդելու գործում, նույնպես պատժվելու են իրենց նույնքան անարդար և անիրավ վարքի համար, որովհետև առաջիկա փորձությունը կհետապնդի բոլոր դասակարգերին և տագնապահար կանի ամբողջ մարդկությանը):

Մօտ է Եհովայի մեծ օրը, մօտ է և շատ շտապում է, Տիրոջ օրվա ձայնը կուգա, Զօրավորը հոն դառնապէս պիտի աղաղակէ: Բարկության օր է այն օրը, նեղության և տառապանքի օր, կործանման և ավերման օր, խավարի ու մեգի օր (անորոշության ու վտանգի նախազգացման, ինչպես նաև ներկա տագնապի) ամպի (տառապանքի) ու մառախուղի օր, փողի (յոթներորդ *խորհրդանշական* փողը, որը հնչում է այս ամբողջ նեղության օրվա ընթացքում—նաև կոչվում է Աստծո փողը, քանի որ կապված է Տիրոջ այս օրվա *իրադարձությունների* հետ) և աղաղակի օր պարսպավոր քաղաքների դէմ, եվ բարձրացած աշտարակների դէմ (աղմկոտ և հակասական մեղադրանքներ ուժեղ ու լավ ամրացված կառավարությունների դեմ): Եվ ես պիտի նեղեմ մարդկանց, որ կույրերի պէս ման գան (անորոշության մեջ փնտրտուք անելով, չգիտեն՝ ինչ ուղի ընտրեն), որովհետև Եհովայի դեմ մեղանչեցին եվ նրանց արյունը պիտի

թափվի փոշիի պէս, եվ նրանց միսը՝ գոմաղբի պէս: Նրանց արծաթն էլ, նրանց ոսկին էլ չի կարող նրանց ազատել Տիրոջ բարկության օրը (թեև նախկինում հարստությունը կարող էր ապահովել հարմարավետություն և ամեն տեսակի շքեղություն), եվ նրա նախանձի կրակովը պիտի սպառվի բոլոր երկիրը, որովհետև նա պիտի վերջացնէ եվ պիտի պատուհասէ երկրի բոլոր (հարուստ) բնակիչներին: Այս կործանումը պիտի ոչնչացնի հարուստներից շատերը այն իմաստով՝ որ նրանք այլևս պիտի դադարեն հարուստ լինելուց, թեև՝ անշուշտ կհանգեցնի նաև բոլոր դասակարգերի բազմաթիվ կյանքերի կորստին (Սոփոնիա 1:14–18):

Մենք չենք փորձի մանրամասն կամ տարբեր տեսանկյուններից քննարկել մարգարեներին (այդ օրվա տանջանքների առնչությամբ), այլ կարճ կհետևենք մարգարեի վերջին արտահայտած մտքին՝ որ ամբողջ երկիրը Աստծո նախանձի կրակով կսպառվի: Մարգարեն կրկին հղում է նույն կրակին և այլն (Սոփոնիա 3:8,9), ասելով. «Ուրեմն ինձ սպասեցէք, ասում է Տէրը, մինչև իմ որսի վեր կենալու օրը. Որովհետև իմ իրավունքն է ազգերը (ժողովուրդներին), ժողովել, թագավորությունները հավաքել, որ նրանց (թագավորությունների) վրա թափեմ իմ ցասումը՝ իմ բարկության բոլոր բորբոքումը. (Բոլոր ազգերի ժողովուրդների համատեղ շահերի շուրջ համախմբումը ներկայիս կառավարությունների դեմ աճում է, և արդյունքում թագավորությունները միավորվելու են ընդհանուր անվտանգության համար, և այդպիսով տառապանքը կհասնի բոլոր թագավորություններին, և բոլորն ել կկործանվեն) Որովհետև իմ նախանձի կրակովը պիտի սպառվի բոլոր երկիրը: Այն ժամանակ (երբ Թագավորությունների կործանումը իրականացած է,երբ նեղության կրակի մեջ

ներկա հասարակական կարգը ջնջված է), ժողովուրդների շրթունքները մաքուր շրթունքներ պիտի դարձնեմ (չաղտոտված մարդկային ավանդույթներով), Որպէս զի ամէնքը Տէրոջը անունը կանչեն Ու մէկ սրտով անոր ծառայություն անեն:

Աստծո նախանձի այս կրակը խորհրդանշական է, և զորավոր իմաստ ունի, որը ներկայացնում է նեղության ու կործանումի այն սաստկությունը, որը պատելու է ողջ երկիրը: Որ այն բառացի կրակ չէ, ինչպես ոմանք են ենթադրում, ակնհայտ է նրանից, որ *մարդիկ* մնում են դրա ավարտից հետո և օրհնվում են: Որ մնացած մարդիկ սրբեր չեն, ինչպես ոմանք են ենթադրում, ակնհայտ է նրանից, որ նրանք դառնում են Տիրոջը ծառայելու համար, մինչդեռ սրբերը արդեն իսկ դարձի եկած (հավատափոխ եղած) են:

Աստվածաշնչում, երբ երկիրը խորհրդանշական իմաստով է օգտագործվում, այն ներկայացնում է հասարակությունը, լեռները՝ թագավորությունները, երկինքները՝ իշխող հոգեղեն ուժերը, ծովերը՝ աշխարհի անհանգիստ, խռովարար և դժգոհ զանգվածները: Կրակը ներկայացնում է այն ամենի ոչնչացումը, ինչ այրվում է՝ անպիտան որոմ, աղտեղություն, երկիր (հասարակական կարգ) կամ որևէ այլ բան: Եվ երբ այլաբանական լեզվով գործածված կրակի վրա ծծումբ է ավելացվում, դա սաստկացնում է ոչնչացման իմաստը, քանի որ ոչինչ այնքան մահացու չէ կյանքի բոլոր ձևերի համար, որքան ծծումբի ծուխը:

Այս միտքը աչքի առջև ունենալով, երբ ուշադրություն ենք դարձնում բարկության օրվա մասին Պետրոսի ընծայած այլաբանական մարգարեությունը, տեսնում ենք, որ այն ամբողջությամբ համընկնում է վերոհիշյալ

մարգարեների վկայության հետ: Նա ասում է. «Դրա համար այն ժամանակվա աշխարհը ջրհեղեղով կորսվեց (բառացի երկինքն ու երկիրը չէին դադարել գոյություն ունենալ, այլ այն տնօրենությունը (բաների կարգը), որը գոյություն ուներ ջրհեղեղից առաջ)»: Եվ այժմյան երկինքը եվ երկիրը (տնօրենությունը) նույն խոսքով [աստվածային իշխանության խոսքով] պահվում են կրակի համար դատաստանի և ամբարիշտ մարդկանց կորստյան օրումը»: Այն փաստը, որ ջուրը բառացի էր, որոշները մտածում են, որ կրակը նույնպես պետք է բառացի լինի, որը սակայն անհիմն է: Աստծո տաճարը մի ժամանակ բառացի քարերից էր, սակայն դա չի հերքում այն փաստը, որ Եկեղեցին, որը իրական տաճարն է, կառուցված է որպես հոգեղեն շինություն, սուրբ տաճար, ոչ երկրային նյութերից: Նոյի տապանը նույնպես բառացի էր, սակայն այն խորհրդանշում էր Քրիստոսին և Նրա մեջ եղած զորությանը, որով կվերականգնի և կկազմակերպի մարդկային հասարակությունը:

«Տիրոջ օրը գիշերվա գողի պես կգա (աննկատ), որի ժամանակ երկինքը [ներկայիս մթնոլորտի իշխանությունները, որոնց գլուխը կամ իշխանը Սատանան է] սաստիկ [շառաչյունով] կանցնեն, ու տարերքները բռնկած պիտի լուծվին» երկիրը [հաստատված կարգը] նույնպես, և այնտեղ գտնվող գործերը [հպարտություն, տիտղոս, արիստոկրատիա, թագավորություն], այրվելու են: Երկինքը, կրակով այրված պիտի լուծվի, ու տարերքները բռնկած պիտի հալվին: Սակայն իր խոստման համեմատ, կսպասենք նոր երկնքի (հոգեղեն նոր իշխանություն՝ Քրիստոսի թագավորություն) և նոր երկրի [երկրային հասարակություն, կազմակերպված սիրո և արդարության նոր հիմքի վրա (Բ Պետրոս 3:6,7,10-13):

Պետք է հիշել, որ առաքյալներից ոմանք նույնպես մարգարեներ էին՝ հատկապես Պետրոսը, Հովհաննեսը և Պողոսը: Եվ մինչ որպես առաքյալներ նրանք Աստծո գործիքներն էին՝ Եկեղեցու օգտին նախորդ մարգարեների խոսքերը մեկնաբանելու համար, նրանք նաև որպես մարգարեներ ծառայեցին Աստծո կողմից՝ գալիք բաները կանխատեսելու համար, որոնք, երբ գա դրանց կատարման ժամանակը, դառնում են ժամանակահարմար սնունդ հավատքի ընտանիքի համար, և որոնց բաշխման համար Աստված իր ժամանակին բարձրացնում է համապատասխան ծառաներ կամ մեկնիչներ: (Տես մեր Տիրոջ այս փաստի վերաբերյալ հայտարարությունը՝ Մատթ. 24:45,46) Առաքյալները որպես մարգարեներ ներշնչված էին գրելու այնպիսի բաներ, որոնց գործածության ժամանակը հեռու էր և նրանք կարող էին միայն թերի գնահատել դրանք, ինչպես եղավ Հին Կտակարանի մարգարեների դեպքում (Ա Պետրոս 1:12,13): Նրանց խոսքերը (ինչպես մարգարեների խոսքերը) հատուկ առաջնորդվել և ուղղորդվել են Տիրոջ կողմից, որպեսզի դրանք ունենային խորը իմաստ, որին նրանք չէին կարող թափանցել: Այսպիսով, ընդգծվում է, որ Եկեղեցին միշտ Աստծո կողմից է առաջնորդվում և սնվում, անկախ նրանից, թե ովքեր են նրա խոսափողները կամ հաղորդակցության միջոցները: Սրա գիտակցումը պետք է հանգեցնի Աստծո Խոսքի նկատմամբ ավելի մեծ վստահության և հույսի, անգամ եթե նրա որոշ խոսափողներ անկատար են:

Մաղաքիա Մարգարեն (4:1), խոսելով Տիրոջ օրվա մասին, օգտագործում է նույն խորհրդանիշը: Նա ասում է. «Որովհետև ահա գալիս է այն օրը՝ վառվող, ինչպես հնոցը, երբ բոլոր գոռոզներն ու չարագործները հարդ են լինելու, և նրանց այդ եկող օրը պիտի այրի, - ասում է

Զորքերի Տերը, - արմատ և ոստ չի թողնելու»: Հպարտությունը և այն ամեն պատճառները, որտեղից կարող են ծագել գոռոզություն և բռնապետություն, ամբողջությամբ ոչնչացվելու են Տիրոջ օրվա մեծ նեղությամբ և հետագա հազարամյա դարի պատիժներով, որոնցից վերջինը նկարագրված է Հայտնություն 20:9-ում:

Եվ թեև հպարտությունը (իր բոլոր մեղսավոր և զզվելի երևույթներով) պետք է ամբողջությամբ արմատախիլ արվի, և բոլոր հպարտներն ու ամբարիշտները պետք է ամբողջությամբ ոչնչացվեն, սակայն դրա չի նշանակում, որ այս դասակարգի պատկանողների համար բարեփոխվելու հույս չկա: Մենք շնորհակալ ենք Աստծուն, որ այդպես չէ: Մինչ այս Աստծո արդար բարկության կրակը բոցավառվում է, Դատավորը հնարավորություն կտա *ոմանց լափող կրակից ազատվելու* (Հուդա 23): Եվ միայն նրանք, ովքեր մերժեն այս օգնությունը, կկործանվեն իրենց գոռոզության հետ միասին, քանի որ այն դարձրել են իրենց բնավորության մի մասը և չեն ուզում ուղղվել:

Միևնույն մարգարեն այս օրվա մասին մեկ այլ նկարագրություն է տալիս (Մաղ. 3:1-3), որտեղ կրկին՝ կրակի խորհրդապատկերով, ցույց է տալիս, թե ինչպես *Աստծո զավակները պիտի* մաքրվեն, օրհնվեն և նրա մոտ բերվեն, իրենց մոլորության աղտեղությունների ջնջվելու միջոցով: «Ուխտի պատգամաբերը, որին դուք հավանում եք, ահա գալիս է,- ասում է Զորքերի Տերը»: Ո՞վ կարող է դիմանալ նրա գալու օրվան, և նրա երևալու ժամանակ ո՞վ կարող է կանգուն մնալ. (փորձության առջև) որովհետև նա զտողի կրակի պես է … Եվ նա նստելու է իբրև արծաթ զտող և մաքրող: ՈՒ Ղևիի որդիներին (որոնք պատկերացնում են հավատացյալներին, և որոնց

գլխավոր դասակարգը Թագավորական Քահանայությունն է) պիտի մաքրե, և նրանց զտելու է ոսկու և արծաթի պես, որպեսզի նրանք Տիրոջը արդարությամբ ընծա մատուցանողներ լինեն:

Պողոսը հղում է անում նույն կրակին և այս զտման գործին, որին պիտի ենթարկվեն հավատացյալները Տիրոջ օրվա մեջ (Ա Կորնթ. 3:12–15) և նա դա անում է այնպես, որ ոչ մի կասկած չմնա, որ խորհրդանշական կրակը ոչնչացնելու է ամեն մոլորություն և այդպիսով նպաստելու է հավատքի մաքրագործմանը: Բացատրելով, որ նա խոսում է միայն նրանց մասին, ովքեր իրենց հավատը կառուցում են միակ ընդունված հիմքի վրա՝ Հիսուս Քրիստոսի կատարած փրկագործության վրա, առաքյալն ասում է՝ «Եթէ մէկն այս հիման վրա շինէ ոսկի, արծաթ, ազնիվ քարեր, (Աստվածային ճշմարտություններ և նրանց համապատասխան նկարագիր) փայտ, խոտ, եղէգ. (ավանդական մոլորություններ և նրանց համապատասխան նկարագիր) Ամեն մէկի գործը պիտի հայտնվի. որ օրը կերեվեցնէ. որովհետեւ կրակով պիտի հայտնվի. եվ ամեն մէկի գործը թէ ինչպէս է, կրակը կփորձէ»: Անտարակույս, ամենանախապաշարյալ միտքն անգամ կհամաձայնի և կնդունի, որ այն կրակը, որը այրում է (փորձում է) հոգեղեն գործը, ոչ թե բառացի կրակ է, այլ կրակը հարմար խորհրդանիշ է՝ ներկայացնելու այստեղ փայտի, խոտի և եղեգի խորհրդանշած պայմանների ամբողջական ոչնչացումը: Այս կրակը անզոր կլինի ոչնչացնելու հավատի և բնավորության կառույցը, որը կառուցված է աստվածային ճշմարտության ոսկիով, արծաթով և թանկագին քարերով և հիմնված է Քրիստոսի փրկող զոհագործության վեմի վրա:

Առաքյալը սա ցույց է տալիս, ասելով. «Եթէ մէկի գործը՝ որ շինեց՝ [Քրիստոսի վրա], հաստատ կենա, վարձք կառնէ» (Իր վարձքը կառուցումի գործի ճշմարիտ նկարագիր զարգացնելու մեջ, ճշմարտության գործածության և Աստծո ամբողջ զրահը հագնելու մեջ ցուցադրած հավատարմության համեմատ պիտի լինի] Եւ եթէ մէկի գործն այրուի՝ վնաս կ'քաշէ [վարձատրության կորուստ՝ անհավատարմության պատճառով), բայց ինք պիտի ազատի, սակայն այնպէս՝ իբր թէ կրակի մէջէն ելած է:» — այրված, խանձված և սարսափած: Բոլոր նրանք, ովքեր կառուցում են Քրիստոսի փրկանքի ժայռի պես ամուր հիմքի վրա, անվտանգ և ապահով կլինեն: Նրա արդարության ծածկույթի ներքև ապավինողներից և ոչ մեկը վերջնական ամօթի առարկա չի լինի: Բայց բոլոր նրանք, ովքեր կամավոր մերժում են Նրան և Նրա գործը, հստակ ու ամբողջական գիտելիք ձեռք բերելուց հետո, ենթակա կլինեն երկրորդ մահվան. (Եբր. 6:4–8, 10:26–31):

Տիրոջ օրվա այս նեղությունը ուրիշ խորհրդաբանական ձևով նույնպես նկարագրված է: Առաքյալը ցույց է տալիս որ Սինա Լեռան վրա Օրենքի ուխտի բացումը պատկերն էր աշխարհում Նոր Ուխտի ներդրմանը որը տեղի կունենա հազարամյա դարի կամ Քրիստոսի թագավորության սկզբում: Նա ասում է, որ Աստծո ձայնը այն ժամանակ երկիրը շարժեց, և հիմա խոստացել է և ասում է. «թէ Մյուսանգամ եվս կշարժեմ, (վերջին անգամ) ոչ միայն երկիրը բայց երկինքն էլ»

(Եբր. 12:26–29): Այս մասին Առաքյալը բացատրում է՝ ասելով. «Այս՝ Մյուս անգամ արտահայտությունը նշանակում է, այն ամենի հեռացում, ինչը շարժվում է՝ որպես շինված (կեղծ, խաբեական, անճիշտ) բաներ, որպեսզի անշարժ, (ուղիղ, արդար) բաները հաստատուն

մնան»: Ուստի անշարժ թագավորություն ընդունած լինելով, պինդ բռնենք այն շնորհքը որով պաշտում ենք հաճութեամբ Աստուծուն, ահով եւ երկիւղածութեամբ: (ինչպես գրված է), «Մեր Աստվածը մաշող կրակ է»: Այսպիսով մենք տեսնում ենք, որ առաքյալը փոթորիկն է օգտագործում՝ պատկերացնելու Տիրոջ օրվա նեղությունները, մինչդեռ ինքն և ուրիշներ տարբեր տեղեր կրակի խորհրդանշանն են գործածում: Այստեղ նշվում են նույն իրադարձությունները, որոնք մեկ այլ տեղ նկարագրվում են կրակի խորհրդանշանով՝ բոլոր կեղծիքների հեռացումը թե՛ հավատացյալներից, թե՛ աշխարհից՝ սխալ պատկերացումներ Աստծո ծրագրի, բնավորության և Խոսքի վերաբերյալ, ինչպես նաև սխալներ աշխարհում սոցիալական և քաղաքացիական հարցերի առնչությամբ: Իրոք, բոլորի համար լավ կլինի ազատվել այս կեղծիքներից, որոնք մարդու մոտ մեծապես հայտնվել են նրա սեփական ապականված ցանկությունների և արդարության նենգ թշնամի՝ Սատանայի խորամանկ հնարքների շնորհիվ, սակայն բոլոր ներգրավվածների համար մեծ գին կպահանջվի, որպեսզի դրանք հեռացվեն: Դա կլինի սարսափելի բոցավառ կրակ, ահավոր փոթորիկ, տառապանքի խավար գիշեր, որը նախորդելու է արդարության այն Թագավորության փառավոր պայծառությանը, որը երբեք չի դողդողա, այն հազարամյա օրը, երբ Արդարության Արեգակը կշողա փառքով ու զորությամբ, օրհնելով ու բուժելով հիվանդ ու մեռնող, սակայն փրկագնված աշխարհը (տես Մաղ. 4:2 և Մատթ. 13:43):

Դավիթ մարգարեն՝ որի Սաղմոսներով Աստված հաճեց կանխահայտնություններ անել մեր Տիրոջ առաջին գալստյան նկատմամբ, տալիս է այս նեղության օրվա վառ նկարագրություններ, որոնցով կսկսվի նրա փառավոր

տիրապետությունը, և նա իր նկարագրություններում հերթով և փոփոխակիորեն օգտագործում է այս տարբեր պատկերները՝ կրակը, փոթորիկը և խավարը, Օրինակ, նա ասում է (Սաղմոս 50:3): «Մեր Աստվածը գալու է, և նա չի լռելու: Նրա առջևում լափող կրակ է, Իսկ նրա շուրջը՝ սաստիկ փոթորիկ» Սաղմոս 97:2–6 -ում ասվում է. «Ամպ ու մառախուղ կա նրա չորս կողմը, արդարությունը և իրավունքը նրա գահի հիմքերն են: Կրակ է գնում նրա առջևից և այրում է նրա չորս կողմը եղած թշնամիներին: Նրա փայլակները լուսավորում են աշխարհը. երկիրը տեսնում է և դողում: Սարերը մոմի պես հալվում են նրա ներկայությունից. ամբողջ երկիրը՝ նրա ներկայությունից: Երկինքը հռչակում է նրա արդարությունը, և բոլոր ժողովուրդները տեսնում են նրա փառքը»: Սաղմոս 46:6 «Հեթանոսները խռովվեցին, և թագավորությունները շարժվեցին. նա ձայն տվեց, և երկիրը հալվեց» Սաղմոս 110:2–6. «Տիրիր քո թշնամիների մեջ… Տերը քո աջ կողմում է. նա իր բարկության օրը կջարդի թագավորներին, Նա կդատի հեթանոսներին, մեռելներով կլցնի երկիրը, և շատ երկրների մեջ կջարդի գլուխները»: (Սաղմոս 46:1-5), «Աստված ապավեն և զորություն է մեզ համար… Դրա համար էլ չենք վախենա, թեկուզև երկիրը [հասարակություն] ցնցվի, և լեռները [թագավորությունները] գցվեն ծովի մեջտեղը (խառնաշփոթ զանգվածների կողմից կուլ տրվեն), Թէեվ անոր ջուրերը գոռան ու պղտորին…» Աստուած օգնութիւն կանէ նրան [Հարսին, հավատարիմ «փոքր հոտին»] առավօտանց կանուխ: Եվ նույն սաղմոսի 6–10-րդ համարներում նույն պատմությունը ներկայացվում է այլ խորհրդանիշներով՝ «Հեթանոսները խռովվեցին, և թագավորությունները շարժվեցին. նա ձայն տվեց, և երկիրը [հասարակությունը] հալվեց. Զօրաց Տէրը մեզ հետ

է. Հակոբի Աստուածը մեզ համար ապաստան է»: Հետո, այս նեղության ժամանակի հետևանքները նկատի ունենալով, նա ավելացնում է. «Եկե՛ք և տեսե՛ք Տիրոջ գործերը, որ ավերներ է անում երկրի վրա … Դադարեցէք [ձեր նախկին ճանապարհներից, ո՛վ ժողովուրդներ] եվ ճանաչեցէք [գիտակցության եկեք] որ ես եմ Աստված: Ես կմեծարվեմ ազգերի մեջ Եվ կմեծարվեմ երկրի վրա» «Նոր երկիրը», կամ մարդկային հասարակության վերակազմյալ կարգերն ու կարգադրությունները, պիտի բարձրացնեն Աստծուն և նրա օրենքը, ամենից վեր:

Մեկ այլ վկայություն, որը հաստատում է այն տեսակետը, որ Տիրոջ օրը լինելու է մեծ տագնապի և ամեն տեսակի չարի ոչնչացման օր (սակայն *ոչ* երկրի բառացի այրման ժամանակ), ներկայացվում է Աստվածաշնչի վերջին խորհրդանշական մարգարեության մեջ: Այս ժամանակին, երբ Տերը կվերցնի իր մեծ զորությունը տիրելու համար, *փոթորիկն* ու *կրակը* այսպես են նկարագրվում՝ «Ազգերը զայրացան, և վրա հասավ քո բարկությունը» (Հայտնություն 11:17–18): Եվ կրկին՝ «Եւ նորա բերանիցը դուրս է գալիս սրած սուր, որ նորանով զարկէ ազգերին. եւ ինքը հովուում է նորանց երկաթէ գաւազանով. եւ ինքը կոխում է Ամենակարող Աստուծոյ բարկութեան եւ սրտմտութեան գինու հնձանը....» Եվ տեսա գազանին [խորհրդանշական], Եւ տեսայ գազանը եւ երկրի թագաւորները եւ նորանց զօրքերը մէկ տեղ ժողովուած որ պատերազմ անեն ձիին վերայ նստողի հետ եւ նորա զօրքերի հետ: Եւ գազանը բռնուեցաւ, եւ նորա հետ սուտ … եւ երկուսն էլ կենդանի կենդանի գցուեցան կրակի լիճի մէջը որ ծծմբով այրվում է (Հայտնություն 19:15,19):

Այստեղ մենք չենք կարող շեղվել մեր թեմայից՝ քննելու այս խորհրդանշանները՝ «գազան», «սուտ մարգարե», «պատկեր», «կրակի լիճ», «ձի» և այլն: Այս նպատակով ընթերցողին ուղղորդում ենք հաջորդ հատորին: Հիմա ուզում ենք ձեր ուշադրությունը հրավիրել այն հանգամանքին, որ մեծ խորհրդանշական ՊԱՏԵՐԱԶՄԸ և ներկա դարի ավարտին տեղի ունենալիք երկրի խաղողի հունձքը (որոնք, ըստ նկարագրության, ավարտում են ներկա դարը և սկիզբ դնում հազարամյա դարաշրջանին (Հայտնություն 20:1–3) տարբեր տեսակ խորհրդապատկերներ են, որոնք պարզապես մեծ ու ահազանգող իրադարձությունների այլ խորհրդապատկերներ են, որոնք այլուր խորհրդանշորեն կոչվում են կրակ, փոթորիկ, երկրաշարժ և այլն (Հայտնություն 20:1-3): Հայտնության գրքում պատկերված պատերազմի և գինու հնձանի պատկերների համատեքստում նկատելի է զարմանալի ներդաշնակություն Հովել 2:9–16-ի և Եսայիա 13:1–11-ի միջև, որոնք նույն իրադարձությունները նկարագրում են նմանատիպ պատկերներով: Խորհրդանշական պատկերների բազմազանությունը օգնում է ավելի լիովին գնահատել Տիրոջ մեծ ու նշանավոր օրվա բոլոր առանձնահատկությունները:

Ներկա իրավիճակը

Մենք տեսնում ենք «Եհովայի օրվա» մեծ տառապանքի բնական պատճառը: Անձնական շահախնդրությունն ու միայն իրենց շահերին հետևող կուրությունը կկառավարեն հարցի երկու կողմերի մեծամասնությանը: Աշխատավարձով աշխատողները կկազմակերպվեն և կմիավորեն իրենց շահերը, սակայն անձնական շահախնդրությունը կխաթարի միությունը, և

ամեն մեկը, այդ եսասիրությունից մղված, այդ ուղղությամբ դավ կնյութի: Տգետ ու գոռոզ մեծամասնությունը պիտի իշխե, իսկ բարձր դասակարգը անզոր կլինի սանձելու այն: Կապիտալիստները կհամոզվեն, որ որքան շատ զիջեն, այնքան ավելի շատ պահանջներ կհնչեն, և շուտով կորոշեն չընդունել որևէ պահանջ: Արդյունքում բռնկվելու է ապստամբություն, ընդհանուր վախի և անվստահության մթնոլորտում կապիտալը դուրս կհանվի պետական և մասնավոր ձեռնարկություններից, և կհետևի տնտեսական անկում ու ֆինանսական պանիկա: Հազարավոր մարդիկ, այսպես աշխատանքից զրկված, ի վերջո կդառնան հուսահատ: Այնժամ օրենքն ու կարգուկանոնը ոտնակող կլինեն — լեռները պիտի ընկղմվին այս փոթորկահույզ ծովի մեջ: Այսպիսով սոցիալական երկիրը կհալվի, իսկ կառավարական երկինքը (եկեղեցական և քաղաքական իշխանությունը) կանցնի, և բոլոր հպարտները, և բոլոր ամբարիշտները, հարդի պես կլինեն: Այնժամ զորավոր մարդիկ դառնապես կլացեն, հարուստները կոռնան, և բոլոր բազմության վրա կտիրի վախ ու տագնապ: Նույնիսկ այժմ իմաստուն, հեռատես մարդկանց սրտերը նվաղում են, երբ մտածում են աշխարհի վրա գալիք այդ իրադարձությունների մասին, ինչպես մեր Տերը կանխատեսել էր (Ղուկաս 21:26): Սուրբ Գիրքը ցույց է տալիս, որ այս ընդհանուր խափանման ժամանակ անվանական եկեղեցին (ներառյալ բոլոր հարանվանությունները) աստիճանաբար ավելի ու ավելի կձգվի կառավարությունների և հարուստների կողմը, և այդպիսով կկորցնի ժողովրդի վրա ունեցած մեծ ազդեցությունը և վերջապես կտապալվի կառավարությունների հետ միասին: Այսպես երկինքները

[եկեղեցական իշխանությունը], կրակի մեջ լինելով՝ մեծ շառաչյունով պիտի անցնի:

Այս սոսկալի նեղությունը միայն կնախապատրաստեն աշխարհին հասկանալու, որ թեև մարդիկ կարող են պլանավորել և կազմակերպել ամենայն խելքով ու իմաստությամբ, նրանց բոլոր ծրագրերը ապարդյուն կլինեն այնքան ժամանակ, քանի դեռ անտեղյակությունն ու անձնապաշտությունը իշխանության ղեկին են և վերահսկողություն ունեն: Դա բոլորին կհամոզի, որ դժվարությունը շտկելու միակ իրագործելի ճանապարհը հզոր ու արդար կառավարության հաստատումն է, որը կհպատակեցնի բոլոր դասակարգերին և կիրականացնի արդարության սկզբունքները, մինչև որ աստիճանաբար մարդկանց քարացած սրտերը բարենպաստ ազդեցությունների ներքո զիջեն տեղը Աստծո սկզբնական պատկերին: Եվ հենց սա է այն, ինչ Աստված խոստացել է իրականացնել բոլորի համար՝ Քրիստոսի հազարամյա թագավորության միջոցով, որը Եհովան կիրականացնի այս նեղության օրվա պատիժների և դասերից հետո (Եզեկիել 11:19, 36:25,36, Երեմիա 31:29–34, Սոփոնիա 3:9, Սաղմոս 46:8–10):

Թեև այս նեղության օրը մարդու ընկած ու եսասեր վիճակի բնական և անխուսափելի հետևանք է, որը լիովին նախատեսված և քարոզված էր Տիրոջ կողմից, ով գիտեր, որ իր օրենքներն ու խրատները անտեսվելու են բոլորից, բացի մի քանիսից, մինչև փորձառությունը և հարկադրանքը ստիպեն ենթարկվել, սակայն, բոլոր նրանք, ովքեր գիտակցում են գալիք իրադրությունը, պետք է համապատասխանաբար կարգավորեն իրենց և իրենց գործերը: Այսպիսով մենք ասում ենք բոլոր *խոնարհներին*՝ աշխարհի խոնարհներին, ինչպես նաև

Քրիստոսի մարմնին. «Տէրը փնտռեցէ՛ք, ո՛վ երկրի բոլոր խոնարհներ: Դուք որ անոր օրէնքը (Նրա կամքը), կը գործադրէք, Արդարութի՛ւն փնտռեցէք, խոնարհութի՛ւն փնտռեցէք, Թերեւս Տէրոջը բարկութեան օրը ծածկուիք» (Սոփ. 2:3): Ոչ ոք ամբողջությամբ չի խուսափի նեղությունից, սակայն արդարություն փնտրողներն ու խոնարհություն սիրողները շատ առավելություններ կունենան մյուսների նկատմամբ: Նրանց կենսակերպը, մտածողության ու գործելու կերպը, ինչպես նաև արդարության հանդեպ նրանց համակրանքը, որը թույլ կտա նրանց հասկանալ իրավիճակը և գնահատել Աստվածաշնչում ներկայացված այս նեղության և դրա արդյունքի նկարագրությունը, բոլորը միասին կնպաստեն, որ նրանք մյուսների համեմատ ավելի քիչ տառապեն՝ հատկապես հալածող վախերից ու կանխազգացումներից:

Տիրոջ օրվա այս իրադարձությունների ընթացքը շատ խաբէական կլինի նրանց համար, ովքեր Սուրբ Գրքով տեղեկացված չեն: Համեմատած անցյալ երկար դարերի դանդաղ ընթացքի հետ այն կգա հանկարծակի, ինչպես որ կրակը այրում է հարդը (Սոփհ. 2:2), սակայն ոչ այնպես հանկարծակի, ինչպես փայլակը շողում է պարզ երկնքում, ինչպես սխալմամբ սպասում են նրանք, ովքեր կարծում են, որ Տիրոջ օրվա վերաբերյալ գրված ամեն ինչ կկատարվի քսանչորս ժամում: Այն կգա «գիշերվա գողի պես», այսինքն՝ նրա մերձեցումը կլինի գաղտագողի և ընդհանուր առմամբ աշխարհի համար աննկատելի պիտի լինի: Այս օրվա նեղությունը սարսուռների և ցնցումների շարք պիտի լինեն, որոնք օրը մոտենալիս կդառնան ավելի հաճախակի և ավելի ուժգին, մինչև գա վերջինը: Առաքյալը հենց այս գաղափարն է տալիս, երբ ասում է՝ *«ինչպես երկունքը՝ հղի կնոջ վրա»* (Ա Թես. 5:2,3):

Ազատումը կգա միայն նոր կարգի ծնունդով—նոր երկինք (Քրիստոսի հոգեղեն իշխանությունը) և նոր երկիր (վերակազմավորված մարդկային հասարակություն), որտեղ բնակվում է արդարություն (Բ Պետ. 3:10,13), որտեղ Արդարության սիրո օրենքը պիտի տիրապետի՝ եսասիրության փոխարեն:

Իսրայելի ազատվելը Եգիպտոսից և եգիպտացիների վրա եկած պատուհասներից կարծես պատկերավորում է աշխարհի գալիք ազատագրումը Մովսեսից ավելի մեծի ձեռքով, որի պատկերն էր Մովսեսը: Դա ազատագրություն կլինի Սատանայից և նրա բոլոր հնարքներից, որոնք նա հորինել է մարդկությանը ստրկացնելու և մեղքի ու սխալի մեջ գցելու համար: Եվ ինչպես Եգիպտոսի վրա եկած պատուհասները, հենց որ դրանք վերացան, մարդկանց սրտերը կարծրացրին, այնպես էլ Տիրոջ օրվա ցավերից ժամանակավոր թեթևացումը կդարձնի ոմանց սրտերը կարծր, և նրանք աղքատներին կասեն, ինչպես եգիպտացիները՝ Իսրայելին. «Դուք ծույլ եք», և դրա համար դժգոհ եք ու, հավանաբար, եգիպտացիների պես, կփորձեն խեղճ ժողովրդի բեռը ծանրացնել (Ելք 5:4–23): Եվ ինչպես փարավոնը իր ամենավերջին պատուհասի կեսգիշերը, դառնապես զղջաց, սրանք էլ ի վերջո պիտի մեղմանան՝ ափսոսալով որ ավելի մեղմությամբ և իմաստությամբ չեն վարվել (Ելք 12:30–33): Նմանությունը ավելի ընդգծելու համար հիշենք, որ Տիրոջ օրվա նեղությունները կոչվում են «բարկության յոթ սկավառակներ» կամ «վերջին յոթ պատուհասներ», և միայն դրանց վերջինի ժամանակ է տեղի ունենում *մեծ երկրաշարժը* (հեղափոխությունը), երբ ամեն լեռ (թագավորություն) կանհետանա (Հայտնություն 16:17–20):

Անվիճելի փաստարկ, որը ապացուցում է, որ սա Աստծո նախանշած ժամանակն է նոր կարգի ներդրման համար, այն է, որ Նա բարձրացնում է տգիտության քողը և աստիճանաբար թույլ է տալիս, որ իմացության և հայտնագործության լույսը շողա մարդկության վրա այն ձևով, այն ժամանակ և այն հետևանքներով, որոնք կանխատեսված էին (Դանիել 12:4,1) Եթե գիտությունը շուտ գար, նեղությունը նույնպես շուտ կգար, և թեև հասարակությունը կարող էր վերակազմավորվել իր փոթորկից և քայքայումից հետո, դա *չէր* լինի նոր երկիր [հասարակական կարգ], որտեղ արդարությունն է տիրապետում և բնակվում, այլ նոր երկիր կամ կարգ, որտեղ մեղքն ու չարիքը շատ ավելի կբազմապատկվեին, քան այժմ: Աշխատանքի խնայող մեքենաների օգուտների արդար բաշխումը ժամանակի ընթացքում կհանգեցներ աշխատանքային ժամերի կրճատմանը՝ դրանք դարձնելով ավելի ու ավելի կարճ, և այդպիսով, սկզբնական պաշտպանությունից ազատված ընկած մարդը, իր խեղաթյուրված ճաշակով, չէր օգտագործի իր ազատությունն ու ժամանակը մտավոր, բարոյական և ֆիզիկական կատարելագործման համար, այլ, ինչպես ապացուցում է անցյալի պատմությունը, կմխրճվեր մոլորության և ապականության մեջ:

Տգիտության ծածկոցի մասնակի բարձրացումը *այժմ* մարդկության համար հազարավոր հարմարություններ է ստեղծում և, այդպիսով, վերահաստատման դարի սկսվելուջ առաջ տրամադրում է միջոցներ կրթության, բարոյական և ֆիզիկական զարգացման, ինչպես նաև գերեզմանից ժամանակ առ ժամանակ դուրս ելնող խմբերի սննդի և հագուստի ապահովման նախապատրաստման համար: Բացի այդ, այն նեղության ժամանակը տեղի կունենա այն ժամանակ, երբ դա

կծառայի մարդկության օգտի համար, սովորեցնելով նրանց՝ որ մարդը անընդունակ է ինքնավարության ու սա տեղի է ունենալու Հազարամյայի առավոտը սկսված է, երբ Նա, ով բոլորին փրկեց՝ սկսելու է օրհնել նրանց երկաթե գավազանի անբեկանելի կանոնով և այն կատարյալ գիտությամբ ու օգնությամբ, որոնց շնորհիվ նրանք կարող են վերահաստատվել սկզբնական կատարելությանը և հավիտենական կյանքին:

Սրբերի Պարտքն ու Արտոնությունը

Այս նեղության ընթացքում սրբերի պարտականության և ներկայումս առաջացող երկու հակադիր դասակարգերի նկատմամբ նրանց ճիշտ դիրքորոշման վերաբերյալ առաջ է գալիս կարևոր հարց: Թվում է հավանական, որ որոշ սրբեր առնվազն այս տառապանքի մի մասի ընթացքում դեռ մարմնի մեջ կլինեն: Նրանց դիրքը դրա մեջ, սակայն, կտարբերվի մյուսների դիրքից ոչ այնքան այն պատճառով, որ նրանք հրաշքով կպահպանվեն (չնայած հստակ խոստացված է, որ նրանց հացն ու ջուրը անպակաս կլինեն), այլ այն պատճառով, որ Աստծո Խոսքից հրահանգված լինելով, նրանք չեն զգա նույն անհանգստությունն ու հուսահատ վախը, որը կծածկի աշխարհը: Նրանք նեղությունը կճանաչեն որպես Աստծո ծրագրի համաձայն ամբողջ աշխարհը օրհնելու նախապատրաստություն և ամբողջ ընթացքում կստանան զվարթություն ու սփոփանք: Սա հստակ պատկերված է Սաղմոս 91-ում և Եսայիա 33:2–14, 15–24-ում:

Այսպես, Աստվածային հավաստիքով մխիթարված և օրհնված՝ սրբերի առաջին պարտականությունն է ցույց տալ աշխարհին, որ բոլոր տիրող նեղությունների և դժգոհությունների մեջ, անգամ երբ նրանք կիսում են այդ

նեղությունները և տառապում դրանց տակ, հուսալից և զվարթ են, և միշտ Աստծո Խոսքով կանխատեսված փառավոր վախճանին ի՝ տես կիրճվին:

Առաքյալը գրել է, որ «Աստվածապաշտությունը գոհունակության հետ միասին մեծ շահ է»: Եվ թեև սա միշտ էլ ճշմարտություն է եղել, այն կրկնակի ուժ կունենա ներկայիս, Տիրոջ օրվա մեջ՝ երբ աշխարհի բոլոր դասակարգերի գլխավոր թերությունը դժգոհությունն է: Սակայն սուրբերը մյուսների աչքառու բացառությունը պիտի կազմեն: Երբեք չի եղել այնպիսի ժամանակ, երբ դժգոհությունը այդքան լայն տարածում ունենար, և միևնույն ժամանակ երբեք չի եղել այնպիսի ժամանակ, երբ մարդիկ վայելեին այդքան շատ շնորհներ ու օրհնություններ: Որտեղ էլ նայենք՝ լինի հարուստների պալատներում, հարմարություններով ու շքեղություններով լեցուն, որոնց մասին Սողոմոնը իր ամբողջ փառքով գրեթե ոչինչ չէր իմացել, թե խնայող ու զուսպ աշխատավորի հարմարավետ տանը, որտեղ ակնհայտ են ճաշակի, հարմարավետության, արվեստի ու շքեղության նշանները, տեսնում ենք, որ ներկայիս ժամանակը բազմապատիկ առատությամբ գերազանցում է ստեղծման օրերից ի վեր եղած ցանկացած այլ դարաշրջանին, և այնուամենայնիվ մարդիկ *դժբախտ* ու դժգոհ են: Փաստն այն է, որ եսասեր, ապականված սրտի ցանկությունները սահմաններ չեն ճանաչում: Շահախնդրությունը այնքան է տիրել բոլորի վրա, որ, երբ նայում ենք, տեսնում ենք որ ամբողջ աշխարհը հարստության տիրանալու հիմարական և խելագար խուճապի ու վազքի մեջ է: Միայն մի քանիսն են հաջողության հասնում, մյուսները նախանձում են և դառնացած են, որովհետև նրանք բախտավորների թվում չեն, և բոլորը դժգոհ ու դժբախտ են՝ ավելի քան երբևէ:

Սուրբերին անվայել է այդ պայքարին մասնակցել, որովհետև իրենց նվիրումի ուխտը այն էր թե՝ իրենք ավելի բարձր ու երկնային մրցանակի տիրացման համար պիտի վազեն, ուստի նրանք հրաժարվում են երկրային փառասիրական ձգտումներից և պատճաշ ու պիտանի իրեր հայտատելուց զատ, չեն աշխատում ուրիշ աշխարհային բաների համար, որովհետև նրանք ուշադրություն են դարձնում Ուսուցչի և առաքյալների ընթացքին ու օրինակին:

Ուստի նրանք *գոհ* են իրենց աստվածապաշտությամբ, ոչ թե այն պատճառով, որ նրանցում չկա ձգտում, այլ որովհետև նրանց ձգտումները երկինք է ուղղված և հոգով ու սրտով ձգտում են գանձ դիզել երկնքում, և Աստծով հարուստ լինեն: Այս հանգամանքների և Աստվածաշնչում հայտնված ծրագրերի գիտության շնորհիվ նրանք գոհ են Աստծո կողմից տրված ցանկացած երկրային բարիքի համար:

Բայց, ավաղ, ոչ բոլոր Աստծո զավակներն են գտնվում այս դիրքի մեջ: Շատերը ընկել են աշխարհում տիրող դժգոհության մեջ և զրկում են իրենց իրական կյանքի հաճույքներից, քանի որ լքել են Տիրոջ ճամբաները և իրենց բաժինն ու վիճակն են կապում աշխարհի հետ՝ *ձգտելով* աշխարհային բաների, անկախ նրանից՝ կհասնեն դրանց թե ոչ, կիսելով աշխարհի դժգոհությունը և չկարողանալով հասկանալ այն գոհունակությունն ու խաղաղությունը, որը աշխարհը ոչ կարող է տալ, ոչ էլ խլել:

Այս պատճառով մենք սրբերին հորդորում ենք հրաժարվել ագահության և սնափառության պայքարից ու դրանցից բխող դժգոհությունից և ձգտել ավելի բարձրագույն հարստություններ ու դրանց պարգևած

խաղաղությանը: Մենք նրանց հիշեցնում ենք Առաքյալի խոսքերը՝

«Սակայն աստվածապաշտությունը գոհունակության հետ միասին մեծ շահ է: Որովհետև ոչինչ չենք բերել այս աշխարհ և ոչինչ էլ չենք կարող տանել: Ուտելիք և հագուստ ունենք, դրանցով բավարարվենք: Իսկ ովքեր ուզում են հարստանալ, փորձության, որոգայթի և բազում անմիտ, վնասակար ցանկությունների մեջ են ընկնում, որոնք մարդկանց ընկղմում են կործանումի և կորստյան մեջ: Որովհետև արծաթասիրությունը բոլոր չարիքների արմատն է, որին ձգտելով՝ ոմանք հավատից մոլորվեցին ու իրենք իրենց բազում ցավեր պատճառեցին: Բայց դու, ո՛վ մարդ Աստծու, փախի՛ր դրանցից և հետևի՛ր արդարությանը, աստվածապաշտությանը, հավատին, սիրուն, համբերությանը, հեզությանը: Հավատի բարի պատերա՛զմ մղիր, նվաճի՛ր հավիտենական կյանքը, որի մեջ կանչվեցիր և բազում վկաների առաջ բարի դավանանքը դավանեցիր» (Ա Տիմ. 6:6-12):

Եթե սրբերը այսպիսի գոհունակության տիպարներ են՝ և ուրախությամբ տանում են ներկա տառապանքները՝ ապագա բարի օրվա հույսովը, ապա միայն նման բարի օրինակներն են հանդիսանում աշխարհի համար արժեքավոր դասեր: Բացի իրենց բարի օրինակից, երբ նրանք շրջապատին խորհուրդ ու խրատ են տալիս, պետք է որ այն իրենց հավատքին համահունչ լինի: Այն պետք է լինի բուժիչ սպեղանու նման վիրավոր և հիվանդ հոգիների համար: Պետք է օգտվել հանգամանքներից՝ աշխարհին ցույց տալու համար գալիք բարի ժամանակները, քարոզելու նրանց գալիք Աստծո թագավորությունը և բացահայտելու ներկայիս

տառապանքների իրական պատճառը և միակ բուժումը (Ղուկաս 3:14, Եբր. 13:5, Փիլիպ. 4:11):

Խեղճ աշխարհը հառաչում է ոչ միայն իր մարմնեղեն իրական հիվանդությունների տակ՝ ապա նաև իր գաղափարական ախտերի տակ էլ, և հատկապես եսասիրության, գոռոզության ու փառասիրության արդյունք հանդիսացող դժգոհության տակ, որոնք տանջում և անհանգստացնում են մարդկանց, քանի որ չեն կարող իրենց ցանկություններին հագուրդ տալ: Ուստի, թեև կարող ենք տեսնել հարցի երկու կողմերն էլ, բոլոր նրանց ովքեր կունկնդրեն մեր խոսքերին՝ խորհուրդ կտանք գոհ լինել իրենց ունեցածով և համբերությամբ սպասել, մինչև Աստված իր ժամանակին և իր ճանապարհով նրանց պարգևի բազմաթիվ օրհնություններ, որոնք Նրա սերն ու իմաստությունը պատրաստել են:

Օգնության ձեռք մեկնելու և օրհնություն տալու տեղը, եթե այլով իրական կամ երևակայական վերքերն ու զրկանքները քրքրենք ու հրահրենք, մենք չարիք արած կլինենք նրանց, ու պիտի աճեցնենք նրանց դժգոհությունը և հետևաբար՝ տառապանքը: Բայց մեր առաքելությունը կատարելով, քարոզելով ԲՈԼՈՐ մարդկանց համար տված Փրկանքի ուրախ լուրը և հետագա օրհնությունները՝ այն ժամանակ կլինենք Թագավորության ճշմարիտ մունետիկները և նրա խաղաղության դեսպանները: Այսպես է գրված. «Ի՜նչ գեղեցիկ են լեռների [թագավորությունների] վրա ավետաբերի ոտքերը [Քրիստոսի մարմնի վերջին անդամների] ոտքերը, որոնք ավետիս են բերում» (Ես. 52:7):

«Եհովայի օրվա» նեղությունները պատվական ու հազվագյուտ հնարավորություն կընձեռեն քարոզելու

ապագա օրհնությունների բարի լուրը, և երանի նրանց, ովքեր կհետևեն Տիրոջ քայլերին և կգործեն որպես բարի սամարացիներ՝ կկապեն վերքերը և սփոփանքի ու քաջալերանքի յուղով ու գինով կօծեն: Այսպիսիներին տրված է վստահություն, որ նրանց աշխատանքը ապարդյուն չի մնա, որովհետև երբ երկրի վրա իրագործվում են Տիրոջ դատաստանները, նրա բնակիչները արդարություն են սովորում (Ես. 26:9):

Իրենց երկնային Հոր նման, Տիրոջ զավակների կարեկցանքը, առաջին հերթին ուղղված կլինի հառաչող ստեղծվածին, որը ձգտում է ազատվել ստրկությունից: Սակայն Տիրոջ նման նրանք կարեկցանքով պետք է հիշեն՝ թե հակամարտ ուժերի մեջ կան այնպիսիներ, որոնց ձգտումներն թեև արդար ուազնիվ են, բայց իրենց ջանքերը սահմանափակ են ու դատապարտված են խափանման: Ոչ միայն իրենց անկյալ բնության պատճառով՝ այլև միջավայրի պայմաններով և կախվածությամբ, ինչպես նաև ուրիշների հետ ունեցած հարաբերությունների պատճառով: Սակայն Տիրոջ զավակները չպետք է որևէ համակրություն արտահայտեն որևէ դասակարգի գոռոզ ու ագահ ցանկությունների նկատմամբ: Նրանց խոսքերը պետք է լինեն մեղմ և չափավոր, և խաղաղությամբ պետք է ապրեն, որքան որ սկզբունքները թույլ կտան: Նրանք պետք է հիշեն, որ սա Տիրոջ պատերազմն է, և որքան էլ քաղաքական կամ սոցիալական հարցեր լինեն, դրանց իրական լուծումը այլ չէ, քան այն, ինչ կանխատեսված է Աստծո Խոսքում: Ուստի նվիրվածների պարտականությունն է առաջին հերթին հոգ տանել, որ նրանք Եհովայի կառքի ճանապարհին չլինեն, ընդհակառակը, պետք է «կանգնեն ու Աստծո փրկությունը տեսնեն», այսինքն՝ գիտակցեն, որ նրանց գործը չէ մասնակցել այդ պայքարին, այլ որ դա

Տիրոջ գործն է, որը իրականացվում է տարբեր միջոցներով: Այս ամենը մի կողմ թողնելով, պետք է իրենց առաքելությունը հավատարմորեն կատարեն, քարոզելով որ մոտալուտ երկնային թագավորությունը ամեն դասակարգերի միակ դարմանն է և նաև իրենց միակ հույսը:

ԳԼՈՒԽ 16

Եզրափակիչ Մտքեր

Մեր Պարտականությունը Ճշմարտության Հանդեպ – Դրա Գինը – Դրա Արժեքը և Շահը:

Նախորդ գլուխներում մենք տեսանք, որ թե՛ բնության լույսը, թե՛ հայտնության լույսը հստակ ցույց են տալիս այն փաստը, որ մի գիտակից, իմաստուն, ամենակարող և արդար Աստված է բոլոր բաների Արարիչը, և որ նա է բոլորի գերագույն և օրինական Տերը, որ բոլոր կենդանի և անկենդան բաները ենթակա են նրա իշխանությանը, և որ Սուրբ Գիրքը նրա նկարագրի և ծրագրերի հայտնությունն է այն չափով՝ որքանով նա հաճած է դրանք մարդկանց հայտնելու: Այնտեղից մենք սովորեցինք, որ թեև չարը այժմ գերակշռում է որոշ արարածների մեջ, սակայն այն գոյություն ունի միայն սահմանափակ ժամանակով և սահմանափակ չափով, և նրա թույլտվությամբ՝ նրա մախատեսած իմաստուն նպատակով: Մենք նաև սովորեցինք, որ չնայած խավարը այժմ ծածկում է երկիրը, իսկ մառախուղը՝ ազգերը, սակայն Աստծո լույսը նշանակված ժամանակին կցրի խավարը, և ամբողջ երկիրը կլցվի նրա փառքով:

Մենք տեսանք, որ նրա մեծ ծրագիրը, այնքան ընդարձակ էր, որ նրա իրականացման համար պահանջվել են դարեր, դեռ մեկ այլ դար կպահանջվի այն ավարտին հասցնելու համար, և որ անցյալ բոլոր խավար դարերի ընթացքում, երբ թվում էր, թե Աստված գրեթե մոռացել է իր արարածներին, նրա ծրագիրը նրանց ապագա օրհնության համար անաղմուկ, սակայն հիանալի

կերպով առաջ է տարվել, թեև այդ բոլոր դարերի ընթացքում նրա ծրագրի գաղտնիքները իմաստուն կերպով թաքցված են եղել մարդկանց աչքերից: Մենք նաև տեսանք, որ այն օրը կամ դարը, որը այժմ պատրաստվում է ծագել աշխարհի վրա, լինելու է աշխարհի դատաստանի կամ քննության օր, և որ բոլոր անցյալի պատրաստումները եղել են մարդկությանը ընդհանուր առմամբ հնարավորինս բարենպաստ հնարավորություն ընձեռելու համար, երբ նրանք *որպես անհատներ* կհայտնվեն հավիտենական կյանքի փորձության առջև: Անցյալ վեց հազար տարվա երկար ժամանակահատվածը մեծապես բազմացրել է մարդկային ցեղը, և չարի տիրապետության տակ նրանց կրած հարվածներն ու տառապանքները նրանց տվել են այնպիսի փորձառություն, որը մեծ օգուտ կբերի նրանց դատաստանի ժամանակ: Եվ թեև ամբողջ մարդկությանը թույլատրվել է այսպես տառապել վեց հազար տարի, անհատապես նրանք իրենց տառապանքի կյանքի շրջանը անցել են ընդամենը մի քանի կարճ տարիների ընթացքում:

Մենք տեսանք, որ երբ մարդկային ցեղը ենթարկվում էր այս անհրաժեշտ դաստիրակությանը, ժամանակին Աստված ուղարկեց Իր Որդուն նրանց փրկելու համար և թեև մարդկության զանգվածը չճանաչեց Փրկչին նրա խոնարհության մեջ և չէր հավատում, որ Տիրոջ Օծյալը *այսպես* կգա նրանց փրկելու, այնուամենայնիվ, նրանցից, որոնց սրտերը ուղղված էին Աստծուն և ովքեր հավատում էին Նրա խոստումներին, Աստված անցած այս դարերի ընթացքում ընտրել է երկու խումբ՝ որոնք պիտի ստանան թագավորության պատիվները՝ Աստծո ծրագրի իրականացման մեջ բաժին ունենալու պատիվները: Ինչպես տեսանք, այս երկու ընտրյալ խմբերը պետք է

կազմեն Աստծո Թագավորության երկու մասերը: Եվ մարգարեներից իմանում ենք, որ այս թագավորությունը շուտով կհաստատվի երկրի վրա, որ դրա իմաստուն և արդար կառավարման ներքո երկրի բոլոր ընտանիքներին որպես օրհնություն, կտրվի ամենահարմար հնարավորությունը՝ ապացուցելու իրենց արժանի լինելը հավիտենական կյանքին, որ Քրիստոսի թանկագին արյունով նրանց փրկագնման արդյունքում կբացվի սրբության մեծ պողոտան, որ Տիրոջ փրկվածները (ամբողջ մարդկությունը՝ Եբր. 2:9) դրանով քայլեն, որ դա կլինի հանրային ճանապարհ, համեմատաբար հեշտ բոլոր նրանց համար, ովքեր եռանդորեն ձգտում են մաքրվել և սրբանալ և որ բոլոր գայթակղության քարերը կհավաքվեն, և բոլոր թակարդները, նենգիչ հրապույրները և ծուղակները կվերցվեն, և օրհնված կլինեն բոլոր նրանք, ովքեր կբարձրանան այդ պողոտայով դեպի կատարելություն և հավիտենական կյանք:

Պարզ է, որ այս դատաստանն կամ տիրապետությունը չի կարող սկսվել մինչև Քրիստոսը, որին Եհովան նշանակել է աշխարհի Դատավոր կամ Իշխան լինելու, դարձյալ չգա — ոչ թե դարձյալ խոնարհությամբ, այլ զորությամբ և մեծ փառքով: Ոչ թե դարձյալ աշխարհը փրկելու, այլ արդարությամբ դատելու [հովվելու] համար: Ոչ մի դատ չի կարող սկսվել, մինչև որ դատավորը ատյանը չբազմի և դատարանը չսկսի նիստը որոշված ժամանակին, թեև մինչ այդ կարող է կատարվել մեծ նախապատրաստական աշխատանք: Այնժամ Թագավորը կնստի իր փառքի աթոռին, և նրա առջև կժողովվին բոլոր ազգերը, և նա կդատի նրանց այդ դարում ըստ իրենց գործերի, նրանց համար բացելով Սուրբ Գրքի գրքերը և լցնելով աշխարհը Տիրոջ գիտությամբ: Եվ նրանց վարքագծի հիման վրա՝ այդ բոլոր շնորհի ու օգնության

ներքո, Նա կորոշի, թե ովքեր են արժանի հավիտենական կյանքի՝ գալիք փառքի և ուրախության դարերին (Մատթ. 25:31, Հայտն. 20:11-13):

Այսպիսով մենք տեսանք, որ Մեսիայի երկրորդ գալուստը՝ իր թագավորությունը երկրի վրա հաստատելու համար, իրադարձություն է, որի մեջ բոլոր մարդիկ կարող են հույս ունենալ, իրադարձություն, որը, երբ լիովին ըմբռնվի, բոլոր սրտերին հրճվանք ու ուրախություն կպարգևի: Սա այն օրն է, երբ Տիրոջ «փոքր հոտը»՝ նվիրված սրբերի խումբը, ունի ամենամեծ պատճառը ուրախանալու: Սա այն ուրախ օրն է, երբ նշանված կույս Եկեղեցին հրճվանքով դառնում է հարսը՝ Գառան կինը, երբ նա անապատից դուրս է գալիս՝ հենված իր Սիրելիի բազկին, և մտնում է իր փառավոր ժառանգության մեջ: Սա այն օրն է, երբ ճշմարիտ Եկեղեցին, իր գլխի հետ փառավորված, ու օժտված աստվածային իշխանությամբ և զորությամբ, կսկսի մեծ գործը աշխարհի համար, որի արդյունքը կլինի ամեն բաների լիակատար վերահաստատությունը: Արդարև, այն աշխարհի համար ուրախ օր կլինի, երբ մեծ հակառակորդը կապվի, երբ վեց հազար տարի մարդկությանը կապող շղթաները կոտրվեն, և երբ Տիրոջ գիտությունը կլցնի ողջ երկիրը, ինչպես ջրերը ծածկում են ծովը:

Այս բաների գիտությունը ու ապացույցները, որ դրանք արդեն իսկ մոտ են, նույնիսկ դների մոտ, անխուսափելիորեն հզոր ազդեցություն կունենան բոլորի վրա, և առավելապես Աստծո ուխտած զավակների վրա, որոնք ձգտում են աստվածային բնության մրցանակին: Երբ նրանք բարձրացնում են իրենց գլուխները և ուրախանում՝ գիտակցելով, որ իրենց ազատագրումը մոտ է, մենք հորդորում ենք նրանց հրաժարվել ամեն

ծանրությունից, հեռացնել բոլոր արգելքները և համբերությամբ վազել այն ասպարեզը, որը նրանք արդեն սկսել են: Մի՛ վախեցեք ձեր անձից և նրա անխուսափելի տկարություններից ու թերություններից, հիշեք, որ այդ բոլոր տկարությունները ամբողջությամբ ծածկված են մեր Տեր Հիսուս Քրիստոսի տված փրկանքի արժանիքով, և որ ձեր զոհաբերությունները և անձնուրացությունները ընդունելի են Աստծո կողմից՝ մեր Փրկչի և Տիրոջ միջոցով - ոչ մի այլ կերպ, միայն նրանով: Հիշեք, որ Աստծո խոստացած անհրաժեշտ զորությունը, որով մենք կարող ենք դառնալ «հաղթողներ», տրված է Նրա Խոսքում: Սա այն զորությունն է, որը բխում է, իր նկարագրի և ծրագրերի գիտությունից: Պետրոսը այս մասին այսպես է ասում. «Շնորհք եւ խաղաղութիւն շատանայ ձեզ վերայ Աստուծոյ եւ մեր Տէր Յիսուսի գիտութիւնովը: Ինչպէս որ նորա աստուածային զօրութիւնը շնորհեց մեզ այն ամենը որ կեանքի եւ աստուածապաշտութեան համար պետք է նորա գիտութիւնովը, որ մեզ կանչեց փառքով եւ առաքինութիւնով. Որոնցով ամենամեծ եւ պատուական խոստմունքներ են տրուած մեզ որ նորանցով հաղորդակից լինիք աստուածային բնութեանը՝ աշխարհքի մէջ ցանկութիւնից եղած ապականութիւնից հեռու փախչելով» (Բ Պետրոս 1:2–4):

Սակայն այս գիտությունը ու այս զորությունը ստանալու համար, (որ Աստված այս կերպով առաջարկում է տրամադրել երնային մրցանակը շահելու համար յուրաքանչյուր վազողին)՝ անշուշտ կփորձի ձեր նվիրման ուխտերի անկեղծությունը: Դուք նվիրաբերել եք ձեր ամբողջ ժամանակը, ձեր բոլոր տաղանդները Տիրոջը, արդ հարց է ծագում՝ սրանից ո՞րքան եք տալիս: Դուք դեռ պատրաստ ե՞ք, ըստ ձեր նվիրաբերության ուխտի, հրաժարվել ամեն ինչից՝ ձեր սեփական ծրագրերից ու

մեթոդներից, ձեր և ուրիշների տեսություններից, ընդունելու Աստծո ծրագիրը, ճանապարհը և ժամանակը՝ իր մեծ գործը կատարելու համար: Պատրաստ ե՞ս դա անել՝ աշխարհային բարեկամության ու ընկերական կապերի խզման գնով: Եվ պատրաստ ե՞ս զոհաբերել ժամանակը այլ գործերից՝ ուսումնասիրելու համար այս փառավոր թեմաները, որոնք սիրտ ուրախացնող պատգամ են իսկապես նվիրվածների համար, և գիտակցելով, որ դա քեզանից պահանջելու է անձնուրացություն: Եթե դուք ամեն ինչ չեք նվիրաբերել կամ եթե Տիրոջը ամեն ինչ տալիս միայն կեսով էիք մտադիր, ապա դուք կխնայեք այն ժամանակն ու ջանքերը, որոնք անհրաժեշտ են Նրա Խոսքը գանձի պես որոնելու համար, որպեսզի ձեռք բերեք ներկայիս (Հազարամյայի արշալույսի) հավատքի փորձությունների համար անհրաժեշտ ուժը:

Բայց մի՛ կարծիր, թե նման ուսումնասիրությանը անհրաժեշտ ժամանակն ու էներգիան նվիրելուց հետո այլևս ոչինչ չունես տալու: Այդպես չէ: Քո անձի զոհաբերության անկեղծությունը խորապես կփորձվի և ցույց կտրվի, թե արժանի ես արդյոք «փոքր հոտի»՝ հաղթական Եկեղեցու մեկ անդամը լինելուն թե ոչ, որը կստանա թագավորության պատիվները: Եթե ջանասիրաբար ուսումնասիրես Աստծո Խոսքը և ընդունես դրա ճշմարտությունները բարի, ազնիվ, նվիրված սրտով, այն քո մեջ կծնի Աստծո և Նրա ծրագրի հանդեպ այնպիսի սեր և խոսելու ուրախության ավետիսները, քարոզելու ավետարանը, որ դա կդառնա քո կյանքի միակ հետաքրքրական թեման և սա ոչ միայն *հոգով* կբաժանի քեզ աշխարհից և բազմաթիվ անվանական քրիստոնյաներից, այլև կառաջնորդի քեզ ամբողջությամբ բաժանվել այդպիսիներից: Նրանք քեզ

տարօրինակ կհամարեն և կհեռացնեն քեզ իրենց ընկերակցությունից, և դու կանարգվես ու Քրիստոսի սիրո համար հիմար կհամարվես, որովհետև նրանք մեզ չեն ճանաչում, ինչպես որ Տիրոջը չճանաչեցին (Բ Կորնթ. 4:8–10, Ղուկաս 6:22, Ա Հովհաննես 3:1, Ա Կորնթացիներ 3:18):

Դուք պատրաստ ե՞ք Տիրոջը, ճանաչելու համար պարսավանքների և գովասանքների ենթարկվելով հարատևել նեղ ճանապարհի մեջ: Դուք պատրաստ ե՞ք հրաժարվել ամեն ինչից՝ հետևելու Նրա առաջնորդությանը Իր Խոսքի միջոցով - անտեսելով ընկերների ցանկությունները, ինչպես նաև քո սեփական ցանկությունները: Հուսանք, որ այս հատորը ընթերցող բազմաթիվ նվիրվածներ Աստվածային ծրագրի ավելի հստակ ընկալման շնորհիվ այնպես պիտի վառվին հոգու նախանձով և եռանդով՝ որ կարող պիտի լինեն ասելու. «Աստծո շնորհով պիտի հարատևեմ, ճանաչելու և ծառայելու Տիրոջը, անկախ նրանից, թե ինչ զոհաբերություն դա կպահանջի» Ինչպես ազնիվ Բերիացիները (Գործք 17:11), թող այսպիսիները ջանասիրաբար ուսումնասիրեն՝ ստուգելու համար այն, ինչ ներկայացվել է նախորդ էջերում: Ստուգեք այն ոչ թե մարդկանց հակասական նախապաշարումներով ու հավատո հանգանակներով, այլ միայն ուղիղ և Աստծո կողմից վավերացված չափանիշով՝ Աստծու բուն Խոսքովը: Այսպիսի ուսումնասիրությունը դյուրացնելու համար ենք մենք մեջբերել այդքան շատ համարներ:

Անօգուտ է փորձել համատեղել այս հատորի մեջ ցույց տրված աստվածային ծրագիրը անցյալում ընդունված բազմաթիվ գաղափարների հետ, որոնք առանց որևէ ապացույցի համարվում էին համահունչ Սուրբ Գրքի հետ

և որոնք սակայն այդպիսին չէին: Արժե նշել, որ Աստվածային Ծրագիրը ամեն տեսակետից ինքն իր հետ ամբողջ և ներդաշնակ է և թե՝ այն կատարելապես ներդաշնակ է այն նկարագրին, որը Աստվածաշունչը վերագրում են նրա մեծ Հեղինակին: Սա իմաստության, արդարության, սիրո և զորության հիասքանչ արտահայտումն է: Այն իր մեջ պարունակում է գերմարդկային ծրագրի փաստերը, որը գերազանցում է մարդկային հնարամտությունը և գրեթե դուրս է մարդկային ըմբռնումի զորության սահմաններից:

Հաջորդ հատորները այս ծրագրի տարբեր ճյուղերը ավելի մանրամասն կուսումնասիրեն, ամեն քայլափոխի բացահայտելով այն անզուգական ներդաշնակությունը, որով կարող է պարծենալ միայն *ճշմարտությունը*: Սա ներդաշնակություն է ոչ միայն Աստվածաշնչի, այլև աստվածային նկարագրի և առողջ բանականության հետ, և այն պետք է գրավի բարեխիղճ ընթերցողի ուշադրությունը, լցնելով նրան հարգանքով, հույսով և վստահությամբ: Այս ամենը զարմանալի է, սակայն հենց դա է այն, ինչ մենք պետք է սպասենք ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԻՑ և Աստծո անսահման իմաստուն ու բարերար ծրագրից:

Երբ Աստվածաշունչը այս տեսանկյունից այսպես բացվում է և զարմանալի ճշմարտություններ է բացահայտում (Սաղմոս 119:18), մյուս կողմից, ներկայիս լույսը, երբ այն ընկնում է մարդկանց տարբեր ուսմունքների և ավանդույթների վրա, նրանց վրա ազդում է ամբողջովին այլ կերպ: Դրանք նույնիսկ իրենց պաշտողների կողմից ճանաչվում են որպես անկատար և խեղաթյուրված, ուստի դրանք որոշ չափով անտեսվում են և թեև դեռ մնում են կառչած դրանց, սակայն քիչ անգամ

են ուսումնասիրել, որովհետև ամաչում են դրանցից: Եվ այս մարդկային հավատալիքների ու նախապաշարումների վրա ծանրացող ամօթը վերագրում են նաև Աստվածաշնչին, ենթադրելով՝ թե այն պաշտպանում է նման մտածումի այլանդակությունները որպես Աստվածային ծագում ունեցող: Որքան ուշագրավ է, ուրեմն, Աստծո նախախնամությունը, որը հենց այս ժամանակին իր զավակների առջև բացում է այս իսկապես փառավոր և ներդաշնակ ծրագիրը՝ ծրագիր, որը ոչ մի մաս չի մերժում, այլ ներդաշնակեցնում է Նրա Խոսքի ամեն մասերն ու հատվածները: Ճշմարտությունը, իր հարմար ժամանակին՝ սնունդ է դառնում հավատքի ընտանիքի համար, որպեսզի նրանք աճեն դրա միջոցով (Մատթ. 24:45): Ով էլ որ ծանոթանա ճշմարտության հետ, ըմբռնելով դրա բնույթը, ստանձնում է դրա նկատմամբ պատասխանատվություն: Կամ այն պետք ընդունվի և կիրառվի, կամ մերժվի և անարգվի: Այն անտեսելը չի ազատում պատասխանատվությունից: Եթե մենք ինքներս այն ընդունենք, ապա ունենք նաև պատասխանատվություն դրա հանդեպ, քանի որ այն նախատեսված է հավատքի ամբողջ ընտանիքի համար, և յուրաքանչյուրը, ով այն ընդունում է, դառնում է դրա պարտապանը, և եթե հավատարիմ վերակացու է, պետք է այն փոխանցի Աստծո ընտանիքի մյուս անդամներին: Թող քո լույսդ փայլի: Եթե այն դարձյալ խավարի, որքան մեծ պիտի լինի այդ խավարը: Վեր Բարձրացրեք լույսը: Բարձրացրեք դրոշը ժողովրդի համար:

Դարերի աստվածային ծրագիրը



Տեսիլքը գրէ՛ ու տախտակներու վրա հայտնի նշանակէ, Որպէս զի զանիկա կարդացողը համարձակ կարդա (Ամբակում 2:2)